Հ. Ալեքսանդր Մեն



# ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ

ԵՐԵՎԱՆ
ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ
2007

ՀՏԴ 2)091(
ԳՄԴ 86.3
Ա 296

Թարգմանիչ՝ Ա.Գ.Ալեքսանյան
Խմբագիր՝ Ավետիս քհն. Դանիելյան
Սրբագրիչ՝ Զ. Հ. Մխիկյան
Նկարիչ՝ Վ. Գասպարյան

2 296 **Մեն Ալեքսանդր**
Մարդու որդին: (Կրոնի պատմություն)-
Եր.: Նոյյան Տապան, 2007.- 486 էջ:

0403000000
Ա ―――――――― 2007թ. ԳՄԴ 86.3
804 (01) 07

ISBN 978-99941-44-63-1



*Մայրիկիս լուսավոր հիշատակին*

*Մեկենասությամբ՝ Ռուբեն Ավագյանի*



***Հ. Ալեքսանդր Մեն***



## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Համուն ինչի եմ գրվել այս էջերը: Հարկավոր են դրանք արդյոք, երբ քրիստոնեության Հիմնադրի մասին արդեն այնքան բան է ասված:

Ավետարանական թեմայով գրված ցանկացած նոր գիրք նման հարցեր կարող է հարուցել: Բացի այդ, ակներև է, որ Հիսուս Քրիստոսի կյանքին և ուսմունքին նվիրված ոչ մի աշխատություն ի վիճակի չէ փոխարինել իր սկզբնաղբյուրին: «Կա մի գիրք,- գրել է Պուշկինը մահվանից քիչ առաջ,- որի յուրաքանչյուր բառ մեկնված, բացատրված, քարոզված է երկրի բոլոր ծագերում, հարմարեցված է կյանքի բազմապիսի հանգամանքներին... Այդ գիրքը կոչվում է Ավետարան, և նրա հավերժորեն նոր հմայքն այնպիսին է, որ երբ մենք աշխարհից հագեցած, վհատությունից սրտաբեկ, պատահաբար բաց ենք անում այն, ապա այլևս անկարող լինելով ընդդիմանալ նրա դյութիչ հափշտակությանը, հոգով ընկղմվում ենք նրա աստվածային պերճախոսության մեջ»:[1] Իսկապես, բացի ավետարանիչներից, ով կարող էր իրագործել այդ ահռելի խնդիրը՝ ցայտունորեն պատկերել Հիսուս Նազովրեցու կերպարը, ընդ որում, օգտվելով զարմանալի ժլատ միջոցներից:

Այսպես ուրեմն, եթե մենք ցանկանում ենք իմանալ ճշմարտությունը Քրիստոսի մասին, ապա այն պետք է փնտրենք ամենից առաջ Ավետարանի մեջ:

Բայց նա, ով առաջին անգամ է ձեռքը վերցնում այն, կարող է բախվել որոշ դժվարությունների: Չէ որ Նոր Կտակարանի հեղինակներին մեզանից բաժանում է մոտ երկու հազար տարի: Ժամանակակից

մարդու համար հեշտ չէ նրանց շատ ակնարկներ, դարձվածքներ, իսկ երբեմն նույնիսկ նրանց մտքի բուն ընթացքը հասկանալը, ինչը և Ավետարանն ըմբռնելու համար բանալի ծառայող մեկնությունների անհրաժեշտություն է ծնում:

Նոր Կտակարանի գրականության հետազոտությունն արդեն վաղուց է դարձել ամբողջական գիտություն: Հարյուրավոր մեկնիչներ՝ աստվածաբաններ, պատմաբաններ, բանասերներ հսկայական աշխատանք են տարել տեքստերի վերլուծության և համեմատության, դրանց իմաստի ճշգրտման ուղղությամբ: Նրանք մանրակրկիտ հետազոտել են Ավետարանների յուրաքանչյուր գլուխ և յուրաքանչյուր համար:

Անվիճելի է քննական բնույթի այդ հետազոտությունների արժեքը: Ոչ քիչ կարևոր մանրամասների պարզաբանմանն են օգնել դրանք: Սակայն դրանց հեղինակները հետևել են հետազոտական մի եղանակի, որը հաճախակի գլխավորը թողնում է երկրորդական պլանում: Լայնածավալ քննական շեղահետախուզումները Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի մասին համարյա մոռացնել են տալիս Իրեն՝ Քրիստոսին: Բայց չէ որ ավետարանիչները ձգտում էին տեղեկություն հաղորդել մեզ հենց Մարդու Որդու մասին, Որը քրիստոնեության սկիզբն ու վախճանն էր, առանց Որի նա զրկվում է հոգուց, պարզ ասած՝ գոյություն չունի:

Ահա թե ինչու վերջին մեկուկես դարում ավետարանական պատմագրության մեջ աստվածաբանական և գրական վերլուծությունների հետ հավասարապես սկսեցին օգտագործել նաև ընդհանրացման, համադրման եղանակը: Այդ ճանապարհով գնացող հեղինակները ցանկանում էին վերաստեղծել Քրիստոսի երկրային կյանքի ամբողջական պատկերը, հենվելով բնագրային վերլուծության տվյալների վրա:

Առաջիններից մեկը, որ այդ մոտեցումը կիրառեց, հայտնի ռուս քարոզիչ, արքեպիսկոպոս Ինոկենտի Խերսոնսկին (Բորիսով) էր: Նրա ուրվագծերը լույս տեսան 1828 թ. «Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերը», վերնագրով: Գիրքը մինչև օրս ունեցել է շատ հրատարակություններ և շարունակում է վայելել լայն մասսայականություն: Այդուհանդերձ, այն ընդգրկում է միայն Չարչարանաց շաբաթի իրադարձությունները:

Մնում է ափսոսալ, որ Քրիստոսի ամբողջական «կենսագրության» փորձը, գրված կապակցված պատմողականության ձևով, ձեռնարկվել է առաջին անգամ ոչ քրիստոնյա հեղինակի կողմից: Խոսքը ֆրանսիացի պատմաբան և մտածող Էռնեստ Ռենանի մասին է, որի



«Հիսուսի կյանքը» գիրքը լույս տեսավ 1863 թ.:

Նրանում հեղինակին հաջողվել է ավետարանական ժամանակաշրջանի վառ ու ճշմարտացի համայնապատկերը ներկայացնել և պատկերել Իրեն՝ քրիստոնեության հիմնադրին, արտասովոր կենդանի գծերով, չնայած Ռենանն աշխարհայացքով լինելով սկեպտիկ, զգալի չափով աղավաղել է Նրա նկարագիրը:

«Հիսուսի կյանքը» գրքի հաջողությանը քիչ չափով չնպաստեց նաև այն, երբ Ավետարանի կենտրոնական խորհուրդը՝ Աստվածամարդության գաղտնիքը, պարզվեց, որ քրիստոնեական գիտակցությունից իրապես կորսված է: Այն, բնականաբար, ծնեց հակառակ մտատրամադրություն, որի արտահայտիչը դարձավ Ռենանը: Նրա գրքի լույս տեսնելուց շատ չանցած, Ռենանի հայրենակից պաստոր Էդմոն Պրեսսանսեն գրեց. «Քրիստոսի Մարդեղությունը շատ հաճախ են զոհաբերել իր Աստվածայնությանը, մոռացել են, որ վերջինս Նրանում անբաժանելի է առաջինից, և որ Քրիստոսը... մարդու տեսքով ծպտված Աստված չէ, այլ մարդեղացած Աստված: Ստորացված և անարգված Աստծո Որդին՝ Քրիստոսը, Պողոս առաքյալի համարձակ լեզվով ասած, արդարև ենթարկեց Իրեն երկրային կյանքի պայմաններին... Քրիստոսին շատ հաճախ են մեզ ներկայացրել որպես վերացական դավանանք և այդ պատճառով էլ ընկել են հակառակ ծայրահեղության մեջ»[2]:

Ռենանի և երկրպագուներին, և հակառակորդներին նախապես առավել հափշտակել էին Նրա փիլիսոփայական հայացքները, և, երբ որ հետաքրքրությունը դրանց հանդեպ սառեց, իսկ «Հիսուսի կյանքը» գրքի շուրջ բռնկված կրքերը սկսեցին հանդարտվել, պարզորոշ նկատվեցին գրքում կիրառված հետազոտական եղանակի արժանիքները:[3]

Վլադիմիր Սոլովյովի մասին պատմում են հատկանշական մի դեպք: Մի անգամ, Սինոդի օբեր- պրոկուրոր Կ.Պ.Պոբեդոնոսցևի՝ ծայրահեղ պահպանողական մի մարդու հետ զրուցելիս, փիլիսոփան թույլտվություն է խնդրել նրանից «Հիսուսի կյանքը» հրատարակել ռուսերեն, կցելով դրան քննական ծանոթագրություններ:

- Արդյոք, Ձեզանից եմ ես լսում այդ,- վրդովվել է օբեր-պրոկուրորը: - Այդ ինչ եք Ձեր մտքով անցկացրել:

- Բայց, դե պետք է վերջապես Քրիստոսի մասին ժողովրդին պատմել,- ժպտալով պատասխանել է Սոլովյովը:

Նա ինքը բացասաբար էր տրամադրված Ռենանի հանդեպ, սակայն ցանկանում էր ընդգծել, որ, որպես կանոն, քննադատների և մեկնիչների բազմաբառ աշխատությունները ավետարանական Քրիստոսին

քիչ են մոտեցրել մարդկանց, ավելին, նույնիսկ հեռացրել են Նրանից: Դրանց ֆոնի վրա այդ իմաստով կարող էր շահել նաև Ռենանը:

Զարմանալի չէ, որ արքեպիսկոպոս Ինոկենտի Խերսոնսկու և Ռենանի գրքերի տպագրությունից շատ չանցած, սկսեցին լույս տեսնել այդ իսկ ժանրով գրված ուրիշները, և յուրաքանչյուր տասնամյակ նրանց թիվը գնալով մեծանում էր: Ճիշտ է, եզրահանգումները շատ հաճախ վիճելի և հակասական էին ստացվում: Ոմանք Նազովրեցու մեջ ցանկանում էին տեսնել լոկ հրեության բարենորոգչի, մյուսները՝ մարգարեներից վերջինի, բռնության կողմնակիցները Նրան պատկերում էին որպես հեղափոխական, տոլստոյականները՝ անդիմադարձության ուսուցիչ, օկուլտիստները՝ գաղտնախորհուրդ ուխտի ձեռնադրյալ, իսկ ավանդական հասարակարգերի թշնամիները՝ հնապաշտության դեմ պայքարող մարտիկ: «Այդ Հիսուս Քրիստոսին իր անձի և իր շահերի տեսանկյունից մոտենալու, ինքն իրեն Նրա մեջ գտնվելու կամ Նրանում թեկուզ որոշ մաս ունենալու բոլորի և յուրաքանչյուրի այդ ձգտման մեջ ինչ-որ սրտաշարժ մի բան կա[4]»,- նկատել է հայտնի պատմաբան Ադոլֆ Գարնակը: Մյուս կողմից, նման փորձերում ի հայտ է գալիս մարդկանց սահմանափակությունը, որոնք ճգնում էին լուծել «Հիսուսի առեղծվածը», ելնելով լոկ իրենց երբեմն ամբողջությամբ միակողմանի մտածելակերպից:

Այնինչ, Քրիստոսի անձը անհատնում է, այն գերազանցում է բոլոր սովորական չափումները. ահա թե ինչու յուրաքանչյուր ժամանակաշրջան և յուրաքանչյուր մարդ կարող են գտնել Նրա մեջ նոր և հարազատ բան: Մասնավորապես, դա է վկայում նաև արվեստի պատմությունը: Եթե մենք համեմատում ենք Հռոմի կատակոմբների որմնանկարները կամ հին ռուսական սրբապատկերները Էլ Գրեկոյի կամ մոդեռնիստ Շագալի՝ Քրիստոսի պատկերումների հետ, ապա հեշտությամբ համոզվում ենք, թե Նրա կերպարը դարերի ընթացքում ինչքան տարբեր ընկալումներ է ունեցել:

Ուրեմն ինչով կարելի է ստուգել և ճշտել կերպարվեստի, գիտության և գրականության այդ մեկնաբանությունները:

Միակ չափանիշը այստեղ ինքը՝ Ավետարանն է, որի վրա են հիմնված Մարդու Որդուն պատկերելու բոլոր փորձերը:

Ճիշտ է, որոշ պատմաբաններ պնդում են, թե Ավետարանները չափազանց հակիրճ են Հիսուսի «կենսագրության» համար նյութեր ընձեռելու տեսանկյունից: Իսկապես, դրանցում բաց են թողնված շատ փաստեր, մի շարք կոնկրետ մանրամասներ մնում են չպարզաբանված,



սակայն անկանխակալ հետազոտողը դրանցում կգտնի Հիսուսի կյանքի և ուսմունքի բոլոր կարևորագույն գծերը: Բացի այդ, սկզբնաղբյուրների սղությունը սովորաբար չի խանգարում մեծ մարդկանց, ում մասին քիչ հավաստի տվյալներ են պահպանվել կենսագրությունն ստեղծելուն:[5]

Կան և ավետարանական պատմությունը շարադրելու հնարավորությունը մերժող աստվածաբաններ, սոսկ այն բանի հիման վրա, որ Նոր Կտակարանը ոչ թե «սովորական պատմություն» է, այլ քարոզ փրկության և աշխարհի Փրկչի մասին: Բայց, եթե անգամ Ավետարանները ևս երևան են եկել որպես հավատի կոչնակներ պարունակող եկեղեցական, ժամասացության գրքեր, ապա դա ամենևին էլ չի բացառում դրանց պատմական արժեքը: Ստեղծված չլինելով ոչ տարեգիրների, և ոչ էլ պատմիչների կողմից, դրանք, սակայն, պարունակում են Եկեղեցու՝ առաջին դարից մեզ հասած վկայություններ, երբ դեռ կենդանի էին Հիսուսի երկրային ծառայությունների ականատեսները:

Ավետարանիչների պատմությունները հաստատվում և լրացվում են անտիկ և հրեա հեղինակների կողմից, ինչպես նաև ժամանակակից հնագետների հայտնագործություններով: Այդ ամենը թույլ է տալիս Հիսուս Քրիստոսի կենսագիրների խնդիրը համարել լիովին իրագործելի:

Հասկանալի է, որ զուտ պատմական կողմը չի կարող գլխավորը լինել Նրա կենսագրության մեջ:

Մարդու Որդին պատկանում է ոչ միայն անցյալին: Այսօր, ինչպես և այն ժամանակ, երբ Նա ապրում էր երկրի վրա, սիրում են Նրան, հավատում են Նրան և մաքառում են Նրա հետ:

Բայց և այնպես, չպետք է մոռանալ, որ Քրիստոսի ուղին անցել է որոշակի ժամանակի մարդկանց միջով, որ առաջին հերթին նրանց է ուղղված եղել Նրա խոսքը: Սբ. Հովհան Ոսկեբերանը խորհուրդ է տվել Ավետարանը կարդալիս, սրբազան եղելությունների համար որպես միջավայր ծառայող որոշակի իրադրություն պատկերացնել: Արդ, մենք կարող ենք հետևել այդ խորհրդին առավել հաջողությամբ, քան հենց իր՝ Ոսկեբերանի օրերում, քանզի մեր տնօրինության տակ ունենք շատ ավելի հանգամանալից տեղեկություններ I -ին դարի Հրեաստանի մասին:

Տեսնել Հիսուս Նազովրեցուն այնպես, ինչպես տեսնում էին Նրան իր ժամանակակիցները. ահա նրա մասին գրվող գրքի գլխավոր խնդիրներից մեկը, եթե այն կառուցվում է պատմագրական համադրման սկզ-

բունքով։ Այդ սկզբունքով առաջնորդվող քրիստոնեական հեղինակների շարքում առավել մեծ հուչակ են ձեռք բերել Ֆրեդերիկ Ֆարրարը, Կոնինգհեմ Հեյկին, Ալֆրեդ Էդերշեյմը, Անրի Դիդոնը, Ֆրանսուա Մորիակը, Դմիտրի Մերժեկովսկին, Անրի Դանիել- Ռոպսը, Ֆուլտոն Օրսլերը, Արթուր Նիսինը։ Բայց, քանի որ նրանք բոլորը գրել են Արևմուտքի համար, ռուս ընթերցողին կողմնորոշելու նպատակով այդ ուղղությամբ գրված ևս մեկ գրքի ծնունդը կարող է արդարացված համարվել։

Դրանով հեղինակն իր առջև հետազոտական նպատակներ չի դրել, այլ ձգտել է լոկ այն բանին, ինչի մասին ասել է Վլ.Սոլովևը Պոբեդոնոսցևի հետ զրուցելիս՝ պարզապես պատմել Քրիստոսի մասին։ Պատմել Ավետարանների, դրանց լավագույն մեկնությունների, ինչպես նաև այլ աղբյուրների հիման վրա։[6] Աշխատանքի ընթացքում ուշադրություն է դարձվել Նոր Կտակարանի ժամանակակից քննության կարևորագույն արդյունքներին, սակայն, նկատի ունենալով, որ այն նույնպես կարիք ունի քննական մոտեցման։

Այս գիրքը նախատեսված է հիմնականում նրանց համար, ովքեր Ավետարանը կարդացել են առաջին անգամ, կամ էլ բոլորովին ծանոթ չեն դրան*։ Այդ պատճառով շարադրանքը սկսվում է արտաքին եղելությունների պատմությունից և նոր միայն աստիճանաբար մոտենում առավել խոր ու բարդ թեմաներին։

Ընդ որում, գիտակ ընթերցողը նույնպես, հնարավոր է, որ այստեղ գտնի իր համար ինչ- որ նոր բան, չնայած որ նրան հասցեագրված է «առասպելների տեսությանը» և Ավետարանների ծագմանը վերաբերող բաժինը միայն։

Հեղինակը հույս է հայտնում, որ գիրքը անհետաքրքիր չի լինի նաև թերահավատների համար։ Յուրաքանչյուր մարդու հարկ է պատկերացում կազմել կրոնի Հիմնադրի մասին, որը դարձել է համաշխարհային մշակույթի անքակտելի մասը։

Մեջբերումներ անելով Նոր Կտականից, հեղինակն ստիպված է եղել հրաժարվել ընդհանուր գործածական սինոդական թարգմանությունից։ Դրա արժանիքները կասկածի ենթակա չեն, բայց արված լինելով ավելի քան մեկ ու կես դար առաջ, այն հնացել է արդեն ինչպես գիտական, այնպես էլ գեղարվեստական առումով։ Այդ պատճառով, գրքում օգտագործված է (որոշ շտկումներով) արքեպիսկոպոս Կասսիանի խմբագրությամբ Փարիզում կատարված նոր թարգմանությունը[7]։

* Այդ նկատառումով, գրքի վերջում տվրում է տերմինների բառարան։



Գրականությունը վկայակոչելը արվում է միայն առավել անհրաժեշտության դեպքերում։ Իրենց գիտելիքները այդ բնագավառում խորացնել ցանկացողները կարող են դիմել մատենագրության մեջ նշված աշխատություններին։

Եթե առաջարկվող շարադրանքն օգնի ընթերցողին Ավետարանն ավելի լավ հասկանալուն, հետաքրքրություն արթնացնի դրա հանդեպ, կամ էլ պարզապես ստիպի մտածել, հեղինակը իր նպատակին հասած կլինի։

Գիրքը առանձին գլուխներով նախապես տպագրվել է «Ժուռնալ Մոսկովսկոյ Պատրիարխիի» և «Ցերկովնիյ վեստնիկի» (Բուլղարիա) էջերում։ Ամբողջությամբ այն հրատարակել է «Ժիզն ս Բոգոմ» հրատարակչությունը, որն այնքան շատ բան է արել քրիստոնյաների էկումենիկ համագործակցության համար։ Ընկերների խնդրանքով, ինչպես նաև հաշվի առնելով արձագանքները և ընթերցողների ցանկությունը, հեղինակը որոշեց նախապատրաստել նոր, մշակված տարբերակ։ Աշխատանքին օգնած մարդկանց հեղինակն իր երախտագիտությունն այլ կերպ չի կարող արտահայտել, քան՝ նրանց անձնվեր աշխատանքը աղոթքով հիշելով։

## ՆԱԽԱԲԱՆ

Մ. թ. ա. 63 թվի գարնանը Պաղեստինի ճանապարհներին հռոմեացի զինվորների շարասյուներ հայտնվեցին: Նրանց ետևից ճռնչալով ընթանում էին սայլախմբերը, դղրդում էին ծանր պաշարողական զենքերը, բարձրացած փոշու ամպերում փայլփլում էին լեգեոներների վահաններն ու զրահները, փողփողում էին մարտական դրոշները:

Բանակն առաջնորդում էր քառասունհինգամյա զորավար Գնեոս Պոմպեոսը: Հոգու խորքում թաքուն երազելով հասնել համաշխարհային տիրապետության, առերևույթ նա սիրում էր ծպտվել միջազգային իրավարարի պատմուճանի ներքո և ասում էր, որ Ասորիք է եկել ոչ թե ուրիշների կալվածքները զավթելու, այլ որպես կարգուկանոնի պաշտպան և ազատագրող: Այդ տարիներին նա փառքի գագաթնակետին էր և վայելում էր զինվորականության սերը: Այն բանից հետո, երբ Պոմպեոսը հաշվեհարդար տեսավ ծովահենների՝ ծովագնացների համար այդ պատուհասների հետ և հաղթականորեն ավարտեց պատերազմաշրջանը Միհրդատ Պոնտացու և Հայոց Տիգրանի դեմ, իր դիրքերն ամրացան ինչպես Հռոմում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Մերձավոր Արևելքը Պոմպեոսը գտավ տեղական արքայիկների և կառավարիչների միջև ընթացող պատերազմական դրության մեջ: Այդ պատճառով էլ նա շտապեց խաղաղություն հաստատել այնտեղ՝ կոչումներ ու թագեր բաժանելով և, միևնույն ժամանակ, Ասորիքի ողջ ծովափնյա մասը հայտարարեց Հռոմի պրովինցիա:

Այդ պահը համընկավ Երուսաղեմի գահին հավակնող երկու եղբայրների՝ Արիստոբուղոսի և Հյուրկանոսի միջև ընթացող համառ



պայքարի հետ: Նրանք իրենց վեճը լուծելու խնդրանքով դիմեցին Պոմպեոսին: Բայց, մինչ Դամասկոսում բանակցություններ էին ընթանում, Արիստոբուղոսը հանկարծակի փոխեց իր որոշումը և հրաժարվեց հռոմեացիների օգնությունից: Լսելով այդ մասին, զայրացած Պոմպեոսը արագ ռազմերթով շարժվում է Երուսաղեմի վրա...

Պաղեստինը կամ Իսրայելի Երկիրը, որի վրայով հիմա կոհորտաներ են անցնում և որտեղ հարյուր տարի անց պետք է հնչի Քրիստոսի ձայնը, գտնվում է Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի խաչմերուկում, ինչը դարձրել է այն կռվախնձոր: Դարերի ընթացքում իր տարածքի հանդեպ շատ նվաճողներ են ոտնձգություններ կատարել, չնայած այն երբեք հռչակված չի եղել առանձնահատուկ պտղաբերությամբ կամ բնական հարստություններով:

Հորդանանի և Մեռյալ ծովի ափերով ձգվող հողի այդ փոքրիկ շերտն ունի մակերևույթի և կլիմայի բազմապիսի երանգներ: Իզուր չէ, որ այն անվանում են հակադրությունների եզերք: Իսրայելի լեռների գագաթները պատած են հավերժական ձյունով, ձմռանը հաճախ ձյուն է գալիս նույնիսկ հարավում, իսկ ամռանը որոշ տեղերում շոգը հասնում է համարյա արևադարձային ուժգնության: Արմավենին և նռնենին, թզենին և նոճին հարևանակցում են թփակաղնու թփուտներին և ուռուտներին, կանաչ հովիտներին հաջորդում են լերկ լեռնապարերը:

Հնում առավել ծաղկունը հյուսիսային շրջանն էր՝ **Գալիլեան**, որը գտնվում էր Քիներետ (Գեննիսարեթ) լճից արևմուտք, որին հաճախ տալիս են Գալիլեական ծով անվանումը: Այդ տեղանքի բնակչության մեջ ապրում էին նաև օտար շատ ցեղեր, որի պատճառով այն անվանում էին «հեթանոսական Գալիլիա»: Հարավից նրան սահմանակցում է Սամարիայի մարզը: Ինչ- որ ժամանակ Գալիլիայի հետ այն կազմում էր Հյուսիսային Իսրայելի թագավորություն, որը մ. թ. ա. 722 թ. ոչնչացվեց ասորացիների կողմից: Նվաճողները տեղահանեցին, գերեվարեցին քաղաքի բնակիչներին և նրանց փոխարեն մարդկանց վերաբնակեցրին Միջագետքից և Ասորիքից: Գաղթաբնակները խառնվեցին իսրայելցիներին և ընդունեցին նրանց դավանանքը, պահպանելով սակայն իրենց նախկին սովորույթները: Հրեաները սամարացիներին համարելով կիսահեթանոսներ, հրաժարվում էին նրանց որպես եղբայրակիցներ ընդունել, որը հանգեցրեց բախումների, որոնց մասին հիշատակում են նաև Ավետարանները: Իսրայելում այսօր էլ ապրում են մի քանի հարյուր սամարացիներ: Իրենց նախնիների հետևողությամբ նրանք պաշտում են սրբազան Հարիզիմ լեռը, որ-

տեղ երբևէ կանգնած էր իրենց տաճարը:

Երկրի հարավային մասը կամ բուն Հրեաստանը* ներկայացնում է Հյուսիսի լրիվ հակապատկերը: Մռայլ, անբարեհամբույր և անպտուղ, այն նման է օազիսներ ունեցող լեռնոտ անապատի:

Վերջին բնակավայրը հռոմեացիների ճանապարհին դեռևս բարեբեր Հյուսիսի հմայքը պահպանած Երիքովն էր. այն հռչակված էր բուժիչ ջերմուկներով և արմավենիների պուրակներով: Այդտեղ էլ հենց Պոմպեոսը խփեց իր ճամբարը և այդտեղից առաջնորդեց զինվորներին դեպի երբայեցիների մայրաքաղաքի պարիսպները:

Երուսաղեմը, ապրելով տասնհինգ դարերի փառքը և անկումները, արդեն վաղուց էր դարձել առասպելական քաղաք: Այն գտնվում էր լեռան վրա և իրենից ներկայացնում էր հզոր ամրոց: Նրա տեսքը չփոթեցրեց պաշարողական գործի գիտակ Պոմպեոսին: Սակայն նրան օգնեցին քաղաքի ներսում մոլեգնող երկպառակությունները: Արիստոբուղոսը հանձնվեց՝ ապավինելով հռոմեացիների ողորմածությանը, իսկ նրա եղբոր՝ Հյուրկանոսի կուսակցությունը բացեց նրանց առջև դարբասները: Միայն նրանք, ովքեր չէին ցանկանում հաշտվել օտարերկրացիների ներկայությանը, մահվան գնով դիմադրելու պատրաստակամությամբ փակվեցին տաճարատեսք միջնաբերդում:

Ամբողջ երեք ամիս տևեց պաշարումը, մինչև որ հռոմեացիները մեծագույն դժվարությամբ խորտակեցին աշտարակներից մեկը: Երբ նրանք լցվեցին Տաճարի գավիթ, զարմանքով տեսան, որ հոգևորականները շարունակում են ժամերգությունը: Ողջ ժամանակամիջոցում, քանի դեռ ընթանում էր կատաղի դիմադրություն, հոգևորականությունը չլքեց զոհասեղանները և նահատակվեց սրբավայրի պաշտպանների հետ մեկտեղ:

Օգտվելով հաղթողի իրավունքից, Պոմպեոսը ցանկացավ տեսնել նշանավոր տաճարը, այդ թվում և Դեբիրը՝ Սրբություն Սրբոցը, տեղ, որտեղ կարող էր մտնել, այն էլ տարին մեկ անգամ, միայն քահանայապետը:

Հռոմեացուն արգելված շեմը խախտելու մղեց իր անզուսպ հետաքրքրասիրությունը. չէ որ հրեաների կրոնի մասին ֆանտաստիկ լուրեր էին պտտվում: Ոմանք ասում էին, թե Դեբիրում գտնվում է ավանակի գլխի ոսկե պատկերը, մյուսները հավատացնում էին, որ այնտեղ թաքցնում են մահվան դատապարտված մարդու: Ինչ էր իրականում թաքցվում այնտեղ: Ինչ անակնկալներ ասես, որ չի մատուցել առեղծվածային Արևելքը Արևմուտքի մարդկանց:

---

* Հռոմեացիք Հրեաստան էին անվանում ողջ Պաղեստինը:



Լարված լռության մեջ ետ է տարվում վարագույրը... Եվ ինչ: Անսահման էր Պոմպեոսի և իր զորականների զարմանքը: Նրանք սպասում էին տեսնել ինչ-որ արտասովոր, ծայրահեղ դեպքում ինչ-որ գեղեցիկ կամ վանող պատկեր: Բայց այնտեղ դատարկ էր: Այնտեղ բնակվում էր Անտեսանելին...

Նախապաշարվածի սարսափով խառը, տարօրինակ մի զգացողությամբ հռոմեացիները հեռացան Տաճարից՝ չհպվելով ոչ մի բանի: Բայց նրանք առավել կզարմանային, եթե իմանային, որ ճակատագիրը իրենց դրել է դեմ առ դեմ մի կրոնի առաջ, որին վիճակված է դառնալ Արևելքը և Արևմուտքը. ալիտակամարմար Հելլադան և նրանց հայրենի Հռոմը նվաճող ուսմունքի օրրանը:

Ինչով էր տարբերվում այդ կրոնը մյուսներից:

Հարցին կարելի է պատասխանել միայն հեռվից սկսելով:

Այնժամ, երբ բանականության լույսը առաջին անգամ բռնկվեց մարդու էության մեջ, նա զգաց տիեզերքը ընդգրկող ինչ-որ Բարձրագույն Ուժի ռեալականությունը: Նախնադարյան որսորդների համար բնական էր Նրան նույնացնելը այն բանի հետ, ինչը մենք հիմա անվանում ենք բնություն: Այդ պատճառով էլ ամենուր՝ ամպերում և աստղերում, գետերում և կենդանի արարածների մեջ մարդիկ փնտրում էին Աստվածայինի ներկայությունը:

Սկզբնապես, որպես կանոն, այն ծնեց կույր կռապաշտություն, առանձին առարկաների և երևույթների աստվածացում: Ավելի ուշ, Հնդկաստանում, Հունաստանում և Չինաստանում բնության պաշտամունքը հիմք դարձավ տեսանելի աշխարհը միակ ճշմարիտ իրականությունը համարելու հավատամքի: Բայց նման հայացքը հակառակ ընթացավ մարդկության հոգևոր փորձի հետ և լայն ճանաչում չունեցավ:

Հակառակը, մշակույթի կրոնական և փիլիսոփայական հասունությամբ գնալով արմատացավ այն համոզումը, որ վերին Ռեալականությունը արմատապես տարբերվում է ողջ մասնակիից և սահմանավորից: Նախաքրիստոնեական մտքի վերջին խոսքը դարձավ ուսմունքը Աստվածության մասին, Որի սրբազան և անճառելի գոյը գտնվում է տեսանելիից անդին: Ինչպես էլ որ կոչենք Նրան՝ Երկինք, Հայր, Ճակատագիր, միևնույն է Նրա խոսքը չի կարող ճանաչվել մահկանացուներից և ոչ մեկի կողմից: Այդ գաղափարը ոչ միայն բխում էր միստիկների ապրումներից, այլև ուներ տրամաբանական հիմնավորում՝ Արդարև, ինչ բանականություն է ի վիճակի ընդգրկել Անսահմանությունը...

Սակայն դեպի վեր ելնելու խորհրդավոր մղումը մարեց մարդու մեջ: Նա միշտ ձգտում էր հաղթահարել Երկնքից իրեն բաժանող տարածությունը, կապել իր կյանքը այլ աշխարհի հետ: Այդ իսկ պատճառով շարունակում էին գոյություն ունենալ սերտորեն միահյուսված երկու հավատ՝ հավատ Անհասանելիի և տարերային աստվածությունների հանդեպ: Վերջիններս, թվում էր, ավելի մոտ էին կանգնած մարդուն և նրանց հետ կարելի էր մտնել ուղղակի կապի մեջ: Գտնում էին, որ կան գաղտնածածուկ մոգական հնարներ, որոնց օգնությամբ մարդիկ ի զորու են ներգործել դևերի և ոգիների վրա: Նման օգտապաշտ հայացքը մոտ հազար տարի մնաց տիրապետող:

Բազմաստվածությունը և **մոգությունը** ապարդյուն ջանքեր էին գործադրում լցնելու երկիրը երկնքից բաժանող վիհը:

Առաջինը այդ երկատվածությունը հաղթահարվեց Աստվածաշնչի Հայտնության մեջ: Այն ուսուցանում էր «սուրբ» Աստծո՝ որպես արարվածների հետ անչափակցելիի, և միաժամանակ մարդու մասին որպես Իր «պատկերով և նմանությամբ» արարվածի: Հավիտենական Հոգու և վերջավոր հոգու գաղտնախորհուրդ մերձավորությունը, ըստ Աստվածաշնչի, հնարավոր է դարձնում Ուխտը նրանց միջև:

Ուխտը կամ Միությունը ճանապարհն է մարդու միաձուլման ոչ թե աստվածների, այլ հենց Տիեզերքում մշտապես Է բարձրագույն Սկզբի հետ:

Հատկանշական է, որ Կտակարանի կրոնը դավանեց մի ժողովուրդ, որը ոչ հզոր քաղաքակրթություն էր ստեղծել, ոչ էլ քաղաքական առումով էր աչքի ընկնում և միայն մի կարճ ժամանակ ձեռք բերեց ազգային անկախություն: Սակայն հավատարմությունն առ Աստված նա կարողացավ պահպանել իր տանջալիորեն դժվար պատմության երկարաձիգ հարյուրամյակների ընթացքում:

Այդ ժողովրդի նախնիները անհիշելի ժամանակներից ի վեր քոչվորական կյանք էին վարում Ասորիքի և Եգիպտոսի միջակայքում: Ավանդությունը հիշատակություն է պահպանել հրեաների ցեղի առաջնորդ Աբրահամի մասին (մ.թ.ա. մոտ 1900 թ.), որի անվան հետ է կապված Հին Կտակարանի կրոնի սկիզբը: Նրա առաջին պատվիրանը ընդգծում էր մարդկային արաքների կարևորությունը Երկնքի առջև: «Ես եմ Ամենակարող Տերը, քայլիր Իմ առջև և եղիր անարատ»: Աբրահամին խոստացված էր, որ իր սերունդների միջոցով «կօրհնվեն երկրի բոլոր ցեղերն ու ժողովուրդները», չնայած մնացել է գաղտնիք, թե ինչ է նշանակելու այդ օրհնությունը[1]:



Մ. թ. ա. XVII դ. սովից հալածված հրեաները գաղթեցին Նեղոսի դելտայի արևելյան տարածքները, որտեղ աստիճանաբար ընկան փարավոնների բռնապետական իշխանության տակ: Աբրահամի հավատքը համարյա մոռացության մատնվեց:

Մոտ 1230 թվին «Իսրայելի Որդիներ» կամ ուղղակի Իսրայել անունը կրող հրեական տոհմախմբերը միավորվեցին Մովսեսի՝ իրենց մեծ մարգարեի և օրենսդրի կողմից: Նա վերադարձրեց ժողովրդին «Հայրերի Աստծուն»՝ «Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծուն» և դուրս բերեց ցեղակիցներին «ստրկության տնից»: Մովսեսի կողմից «դուրս բերելու» և ազատագրելու հիշատակի համար հաստատվեց Զատկի տոնը:

Հեռանալով Սինայի անապատ, իսրայելացիները որոշ ժամանակ անց բնակություն հաստատեցին սրբազան Սինա լեռան և Կադեշ օազիսի շրջակայքում, որտեղ մարգարեն հանդիսավոր ավետեց Կտակարանի կրոնի հիմունքները:

Մովսեսը ժողովրդին պատվիրում էր մեծարել միայն մեկ Աստծո՝ աշխարհի Տիրակալին և Արարիչին, Որը Յահվեն է, Էությունը, Նա, Ով տիրում է գոյին՝ Ինքը բարձր լինելով ողջ զգացականից[2]: Մարգարեն արգելում էր երկրպագել ինչ-որ բնութենական աստվածությունների և նույնիսկ պատկերել նույն Իրեն՝ Յահվեին: Նվիրյալների մեջ Նրա ներկայության նշանը միայն տապանն էր. մեծ սնդուկը՝ զարդարված թևավոր էակների՝ քերուբների ֆիգուրներով[3]: Այն ամրացնում էին երկար ձողերի վրա և մարտերի ժամանակ տանում էին զինվորների առջևից:

Մովսեսը ուսուցանում էր, որ Էության կամքով Իսրայելը պետք է դառնա Նրա ընտրյալ միջոցը, «ժողովուրդ սրբերի և թագավորություն հոգևորականների», այսինքն մարդկանց համայնք՝ նախորոշված ծառայելու ճշմարիտ Աստծուն:

Քոչվոր իսրայելացիների պաշտամունքը զերծ էր բոլոր հին կրոններին հատուկ ծիսակարգությունների ճոխությունից[4]: Մարգարեի ուսմունքը համառոտ բանաձևված է **Դեկալոգի**՝ տասը պատվիրանների մեջ, որոնք փորագրված էին երկու քարե սալիկների վրա: Նրանց էությունը հանգում է Տիրոջ՝ Փրկարարի նկատմամբ հավատարմությանը, ինչպես նաև հիմնական բարոյական կանոններին՝ սիրե ծնողներիդ, մի՛ սպանիր, մի՛ գողացիր, մի՛ շնացիր, սուտ մի՛ խոսիր, մի՛ նախանձիր: Պաշտամունքային սովորույթներից Դեկալոգը հիշատակում է միայն մեկը՝ շաբաթ օրվան նվիրված օրենքը:

Տասը պատվիրաններից բացի, այդ դարաշրջանին է պատկանում,

հավանաբար, «Լսիր Իսրայել»։ Յահվե՝ Աստված մեր, Յահվե միակ։ Եւ սիրիր Յահվեին, քո Աստծուն, ողջ սրտով քո և ողջ հոգով քո և քո բոլոր ուժերով» բառերով սկսվող խոստովանություն-աղոթքը[5]։

Մովսեսի հավատքի և նրա պատվիրանների մեծագույն պարզությունը, որոնց հետևելը, պարզվում է, այնքան էլ հեշտ չէ նաև մինչև օրս, արմատական շրջադարձ նշանավորեցին կրոնական գիտակցության մեջ։ Զարմանալի չէ, որ Մովսեսը պետք է ապրեր չհասկացված մարգարեի ողբերգությունը։

Աստվածաշունչը պատմում է այն մասին, թե ինչ դժվարությամբ էին ընկալում երեկվա ստրուկները իրենց ուսուցչի դասերը, ինչպես էին նրանք ընդվզում նրա դեմ, թե ինչքան ուժեղ է նրանց վրա վաղնջական նախապաշարումների իշխանությունը։ Բայց մարգարեն չընկրկեց նույնիսկ այն ժամանակ, երբ նրան թվաց, թե գործը տանուլ է տված։ Եվ նրա ջանքերը իզուր չանցան։ Ուխտի դավանանքը դարձավ այն արմատը, որով սնվեցին ժողովրդի միասնությունը և տոկունությունը։

Դեռևս Մովսեսի օրոք իսրայելացիները սկսեցին թափանցել Քանան, ինչպես այդ ժամանակ անվանում էին Պաղեստինը, իսկ նրա մահվանից հետո նրանց մեծ մասը անցավ Հորդանան գետը և նվաճեց երկիրը։ Իրականացավ «Աբրահամի երկրում» ապրելու բազում սերունդների երազանքը։

Հրեաների ցեղը բնակություն հաստատեց լեռնոտ Հարավի շրջանում, իսկ մնացած սերունդները՝ Հյուսիսում։ Բայց շուտով պարզ դարձավ, որ անապատի զավակները հայտնվել են պարտվածների մշակույթին հպատակվելու հաղթողների դրության մեջ։ Փյունիկյանին մոտ քանանական քաղաքակրթությունը շատ զարգացած էր այդ ժամանակներում։ Այդուհանդերձ, քանանական պաշտամունքը շարունակվում էր պահպանել իր հին, մոլեկրոն, վայրագ բնույթը։ Նրանում կիրառվում էին և՛ մարդկանց զոհաբերությունը, և՛ երեխաների ծիսական սպանությունները, և՛ տաճարային պոռնկությունը։ Պտղաբերության հետ կապված տոնակատարությունները քանանացիների մոտ ուղեկցվում էին զգայական ծեսերով և գինարբուքներով։

Ժողովրդի ազդեցությամբ, որի մեջ նրան վիճակվեց ապրել, Իսրայելը սկսեց արագ կորցնել իր հոգևոր ինքնությունը։ Բաահաղիմի և Քանանի մյուս երկրագործական աստվածների պաշտամունքը աննկատ թափանցեց հրեա գյուղացիների կենցաղ։ Ինչպես ասվում է Աստվածաշնչում՝ «Իսրայելի Որդիները հեռացան Յահվեից՝ իրենց Աստծուց»։



Շուրջ 1100 թ. քանանական ափ դուրս եկան զինվորներ Էգեիդայի կղզիներից։ Դրանք փղշտացիներ էին, ժողովուրդ, որն արդեն տիրապետում էր երկաթի ձուլման գաղտնիքին։ Նրանք արագ իշխանություն հաստատեցին երկրի վրա, և նրանցից հետագայում այն ստացավ իր հունական անվանումը՝ Պաղեստին։ Միայն բրոնզե զենքեր ունեցող իսրայելացիները և քանանացիները չկարողացան դիմադրել նվաճողներին։

Համարյա կես դար անցավ, մինչ օտարերկրացիների լուծը կիմաստավորվեր որպես երկնային պատիժ ուրացության համար։ Եվ այդ ժամանակ հայտնվեցին քարոզիչներ, ովքեր կոչ էին անում վերադառնալ հայրերի հավատին։ Նրանք ոտքի հանեցին ժողովրդական ուժերը և գլխավորեցին ապստամբությունը փղշտացիների դեմ։

Պատերազմը տևեց երկար և ավարտվեց հաղթանակով։ Արդյունքում կազմավորվեց անկախ հրեական թագավորություն։ Մոտ 1000 թ., Դավիթ թագավորի օրոք, այն միավորում էր մի քանի ազգակից ցեղերի և ընդարձակել էր իր սահմանները «Նեղոսից մինչև Եփրատ»։ Քանանյան ամրոց Երուսաղեմը Դավիթը դարձրեց կրոնական և քաղաքական մայրաքաղաք, որտեղ իր հրամանով տեղափոխեցին տապանը։ Նաթան մարգարեն հուշեց թագավորին, որ իր նվիրվածությունը հավատքին կվարձատրվի՝ Դավթի սերունդներից մեկը կդառնա հավիտենական թագավորության հիմնադիրը[6]։

Արևելքի սովորությամբ, երբ մարդուն հռչակում էին միապետ, հոգևորականը նրա գլխին հեղում էր մի սկահակ ձիթայուղ։ Ձեթը, ձիթապտղի յուղը համարում էին հաստատունության խորհրդանիշ։ «Օծման» արարողությունը հիշեցնում էր, որ իշխանությունը տրվում է Աստծուց, Որի Հոգին այսուհետ մշտապես կմնա Ընտրյալի վրա։ Այդ պատճառով էլ, Իսրայելի յուրաքանչյուր տիրակալ (երբեմն նաև մարգարե) անվանվում էր Օծյալ, Փրկիչ կամ հունարեն՝ Քրիստոս։ Սակայն ժամանակի հետ այդ տիտղոսը սկսեցին վերագրել միայն գալիք մեծագույն Թագավորին։

Իսրայելացիների համար Փրկչի մասին ավետելը խառնվում էր Տիրոջ անքննելի մտահղացումների կատարման ընդհանուր հույսերին։ Այդ հույսը շատ հնուց Հին Ուխտի բնութագրական գիծն էր։ Այն ծագել էր դեռևս Աբրահամի ժամանակներում, հետո բաղձալի նպատակ դարձավ Ավետյաց Երկիրը, որի ճանապարհը Մովսեսը ցույց տվեց, և, վերջապես, Նաթանայելի մարգարեությունը նոր ուղղություն հաղորդեց ժողովրդի սպասումներին։

Ընդ որում, պետք չէ մտածել, որ Իսրայելի հոգևոր կյանքը մնա-

ցել էր չպղտորված: Աստվածաշնչյան պատմության յուրաքանչյուր գլխում կան պայքարի և մեղքերի, դայթակղությունների, անկումների և ուրացումների մասին պատմող դրամատիկ էջեր: Փոքրոգությունը և կրքերը, օտար պաշտամունքներին հակվելը, քաղաքական գործիչների շահերը մեկ անգամ չէ, որ սասանել են հավատը:

Դավթից հետո կապերը Փյունիկեի և Եգիպտոսի հետ վերստին ուժեղացրին հեթանոսության ազդեցությունը: Չնայած Տաճարում, որը կառուցել էր Սողոմոն Թագավորը, չկային Աստծո պատկերներ (այսինքն պահպանվում էր Մովսեսի պատվիրանը), բայց դրա կողքին տեղ գտան այլադավանների կռատները: Երբ 922 թ. Թագավորությունը տրոհվեց Հյուսիսի և Հարավի, Իսրայելի և Հուդայի Թագավորությունների, կռապաշտության վտանգը ավելի իրական դարձավ: Ամենուր տարածվում էին Բաահաղիմի և Աստարովթի պատվին զոհասեղաններ և սրբազան պուրակներ, և Թվում էր՝ ևս մի քայլ, և հեթանոսությունը կընդունվի որպես Իսրայելի երկրորդ պաշտոնական կրոն:

Հոգևոր ճգնաժամը ուղեկցվում էր սոցիալական ճգնաժամերով: Միապետների ինքնակալությունը, ովքեր գնալով մեծացնում էին իրենց արտոնությունները, գույքային անհավասարության աճը, գյուղացիների իրավազրկությունը և քայքայումը, հսկայական հարկերը, փյունիկյան պերճանքների Թափանցումը երկիր, այս ամենը չէին կարող չանհանգստացնել մարդկանց, ովքեր հավատում էին Իսրայելի առաքելությանը և սարսափում նրա անկումից: Նրանք հայացքները հառել էին Սինայի իդեալներին, նահապետական հնադարի անաղարտ հավատքին:

Այդ ընդդիմադիրների միջավայրից էլ դուրս եկան **մարգարեները**՝ ժողովրդին արԹնության կոչող Աստծո պատգամաբերները:

Սովորաբար նրանք քարոզում էին տաճարում: Մտադիր չլինելով նոր կրոն ստեղծել՝ մարգարեները ցանկանում էին վերածնել և մաքրել այն, ինչը ժառանգված էր Մովսեսի ժամանակներից[7]: Մարգարեները հրաժարվեցին հանուն կեղծ հասկացված հայրենասիրության ամբոխին շողոքորԹելուց և առանց երկբայելու սկսեցին ազգային կյանքի ողջ կառույցի վերաարժեքավորումը:

Մարգարեների գործունեությունը համընկավ այն ժամանակաշրջանին, երբ քաղաքակիրթ երկրների մեծամասնությունը Թևակոխում էր կրոնական հեղափոխությունների շրջան: Դա պատմական շրջադարձ էր, որը կարելի էր համեմատել միայն քրիստոնեության երևան գալու հետ: Հին աշխարհայացքը, որը կենտրոնում էր դրել ծեսը, կախարդու-



Թյունը, մոգությունը, սկսեց սասանվել: Ամենուր, Չինաստանից մինչև Իտալիա, հայտնվեցին համաշխարհային վարդապետներ, որոնք ձգտում էին կյանքի և հավատի այրող հարցերին նոր պատասխաններ գտնել: Ուպանիշադների հեղինակներ, Բուդդա, Մահավիրա, Լաո Ցզի, Կոմփուկիոս, Զրադաշտ և հույն փիլիսոփաներ, ահա նրանք, ովքեր հոգևոր առումով ձևավորեցին աշխարհը, ուր եկավ Հիսուս Նազովրեցին: Նրանք ԻՐ նախակարապետներն էին, բայց բառի խիստ իմաստով, այդպես կարելի է կոչել միայն Իսրայելի մարգարեներին:

Շատ բան էր նրանց մերձեցնում Արևելքի և Արևմուտքի իմաստուններին: Հնդկաստանի ճգնավորների նման նրանք գիտեին, որ Աստված, որպես կեցության բացարձակ ակունք, գերակշիռ է ողջ աշխարհայինի հանդեպ, պարսից բարենորոգիչ Զրադաշտի նման հավատում էին Նրան՝ որպես կատարյալ Լույս և Բարի, Հերակլիտի նման հայում էին Նրան որպես հարաշարժ հրի ուժի, Անաքսագորասի և Պլատոնի նման խոսում էին Նրա մասին որպես տիեզերական Բանականության կամ Գերիմաստության: Բայց, այդուհանդերձ, մարգարեները հեռու էին այն բանից, որ Բուդդայի հետ մեկտեղ այս կյանքը համարեին չար, տանջալի տեսապատրանք, ի տարբերություն Հելլադայի բնագանցների, չէին ուսուցանում, Թե Արարիչը և աշխարհը անտրոհելի միասնություն են:

Նրանք գիտեին, որ ինչքան էլ մեծ լինի Աստված, Իր ստեղծածի հետ կապված է սիրո Թելերով, որ մարդը Նրա ընտրյալն է, որի դիմաց Նա Իրեն բացահայտում է:

Ամենաանհասանելին մարգարեների մոտ նրանց ոգեշնչման գաղտնիքն էր: Նրանք վարկածներ չէին առաջադրել, չէին ստեղծել մտահայեցողական համակարգեր: Աստված նրանց միջոցով **անմիջականորեն** պատգամում էր Իր կամքը: Մարգարեների խոսքը սովորաբար սկսվում էր «այսպես է ասում Յահվեն» բառերով: Տիրոջ հոգին տոգորում էր նրանց գերող ուժով, և մարդիկ ունկնդրում էին նրանց ձայնը, որպես Երկնքի ձայն: Այդ հրաշքը ցնցում էր իրենց՝ մարգարեներին: Հաճախ նրանց համար դժվար էր լինում ողջ բացահայտվելիքը մտովի ընդգրկել:

Մարգարեները հստակորեն գիտակցում էին իրենց միջոցներ՝ Բարձրյալի պատգամաբերներ և մունետիկներ: Բայց, միևնույն ժամանակ, նրանք նման չէին պյուԹա հիշեցնող հեԹանոսական գուշակներին, որոնք պատգամում էին, գտնվելով անգիտակից տրանսի մեջ: Աստվածաշնչյան կանխատեսողների փորձով պայծառացած մարդկային ոգին

կանգնում էր Իրեն որպես Անձ պարզած Արարչի առաջ: Աստված խոսում էր աշխարհի հետ և սպասում Նրա պատասխանին: Այսպիսով, մարգարեների մեջ իրականանում էր արարածների միասնացումը Արարչի հետ, իրականանում էր այն Ուխտը, որը Իսրայելի հավատի հիմքն էր:

Մարգարեները ոչ միայն իրենց էության խորքում վերապրում էին հանդիպումը Աստծո հետ, այլև տեսնում էին Նրա մասնակցությունը ժողովուրդների կյանքում: Դա հայտնություն էր՝ մյուս կրոնների մեջ հազվադեպ հանդիպող:

«Հավիտենական օրենքը, որը հույները տեսնում էին նյութի կանոնավոր զարգացման ու շարժման մեջ,- գրում է անգլիացի մտածող Քրիստոֆեր Դաուսոնը, - ըստ հրեաների իրականանում էր մարդկային պատմության փոփոխականությամբ: Այն ժամանակ, երբ Հնդկաստանի և Հունաստանի փիլիսոփաները խորհրդածում էին տիեզերական շարժման պատրանքայնության կամ հավիտենականության շուրջ, Իսրայելի մարգարեները հիմնավորում էին պատմության բարոյական նպատակը և բացատրում էին իրենց ժամանակի իրադարձությունները աստվածային կամքի հետ ունեցած հարաբերությամբ»[8]:

Դիտարկելով բնության անփոփոխ ռիթմերը՝ արևածագերը և մայրամուտները, տարվա եղանակների հերթագայությունը, մոլորակների շարժումը, հին փիլիսոփաների մեծ մասը հանգեց կեցության շրջափուլային բնույթի ըմբռնմանը: Ամեն ինչ, գտնում էին նրանք, պտտվում է շրջագծով, ողջ մեկ անգամ կատարվածը կրկնվում է վերստին, և ոչինչ չի կարող արմատապես փոփոխվել: Ծնվելով, մեռնելով և ծագելով կրկին, Տիեզերքը և մարդը դատապարտված են հավերժական շրջապտույտի: Ի հակակշիռ այդ հայեցակետի, Աստվածաշունչը սովորեցնում է արարվածի մասին, որը ձգտում է դեպի վեր, դեպի կատարելություն: Եվ չնայած բարու հետ միաժամանակ մեծանում են և չար ուժերը, բայց, վերջին հաշվով, դրանք կպարտվեն, և աշխարհի համար ազատ ճանապարհ կբացվի դեպի Աստծո Արքայություն: Այլ խոսքով, մարգարեները առաջինն էին, որոնց բացվեցին պատմության ուղղությունը և իմաստը:

Մարգարեների շնորհիվ Մովսեսի ուսմունքը ձեռք բերեց համաշխարհային կրոնի* գծեր: Պասկալի խոսքերով ասած, աստվածաշնչյան հավատի միակ արտահայտությունը «պետք է լինի սերը առ Աստված, իսկ Աստված դատում է ողջ մնացյալը»[9]: Այդ սերը պահանջում է ոչ այնքան եկեղեցական ծիսակարգություն, որքան մարդկայնություն, բա-

* Այսինքն՝ ունիվերսալ կրոնի, հին, զուտ ազգային պաշտամունքներին հակառակ:



րություն և ճշմարտություն: Այդ պատճառով էլ, մարգարեների քարոզներում այդքան մեծ տեղ է զբաղեցնում սոցիալական արդարության գաղափարը:

Ինչքան էլ որ տարբերվեին Իսրայելի ուսուցիչները իրենց բնավորությամբ, խառնվածքով և հասարակության մեջ զբաղեցրած դիրքով, նրանց բոլորին միավորում էր անզիջողականությունը ուրացողների, բռնակալների, երեսպաշտների հանդեպ, որոնք հույս էին տածում նվերներով և զոհաբերություններով «սիրաշահել» Արարչին:

Ահա բոցաշունչ **Եղիան** (մոտ 850 թ. մ. թ. ա.)՝ հալածվածների և ընչազուրկների պաշտպանը, որը առանց տատանվելու կշտամբում էր թագավորին:

Ահա հովիվ **Ամովսը** (մոտ 770 թ.)՝ ժողովրդի միջից դուրս եկած մարդ, որն իրեն անգամ մարգարե չի ցանկանում անվանել, բայց նա չի կարող լռել, երբ Տերը պատվիրել է նրան անցնել քաղաքից քաղաք և ավետել Դատաստանի Օրը: Թող իսրայելացիները չապավինեն իրենց ընտրյալ լինելուն: Դրան արժանի կլինեն միայն նրանք, ովքեր հետևում են Աստծո ճշմարտության օրենքին:

Միթե դուք ինձ եթովպացվոց որդիների նման չեք,
ով Իսրայելի որդիք, ասում է Տերը:
Չէ որ Իսրայելը Եգիպտոս երկրից,
ու փղշտացիները Կափթորից
և ասորիները Կիրից հանեցի[10]:

Ահա Ղևի **Ովսեն** (մոտ 750 թ.)՝ Հյուսիսային թագավորության հոգևոր այլասերման ողբասացը: Նա հուշակում է, որ սերը մարդկանց միջև թանկ է բոլոր շքեղ ծիսակատարություններից: «Գթասրտություն եմ կամենում, ոչ թե զոհեր»,- ասում է Տերը մարգարեի շուրթերով[11]:

Ահա **Եսային**, ազնվատոհմիկ երուսաղեմցին, թագավորի ազդեցիկ խորհրդականը (մոտ 730 թ.): Նրան չի կարող խաբել պալատի ցուցադրական փայլը, ուրախացնել՝ Տիրոջ Տան գավթում հավաքված բազմությունը: Ոչ մի խնկարկում և աղոթք ի վիճակի չեն փոխարինել սրտի մաքրությանը և արդարացի արարքներին:

«Ինչ պետք է ինձ ձեր զոհերի շատությունը,
ասում է Տէրը...
Երբ որ գալիս էք իմ երեսս տեսնելու,

դա ով է պահանջում ձեր ձեռքից՝
կոխոտել իմ սրահները:
Այլ ևս ունայն ընծաներ մի բերեք…
Հեռացրեք ձեր գործերի չարությունը
Իմ աչքերի առաջից
դադարեցեք չարություն գործելուց:
Սովորեցեք բարություն անել,
որոնեցեք իրավունք, ուղղություն ցուցեք զրկվածին,
որբի դատը տեսէք, որբևայրիի դատը պաշտպանեցէք[12]:

Մարգարեներին հաճախ անվանում են սոցիալական ուտոպիստներ: Բայց իրականում նրանք չեն առաջադրել ոչ մի քաղաքական բարենորոգչություն: Եթե Պլատոնը մշակում էր հանրային սեփականության և կյանքի բոլոր ոլորտների վրա կառավարական հսկողության վարչակարգի նախագիծ, իսկ փիլիսոփա Յամբուլոսը երազում էր Արևի Քաղաքի մասին, որտեղ բոլորը հավասար պետք է լինեն, ապա մարգարեները առաջին տեղում դնում էին հավատը և մարդու բարոյական խնդիրները: Նրանք գիտեին, որ սոսկ արտաքին փոփոխությունները բավարար չեն, որ ներդաշնակությունը հնարավոր է միայն Աստծո կամքի և մարդկանց կամքի ներդաշնակության պարագայում:

Բայց հենց այդ պատճառով էլ մարգարեները չէին պատրաստվում հաշտվել հասարակության խոցերի հետ: Նրանց կրքոտ բողոքը թելադրված էր հավատքից և մարդու բարձր կոչվածության ըմբռնումից: Նրանք խոսում էին «Տիրոջ Օրվա» մասին, երբ կվերջանա չարի թագավորությունը մարդկանց մեջ: Եսայու հոգու հայացքին ընծայվեց Օծյալի հայտնությունը, Որի միջոցով Արարիչը կհիմնի Իր թագավորությունը: Այդժամ բոլոր ժողովուրդները կճանաչեն հավիտենական ճշմարտությունը, կթողնեն կուռքերը և հանցավոր գործերը: Աստված «կսրբի յուրաքանչյուր արցունք» և Եդեմը վերստին կվերադարձվի երկրին[13]: **Երեմիա** մարգարեն (մոտ 630 թ.) հին աշխարհի վախճանը կապում էր **Նոր Ուխտի** հետ, որը կփորագրվի արդեն ոչ թե քարե տախտակների վրա, այլ մարդկանց հոգիներում[14]:

Մարգարեների վախճանաբանական սպասումները սրեցին նրանց մեջ իրենց ժողովրդի հանդեպ պատասխանատվության զգացումը: Նրան տրված է հայտնություն, և այդ պատճառով էլ իր մեղքերը կրկնակի հանցավոր են: Նրան առաքելություն է շնորհված՝ մարդկությու-



նը բերել առ Աստված, բայց, եթե ընտրյալները անարժան դուրս գան, երկնային հովանին կլքի նրանց: Հեռավոր երկրներից կգան հեթանոսներ, որպեսզի կործանեն Իսրայելի և Հուդայի թագավորությունները:

Ահեղ կանխագուշակությունները շուտով կատարվեցին: 772 թ. հրեաների հյուսիսային միապետությունը Ասորեստանի կողմից ջնջվեց երկրի երեսից, իսկ 586 թ. քաղդեական թագավոր Նաբուգոդոնոսոր II-ը գրոհով նվաճեց Երուսաղեմը, հրկիզեց տաճարը և հրեաների հիմնական զանգվածը քշեց Բաբելոն:

Թվում էր, որ այդպիսի աղետը կարող է հասցնել Իսրայելի և իր կրոնի իսպառ վերացմանը: Բայց դա տեղի չունեցավ: Մարգարեների գցած սերմնն այնքան ուժեղ էր, որ հայրենիքից հեռու էլ հրեաները շարունակեցին իրենց գիտակցել որպես Աստծո ժողովուրդ: Փորձությունը խորացրեց նրանց մեջ ապաշխարության զգացումը, և այդ ժամանակից հեթանոսական գայթակղությունները դադարեցին հրապուրել նրանց, ինչպես առաջ: Վտարանդիների մեջ ապրած **Եզեկիել** (մոտ 580 թ.) և **Եսայի Երկրորդ** (մոտ 550 թ.) մարգարեները շարունակեցին իրենց նախորդների գործը[15]: Նրանք աղոթատներում քարոզում էին, զրույցներ էին անցկացնում, գրքեր էին գրում: Նրանց ազդեցությամբ հրեությունը աստիճանաբար վերածվեց համախումբ համայնքի՝ Հին Ուխտի Եկեղեցու:

Կես դար անց «գերությունը Բաբելոնի գետահովիտներում» ավարտվեց: Պարսիկները գրավեցին Քաղդեան: 538 թվին Կյուրոս թագավորը, Արևելքի մեծ տերության հիմնադիրը, թույլատրեց Բաբելոն բռնագաղթված բոլոր օտարերկրացիներին վերադառնալ հայրենիք: Մարգարեների խոսքերից ոգեշնչված, շատ հրեաներ ուղևորվեցին հայրերի երկիր: Բայց խանդավառվածների համարձակ երազանքները, որոնք պատկերացնում էին Փրկչի օրերի մոտալուտ գալուստը, փշրվեցին անշուք իրականությամբ: Նախկին Իսրայելի փոխարեն կազմավորվել էր Պարսկաստանին ենթակա մի փոքրիկ իշխանապետություն, որը ներառում էր միայն Երուսաղեմը իր արվարձաններով: Դավթի ամրոցը վերածվել էր ավերակների, նոր վերադարձածները կարիքի մեջ էին:

Մարգարեների ժամանակն անցավ, հարկավոր է հիմա սովորել նրանց պատվիրաններով ապրել, բայց ոչ մեկը ոչ ուժ ուներ, ոչ եռանդ, ոչ էլ ապագայի հավատ: Երբ Բաբելոնից մոտ 400 թվին քահանա Եզրասն եկավ, նա գտավ ինչ-որ ձևով վերաշինված տաճար և ամբողջովին անտարբերության մեջ գտնվող ժողովուրդ:

Եզրասը բերել էր իր հետ Աստծո Օրենքի լրիվ տեքստը՝ Թորա

կամ Մովսեսի Հնգամատյան անվանմամբ: Թորան վերաճել էր Տասը Պատվիրաններից և լրացվել դարերի ընթացքում: Քահանաները գրի էին առել բանավոր ավանդույթները և Մովսեսի ժամանակի վարքի կանոնները, ինչպես նաև գիրք էին մտցրել հոգևոր ծիսակարգի կանոնները: Այսուհետ վիճակված էր, որ այն ծառայի որպես Իսրայելի կրոնական, բարոյական և քաղաքացիական օրենքների ժողովածու:

Զգուշանալով հեթանոս հարևանների ազդեցությունից, Եզրասը և նրան շարունակող դպիրները մտածեցին անջատել հրեաներին մնացյալ աշխարհից: Շաբաթի անխոտոր պահպանումը, սննդի արգելքները և մյուս սովորույթները մի նպատակ էին հետապնդում ՝ պաշտպանել համայնքը:

Առաջին հայացքից այն տպավորությունն է ստեղծվում, որ օրենսդիրները թաղում էին մարգարեների ժառանգությունը մանր-մունր պատվիրանների շեղջի տակ: Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, անջատելու նրանց կտրուկ միջոցները արդարացված էին: Հենց շնորհիվ նրանց հզոր վահանի Աստվածաշնչի կրոնը անվնաս դուրս եկավ այն ճակատամարտից, որը խաղարկվում էր Պաղեստինում Հունաստանի թագավոր **Անտիոքոս Եպիփանեսի** օրոք[16]:

Հունաստանը այդ ժամանակներում վաղուց դադարել էր դեմոկրատիայի կղզի լինելուց: Այն կործանեցին կուսակցական պայքարը, պատերազմները և կոտորածները: Ամենուր ժողովուրդը հակված էր կենտրոնացված ուժեղ կառավարության: Այդ պատճառով, երբ մ.թ.ա. IV դարում Ալեքսանդր Մակեդոնացին իրեն միապետ հռչակեց, նա միայն տրամաբանական ավարտի հասցրեց հարյուր տարի իրենից առաջ սկսված պրոցեսը:

Որպեսզի թագավորական իշխանությանը բարձրագույն հեղինակություն տա, Ալեքսանդրը իրեն դասեց աստվածների շարքը: Այդպես վարվեցին նաև իր ժառանգները, և նրանց մեջ էր Անտիոքոս Եպիփանեսը (175-163 թթ.): Այդ թագավորը լրջորեն իրեն երևակայելով գերմարդ, ցանկացավ իրեն ենթակա ժողովուրդներին իրար միացնել, արմատավորելով նրանց մեջ հելլենիզմի քաղաքակնությունը, նրա ոճը, ճաշակը, կրոնը: Անտիոքոսի ձեռնարկումները ոչ մի տեղ արգելքների չհանդիպեցին և միայն Իսրայելի հավատքը դարձավ այն քարը, որին դեմ առավ նա:

Շարքային հոգևորականությունը, դպիրները և ժողովուրդը նախապես ցույց տվեցին նրան սոսկ կրավորական դիմադարձություն, բայց, երբ թագավորը պղծեց Տաճարը՝ այնտեղ կառուցելով Զևսի զոհարան և ահաբեկչության ճանապարհով սկսեց ներմուծել բազմաստվածություն, նրա դեմ բռնկվեց ապստամբություն: Այն արագությամբ վերաճեց ազատագրական պատերազմի, որը գլխավորում էր **Հասմոնեից** տոհմի զորահրամանատար Հուդա Մակաբեացին:

Պայքարի տարիներին կրկին մարգարեական խոսք հնչեց: Դանիել անվան տակ ծպտված անծանոթ մի մարգարե գիրք գրեց, որտեղ խարազանում էր բռնապետությունը և կրոնական հալածանքները: Հեղինակը պատկերում է մեծ տերությունները ագահ գազանների տեսքով և կանխագուշակում է, որ կգա ժամը, երբ երկնքից կհայտնվի Ազատարարը և վերջ կդնի գիշատիչ կայսրություններին: Ի տարբերություն այս աշխարհի թագավորությունները մարմնավորող հրեշների, Փրկիչը, համաձայն Դանիելի, կլինի մարդու՝ **Մարդու Որդու** նման[17]: Այդ հակադրությունը մատնանշում է արմատական շրջադարձը, որին սպասում է աշխարհը:

Խանդավառության հորձանքը հրաշքներ գործեց: Մակաբեացին Անտիոքոսի բանակին մի շարք շոշափելի հարվածներ հասցրեց, ազատագրեց Երուսաղեմը թշնամիներից և դուրս շպրտեց Տաճարից «գարշանքը». այդպես էին անվանում հրեաները հեթանոսական զոհասեղանը: Եվ երբ Մակաբեացին զոհվեց մարտում, նրա գործը շարունակեցին եղբայրները: 140 թվին Սիմոն Հասմոնեացին թագադրվեց և դարձավ թագավոր - քահանայապետ: Իսրայելը ձեռք բերեց անկախություն և վերականգնեց այն սահմանները, որոնք ուներ Սողոմոնի ժամանակ:

Ամրացան նաև երկրից դուրս գտնվող համայնքները: Այդ «սփյուռքի եկեղեցիները» կապող օղակ էին ծառայում Հրեաստանի և մնացյալ աշխարհի միջև: Նրանց ջանքերով Աստվածաշունչը առաջինը թարգմանվեց հունարեն: Քրիստոսի ծննդյան ժամանակներում 4 միլիոն հրեաներից համարյա 3 միլիոնը ապրում էին օտար երկրներում: Հետագայում ամենուր սփռված նրանց օջախների գոյությունը քիչ ծառայություններ չի մատուցի քրիստոնեության առաքյալներին:

Հասմոնեից հարստությունը, սակայն, չարդարացրեց ժողովրդի սպասումները: Նոր թագավորները շուտով վերածվեցին Աստծո Օրենքի հետ հաշվի նստել չկամեցող սովորական բռնակալների: Իշխանությունների կամայականությունները հավատքի նախանձախնդիրների մոտ խորթություն ծնեց թագավորական տան հանդեպ: Դրա հետ մեկտեղ, ըստ ավանդույթի, օրինական միապետեր համարվում էին միայն Դավթի սերունդները: Դրանից ելնելով, Հասմոնեացիներին պարզապես հանդուրժում էին որպես ժամանակավոր կառավարողների:

Արքունիքի հանդեպ ընդդիմության ոգին դարձավ բարեպաշտ մարդկանց մի խումբ, որոնց անվանում էին «անջատվողականներ» կամ փարիսեցիներ: Նախապես նրանք փորձեցին տապալել դինաստիան, բայց 88 թ.-ին նրանց խռովությունը դաժանորեն ճնշվեց: Հարյուրավոր փարիսեցիներ խաչ հանվեցին Ալեքսանդր Հաննեոս թագավորի կողմից:

Հաննեոսի մահից հետո փարիսեցիների դրությունը ամրապնդվեց: Բայց աստիճանաբար նրանք հեռացան քաղաքականությունից, ամբողջությամբ իրենց նվիրելով կրոնական գործունեության: Փարիսեցիներից շատերը դարձան Օրենքի մեկնիչներ և ուսուցիչներ, ռաբբիներ: Դպրոցներում և սինագոգներում նրանք տանում էին դժվարին, բայց անհրաժեշտ աշխատանք, ամրացնում էին մարդկանց հոգիներում հավատի և բարոյականության հիմունքները: Անսասան նվիրվածություն Աստծուն, ամուր ընտանեկան հիմքեր, մարդասիրություն, ազատության և արդարության սեր, այս ամենը պատվաստվում էր ժողովրդին փարիսեցիների լավագույն ներկայացուցիչների կողմից, որոնց մեջ առանձնապես առանձնանում էր հեզաբարո իմաստուն **Հիլլելը**, որը Երուսաղեմ էր եկել մ.թ.ա. մոտ 40 թվին: Նրա կարծիքով, Օրենքի էությունը՝ մի՛ արա ուրիշներին այն, ինչը չէիր ցանկանա անեն քեզ, ոսկե կանոնն է[18], իսկ ողջ մնացյալը համարում էր լոկ «մեկնություններ»:

Օրինապահության մեջ կար մյուս ուղղությունը: Դրա առաջնորդ դարձավ Հիլլելի մրցակից **Շամմայը**: Եթե առաջինը պլազգիներին սիրով հաղորդակից էր դարձնում հավատին, ապա երկրորդը քամահրանքով քշում էր նրանց իրենից հեռու: Շամմայը հսկայական նշանակություն էր տալիս, այսպես կոչված, «Հոգևոր հայրերի ավանդներին»: Նրա աշակերտները մեծացնում էին ծիսական ավանդույթների թիվը և սիրում էին ցուցադրել իրենց բարեպաշտությունը:

Փարիսեցիները մեծ հարգանք էին վայելում ժողովրդի մեջ: Բայց դրա փոխարեն **սադուկեցիները**՝ արքունիքին կապված քահանայական ազնվականությունը, նրանց թշնամաբար էր վերաբերվում և չէր բաժանում նրանց հայացքները: Ի տարբերություն փարիսեցիների, սադուկեցիները գտնում էին, որ մահով մարդու համար ամեն ինչ ավարտվում է: Նրանք ընդունում էին միայն Հնգամատյանը, իսկ մարգարեների գրություններին նայում էին որպես երկրորդականի[19]: Այդ հարուստ և ամբարտավան մարդիկ այնքան էլ չէին հավատում Փրկչի մասին եղած մարգարեություններին և կողմնորոշված էին միայն դեպի երկրային քաղաքականության:

Փարիսեցիների միաբանությանը զուգահեռ, մոտ 160 թվին, Պաղեստինում ծնունդ առավ կիսավանական «Լույսի որդիների» կամ հեսսեական ուխտը[20]: Չցանկանալով ոչ մի ընդհանուր բան ունենալ մեղսագործ աշխարհի հետ, հեսսեններն ընտրեցին մեկուսացած անապատակյացի կյանքը: Մոտ 140 թվին նրանց առաջնորդը, որին նրանք անվանում էին Արդարության Ուսուցիչ, հիմնադրեց Մեռյալ ծովի ափին, Քումրանում համաբնակություն: Այնտեղ, սին հոգսերից հեռու, հեսսեացիք աշխատում էին համատեղ, ազատ ժամանակն անցկացնելով ծիսական հացկերույթներով, աղոթքներով և Աստվածաշնչի ընթերցանությամբ: Նրանք համայնք էին, հաշվված ամբողջությամբ մինչև 4 հազար մարդ (փոքր երկրի համար զգալի թիվ), հոսում ամեն տեսակի երազողներ, ինչպես նաև կյանքից հուսալքված և հոգնած մարդիկ: Հեսսենների մեծամասնությունը ամուրի կյանք էր վարում, չնայած ոմանք պահպանում էին ընտանեկան ապրելակերպը:

Վստահ լինելով Քրիստոսի մոտալուտ հայտնությանը, «Լույսի որդիները» պատրաստվում էին արժանավայել դիմավորել Նրա գալուստը: Նրանք չէին կասկածում, որ Դատաստանի օրը բոլորին, բացի իրենցից, մահ է սպասվում:

Աղանդավորների հարձակումները Հասմոնեական տան դեմ հասցրեցին Արդարության Ուսուցչի հանդեպ հալածանքներին: Նրան պաշտողները խոսում էին, որ, որպես պատիժ, դրա համար միապետությանը դաժան վախճան է սպասվում:

Հեսսեականների կանխագուշակումը կատարվեց կես տարի անց՝ իրենց առաջնորդի մահից հետո: 63 թվին Պաղեստինը գրավեցին Պոմպեոսի զորքերը: Նա այն միացրեց կայսրությանը և Հյուրկանոս II-ին թողեց միայն որպես գերագույն իշխանության ստվեր: Իսկ 40 թվին Հռոմի սենատը հրեաստանի թագավորի տիտղոս շնորհեց եդովմացի զորահրամանատար Հերովդեսին, որը երեք տարվա քաղաքացիական պատերազմից հետո բարձրացավ Դավիթի գահին:

Մինչ այդ «սփյուռքի» հրեաները շարունակում էին ակտիվորեն յուրացնել հունական մշակույթի տարրերը: Նրանցից առավել կրթվածները ձգտում էին անտիկ փիլիսոփայությունը համաձայնեցնել Աստվածաշնչի հետ: Այդ ուղղությամբ առանձնապես շատ բան արեց Փիլոն Ալեքսանդրացին՝ Հերովդեսի ժամանակակիցը: Նա սովորեցնում էր աստվածային Ուժի մասին, որը հելլադայի իմաստունների հետևողությամբ անվանեց Լոգոս՝ Բան:

Աստվածայինի Գաղտնիքը, ասում էր Փիլոնը, անընդգրկելի և անարտահայտելի է, բայց երբ Նա հանդես է բերում Իր հզորությունը

և ողորմածությունը, ապա գործում է Բանի միջոցով: Բանով Արարիչը արարում և պահպանում է Տիեզերքը, նրա մեջ է Նա հայտնվում մահկանացուներին: Լոգոսի՝ իբրև Արարչի և տիեզերքի միջև միջնորդի, Փիլոնյան գաղափարը օգնեց հետագայում Ավետարանը փիլիսոփայության լեզվով շարադրելուն[21]:

Հրեաների մերձեցումը հելլենիստական աշխարհի հետ հասցրեց այն բանին, որ շատ հեթանոսներ հետաքրքրվեցին նրանց կրոնով: Հրեաների կողմից կռապաշտության մերժումը, առողջ բարոյականությունը, կենդանի կրոնական զգացումը իրենց կողմը գրավեցին առաջին նորադարձներին: Սկսեցին, ի վերջո, իրականանալ մարգարեների կանխասացությունները ժողովուրդների մասին, որոնք դառնալու են ճշմարտության. բարության և արդարության Աստծուն: Ինչ-որ տեղ «Հրեա» բառը սկսեց ձեռք բերել դավանանքային նշանակություն:

Մ. թ. ա. II և հատկապես I դարում պրոզելիտները, այսինքն՝ հուդայականության անցած մարդիկ, մեծ թվով սկսեցին հայտնվել Հռոմեական կայսրության տարբեր մասերում: Նրանցից ոմանք դարձի եկան հույն պայծառատես Սիբիլլայի գրած գրքերի ազդեցությամբ: Դա կեղծանուն էր, որից օգտվում էին Եգիպտոսի հրեա քարոզիչները: Նրանք աշխարհին կործանում էին գուշակում այն բանի համար, որ այն տրվել է կուռքերի և բռնակալների իշխանությանը: Շրթից շուրթ լուր էր փոխանցվում այն մասին, որ Հրեաստանից դուրս է գալու Մեկը, որին վիճակված է ժողովուրդների տիրակալ լինել:

Այնինչ իրականում համաշխարհային տիրապետությունը գնալով կենտրոնանում էր հռոմեացիների ձեռքում:

Հռոմը սկսեց կայսրության վերածվել մոտ մ. թ. ա. 200 թ.-ն, իր գլխավոր մրցակից Կարթագենի դեմ տարած հաղթանակից հետո: Սակայն պարզվեց, որ ռազմական հզորությունը կործանարար դարձավ Իտալիայի հանրապետական կարգերի համար: Չափազանց շատ երկրներ հարկ եղավ հպատակության տակ պահել, չափազանց ազդեցիկ դարձավ բանակը, որպեսզի կառավարման դեմոկրատական տարրերը կարողանան պահպանվել: Խոստանալով, ստիպելով, կաշառելով՝ բռնապետները աննկատ գրոյի հասցրին քաղաքական ազատությունների մեծ մասը: Հանրապետությունը խեղդված էր, և Հռոմը բոլոր առագաստները պարզած՝ ընթանում էր դեպի միահեծան բռնապետություն:

Քաղաքացիական պատերազմից և մ. թ. ա. 30-ական թվականների արյունալի ահաբեկչությունից հետո Հուլիոս Կեսարի ազգական Օգոստոս Օկտավիանոսը բավականին հեշտությամբ հաստատեց ինքնակալական կարգեր: Տակիտոսի խոսքերով, Օգոստոսը «կոչելով իրեն կոնսուլ և ժողովրդի իրավունքը պաշտպանելու համար իբր բավարարվելով տրիբունական իշխանությամբ, նախապես իր առատաձեռնությամբ նվաճեց զինվորներին, ապա հաց բաժանելով՝ ամբոխին, և բոլորին մեկտեղ՝ աշխարհի քաղցր բարիքներով, իսկ այնուհետև քիչ առ քիչ ուժ հավաքելով, սկսեց սենատը, մագիստրատները և օրենքները փոխարինել իրենով»[22]:

Դեռևս Հուլիոս Կեսարն արգելեց բոլոր միությունները և կազմակերպությունները, անգամ ամենաանվտանգները, իսկ Օգոստոսի վարչակարգը քաղաքացիների վրա մշտական հսկողությունը բարձրացրեց սկզբունքի աստիճան: Դեմոկրատ ձևանալով, Օկտավիանոսը աչալուրջ հետևում էր դժգոհության ցանկացած հնարավոր օջախի: Լրտեսների ճյուղավորված ցանցը լավ էր ծառայում այդ նպատակին:

Ընդ որում, շատերն էին գտնում, որ միապետությունը միանգամայն չափավոր փոխհատուցումն է անդորրության, կայունության և երկարատև միջազգային խաղաղության: «Օգոստոսի դարը» անվանել են Հռոմի լավագույն ժամանակաշրջանը, նրա մշակույթի Ոսկե դարը: Օգոստոսի ժամանակ Կապիտոլիումը հպարտորեն վեր խոյացավ աշխարհի վրա, ներշնչելով ակնածանք և սարսափ: Հռոմեական արծիվը բացել էր իր թևերը Ատլանտիկայից մինչև Մերձավոր Արևելք, Բրիտանիայից մինչև Աֆրիկայի ափերը: Յոթ բլուրների վրա հառնած քաղաքը դարձել էր կենտրոն, ուր «տանում էին բոլոր ճանապարհները»:

Փայլուն ռազմական տեխնիկայով, կազմակերպվածությամբ և կարգապահությամբ հռոմեացիները դրության տեր դարձան ողջ Միջերկրականում: Կառավարական չինովնիկները նվաճված երկրներից դուրս էին բերում անհաշիվ հարստություն: Բոլոր կողմերից դրանք հոսում էին Հռոմ՝ ստրուկներ, փղոսկր և կրկեսի համար գազաններ Նումիդիայից, մարմար՝ Հունաստանից, հաց՝ Եգիպտոսից, ապակի և ծիրանիի ներկ՝ Փյունիկիայից: Առևտրական քարավանները ձեռք էին բերում գորգեր, գործվածքեղեն և թանկարժեք զարդեր Բաբելոնից, Արաբիայից, Հնդկաստանից և նույնիսկ Չինաստանից: Մայրաքաղաքը վերակառուցվում էր: Ասում էին, որ կայսրն այն ընդունեց աղյուսե և թողեց մարմարյա:

Գերազանց մայրուղիները Հռոմը միացնում էին ծայրամասերի հետ, աշխուժացան առևտուրը և կապերը գավառների միջև: Բոլորի, ովքեր դարձել էին «Հռոմի քաղաքացի», իրավական հավասարությու-

նը նպաստեց Արևելքի և Արևմուտքի ժողովուրդների մերձեցմանը։ Թվում էր՝ ստոիկ փիլիսոփաների երազանքը միասնական պետության մասին մոտ էր մարմնավորման, որտեղ յուրաքանչյուր մարդ համարվում է Տիեզերքի քաղաքացի։

Զարմանալի չէ, որ պալատական բանաստեղծները փառաբանում էին Օգոստոսին և չէին գլանում ներբողներ շռայլել։ Կայսրն ինքն էր խրախուսում շողոքորթներին և բոլոր միջոցներով պահպանում էր իր հեղինակությունը։ Դրա համար, աստիճանաբար, սկսած արևելյան նահանգներից, ծայր առավ կայսրի պաշտամունքը։ Շատ չանցած, ողջ պետությունով մեկ արդեն գործում էին Օգոստոսի տաճարները, նրան ձոնում էին փառաբանություններ, նրան հռչակում էին «Հայրենիքի հայր», «սոտեր»՝ ազգի փրկիչ։

Վեր հառնող կայսրության և նրա գլուխ կանգնած մարդ աստծո տեսարանը ապշեցնում էր ժամանակակիցներին։ Արդեն խոսում էին դարերի համար հաստատված «անխորտակելի թագավորության» մասին։ Սակայն նվաճված ժողովուրդները չէին ցանկանում հաշտվել այդ հեռանկարի հետ։ Օգոստոսի կառավարման վերջում շատ պրովինցիաներում հուզումներ սկսվեցին, որտեղ Հռոմին նայում էին որպես շահագործողի։ Հրեաստանում հավատում էին, որ հայտնության այդ Գազանը կընկնի Փրկչի սրից։

Նվաճումները Հռոմը չազատեցին ներքին ծանր բախումներից։ Հողային կալվածքները և ֆինանսները գնալով կենտրոնանում էին խմբիշխանության ձեռքում։ Իտալիայի սնանկացած գյուղացիները խմբերով գնում էին Հռոմ, որտեղ կերակրվում էին պատահական վարձատրությամբ և կառավարության կողմից տրվող նպաստներով։ Երկարատև պատերազմները մայրաքաղաքը տառացիորեն հեղեղել էին ստրուկներով (նրանք այնտեղ մոտ մեկ միլիոն էին)։ Ստրուկները շատ անգամ ապստամբեցին, փորձելով վերադառնալ հարազատ եզերք, բայց այդ փորձերը մշտապես վերջանում էին հաշվեհարդարներով։ Այսպես, Սպարտակի գլադիատորների ջախջախումից հետո վեց հազար անհնազանդների խաչեցին Կապուից Հռոմ ձգվող ճանապարհի վրա։

Ոչ պակաս խորն էր և հոգևոր ճգնաժամը։ Հին հավատալիքներն ու առասպելները շատերի մոտ սկսել էին ծիծաղ հարուցել։ Կրոնը կորցրել էր իր նշանակությունը, վերածվելով քաղաքացիական պարտավորությունների բաղկացուցիչ մասի։ Դեռևս Ցիցերոնն էր ասել, որ պաշտոնական կուլտը պետք է զանգվածների մեջ կարգուկանոն պահպանելու համար միայն։



Գտնվեցին մարդիկ, որոնք պատրաստ էին անցնել վերջին սահմանը։ Բանաստեղծ Լուկրեցիոսը կրոնը համարում էր պարզապես վնասակար մոլություն։ «Իրերի բնության մասին» գրքում նա հարություն է տալիս հին Հունաստանի փիլիսոփաներ Դեմոկրիտի և Էպիկուրի մատերիալիզմին։ Համաձայն նրանց ուսմունքի, Տիեզերքը ոչ այլ ինչ է, քան պատահական գոյացություն՝ առաջացած ատոմների պարից։ Վաղ թե ուշ նրան կործանում է սպասվում։ Լուկրեցիոսն արդեն տեսնում էր համաշխարհային աշնան ախտանիշները, կանխագուշակելով աշխարհի վախճանն ու կործանումը։ Համանման գաղափարներ լայնորեն տարածվել էին ոչ միայն Արևմուտքում, այլև Հնդկաստանում և Չինաստանում։

Սակայն մարդկային ոգու բնույթն ինքը նրան թույլ չի տալիս չափազանց դյուրությամբ հաշտվել անմտության հետ։ Անգամ ամեն ինչից հավատակորույս մարդիկ չէին ցանկանում կյանքը համարել նյութի պատահական ալեցայտ, որի ետևից վրա է հասնում խավարը։

Այդ պատճառով էլ, ծանոթանալով Արևելքի կրոններին, հռոմեացիք ագահորեն ձգվեցին դեպի դրանք։ Սկսվեց Արևմուտքի իսկական նվաճումը օտարերկրյա պաշտամունքների կողմից։ Եգիպտական Իգիդային սկսեցին աղոթել Բրիտանիայից մինչև Բալկաններ, Հռոմում կառուցվեցին հրեական սինագոգներ, փռյուգիական աստվածուհի – մայր Կիբելեի, պարսկական Միհր աստծո տաճարներ։ Փողոցային քարոզիչները ազդարարում էին ճշմարտություններ՝ բերված Գանգեսի ափերից, Պարթևստանից և Միջին Ասիայից։ Վերածնվեցին հունական գաղտնածիսությունները, որոնք խոստանում էին իրենց մասնակիցներին անմահություն և բարձրագույն աշխարհների ճանաչողություն։ Գաղտնախորհուրդ ուսմունքները, աստղագուշակությունը, մոգությունը և կախարդչությունը հետևորդներ ունեցան հասարակության բոլոր դասակարգերում։ Հրաշագործության հետևից ընկնելը առաջ բերեց նախապաշարումների և շառլատանության աճ։

Տեսնելով այդ, կասկածամտորեն տրամադրված մարդիկ պատրաստ էին ընդհանրապես հրաժարվել կյանքի իմաստը հասկանալու հույսերից։ Նրանց կարծիքով՝ «Ինչ է ճշմարտությունը» հարցը պատասխան չունի։ Մի խոսքով, մտքի ցրվածությունը լիարժեք էր։ Միստիկական ոգորումները և հոգևորի բացակայությունը, մաքրության ծարավը և բարոյական անկումը կարող էին հանդիպել մի ընտանիքում։ Հաճախ հայրը ստոիկյան արհամարհանքով պարփակվում էր ինքն իր մեջ աշխարհի ունայնության հանդեպ, մայրն այցելում էր աղանդավորների

գիշերային տանջածեսին, իսկ որդին հնարում էր հաճույքի և սուր զգայությունների նոր ձևեր:

Մարդը կանգնել էր ուղեբաժանում և բոլոր կողմերից լսում էր կոչող ձայներ՝ անտարբեր եղիր կյանքի տխրությունների և ուրախությունների հանդեպ, խորասուզվիր հանդարտ հայեցողության մեջ՝ ասում էին բուդդայականները և ստոիկները, ապրիր բնության համաձայն, ինչպես բոլոր էակները՝ սովորեցնում էին կինիկները և էպիկուրյանները, երջանկությունը գիտելիքների և խորհրդածությունների մեջ է՝ առարկում էին նրանց բնագետ-փիլիսոփաները, մաքրիր քեզ ծիսական արարողություններով և ձեռք կբերես անմահություն՝ հավատացնում էին գաղտնածիսության ուսուցիչները, պահպանիր հավատարմությունը միակ Աստծուն և պահպանիր Նրա օրենքը՝ հռչակում էր Իսրայելի կրոնը: Իսկ հռոմեական արծիվը ուշադիր զննելով որսը, ճախրում էր ոգու այդ հորձանուտի վրա, որում ինչպես նախաստեղծ քաոսում, խառնվել էին ներհակ սկիզբները:

Ժամանակ առ ժամանակ հույս էր առկայծում, որ կհայտնվի Նա, որը դուրս կբերի աշխարհը լաբիրինթոսից: Բանաստեղծ Վերգիլիոսը կանխագուշակել էր մանկան ծնունդ, որից սկսվելու էր նոր Սատուռնական դարաշրջան: Բուդդայականները սպասում էին Բուդդա Մայտրեային, հնդուականները՝ Վիշնու աստծու հերթական մարմնավորմանը, պարսիկները՝ Փրկիչ Սաոշյանտին, հրեաները՝ Փրկչին...

Պաղեստինում տարեցտարի խտանում էր միստիկ ակնկալության մթնոլորտը: Հույս էին տածում, որ, ահա ուր որ է երկնքից կհայտնվի Եղիա մարգարեն և կկատարի Աստծո Պատգամաբերի օծումը: Շատերը մտածում էին, որ Նա մեծ զինվորական է լինելու, որը խորտակելու է հեթանոսական թագավորությունները: Ուրիշներն էլ հավատում էին բարու վերջնական հաղթանակին չարի հանդեպ, լույսինը՝ խավարի, անմահությանը՝ մահվան, հավատում էին, որ «Աստված կայցելի Իր ժողովրդին»[23]:

Ի վերջո, երբ թվում էր, թե ամեն ինչ փորձված և սպառված էր, պատմության խավար հորիզոններում բոցավառվեց արշալույսը: Օգոստոսի կառավարման 20-րդ տարում փոքրիկ Նազարեթ գյուղակում գալիլեացի Կույսին ավետվեց. «Դու կծնես մի որդի ու Նրա անունը ՀԻՍՈՒՍ կդնես: Նա կլինի մեծ և Բարձրյալի որդի կկոչվի: Եվ Տեր Աստված Նրան կտա Նրա հոր՝ Դավթի աթոռը և Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, և Նրա Թագավորությունը վախճան չի ունենա»:



ՄԱՍ I

# ԲԵԹՂԵՀԵՄԻՑ ՄԻՆՉԵՎ ԿԱՓԱՌՆԱՅՈՒՄ

Գլուխ առաջին

# «ՅԱՎՈՒՐՍ ՀԵՐՈՎԴԵՍԻ ԱՐՔԱՅԻ»

մ.թ.ա. 4թ.

Արդ մտովի տեղափոխվենք Հերովդեսի կառավարման վերջին ամիսների Հրեաստան:

Երուսաղեմի բնակիչները, սովոր լինելով հեռավոր երկրներից իրենց քաղաք հաճախ այցելող ուխտավորներին, հավանական է, ուշադրություն չդարձրին օտարերկրացիների քարավանին, որն անցնում էր նրանց փողոցներով Հռոմի հիմնադրման 750-րդ տարվա ձմռանը: Բայց շատ չանցած՝ նրանց մասին սկսեցին խոսել, քանզի հայտնի դարձավ, որ ճանապարհորդները փնտրում են Հրեաստանի Թագավորին, ընդ որում, ամենևին էլ ոչ Հերովդեսին, այլ մեկ ուրիշին՝ այդ օրերին ծնված: «Մենք նրա աստղը տեսանք արևելքում և եկանք իրեն երկրպագելու»,-ասում էին նրանք: Պարզվեց, որ արևելյան մոգեր էին նրանք, որոնք երկնքում նկատել էին մեծ Տիրակալի նշանը[1]: Այն, որ Երուսաղեմ էին եկել նրան փնտրելու, ոչ ոքի չէր կարող զարմացնել: Բոլորն էին լսել Հրեաստանի հրաշախորհուրդ Մարդու մասին, Որը պետք է նվաճեր աշխարհը[2]:

- Ուր է հրեաների արքան, որ ծնվեց»,- հարցնում էին մոգերը, բայց մարդիկ պատասխանելու փոխարեն, վախվորած, փութով հեռանում էին: Հարկ է փոքր ինչ տեղյակ լինել Երուսաղեմի այդ տարիների կացությանը, որպեսզի հասկացվի, թե որչափ հանդուգն ու անզգույշ պիտի թվար այդ հարցն ինքնին: Բայց հեռուներից եկած ճամփորդները հազիվ թե կռահեին իրենց վրիպումը: Հավանական է՝ նրանք լիովին անտեղյակ էին այն ամենին, ինչ կատարվել էր Հրեաստանում Հերովդեսի օրոք:

Շողոքորթների կողմից Հերովդէս Մեծ հորջորջյալ այդ միապետի կյանքը կարող է սյուժեներ տալ «Մակբեթի» ոգով ստեղծված մի քանի ողբերգությունների: Հռոմեացիների աջակցությամբ և ժողովրդի կամքին հակառակ տիրելով իշխանությանը՝ նա ապարդյուն ջանում էր ժողովրդայնություն նվաճել: Գահակալության արտաքուստ պերճափայլ երեսուներեք տարիներին թշնամանքը Հերովդեսի հանդեպ միմիայն մեծացավ[3]:

Լինելով դաժան, փառամոլ, կրքերից մշտապես փեռեկտվող մարդ՝ Հերովդեսը հեռու էր այդ ժամանակներում հրեաներին հուզող կրոնական խնդիրներից: Պալատական խարդավանքները և կանայք, պատերազմները և շինարարական աշխատանքները ամբողջովին կլանել էին նրան: Նրա օրոք երկիրը վերստին ինքնավարություն ստացավ: Հերովդեսն այն պատեց տասնյակ ամրոցներով և քաղաքներում արևմտյան ոճի բազում շենքեր կառուցեց: Միևնույն ջանադրությամբ նա զբաղվում էր թատրոնների և ձիարշավարանների, իր հովանավոր Օգոստոսի պատվին սրբավայրերի շինությամբ և Երուսաղեմի Տաճարի վերանորոգմամբ. վերջինս արքայի առանձնահատուկ հոգածության առարկան էր: Սնափառության գերի Հերովդեսն իր փառքով ցանկանում էր նսեմացնել հին աշխարհի Սողոմոնին: Նա հպարտանում էր Տաճարով, որում ներդրել էր հսկայական միջոցներ և վերածել աշխարհի հրաշալիքներից մեկի: Այնուհանդերձ, դրանով անգամ նա չկարողացավ շահել հպատակների վստահությունը:

Հերովդեսի հայրը Եդովմացի մեծատոհմիկ էր, իսկ մայրն արաբական ծագում ուներ, որի պատճառով և ինքը թագակրության օրինական իրավունք չուներ: Թագավորը տառապում էր բոլոր բռնակալներին հատուկ հիվանդագին կասկածամտությամբ, և նրա աչքին ամեն ինչ իր մեջ դավաճանություն էր պարունակում: Հերովդեսն առավելապես երկյուղում էր Հասմոնեից՝ իր կործանած հարստության հետնորդներից, այդ պատճառով էլ ցանկացած պատրվակ օգտագործում էր նրանցից ազատվելու համար:



Թագավորի ճակատագրում վճռորոշ դեր խաղաց այն հանգամանքը, որ նրա կինը՝ Մարիամնեն (թերևս միակ էակը, որին նա անկեղծորեն սիրում էր), Հասմոնեից տոհմի իշխանադուստր էր: Այդ հպարտ և անվեհեր գեղեցկուհու մեջ ապրում էր երկրի անկախության համար մարտնչող ռազմիկների ոգին: Նա չէր կարողանում թաքցնել ամուսնու նկատմամբ արհամարհանքը, իսկ իր մայրը՝ Ալեքսանդրան, հաճախ էր խառնվում իրենց ընտանեկան կյանքին՝ անհանգստությամբ համակելով առանց այն էլ կասկածամիտ Հերովդեսին:

Երբ Ալեքսանդրան, օգտագործելով Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի ազդեցությունը, հասավ իր տասնյոթամյա որդուն քահանայապետի կոչում տալուն, ակամա պատճառ դարձավ նրա մահվան: Հերովդեսը, տեսնելով, որ պատանին վայելում է երուսաղեմցիների սերը, չկարողացավ հանդուրժել այդ: Մ. թ. ա. 35 թ. տոնակատարության ժամանակ Մարիամնեի եղբորը թագավորի աչքի առաջ ջրախեղդ արեցին: Նրա մահը ներկայացվեց որպես դժբախտ պատահար, մինչդեռ քույրը և մայրը շատ լավ հասկացան, թե իրականում ինչ է կատարվել:

30 թ.Հերովդեսի դրությունն առավել քան երբևէ ամուր էր: Ակտիոնի ճակատամարտից հետո, որը Օկտավիանոսին բերեց լիիրավ իշխանություն, Հրեաստանի թագավորը հուսալի քաղաքական դաշնակից ստացավ: Օգոստոսի վստահությունն ու աջակցությունը ապահովում էին նրա գահի անսասանությունը: Բայց ինչքան հաջող էին ընթանում Հերովդեսի դիվանագիտական գործերը, այնքան անտանելի էր դառնում կյանքը սեփական հարկի տակ:

Մոտավորապես 29 թ. ընտանեկան դրաման հասավ աղետալի աստիճանի: Մարիամնեի ատելությունն այնքան ակնհայտ դարձավ, որ թագավորը նրան ևս կասկածեց դավադրության մեղսակցության մեջ: Եվ մի անգամ, հարազատների դրդմամբ, Հերովդեսը կատաղության մոլուցքի մեջ մահվան դատավճիռ կայացրեց նրա նկատմամբ, ով ամեն ինչից թանկ էր իր համար: Հլու դատավորները արագ համաձայնեցին թագավորի ցանկությանը:

Մարիամնեն մահապատժի գնաց ողորմածություն չհայցելով, այլ իրեն պահեց զարմանալի արժանապատվությամբ: Մայրը, կանխազգալով իրեն սպասվելիքը, հրապարակավ անարգում էր աղջկան: Թագուհու վերջին րոպեների բոլոր ականատեսները սարսռացին այդ տեսարանից:

Հերովդեսը դժվարությամբ անցկացրեց ճակատագրական օրը: Երբ ամեն ինչ ավարտվեց, նա համարյա կորցրեց իր գիտակցությունը:

Նրան հետապնդում էր սպանվածի կերպարանքը, նա անվերջ կանչում էր Մարիամնեին անունով, գոռում էր, որպեսզի նրան իր մոտ բերեն, հետո խմեց և հարբեց, հասնելով անգգայության, գիշերներ անցկացրեց գինարբուքների մեջ, կազմակերպեց կատաղի ձիարշավներ, բայց ուրվականները նրան չէին լքում: Թագավորի առողջությունն այնքան էր քայքայվել, որ թվում էր, թե նա մահվան շեմին է:

Այնուամենայնիվ, Հերովդեսն առողջացավ և կրկնապատկված եռանդով շարունակեց նախճիրը: Նա մահապատժի ենթարկեց Ալեքսանդրային, իր քրոջ ամուսնուն, շատ այլ մերձավորների ու դրանիկների:

Երկարատև բացակայությունից հետո Մարիամնեի՝ Հռոմից եկած որդիներին՝ Աղեքսանդրոսին և Արիստոբուղոսին Հերովդեսը սկզբում ընդունեց գրկաբաց, բայց շատ չանցած նրանք ևս անվստահություն ներշնչեցին: Կեղծած նամակներ, մատնություններ, խոշտանգումների ենթարկված ծառաներից կորզած ցուցմունքներ- այդ բոլորը գործի գցվեցին նողկալի խաղերով, որոնք ավարտվեցին երկու իշխանների՝ Սամարիայում կախաղան բարձրացվելով:

Հերովդեսի կյանքի վերջին տարիները առանձնապես արտասովոր մռայլ էին: Չնայած «Հերովդեականների» կուսակցությունը ի դեմս նրա տեսնում էր իդեալական միապետի, համարյա թե՝ «Փրկչի», նա գիտեր, որ իր հանդեպ ժողովրդի ատելությունը գնալով մեծանում է: Այդ տրամադրությունները երկրում քաջալերվում էին փարիսեցիների կողմից, որոնք բոյկոտում էին Թագավորի յուրաքանչյուր նախաձեռնությունը: Նրանցից շատերը մահապատժի ենթարկվեցին այն բանի համար, որ կանխագուշակել էին հանցավոր կառավարման մոտալուտ մայրամուտը:

Հեշտ է պատկերացնել, թե ինչպիսի հուզախռովքի մեջ հայտնվեց յոթանասունամյա արքան, երբ իմացավ, որ ինչ- որ արևելյան դեսպաններ քաղաքում հարցուփորձ են անում «Հրեաների նորածին Թագավորի մասին»: Ով է գահի այս նոր, հերթական հավակնորդը: Ինչ ուժեր են կանգնած նրա թիկունքում: Հերովդեսի համար այդ լուրի ամենատհաճ կողմն այն էր, որ ինքը նոր էր լսում այդ հերթական դավադրության մասին:

Հանդիպելով օտարերկրացիներին, Հերովդեսը պարզեց, որ խոսքը, ըստ երևույթին, գնում է Մանկան մասին, Որին համարում եմ ապագա Փրկիչ: Իր գահակալության տարիներին նման բնույթի ոտնձգություն-



ների հետ Թագավորը մեկ անգամ չէ, որ գործ էր ունեցել, ուստի և հասկացավ, որ այստեղ հարկավոր են արագություն և վճռականություն: Նա սկսեց քահանայապետերից պարզել, թե որտեղ էր սպասվում Փրկչի ծնունդը, և, երբ նրան տվին Բեթղեհեմ անունը, այնտեղ ուղարկեց մոգերի, խնդրելով նրանց մանրամասն տեղեկություններ հաղորդել Հրեաների նորելուկ Թագավորի մասին: Ամենից քիչ Հերովդեսին մտահոգում էր աստվածաշնչյան մարգարեությունների կատարումը: Ծերունու մթագնած բանականությունը նոր հաշվեհարդարների ծրագրեր էր կառուցում:

Բեթղեհեմը գտնվում էր մայրաքաղաքից ոչ շատ հեռու: Երբ օտարերկրացիները ժամանեցին այդ փոքրիկ քաղաքը, այնտեղ արդեն վաղուց գիտեին ոչխարների փարախում ծնված հրաշախորհուրդ Մանկան մասին: Նրան առաջին տեսնողները՝ տեղացի հովիվները, պատմում էին այն արտասովոր նշանների մասին, որոնք իրենց բերեցին փարախ:

Մանկան ծնողները՝ ատաղձագործ Հովսեփը և Մարիամը, Գալիլեայից գաղթածներ էին, որոնք Բեթղեհեմ էին եկել մեկ ու կես տարի առաջ, Օգոստոսի երդում տալու կապակցությամբ անցկացվող մարդահամարի ժամանակ[4]:

Պատմում էին, որ երբ Մայրը Մանկան հետ եկավ Երուսաղեմ Նրա վրա կատարելու ինչ- որ օրենքի սովորության համաձայն էր, Նրա Որդուն մեծ ապագա գուշակեցին: Խորաթափանց Սիմոն ծերունին, վերցնելով դեռատի Մոր ձեռքից Մանկանը, իր երախտագիտությունը հայտնեց Աստծուն և ասաց, որ արդեն կարող է հանգիստ մահկանացուն կնքել, քանի որ տեսավ Փրկությունը, որը Տերը «նախատեսել էր հեթանոսաց լուսավորության և Իսրայելի փառքի համար»: Բարեպաշտ ծերունին օրհնեց զմայլված ծնողներին և ավելացրեց, դիմելով Մարիամին. «Ահա՝ սա նա է, որ պատճառ է դառնալու Իսրայելի մեջ շատերի անկման ու բարձրացման և նշան՝ հակառակության: Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի»[5]:

Այդ մարգարեության մասին լսեցին Տաճարում գտնվող շատերը: Նրանք, ովքեր սպասում էին «Իսրայելի մխիթարությանն», փոխանցում էին լուրը բերնեբերան: Հասավ այն, իհարկե, Բեթղեհեմ: Այդ պատճառով էլ մոգերը առանց դժվարության կարողացան գտնել Հովսեփին և Մարիամին: Մտնելով նրանց տուն, նրանք Մանկան ոտքերի առաջ դրեցին իրենց ընծաները և երկրպագելով Նրան՝ հեռացան...

Հերովդեսը ապարդյուն սպասում էր լուրերի. մոգերը գերադասե-

ցին Հայրենիք գնալ այլ ճանապարհով, ետևում թողնելով Երուսաղեմը:

Համոզվելով, որ իր ծրագիրը չհաջողվեց, թագավորը որոշեց ենթադրյալ վտանգը վերացնել միանգամից: Բեթղեհեմ ուղարկեց զինվորների ջոկատ՝ այնտեղի երկու տարեկանից փոքր բոլոր մանուկներին կոտորելու կարգադրությամբ:

Թե հրամանը ինչ չափով կատարվեց՝ անհայտ է: Հերովդեսն այդ բանը, անկասկած, խիստ գաղտնի էր պահում: Անգամ այդ ժամանակների մասին գրած Հովսեփոս Փլավիոսը չի հիշատակում Բեթղեհեմյան ողբերգության մասին: Ընդ որում, նրա աչքին այդ չափազանց աննշան էր Հերովդեսի անհամար գազանությունների համեմատ:

Ինչպես էլ որ եղած լիներ, Նա, Որին փնտրում էին մարդասպանները, քաղաքից արդեն հեռու էր: Մոգերի հեռանալուց շատ չանցած, Գալիլիական ընտանիքը թաքնվեց: Հովսեփը գիտեր, որ շատ ավելի խելամիտ կլինի առհասարակ լքել Հերովդեսի տիրապետության սահմանները և ուղևորվեց Եգիպտոս՝ մերձակա կենտրոններից մեկը, որտեղ ապրում էին «սփյուռքի» հրեաներ:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ առաջին իսկ օրերից աշխարհը Փրկիչն ընդունեց ատելությամբ և սպառնալիքներով: Բայց դա ամբողջ աշխարհը չէր, նրանք, ովքեր հավատում էին և սպասում, ովքեր սրտով մաքուր էին և լեցուն հույսերով, Քրիստոսին դիմավորեցին այլ կերպ. Բեթղեհեմյան հովիվները, ծերունի Սիմոնը և արևելյան իմաստունները տեսան Նրանում Գալիք Թագավորին:

Նույն տարվա գարնանը ծանր հիվանդությունը Հերովդեսին գամեց անկողնուն: Նրան շարունակում էին տանջել սարսափները, նա շարունակ լսում էր ամբաստանողներին, մի քանի անգամ փոխեց կտակը: Թագավորին հանգիստ չէր տալիս այն միտքը, որ ժողովուրդը անհամբերությամբ սպասում է իր մահվանը: Իմանալով, որ ինչ-որ պատանիներ, ռաբբիների դրդմամբ Տաճարում ջարդել են ոսկեզօծ արծիվը՝ Հռոմի խորհրդանիշը, նա կարգադրեց ձերբակալել նրանց և դատել ամենայն խստությամբ: Հաշվի չառնելով սաստիկ հիվանդությունը, Հերովդեսն իր մեջ ուժ գտավ անգամ ներկա լինել դատավարությանը: Մեղադրյալներին դատապարտեցին խարույկ բարձրացնելու, որը Երուսաղեմում առաջ բերեց վրդովմունքի ալեկոծություն:

Մեռնող թագավորին տեղափոխեցին Երիքով, որտեղ փորձում էին ջերմուկներով բուժել: Եղավ մի պահ, երբ ցավերը Հերովդեսին քիչ էր մնում հասցնեին ինքնասպանության, նրան հազիվ հաջողվեց փրկել: Ծառայամիտների աղմուկն ու ճիչերը հասան թագավորի՝ կալանքի տակ առնված ավագ որդուն, որը որոշելով, որ հայրը վախճանվել է, բանտապանին խնդրեց ազատ արձակել իրեն: Բայց հսկիչը լուր հասցրեց այդ մասին Հերովդեսին, և նա կատաղության մեջ իշխանին անհապաղ սպանելու հրաման արձակեց: Հինգ օր հետո մահը վրա հասավ և իրեն՝ միապետին:

Նրա հոգեվարքը սարսափելի էր, նա անեծքներ էր շաղ տալիս, զառանցում էր նոր մահապատիժներ: Ասում են, որ նա իբր հրամայել է խողխողել մի խումբ ազնվատոհմիկ պատանիների, որպեսզի թեկուզ այդ կերպ զրկի ժողովրդին ուրախությունից և ստիպի նրանց արցունք թափել: Հերովդեսի մահվան օրը հետագայում համարվեց հրեաների ազգային տոն:

Թագավորի ընտանիքը շքեղ թաղում կազմակերպեց: Ծիրանիով զգեստավորված մարմինը տանում էին ոսկե պատգարակի վրա: Նրանց ետևից թիկնազորի ուղեկցությամբ անցնում էին նրա որդիները՝ Արքեղայոսը, Անտիպասը, Փիլիպպոսը և մյուսները՝ ծնված Հերովդեսի բազմաթիվ կանանցից: Բայց դեռ չէր լռել վարձու եղերամայրերի ողբը, երբ ժառանգների միջև իշխանության համար պայքար սկսվեց[6]: Ըստ կտակի, Հորդանանի մարզը և Գալիլեան դարձան Անտիպասի սեփականությունը, նրանցից հյուսիս եղած տարածքները տրվեցին Փիլիպպոսին, իսկ Երուսաղեմի գահը, Հրեաստանն ու Սամարիան՝ Արքեղայոսին: Սակայն բաժանումը հաստատելու համար հարկավոր էր գնալ Հռոմ: Նախքան թագավորական ընտանիքի ուղևորվելը, քաղաքում անկարգություններ բռնկվեցին, ժողովուրդը պահանջում էր պատժել Հերովդեսի հանցագործությունների մեղսակիցներին: Արքեղայոսը մերժեց բոլոր հանրագրերը և գնաց, հանձնելով Երուսաղեմը հռոմեական հրամանատարությանը, որոնք դաժան հաշվեհարդար տեսան ըմբոստացողների հետ: Բայց և այնպես, երկիրը շարունակում էր փոթորկվել, իսկ կայսրի մոտ պատվիրակներ ուղարկվեցին՝ ատելի դինաստիան ամբողջովին վերացնելու խնդրանքով:

Օգոստոսը հավանություն տվեց Հերովդեսի կտակին: Նրա երեք որդիներից յուրաքանչյուրը ստացել էր իր բաժին ժառանգությունը: Սակայն Արքեղայոսը, հակառակ իր սպասումների, տուն վերադարձավ առանց արքայական տիտղոսի: Կայսրը նրան տվել էր միայն «Էտնարխի»՝ ժողովրդի կառավարչի կոչում, չնայած խոստացել էր, որ հետագայում նրան թագավոր կդարձնի, եթե նա իր հավատարմությունը ցուցաբերի սենատի հանդեպ:

## Գլուխ երկրորդ

# ՆԱԶԱՐԵԹ

### Մ.թ.ա. 3 թ.- մ. թ. 27 թ.

Երբ Հերովդեսի մահվան լուրը հասավ Եգիպտոս, ատաղձագործ Հովսեփը, վստահ լինելով, որ վտանգն անցել է, պատրաստվեց հայրենիք վերադառնալ: Սակայն նա վախենում էր Արքեղայոսի հետապնդումներից, ուստի չվերադարձավ Բեթղեհեմ, այլ գերադասեց բնակություն հաստատել Հյուսիսում, Նազարեթ ոչ մեծ քաղաքում, որտեղ ժամանակին ապրում էր Մարիամի հետ:

Այդ ժամանակներում Գալիլեան խիստ բնակեցված մարզ էր, իսկ աշխարհագրական դիրքը դարձրել էր այն բաց՝ աշխարհի բոլոր կողմերից փչող հողմերի համար: «Այստեղին մոտիկ էին Փյունիկիան, Ասորիքը, Արաբիան, Բաբելոնը և Եգիպտոսը: Հեթանոսների կղզիները և Եվրոպայի բոլոր հռչակված երկրները երևում էին Արևմտյան ծովի ջրերից: Հարթավայրերում ծածանվում էին Հռոմի դրոշները... Փարավոնները և Պտղոմեոսը, Էմիրները և Արշակունիները, դատավորները և հյուպատոսները, բոլորը պայքարում էին այդ գողտրիկ մարզը տիրելու համար: Այստեղ են փայլփլել ամաղեկացիների գեղարդները, հողը ցնցվել՝ Սեզոստրիսի մարտակառքերի դղրդյունից, այստեղով են անցել մակեդոնական հոծաշարք փաղանգները, այստեղ են լսվել Հռոմեական լայնաշեղբ սրերի շաչյունները, վիճակված էր այստեղ հնչելու խաչակիրների աղաղակները, Անգլիայի և Գաղիայի հրետանու թնդյունները: Թվում էր, որ Իզրեէլ այդ հարթությունում բախվում են Եվրոպան և Ասիան, հուդայականությունը և հեթանոսությունը, բարբարոսությունը և քաղաքակրթությունը, Հին և Նոր Ուխտերը, անցյալի պատմությունը և գալիքի հույսերը»[1]:

Ըստ որում, Նազարեթը մի կողմ էր ընկած պատմության այդ տարանցիկ ճանապարհներից և ավետարանական դարաշրջանում այն համարվում էր խուլ, հետամնաց բնակավայր: Նույնիսկ ասացվածք կար. «Հնարավոր է Նազարեթից լավ բան»: Եվ, ասես այն բանի համար, որպեսզի հերքվի մարդկանց բոլոր գնահատականները, հենց այդ աղքատիկ փոքր քաղաքը դարձավ Քրիստոսի «ծննդավայրը», նրանում անցավ Նրա կյանքի մեծ մասը: Համարյա 30 տարի Նա անցավ նրա քարքարոտ փողոցներով և կածաններով բարձրացավ մերձակա բլուրները: Քչերը գիտեին Նրա ծննդի իրական տեղի մասին, բայց նույնիսկ նրանք, ովքեր լսեցին այդ մասին, անվանեցին Նրան **Հանոցրի**, Նազովրեցի:

Եթե մենք կարողանայինք հայտնվել այդ տարիների Նազարեթում, ապա կտեսնեինք լեռան վրա ցրիվ եկած, խաղողի այգիներով և ձիթենյաց պուրակներով եզերապատված, տափակ տանիքներով շուրջ հարյուր սպիտակ տներ: Զառիվայր բարձունքներից բացվում է գեղազմայլ համայնապատկեր՝ կապույտ լեռնապարեր, կանաչ դաշտավայրեր, ցանած արտեր, որոնց վրա, հավանաբար, մեկ անգամ չէ, որ հանգչել է Հիսուսի հայացքը:

Այդ ժամանակներից շատ բան է փոխվել, բայց Գալիլիայի բնությունը մնացել է համարյա այնպիսին, ինչպիսին երկու հազար տարի առաջ էր: Ճանապարհորդները միաձայն հաստատում են, որ Նազարեթը և իր մերձակայքը սրբազան երկրի անկրկնելի անկյունն են, այն անվանում են «լեռնային վարդ» և «երկրային դրախտ»: Բարձրություններում օդը մաքուր է և թափանցիկ: Ձմեռային անձրևներից հետո, Նազարեթի բլուրները վերածվում են պարտեզի, այն պատվում է ամենանուրբ երանգների բազմապիսի ծաղիկներով՝ շուշան, լեռնային կակաչներ, ծափկոտրուկներ: Հիսուսը սիրում էր ծաղիկներ: Նա ասում էր, որ դրանց հետ չի կարելի համեմատել անգամ Սողոմոն թագավորի զարդերը:

Գարնանը Նազարեթի դաշտերը խլացնում են արտույտների դայլայլը, հեռուներում տարածվում է տատրակների ղունղունոցը, երկնքի թանձր կապույտում սահուն ճախրում են հավալուսների, թռչնձերի

երամները: Թռչունները, ինչպես և ծաղիկները, Քրիստոսի խոսքերում դարձան հոգու կերպեր, որոնք իրենց հույսը դրել են Աստծո վրա: Նա օրինակ էր բերում դա ունայնահոգ և բազմահոգս մարդկանց:

Գալիլեացիները առողջ, ուժեղ, անմիջական մարդիկ են և իրենց ժամանակի մեծ մասը զբաղված են գյուղատնտեսությամբ: Նրանք աճեցնում են խաղող, թուզ, ձիթենի, մարգագետիններում արածացնում են այծեր և ոչխարներ, մշակում են դաշտերը: Նազարեթի կանայք առավոտյան կժերով գնում էին աղբյուր, որը մինչև այսօր էլ տարածքին ջուր է մատակարարում: Այդտեղ ջրի է գնացել Կույս Մարիամը: Ջրհորը հիմա էլ կրում է Նրա անունը:

Ինչպես է նա ապրել Նազարեթում: Ինչպես է ապրել Հիսուսը: Պարականոն լեգենդները պատմում են այդ տարիների մասին շատ մանրամասներ: Բայց մենք չենք կարող դրանք համարել արժանահավատ, թեկուզ հենց այն պատճառով, որ դրանք ավետարանական ոգու հետ գտնվում են կտրուկ հակասության մեջ[2]: Մատթեոսը և Ղուկասը անդրադառնալով Քրիստոսի այդ շրջանի կենսագրությանը, գերադասում էին զուսպ լակոնիզմը և ասում էին միայն այն մասին, ինչը իրենց քաջ հայտնի է:

Պարականոնների հայտնած միայն երկու փաստն է թվում վստահություն ներշնչող: Դրանք հավաստում են, որ Հովսեփը մահացել է, երբ Հիսուսը տասնինը տարեկան էր[3]: Լեգենդները սովորաբար հակված են խորհրդանշային թվեր* բերելու:

Հիսուսին Իր հասարակական ծառայությունների ժամանակ անվանում էին «Մարիամի Որդի», իսկ դա նշանակում է, որ Հովսեփն արդեն կենդանի չէր: Համաձայն այլ ավանդազրույցի, դեռահաս Հիսուսը ոչխար էր արածացնում[4]: Նրբերանգները, որով համակված են Նրա առակները հովիվների մասին, անուղղակիորեն հաստատում են այդ: Բոլոր դեպքերում, Նազարեթցի Պարմանին մշտապես տեսնում էր իրենց հոտը հոգատար հսկող մարդկանց: Տեսել էր Նա նաև որթատունկերը կապող խաղողագործների, սերմնացանների՝ գարնանային հանդերում, մանգաղով հասկերը հնձող հնձվորների: Ավելի ուշ, այդ տեսարանները որպես պատկերներ են ծառայելու Նրա առակների համար: Դրանք մեզ տեղափոխում են գալիլեական խաղաղ գեղջկական աշխարհը, որը պատանի տարիքից շրջապատել էր Հիսուսին:

Շաբաթ օրերին Հովսեփի ընտանիքը գալիս էր Նազարեթի աղոթատուն՝ սինագոգ, որտեղ ժողովուրդը լսում էր Սուրբ Գրքերը և ռաբբիների զրույցները: Կարդացողը բարձրաձայն արտասանում էր փառաբանությունը, իսկ ներկաները բոլորը կրկնում էին նրան: Հիսուսը սիրում էր անկեղծ հավատի այդ արտահայտությունները, և հետագայում Նրա քարոզներում մեկ անգամ չէ, որ կհնչեն պատանի տարիներին Նազարեթում իր լսած աղոթքների արձագանքները[5]:

* Դրանց կարգին են **պատկանում**՝ 3, 7, 12, 40:



Բայց ճիշտ չէր լինի նկարագրել Գալիլեայի կյանքը անխռով հովվերգական տեսքով: Այնտեղ էլ էին կրքերը եռում, այնտեղ էլ էին երազում ազատության մասին: Ժողովուրդը գտնվում էր երկակի, նույնիսկ եռակի ճնշման տակ: Հարկահավաքները ուժով խլում էին նրանցից կայսերական տուրքերը, Երուսաղեմը վերցնում էր իր տասանորդը, իսկ տեղացի կալվածատերերը ուղղակի կեղեքում էին գյուղացիներին: Բայց և այնպես, մարդիկ հավատում էին, որ վաղ թե ուշ կհաղթանակի արդարությունը: Մարգարեների գրքերը, որոնք կարդացվում էին սինագոգներում և ձեռքից ձեռք անցնող վախճանաբանական գրությունները հին աշխարհի մոտալուտ վախճանի հույս էին ներշնչում:

Երբ Հերովդեսը մահացավ, Գալիլեայում ապստամբություն պայթեց: Այն գլխավորում էր զելոտների՝ «Նախանձահույզների» կուսակցության պարագլուխ Հուդա Գավլոնիտը: Կրոնական ուղղության անիշխանականներ Հուդան և նրա համախոհ փարիսեցի Սադոկը մերժում էին ցանկացած իշխանություն Աստծո ժողովրդի վրա, բացի Իր՝ Արարչի իշխանությունից:

Հուսալքված գալիլեացիների խուժանը, ներշնչված աստվածապետական գաղափարներով, կազմակերպեցին մի ամբողջ բանակ և ճակատամարտով վերցրին Սեպֆորիս քաղաքը, որտեղ գտնվում էր զինարանը: Կվինտիլիանոս Բարայի լեգեոներներին դժվարությամբ հաջողվեց ճնշել խռովությունը: Հարյուրավոր ապստամբներ խաչ հանվեցին:

6 թ.-ին Արքեղայոսը, որը ժառանգել էր Հերովդեսի ոչ թե պետական քանքարը, այլ արատները, պաշտոնանկ արվեց և ուղարկվեց աքսոր: Նրա կալվածքները սկսեց կառավարել Երուսաղեմի քահանայապետը, իսկ մարզի ընդհանուր հսկողությունը փոխանցվեց պրոկուրատոր Կոպոնիուսին: Ինչպես Պոմպեոսի ժամանակ՝ այն ներգրավեցին Հռոմի ասորական պրովինցիայի կազմի մեջ: Անտիպասը և Փիլիպպոսը չնայած պահպանում էին չորրորդապետների խամաճիկային իշխանությունը, հայտնվեցին կայսրությունից առավել մեծ կախվածության մեջ:

Արքեղայոսին գահընկեց անելուց անմիջապես հետո Ասորիքի Նա-

համգապետ Կվիրինիոսը մարդահամար սկսեց ողջ Պաղեստինով մեկ՝ տուրքերի չափերը որոշելու նպատակով: Հուդա Գավլոնիտը, օգտվելով դրանից, կրկին ոտքի հանեց Գալիլիան հռոմեացիների դեմ, բայց շուտով սպանվեց մարտի ժամանակ: Նրա մահը սակայն չկարողացավ մարել մեսիանիզմի ռազմաշունչ ոգին: Իր հանգիստը աշխարհում ամեն ինչից վեր գնահատող Գալիլեայի կառավարիչ Հերովդես Անտիպասը շատ հաճախ էր այն կորցնում: Ամեն անգամ, երբ հայտնվում էր նոր առաջնորդ, որը զենքի էր կոչում ժողովրդին, գալիլեացիները արագ հավաքվում էին դեպի նրանց, հույս տածելով, որ բեկումնային պահին երկնքից հրեշտակներ կիջնեն և իրենց հետ կխորտակեն հռոմեական արծիվը: «Այդ մարտիկներին,- գրում է Փլավիոսը,- երբեք չպետք է կշտամբել նվազ արիության համար»[6]: Իզուր չէ, որ վաթսուն տարի անց, երբ Վեսպասիանոսի բանակը կանցնի Գալիլեայով,ստիպված կլինի համարյա յուրաքանչյուր գյուղ գրոհով վերցնել:

Հիսուսենց տանը պետք է որ իմանային Հուդայի ապստամբության մասին, քանի որ Սեպփորիսը գտնվում է Նազարեթից ոչ հեռու: Հնարավոր է՝ այնտեղ հայտնվել են ապստամբներից ոմանք, և Մարիամի Որդին տեսել է նրանց: Նա ինքը նույնպես պետք է խոսի ազատության և Աստծո տիրապետության մասին, բայց Նրա և բռնության ուղին ընտրած մարդկանց միջև անդունդ է ընկած լինելու: Նազարեթում հոգևոր հեղափոխություն էր պատրաստվում, որի իմաստը անհասկանալի կմնա զելոտներին:

Պարականոնների հեղինակները ժլատ չեն գտնվել այն հրաշքները նկարագրելուց, որոնցով մանկուց իբր Հիսուսը ապշեցնում էր բոլորին: Բայց Ավետարաններից երևում է, որ այդ ժամանակ ուրիշ մարդկանց համեմատությամբ Նա ոչնչով հանդես չէր բերում գերազանցություն, այլ ընդհակառակը, կարծես թե թաքցնում էր օտար մարդկանցից Իր գաղտնիքը: Միայն մի անգամ Նա ծնողներին հասկացնել տվեց, որ պատկանում է ոչ թե իրենց, այլ ուրիշ, բարձրագույն աշխարհի: Դա տեղի ունեցավ Զատկի օրերին, հավանական է, ոչ շատ առաջ Գալիլիական խռովությունից:

Ինչպես և բոլոր բարեպաշտ հրեաները, Հովսեփն ամեն տարի գնում էր Երուսաղեմ տոնակատարության: Ուխտագնացություն չէր պարտավորեցվում կանանց, բայց Մարիամը սիրում էր Տաճարը և միշտ այցելում էր սուրբ քաղաքը: Երբ իր Որդին հասավ կրոնական չափա-

* Տե՛ս ծանոթ. 7:



հասության, Նա Նրան վերցրեց Իր հետ*:

Այդ օրերին դեպի մայրաքաղաք տանող ճանապարհներին ձգվում էին մարդկանց խայտաբղետ շարանները, իսկ հովիտների վրա հնչում էր սաղմոսների երգեցողությունը: Երուսաղեմ էին եկել հազարավոր ուխտավորներ, պահակախմբերը դժվարությամբ էին կարգուկանոն պահպանում: Տաճարի առջևի հրապարակը ողողված էր խուռներամ մարդկանցով, անընդհատ զոհաբերություններ էին արվում, իսկ երեկոյան ընտանիքները հավաքվում էին տներում տոնական հացկերույթի:

Հանդիսության ավարտից հետո Հովսեփն ու Մարիամը վերադարձի ճանապարհը բռնեցին: Նրանք քայլում էին հարազատների և հարևանների հետ, այդ պատճառով էլ առաջին պահին նրանց չէր անհանգստացնում Հիսուսի իրենց մոտ չլինելը: Իսկ երբ արդեն հասկացան, որ Նա մնացել է քաղաքում, խուճապահար շտապեցին Երուսաղեմ: Անհանգիստ ժամանակներ էին, Մարիամի սիրտը ճմլվում էր սարսափից:

Մարդկանցով լեփ-լեցուն քաղաքում Որդուն գտնելը հեշտ չէր: Հովսեփն ու Մարիամը երկար շրջեցին փողոցներում, մինչ եկան Տաճարը օղակող սրահներից մեկը: Այնտեղ, սովորաբար, ժամանակն աստվածաբանական զրույցներով և մեկնություններով էին անցկացնում Օրենքի վարդապետները և դպիրները: Մայրը նրանց մեջ տեսավ Հիսուսին: Նա նստել, լսում էր գիտնականների խոսքերը և հարցեր էր տալիս նրանց: Սուրբ Գրոց գիտակները հիացել էին իրենց դպրոցներում չուսանած անհայտ գալիլեացի Պատանու «բանականությամբ և պատասխաններով»...

- Որդի՛ս,- բացականչեց Մարիամը,- այս ինչ արեցիր դու մեզ, ահավասիկ հայրդ և Ես տագնապած Քեզ էինք փնտրում:

- Ինչու էիք ինձ փնտրում,- պատասխանեց Հիսուսը,- չգիտեիք, թե Ես Հորս Տանը պետք է լինեմ:

Թվում էր, թե Նա անակնկալ դարձավ հեռավոր ու առեղծվածային, և Նրա բառերը ծնողների մոտ չփոթմունք առաջ բերին: Նրանք չհասկացան, թե Նա ինչ նկատի ունի: Բայց և այնպես, Հիսուսը անմիջապես վեր կացավ և հետևեց նրանց: Մի անգամ ոչ երկրային ճառագայթը փայլատակեց ամպերի տակից և թաքնվեց: Նա նորից սովորական Երեխա է, ուրիշ երեխաների նման:

Երուսաղեմի արկածից հետո Հիսուսը, ավետարանիչների բառերով, «հնազանդ» ապրում էր ծնողների մոտ, «զարգանալով իմաստությամբ, հասակով և շնորհով Աստծու ու մարդկանց առջև»: Մարիամը «պահպանում էր Իր սրտում» կատարվող մարգարեության այդ առա-

ջին նշանը[7]:

Հիսուսն ունենալով կրոնական հակում, Իր հասակակիցների նման կրթություն չստացավ աստվածաբանական դպրոցում: Նա դարձավ ատաղձագործ և որմնադիր և Հովսեփի մահից հետո մորը պահում էր Իր ձեռքի աշխատանքով*:

Ղուկաս ավետարանիչն ասում է, որ շրջապատի մարդիկ սիրում էին Հիսուսին: Բայց նրանց համար Նա լոկ գյուղական պատանի էր, չնայած հնարավոր է, մի քիչ տարօրինակ, որը հաճախ թաղվում էր Իր՝ շրջապատին անհաղորդ խոկումների աշխարհը: Հիսուսին մոտիկից իմանալով, առնչվելով Նրա հետ համարյա ամեն օր, Նազարեթի բնակիչները չնկատեցին Նրա մեջ ոչինչ գերբնական: Երբ Նա սկսեց քարոզել Աստծո Թագավորություն, դա նրանց հանկարծակիի բերեց, հարուցելով անկեղծ զարմանք: Ըստ երևույթին, համերկրացիների շարքում Նա չուներ վստահելի ընկերներ: Նրանցից ոչ մեկը, բացի երկու-երեք կնոջից, չհետևեցին Հիսուսին:

Նազարեթցիների անվստահությունը ապշեցնում էր Իրեն՝ Քրիստոսին[8]: Նրա խոսքերով՝ նրանք հաստատեցին «Մարգարեն, ընդունելի չէ իր գավառում» առածը:

Մարիամը և Իր Որդին քաղաքում շատ հարազատներ ունեին՝Մարիամի քույրը իր ընտանիքով, Հիսուսի զարմիկները և զարմուհիները[9]: Սակայն այդ մարդիկ ևս մեծ մասամբ մնացին հոգեպես նրանից հեռու: Նրանց անձուկ աշխարհը սահմանափակվում էր իրենց փողոցով, տնով, աշխատանքով: Ավելի ուշ, իմանալով Կափառնայում Հիսուսի քարոզչության և գործերի մասին, Նրա եղբայրները անհանգստացան և որոշեցին, որ նա խենթացել է:

Հիսուսի հոգեկան միայնությունն են արտացոլում նաև Ավետարաններում գրի չառնված Նրա խոսքերը. «Նրանք, ովքեր Իմ կողքին էին, Ինձ չհասկացան»[10]: Միակ մոտիկ էակը մնացել էր Մայրը:

Ավետարանիչները քիչ են խոսում Նրա մասին, բայց, եթե նույնիսկ նրանք Մարիամի մասին ոչ մի խոսք էլ չասեին, դա չէր նվազեցնի Փրկչի Մոր մեծությունը: Նրա աչքի առաջ նա մեծացավ: Նա է տվել Նրան առաջին մայրական դասերը: Նրանում կատարվող հրաշքի միակ վկան էր Նա:

Մարիամին հայտնված էր, որ Իր Որդին Տիրոջ Օծյալն է, բայց մեզ

* τέχτων բառը նշանակում է միաժամանակ և ատաղձագործ, և որմնադիր: Հմմտ. Քրիստոսի խոսքերում և առակներում շինարարների աշխատանքից վերցված պատկերների առատությունը (Մատթ. Է 21, ԺԶ, ԺԸ, ԻԱ, ԽԲ: Ղուկ. ԺԴ, ԻԸ: Հովհ. Բ19)



համար հիմա դժվար է հասկանալ, թե ինչքան շատ հոգեկան ուժեր էին պետք, որպեսզի պահպանվեր այդ հավատը, չէ որ մենք նայում ենք ուրիշ հեռադրությունից: Եթե պատկերացնենք Նազարեթի ամենօրյա կյանքը, ապա կարելի է կռահել, որ Ավետումից մինչև Հարությունը Մարիամը անցել է փորձությունների երկար ճանապարհ:

Մարդկանց հոգիների նուրբ գիտակ Ֆրանսուա Մորիակը փորձ է արել տեսնել այդ ճանապարհը: «Երեխան դարձավ պատանի, հասուն մարդ: Նա մեծ չէր: Նրան չէին անվանում Բարձրյալի Որդի, Նա գահ չուներ, այլ լոկ մի փոքրիկ աթոռակ աղքատ հյուղակի օջախի կողքին: Մայրը կարող էր կասկածներ ունենալ, բայց ահա Ղուկասի վկայությունը. « Եվ Մարիամը այս բոլոր բաները պահում էր իր մեջ և իր սրտում խորհում»: Նա պահպանել էր մարգարեությունները Իր սրտում և այդ մասին չէր ասել ոչ մեկին, անգամ իր Որդուն»[11]:

Յուրաքանչյուր անհատի լինելություն, և հատկապես անսովորներինը, միշտ առեղծվածային է, առավել ևս՝ մեզ չի տրված Հիսուսի հոգու գաղտնիքների մեջ թափանցել: Կարող էինք իմանալ՝ ինչի մասին էր մտածում Նա արհեստանոցում աշխատելիս, ինչի մասին էր աղոթում: Մի բան էր միայն թվում անվիճելի, Նա ազատ էր բախումներից, որոնք մանկական տարիներից փեռեկտում են մարդուն, Նրա վրա իշխանություն չունեին դիվային տարերքները: Եթե անգամ Նա ներքին ողբերգություն ունենար, ապա այն ծնված պետք է լիներ մենակությունից, խղճահարությունից, աշխարհի չարի հետ առնչվելու ցավից, այլ ոչ թե մեղքի տանջանքներից և մութ բնազդների դեմ տարած պայքարից: Այդ մասին են վկայում այն ամենը, ինչը հայտնի է Հիսուսի բնավորության մասին:

Անգամ քրիստոնեության հանդեպ թշնամաբար տրամադրված այնպիսի գիտնական, ինչպիսին Դավիթ Շտրաուսն է, Ավետարանների երկարատև ուսումնասիրություններից հետո ընդունել է, որ Հիսուսի ոգու ներդաշնակությունը ոչ թե ներքին ճգնաժամերի արդյունք էր, այլ Նրանում լցված ուժերի բնական բացահայտման արդյունք: «Բոլոր բնավորությունները,- գրել է Շտրաուսը,- մաքրագործվել են պայքարով կամ ուժեղ ցնցումներով, օրինակ՝ Պողոսը, Ավգուստինոսը, Լյութերը պահպանել են այդ պայքարների անջնջելի հետքը: Նրանց կերպարը տոգորված է ինչ- որ դաժանությամբ, կտրուկությամբ, մռայլությամբ: Նման ոչ մի բան չկա Հիսուսի մեջ: Նա մեր առաջ կանգնում է միանգամից որպես կատարյալ բնավորություն, ենթարկված միայն իր սեփական օրենքին, ճանաչելով և հաստատելով Իրեն Իր գիտակցու-

թյան մեջ, կարիք չունենալով փոխվել և նոր կյանք սկսել»[12]:

Նրա մեջ չկար մեղքի զգացում, որը հատուկ է յուրաքանչյուր սրբի, չկար ոչինչ թերարժեք: Թող որ Նա նույնիսկ մնար հաճախ չհասկացված և միայնակ, դա չէր մթագնում Նրա հոգու պայծառությունը: Հիսուսը մշտապես Նրա հետ էր, Ում Նա անվանում էր Իր Հայրը:

Հավանաբար, աշխատանքից ազատ ժամերին, Հիսուսը, ինչպես և հետագայում քարոզչության տարիներին, սիրում էր առանձնանալ մարդկանցից հեռու բնության մեջ, որտեղ խաղաղ լռության ծոցում հնչում էր Նրա մեջ Երկնի ձայները: Այնտեղ, Նազարեթի բլուրների վրա, աննկատ որոշարկվում էր աշխարհի ապագան...

Այդ ժամանակ ով կարող էր իմանալ այդ մասին: Հռոմեացի քաղաքագետները չէին ենթադրում, որ կգա մի օր, երբ իրենց սերունդները ծնկի կգան Ատաղձագործի առաջ՝ հեռավոր արևելյան պրովինցիայից:

Մեծ և չնչին իրադարձությունները հաջորդում էին մեկը մյուսին: Գերմանները պարտության մատնեցին լեգեոններին Տևտոբուրգյան անտառում, իրար հետևից խռովություններ բռնկվեցին Դանուբում և Ռեյնում, Գալլիայում և Թրակիայում: Վախճանվեց իրեն աստվածների շարքը դասող Օգոստոսը, իսկ նրա գահի ժառանգորդը դարձավ մռայլ և կասկածամիտ Տիբերիոսը: Վախճանվեցին Օվիդիոսը, Տիտոս Լիբիոսը, Հիլլելը: Ծնվեց Պլինիոս Ավագը, փիլիսոփա Սենեկան Եգիպտոսից վերադարձավ Հռոմ: Հրեաստանում նշանակվեց հինգերորդ կուսակալը՝ Պոնտացի Պիղատոսը:

Նազարեթում արտաքուստ ամեն ինչ թվում էր, թե ընթանում է անփոփոխ: Սակայն Հիսուսի կյանքի երկարատև նախապատրաստական փուլը մոտենում էր իր ավարտին: Նա արդեն երեսունին մոտ էր, լեցուն հոգեկան և մարմնական ուժերով: Նա արդեն սպասում էր նշանի, որպեսզի աշխարհում գցի Բարի Լուրի առաջին սերմը:

Եվ նշանը տրվեց:



Գլուխ երրորդ

# ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏ: ՀԻՍՈՒՍՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ

27 թ.

Մի անգամ քահանաներից և դպիրներից կազմված մի խումբ դուրս եկավ Երուսաղեմի դարբասներից և ուղևորվեց Հորդանանի այն ափը տանող ճանապարհով: Նրանց ճամփորդության դրդեց երիտասարդ անապատական Հովհաննեսի մասին տարածված լուրը: Կարճ ժամանակում նրա մասին հայտնի դարձավ ողջ երկրով մեկ: Պատվիրակությանը հանձնարարված էր պարզել, թե ինչ հավակնություններ ունի այդ մարդը, ինչ է ուսուցանում և չի հանդիսանում արդյոք ժողովրդի վտանգավոր խռովարար:

Հովհաննեսը անվանում էր իրեն «կանչողի ձայն»*, ինչը ինքնին շատ բան էր ասում:

Հինգ դար առաջ, երբ ավարտվեցին տարագրության օրերը և հրեաները կարողացան Բաբելոնից վերադառնալ, հավատի մեծ ուսուցիչ Եսայի Երկրորդը հիմն հորինեց Աստվածահայտնության մասին: Նրանում նկարագրված էր զատկական երթը անպտուղ անապատով, որը ծաղկում էր Տիրոջ հայացքի առաջ, վերածվելով այգու: Առջևից մունետիկն էր: Նա կոչ էր անում մաքրել Եկողի շավիղները[1]:

* Այսինքն՝ մունետիկի, լրաբերի ձայն:

Այդ ժամանակից ի վեր, փրկչական հույսերը կապվեցին այդ տեսիլքի հետ: Սպասում էին, որ Ազատարարի նախակարապետ կդառնա ինքը՝ Եղիա մարգարեն, որը վերստին կուղարկվի երկիր:

Մեռյալ ծովի մոտ ապրող հեսսեական վանականները հավատացնում էին, որ մունետիկի դերը հենց իրենց է վիճակված[2]: Բայց նրանց թվում էր, որ աշխարհը չափազանց խորն է աղտոտված անիրավություններով, միայն «Լույսի որդիներն» են արժանի Փրկչին դիմավորելու: Քումրանի բնակիչները իրենց դիտում էին որպես միակ ընտրյալների: Աշխարհի պատմությունը, հեսսեացիների կարծիքով, չի հաջողվել, և բոլորը, իրենցից բացի, դատապարտված են: Նրանք ապրում էին իրենց ավանի պատերից ներս, բծախնդրորեն պահպանելով ծեսերը և հավատը, քանի որ միայն իրենց հետ պետք է կնքվի Երեմիա մարգարեի կանխագուշակած Նոր Ուխտը*:

Իհարկե, աղանդավորների մեջ հայտնվում էին մարդիկ, որոնց մտահոգում էր «խավարի որդիների» ճակատագիրը: Նրանցից ամեն ոք չէր, որ կարող էր հրճվել աշխարհի կործանմամբ կամ հանդիստ հաշտվել դրա հետ: Կումրանյան աստվածաբաններից մեկը գրել է. «Միթե բոլոր ժողովուրդները չէ, որ ատում են անիրավությունները: Միթե բոլոր ժողովուրդների շուրթերից չէ , որ հնչում է Ճշմարտության ձայնը»[3]: Բայց այստեղ էլ նա ցավով խոստովանում է, որ գործով ոչ մեկը չի հետևում Աստծո Ճշմարտությանը: Իսկ եթե այդպես է, հույսը մեղավորների վրա դնելը անիմաստ է: Սրբերը պետք է մնան զգոն: Նրանց ինչ գործն է, թե սրբապիղծները արժանի հատուցում կստանան...

Հովհաննեսի քարոզը, հավանական է, հեսսեականների մոտ շփոթմունք առաջացրեց: Նրանք ոչ մի բանում չէին կարող նրան կշտամբել և առավել ևս չէին կարող անապատականին դասել «խավարի որդիների» շարքը: Հովհաննեսը ճգնավորի կյանք էր վարում, ընդ որում, ավելի խստակյաց, քան կումրանականները: Նրա հագուստը մի հովվական քուրձ էր՝ պատրաստված ուղտի մազից, մեջքին կաշվե գոտի էր, ոտքերին՝ տրեխներ: Պահպանել էր նազովրեական ուխտը, այսինքն՝ մազերը չէր կտրել և գինի չէր խմում: Նրա կերակուրն էին արևի տակ չորացրած մորեխ և վայրի մեղր[4]: Սակայն այդ անապատականը չէր կիսում հեսսեականների անկիրք ինքնագոհությունը, չէր հեռացել աշխարհից, այլ սկսել էր քարոզել «ողջ իսրայելական ժողովրդին»:

Հովհաննեսը ծագում էր քահանայական խավից: Նա վաղ էր կորցրել ծնողներին, և նրան մեծացրել էին օտար մարդիկ: Միանգամայն

* Տե՛ս էջ 25:



հավանական է, որ նա որդեգրված էր հենց հեսսեականների կողմից, որոնք հաճախ էին որբերին դաստիարակության վերցնում[5]: Բայց երբ Հովհաննեսի երեսուն տարին լրացավ, Աստված նրան պատվիրեց թողնել անապատը: Նրան հայտնվել էր, որ իր վրա առաքելություն է դրված դառնալ «կանչողի ձայն», Ազատարարի նախակարապետ:

Անսպասելի Հովհաննեսը անցավ մոտիկ Հորդանանի հովիտը, որտեղ և սկսեց իր քարոզչությունը: «Ապաշխարեցեք,- ասում էր մարգարեն,- որովհետև մոտեցել է Երկնքի Արքայությունը»: Նրա խոսքերն ընկնում էին արդեն պատրաստ հողի մեջ և անմիջապես լայն արձագանք էին գտնում: Շրջակայքի քաղաքներից և գյուղերից մարդիկ խուռներամ խմբերով դեպի գետն էին գնում: Գնում էին դպիրներ և զինվորներ, պաշտոնյաներ և գյուղացիներ: Մարգարեի խոսքերի և հենց արտաքինի տպավորությունը հսկայական էր: Նա խոսում էր աշխարհի Դատաստանի մասին, և թվում էր, որ Հովհաննեսի շուրջ ամեն ինչ շնչում էր մեծ իրադարձությունների մերձավորության կանխազգացողությամբ:

Որպես փրկչական դարաշրջան մտնելու խորհրդանիշ Հովհաննեսը ընտրել էր Հորդանանի ջրերում ընկղմվելը, գետ, որը հնուց ի վեր համարվում էր Սրբազան երկրի սահման: Նման այն բանին, ինչպես ջուրը լվանում է մարմինը, այդպես էլ ապաշխարանքը մաքրագործում է հոգին: Երբ հեթանոսը միացել է հինկտակարանյան օրենքին, նրա հետ կատարում են թեվիլա, լվացում[6]: Մարգարեն հրեաներից պահանջում էր դա որպես նրանց նոր կյանքի համար ծնված լինելու նշան: Այդ պատճառով էլ, Հովհաննեսին անվանում էին  ամաթվիլ, Մկրտիչ*:

Շատ իսրայելցիների վիրավորում էր այն, որ նրանց առաջարկում են անցնել լվացումը, ինչ է, իրենք նոր դարձի եկած պլավադաններ են: Միթե Աստծո ժողովրդին պատկանելը օծություն չէ ինքնին: Բայց Մկրտիչը, առանց տատանվելու, նման տեսակետը հայտարարեց մոլորություն: Երբ նա փարին տեսավ դպիրների, նրանց հետ խոսեց խիստ և կտրուկ. «Իժերի՛ ծնունդներ, ով ձեզ սովորեցրեց փախչել վերահաս բարկությունից: Մի՛ հավակնեք ասել դուք ձեզ, թե՝ Աբրահամը մեր Հայրն է, ասում եմ ձեզ, որ Աստված կարող է այս քարերից էլ Աբրահամի որդիներ դուրս բերել»[7]: Ծնունդը չի, որ դարձնում է Ուխտի որդիներ, այլ հավատարմությունը Տիրոջ պատվիրաններին:

Հովհաննեսը հանդիմանում է թեթևամտության մեջ նաև նրանց, ովքեր գտնում էին, որ թեվիլի մի  ծեսը բավական է մեղքերի թողության

* «Թեվիլա» բառը, հունարեն՝ βάπτιομα նշանակում է սուզվել, լվացում, ռուսերեն այն բովորաբար թարգմանվում է «մկրտություն»:

համար: Նա պահանջում էր ողջ կյանքի վերարժեքավորում, անկեղծ ապաշխարություն: Մկրտությունից առաջ մարդիկ խոստովանում էին իրենց մեղքերը»[8]: Բայց դա էլ քիչ էր: Հարկավոր էին ներքին փոփոխությունների իրական արդյունքներ: «Այնուհետև ապաշխարության արժանի գործեր կատարեցե՛ք… Կացինն ահա ծառերի արմատին է դրված: Ամեն ծառ, որ բարի պտուղ չի տա, կտրվում և կրակն է գցվում»[9]:

Ինչ էր ցանկանում Հովհաննեսը: Ժողովրդին կոչ էր անում փախչել աշխարհից և փակվել տաճարի պատերից ներս: Դա ճգնավորի շուրթերից միանգամայն բնական կհնչեր: Բայց Մկրտիչը ցանկանում էր ավելին. որպեսզի մարդիկ մնալով այնտեղ, որտեղ ապրում են, պահպանեին հավատարմությունը Աստծո խոսքին:

Հովսեփոս Փլավիոսի վկայությամբ, Հովհաննեսը սովորեցնում էր ժողովրդին «ունենալ մաքուր ապրելակերպ, արդար լինել մեկը մյուսի հանդեպ և ակնածանք ունենալ Նախահավիտենականի հանդեպ»[10]: Ընդգծելով Օրենքի էթիկական նորմերի կարևորությունը, Մկրտիչը դրանով իսկ հետևում էր հին մարգարեների ավանդներին: Քիչ խոսելով ծեսերի մասին, նա առաջին տեղում էր դնում մարդու բարոյական պարտքը. «Ով որ երկու զգեստ ունի, մեկը թող տա նրան, որ չունի, և ով որ ուտելիք ունի, նույն ձևով թող անի»[11]: Մարգարեն չէր առաջարկում զինվորներին թողնել իրենց ծառայությունը և ասում էր, որ նրանց համար շատ կարևոր է խուսափել բռնություններից և ամբաստանություններից: Ի զարմանս բոլորի, Նա չդատապարտեց նույնիսկ հարկահավաքների՝ մաքսավորների արհամարհելի զբաղմունքը, բայց պահանջում էր միայն, որպեսզի ընդունվածից ավելին չշորթեն*:

Միևնույն ժամանակ, այդ աշխարհի ուժեղների հանդեպ Հովհաննեսը այնքան անկախ էր պահում իրեն, որ շուտով դժգոհություն առաջ բերեց: Ըստ ավանդության, Մկրտիչը մի անգամ այցելել է Երուսաղեմ և այնտեղ հանդես է եկել Խորհրդի անդամների դեմ: Երբ նրան հարցրել են, թե ով է ինքը և որտեղից, Հովհաննեսը ասել է. «Ես մարդ եմ, և ապրում եմ այնտեղ, ուր առաջնորդում էր ինձ Աստծո Հոգին, սնվել եմ արմտիքով և ընձյուղներով»: Իր հետ հաշվեհարդար տեսնելու սպառնալիքին, եթե նա վերջ չտա բազմությանը մոլորեցնել, Հովհաննեսը պատասխանել է. «Դուք պետք է վերջ տաք ձեր սոսկալի արարքնե-

* Կայսերական տուրքը հավաքելիս սովորաբար մաքսավորները հարստանում էին բնակչության հաշվին:



րը գործելուց, և կապվեք ձեր Տեր Աստծուն»: Այդ ժամանակ ժողովին ներկա Սիմոն անունով մի հեսսեական քամահրանքով նկատել է. «Մենք ամեն օր կարդում ենք սուրբ գիրքը, իսկ դու հանց գազան նոր ես անտառից դուրս եկել, համարձակվում ես մեզ սովորեցնել և գայթակղեցնել մարդկանց քո խռովարար խոսքերով»[12]: Դրանից հետո Մկրտիչն այլևս ոչ մի անգամ մայրաքաղաք չգնաց:

Հովհաննեսը սովորաբար ապրում էր Բեթանիայի կամ Բեթաբարայի գետանցարանի մոտերքում, որտեղ և մկրտեց իր մոտ հավաքված ժողովրդին[13]: Շուտով իր շուրջը գոյացավ համայնք, որին Հովհաննեսը տվեց իր կանոնները և աղոթքները: Անվանապես մենք գիտենք Մկրտիչի աշակերտներից միայն երկուսին՝ Անդրեասին Բեթսայիդայից և պատանի Հովհաննեսին՝ Զեբեդեոսի որդուն: Երկուսն էլ ձկնորսներ էին և եկել էին Գալիլիական ծովի ափերից[14]:

Ինչպես էին ընդունում Հովհաննեսի հետևորդները ուսուցչին: Ամենից հավանական է՝ նրանք նրանում տեսնում էին վախճանաբանական Մարգարեին, որի գալուստը շատերի կողմից էր սպասվում[15]: Բայց ոմանց մոտ համոզում ծնվեց, որ Մկրտիչն ինքը խոստացյալ Փրկիչն է:

Հովհաննեսի ազդեցությունը աճում էր օր օրի: Իր ելույթներում նա սկսեց դիպչել Անտիպաս Հերովդեսին, որին պատկանում էր Հորդանանի մարզը: Արդյունքում, գրում է Փլավիոսը, չորրորդապետն սկսեց «զգուշանալ, չլինի թե Հովհաննեսի իշխանությունը զանգվածների վրա բերի ինչ- ինչ անկարգություններ»[16]:

Տագնապած էր և Սինեդրիոնը և հենց դրա համար էլ իր կողմից լիազորված քահանաներ ուղարկեց Հորդանան:

– Դու ով ես, Քրիստոս,– հարց տվին նրանք Մկրտիչին:

– Ես Քրիստոսը չեմ,– պատասխանեց նա:

– Իսկ դու ով ես, Եղիան:

– Ո՛չ, չեմ:

–Իսկ դու մարգարեն ես:

–Ո՛չ:

– Իսկ ասա՛ մեզ՝ դու ով ես, որպեսզի պատասխան տանենք նրանց, որոնք մեզ ուղարկեցին:

– Ես անապատում կանչողի ձայնն եմ՝ հարթեցե՛ք Տիրոջ ճանապարհը, ինչպես ասաց Եսայի մարգարեն:

– Իսկ դու ինչու ես մկրտում, եթե դու չես Քրիստոսը, ոչ էլ Եղի-

ան և ոչ էլ մարգարեն:

Եվ այնժամ նրանք լսեցին խոնարհությամբ և հավատով լեցուն պատասխանը, որը հստակորեն պարզեց Հովհաննեսի կոչվածությունը որպես Քրիստոսի Նախակարապետի:

- Ես մկրտում եմ ջրով, ձեր մեջ կա մեկը, Որին դուք չեք ճանաչում, Որը գալու է իմ ետևից, Որը ինձնից առաջ եղավ, Որի կոշիկների կապերն արձակելու արժանի չեմ ես... Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով: Նրա քամհարը Իր ձեռքում է, մաքրելու Իր կալը, հավաքելու ցորենը Իր շտեմարանում, իսկ հարդը կայրի անշեջ կրակով»[17]:

Բոլորը հասկացան, թե ինչ է նշանակում դա: Աշխարհը պետք է անցնի Աստծո Ճշմարտության կրակի միջով: Հովհաննեսը մաքրող ամպրոպի լոկ ավետաբերն է:

Փրկչի մասին վաղուց արդեն խոսում էին, բայց միայն Հորդանանյան ուսուցիչն ավետեց, որ Նրա գալու օրերը վերջապես եկել են: Լսելով Նախակարապետին, ժողովուրդը մշտապես «գտնվում էր սպասումի» մեջ: Շատերը գիտեին, որ Ազատարարը երկար պիտի անճանաչելի մնա, դրա համար էլ Հովհաննեսի «Կա մեկը Ձեր մեջ» խոսքերը ստիպում էին, որ սրտերը ավելի արագ տրոփեն:

Այդ նույն ժամանակ ափին հայտնվեց Մարդը Նազարեթից:

Նրա գալը հազիվ թե ուշադրություն գրավեց, հատկապես որ մյուսների հետ Նա պատրաստվում էր մկրտվել Հովհաննեսի կողմից: Սակայն, երբ նա մոտեցավ ջրին, բոլորին ապշեցրին մարգարեի՝ Գալիլիացուն ուղղված «Ինձ պետք է, որ քեզնից մկրտվեմ» տարօրինակ խոսքերը:

Գիտեր, արդյոք, Հովհաննեսը նախապես, թե միայն հիմա զգաց, որ իր առաջ հասարակ մարդ չէ, այլ Մեկը, Որն ավելին է, քան ինքը: Հիսուսի՝ «Թույլ տուր հիմա, որովհետև այսպես վայել է, որ մենք կատարենք Աստծո ամեն արդարություն» պատասխանը ոչինչ չպարզաբանեց շրջապատողներին[18]: Ուզում էր օրինակ ծառայել: Թե նայում էր մկրտությանը որպես մի գործողության, որը նշանակում է Իր առաքելության սկիզբը: Բոլոր դեպքերում, Հովհաննեսի համար այդ խոսքերն ունեին որոշակի իմաստ, և նա համաձայնեց կատարել ծիսակարգը:

Դա խորհրդանշական հանդիպում էր: Մարգագդեստ քուրձերով, արևից թխացած հոգնատանջ դեմքով, առյուծաբաշ մազերով անապատականը մարմնավորում էր մինչքրիստոնեական կրոնի փշոտ ճանապարհը, իսկ Նոր հայտնությունը բերում էր մի Մարդ, Որը արտաքուստ



թվում էր, թե ոչնչով չէր տարբերվում Գալիլիայի ցանկացած ռամիկից:

Այն պահին, երբ Հիսուսը կանգնած էր ջրի մեջ և աղոթում էր, տեղի ունեցավ ինչ-որ հրաշախորհուրդ բան: Հետագայում Հովհաննեսն իր աշակերտներին ասաց. «Տեսա Հոգին, որ իջնում էր երկնքից որպես աղավնի և հանգչում Նրա վրա: Ես չէի ճանաչում Նրան. սակայն Նա, Ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, Նա ինձ ասաց. «Ում վրա տեսնես, որ Հոգին իջնում և մնում է, Նա՛ է, որ մկրտում է Սուրբ Հոգով: Եվ ես տեսա ու վկայեցի, թե Սա՛ է Աստծու Որդին»[19]:

Մկրտությունից հետո Հիսուսն անմիջապես լքեց և խորացավ Հորդանանից հարավ տարածված անապատը: Այնտեղ, Մեռյալ ծովի շրջակայքում, լերկ, անկյանք բլուրների մեջ, ուր լռությունը խախտում էին լոկ շնագայլերի կաղկանձը և գիշատիչ թռչունների կռինչը: Մեկ ամսից ավելի Նա անցկացրեց պահքը: Ավետարանիչների խոսքերով, այդ օրերին Իր ծառայությունների շեմին, Նա «փորձվեց սատանայից»:

Հիսուսին տեսիլք երևաց, ինչպես դա, սովորաբար, սիրում են պատկերել նկարիչները, փորձում էր արդյոք անապատի բնակիչներից մեկը հրապուրել Նրան կեղծ ճանապարհով, թե ամեն ինչ անտեսանելիորեն կատարվում էր Քրիստոսի հոգում: Այդ մասին չի կարող ասել ոչ մեկը, բացի Իրենից՝ Հիսուսից: Բայց Նա հայտնում էր աշակերտներին միայն կատարվածի էությունը[20]: Սատանան առաջարկեց Փրկչին Աշխարհը նվաճելու երեք սեփական միջոցները: Առաջինը այն էր, որպեսզի զանգվածներին գրավեն երկրային բարիքների խոստումով: Կերակրիր նրանց, «քարերը հաց դարձրու». և նրանք կգան Քո ետևից՝ ուր ուզես, ասում էր Սատանան: Բայց Հիսուսը հրաժարվեց դիմել նման խայծի՝ «միայն հացով չէ, որ կապրի մարդ... »:

Մի ուրիշ անգամ Նազովրեցին կանգնած էր բարձր լեռան վրա: Նրա ոտքերի տակ տարածված էին մոխրե ժայռերի ելուստները, որտեղից ճանաչվում էին «այս աշխարհի թագավորությունները»: Ինչ-որ տեղ հեռվում շարժվում էին անպարտելի հռոմեական լեգեոնները, ծովերում լողում էին նավերը, փոթորկվում էին ժողովուրդների բազմությունները: Ինչն է կառավարում նրանց, ինչն է թագավորում աշխարհի վրա: Ոսկու ուժը չէ արդյոք, գուցե սրի իշխանությունը, եսասիրության, դաժանության ու բռնության տարերքը: Կեսարը միայն այն պատճառով է հրամայում ժողովուրդներին, քանի որ ընդունեց մութ սկզբի տիրապետությունը մարդու մեջ: «Քեզ կտամ այս ամբողջ իշ-

իշխանությունները,– ասաց Սատանան,– ու նրանց փառքը, որովհետև իմն են դրանք և ում որ կամենամ, կտամ»: Դարձյալ այնպիսին, ինչպիսին կայսրությունների տիրակալներն են, և մարդիկ Քո ոտքերի տակ կլինեն: Այդպիսի Փրկիչ-զինվորականի սպասում էին հրեական զելոտները: Սակայն Հիսուսը չընկրկեց սրի գայթակղությանը. նրա համար չի եկել Ինքը, որպեսզի քայլի հարստահարիչների հետքերով: «Ետևս գնա, Սատանա՛,– եղավ Նրա պատասխանը,– գրված է՝ քո Տեր Աստծուն պիտի երկրպագես և Նրան միայն պիտի պաշտես»:

Անապատից Հիսուսը ուղևորվեց Երուսաղեմ: Բայց և այնտեղ չար ոգին ձեռք չքաշեց Նրանից: «Ցած գցվի՛ր,– առաջարկեց նա, երբ Քրիստոսը կանգնած էր տաճարի բարձր աշտարակի վրա,– չէ որ բազմությունը, տեսնելով քարերի վրա ընկած մարդուն, որը անվնաս է մնացել, հավանաբար Նրան կհամարի մեծագույն հրաշագործ: Բայց ճչացող հրաշքի ուղին, որով անցան կեղծ միստիկները, ինչպես նաև «տեխնիկական հրաշքների» երկրպագուները, Հիսուսի կողմից ընդունելի չէին: Իր ուժը նա մշտապես կձգտի թաքցնել, խուսափելով մարդկանց վրա հոգևոր բռնություններ բանեցնելուց:

Ավետարաններն ասում են, որ պարտված Սատանան «միառժամանակ» հեռու մնաց Քրիստոսից: Այլ խոսքերով, փորձությունները չսահմանափակվեցին այդ բեկումնային օրերով:

Վերադառնալով Գալիլիա, Հիսուսը մի որոշ ժամանակ նորից հանգրվանեց Բեթանիայում: Երբ Հովհաննեսը տեսավ Նրան, դիմելով իրեն շրջապատող մարդկանց, ասաց. «Ահա՛ Գառն Աստծու, որ վերացնում է աշխարհի մեղքը»[21]: «Գառն» բառը հիշեցնում էր մարգարեներին, որոնց հալածում էին և սպանում, իսկ Եսայու Գրքում «Գառն» անվանվում էր Տիրոջ Ծառան, Որը պետք է չարչարվի համուն մարդկության մեղքի քավության:

Մկրտիչը կրկնեց իր վկայությունը նաև մոտիկ աշակերտների շրջանում, որից հետո Անդրեասը և Հովհաննեսը Հիսուսին հանդիպելու առիթ էին փնտրում[22]: Մի անգամ տեսնելով Նրան, նրանք վեհերոտ գնացին Նրա հետևից, չիմանալով ինչպես սկսել խոսակցությունը: Հիսուսը ետ դարձավ և հարցրեց.

– Ինչ եք ուզում:

– Ռաբբի՛, ուր է Քո օթևանը,– հարցրին նրանք մի քիչ շփոթված:

– Եկե՛ք և տեսե՛ք:

Նրանք Նրա հետ եկան տուն, որտեղ Նա հանգրվանել էր և անցկացրին Հիսուսի հետ ամբողջ օրը: Մենք չգիտենք, թե ինչի շուրջ էին զրուցում նրանք, բայց հաջորդ օրը Անդրեասը փնտրելով գտավ իր եղբայր Սիմոնին և հիացմունքով հայտնեց. «Գտանք Մեսիային»:

Արտասովոր լուրը մի ակնթարթում տարածվեց գալիլիացիների մեջ, որոնք Հորդանան էին եկել: Մի քանիսը տատանվում էին: Կանխասացությանը նման չէր այս ամենը: Անդրեասի համերկրացիներից մեկը՝ Նաթանայելը, տարակուսանքով տարուբերեց գլուխը՝ Փրկիչը Նազարեթից: Բայց նրան պարզապես պատասխանեցին՝ «Գնա և տես»: Նաթանայելը համաձայնեց, և Նազովրեցու առաջին իսկ բառերը խոցեցին նրա սիրտը: Հիսուսի խորաթափանցությունը ի հայտ բերող ակնարկը ցրեց նրա բոլոր կասկածները:

– Ռաբբի՛,Դո՛ւ ես Աստծո Որդին, Դո՛ւ ես Իսրայելի Թագավորը,– գոչեց Նաթանայելը:

– Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ,– պատասխան տվեց Հիսուսը,– պիտի տեսնեք երկինքը բացված և Աստծու հրեշտակներին՝ բարձրանալիս և իջնելիս Մարդու Որդու վրա:

Նա չասաց «Փրկիչ» բառը, սակայն «Մարդու Որդի» արտահայտությունը նրանց համար անհասկանալի էր, այն նշանակում էր, որ Նոր Ուսուցիչը նա է, Որին բոլորը վաղուց սպասում էին անհամբերությամբ:

Ավելի շուտ, այդ պարզասիրտ մարդիկ որոշեցին, որ իրենց գտած Թագավորը թաքնվում է միայն մինչև մի որոշ ժամանակ, մինչև որ ժամանակը հասնի և Նրա շուրջ կհամախմբվեն համարձակ մարդիկ, երկնային ուժերը Նրան գահ կբարձրացնեն, իսկ իրենք՝ Քրիստոսին ճանաչողները, փառք կվաստակեն Փրկչական Թագավորությունում...

Այսպիսով, Հիսուսը Հյուսիս եկավ արդեն ոչ մենակ, այլ հետևորդների ուղեկցությամբ:

## Գլուխ չորրորդ

# ԳԱԼԻԼԻԱ։ ԱՌԱՋԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

### 27 թ. գարուն

Սկզբում կարող էր թվալ, թե Քրիստոսի քարոզը Հովհաննես Մրտչի առաքելության սոսկ շարունակությունն էր։ Երկուսն էլ ասում էին Աստծո Թագավորության մոտալուտ լինելու մասին, երկուսն էլ ժողովրդին կոչում էին ապաշխարության և որպես ծես ընդունեցին ջրով մկրտությունը[1]։ Այնուամենայնիվ, երկու ուսուցիչների միջև որոշ տարբերություններ նկատելի դարձան անմիջապես։ Եթե Հովհաննեսը սպասում էր, որ իր մոտ հավաքվեին ունկնդիրներ, ապա Հիսուսը ինքն էր գնում դեպի մարդիկ։ Նա անցնում էր քաղաքներով և գյուղերով, շաբաթ օրերին Նրա խոսքը հնչում էր աղոթատներում, իսկ մնացյալ օրերին ինչ-որ տեղ, բլուրների վրա կամ ծովի ափին, բաց երկնքի տակ։ Երբեմն բազմությունն այնքան մեծ էր լինում, որ Հիսուսը նավակ էր նստում և այդտեղից էր դիմում ափին խռնված ժողովրդին։

Ապրելով Գալիլիայում, Ուսուցիչը մշտապես վաղ էր վեր կենում և հաճախ արևածագը դիմավորում էր մենավոր բարձունքների վրա[2]։ Այնտեղ էլ աշակերտները գտնում էին Նրան և խնդրում էին շարունակել զրույցները եկածների հետ։ Հիսուսի օրը լցված էր լարված աշխատանքով, մինչև վերահաս մութը Նրան կրկնակոխ հետևում էին հիվանդները, սպասելով իրենց հիվանդությունների թեթևացում, հավատացողները ագահորեն որսում էին Նրա բառերը, թերհավատները անհեթեթ հարցեր էին տալիս կամ վեճի մտնում Նրա հետ, դպիրները պահանջում էին Աստվածաշնչի անհասկանալի տեղերի պարզաբանումներ։ Երբեմն Հիսուսին և Իր աշակերտներին սնվելու ժամանակ չէր մնում։ Սակայն Ավետարաններում միայն երկու անգամ է ասվում, որ Ուսուցիչը սաստիկ հոգնել էր[3]։ Սովորաբար, մենք Նրան տեսնում ենք անխոնջ և եռանդով լեցուն։ «Իմ սնունդը,- ասում էր Նա,- Ինձ Առաքողի կամքը գործելն է և Նրա կամքը կատարելը»։

Մեզ չպետք է զարմացնի, որ չեն պահպանվել Իր ժամանակակիցների կողմից արված Քրիստոսի պատկերները։ Չէ որ գոյություն չունեն ոչ Բուդդայի, ոչ Զրադաշտի, ոչ Պյութագորասի, ոչ էլ մյուս կրոնական բարեփոխիչների մեծ մասի վավերական դիմանկարները, իսկ Հրեաստանում ընդհանրապես ընդունված չէր պատկերել մարդկանց։

Առաջին քրիստոնյաները հիշողություններ չեն պահպանել Հիսուսի արտաքին տվյալների մասին, նրանց համար ամենից առաջ թանկ էր Մարդու Որդու հոգեկան նկարագիրը։ «Թեպետև ըստ մարմնի ճանաչում էին Քրիստոսին,- ասում է Պողոս առաքյալը,- բայց այժմ այլևս նույն ձևով չենք ճանաչում»[4]։

Ամենավաղ որմնանկարները, որոնցում Հիսուսի դեմքը պատկերված է այնպես, ինչպես որ այն վերջնականապես հաստատված է եկեղեցական արվեստում, վերագրվում են II կամ նույնիսկ III դարին։ Դժվար է ասել, թե ինչքանով է այդ կերպարը կապված բանավոր ավանդույթների հետ։ Բայց բոլոր դեպքերում, Պաղեստինի կիզիչ արևի տակ երկար ճամփորդություններ կատարած Ուսուցիչը, Որի ձեռքերը ծանոթ էին ծանր ֆիզիկական աշխատանքին, հազիվ թե նման լիներ իտալական գեղանկարիչների պատկերած Քրիստոսին։ Նա հագնում էր ոչ թե անտիկ պարեգոտ, այլ գալիլեացու սովորական հագուստ՝ երկար շերտավոր խիտոն և թիկնոց, Նրա գլուխը, հավանաբար, միշտ ծածկված էր բրդյա կապիչներով սպիտակ գլխաշորով*։

XIX դարի ռուսական կերպարվեստում Քրիստոսի տեսքը առավել արժանահավատ է Պոլենովի կտավներում, սակայն նրա նկարները չեն հաղորդում այն հոգեկան ուժերը, որոնք բխում էին Մարդու Որդուց[5]։

Հենց դա էլ պատկերել են ավետարանիչները։ Նրանց պատմություններում զգացվում է Հիսուսի առինքնող ներգործությունը ամե-

* Տե՛ս հավելվածի «Քրիստոսի պատկերագրությունը և Թուրինյան պատանի առեղծվածը»։

նատարբեր մարդկանց վրա: Նա համարյա չանթասալաց արագությամբ տիրեց Իր ապագա առաքյալների սրտերը: Տաճարի պահապանները, որոնք ուղարկված էին Նազովրեցուն կալանավորելու, Նրա քարոզից ազդված, չկարողացան հրամանը կատարել: Նրանում ինչ-որ բան կար, որն անգամ թշնամիներին էր ստիպում Նրա հետ հարգանքով խոսել: Դպիրները Նրան անվանում էին Ռաբբի, Քարոզիչ: Հիսուսի տեսքը և մի քանի խոսքը Պիղատոսին ակամա թաքուն հարգանք ներշնչեցին:

Ինչ-որ դյութիչ առեղծված, անբացատրելի գրավչություն Նրա շուրջը ստեղծել էին սիրո, բերկրանքի, հավատի մթնոլորտ: Բայց հաճախ աշակերտներին Հիսուսի կողքին համակում էր սրբազան սարսուռ, համարյա սարսափ, ինչպես թե անհասանելի մերձավորությունից: Ընդ որում, Նրանում չկար ոչինչ քրմական, վերամբարձության ոչ մի նշույլ: Նա Իր արժանապատվությունից ցածր չէր համարում մասնակցել հարսանիքի կամ Մատթեոսի տանը հացկերույթի նստել մաքսավորների հետ, այցելել փարիսեցի Սիմոնին, Ղազարոսին: Նա չէր նմանվում ներամփոփ ճգնավորի կամ մռայլ տիրացուի: Կեղծ բարեպաշտները Նրա մասին ասում էին. «Ահա ուտող և խմող մի մարդ»[6]:

Պատմում են, որ մի միջնադարյան վանական անցնում էր գեղատեսիլ մի լճի կողքով, չնկատելով այն: Հիսուսն այդպիսին չէր: Նրա հայացքից չէին վրիպում անգամ կենցաղային մանրուքները: Մարդկանց մեջ Նա տանն էր:

Ավետարանիչները Քրիստոսին պատկերում են խորապես մարդկային: Արտասուք են տեսնում Նրա աչքերում, տեսնում են ինչպես է Նա վշտանում, զարմանում, հրճվում, գրկում երեխաներին, հիանում ծաղիկներով: Մարդկային թուլությունների հանդեպ Նրա խոսքը շնչում էր ներողամտությամբ, բայց Իր պահանջները Նա երբեք չէր մեղմացնում: Նա կարող էր խոսել զորովալից բարությամբ, բայց կարող էր լինել և խիստ, նույնիսկ՝ կտրուկ: Հաճախ Նրա խոսքերում առկայծում էր դառը հեգնանքը («մժղուկներ եք քամում և ուղտեր եք կուլ տալիս»): Իրականում հեզաբարո և համբերատար Հիսուսը անողոք էր կեղծ բարեպաշտների հանդեպ, Նա քշում է առևտրականներին տաճարից, նշավակում է Անտիպաս Հերովդեսին և դպիրներին, կշտամբում է աշակերտներին թերահավատության համար: Նա հանդարտ էր և զուսպ, բայց հաճախ բռնկվում էր սրբազան ցասումով: Այդուհանդերձ, ներքին աններդաշնակությունը խորթ էր Նրան: Հիսուսը մշտապես Ինքը Իր հետ էր: Բացառությամբ մի քանի հուզումնալից պահերի, հոգու պայծառությունը երբեք չի լքել Քրիստոսին: Գտնվելով



կյանքի եռուն հորձանքում, Նա միաժամանակ կարծես թե այլ աշխարհում էր, Հոր հետ միասնացած:
Մոտիկները Նրա մեջ տեսան Մարդուն, Որը ցանկանում էր սոսկ մի բան՝ «կատարել Իրեն Առաքողի կամքը»:

Քրիստոսը հեռու է հիվանդագին հուզավառություններից, բիրտ մոլեռանդությունից, որոնք հատուկ են շատ ճգնակյացների և կրոնի հիմնադիրների: Պայծառ զգաստամտությունը Նրա բնավորության գլխավոր գծերից էր: Երբ Նա խոսում էր արտասովոր երևույթների մասին, երբ կոչում էր դժվարին սխրանքների և արիության, ապա դա անում էր առանց կեղծ պաթոսի և լարվածության: Նա կարող էր պարզապես զրուցել մարդկանց հետ աղբյուրի մոտ կամ տոնական սեղանի շուրջ, և Նա կարող էր ասել՝ «Ես եմ Կենաց հացը» բոլորին ցնցող բառերը: Նա խոսում էր փորձությունների ու պայքարի մասին, և Նա է ամենուր տանում լույս, օրհնելով և վերափոխելով կյանքը:

Գրողներին երբեք չի հաջողվել ստեղծել հերոսի համոզիչ կերպար, եթե նրա դիմանկարը չեն ստվերարկել թերություններով: Ավետարանիչները բացառություն են կազմում ոչ թե նրա համար, որ խոսքի անգերազանց վարպետներ էին, այլ այն պատճառով, որ նրանք պատկերում էին գերազանց Անձնավորության:

Չի կարելի չհամաձայնել Ռուսսոյի հետ, որը գտնում է, որ ավետարանական պատմություններ հորինելը անկարելի է: Գյոթեի կարծիքով, «բոլոր չորս Ավետարանները ստուգապատում են, քանզի բոլոր չորսի վրա էլ ընկած է հոգևոր բարձրության ցոլքը, որի աղբյուրը Քրիստոսի անձն էր, որը աստվածային է ավելի, քան ինչ-որ այլ բան երկրի վրա»[7]:

Հակառակ Կումրանի անապատականների՝ Հիսուսը չէր շրջվել կյանքին հակառակ, չէր թաքցրել նրանից հոգու գանձերը, այլ առատորեն բաշխում էր մարդկանց: «Եվ ճրագը վառելով կաթսայի տակ չեն դնում,- ասում էր Նա,- այլ՝ աշտանակի վրա, և նա լույս է տալիս բոլոր նրանց, որ տան մեջ են»[8]: Աստծո Խոսքը պետք է քարոզվի «տանիքների վրա»՝ այդպիսին էր Նրա կամքը:

Հին հրեական լեզուն այդ ժամանակ վերածվեց գրական լեզվի: Խոսակցությունների ժամանակ սովորաբար գործածական էր արամեական լեզուն: Հենց այդ լեզվով էլ Քրիստոսը զրուցում էր ժողովրդի հետ: Դա են վկայում Նոր Կտակարանում պահպանված բառերը և արտահայտությունները[9]:

Իր քարոզչության մեջ Հիսուսը դիմում էր սրբազան աստվածաշնչյան պոեզիայի ավանդական ձևերին։ Նրա խոսքերը հաճախ հնչում էին վսեմագույն երաժշտական հանգերգով, հիշեցնելով հնագույն մարգարեների հիմները։ Բացի դրանից, Նա հետևում էր դպիրների ոճաձևերին, արտահայտվում էր թևավոր խոսքերով, հարցեր էր առաջադրում, չէր արհամարհում տրամաբանական եզրահանգումները։ Հիսուսը հատկապես սիրում էր առօրեական կյանքի օրինակները՝ առակները։ Նրանցում ավելի ցայտուն էր արտահայտվում Իր ուսմունքը։

Առակները հնուց հայտնի էին Իսրայելում, բայց Հիսուսը դրանք դարձրեց Իր մտքերի արտահայտման հիմնական միջոց։ Նա դիմում էր ոչ թե միայն մտքի ոլորտին, այլ ձգտում էր ներգործել մարդու ողջ էության վրա։ Մարդկանց ներկայացնելով բնության և կենցաղի ծանոթ տեսարաններ, Քրիստոսը հաճախ լսողներին էր թողնում Իր պատմություններից եզրակացություններ անելը։ Այսպես, խուսափելով մարդկային եղբայրության մասին վերացական դատողություններ անելուց, Նա Երիքովի ճանապարհի վրա կատարված մի դեպք է պատմում, երբ ավազակներից տուժած հրեան օգնություն է ստանում այլադավան սամարացուց։ Նման պատմությունները պարուրում էին հոգին և ցանկացած դատողություններից ավելի ազդեցիկ էին։

Գալիլիական ծովի ափամերձ մասը, ուր եկել էր Հիսուսը, հետագայում խիստ վնասվել էր պատերազմներից, և միայն համեմատաբար վերջերս այդ եզերքը սկսեց ձեռք բերել իր նախկին տեսքը։ Ավետարանական ժամանակներում Գեննեսարեթը առանձնանում էր Փլավիոսի խոսքերով՝ «գեղասքանչ բնությամբ և գեղեցկությամբ»[10]։ Մրգատու այգիները, արմավենիները և խաղողի այգիները եզրազարդում էին կապույտ ջրերը։ Պարտեզներից այն կողմ աճում էին աքասիաներ, դափնեվարդեր, սպիտակ ծաղիկներով մրտենիների թփուտներ, ճփիններ։ Տարվա բոլոր ամիսների ընթացքում բերք էր ստացվում։ Լիճը ձկան առատ որս էր պարգևում։ Զօր ու գիշեր Նրա հայելու վրա ցիրուցան սփռված էին ձկնորսական նավակները։

Խորը իմաստ կա այն բանում, որ Ավետարանի քարոզը սերտորեն կապվեց այդ եզերքի հետ։ Աստծո Թագավորության մասին լուրը առաջինը հնչեց ոչ թե հեղձուկ, փոշոտ մայրաքաղաքներում, այլ երկնագույն ծովի ափին, կանաչին տվող անտառակների և բլուրների մեջ, հիշեցնելով այն մասին, որ երկրի գեղեցկությունը արտացոլումն է Երկնի մշտնջենական գեղեցկության։



Գեննեսարեթի երկայնքով ձգվում են մի շարք փոքր ծովափնյա քաղաքներ, որոնցից Հիսուսը նախընտրում էր Կափառնայումը։ Ավետարանիչները նույնիսկ Կափառնայումը անվանում են «Նրա քաղաք»։ Նա ապրում էր հռոմեացի պրոզելիտների կողմից կառուցված ժողովարանի կողքը, Անդրեասի եղբայր Սիմոնի տանը։ Այդտեղից էր Հիսուսը գնում քարոզչության, ուղևորվելով Բեթսաիդա, Քորազին, Մագդալա, այնտեղից էր գնում Երուսաղեմ տոնակատարությունների և կրկին վերադառնում էր այնտեղ։ Կափառնայումում մարդիկ դարձան Նրա առաջին բժշկությունների վկաները և ականատես եղան, թե Նա ինչպես մի բառով անցկացրեց դիվահարի ջղաձգությունը, որը աղաղակում էր. «Թույլ տո՛ւր, ինչ ես ուզում մեզանից, Հիսուս Նազովրեցի, մեզ կորստյան մատնելու եկար, գիտենք Քեզ, թե Ով ես Դու, Աստուծո Սուրբ»։

Հիսուսի հարազատները, լսելով Նրա քարոզների և հրաշագործության մասին, որոշեցին, որ Մարիամի Որդին «խելքը թռցրել է»։ Նրանք շտապեցին Կափառնայում՝ կամենալով ուժով Հիսուսին ետ բերել Նազարեթ, բայց նրանց այդպես էլ չհաջողվեց ներս թափանցել ժողովրդի կողմից բառացիորեն շրջապատված տունը։

Այդ ժամանակից Մարիամի համար ճնշող էր նազարեթցիների մեջ մնալը, որոնք Հիսուսին նայում էին որպես խելացնորի։ Ենթադրություն է արված, որ Նա ժամանակավորապես տեղափոխվեց Կանա, որտեղ ինչ-որ մարդիկ, հավանաբար հարազատները, Նրան ապաստան տվեցին[11]։

Մի անգամ, երբ այդ ընտանիքում հարսանիք էր արվում, այնտեղ հրավիրվեց Հիսուսը իր աշակերտների հետ, և Մայրը կարողացավ կրկին տեսնել Նրան[12]։

Համեստ հանդիսության ամենաթեժ պահին, ի ցավ և ամոթ տանտերերի, գինին վերջացավ։ Հավանաբար, բոլոր վաճառատեղերը արդեն փակվել էին, և հավաքվածներին հյուրասիրելու խմիչք չկար։ Մարիամը այդ նկատելով դիմեց Որդուն՝ «Գինի չունեն»։

Ինչպիսի օգնություն էր Ինքը սպասում։ Թե պարզապես սպասում էր սրտապնդող խոսքերի։ Անհասկանալի թվաց նաև «Ինչ ես ուզում ինձնից, ո՛վ կին, իմ ժամանակը դեռ չի հասել» ոնց որ թե հոգոցով ասած՝ Հիսուսի պատասխանը։ Չնայած դրան, Մարիամը հասկացավ, որ Նա պատրաստ է այնուամենայնիվ ինչ-որ ձևով օգնել և սպասավորներին ասաց. «Ինչ որ ձեզ ասի, արե՛ք»։ Հիսուսը պատվիրեց ջուր լցնել լվացումների համար նախատեսված քարե մեծ թակույկների մեջ և ապա միջից հանելով՝ բերել խնջույքի սեղանապետին։ Սպասավորները ճշգրտորեն կատարեցին տարօրինակ հրամանը, և երբ սեղանապետը համտես

արեց խմիչքը, ապա հիացած դիմեց փեսացուին՝ «Լավ գինին միշտ սկզբից են խմում, իսկ դու այն մինչև հիմա պահել ես ... »:

Այսպես, բնության վրա Քրիստոսի իշխանության հանդես գալը սկսվեց ոչ թե զարհուրեցնող նշաններով, այլ տոնական սեղանի շուրջ, հարսանեկան երգերի հնչյունների ներքո: Նա այն գործադրեց, որպեսզի ուրախության օրը ինչ-որ դիպվածով չմռայլվի: Չէ որ Նա եկել է մարդկանց բերկրանք, կյանքի լիություն և «հորդություն» պարգևելու[13]:

Գալիլեական ձկնորսները խորապես ապշել էին Կանայում կատարվածից: Հովհաննես ավետարանիչն ասում է, որ նրանք իսկական հավատ ընծայեցին Հիսուսի հանդեպ հենց այդ պահից: Եվ երբ մի անգամ, նրանց ծովեզերքում գտնելով, Նա ասաց, որ գնան իր հետևից, նրանք առանց տատանվելու թողեցին ուռկանները և այդուհետ ամբողջովին պատկանեցին միայն Ուսուցչին:

Նորակազմ համայնքը, որը մի քանի տարի անց սկսեցին անվանել Նազարեթյան, ի տարբերություն Բուդդայի կամ Սբ. Ֆրանցիսկի միաբանությունների, չէր գտնվում ծայրահեղ աղքատության մեջ: Այն իր տնօրինության տակ միջոցներ ուներ և նույնիսկ ի վիճակի էր օգնություն ցույց տալ ընչազուրկներին: Միջոցներն ստացվում էին աշակերտներից և պատկանում էին ողջ միաբանությանը: Այդ սկզբունքը ավելի ուշ յուրացվեց Երուսաղեմի Եկեղեցու կողմից[14]:

Հավանաբար, Հիսուսի առաջին բոլոր հետևորդները երիտասարդներ էին: Ավագությունը պատկանում էր ծնունդով Բեթսաիդացի ձկնորս **Սիմոն Բար-Հովհաննեսին***: Նրա անունը նշվում է առաքյալների ցանկացած ցուցակի սկզբում: Երբ Ուսուցիչը ինչ-որ բան էր հարցնում աշակերտներից, սովորաբար, Սիմոնն էր պատասխանում բոլորի փոխարեն: Քրիստոսը նրան տվեց Կեփաս՝ քար մականունը, որը հունարեն հնչում է Պետրոս ձևով: Այդ անվան իմաստը Հիսուսը աշակերտներին բացատրեց ավելի ուշ: Սիմոնի մոտ պոռթկուն խառնվածքը զուգակցվում էր վեհերոտությանը: Սակայն մնացած աշակերտներից ինքն ավելի էր կապված Քարոզչի հետ, և այդ սերը Պետրոսին օգնեց հաղթել իրեն բնորոշ փոքրոգությունը:

Սիմոնը Կափառնայումում ապրում էր եղբոր, կնոջ և զոքանչի հետ: Հիսուսը մշտապես օգտվում էր նրանց հյուրընկալությունից և Պետրոսի նավակից: Սիմոնի տունը երկար ժամանակ դարձել էր Իր տունը:

Պետրոսին Ուսուցչի մոտ բերեց իր եղբայր Անդրեասը, որի մասին մենք այնքան քիչ գիտենք, որքան որ ձկնորս Զեբեդեոսի որդի Հակոբի

* Այսինքն՝ Հովհաննու որդի (որոշ ձեռագրերում՝ «Հովհաննեսի որդի», Ιωάννου):



մասին: Բայց դրա փոխարեն, Զեբեդեոսի մյուս որդին՝ Հովհաննեսը, կրտսերագույնը առաքյալներից, Ավետարաններում նկարագրված է ավելի ամբողջական: Հավանորեն, նա նմանվում էր մորը՝ Սաղոմեին, որը եռանդուն ու հավատացյալ մի կին էր և հետագայում միացավ Հիսուսին: Լսելով Մկրտչի քարոզները, Հովհաննեսը տոգորվեց Փրկչի Թագավորության մոտալուտ լինելու համոզումով: Լինելով «ոչ գրքային ու յուրահատուկ» պատանի, նա, ըստ երևույթի, քաջ ծանոթ էր հեսսեականների ուսմունքին, որը նրա մեջ խորացրել էր վախճանաբանական տրամադրվածություն: Նա ցանկանում էր Հիսուսի մեջ տեսնել շանթարձակի, Որը իր շանթերով պետք է ոչնչացնի Իր թշնամիներին: Հովհաննեսը և Հակոբը հոգու խորքում երազում էին զբաղեցնել Հիսուսի գահի առաջին տեղերը: Հիսուսը Իր եղբայրներին անվանեց Բաներեգես, «Որոտման Որդիներ»[15]: Կրակոտ Հովհաննեսը դարձավ Նրա սիրելի աշակերտը:

Կափառնայումի ծովեզերքում մաքսատուն կար: Այցելելով այնտեղ՝ Հիսուսը հանդիպեց Մատթեոս մականունով մաքսավոր Ղևիին և ասաց նրան՝ «Արի իմ հետևից»: Մատթեոսը ոչ միայն անմիջապես միացավ Նազարեթյան Ուսուցչին, այլև ուրիշ մաքսավորներ էլ բերեց Նրա մոտ: Հետագայում այդ մարդը հավանաբար առաջինը սկսեց գրի առնել Հիսուսի խոսքերը[16]:

Բացի չորս Գեննեսարեթյան ձկնորսներից և Մատթեոսից, Հիսուսի հետևորդների մերձավոր շրջանակի մեջ մտան Նաթանայել բար - Թողոմեյը* Կանայից, նրա ընկեր, Բեթսայիդայի բնակիչ Փիլիպպոսը, որը բոլորից լավ էր տիրապետում հունարեն լեզվին, Սիմոն Զելոտը, որը հանուն Քրիստոսի լքեց մարտնչող անջատվողականների կուսակցությունը, ձկնորս Թովմասը**, ինչպես նաև Հուդա Թադևոսը և Հակոբ Ալփեոսը: Նրանք բոլորն էլ գալիլեական ծագում ունեին, հարավաբնակ էր միայն Իսկարիովտ քաղաքում ծնված Հուդա բար - Սիմոնը[17]: Վերջինիս Հիսուսը հանձնեց Իր համայնքի դրամական միջոցների պահպանման գործը: Դրանով իսկ Նա, հավանաբար, ցանկացավ ընդգծել Իր վստահությունը Հուդայի հանդեպ:

Այդ մարդու անունը վաղուց է դարձել ուրացության և ստորության խորհրդանիշ: Սակայն կասկածելի է, որ Քրիստոսը ցանկանար մոտեցնել Իրեն բարոյապես հրեշին, բարոյապես անվստահելի էությանը: Հավանական է՝ Հուդայի պատկերացումները աղճատված էին Ու-

* Հուն.՝ Բարթողոմեոս:

** Թովմաս (արամ.) կամ Դիդիմ (հուն.), այսինքն՝ Երկվորյակ, ամենից հավանական է, մականուն է: Ավանդույթի համաձայն առաքյալի անունը Հուդա էր:

սուցչի գործի մասին։ Բայց դրանով նա քիչ էր տարբերվում Պետրոսից և մյուս առաքյալներից։ Նրանց բոլորի համար էլ դժվար էր հաղթահարել իրենց գիտակցության մեջ ամրորեն արմատավորված պատրանքները։ Շատ աշակերտներ Հիսուսից հեռացան, երբ պարզ դարձավ, որ Նա այնպիսին չէ, ինչպիսին նրանք պատկերացնում էին Փրկչին։ Հուդայի դրաման նույնպես կապված էր Ուսուցչի հանդեպ հավատը կորցրած լինելու հետ։ Բայց հիասթափությունը նրա մեջ չարության զգացում ծնեց և մղեց դավաճանության քայլի։ Հնարավոր է, որ այդ կերպ նա ցանկանում էր վրեժ լուծել իր փառամոլական ծրագրերի խորտակման համար։ Բոլոր դեպքերում պնդել, թե Հուդան ղեկավարվում էր միայն ագահությամբ, կնշանակի անիրավականորեն պարզունակացնել ավետարանական ողբերգությունը։

Բոլոր ավետարանիչները հաստատում են, որ այդ մարդիկ, որոնց Հիսուսը դարձրեց Իրեն մերձավոր, երկար ժամանակ վատ էին հասկանում Նրան և Նրա նպատակը։ Երբեմն նրանց համար դժվար էր որսալ Ուսուցչի պարզ մտքերն անգամ։ Դա, իհարկե, պետք է որ վշտացներ Հիսուսին, բայց Նա համբերատար դաստիարակում էր աշակերտներին և ուրախանում էր ամեն անգամ, երբ ինչ-որ բան պարզ էր դառնում նրանց։ «Գոհություն եմ հայտնում Քեզ, Հա՛յր, Տե՛ր երկնքի և երկրի,- բացականչում էր Հիսուսը նման պահերին,- որ ծածկեցիր այս բանը իմաստուններից և գիտուններից ու հայտնեցիր մանուկներին»[18]։ Եթե Բարի Լուրը նախապես «իմաստուններին» տրվեր, ապա կարող էր վտանգ ծագել, որ Նրա էությունը կմնա մթագնված։ Այդպես տեղի ունեցավ հարյուր տարի անց, երբ նոր հավատն ընդունեցին արևելյան օկուլտիստները և քրիստոնեությունը միահյուսեցին գնոստիկյան աստվածաբանությանը։ Բնական անկեղծությամբ Ավետարանը կարող էին պահել հենց հասարակ, պարզաբարո մարդիկ, որոնց խորթ էր հպարտությունը և «առաջնորդամոլությունը», թունավորված չէին չոր կազուիստիկայով և բնազանցական տեսություններով, մարդիկ, որոնք իրենցից Հիսուսի ուսմունք են բերել նվազագույնը։ Տիրոջ անձնավորությունը, միտքն ու կամքը նրանց համար միակ և ամենաթանկ գանձն էր[19]։

Հիսուսը սիրում էր այդ հոգևոր ընտանիքը և Իր կապը դրա հետ ավելի բարձր էր արյունակցականից։ Երբ մեծ բազմություն էր հավաքվել և Ուսուցչին հայտնեցին, որ դրսում, դռների մոտ, Նրան են սպասում Մայրը և եղբայրները, Նա մատնացույց արեց աշակերտներին՝ «Ահա Իմ Մայրը և Իմ եղբայրները»։



Աստիճանաբար Գալիլեացի Քարոզչի և Բժշկողի համբավը տարածվեց ողջ շրջակայքում։ Հիսուսի հետևից մշտապես բազմություն էր գնում։ Հենց որ Նա մենանալու նպատակով առանձնանում էր, աշակերտները գտնում էին Նրան՝ «Բոլորը Քեզ են փնտրում»։ Եվ այդժամ Հիսուսը նորից և նորից գնում էր դեպի Իրեն սպասողները։

Բայց այդ անձնվեր կյանքն ուներ իր հազվագյուտ օրերը կամ ավելի ճիշտ՝ հանգստի ժամերը։ Երբ մտածում ես դրանց մասին, ակամա պատկերանում է Գեննեսարեթի ափի երեկոն։ Մայրամուտի գույները փռված են քաղաքի վրա։ Ժողովարանների զանգվածային ուրվագիծը հստակորեն առանձնանում է մայրամուտի ֆոնի վրա։ Զեփյուռը թեթևորեն ճոճում է եղեգները և ծառերի ճյուղերը։ Արևելքում ձգված էին մանուշակագույն բլուրները։ Հեռվից լսվում էր տուն դարձող ձկնորսների երգը։

Հիսուսը նստած էր ափամերձ քարերի վրա։ Նա հայացքը հառել էր ջրի անվրդով հարթությանը։ Հայտնվում են Սիմոնը և մյուս աշակերտները։ Նրանք լուռ կանգ են առնում, վախենալով խանգարել Ուսուցչի հանգիստը։ Իսկ Նա նստած էր անշարժ, խորասուզված աղոթքի մեջ՝ պայծառացած խաղաղ երեկոյի լույսով։ Հասկանում են արդյոք, կռահում են արդյոք աշակերտները, այդ պահին Հիսուսին նայելով, որ Նրանում հայտնվում է իրենց Բարձրյալը, որը արարում և շարժում է Տիեզերքը...

Վաղանցուկ հրաշալի մթնշաղ է։ Ուր որ է ծովի վրա կվառվեն աստղերը։ Բոլորը գնում են Սիմոնենց տուն։ Սենյակը լուսավորված է կավե լամպի դողդոջուն լույսով։ Սեղանի շուրջ հավաքվել են Ուսուցիչը և աշակերտները։ Կանայք համեստ ընթրիք են մատուցում։ Հիսուսը փառաբանական աղոթք է ասում և կիսում է հացը։ Նա խոսում է Թագավորության մասին, հանուն որի պետք է վճռականորեն և համարձակորեն թողնել ամեն ինչ։ Նա, ով «գութանի մաճը բռնեց և ետ դարձավ», Աստծո գործի համար պիտանի չէ։

Սիմոնը, հավանական է, շատ հարցեր ունի, բայց նա վեհերում է, չնայած պատրաստ է Տիրոջ ետևից գնալ թեկուզ աշխարհի ծայրը։ Հովհաննեսի աչքերը փայլում են, նրա մտքով անցնում են համաշխարհային Դատաստանի մտապատկերներ և Մարդու Որդու կերպարը՝ Դավիթի թագով պսակված...

Հիսուսը շարունակում է խոսել։

Կափառնայումի վրա իջնում է գիշերվա քողը։

## Գլուխ հինգերորդ

# ԱՎԵՏԻՍ

Քրիստոսի ուսմունքը Բարի կամ ԱՎԵՏԻՍ Ուրախ լուր է: Այդպես է անվանել Ինքը՝Բեսորա՝ արամեերեն, Ավետարան՝ հունարեն:

Այն չի բերում աշխարհին ոչ նոր փիլիսոփայական ուսմունքներ, ոչ հասարակական բարեփոխումների նախագծումներ և ոչ էլ անկողմնայինի գաղտնիքների ճանաչողություն: Այն արմատապես փոխեց մարդկանց հարաբերությունը Աստծո հանդեպ, բացելով նրանց համար Նրա այն դեմքը, որը մինչև այդ սոսկ աղոտ ձևով կռահվում էր: Հիսուսի Ուրախ Լուրը խոսում է մարդու բարձրագույն կոչվածության մասին և այն երանության մասին, որը պարգևում է նրան Արարչի հետ միասնանալը:

Ավետարանների անսպառ հարստությունը սեղմ գծերով բնութագրելը հեշտ չի, այդ պատճառով էլ մենք կանգ կառնենք միայն գլխավորի վրա:

## ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՅՐ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՈՐԴԻՈՒԹՅՈՒՆ

Հին Կտակարանը ամենից հաճախ խոսում էր Աստծո և ժողովրդի միջև եղած հարաբերության շուրջ: Ավետարանները առաջնային են համարում հարաբերությունը Աստծո և հոգու միջև:

Հիսուսի քարոզը ուղղված է ոչ թե «զանգվածներին», ոչ թե անդեմ



միջնամոցին, այլ՝ անձնավորությանը: Ամբոխի մեջ մարդկանց հոգևոր մակարդակն իջնում է, այն հայտնվում է հոտային բնազդների իշխանության տակ: Դրա համար էլ Քրիստոսը այդպիսի նշանակություն է տալիս առանձին ճակատագրերին: Ցանկացած մարդ բովանդակում է իր մեջ Աստծո աչքում անսահմանորեն արժեքավոր մի ողջ աշխարհ:

Եթե Հիսուսն օգտագործում է «հոտ» բառը, ապա այն Նրա շուրթերին հնչում է միանգամայն այլ կերպ, քան մեր օրերում: Իր ունկնդիրների համար այն զուգորդավորվում է սիրո և մշտական հոգածության առարկայի հետ. ոչխարը դիտվում էր համարյա որպես ընտանիքի անդամ: «Բարի հովիվը,- ասում էր Հիսուսը,- յուրաքանչյուր ոչխարի կանչում է իր անունով» և պատրաստ է «կյանքը դնել նրա համար»:

Երբ դպիրները զարմացան, թե ինչու է Ուսուցիչը հաղորդակցվում կասկածելի համբավ ունեցող մարդկանց հետ, Նա նրանց պատասխանեց առակով.

«Ձեզնից ով է այն մարդը, որ, երբ հարյուր ոչխար ունենա և կորցնի նրանցից մեկը, արոտավայրում չի թողնի իննսունիննին և չի գնա կորածի ետևից, մինչև որ այն գտնի: Եվ երբ այն գտնի, կդնի այն իր ուսերի վրա խնդությամբ և կգնա տուն, կկանչի բարեկամներին և հարևաններին և նրանց կասի. ուրախացե՛ք ինձ հետ, որովհետև գտա իմ կորած ոչխարը: Ասում եմ ձեզ, որ այսպես ուրախություն կլինի երկնքում մի մեղավորի համար, որն ապաշխարում է, քան իննսունինը արդարների համար, որոնց ապաշխարություն պետք չէ: Կամ՝ ով է այն կինը, որ, երբ տասը դրամ ունենա և մի դրամ կորցնի, ճրագ չի վառի և չի ավլի տունը փութով ու չի փնտրի, մինչև որ գտնի: Եվ երբ գտնի, կկանչի բարեկամներին և հարևաններին ու կասի. ուրախացեք ինձ հետ, որովհետև գտա իմ կորցրած դրամը: Ասում եմ ձեզ, Աստծու հրեշտակների առաջ այսպես ուրախություն կլինի մեկ մեղավորի համար, որն ապաշխարում է»[1]:

Խոսելով Էության մասին, Հիսուսը հասկանում է «Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծուն», այսինքն՝ Աստծու, որը բացվում է Հին Ուխտի կրոնական գիտակցության մեջ: Եվ աստվածաշնչյան մարգարեների նման Քրիստոսի Ավետարանը սովորեցնում է ոչ այնքան «Ինքն Իր մեջ» Աստծու, որքան աշխարհին և մարդուն դարձած Աստծո մասին:

Բոլոր անուններից, որոնցով Արարիչն անվանվում է Գրքերում, Հիսուսը նախընտրեց Հայր բառը: Նրա աղոթքներում այն հնչում է Աբբա ձևով: Այդպես արամեերեն երեխաներն էին դիմում իրենց հորը:

Այդ ընտրությունը խորապես նշանակալից է:

Գերագույն Սկիզբը համաշխարհային կրոններում հաճախ են «Հայր» անվանել: Բայց սովորաբար, Նրան ներկայացրել են ահեղ տիրակալի տեսքով: Այդպիսի հայացքը, կրելով իր մեջ կեցության և երկրային տերերի հանդեպ մարդկանց սարսափի կնիքը, արտահայտվել է նույնիսկ հինկտակարանյան մտածողության մեջ: Երբ հրեան արտասանում է «Հայր» բառը, այն, որպես կանոն, զուգորդվում է նրա մեջ դաժան Տիրոջ և բոլոր ժողովուրդների Հովանավորի հասկացության հետ:

Միայն Հիսուսն է խոսում Հոր մասին, Որին կարող է հաղորդ լինել յուրաքանչյուր մարդկային հոգի, եթե կամենա դա: Ավետարանը բերում է մարդկանց աստվածորդիության շնորհը: Նրանք, ովքեր կընդունեն այն, կտոգորվեն Քրիստոսի ուխտով: Նրանք գիտեն, որ Տիեզերքի Ստեղծողի հետ կարելի է խոսել մենակ, ինչպես «Աբբայի», ինչպես սիրող Հոր հետ, որն սպասում է պատասխան սիրո:

Աստծո սերը չի պարտադրում ինքն իրեն, Նա խնայում է մարդկային ազատությունը: Տերը նման է այն տանտիրոջը, որն իր մոտ խնջույքի է կանչում, և որի համար հյուրերը մեծագույն ուրախությունն են: Առավել պարզ այդ միտքը Քրիստոսն արտահայտել է անառակ որդու առակում:

Երիտասարդը պահանջեց հորից իր բաժին ժառանգությունը և գնաց օտար երկիր: Բաժանվելով նրանից, հայրը կշտամբանքի ոչ մի խոսք չասաց: Նա չէր ցանկանում ստիպողական սեր և դրա համար էլ չպահեց որդուն: Երբ պատանին վատնեց ամեն ինչ, ինչ-որ ուներ և ետ վերադարձավ որպես ծայրաստիճան թշվառ, հույս ունենալով տան մեջ դառնալ թեկուզ ամենավերջին ծառան, հայրը ոչ միայն ընդունեց նրան, այլև խնջույք սարքեց անառակ որդու վերադարձի պատվին:

Դա շարժեց ավագ որդու նախանձը և բարկությունը:

– Այս քանի՜ տարի է, որ ծառայում եմ քեզ և երբեք քո հրամանները զանց չեմ արել. ինձ երբեք մի ուլ չտվիր, որ բարեկամներիս հետ ուրախություն անեի: Երբ եկավ քո այդ որդին, որը քո ունեցվածքը կերավ պոռնիկների հետ, պարարտ հորթը նրա համար մորթեցիր:

– Որդյա՛կ,– առարկեց հայրը,– դու միշտ ինձ հետ ես, և ամեն ինչ, որ իմն է, քոնն է, բայց պետք է ուրախ լինել և ցնծալ, որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց[2]:

Աստծուց հեռու չկա իսկական կյանք: Հեռանալով Նրանից, մարդը քաղում է մեղքի դառը պտուղները, բայց Տերը միշտ պատրաստ է



ընդունել ապաշխարածին՝ այդ է առակի իմաստը: Երկնային կամքը դրանում խորհրդանշում է ոչ թե խստապահանջ տերը, ահեղ արքան կամ խստակարգ դատավորը, այլ ուրիշի ազատությունը հարգող մարդը՝ հայրը, որ սիրում է և ներում: Այդ պատկերը առավել ճշմարիտ համապատասխանում է Աստծու մասին Քրիստոսի հայտնությանը: Ինչպես չեմին նստած հայրը համբերատար սպասում էր որդուն, այդպես և Տերը փնտրում է մարդու անբռնադատ սերը:

Մի անգամ կանայք Հիսուսի մոտ երեխաներ բերեցին, որպեսզի Նա օրհնի նրանց: Աշակերտները վախենալով հոգնեցնել Նրան, արգելեցին նրանց տուն մտնել: Բայց Ուսուցիչն ասաց. «Թույլ տվեք այդ մանուկներին և մի արգելեք, որ նրանք ինձ մոտ գան, որովհետև Երկնքի Արքայությունը այդպիսիներինն է»: Եվ երբ աշակերտները հարցրին, թե ով է մեծ Երկնքի Արքայության մեջ, Նա Իր մոտ կանչեց մի մանուկ, կանգնեցրեց նրան նրանց մեջ ու գրկելով նրան, ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, Երկնքի Արքայությունը չեք մտնի»[3]: Մանկական հոգու անկեղծությունը և վստահությունը մարդու վստահության կերպ է իր Հայր Աստծո հանդեպ*: Ահա թե ինչու Հիսուսը սիրում էր «Աբբա» բառը:

«Աստված,– ասում է Պողոս առաքյալը,– մեր սրտերի մեջ ուղարկեց Իր Որդու Հոգին, որ աղաղակում է ՝ Աբբա, Հայր: Ուստի ծառա չես, այլ՝ որդի»[4]: Նա, ով ճանաչել է աստվածորդիության երջանկությունը, աշխարհը հայտնագործում է կարծես նորովի: Նա դուրս է պրծնում պատահականությունների անկենդան կապանքներից: Տերը մոտ է նրան և գիտի նրա յուրաքանչյուր քայլը, «Նրա գլխի բոլոր մազերը հաշված են»...

Հավատը պետք է անսահման լինի, այն բացառում է «երկու տիրոջ ծառայելը»: Եթե մարդը կլանված է ունայն բաներ հետապնդելով, ապա նա դնում է իր սիրտը Մամոնա (ինչպես արամեերեն անվանում էին՝ հարստություն) կուռքի իշխանության տակ: «Ինչ օգուտ կունենա մարդ,– ասում էր Հիսուսը,– եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի»[5]:

Իրեն հանձնելով Հորը, հոգին հաղթահարում է **հոգսը**, ո՛չ այն առօրեական հոգսերը, որոնք անհրաժեշտ են, այլ տանջալի, կպչուն, բանականությունը մթագնող մտահոգությունը:

---

* Ինքը՝ հրեական **Էմունա** (հավատ) բառը նշանակում է ոչ թե ինչ-որ վերացական ճշմարտության հավատ, այլ վստահություն Աստծո հանդեպ, հավատարմություն Նրա հանդեպ: Այդ արմատից է **ամին**՝ ճշմարիտ է, բառը:

Եթե Հայրը հոգում է անգամ փոքր թռչունների մասին, եթե ընծայել է ծաղկանց հմայիչ գեղեցկություն, ապա միթե Նա կմոռանա Իր որդիներին: Չէ որ նրանք ողջ արարվածից ամենաթանկն են Իր համար:

**Այսուհետև հոգ մի՛ արեք ու մի՛ ասեք՝ ինչ պիտի ուտենք**
**կամ ինչ պիտի խմենք կամ ինչ պիտի հագնենք,**
**որովհետև հեթանոսներն են այդ բոլորը որոնում.**
**քանի որ ձեր երկնային Հայրը գիտե,**
**թե այդ բոլորը ձեզ պետք է[6]:**

Աստծուն մերձ կյանքը վերացնում է սարսափն ու անվստահությունը: Աղոթելով, Աստծո որդիները խոստովանում են Նրան իրենց մտքերը, հույսերը և վշտերը: «Խնդրեցե՛ք Աստծուց, և Նա ձեզ կտա, փնտրեցե՛ք և կգտնեք, բախեցե՛ք, և կբացվի ձեր առաջ»[7]:

Եթե, ինչպես ասվում է Հիսուսի առակում, անգամ անխիղճ դատավորը չի կարող մերժել աղքատ այրուն, որը համառորեն խնդրում էր նրանից, ապա կմերժի արդյոք սիրող Հայրը նրան, ով դիմում է Իրեն թախանձանքով: Աղոթքում կարևոր է հավատք, որպեսզի լսվի աղոթողի ձայնը:

**Ձեզնից ով է այն մարդը,**
**որից իր որդին եթե հաց ուզի,**
**միթե քար կտա նրան.**
**և կամ եթե ձուկ ուզի,**
**միթե օձ կտա նրան:**
**Արդ, եթե դուք, որ չար եք,**
**գիտեք ձեր որդիներին**
**բարի պարգևներ տալ,**
**որքան ևս առավել ձեր Հայրը, որ երկնքում է,**
**բարիքներ կտա նրանց, որ Նրանից ուզում են[8]:**

Հեթանոսները կարծում էին, որ աստվածներն իրենք կարիք ունեն իրենց մատուցվող զոհաբերություններին: Հին Կտակարանին այդ միտքը խորապես խորթ էր: Համայն բնությունը առանց այն էլ պատկանում է Արարչին: Ամենաթանկարժեք ընծան Իրեն՝ մարդու սիրտն է: Ծեսերը իմաստ են ստանում միայն այն դեպքում, երբ սեր են արտահայտում առ Ստեղծողը: Այդ պատճառով, Հիսուսն էլ չէր մերժում զոհասեղանին զոհ մատուցելու սովորույթը: Նա նույնիսկ սովորեցնում էր, որ դա չի կարելի անել առանց եղբոր հետ հաշտվելու[9]: Սակայն հատկանշական է, որ ավետարանիչները ոչ մի տեղ չեն նշում, որ Քրիստոսն ինքը մասնակցել է զոհաբերությունների արարողությանը: Տաճարը Նրա համար ամեն ինչից առաջ «աղոթատուն» էր:



Բայց ոչ տաճարային գործողությունները, ոչ նույնիսկ համատեղ աղոթքը չեն կարող փոխարինել Աստծո հետ մեկուսի հաղորդակցվելուն, Հոր հետ սրբազան զրույցին:

Աստծուն հարկավոր չէ ձևական երկրպագության տուրքը, հարկավոր չէ սովորույթին ենթակա ակնածալի կրոնասիրությունը: Հիսուսը նախազգուշացնում է.

**Եվ երբ աղոթես, չլինե՛ս կեղծավորների նման, որոնք սիրում են**
**ժողովարաններում և հրապարակների անկյուններում**
**աղոթքի կանգնել, որպեսզի մարդկանց երևան,**
**ճշմարիտ եմ ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը:**
**Այլ դու երբ աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր քո դռները**
**և ծածուկ աղոթի՛ր քո Հորը,**
**և քո Հայրը, որ տեսնում է ինչ որ ծածուկ է,**
**կհատուցի քեզ հայտնապես:**
**Աղոթք անելիս շատախոս մի՛ լինեք, ինչպես հեթանոսները,**
**որովհետև նրանք կարծում են, թե իրենց շատ խոսքերի պատճառով**
**լսելի կլինեն:**
**Արդ, նրանց չնմանվե՛ք, որովհետև ձեր Հայրը գիտե,**
**թե ինչ է ձեզ պետք[10]:**

Եթե մենք ինչ-որ բան ենք խնդրում Աստծուց, ապա սոսկ այն պատճառով, որ խոստովանում ենք Նրա առջև ամենը, ինչ կա մեր սրտում:

Հիսուսը սովորեցնում է աղոթել պարզ բառերով, սիրով և վստահությամբ.

ՀԱՅՐ ՄԵՐ, ՈՐ ԵՐԿՆՔՈՒՄ ԵՍ: Քո որդիներն ենք մենք, և Քեզ մոտ է մեր հայրենիքը:

ՍՈ՛ՒՐԲ ԹՈՂ ԼԻՆԻ ՔՈ ԱՆՈՒՆԸ: Թող միշտ լինի մեր մեջ ակնածանքը Քո սրբազան գաղտնիքի հանդեպ:

ՔՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈ՛ՒՆԸ ԹՈՂ ԳԱ, ՔՈ ԿԱ՛ՄՔԸ ԹՈՂ ԼԻՆԻ ԵՐԿՐԻ ՎՐԱ, ԻՆՉՊԵՍ ՈՐ ԵՐԿՆՔՈՒՄ Է: Մենք սպասում ենք, որ-

պեսզի Դու Թագավորես Քո ողջ Ստեղծածին, որպեսզի ի կատար ածվի Քո նպատակը և միայն Դու դառնաս մեր Թագավորը և Տերը:

ՄԵՐ ՀԱՆԱՊԱԶՕՐՅԱ ՀԱՑԸ ՏՈ՛ՒՐ ՄԵԶ ԱՅՍՕՐ: Պահպանիր մեր կյանքը արդ, քանզի մենք հավատ ունենք, որ վաղվա օրը Դու կհոգաս:

ԵՎ ՆԵՐԻ՛Ր ՄԵԶ ՄԵՐ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՈՐ ՄԵՆՔ ԵՆՔ ՆԵՐՈՒՄ ՆՐԱՆՑ, ՈՐ ՀԱՆՑԱՆՔ ԵՆ ԳՈՐԾՈՒՄ ՄԵՐ ԴԵՄ: Որդիական պարտքը, որ մենք այդքան վատ ենք հատուցում Քեզ, պատասխան սեր է: Սովորեցրու մեզ սիրել և ներել միմյանց, ինչպես Դու ես սիրում և ներում մեզ:

ԵՎ ՄԻ՛ ՏԱՐ ՄԵԶ ՓՈՐՁՈՒԹՅԱՆ, ԱՅԼ ՓՐԿԻ՛Ր ՄԵԶ ՉԱՐԻՑ: Պաշտպանիր մեզ դրսից և մեր ներսից եկող չարից:

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՔՈ՛ՆՆ Է ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓԱՌՔԸ ՀԱՎԻՏՅԱՆՍ: ԱՄԵՆ[11]:

Նկատենք, որ այս աղոթքում առաջին տեղում դրվում են ոչ թե մարդկային ցանկությունները, այլ Տիրոջ կամքը: Դիմելով Նրան, մարդիկ չպետք է փնտրեն միայն իրենցը: Որդին միշտ և ամեն ինչում պատրաստ է ապավինել Հորը:

«Քո Թագավորությունը թող գա» բառերը ցույց են տալիս, որ ամբողջությամբ այն դեռ չի եկել: Քրիստոսը ուղղակիորեն ասում է, որ «այս դարում» երկրի վրա տիրում են սատանայական ուժերը: Սատանան մինչև այժմ մնում է «այս աշխարհի իշխանը»[12]:

Քրիստոսը չբացատրեց, թե որտեղից է հայտնվել չարը և, հետևապես, բավարար է գտնում այն, ինչ բացված է Հին Ուխտում: Մարդը կոչված է ոչ այնքան խորհրդածելու չարի մասին, որքան նրա դեմ պայքարելու: Ավետարանում չարի խնդիրը գործնական խնդիր է, կենսական խնդիր է՝ դրված նրանց առաջ, ովքեր փնտրում են Աստծո խորհրդի հետ համերաշխություն:

## ՍԻՐՈ ՊԱՏՎԻՐԱՆԸ

Չարը, որի հետ առնչվում է մարդը, ամենից սերտորեն ապրում է հենց իր մեջ. մի կողմից կամք առ իշխանություն, ճնշում և բռնություն, մյուս կողմից՝ ինքնահաստատում ու բնազդների անսահմանափակ տարածություն փնտրող կույր խռովք: Այդ դևերը նիրհում են մեր հոգու խորքում և պատրաստ են ամեն րոպե դուրս պրծնել: Նրանց սնում է սեփական «եսի» զգացողությունը որպես արժեք ու-



նեցող միակ կենտրոնի: «Եսի» տարրալուծումը հանրության տարերքի մեջ թվում է, թե սահմանափակում է անհատականության խռովքը, բայց այդ դեպքում էլ համահարթվում, ջնջվում է անձնավորությունը: Փակուղուց դուրս գալու ելքը տրված է աստվածաշնչյան՝ «Սիրիր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ» պատվիրանում: Այն պայքարի է կոչում գազանային եսակենտրոն սկիզբների դեմ, ուրիշ «եսի» արժեքների ընդունման, պայքարի, որը պետք է ստեղծի բարձրակարգ մարդու՝ «նոր արարում»: Միայն սերն է ընդունակ հաղթելու Սատանային:

Թող որ մարդուն շրջապատող աշխարհում և հենց իր մեջ շատ բան ըմբոստանա սիրո պատվիրանի դեմ. նրա կատարման համար մարդիկ ուժ կգտնեն Նրա մեջ, Ով Ինքը Սեր է, Ով Ավետարանում Հիսուսին հայտնվել է որպես ողորմած Հայր:

Իսկական հավատը անբաժանելի է մարդկայնությունից: Մարդիկ, ովքեր մոռանում են այդ մասին, նման են շինարարների, որոնք շենք են կառուցում առանց հիմքի, ուղղակի ավազի վրա: Այդպիսի շենքը դատապարտված է փլուզման առաջին իսկ փոթորիկից[13]:

Որպես բարոյականության հիմք Հիսուսը պահպանեց Դեկալոգի պատվիրանները: «Եթե հավիտենական կյանք ես ուզում, պահպանիր պատվիրանները»,- ասում էր Նա հարուստ երիտասարդին: Բացի դրանից, Նա հավանություն էր տալիս Հիլլելի. «Մի արա ուրիշին այն, ինչը ցանկալի չէ քեզ» սկզբունքին, սակայն տալիս էր դրան մեծ ակտիվության և գործունեության երանգներ՝ «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դո՛ւք արեք նրանց»[14]:

Ավետարանը հեռու է մերժողական բարոյախոսությունից իր «առաքինության» ձևական սխեմայով, որը հանգում է ընդամենը պատվիրաններին: Երանելի Ավգուստինոսը գրել է. «Սիրի՛ր Աստծուն և այդժամ վարվի՛ր ինչպես կամենում ես», այսինքն՝ վերաբերմունքը մարդկանց հանդեպ պետք է օրգանապես բխի հավատից: Հորը ճանաչողը չի կարող չսիրել և Իր արարածը: Բացի դրանից, Հիսուսն ուղղակի ասում է. «Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիր այդ՝ Ինձ համար արեցիր»: Նա կդատի մարդկանց ոչ թե ըստ «համոզմունքների», այլ՝ ըստ իրենց գործերի: Նա, ով ծառայում է մերձավորին, ծառայում է Աստծուն, թող որ անգամ ինքը չգիտակցի այդ:

Իսկ ինչպես պետք է վարվեն Քրիստոսի աշակերտները, երբ բախվեն ուրիշների զանցանքներին:

Շատ հրեա ուսուցիչներ արտահայտվել էին մեղքը դատապարտե-

լու դեմ[15]։ Հիսուսը ամբողջությամբ պաշտպանում է այդ։

Տիրոջից ողորմածություն սպասելով, հարկավոր է ինքդ սովորես ներել։ Ճիշտ վարվեց այն մարդը, որը Թագավորից ստացավ մեծ պարտքի շնորհում, բայց ինքը անխիղճ պարտապան է և գցում է իր ընկերոջը պարտքերի կապանքների մեջ։

Տեսնելով մերձավորի թուլությունը, մենք նրան դատավճիռ չպետք է կարդանք, այլ կարեկցենք, հիշելով մեր մեղսական լինելու մասին։ «Մի՛ դատեք,֊ նախազգուշացնում է Հիսուսը,֊ որ Աստծուց չդատվեք. որովհետև ինչ դատաստանով որ դատեք, նրանով եք դատվելու. և ինչ չափով, որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ համար։ Ինչու քո եղբոր աչքի մեջ շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի մեջ գերանը չես տեսնում»[16]։

Փարիսեցիները սովոր էին վերևից նայել «Օրենքից տգետների» վրա։ «Ամ ֊ հարեց»՝ ռամիկ բառը նրանց մոտ պիղծ բառի հոմանիշն էր։ Նման մարդու հետ չէին ուզում ունենալ ընդհանուր ոչինչ։ Նրանց հետ չէր կարելի աղոթել, սեղան նստել և նույնիսկ կարիքի դեպքում՝ կերակրել։ «Տգետը չի վախենում մեղքից, ամ֊հարեցը չի կարող արդար լինել»,֊ ասում էին գիտունները[17]։ Հիսուսը այդ հարցում լրիվ նրանց հակապատկերն էր։ Նա ավելի շատ գերադասում էր գործ ունենալ հասարակ մարդկանց հետ։ Բացի դրանից, բոլոր թշվառները, հասարակության բոլոր իրավազուրկները Նրա մեջ տեսնում էին բարեկամի և հովանավորի։ Մաքսավորները, որոնց մարդ չէին հաշվում, և փողոցային կանայք հաճախ էին հայտնվում Նրան շրջապատողների թվում։ Դա նեղդրության մեջ էր գցում իրենց սրբակյացությամբ պարծեցող բարեկարգ դպիրներին։ Լսելով նրանց կշտամբանքները, Հիսուսն ասում էր. «Առողջներին բժիշկ պետք չէ, այլ՝ հիվանդներին։ Գնացե՛ք, սովորեցե՛ք, թե ինչ է նշանակում՝ ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ»։ Ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղավորներին»[18]։

Անկեղծ զղջումը Քրիստոսը բարձր էր դասում նրանց հանդգնությունից, ովքեր իրենց համարում էին Աստծուն հաճելի։ Մի անգամ Նա պատմեց Տաճարում աղոթող երկու մարդկանց մասին։ Մեկը՝ բարեպաշտ փարիսեցին, իր գոհունակությունն էր հայտնում Աստծուն այն բանի համար, որ ինքը նման չի ուրիշ մարդկանց, հաճախ պաս է պահում, զոհողություններ է անում Տաճարի համար և նման չի «այդ մաքսավորներին»։ Իսկ մաքսավորը կանգնած էր մեկուսի, չէր համարձակվում հայացքը վեր բարձրացնել, ծեծում էր կուրծքը և ասում. «Աստվա՛ծ, ների՛ր ինձ՝ մեղավորիս»։ «Ասում եմ ձեզ,֊ եզրակացրեց Հիսուսը,֊ սա՛ իջավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը. որովհետև, ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի»[19]։

Ընդ որում, զղջումը չպետք է սահմանափակվի միայն խոսքով։ Իզուր չէր Հովհաննես Մկրտիչը խոսում «ապաշխարության պտուղների» մասին։ Եվ կրկին Հիսուսը օրինակ բերեց առօրյա կյանքից. «Մի մարդ երկու որդի ուներ։ Առաջինին մոտենալով՝ նա ասաց. «Որդյա՛կ, գնա՛ այսօր աշխատի՛ր այգում»։ Սա պատասխանեց ու ասաց. «Գնում եմ, տե՛ր». ու չգնաց։ Մոտեցավ մյուսին էլ և նույնն ասաց։ Սա պատասխանեց ու ասաց. «Չեմ ուզում»։ Բայց հետո զղջաց և գնաց այգին։ Արդ, երկուսից ով կատարեց հոր կամքը»[20]։

Երբ Հիսուսը այցելեց Մատթեոսի տուն, որտեղ հավաքվել էին նրա ընկերները, մաքսավորները, դա առաջացրեց վրդովմունքի պոռթկում։ Ուսուցչի վրա կշտամբանքներ տեղացին։ Ինչպես կարող է Նա հաց կիսել նման մարդկանց հետ։

Սակայն Հիսուսը մեկ անգամ ևս հիշեցրեց, որ յուրաքանչյուր հոգի արժանի է հոգածության և կարեկցանքի։ Այդ մասին մոռացողները նման են անառակ որդու առակի ավագ եղբորը, որին չուրախացրեց ատանդականի վերադարձը։

Մեղավորներին իրեն մոտեցնելով, Քրիստոսը ցանկանում էր նրանց մեջ արթնացնել զղջում և նոր կյանքի ծարավ։ Նրա բարությունը և վստահությունը իրական հրաշքներ էին գործում։

Պատահեց, որ մի անգամ Ուսուցիչը անցավ Երիքովով։ Քաղաքի դարբասների մոտ Նրան դիմավորեց ժողովրդի բազմությունը։ Յուրաքանչյուրը ցանկանում էր, որ Հիսուսը իջևանի իր տանը։ Զակքեոս անունով մի երիքովցի՝ «մաքսավորների իշխանավոր», փորձեց բազմության միջով խցկվելով առաջ գալ և թեկուզ մի անգամ նայել Ուսուցչին, բայց իր կարճ հասակը խանգարում էր իրեն։ Այդ ժամանակ, մոռանալով պատշաճության կարգը, նա առաջ վազեց և բարձրացավ ժանտաթզենու վրա նստած մարդուն։ «Զակքեո՛ս,֊ անսպասելի ասաց Հիսուսը,֊ շտապիր իջի՛ր այդտեղից, որովհետև այսօր պետք է, որ Ես քո տանը գիշերեմ»։

Ուրախությունից իրեն կորցնելով, մաքսավորը տուն վազեց Տիրոջն ընդունելու համար, իսկ շրջապատինները սկսեցին քրթմնջալ. «Նա իջևանեց այդպիսի մեղավոր մարդու մոտ»։

Բայց Ուսուցչի քայլը ազդեցություն ունեցավ։

֊ Տե՛ր, ահա իմ ինչքերի կեսը կտամ աղքատներին, եթե որևէ մե֊

կին գրկել եմ, քառապատիկ կհատուցեմ:

– Այսօր այս տան համար փրկություն եղավ, քանի որ սա ևս Աբրահամի որդի է, որովհետև Մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածին[21]:

Կափառնայումում ոմն փարիսեցի Սիմոն Հիսուսին հրավիրեց իրենց տուն: Ճաշելու ընթացքում սենյակ մտավ մի կին, որ շրջապատում հայտնի էր իր անառակ վարքով: Նրա ձեռքին կար լուսնկուճե անոթ թանկարժեք անուշահոտ յուղերով: Լուռ կանգնեց Ուսուցչի ետևը և սկսեց արտասվել, իսկ հետո ընկնելով Նրա ոտքերը՝ սկսեց ցողել մյուռոնով և սրբել արձակած վարսերով: Լսել էր արդյոք մեղավորներին թողություն շնորհելու մասին Հիսուսի խոսքերը: Ցանկանում էր իր գոհունակությունը հայտնել Նրան՝ ընկածների նկատմամբ գթասրտության համար: Բայց այդ տեսարանը տհաճ զարմանք պատճառեց տանտիրոջը: «Եթե Սա մարգարե լիներ,– մտածեց փարիսեցին,– ապա կիմանար, թե ով կամ ինչպիսի մի կին է մոտենում Իրեն»: Մինչդեռ Հիսուսը թափանցեց նրա մտքերի մեջ:

– Սիմո՛ն, քեզ ասելու բան ունեմ:

– Ասա՛, Վարդապե՛տ:

– Մի փոխատու երկու պարտապաններ ուներ, մեկը պարտք էր հինգ հարյուր դահեկան, իսկ մյուսը՝ հիսուն: Եվ քանի որ նրանց հատուցելու ոչինչ չունեին, երկուսին էլ պարտքը շնորհեց: Հիմա ասա, ով ավելի շատ կսիրի նրան:

– Ինձ այնպես է թվում, թե նա, ում ավելի շատը շնորհվեց:

– Ուղի՛ղ դատեցիր,– պատասխանեց Հիսուսը և պարզաբանեց, թե ինչի համար պատմեց առակը: Նա ցույց տվեց տարբերությունը Սիմոնի, որը իրեն համարում էր անբասիր, և որի համար Հիսուսի հետ զրույցը լոկ վիճաբանելու առիթ էր, և այն կնոջ միջև, որը գիտակցում էր իր ընկած լինելը: Նա հակվեց դեպի Սիմոնին, ով կարող է ներել Նրան և փրկել նախկին կյանքից:

Եվ երբ Քրիստոսը ուղղակի դիմեց անառակ կնոջը «Քո մեղքերը քեզ ներված են» խոսքերով, բոլոր ներկաները ավելի շատ վրդովվեցին: Տարօրինակ Մարգարեն նրանց նոր խնդրի առաջ կանգնեցրեց: Միթե կարող է, բացի Աստծուց, որևէ այլ մեկը թողություն շնորհել մեղքերին: Որտեղից այդ Նազովրեցուն այդպիսի իշխանությամբ խոսելու իրավունք [22]:

Բայց նրանք ավելի շատ պիտի տարակուսեին, եթե լսեին, թե ինչպես է Հիսուսը մեկնում Օրենքի սրբազան պատվիրանները:



# ՀԻՆԸ ԵՎ ՆՈՐԸ

Հրեական աստվածաբանների շատ սերունդներ փորձել են հստակ պարզել Թօրայում պարունակած պատվիրանների թիվը, իսկ նրանցից ոմանք կարծում են, որ կան պատվիրաններ, որոնք արտահայտում են հենց հավատի հիմքը[23]: Այդ պատճառով դպիրներից մեկը որոշեց իմանալ Հիսուսի կարծիքը և դրանով իսկ պարզորոշ պատկերացում կազմել Գալիլիացի Քարոզչի արարքների մասին:

– Ուսուցի՛չ,– հարցրեց նա,– որ պատվիրանն է նրանցից առաջինը:

– Ամենից առաջինն է,– պատասխանեց Քրիստոսը,– «Լսի՛ր, Իսրայե՛լ: Մեր Տեր Աստվածը միակ Տերն է. և դու պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, և քո ամբողջ հոգով, և քո ամբողջ մտքով և քո ամբողջ զորությամբ:* Ահա և երկրորդը՝

«Դու պիտի սիրես քո ընկերոջը քո անձի պես»: Դրանից բացի, ուրիշ պատվիրան չկա: Այս երկու պատվիրաններից են կախված ամբողջ Օրենքը և Մարգարեները**:

– Լավ է, Վարդապե՛տ,– ստիպված եղավ համաձայնել դպիրը:– Ճշմարտությամբ ասացիր, թե Աստված մեկ է, և բացի Նրանից, ուրիշ Աստված չկա, և Նրան ամբողջ սրտով, ամբողջ զորությամբ, ամբողջ մտքով սիրելը, ինչպես և ընկերոջն իր անձի պես սիրելը առավել է, քան ողջակեզները և զոհերը: [24]

Պատասխանելով դպիրին, Քրիստոսը հստակեցրեց Իր հարաբերությունը Մովսեսի հետ Օրենքի հանդեպ, և Նրա խոսքերից պարզ դարձավ, թե ինչու էր Նա ցանկանում այն պահպանել: Երբ խոսք գնաց Գրքերի մասին, Հիսուսը պարզորոշ ասաց.

Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ Մարգարեներին ջնջելու եկա.
չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու***:
Ճշմարիտ եմ ասում ձեզ,
մինչև որ երկինք և երկիր անցնեն,
մի յոտ իսկ,– որ մի նշանախեց է,
Օրենքից և Մարգարեներից չի անցնի,
մինչև որ այս բոլորը կատարվի...

* Տե՛ս վերևում. էջ 19:

** Օրենքը և Մարգարեները՝ Հին Ուխտի հոմանիշն է:

***Πληρώσαι լրիվացնել, լրացնել, ավարտել վերջացնել, լրիվություն տալ πλήρώμα լրիվություն բառից, տե՛ս ծանոթագր. 3:

Եթե ձեր արդարությունը ավելի չլինի,
քան օրենսգետներինը և փարիսեցիներինը,
Երկնքի Արքայությունը չեք մտնի[25]:

Այսպիսով, Քրիստոսը սովորեցնում էր Աստվածաշնչի մասին որպես աստվածային Հայտնության և ընդունում էր կենդանի եկեղեցական ավանդությունների անհրաժեշտությունը, որը բաց կանի նրա իմաստը: Հենց այդ պատճառով էլ Նա փարիսեցիների մասին ասում էր. «Ամենը, ինչ-որ նրանք կասեն, արեք»: Բայց երբ դպիրները Օրենքին հաճախ գումարում էին հարյուրավոր մանր կանոններ, Հիսուսը Հին Ուխտը վերադարձնում էր իր ակունքներին՝ մարգարեներով պահպանված Սինայի Տասը պատվիրաններին, Մովսեսի իսկական ժառանգությանը: Ընդ որում, նա խնամքով էր վերաբերվում նաև արտաքին պատվիրաններին, չցանկանալով գայթակղել «այս փոքրիկներին» և խզել կապը Ավանդույթի հետ: «Եվ ոչ ոք,- նկատեց Հիսուսը,- երբ հինը խմի, նորը կուզենա, որովհետև կասի, թե՝ հինը ավելի լավն է»[26]: Նա ծանրության կենտրոնը ծիսակարգերի ոլորտից տեղափոխում էր հոգևոր-բարոյական ոլորտ: Բացի դրանից, Նա խորացրեց և լրացրեց Օրենքի բարոյական պահանջները:

Եթե օրենքը արգելում էր սպանությունը, ապա Հիսուսը կոչ էր անում սրտից արմատախիլ անել ատելությունը՝ հանցագործության արմատը: Եթե Օրենքը դատապարտում էր ամուսնական անհավատարմությունը, ապա Հիսուսը խոսում է արատավոր զգացումների վտանգավորության մասին: Եթե Օրենքը պահանջում էր երդման պահպանում, ապա Հիսուսը այն համարում էր ընդհանրապես ավելորդ.

Այլ ձեր խոսքը լինի՝ այո՝ այո, և ոչը՝ ոչ,
որովհետև դրանից ավելին չարից է[27]:

Հեթանոսական օրենքներում պատիժը հաճախ ավելի ծանր էր, քան՝ հանցանքը: Հին Ուխտը հիմքում դրեց արդարության օրենքը՝ «Ակն ընդական, ատամն ընդ ատաման»: Հիսուսը զատում էր քրեական իրավունքը բարոյականությունից, որտեղ գործում են այլ սկզբունքներ: Մարդկանց հատուկ է թշնամիներին ատելը, բայց Աստծո որդիները պետք է չարին հաղթեն բարությամբ: Նրանց հատուկ է պայքարել վրիժառության զգացումների դեմ: Ավելին, նրանք բարին պետք է ցանկանան իրենց նեղացնողներին: Դա մեծագույն սխրանք է



և հոգու ուժի իսկական հայտնություն, Իր՝ Արարչի նմանողությամբ:

Սիրեցե՛ք ձեր թշնամիներին...
և աղոթեցե՛ք նրանց համար,
որ չարչարում են ձեզ և հալածում,
որպեսզի որդիները լինեք ձեր Հոր, որ երկնքում է.
քանի որ Նա իր արեգակը ծագեցնում է
չարերի ու բարիների վրա
և անձրև է թափում արդարների և մեղավորների վրա:
Եթե սիրեք միայն նրանց, որոնք ձեզ սիրում են, ձեր վարձն ինչ.
չէ որ մաքսավորներն էլ նույնն են անում:
Եվ եթե միայն ձեր բարեկամներին ողջույն տաք,
Ինչ ավելի բան եք անում.
չէ որ մաքսավորներն ու մեղավորները նույնն են անում:
Արդ, կատարյալ եղեք դուք,
ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ[28]:

Ահա ոգին հափշտակող բարձունքը, ինչին կոչում էր Քրիստոսը մարդուն:

Օրենքը «մերձավոր» համարում էր միայն ցեղակիցներին և նույնադավաններին: Բայց Քրիստոսը չի սահմանափակում այդ հասկացությունը այդքան նեղ շրջանակների մեջ: Երբ մի դպիր Նրան հարցրեց. «Իսկ ով է իմ ընկերը», պատասխանի փոխարեն Նա պատմեց մի հրեայի մասին, որը դիպվածով ընկել էր ավազակների ձեռքը: Վերքերից թուլացած, պառկած էր նա ճանապարհի վրա և ցավով տեսնում էր, թե ինչպես քահանան և տաճարի սպասավորը անտարբեր անցան իր կողքով: Ամենից քիչ նա կարեկցական վերաբերմունք իր ետևից եկող սամարացուց կսպասեր: Կարող էր այդ այլացեղը և հեթանոսը ղևտացուց ու քրմից լավը լինել: Սակայն նա կանգ առավ և չհարցնելով ոչինչ, օգնեց տուժածին. կապեց նրա վերքերը, իր ջորու վրա տարավ մինչև իջևանատուն և վճարեց նրա համար նախապես:

– Արդ, ըստ քեզ, այդ երեքից որը մերձավորի պես վերաբերվեց նրան, ով ավազակների ձեռքն էր ընկել,- հարցրեց Հիսուսը դպիրին:

– Նա, ով նրան բարիք արեց,- չէր կարող չընդունել վերջինը:

– Գնա՛ և դու նո՛ւյն ձևով արա:

Քրիստոսը ահիպեց նրան, որ ինքը գա այն մտքին, որ «եղբայր» և «մերձավոր» կարող է լինել ցանկացած մարդ[29]:

Նա աստիճանաբար սովորեցրեց իր հետևորդներին նաև նոր, իրենց համար անսովոր հայացք հեթանոսների նկատմամբ: Այսպես, Նա չթաքցրեց Իր ուրախությունը, իմանալով հույների մասին, որոնք Իր հետ զրուցել էին ցանկանում: Իսկ Իր չարչարանքների նախօրեին Քրիստոսը կասի, որ Իր Ավետարանը պետք է «քարոզվի ի վկայություն բոլոր ժողովուրդների»:

Երբ Կափառնայումում զորակայանի հռոմեացի հարյուրապետը խնդրեց Հիսուսին բուժել իր ծառային, ասելով, որ միայն Իր բառերը բավական են, Քրիստոսը նկատեց. « Ես Իսրայելի մեջ իսկ այսպիսի հավատ չգտա երբեք», իսկ հետո ավելացրեց. «Բայց ասում եմ ձեզ, որ արևելքից և արևմուտքից շատերը պիտի գան ու Երկնքի Արքայության մեջ սեղան պիտի նստեն Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ, իսկ Արքայության որդիները պիտի ելնեն արտաքին խավարը[30]: Այդ խոսքերը հնչում էին որպես կոչ նրանց համար, ովքեր միայն իսրայելացիներին էին համարում Աստծո սիրուն արժանի:

«Օտարներին» չընդունելը, ինչ տարազով էլ այն զարդարված լինի, բնազդ է, որ մարդկանց մոտ հաղթահարվում է մեծագույն դժվարությամբ: Ավետարանը առանց երկիմաստության կոչում է պայքարել ազգային բացառիկության դեմ, դրանով իսկ շարունակելով Ամովսի, Եսայիի և Հովհաննես Մկրտիչի քարոզը:

Առաջին տեղը բերելով Օրենքի հոգևոր էությունը, Քրիստոսը վերադարձրեց նաև շաբաթի մասին պատվիրանների նախասկզբնական իմաստը:

Մեր օրերի մարդը ոչ միշտ կարող է գնահատել այդ պատվիրանի նշանակությունը: Սովորելով հանգստի ընդունված օրերին, մենք մոռանում ենք, թե ինչ էր շաբաթը հների համար: Այն թույլ չէր տալիս առօրեական հոգսերով կլանել հոգին. ժամանակ հատկացնելով աղոթքի և խոկումների համար, այն բոլորին աշխատանքից հանգստանալու ընդմիջում էր տալիս՝ ազատներին և ստրուկներին և, նույնիսկ, ընտանի կենդանիներին:

Սակայն այստեղ կա և հակառակ կողմը: Շատ բարեպաշտներ, պահպանելով «յոթերորդ օրվա» սրբությունը, սկսեցին դրան տալ չափազանցված նշանակություն:

Մակաբայեցվոց պատերազմի ժամանակ ապստամբների մի խումբ գերադասեց մեռնել «քար չշպրտելով», քան կռվել շաբաթ օրը, և գլխովին ոչնչացվեց: Այդժամ հավատի համար պայքարի ոգեշնչող քահանա Մատաթիան որոշեց գործել այլ կերպ. «Պետք է կռվենք շաբաթ



օրը»,- ասաց նա: Եվ փարիսեցիների մեջ մեկ անգամ չէ, որ հնչեցին բողոքի ձայներ, հանգստին վերաբերող օրենքները չափազանց ուռճացնելու դեմ: «Շաբաթն է տրված ձեզ, և ոչ թե դուք՝ շաբաթին»,- ասում է նրանցից մեկը[31]: Այդուհանդերձ, կանոնակարգի արգելքները շարունակում էին շատանալ, մթագնելով Աստծո շնորհի օրհնյալ նպատակը: Մանրախնդիրները շաբաթ օրը տառացիորեն կաթվածահար էին անում կյանքը: Հատկապես ջերմեռանդ էին հեսսեականները: Նրանք գտնում էին, որ եթե շաբաթ օրը փոսի մեջ մարդ կամ կենդանի է ընկել, դուրս քաշել - հանել կարելի է միայն հաջորդ օրը[32]:

Քրիստոսը նման տեսակետները դիտում էր որպես Մովսեսի պատվիրանների ոգու խեղաթյուրում: «Շաբաթ օրը մարդու համար է, և ոչ թե մարդը՝ շաբաթ օրվա համար»,- ասում էր Նա:

Մի անգամ շաբաթ օրը Հիսուսի աշակերտները քաղց զգալով, սկսեցին հասկեր պոկել, տրորել ափով և հատիկը ուտել: Փարիսեցիները դա համարեցին կալսելու մի այլ ձև և հարցրին. «Ինչու են Քո աշակերտները խախտում շաբաթը»: Այդ ժամանակ Ուսուցիչը հիշեցրեց նրանց, որ Դավիթն էլ, երբ իր ջոկատով առանց ուտելիքի մնաց, վերցրեց բաղարջ հացերը, բայց չէ որ քահանաներին կարելի էր միայն դրանք ուտել: Թագավորը ճիշտ վարվեց, որովհետև մարդկային կարիքը կարևոր է ծիսական արգելքներից[33]:

Հիսուսը մի քանի բժշկություն արեց շաբաթ օրը և դրանով հարուցեց օրինապաշտների բողոքը: Նրանք սկսեցին ուշադիր հետևել Նրան, որպեսզի հրապարակավ հանդիմանեն Օրենքը չհարգելու մեջ: Իզուր չէ Նա վկայակոչում, որ որոշ կարևոր ծեսեր շաբաթ օրը չեն վերանում, իզուր է բացատրում նրանց, որ մարդկանց օգնելը միշտ էլ Աստծո գործ է: Նա հարցնում էր փարիսեցիներից. «Ձեզնից ում որդին կամ եզը ընկնի ջրհորի մեջ, նա իսկույն այն չի հանի շաբաթ օրով»[34]: Նրանք չէին գտնում համապատասխան առարկություններ, սակայն մնում էին իրենց կարծիքին:

Երբեմն Հիսուսը դիտավորյալ աստվածաբաններին վեճի մեջ էր քաշում: Ժողովարան եկավ անդամալույծ ձեռքով մի մարդ, հուսալով բժշկություն ստանալ Ուսուցչից: Տոնական օր էր, և Օրենքի նախանձախնդիրները սպասում էին, թե ինչպես կվարվի Նազովրեցին: Նա պատվիրեց հիվանդին՝ մեջտեղ գալ, և ներկաներին հարց տվեց. «Շաբաթ օրով ինչ բան է օրինավոր անել, բարի գործ գործել, թե չարիք անել. մի հոգի ազատել, թե կորստյան մատնել»: «Նրանք,- գրում է ավետարանիչ Մարկոսը,- լռեցին: Եվ նա ցասումով լցված, նայելով

նրանց և տրտմելով նրանց սրտի կուրության համար, ասաց մարդուն. «Երկարի՛ր ձեռքդ»։ Եվ նա երկարեց, ու նրա ձեռքն առողջացավ։ Փարիսեցիները հերով դեսականների հետ իսկույն դուրս ելան և խորհուրդ էին անում Նրա դեմ, թե ինչպես Նրան կորստյան մատնեն»[35]։

Առավել մեծ վրդովմունք առաջացրին Հիսուսի՝ «Մարդու Որդին տեր է և շաբաթ օրվան» խոսքերը։ Դրանից հետևում էր, որ Նա Օրենքը դատելու իշխանություն ունի։

Կարող էր թվալ, իբր Հիսուսը, այդպես վարվելով, ոտնձգություններ էր անում եկեղեցական ավանդությունների հանդեպ և ուղղադավանների համար բացառում էր Իր ուսմունքը ընդունելու ամեն հնարավորություն։ Իրականում այդ ավանդությունների հիմքերը Քրիստոսը չէր խախտում։ Հին Ուխտը ընդունում էր անձի հայտնության հեղինակությունը։ Բոլոր մարգարեները ուսուցանում էին հենց այդպիսի բացառիկ շնորհի և ավետաբերության ուժով[36]։ Դպիրների դարաշրջանի գալը չէր նշանակում, որ դադարել է Աստծո Հոգու ներգործությունը։ Այդ պատճառով էլ Թալմուդում այդպիսի հսկայական նշանակություն էր տրվում առանձին ուսուցիչների կարծիքներին։ Հաճախ նրանց ասույթները դրվում էին Թորային հավասար և երբեմն ավելի բարձր։ Համաձայն Թոսեֆտայի*, թույլատրվում էր, որ ռաբբին չեղյալ հայտարարի Օրենքի որոշումների մի մասը[37]։

Հետևապես, Հիսուսի քարոզչությունը հակառակ չէր հինուխտյան ուսուցչության սկզբունքների հետ անգամ այն ժամանակ, երբ Նա ուղղակի ստիպում էր հրաժարվել Թորայի որոշ կանոններից։ Մասնավորապես, դա վերաբերում էր սննդի ծիսական արգելադրությանը։ Այդ օրենքները մտցվել էին հնում հինկտակարանական Եկեղեցին այլադավաններից անջատելու համար։ Բայց յուրաքանչյուր սերնդի համար դրանք բարդանում են՝ արգելադրության դժվար կատարելի համակարգը դնելով վերանալու վտանգի տակ[38]։

Չնայած սնունդը «մաքուրի» և «անմաքուրի» բաժանելը գալիս էր Աստվածաշնչից, Հիսուսը ամենայն վճռականությամբ այն հայտարարեց հնացած։ «Անմաքուր» կարող են լինել միայն մարդկանց մտքերը, մղումները և արարքները։

Լսեցե՛ք և իմացե՛ք. ոչ թե՝ ինչ որ բերանով է մտնում,
ա՛յն է պղծում մարդուն,
այլ ինչ-որ ելնում է բերանից՝

* Ռաբբիների մեկնությունների հնագույն ժողովածու։



ա՛յն է պղծում մարդուն...
Քանի որ սրտից է, որ ելնում են չար խորհուրդներ,
սպանություններ, շնություններ, պոռնկություններ,
գողություններ, սուտ վկայություններ, հայհոյանքներ։
Այս բոլորն են, որ պղծում են մարդուն [39]։

Այսքան հստակ արտահայտված միտքը թվում էր ուժերից վեր անգամ Հիսուսին մոտ կանգնած մարդկանց համար։ Շատ տարիներ անց Պետրոսը երկյուղում էր «պիղծ» սնունդի օրենքը խախտելուց [40]։

Նման անկարևոր նշանակություն տվեց Հիսուսը ձեռքերի ծիսական լվացմանը, որը պարտադիր էր համարվում բարեպաշտ մարդկանց համար։ Ինչ վերաբերում էր պահքերին, ապա Նա ցանկանում էր, որպեսզի մարդիկ դրանք չհամարեն իրենց ծառայությունը։ Հնագույն ժամանակներում պահքը ողբի նշան էր, բայց ավետարանական ժամանակներում այն դիտում էին որպես բարեպաշտության օրինակ։

Մկրտչի աշակերտներին տարօրինակ թվաց, որ Հիսուսը չէր ստիպում Իր հետևորդներին պահպանել պահքը, ինչպես դա անում էր իրենց դաստիարակը։ «Միթե կարելի բան է, որ հարսանքավորները սուգ պահեն, քանի փեսան նրանց հետ է»,- առարկեց նրանց Հիսուսը։ Չէ որ պասը միջոց է և ոչ թե նպատակ։ Նպատակը Աստծուն մոտ լինելն է։ Նա, ով գտնվում է Մարդու Որդու կողքին, հասել է դրան, և այդ պատճառով պասը նրան պետք չի։ Ընդ որում, Նա պասը չէր պախարակում և Ինքն էլ էր պաս պահում, երբ ապրում էր անապատում։ Նա գիտեր, որ աշակերտների համար կգան ծանր օրեր, երբ պասը նրանց համար կդառնա անհրաժեշտ[41]։

Այսպես, Հին Կտակարանի մեկնության մեջ նշմարվեցին Նորի ուրվագծերը։ Ավետարանի լույսի տակ աղոտացան և նշանակությունը կորցրեցին շատ հին կանոններ և ծեսեր։ Դրանք ապրել էին իրենց դարը, չնայած օրենքի պահապանները ամբողջ ուժով հակառակվում էին դրան, նույնացնելով Ճշմարտությունը մի ժողովրդի կրոնա-ազգային կազմակերպվածության հետ։ «Ոչ ոք,- ասում էր Հիսուսը,- չօգտագործված կտավի կտորը հնացած ձորձի վրա չի կարկատի. քանի որ այն իր լրիվ չափով կպատռի կհանի զգեստից, պատռվածքը ավելի վատ կլինի։ Ոչ էլ նոր գինին հին տիկերի մեջ են դնում. ապա թե ոչ տիկերը կպատռվեն. և՛ գինին դուրս կթափվի, և՛ տիկերը կփչանան. այլ նոր գինին նոր տիկերի մեջ են լցնում, և երկուսն էլ պահվում են»[42]։

Հինը դուրս չի գցվում ամբողջությամբ, բայց Նրա կողքին վեր է

խոյանում այլ չենք, որին նախորդը ծառայում է սոսկ որպես նախադուռ: Հիսուսը չի զրկում կրոնը ձևից, բայց միշտ ցույց է տալիս սիրո, հավատի, ներքին հոգևոր կերտվածքի առաջնայնությունը:

Ավետարանը ևս մի կետում հակադրվում էր Հին Ուխտին: Օրենքը իրավունք էր վերապահում ամուսնուն կնոջը թողնել ցանկացած, երբեմն ամենաչնչին առիթով: Դա Արևելքում իշխող նահապետականության արտացոլումն էր: Չնայած Աստվածաշնչում բարձր էր դրվում սերը և մայրական պատիվը, իսկ մայրը շրջապատվում էր պատկառանքով, կանանց դրությունը, համաձայն Օրենքի, փոքր ինչ տարբերվում էր ուրիշ երկրներում ընդունվածից: Ամուսինը համարվում էր «բահաղ»՝ տեր, կինը համարյա նրա սեփականությունն էր, ծառաների և տնային գույքի կողքին: Դրանով է բացատրվում ամուսնալուծության մեջ տղամարդու գործի դյուրացումը:

Դպիրները, կռահելով, որ Հիսուսը ամուսնալուծությանը այլ կերպ է նայում, Նրան բանավեճի մեջ ներքաշեցին: Ուսուցչի պատասխանը վերաբերում էր ոչ միայն Օրենքին, այլև քաղաքականությանը, քանի որ դիպչում էր հենց չորրորդապետին: Անտիպասը թողել էր իր կնոջը , որպեսզի ամուսնանա Հերովդիադայի հետ: Հովհաննես Մկրտիչը տուժեց հենց այն բանի համար, որ դատապարտեց կառավարչի արարքը:

Հիսուսը անվերապահ ձևով մերժեց այն միտքը՝ իբր Մովսեսի Օրենքը **խրախուսում** է ամուսնալուծությունը: Իր խոսքերով, Մովսեսը զիջումներ է արել մարդկանց «խստասրտությանը»*:

Հիսուսը Իր ունկնդիրների առաջ գծեց ամուսնության իդեալը: Ամուսնությունը հաստատված է Արարչի կողմից, և ի հեճուկս տարածված կարծիքի, չի հանդիսանում լոկ երեխաներ ծնելու ծառայական միջոց: Երբ «երկուսը դառնում են մի մարմին»**, դա հրաշք է, աստվածային շնորհ, որին տիրում են միայն մարդիկ: «Այն, ինչ Աստծով է միացած, մարդը չի կարող բաժանել»: Ամուսնական միությունը կարող է խորտակվել միայն անհավատարմությամբ:

Այդ սկզբունքը անգամ աշակերտներին թվում էր անիրագործելի: Նման դեպքում ընդհանրապես ավելի լավ է չամուսնանալ՝ որոշեցին նրանք: «Բոլորն ընդունակ չեն այդ բանին, այլ՝ նրանք, որոնց տրված է»,- պատասխանեց Հիսուսը: Մովսեսի նման, Նա տեսնում էր մարդու անկատարությունը և թուլությունը, սակայն մտադիր չէր հանուն դրա թուլացնել նպատակը: Նա թույլատրում էր նաև ամուրիությունը, որը

* Դա շատ կարևոր վկայություն է, որ դեմ է գնում ժողովրդական համոզումներին, իբր ողջ Թորան Մովսեսը ստացել է անմիջականորեն Երկնքից: (Տե՛ս ծանոթագր. 3):

** Մարմին բառը Աստվածաշնչում սովորաբար ընդամենը նշանակում է մարդ:



դիտում էր որպես առանձնահատուկ կոչվածություն[43]: Այդ նույն ժամանակ, Նրա առաքյալներից շատերը, մասնավորապես Պետրոսն ու Փիլիպպոսը, ամուսնացած էին: Առաջին քրիստոնյաներն ընտանիքն անվանում էին «ընտանեկան Եկեղեցի»: Քրիստոսն ինքը հրաժարվեց ամուսնությունից ոչ թե նրա համար, որպեսզի նվաստացնի այն, այլ առաջին հերթին այն բանի համար, որ ամբողջովին պատկանում էր Հորը և Իր Պատգամաբերությանը: Նրա սերը համակում էր յուրաքանչյուր մարդու:

Նոր վերաբերմունք կնոջ նկատմամբ Քրիստոսը հաստատեց Իր ծառայության ամենասկզբում:

Երուսաղեմից Գալիլիա գնալով, Նա անցավ սամարացիների երկրով[44]: Տոթակեզ կեսօր էր, ճանապարհից հոգնած Հիսուսը հին ջրհորի մոտ, որից տեղացիները անհիշելի ժամանակներից ջուր էին վերցնում, նստեց հանգստանալու: Աշակերտները Նրան թողնելով, գնացին ուտելիք ճարելու:

Նրանց բացակայության ժամանակ աղբյուրին մոտեցավ գլխին կուժ դրած սամարացի մի կին: Նա շատ զարմացավ, երբ Օտարականը նրանից խմելու ջուր խնդրեց: Չէ որ հրեաները, նման ժամանակակից հնածիսականների, անթույլատրելի էին համարում այլադավանների հետ նույն ամանից օգտվելը: Որպես պատասխան՝ Անծանոթն ասաց, որ Ինքը կարող է նրան տալ «կենդանի ջուր», որը խմելով՝ նա երբեք չի ծարավի:

Պարզամիտ կինը այդ խոսքերը բառացիորեն հասկացավ:

- Տե՛ր, տո՛ւր ինձ այդ ջուրը, որպեսզի չծարավեմ և այստեղ չգամ ջուր հանելու:

- Գնա՛ ամուսնունդ կանչի՛ր և արի՛ այստեղ:

- Ամուսին չունեմ:

- Լա՛վ ասացիր, թե՝ ամուսին չունեմ, որովհետև հինգ մարդ ես փոխել և ում հետ որ այժմ ապրում ես, քո ամուսինը չէ. այդ ճիշտ ասացիր:

Սամարացի կինը հասկացավ, որ Զրուցակցին պարզ է իր կյանքի տխուր պատմությունը: Նրա գլխում այդ պահին միտք ծագեց Նրան հարց տալ սամարացիների և հրեաների միջև եղած հին վեճի մասին:

- Տե՛ր, ինձ թվում է, թե Դու մարգարե ես: Մեր հայրերը այս լեռան վրա երկրպագություն արեցին, իսկ Դուք ասում եք, թե միայն Երուսաղեմն է այն տեղը, ուր արժանի է երկրպագել*:

* Սամարացիները եկեղեցական արարողությունների օրինական տեղը համարում էին ոչ թե Երուսաղեմը, այլ Հարիզիմ լեռը, որտեղ մ.թ.ա. IV դարում կառուցեցին տաճար: Մ.թ.ա. 130 թ. ավերվեց հռոմնեականների կողմից:

– Ո՛վ կին, հավատա՛ Ինձ, որ կգա ժամանակը, երբ ո՛չ այս լեռան վրա և ո՛չ էլ Երուսաղեմում կերկրպագեն Հորը: Դուք երկրպագում եք նրան, ում չգիտեք, իսկ մենք երկրպագում ենք նրան, ում գիտենք, որովհետև փրկությունը հրեաներից է: Բայց կգա ժամանակ, և արդեն իսկ եկել է, երբ ճշմարիտ երկրպագուները կերկրպագեն Հորը հոգով և ճշմարտությամբ, քանի որ Հայրն էլ Իրեն այդպիսի երկրպագուներ է ուզում: Հոգի է Աստված, և Նրա երկրպագուները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն:

– Գիտեմ, որ Մեսիան՝ Քրիստոս կոչվածը, կգա,– պատասխանեց կինը:– Երբ Նա գա, մեզ ամեն ինչ կպատմի:

– Այդ Ես եմ, որ խոսում եմ քեզ հետ,– ասաց Հիսուսը...

Այդ պահին ջրհորին մոտեցան աշակերտները: Նրանք շատ զարմացան, որ Ուսուցիչը խոսում է սամարացի կնոջ հետ: Կինը հուզված շտապեց քաղաք, որպեսզի պատմի հանդիպման մասին ցեղակիցներին:

– Ռաբբի՛, հա՛ց կեր,– առաջարկեցին աշակերտները:

– Ես ունեմ ուտելու կերակուր, որ դուք չգիտեք:

Նրանք իրար երես նայեցին: Ով կարող էր կերակրել Նրան այս անհյուրընկալ տեղում: Բայց շատ ավելի զարմացան, իմանալով, որ ոչ թե իրենց, այլ այդ հասարակ կնոջը, այն էլ անառակին ու հեթանոսին է ասել Իր մասին որպես Փրկիչի և տեղյակ է դարձրել հոգու հավիտենական կրոնի էության...

Սոկրատի համար կինը սոսկ բութ, ձանձրալի էակ էր, իսկ Բուդդան իր հետևորդներին թույլ չէր տալիս նույնիսկ նայել կանանց: Նախաքրիստոնեական աշխարհում կանայք ամենից հաճախ մնում էին որպես չխոսկան ստրկուհիներ, որոնց կյանքը սահմանափակված էր հյուծիչ աշխատանքով և տնային հոգսերով: Պատահական չեն հրեական աղոթքներից մեկում ասվող՝ «Գոհությունս եմ հայտնում Քեզ, Աստված, որ Դու ինձ կին չես ստեղծել...» բառերը:

Քրիստոսը վերադարձնում է կնոջը իրենից խլված մարդկային արժանապատվությունը և հոգևոր ձգտումներ ունենալու իրավունքը: Այսուհետև նրա տեղը միայն ընտանեկան օջախը չի: Այդ պատճառով էլ, Հիսուսի մերձավոր հետևորդների մեջ մենք տեսնում ենք ոչ քիչ կին աշակերտների, գերազանցապես գալիլեացի: Ավետարանը պահպանել է նրանցից մի քանիսի անունը. դա Մարիամ Մագդաղինացին է, որին Տերը բժշկեց «յոթ դևերից», Հովհաննեսի և Հակոբոսի մայրը՝ Սաղոմեն, Կույս Մարիամի քույրը՝ Մարիամ Կղոպեացին, Շուշանը, Հովհաննան՝



Անտիպասի վերակացու Քուզայի կինը[45]: Նրանցից ամենաունևորները իրենց ունեցվածքից մատակարարում էին փոքրիկ համայնքին:

Սակայն Հիսուսը չէր ցանկանում, որպեսզի դրանով նրանց դերը սահմանափակվի:

Երուսաղեմ այցելելուց Նա մտերմացավ ոմն Եղիազարի կամ Ղազարոսի ընտանիքի հետ, որն ապրում էր քաղաքին մոտիկ Բեթանիա բնակավայրում, իր քույրերի՝ Մարթայի և Մարիամի հետ: Ուսուցիչը սիրեց նրանց տունը, որի ծածկի տակ հաճախ էր հանգիստ առնում: Մի անգամ, երբ Նա կրկին եկավ նրանց մոտ, Մարթան սկսեց հյուրասիրելու գործով զբաղվել, իսկ Մարիամը եկավ նստեց Ուսուցչի ոտքերի առաջ, որպեսզի լսի Նրա խոսքերը: Տեսնելով այդ, մեծ քույրը դիմեց Նրան.

– Տե՛ր, Քեզ փույթ չէ, որ քույրս ինձ մենակ է թողել ծառայության գործի մեջ. արդ, ասա՛ դրան, որ օգնի ինձ:

– Մարթա՛, Մարթա՛,– պատասխանեց Հիսուսը,– դու հոգս ես անում և շատ բաներով ես զբաղված, բայց այստեղ քիչ բան է պետք. Մարիամը ընտրել է լավ մասը, որ նրանից չպիտի վերցվի[46]:

Ուսանելի է, որ նույնիսկ Հիսուսի հակառակորդները, չնայած տեսնում էին Նրան կանանց շրջապատում, չէին համարձակվում զրպարտել Նրան: Դա ավետարանական պատմության ամենազարմանալի գծերից մեկն է: «Նա, Ով մի անգամ նվաճեց քամին և ծովը,– գրում է Ֆրանսուա Մորիակը,– տիրապետում է սրտերում մեծագույն խաղաղություն հաստատելու իշխանությամբ... Նա սանձում է սրտերում սկսված փոթորիկը, այլապես ի դեմս Նրա կերկրպագեին ոչ թե Աստծո Որդու, այլ մարդկանց մեջ գտնվող մարդու»[47]:

Հետագայում, երբ հասավ փորձության ժամը, առաջին կին քրիստոնյաները մնացած աշակերտների պես չէին թողնում Տիրոջը: Նրանք եղան Գողգոթայում Նրա մահվան ժամին, ուղեկցեցին Ուսուցչին մինչև գերեզմանի տեղը, և առաջինը նրանց բացվեց Զատկի գաղտնիքը...

Ավետարանը խորտակեց հնուց ի վեր մարդկանց բաժանող պատնեշները: Նրանց, ովքեր պահպանում էին Օրենքի ծեսերը և ովքեր չգիտեին այն, հրեաներին և օտարերկրացիներին, տղամարդկանց և կանանց՝ յուրաքանչյուրին այն ճանապարհ բացեց դեպի Քրիստոսի Թագավորություն, որտեղ վերանում են երկրորդական պատկանելիությունը ազգին, խավին, սեռին, տարիքին: Հայելով այդ հրաշքը, Պողոս առաքյալը բացականչել է. «Այլևս չկա հրեա, ոչ էլ հեթանոս, թլփատություն և անթլփատություն, բարբարոս, սկյութացի, ծառա, ազատ, այլ՝ Քրիստոս, որ ամեն ինչ է ամեն բանի մեջ»[48]:

# ԵՐԿՐԱՅԻՆ ԿՅԱՆՔ ԵՎ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Համոզվածությունը այն բանում, որ գոյություն ունի այլ կյանք, որը շարունակվում է մարմնի քայքայումից հետո, հատուկ էր մարդկանց հնադարից։ Այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Պլատոնը և Պոսիդոնիոսը, առաջինը տվեցին այդ հայեցակետին փիլիսոփայական իմաստավորում։ Նրանք գտնում էին, որ մեր երկրային կյանքը հավիտենականության նախերգանքն է սոսկ։ Պլատոնը նույնիսկ մահվան պատրաստվելու կարողությունը համարում էր իմաստունի գլխավոր առաքինությունը[49]։

Հինկտակարանական կրոնը այդ առումով բացառություն է կազմում։ Երկար ժամանակ այն պատասխան չէր գտնում մարդու հետմահու ճակատագրի մասին։ Արդյունքում հրեաները աշխարհի մասին պատկերացումները ստիպված էին փոխառնել հանդերձյալ ուրիշ ժողովուրդներից։ Խալդերին և հոմերոսյան ժամանակի հույներին այն պատկերանում էր ստորգետնյա տարածքի տեսքով, որտեղ մեռածների ստվերները քարշ են տալիս կիսաքուն գոյություն։ Այդ օրինակով Հին Կտակարանում պատկերացում ստեղծվեց Շեոլի՝ Գեհենի մասին։ «Կյանքի շարունակականությունը» իրականում տեսնում էին գլխավորապես սերունդների մեջ[50]։

Այնքան ժամանակ, քանի դեռ անձնավորությունը չի զատել իրեն ամբողջից՝ցեղից, մարդը կարող է հաշտվել ցեղի անմահության գաղափարի հետ։ Բայց անհատական գիտակցության խորացմանը զուգընթաց՝ նա սկսեց ընդվզել։ Հոբի ողբը ցնցող վկայությունն է այն կրոնական ճգնաժամի, որի միջով հարկ եղավ անցնել Իսրայելին։ Արդարները տառապում են, իսկ չարերը հաղթանակում։ Որտեղ փնտրել Աստծո ճշմարտությունը։ Միայն այնկողմնայինում։ Բայց Հին Կտակարանը այդ գայթակղությունից խուսափեց։ Հրաժարվել Էության արդարության և բարության հավատքից՝ նույնպես անիմաստ էր։ Նշանակում է Արարչի բարի կամքը պետք է որ անիմանալի կերպով հայտնված լինի այստեղ, երկրում...

Այդպիսին էր մտածելակերպը Իսրայելում, երբ մ.թ.ա. մոտ IV դարում առաջին անգամ լսեց ավետիս հավիտենական կյանքի մասին։ Բայց ոչ թե «Հոգու անմահությունը» բացվեց նրան, այլ գալիք վերածնունդը, հարությունը մարդու, երբ և՛ հոգին, և՛ մարմինը, և՛ Աստծո կողմից ողջ արարվածը կարող են մասնակից դառնալ հավիտենականությանը[51]։



Հրեա աստվածաբանները անմիջապես չյուրացրին իրենց համար այդչափ նոր պատկերացումը։ Էկլեզիաստի հեղինակը և Հեսուն Սիրաքի որդին, այդպես էլ չկարողացան այն ընդունել։ Միայն մ. թ. ա. II դարում այն վերածվեց հուդայականության ուսմունքի, նրա եկեղեցական ավանդության բաղկացուցիչ մասի։ Ընդ որում, սադուկեցիները վճռականորեն հրաժարվեցին վերաիմաստավորել հետմահու կյանքը և պահպանեցին Շեոլի մասին նախնական պատկերացումները։

Հիսուս Քրիստոսը լիովին հաստատեց մեռյալների հարության հավատը։ Սակայն մշտապես ցույց տալով «գալիք դարի» ռեալականությունը և Աստծո հաղթանակը քայքայման հանդեպ, նա չէր քարոզում սպիրիտուալիզմ, որի տեսանկյունից երկրային կյանքը պատրանք է։

Ավետարանները սովորեցնում են ոչ միայն հանդերձյալ կյանքի մասին, այլև այն մասին, թե ինչպես պետք է ապրել այսօրը։

Անմահությունը, հարությունը, Աստծո Թագավորությունը անբաժանելի են այն ամենից, ինչը կատարվում է այս աշխարհում։ Եթե մարդը սկսի զանց առնել իր երկրային ծառայությունները, դա դավաճանություն կլինի իր կոչմանը։ Մյուս կողմից, նրանք, ովքեր բոլոր ուժերը ծառայեցնում են միայն նյութականին, սպասվում է անխուսափելի կործանում։

Կյանքը վաղանցուկ է։ Ցանկացած պահի մեզանից կարող են հաշիվ պահանջել։ Որպեսզի հիշեցնի այդ մասին, Հիսուսը պատմում է հարուստի մասին առակը, որը մտածում էր միայն այն մասին, որ իր շտեմարաններում ավելի շատ ցորեն լինի։ Մի անգամ, բարեբեր մի տարի, նա մտածեց կառուցել նոր շտեմարաններ, բայց հենց այդ ժամանակ եկավ իր մահկանացուն կնքելու ժամանակը, և բոլոր չարչարանքները հող ու մոխիր դարձան։ «Նույնպես նաև նա,- եզրակացնում է Հիսուսը,- ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա»[52]։

Ագահությունը, աշխարհային բարիքներ հետապնդելը մարդուն դարձնում են թերարժեք։ Մոռանալով հոգու անանց գանձերի մասին, նա կողոպտում է իրեն։ Չկա այդ կուրությունից ավելի սարսափելի բան։

Վա՛յ ձեզ՝ մեծատուններիդ...
Վա՛յ ձեզ, որ այժմ հագեցած եք...
Վա՛յ ձեզ, որ այժմ ծիծաղում եք,
որովհետև պիտի սգաք և պիտի լաք...
Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա,

ուր ցեց և ժանգ ոչնչացնում են,
և ուր գողեր պատերն են ծակում ու գողանում,
այլ գանձեր դիզեցե՛ք ձեզ համար երկնքում,
որտեղ ո՛չ ցեց և ո՛չ ժանգ չեն ոչնչացնում
և ո՛չ էլ գողերը պատերն են ծակում ու գողանում.
քանի որ, ուր ձեր գանձերն են,
այնտեղ և ձեր սրտերը կլինեն[53]:

Քրիստոսը կոչում էր անցողական երևույթներից ներքնապես անկանխամալու:

«Ճշմարտությունը ձեզ կազատի»,- ասում էր Նա[54]:

Մարգարեների ժամանակներում նրանց շուրջը խմբվում էին մարդիկ, ովքեր արհամարհում էին հարստություն կուտակելը և անվանում էին իրեն «հոգով աղքատներ»: Նրանք թշվառ չէին բառի սովորական իմաստով, այլ արդարակյացներ էին, որոնք ցանկանում էին ազատագրվել ունայն նպատակներից[55]:

Այդպիսին պետք է լինեն, Քրիստոսի խոսքերով, իր աշակերտները: «Երանի՜ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է Երկնքի Արքայությունը»: Նրանք «աղքատներ են», քանզի գիտակցում են, որ կարիք ունեն Հոգու վայելչության շնորհների և լեցուն են այդ շնորհները ստանալու հույսով:

Մի անգամ Հիսուսին մոտեցավ մի մեծահարուստ պատանի և խոնարհվելով՝ ասաց.

- Բարի՛ Վարդապետ, ինչ պիտի անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ:

- Ինչու Ինձ բարի ես կոչում,- ասաց Հիսուսը,- ոչ ոք բարի չէ, այլ միայն՝ Աստված*: Պատվիրանները գիտես՝ մի՛ սպանիր, մի՛ շնացիր, սուտ մի՛ վկայիր, մեծարի՛ր քո հորն ու մորը:

- Վարդապե՛տ, այդ բոլորը իմ մանկությունից ի վեր արել եմ. արդ, ինչ եմ պակաս թողել:

Հիսուսը ակնդետ նայեց երիտասարդին, որն անմիջապես դուր էր եկել Նրան, և ասաց.

- Քեզ մե՛կ բան է պակասում, եթե կամենում ես կատարյալ լինել, գնա վաճառի՛ր ինչ որ ունես ու աղքատների՛ն տուր և երկնքում գանձեր կունենաս. և վերցրո՛ւ խաչդ ու արի՛ իմ ետևից:

* Քրիստոսը հրաժարվում է «բարի» տիտղոսից, զսպելով պատանու ծայրաստիճան ակնածանքը, քանի որ Ինքը նրա աչքին լոկ մարդ էր:



Պատանին, պարզվեց, շատ հարուստ էր, իսկ սովորական ապրելակերպը թողնելը նրա համար չափազանց մեծ զոհողություն էր: Կոչը նրան շփոթության մեջ գցեց:

Աշխատելով արթնացնել նրա խիղճը՝ Հիսուսն ասաց.

- Ինչպես կարող ես ասել, որ կատարել ես Օրենքը և Մարգարեներին: Չէ որ Օրենքում ասված է՝ «Սիրիր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ», բայց ահա քո եղբայրներից շատ շատերը՝ Աբրահամի որդիները, ցնցոտիներ են հագնում և մեռնում են քաղցից, իսկ քո տունը տրաքվում է հարստությունից, և որտեղից ոչինչ դուրս չի գալիս նրանց համար[56]:

Բայց պատանին այդպես էլ հեռացավ՝ թաղված տրտում մտքերի մեջ:

- Զավակնե՛րս, ինչքա՜ն դժվարությամբ Աստծո Արքայությունը կմտնեն նրանք, որոնք հարստություն ունեն: Ավելի հեշտ է, որ ուղտն ասեղի ծակից անցնի, քան թե մի մեծահարուստ Աստծո Արքայությունը մտնի:

Այդ խոսքերը անհանգստացրին նրանց: Չէ որ իրենք հույս ունեին արտոնություններ և պարգևներ ստանալ Փրկչի պալատում: Ընդհանուր անհանգստությունն արտահայտեց անմիջական Պետրոսը: Ի տարբերություն հարուստ երիտասարդի, իրենք թողել են ամեն ինչ և գնացել Հիսուսի ետևից: Հիմա ինչի վրա է իրենց հույսը:

Հիսուսը պատասխանեց բազմանշանակ և խորհրդավոր արտահայտությամբ. Նա, ով հանուն Իրեն և Ավետարանի թողել է մայր, հայր, երեխաներ, տուն, հարյուրապատիկ ավելի ապագայում կստանա՝ «տներ, մայրեր և եղբայրներ»...

Քրիստոսը հարուստ պատանուց պահանջեց «բաժանել ամեն ինչ», որովհետև մտադրվեց նրան Իր առաքյալը դարձնել: Մյուս մարդկանց՝ փարիսեցի Նիկոդեմոսին, ժողովարանի իշխանավոր Հայրոսին, Հովսեփ Արիմաթացուն, Հովհաննային՝ Քուզայի կնոջը, Նա չառարկեց ապրել աղքատության մեջ: Հետևապես, այն բնավ էլ չի հանդիսանում փրկության պարտադիր պայման: Այդուհանդերձ, Հիսուսը հաճախակի էր խոսում միատեղման վտանգի մասին: Նա չարիքը տեսնում էր ոչ թե անմիջապես ունեցվածքի, այլ սրտի ստրկացման մեջ:

Այն, ինչ ձեռք է բերում մարդը, պետք է օգտագործի ուրիշներին օգնելու համար: «Երանելի՜ է մանավանդ տալը, քան առնելը»[57]: Մերձավորին ծառայելը այստեղ, երկրի վրա, Իր աշակերտի պարտականությունն է: Դրանով մեկ անգամ ևս ընդգծվում է ավետարանական բարոյականության այսկողմնային բնույթը: Մարդիկ կդատվեն ըստ իրենց գործերի: Տերը ամենից առաջ նրանց կհարցնի ոչ թե «ինչպես են հա-

վատացել», այլ՝ ինչպես ես վարվել քո եղբայրների հետ, կերակրել ես քաղցածներին, այցելել ես հիվանդներին և փորձանքի մեջ հայտնվածներին[58]: Սոցիալական հարցը Քրիստոսի համար բարոյական հարց է: Ահա ինչու առաքյալները և Եկեղեցու Հայրերը այդքան բուռն բողոքի ձայն բարձրացրին ընչազուրկների հարստահարման դեմ[59]: Ահա ինչու, քրիստոնեական ժողովուրդների պատմության մեջ, հանդերձյալ կյանքի հույսերի պատրվակով, Ավետարանի ուրացումը, Նրա պատվիրաններից ետ կանգնելը արդյունքում ստացան անխուսափելի հատուցում, իսկ ազատության, արդարության և եղբայրության սկզբունքները հայտնվեցին եկեղեցուն թշնամի դրոշակների վրա:

Սակայն այստեղից չի հետևում մտածել՝ իբր Քրիստոսը հասարակության վերակազմակերպման ինչ-որ որոշակի ծրագիր էր առաջարկում: Նա մարդկանց ազատություն տվեց, որպեսզի ելնելով Իր ուսմունքից, **իրենք** կազմեն այդպիսի նախագծեր: Այդ պատճառով էլ, երբ երկու եղբայր Հիսուսին խնդրեցին իրենց ժառանգության բաժանարար դառնալ, Նա առարկեց. «Ինձ ով դատավոր կամ բաժանարար կարգեց ձեզ վրա»[60]: Նրան հավատացողները, առանց ուղղակի ցուցումների, կարող են գտնել ճանապարհը: «Նախ՝ խնդրեցեք Աստծո Թագավորությունը և Նրա արդարությունը, և ապա այդ բոլորը ձեզ ավելիով կտրվի»: Այդ պատճառով, Քրիստոսը չի շոշափել դարաշրջանի քաղաքական խնդիրները, այլ խոսել է այն մասին, ինչը արդիական է բոլոր ժամանակներում:

## ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ինչ է Աստծո Թագավորությունը, լուր, որի մասին այդքան կարևոր տեղ է հատկացվում Հիսուսի քարոզչության մեջ:

Գուեհիկ մեսիանիզմի կողմնակիցները այդ հասկացությունը կապեցին Իսրայելի արտաքին հաղթանակների և երկրի ֆանտաստիկ բարեբերության հետ. արևը կբազմապատկի իր լույսը, գետերը՝ կենարար ջուրը, պտուղները արտասովոր մեծություն կունենան: Մարգարեները հավատում էին, որ Աստծո թագավորելով կարտաքսվի ամեն տեսակ չարը և կվերափոխվի Տիեզերքը: Մեր թվարկությունից առաջ վերջին դարերի վախճանաբանական գրականության մեջ այդ երկու հայեցակետերը միահյուսվեցին[61]: Իսկ այն, որ Թագավորության սկիզբը կդնի Փրկչի գալուստը, համարյա բոլոր հրեաների սպասումն էր:

Հիսուսը խոսում է Երկնքի Թագավորության մասին որպես Իր



Թագավորության: Աշխարհի բոլոր տերություններին, մարդկային բոլոր տեսակի ազգերին Նա հակադրում է Տիրոջ տիրապետությունը: Աստծո Թագավորությունը «այս աշխարհից չէ», այն բարձր է ողջ անցավորից, խորտակելով Սատանայի իշխանությունը՝ այն կբերի երկիր Երկնքի օրենքները:

Հոգևոր այդ իրականությունը չի կարելի դնել երկրային որևէ երջանկության հետ նույն շարքում: Երկրային երջանկությունը փխրուն է, քիչ բան է հարկավոր որպես երազ այն ցրելու համար: Բայց և այն է ամրանում և նոր իմաստ ձեռք բերում ավետարանական բերկրանքի ճառագումների մեջ, որը սովորեցնում է անվեհերություն, սերմանում է վստահություն և հույսեր:

Մարդիկ նույնիսկ, որոնք թվում է, թե կտրվել են կյանքի հանգամանքներից կամ իրենց մեղքերից, հավատի ուժով հաղթահարելով փորձությունը, ձեռք են բերում երանություն երկրին խոստացված Աստծո Թագավորության մեջ: Այն ժառանգում են հաշտարարները և կարեկցողները, սրտով մաքուրները և ճշմարտության համար հալածվածները: Այնտեղ մխիթարվում են սգավորները, հարստանում են «հոգով աղքատները», հագենում են ճշմարտությամբ[62]:

Այսպիսով, Քրիստոսի բարի լուրը լուր է աշխարհի փրկության մասին, աստվածային կյանքի հետ հաղորդակցության մասին՝ որպես իր բարձրագույն նպատակի:

Երբ «ժամանակների վախճանի» մասին շատ խոկացող փարիսեցիները Հիսուսին հարցրին Թագավորության հայտնության մասին, Նա պատասխանեց նրանց. «**Աստծո արքայությունը դրսից տեսանելի կերպով չի գալիս**, և չեն ասի, թե՝ ահավասիկ այստեղ է կամ այնտեղ, որովհետև ահա Աստծու Արքայությունը ներսում, ձեր մեջ է»[63]: Այն անտեսանելիորեն արդեն ներկայություն է մարդկանց մեջ, եթե իրենց հոգիներում տիրում է Տերը: Այնտեղ մտնողներին Նա բերում է ոչ թե մոռացություն, այլ երկնային Հորը մերձ լինելու լուսավոր, երանելի զգացողություն:

Ժամանակի հետ կգա մի օր, երբ Թագավորության Փառքը կհայտնվի կայծակի նման, որը «կծագի արևելքից և կլուսավորի մինչև արևմուտք»: Խոսելով այդ մասին, Հիսուսը հաճախ դիմում էր վախճանաբանական գրքերի պատկերավոր լեզվին, իսկ Նրա որոշ բառեր աշակերտներին ընկալելի էին այն իմաստով, որ Փառքի օրը կատարելապես մոտ է:

Սակայն ավելի հաճախ Հիսուսն առանց երկիմաստության սովորեցնում էր Թագավորության երկարատև, աստիճանական մոտեցման մասին և համեմատում էր այն հասունացման ընթացքի հետ[64]:

Այսպե՛ս է Աստծու Արքայությունը,
որպես թե մի մարդ հողի մեջ սերմեր ցանի.
և նա ննջի թե վեր կենա, գիշեր և ցերեկ,
սերմերը կբուսնեն ու կաճեն, և նա չի իմանա,
թե հողը ինքն իրենից բերք է տալիս,
նախ՝ խոտը, ապա՝ հասկը
և ապա՝ատոք ցորենը հասկի մեջ:
Սակայն երբ սերմը իր պտուղը տա,
իսկույն մանգաղ է ուղարկում,
որովհետև հնձի ժամանակը հասել է...
Երկնքի Արքայությունը նման է
մանանեխի հատիկին, որ մի մարդ
վերցրեց և նետեց իր պարտեզը:
Այն փոքր է, քան բոլոր սերմերը.
սակայն երբ աճում է, բոլոր բանջարներից
ավելի է մեծանում ու ծառ է լինում, այն աստիճան,
որ երկնքի թռչունները գալիս են ու նրա ճյուղերի վրա հանգստանում*:
Երկնքի արքայությունը նման է թթխմորի, որ մի կին առնելով,
դրեց երեք չափ ալյուրի մեջ, մինչև որ ամբողջը խմորվեց[65]:

Այդ առակների լույսի տակ կարելի է մտածել, որ այսօր ևս քրիստոնեության պատմությունը ապրում է ավելի շուտ լոկ սկիզբ: Աստվածային ծրագրերի իրականացման համար երկու հազար տարին ավելին չէ, քան ակնթարթը: Հասունացման ընթացքը դանդաղ է տեղի ունենում: Թթխմորը գործում է ոչ անմիջապես:

Երկնային շնորհները չեն տրվում անբաններին: Այդ պատճառով էլ Հիսուսը պահանջում է անդուլ պայքար: «Երկնքի Արքայությունը,- ասում է Նա,- բռնադատվում է»[66]: Ողջ նշանակալին հազվադեպ է ձեռք բերվում առանց զոհերի, առանց հրաժարումի, առանց աշխատանքի, իսկ հանուն Արքայության ոչ մի սխրանք չի կարելի համարել արտակարգ: Մարդը պետք է որոնի, գործի, ընտրի:

Մտե՛ք նեղ դռնով,
ինչքան լայն է դուռը և ընդարձակ՝ ճանապարհը,
որ դեպի կորուստ է տանում,

* Տե՛ս ստորև, էջ 315:



և բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով:
Ինչքան անձուկ է դուռը և նեղ՝ ճանապարհը,
որ տանում է դեպի կյանք,
և սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն[67]:

Ավանդությունը պահել է Քրիստոսի ընտրության անխուսափելիությունը ցույց տվող ուրիշ խոսքերը ևս.

Ով մոտ է Ինձ, նա մոտ է կրակին,
ով հեռու է ինձանից, հեռու է Արքայությունից[68]:

Հոր հետ միասնանալը գերազանցում է բոլոր արժեքները և իդեալները, մարդկության բոլոր սրբազան և ազնվագույն նպատակները:
Այն ձեռք բերելով, մենք ձեռք ենք բերում ամեն ինչ:

Եթե քեզ գայթակղեցնում է քո ձեռքը,
կտրիր դեն գցիր քեզնից,
որովհետև քեզ համար ավելի լավ է
խեղված մտնել հավիտենական կյանքը,
քան թե երկու ձեռք ունենալ ու գնալ գեհեն,
անշեջ կրակի մեջ[69]:
Երկնքի Արքայությունը նման է
արտի մեջ թաքցված գանձի,
որ մի մարդ գտնելով, նորից թաքցնում է.
և ուրախությունից գնում
վաճառում է իր ամբողջ ունեցածը
և այդ արտը գնում է:
Դարձյալ՝ Երկնքի Արքայությունը
նման է մի վաճառականի,
որ գեղեցիկ մարգարիտներ էր որոնում.
և գտնելով մի թանկարժեք մարգարիտ՝
գնաց վաճառեց իր ամբողջ ունեցածը
և այդ մարգարիտը գնեց[70]:

«Մարդու համար լավ չէ մենակ լինելը»,- սովորեցնում է Աստվածաշունչը: Մարդիկ ստեղծված են որպես մեկը մյուսի կարիքը զգացող էակներ: Եվ Աստծո գործն էլ իրենք համատեղ պետք է իրագործեն:

Հին խոստումը ուղղված էր հինկտակարանյան Եկեղեցուն, այսինքն՝ նվիրյալների Համայնքին: Այն ընտրվեց, որպեսզի դառնա իրեն Աստծուն նվիրած «սրբերի ժողովուրդ և հոգևորականների Թագավորություն», մարդկանց եղբայրակցություն: Երբ Ուխտի ժողովուրդը անարժան գտնվեց այդ կոչման մեջ, մարգարեները հույսները դրեցին նրանց վրա, ովքեր կանգուն մնացին, ում նրանք անվանում էին «Շեար»՝ Մնացորդ: Բայց Հիսուսը արդեն խոսում է պարզապես ոչ թե մնացորդի մասին, այլ ստեղծում է կարծես թե Աստծո նոր ժողովուրդ[71]:

Որոշ աստվածաբաններ կարծիք են արտահայտել, իբր Քրիստոսը մտադրություն չի ունեցել հիմնել Եկեղեցի, և որ այն վերագրվել է Նրան հետագայում միայն: Բայց Ավետարաններում շատ բան է խոսում այդ տեսակետի դեմ: Կարելի է պատահական համարել, որ Հիսուսը ընտրեց հենց տասներկու առաքյալներ: Անկասկած, ի դեմս նրանց, տեսնում էր Նոր Ուխտի Համայնքի իր տեսակի հիմնադիրների, նման այն բանին, որ Իսրայելը իր ծագումը սերում էր տասներկու նահապետներից: Քրիստոսը խոսում է այն գահերի մասին, որոնց վրա կնստեն Իր տասներկու աշակերտները «դատելու», այսինքն՝ գլխավորելու Իսրայելը[72]: Նշանակալի է, որ Հուդայի դավաճանությունից հետո առաքյալները անհրաժեշտ գտան նրա փոխարեն ընտրել մեկ ուրիշին, որպեսզի պահպանվի տասներկու թիվը: Բացի դրանից, Հիսուսի կողմից ընտրվեցին յոթանասուն առաքյալներ, իսկ դա նույնպես խորհրդանշական է: Ըստ ավանդության, գտնում էին, որ երկրի բոլոր ժողովուրդները սերվել են յոթանասուն նախահայրերից[73]:

Եկեղեցի* բառը Հիսուսը հազվադեպ է գործածում, հավանաբար, այն պատճառով, որ այդ օրերին այն որոշակիորեն կապվում էր հինկտակարանական Համայնքի հետ: Քրիստոսի Եկեղեցին ենթադրում է պատվանդան նոր հոգևոր համրության համար, թեկուզ և կառուցված Հին Ուխտի հիմքի վրա: Հիսուսը տալիս է դրան երկրային թագավորություններում ընդունված օրենքներից տարբերվող իր սեփական օրենքները («Ձեր միջև թող չլինի այդպես... »): Նա քաջալերում է նրան. «Մի՛ վախեցիր, փոքրի՛կ հոտ, որովհետև Ձեր հայրը հաճեց տալ ձեզ Արքայությունը»[74]:

Փոքրիկ առվակներից Եկեղեցին պետք է վերաճի լայնահուն գետի: «Դուք եք երկրի աղը,- ասում է Քրիստոսը,- դուք եք աշխարհի լույսը: Մի քաղաք, որ լեռան վրա է կանգնած, չի կարող թաքնվել»[75]:

* Արամեերեն՝ Kenalla, հունարեն՝ εχχληδια



Այդ պատճառով էլ Քրիստոսի Եկեղեցու գործն ավետումն է: Բայց դրանում էլ նրան սպասում են դժվարություններ: Սին հոգսերին տրկանալը, փորձությունները, թեթևամտությունը, հոգու ծուլությունը կարող են հակազդել Եկեղեցու զորացմանը: Սակայն միշտ էլ կգտնվեն «ճշմարտության ծարավ և տենչացող» մարդիկ: Ավետաբերներին պետք է ուրախացնեն նույնիսկ նրանք, ովքեր իրենց վարվում են առանց թշնամանքի: Նրանք պետք է խուսափեն կղզիացածությունից և աղանդավորական հպարտությունից:

Մի անգամ Զեբեդեոսի որդի Հովհաննեսը Հիսուսին ասաց.

- Վարդապե՛տ, տեսանք մեկին, որը Քո անունով դևեր էր հանում , և արգելեցինք նրան, որովհետև մեզ հետ չի շրջում:

- Արգելք մի՛ եղեք նրան,- պատասխանեց Տերը,- որովհետև չկա մեկը, որ Իմ անունով զորավոր գործեր անի ու կարողանա Ինձ հայհոյել, քանզի ով մեզ հակառակ չէ, նա մեր կողմն է[76]:

Մարդկանցից շատերը, անգամ Համայնքից դուրս կանգնածները, կորսված չեն Թագավորության համար: «Ով հեռու է ձեզանից այսօր, վաղը մոտիկ կլինի»[77]:

Մարդու Որդուն էլ տարբեր ձևերով դիմավորեցին, իսկ չէ որ «աշակերտը ավելին չէ Ուսուցչից»: Միթե բազում խուլեր չհետևեցին Նրա կանչին: Բայց դա չկանգնեցրեց Նրան: Թող Աստծո Արքայություն «կանչվածները» հրաժարվեն գալ, Ինքը համբերատար շարունակեց փնտրել նրանց, ովքեր կգնան Իր ետևից:

Մի անգամ, երբ Հիսուսը այցելեց մի փարիսեցու, հյուրերից մեկը լսելով Նրա խոսքերը՝ «Երանի՛ նրան, ով ճաշ կուտի Աստծո Արքայության մեջ»: Այդժամ Հիսուսը մի առակ պատմեց. «Մի մարդ ընթրիք սարքեց և հրավիրեց շատերին: Եվ ընթրիքի ժամին իր ծառային ուղարկեց՛ կանչելու հրավիրվածներին, թե՝ «Եկե՛ք, որովհետև ամեն ինչ պատրաստ է»: Եվ ամենքը մեկ-մեկ սկսեցին հրաժարվել: Առաջինն ասաց. «Ագարակ գնեցի և պետք է, որ գնամ տեսնեմ. խնդրում եմ քեզ, ինձ հրաժարվա՛ծ համարիր»: Եվ մյուսն ասաց. «Կին եմ առել, դրա համար էլ չեմ կարող գալ»: Եվ ծառան եկավ ու տիրոջը պատմեց այս: Այդ ժամանակ, բարկանալով, տանտերն իր ծառային ասաց. «Իսկույն դո՛ւրս եկ քաղաքի հրապարակներն ու փողոցները և աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին բեր մտցրո՛ւ այստեղ»: Եվ ծառան ասաց. «Տե՛ր, ինչ հրամայեցիր՝ կատարվեց և էլի տեղ կա»: Եվ տերը ծառային ասաց. «Դո՛ւրս եկ ճանապարհներն ու ցանկապատների առաջ և մարդկանց այստեղ մտցրո՛ւ, որպեսզի տունս լցվի: Ասում եմ

ձեզ, որ այդ հրավիրվածներից ոչ ոք իմ ընթրիքից չի ճաշակի»[78]։

Հիշելով այն մասին, որ ընավ էլ ոչ բոլոր մարդիկ են պատրաստ արձագանքելու կոչին, Քրիստոսի աշակերտները պետք է հետևեն իրենց Ուսուցչին, Որը նման է վարած հողի մեջ սերմ գցած գյուղացուն։

Ահա մի սերմնացան ելավ սերմանելու,
և երբ նա սերմանում էր,
մի մաս սերմ ընկավ ճանապարհի եզերքին,
և երկնքի թռչունը եկավ և այն կերավ։
Եվ ուրիշ մի մասը ընկավ ապառաժի վրա,
ուր շատ հող չկար.
և իսկույն բուսավ, քանի որ հողը խորություն չուներ.
երբ արևը ծագեց, խանձվեց.
և քանի որ արմատներ չկային, չորացավ։
Եվ ուրիշ մի մաս ընկավ փշերի մեջ,
ու փշերը բարձրացան և այն խեղդեցին։
Եվ մեկ ուրիշ մաս ընկավ պարարտ հողի վրա և պտուղ տվեց. կար
որ մեկին՝ հարյուր,
և կար որ մեկին՝ վաթսուն,
և կար որ մեկին՝ երեսուն[79]։

Ավետարանական արտում կարող է նաև մոլախոտ աճել։ Բայց դա չպետք է շփոթեցնի Քրիստոսի ճշմարիտ աշակերտներին։ Նրանք պետք է լինեն սթափ և զգոն։

Զգո՛ւյշ եղեք սուտ մարգարեներից,
որոնք մոտենում են ձեզ ոչխարների զգեստներով,
բայց ներսից հափշտակող գայլեր են։
Իրենց գործերի՛ց կճանաչեք նրանց.
միթե փշերից խաղող և տատասկից թուզ կքաղեն։
Ոչ ամեն մարդ, որ Ինձ «Տե՛ր, Տե՛ր է» ասում,
Երկնքի Արքայություն կմտնի, այլ նա՛,
ով կատարում է կամքը Իմ Հոր, որ երկնքում է[80]։

Հարդը աննկատ կթափանցի Եկեղեցի, և այդժամ դժվար կլինի դրանք տարբերել Աստծո իսկական ցորենից. «Երկնքի Արքայությունը նմանվեց մի մարդու, որ իր արտի մեջ բարի սերմ սերմանեց։ Եվ երբ



մարդիկ քնի մեջ էին, նրա թշնամին եկավ ցանած ցորենի վրա որոմ ցանեց ու գնաց։ Եվ երբ ցորենը բուսավ ու պտուղ տվեց, ապա երևաց և այն որոմը։ Տանտիրոջ ծառաները մոտեցան ու ասացին նրան. «Տե՛ր, չէ որ քո արտի մեջ դու բարի սերմ սերմանեցիր, ուրեմն որտեղից է այդ որոմը»։ Եվ տերն ասաց նրանց. «Թշնամի մարդ է արել այդ»։ Ծառաները նրան ասացին. «Կամենում ես, որ գնանք ու քաղենք հանենք այն»։ Եվ տերը նրանց ասաց. «Ո՛չ, միգուցե որոմը քաղելիս, ցորենն էլ նրա հետ արմատախիլ անեք։ Թողե՛ք, որ երկուսն էլ միասին աճեն մինչև հունձը, և հնձի ժամանակ ես հնձողներին կասեմ՝ նախ այդ որոմը քաղեցե՛ք և դրանից խուրձեր կապեցե՛ք այրելու համար, իսկ ցորենը հավաքեցե՛ք իմ շտեմարանների մեջ»[81]։

Միայն Աստծո Դատաստանը կկատարի վերջնական մաղումը և կզատի չարը բարուց։ Դատաստանը, ինչպես և Թագավորությունը, արդեն սկսվել է։ Ավետարանի խոսքերով, այն կայանում է նրանում, «որ լույսը եկավ աշխարհ, սակայն մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան լույսը»[82]։ Արդյունքում ծագում է ճգնաժամերի և կատաստրոֆաների մի շղթա, որը կյանքի է կոչվում Աստծո ճշմարտության և մարդկային չարի բախումից։ Վերջին Դատաստանը կլինի աշխարհի մաքրում՝ կրակով, երբ պատմության հանքանյութը կվերաձուլվի Թագավորության համար։ Այդ նոր ծնունդը, դժվարին ինչպես մյուս ծնունդները, կբերի իր պտուղը՝ նորացած էակին...

Երկնքի արքայությունը նման է ծով նետված ուռկանի,
որ ամեն տեսակ բան է հավաքել. երբ լցվել էր,
այն ցամաք հանելով և նստելով՝
լավերը մի առ մի հավաքեցին ամանների մեջ,
իսկ անպետքը դուրս գցեցին։
Այնպես էլ կլինի այս աշխարհի վախճանին։
Հրեշտակները կելնեն
և չարերին արդարների միջից կբաժանեն
ու կգցեն նրանց բոցավառ հնոցի մեջ.
այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում[83]։

Այդ առակները բերում են մի թեմայի, որը հնուց ի վեր տանջալից հարց էր քրիստոնեության մտքի համար։ Ինչ նկատի ուներ Հիսուսը՝ «հավիտենական տանջանքների» մասին ասելով։

Այն փաստը, որ «կրակի», «գեհենի», «որդերի» պատկերները

վերցված են Նրա կողմից հրեական հայտնութենական գրականությունից, դեռ չի պարզաբանում ոչինչ[84]: Սակայն Քրիստոսը չէր դիմի դրանց, եթե դրանց ետևում թաքնված չլիներ որոշակի իրականություն: «Խավար քշվածները» բառերը, իհարկե, չեն ենթադրում տարածություն կամ «տեղ», որտեղ բոցկլտում է նյութական կրակը: Թշվառության մթնոլորտը հաղորդող այդ խորհրդանիշը լոկ ակնարկ է պարունակում Աստծուց, լույսից և ճշմարիտ կեցությունից դուրս լինելու իրավիճակի մասին:

Բայց գլխավորը՝ կարող է Քրիստոսի ավետած սիրո Աստվածը հավիտենապես պատժել ժամանակավոր կյանքի մեղքերի համար: Միթե չարի հզորությունը այդչափ մեծ է, որ այն պետք է գոյություն ունենա մշտապես, անգամ այն ժամանակ, երբ «ամենուր» կթագավորի Տերը: Ընդ որում, չէ որ ժամանակի մասին մեր ժամանակակից ըմբռնումները հազիվ թե կիրարկելի են հավիտենության հարաբերությամբ: Չի խոստանում Աստծո խոսքն, արդյոք, որ «ժամանակ այլևս չի լինելու»:

Մարդուն դեռ տրված չէ այդ գաղտնիքի մեջ թափանցել: Բայց ողջ Նոր Կտակարանը վկայում է այդ մտքի դեմ, իբր Գեհենը Թագավորությանը ներհակ ինչ-որ ռեալականություն է: Այն «երկրորդ մահն է», անգոյությունը, անցումը դեպի ոչնչություն: «Կյանքը», բառի վախճանաբանական իմաստով, միայն «հավիտենական կյանքն է», Աստծո Թագավորությունը:

Մեկնիչները վաղուց արդեն նկատել են, որ Քրիստոսի՝ ոչխարները այծերից, բարիները չարերից բաժանելու մասին առակը չի կարելի տառացիորեն հասկանալ, քանզի լույսի և խավարի միջև եղած սահմանը շատ հաճախ անցնում է միևնույն մարդու սրտի միջով* : Սակայն ինչքան շատ է նրանում լույսը, այդչափ լիարժեք է պահպանվում նրա անձնավորությունը, այն բանից հետո, երբ Դատաստանի կրակը այրում է ողջ անմաքուրը[85]:

Մարդու մեծությունը, որպես Արարչի պատկերի և նմանությամբ արարված, այն է, որ նա կարող է դառնալ Թագավորության ստեղծման մասնակից: Երբ հաղթանակը չարի հանդեպ լիակատար կլինի, այդժամ կիրագործվի այն, ինչի մասին մարդիկ երազել են, ինչին ծարավ են եղել և ինչը կմերձեցնի միլիոնավոր բանական էակներ: Նրանց կողմից ստեղծած ամենայն գեղեցիկը կմտնի հավիտենական Թագավորություն: Կգա Աստծո որդիների ժամանակաշրջանը, որը լոկ հեռավոր նմանությամբ է նկարագրել Աստվածաշունչը:

* Տե՛ս ստորև, էջ 212:



Սակայն, արդեն և հիմա, այս անկատար, սարսափով և տառապանքներով լեցուն «դարում», Գալիքի ուժը և փառքը կարող են ձեռք բերվել: Հիսուսն ասում էր, որ Իր աշակերտները դեռ այս կյանքում կտեսնեն Թագավորությունը: Այն եկել է երկիր ի դեմս Մարդու Որդու, Նրա ավետիսով, մահվան դեմ տարած Նրա հաղթանակով և Հոգու հայտնությամբ:

Թագավորության կանչող լույսը հուրհրատում է հեռվում, բայց միևնույն ժամանակ նրա ցոլքերը մեր կողքին են. կյանքի հասարակ գործերում և եղելություններում, հրճվանքի ու վշտի, անձնուրացության և գթակղությունների հաղթահարման մեջ: Դրա նախազգացումը աստղերի ու ծաղիկների մեջ է, գարնան զարթոնքի և աշնան ոսկու, փոթորկուն ալեբախության, գույների և երաժշտության ծիածանի, հանդուգն երազների և ստեղծագործության, մաքառումների և ճանաչողության, սիրո և աղոթքի...

## «ԻՍԿ ԵՍ ԱՍՈՒՄ ԵՄ ՁԵԶ...»

Արդյոք մարդու ուժերի հնարավորության սահմաններում է այն, ինչին կոչում է Ավետարանը: Չէ որ մարդը իդեալը սիրելով անգամ, հաճախ իր մեջ ուժ չի գտնում բարձրանալու դրա սահմանները: Ուրիշ հզոր ձգողականություն է նրան ծռում դեպի երկիր. և մարդը ծառայում է Մամոնային, ուսին է դնում հոգսերի բեռը և իրեն հատկացված թանկարժեք օրերը անցկացնում է մանրուքների մեջ թաղվելով: Նրան ավելի հասկանալի է նրա ձայնը, ով Հիսուսին փորձեց անապատում: Նա պատրաստ է ապրել «միայն հացիվ», նա հրաշքներ է պահանջում, նա արբում է բռնություն բանեցնելուց: Աստծուն մարդը մոտենում է շահախնդրություններով և ինքնասիրությամբ լեցուն սրտով, և արտաքոց են հնչում մեր հոգնատանջ և մոլորված աշխարհին ուղղված «Կատարյալ եղեք դուք, ինչպես և երկնավոր Հայրն է կատարյալ...» խոսքերը:

Ով կարող է բանալ Թագավորության ճանապարհը: Ով կմոտեցնի մարդուն դեպի այն:

Հին Կտակարանում մարդիկ հավատում էին , որ միայն Ամենակարողն է գործում անհնարինը: Երբ Նա ներկա է Իր ժողովրդի մեջ, Նա մաքրագործում է նրան՝ շնորհելով նրան հոգևոր ուժեր: Ռաբբիները այդ միստիկ Ներկայությունը անվանում էին Շեհինա, Աստվածայինի

անտեսանելի հեղում՝ աշխարհ իջնող: «Եթե երկու կամ երեք հոգի հավաքվել են Օրենքը քննելու,- ասում էին իմաստունները,- Շեհինան բնակվում է նրանց մեջ»[86]: Դա գաղտնիքն էր, որի շեմին կանգ առան Իսրայելի մեծագույն իմաստունները: Չէ որ Աստծու մերձավորությունը անտանելի է մարդու համար: Միայն Էության՝ բոլոր պատնեշները հաղթահարած սերն է ի զորու միացնել անմիանալին:

Բայց ահա մարդիկ լսում են Հիսուս Նազովրեցու խոսքը. «Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անունով, այնտեղ եմ Ես, Նրանց մեջ... »[87]:

Ով է Նա, Տիրոջ Շեհինայի տեղ Իրեն կարգողը: Նա Իրեն անվանում է Մարդու Որդի, ինչպես հաճախ անվանում են հասարակ մահկանացուներին, բայց դրա հետ մեկտեղ Ինքը՝ Ուսուցիչը, պարզ վկայում է, որ մարգարեների խոստումները Իրենով է կատարվելու:

Երանի՛ այն աչքերին,
որ կտեսնեն այն, ինչ դուք տեսնում եք:
Ասում եմ ձեզ, որ բազում մարգարեներ և թագավորներ
կամեցան տեսնել այն, ինչ դուք տեսնում եք,
բայց չտեսան,
և լսել՝ ինչ դուք լսում եք,
բայց չլսեցին[88]:

Նշանակում է՝ Փրկիչն է: Իսրայելացիների կողմից երկար սպասված Մխիթարիչը: Սակայն կարող է, արդյոք, Փրկիչը մեղքերին թողություն տալ, ինչպես դա անում է Հիսուսը: Նա կարող է լինել «Տաճարից ավելի բարձր»: Ինչու է Նա անվանում Իրեն «շաբաթի տեր» և փոխում է այն, ինչը կտակել են հայրերը և ինքը՝ Մովսեսը:

Բոլորը տեսան, որ Հիսուսը քարոզում է «ինչպես մեկը, որ իշխանություն ունի և ոչ ինչպես դպիրները և փարիսեցիները»: Կափառնայումում քաղաքի բնակիչները առաջին իսկ օրերից «զարմանում էին, որովհետև Նրա խոսքը լի էր իշխանությամբ»: Բայց որտեղից է, հարցնում էին նրանք, այդ իշխանությունը, որը գերազանցում է անվանի աստվածաբանների և եկեղեցական ավանդները պահպանողների հեղինակությունը: Ինչպես հասկանալ Նրա «Իսկ ես ձեզ ասում եմ...» խոսքերը: Ինչ իրավունքով է փոխում Նա Թորայի օրենքները և հակառակադրում է Իրեն դրանց:

Դժվար է ենթադրել, թե իմաստուն, հեզաբարո, խաղաղությամբ և



սիրով լեցուն Ուսուցչին իբր տիրում է սին ինքնապատումը: Այդ դեպքում, ինչ է նշանակում «Աստծո սիրած Որդին» լինելու հավակնությունը: Իհարկե, Նա բոլոր հավատարիմներին անվանում է «որդիներ», սակայն առանց երկիմաստության զգացնել է տալիս, որ Իր որդիությունը այլ է: Հիսուսը երբեք չի ասում՝ «Մեր Հայրը»: Նա միակ Որդին է և Տերը Թագավորության, չկա մարդ, որ Նրան հավասար լինի: Նրա իշխանությունը բացառիկ է.

Ամենայն ինչ տրվեց Իմ Հորից.
Եվ ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթե ոչ՝ Հայրը.
Եվ ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ՝ Որդին,
և նա, ում Որդին ուզենա հայտնել:
Եկե՛ք Ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ,
և ես ձեզ կհանգստացնեմ:
Իմ լուծը ձեր վրա վերցրե՛ք,
և սովորեցե՛ք Ինձնից,
որ հեզ եմ և սրտով խոնարհ.
և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք,
որովհետև Իմ լուծը քաղցր է և Իմ բեռը՝ թեթև[89]:

Հիսուսը ոչ միայն Հովիվ է, այլև Նա դուռ է, դարբաս, որով ներս են մտնում «փոքր հոտի» ոչխարները: Երկինքը երկրին կապող Միջնորդ կամ ինչպես հնում էին ասում՝ Բարեխոս: «Ոչ ոք չի գա Հոր մոտ,- ասում է Նա,- եթե ոչ՝ Ինձանով»[90]:

Շատ հրեաներ հավատում էին, որ բացի Փրկիչ-Թագավորից կհայտնվեն Փրկիչ- Քահանայապետ և Փրկիչ-Մարգարե: Հիսուսն Իր մեջ միատեղում է բոլոր այդ երեքը. Նա և՛ կանխատեսող է, և՛ Սպասավոր, և՛ Թագավոր: Նա իշխանությանը իր ողջ լրիվությամբ տիրող Օծյալ է:

Բայց ինչու է այդ դեպքում Նա գործում այդքան զգուշորեն, ինչու է ժողովրդից թաքցնում Իր աստիճանը՝ արգելելով Իրեն Փրկիչ անվանել:

Աշակերտները տարակուսանքից հայտնվում էին տագնապի մեջ, վստահությունից՝ կասկածների: Բայց սերը, խորը մարդկային կապվածությունը և վստահությունը Ուսուցչի հանդեպ ավելի զորեղ գտնվեցին: Եվ նրանք շարունակեցին համբերատար սպասել հետագա իրադարձություններին...

ՄԱՍ II

# Փ Ր Կ Ի Չ Ը

## Գլուխ վեցերորդ

# «ՈՉ ԹԵ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼ ՍՈՒՐ»

### Գարուն 28 թ.

«Հիսուսի կյանքը,– ասում է Չեստերտոնը,– կայծակի պես շեշտակի է: Այն ամենից առաջ դրամա է, ամենից առաջ՝ իրականացում: Գործը չէր կատարվի, եթե Հիսուսը թափառեր աշխարհով մեկ և բացատրեր ճշմարտությունը: Անգամ արտաքին կողմին նայելով, չի կարելի ասել, որ Նա շրջում էր, որ Նա չգիտեր, թե ուր է գնում... Քրիստոսի պատմությունը ճամփորդության պատմություն է, ես կասեի արշավի պատմություն է»[1]: Եվ, իրոք, չնայած Հիսուսը հաճախ էր վարում աստանդական քարոզչի կյանք, աշակերտները չէին կարող չզգալ, որ Նա ինչ-որ ծրագրեր ունի՝ նման զորավարի հեռուն գնացող ծրագրերին: Նա նրանցից պահանջում էր մինչև վերջ կանգնելու վճռականություն, Նրա Ավետարանը ընդհանուր ոչինչ չուներ երազկոտ բարեհոգության և տկարության հետ:

Հիմա՛ է այս աշխարհի դատաստանը,<br>
հիմա՛ է, որ այս աշխարհի իշխանը դուրս կնետվի[2]:

Ծակատամարտը դևերի, հրոսակների և չարի թագավորության դեմ

դյուրին չի լինելու: Փրկչի դեմ դուրս կգան մարդկանց մեջ արմատա-կալած ողջ խեղությունը, ողջ մեղքերը և նախապաշարումները:

Կարծում եք, թե երկրին խաղաղություն տալու եկա,
ո՛չ, ասում եմ ձեզ, այլ՝ սուր և բաժանում.
որովհետև մեկ տան մեջ այսուհետև հինգ հոգի իրարից բաժանված
պիտի լինեն.
Երեքը՝ երկուսի դեմ, և երկուսը՝ երեքի[3]:

Երբեմն Ուսուցիչը հասկացնել էր տալիս Իր մերձավորներին, թե ինչքան է Իր հոգին ծարավ փոթորկի, որը կսկսի մաքրել աշխարհը:

Երկրի վրա կրակ գցելու եկա.
և ինչքան եմ կամենում, որ արդեն իսկ բորբոքված լինի:
Եվ մի մկրտություն ունեմ մկրտվելու և ինչպե՛ս եմ շտապում,
որ կատարվի[4]:

Այս խոսքերում, ինչպես ամպրոպի հեռավոր որոտմունքի մեջ, զգացվում էր Գողգոթայի մոտենալը:

Հիսուսի նպատակամղվածությունը գերում և միաժամանակ սարսափեցնում էր աշակերտներին: Ընդ որում, Նրա խոսքերը նրանք մեկնում էին յուրովի, մտածելով, որ Ուսուցիչը ակնարկում է հեղափոխական պոռթկում, որին կհաջորդի Իր Թագավորությունը Երուսաղեմում: Այդ պատճառով էլ, նրանք կարծում էին, որ մոտ ժամանակներս Նա Իր գործունեությունը կտեղափոխի Իսրայելի մայրաքաղաք: Եվ երբ Հիսուսը ուղևորվեց այնտեղ՝ մասնակցելու Զատկին, աշակերտներին թվաց, որ այդ ճամփորդությունից պետք է սպասել շատ բան, որ կգա օրը, երբ Աստծո Թագավորությունը կվերացվի ուժով:

Երուսաղեմը այդ տարիներին ծայրահեղ լարված էր: Տեղական սովորույթների հետ հաշվի նստել չկամեցող Պիղատոսի, զինվորական մարդու արարքները բոլորի մոտ ցասում և վրդովմունք էին ծնել: Իր կառավարումը նա սկսեց այն բանից, որ կարգադրեց գիշերը Երուսաղեմ բերել Տիբերոսի դիմանկարներով ցուցատախտակներ: Դա ժողովրդին մեկ անգամ ևս հիշեցրեց հռոմեական լծի մասին և դիտվեց որպես

* Տանաբանյան արգելում էր պատկերագրությունը:



անպատվություն Մովսեսի Օրենքի հանդեպ*: Պիղատոսի հրամանը մայրաքաղաքը հասցրեց խռովության եզրին: Երուսաղեմցիների մեծաքանակ բազմությունը շարժվեց դեպի Կեսարիա՝ իր նստավայրը, ցուցատախտակները հանելու պահանջով: Կուսակալը հրաժարվեց, և, ժողովուրդը տեղից չշարժվելով, մի քանի օր նստեց պալատի առաջ: Այդ ժամանակ Պիղատոսը հրամայեց ժողովրդին հավաքել մարզահրապարակում և հայտարարեց, որ կկոտորի բոլոր նրանց, ովքեր չեն հնազանդվի իր կամքին: Այն բանից հետո անգամ, երբ նրանց շուրջ փակվեց զինված զինվորների օղակը, նրանք կրկնեցին, որ կմեռնեն, բայց չեն հրաժարվի իրենց պահանջից: Վերջ ի վերջո փոխարքան ստիպված եղավ տեղի տալ: Բայց դրանից հետո նա ամեն առիթ օգտագործում էր հրեաներից վրեժ լուծելու համար: Նրա անսանձ դաժանությունը, ագահությունը և կամահաճությունը ամենուր հայտնի դարձան: Անգամ չորրորդապետ Անտիպասը՝ հռոմեացիների բարեկամը, հակակրում էր նրան: Կուսակալի անիրավություններից ծագած միջադեպերը մեկ անգամ չէ, որ ավարտվում էին զանգվածային ջարդերով: Սակայն կայսերական արարողապետ Սեյանոսի հովանավորությունը երկար ժամանակ Պիղատոսին թողեց անպատիժ[5]:

Յուրաքանչյուր Զատկին կառավարիչը սպասում էր խռովության և դրա համար էլ տոներին աշխատում էր գնալ Երուսաղեմ, որտեղ անձամբ կարող էր հետևել կարգուկանոնին: Պիղատոսի երկյուղը լիովին հիմնավորված էր: Նրա տրամադրության տակ կար երեքհազարանոց ոչ մեծ զորք: Իսկ զելոտները և նրանց կողմնակիցները առաջնորդի էին միայն սպասում, որը ոտքի կհաներ ժողովրդին հռոմեացիների դեմ:

Ըստ երևույթին, Հիսուսի աշակերտները հոգու խորքում ուզում էին, որպեսզի հենց Նա դառնար այդ առաջնորդը: Սակայն իրենց սպասումները չիրականացան: Ուսուցիչը կարծես թե լիովին անտեսեց օտարերկրյա տիրապետության խնդիրը: Նրան հուզում էր ժողովրդի ոչ թե քաղաքական, այլ հոգևոր վիճակը: Բոլորն այդ հասկացան, երբ Հիսուսը հայտնվեց Աստծո Տունը շրջապատող հրապարակում:

Տաճարը բոլոր հրեաների կրոնական կենտրոնն էր: Ատամնավոր պարիսպներով գոտևորված, սյունաշարերով և ոսկե գագաթներով զարդարված, այն կախված էր Մորիա լեռան վրա որպես Աստծո ներկայություն Իսրայելի սրտում, որպես Պաղեստինի և սփյուռքի (ցրված հրեաների) միլիոնավոր ուխտավորների նվիրական նպատակ:

Քաղաքն ապրում էր Տաճարով: Զոհարանի սպասավորները, զոհաբերվող կենդանիների վաճառողները, իջևանատների տերերը տոնի

օրերին հարուստ տուրքեր էին հավաքում: Սադուկեցիներին, որոնց ձեռքում էր գտնվում սրբարանը, քիչ էր անհանգստացնում, որ պաշտամունքը երբեմն վերածվում է առևտրական ձեռնարկների: Ավագերեցները լուռ համաձայնություն էին կնքում սեղանավորների հետ, որոնք ապրանքներով նստարաններ էին շարում Տաճարի ծածկի տակ, դրամ մանրելու սեղանիկներ էին դնում, անասուններ էին բերում: Բոլորը վաղուց արդեն ընտելացել էին այն բանին, որ սուրբ վայրում չի հանդարտվում շուկայական աղմուկը:

Բայց ահա դարպասներից հայտնվում է Հիսուս Նազովրեցին՝ Իր հետևորդներով շրջապատված: Նոր Ուսուցիչը անմիջապես բոլորին շփոթության մեջ է գցում: Պարանից մտրակ հյուսելով, նա ոչխարներին և եզներին քշում է պարսպից դուրս: Նա տիրաբար պահանջում է վերջ տալ անկարգություններին սրբարանի շրջակայքում: «Իմ Հոր տունը վաճառատան մի՛ վերածեք... »:

Հակաճառելու ոչ մի տեղ չկար: Մինչ այդ էլ բարեպաշտ մարդիկ տրտնջում էին Տաճարում եղող անկարգություններից: Սակայն նվիրապետությունը վիրավորվեց, որ այդ բոլորովին անհայտ Գալիլիացին տիրոջ պես հրամաններ է արձակում իրենց կալվածքում, դեռ ավելին, հավակնում է Աստծուն առանձնահատուկ մերձավորության, կոչելով Նրան Իր Հայրը:

– Ինչ նշան ցույց կտաս մեզ, թե իրավունք ունես այդ բանն անելու,– հարցրին նրանք Հիսուսին:

– Քանդեցե՛ք այդ Տաճարը, և երեք օրվա ընթացքում այն կվերականգնեմ,– եղավ պատասխանը:

Հիսուսի խոսքերը ծաղրանք թվացին:

– Քառասունվեց տարում շինվեց այս Տաճարը,– պատասխան տվեցին Նրան,– իսկ Դու երեք օրում այն վերականգնում ես:

Ասածը չկարողացան ըմբռնել նաև իրենք՝ աշակերտները[6]: Նրանցից դեռևս ծածկված էր անտեսանելի Տաճարը, որը համբառնալու է աշխարհի վրա այն երեք օրերին, որոնք ընթանալու են Խաչից մինչև Հարություն:

Իսկ ինչպես էին վերաբերվում Հիսուսին փարիսեցիները՝ ավանդական բարեպաշտության այդ պատվարները:

Մենք արդեն համոզվեցինք, որ նրանց հայացքները տրամագծորեն հակառակ չէին Քրիստոսի ուսմունքին, որ Նա հավանում էր նրանց հավատքի գլխավոր դրույթները: Բացի դրանից, շատ փարիսեցիների



բարոյական ըմբռնումները առանձնանում էին վեհ բնույթով և մոտ էին Ավետարանին: Բավական է մեջբերել Թեկուզ ռաբբիների՝ Թալմուդ մտած մի քանի ասույթները, որպեսզի համոզվենք դրանում. «Սիրիր խաղաղություն և հաստատիր այն ամենուր», «Ով ողորմություն է տալիս Թաքուն, նա Մովսեսից էլ բարձր է», «Լավ է կարճ աղոթքը երկյուղածությամբ, քան երկարը առանց ջերմեռանդության», «Անհամբեր մի եղիր գայրանալիս», «Նմանվեք Աստծուն, ինչպես Նա է ողորմած. այնպես էլ դուք եղեք ողորմած», «Կեղծ բարեպաշտներին պետք է մերկացնել, քանզի նրանք վիրավորում են Աստծո անունը»[7]: Երբ կարդում ես այս տողերը, հասկանալի են դառնում Քրիստոսի խոսքերը փարիսեցիների մասին՝ «Ամեն ինչ, որ նրանք ձեզասեն, արե՛ք և պահեցե՛ք»[8]: Օրենքի ավետարանական «կատարումը» չոչնչացրեց հինը, Քրիստոսի խոսքերով՝ «Դրա համար երկնքի արքայությանն աշակերտած ամեն օրենսգետ նման է տանուտեր մարդու, որ իր գանձից հանում է նորը և հինը»[9]: Զրուցելով մի աստվածաբանի հետ, Հիսուսն ասաց՝ «Հեռու չես Աստծո Արքայությունից»[10]:

Այդ դեպքում ինչու Նրա և փարիսեցիների միջև բախում առաջացավ:

Դրա կարևորագույն պատճառը փարիսեցիների մեջ տիրող բարեպաշտության ըմբռնումն էր: Նրանց «Հավատարմությունը Օրենքին» հանդիսանում է ոչ միայն կյանքի ամբողջական փիլիսոփայություն, այլև մինչև վերջին մանրամասները լավ մտածված դրա համգամանալից ծրագիր: Քրիստոսը չէր հերքում և չէր կարող հերքել այդ ծրագրի նպատակը, որն է՝ առօրեականության յուրաքանչյուր կողմը սրբագործել, ամեն ինչում կատարելով Աստծո կամքը: Բայց դրան հասնելու դպիրների մոտ ճանաչում գտած միջոցներում կրոնը ոսկրացնելու վտանգ էր Թաքնված: Բավական չէ, որ «հների» ցանկացած կանոնի անխտիր վերագրում էին աստվածային հեղինակություն, կանոնակարգը կլանում էր մարդկանց ողջ ուշադրությունը, ամլացնելով երբեմն հավատքի հիմնական բովանդակությունը:

Այն միտքը, որ իբր կա ինչ-որ «գործերի ցուցակ», որոնք կատարելով կարելի է ձեռք բերել բացարձակ արդարություն, օրինապահներին հանգիստ չէր տալիս: Նրանք մրցակցում էին մեկը մյուսի հետ դարերով սրբագործված բոլոր սովորույթները ճշտապահորեն պահպանելու ձգտման մեջ: Եվ, ինչպես որ հաճախ է եղել կրոնի պատմության մեջ, բարեպաշտությունը վերածվել է մռայլ գրոտեսկի:

Որոշ փարիսեցիների ժողովուրդը անվանում էր շիկմի՝ «ամրա-

ուս», այն բանի համար, որ նրանք մշտապես կռացած էին քայլում, ցույց տալով, թե հոգեփրկչական սխրանքների ինչ ահռելի ծանրություն է իրենց վիճակված տանել: Տաճար մտնելով, Հիսուսը կարող էր տեսնել, թե փարիսեցիները ինչպես են գաղտագողի անցնում հրապարակով, շարունակ անսպասելիորեն դուրս գալով դիմացինների վրա: Նրանք վախենում էին հայացքը վեր բարձրացնել, որպեսզի պատահաբար կնոջ չնայեն: Նրանց կատակով անվանում էին խիցայ՝ «մի ջարդիր ճակատդ»[11]:

Բնականաբար, այդպիսի մարդկանց պետք է գայրացներ Քրիստոսի ազատությունը: Դրանում նրանք տեսնում էին մոլորություն և սպառնալիք բարի բարքերի նկատմամբ: Հրեական մի պատմաբանի նկատումով, այդ ժամանակաշրջանում փարիսեցի-շամմաիթները հետևողականորեն քարոզում էին փախուստ աշխարհից և ճգնակեցություն: Մահացու մեղք էր համարվում, օրինակ, աստվածաբանական գրքերից կտրվելով, ասել՝ «Ինչ գեղեցիկ է այս ծառը»: Փարիսեցիները մեծ տեղ էին հատկացնում պահքին[12]: Հիսուսը թեպետ ընդունում էր հավատի այդ արտաքին դրսևորումները, բայց դրանք չէր դարձնում կրոնական կյանքի առանցքակետը:

Երբ Նա մեկնում էր Օրենքը մարգարեների ուսմունքի ոգով, դպիրները մեղադրում էին Նրան «ավագների ավանդույթի» դեմ մահափորձ անելու մեջ: Երբ Նա ասում էր, որ գթասրտությունը ավելի ընդունելի է Աստծուն, քան ծեսերը, փարիսեցիների աչքում դա դիտվում էր ողջ «օրինական» համակարգի խաթարում:

Շատերին կարող է տարօրինակ թվալ այդպիսի կույր նվիրվածությունը տառին և ձևին: Սակայն պետք է հաշվի առնել, որ ծիսապաշտությունը մարդկային հոգեբանության խորքերում արմատավորված հիվանդություն է: Դրա համար էլ պատմության մեջ այդքան կրքեր են մոլեգնել ծեսերի շուրջ և այդքան արյուն է հեղվել ծիսակարգերի պատճառով: Համանման հիվանդություն, նման սևեռուն նևրոզի, ախտահարել է հաճախ նաև քրիստոնյաներին, որոնք մոռացել են, որ Քրիստոսի համար սերը Աստծո և մարդկանց հանդեպ անհամեմատ բարձր է ցանկացած արտաքին պատվիրանից:

Տառի, ծեսի և հնավանդության կողմնակիցները բոլոր ժամանակներում առանձնացել են միատեսակ պահպանողականությամբ: Փարիսեցիների ողբերգությունը կապված է այն բնորոշ արտահայտության հետ, ինչը հետագայում սկսեցին կոչել «փարիսեցիություն»: Երուսաղեմի ավագները, ինչպես Հնդկաստանի բրամինները կամ ռուս հնադա-



վանները՝ «պղծվելու» մշտական երկյուղ էին զգում: Նրանց մասին ասում էին, որ նրանք պատրաստ են «մաքրել արևն անգամ»: Բայց մտածելով իրենց բարեպաշտությամբ մոտեցնել Փրկչի ժամանակները, Իսրայելի առաջնորդները, իրենք էլ չգիտակցելով այդ, շուռ եկան Նրանից, Ով բերելու էր նրանց փրկության լուրը:

Հարկ է հաշվի առնել դպիրների՝ Հիսուսի հանդեպ ունեցած թշնամանքի ևս մի պատճառ: Մատթեոս ավետարանիչը խորաթափանցորեն նկատում է, որ այն բնավորված էր նախանձի մեջ[13]: Փարիսեցիները վարժվել էին իրենց ուղղադավանությունը չափանիշ համարել, և հանկարծ հայտնվել է ինչ-որ անծանոթ գավառացի և իրենց արտոնությունները վնասելու հարցուփորձ է անում: Նրա գործունեությունը արտոնված չի ճանաչված հեղինակություններից ոչ մեկի կողմից, նա չի անցել նրանց դպրոցը, չի ուսումնասիրել աստվածաբանություն և Օրենքը:

Մարդկանց, որոնց թիկունքում առկա է բազմադարյան ավանդույթը, հաճախ բնորոշ է առանձնահատուկ բնույթի հպարտություն: Այդ պատճառով էլ անգամ Մկրտչին, չնայած նա ճգնավոր էր, փարիսեցիները նայում էին որպես ինքնակալի, իսկ նրանց առավել ևս ավելի հանդուգն էր թվում Նազովրեցին*:

Հիսուսն ասում էր, որ այդ բոլորը հիշեցնում էր Իրեն մանկական երգը՝

Ձեզ համար փող հնչեցրինք, բայց չպարեցիք.
Ձեզ համար ողբ երգեցինք, բայց դուք լաց ու կոծ չարեցիք:

Իրականում, «Եկավ Հովհաննեսը. ո՛չ ուտում էր և ո՛չ խմում, և ասացին՝ նրա մեջ դև կա: Եկավ Մարդու Որդին. ուտում է և խմում. և ասում են՝ ահա ուտող և խմող մարդ, բարեկամ՝ մաքսավորների և մեղավորների»[14]:

Սակայն, կրկնում ենք, ամենևին ոչ բոլոր փարիսեցիներն էին սահմանափակ և նեղմիտ ընթերցողներ: Եվ նրանց մեջ կային ոչ քիչ կենդանի և անկեղծ հավատի մարդիկ, և նրանց մեջ էր բարձրացվում բողոքի ձայն կեղծ բարեպաշտության և երկերեսանիության դեմ[15]: Դրա համար էլ Քրիստոսի առաջին քարոզը Երուսաղեմում որոշ օրինապահների վրա խորը տպավորություն թողեց:

Փարիսեցիներին այդ ժամանակ գլխավորում էր Հիլլելի թոռը՝ Գա-

* Տե՛ս հավելված 3:

մաղիելը: Գործքից հայտնի է, որ նա մեծ հանդուրժողականություն է ցուցաբերել նոր ուսմունքի նկատմամբ, իսկ նրա կողմից դաստիարակված շատ փարիսեցիներ հետագայում անցան նորկտակարանյան Եկեղեցու շարքերը: Անգամ առասպել էր հյուսվել, որ կյանքի վերջում Գամաղիելը դարձել է քրիստոնյա և ընդունել մարտիրոսական մահ: Այդ առասպելը անպայման մտացածին է, բայց դրա երևան գալը պատահական չէ[16]:

Ռաբբիները ասացվածք ունեին՝ «Մարդու խոսքերը, որոնցում Աստծո հանդեպ երկյուղ կա, կլսվեն»[17]: Հիսուսի կողմից կատարվող բժշկումները փարիսեցիներից առավել անկեղծներին ստիպեցին մտածել: Նրանց անունից գրույցի համար Նրա մոտ եկավ ավագների Խորհրդի անդամ Նիկոդեմոսը: Բայց նա գերադասեց Հիսուսի հետ հանդիպել գիշերը, որպեսզի չհարուցի առավել խստաբարո եղբայրակիցների ծաղրանքը[18]:

– Ռաբբի՛,– ասաց նա տուն մտնելով,– գիտենք, որ Աստծուց ես եկել որպես վարդապետ, որովհետև ոչ ոք չի կարող կատարել այն նշանները, որ Դու ես անում, եթե Աստված նրա հետ չլինի:

– Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ,– պատասխանեց Հիսուսը,– եթե մեկը վերստին չծնվի, չի կարող Աստծո Արքայությունը տեսնել(այսինքն՝ քիչ է Հիսուսին ընդունելը, հարկավոր է հոգևոր հեղաշրջում, կյանքի փոփոխություն):

– Ինչպես կարող է ծնվել մի մարդ, որ ծեր է,– չհասկացավ Նիկոդեմոսը:– Միթե կարելի է իր մոր որովայնը կրկին անգամ մտնել ու ծնվել:

– Եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծո Արքայություն մտնել. որովհետև մարմնից ծնվածը մարմին է, իսկ Հոգուց ծնվածը՝ հոգի: Դու մի՛ զարմացիր, որ քեզ ասացի՝ պետք է ձեզ վերստին ծնվել, որովհետև քամին ուր ուզում է՝ փչում է, և նրա ձայնը լսում եմ, բայց չգիտես որտեղից է գալիս կամ ուր է գնում*. այսպես է և ամեն ոք, որ Հոգուց է ծնված:

– Այդ ինչպես կարող է լինել,– շարունակեց տարակուսել ծերունին:

– Դո՛ւ ես Իսրայելի վարդապետ և այդ չգիտես…

Քամու մասին Քրիստոսը պատահականորեն չասաց: Նա համեմատեց Նրա ազատ պոռթկումը ճշմարիտ աստվածաճանաչողություն ձեռք բերած մարդու ազատության հետ: Նրա համար, ով ծնվել է «Հոգու

* Արամեերեն «րուախ» և հունարեն πνεύμα բառերը նշանակում են և՛ «քամի» և՛ «հոգի»:



մեջ», հավատն արդեն ավելին է, քան պարզապես ծեսերի համակարգը: Նա Տիրոջ որդին է, Նրա Թագավորության մանուկը:

Այդ գրույցից հետո, ըստ երևույթին, Նիկոդեմոսը դարձավ Հիսուսի գաղտնի հետևորդներից[19]: Նրանց թվում Ավետարանները հիշատակում են նաև Հովսեփ Արիմաթիացուն՝ երուսաղեմցի երևելի ավագին, և փարիսեցիներից մի քանի «ղեկավարող» դեմքերի[20]: Այդուհանդերձ, դրանք փոքրամասնություն էին: Օրինապահների ճնշող մեծամասնությունը Հիսուսին ընդունեց կասկածամտորեն: Եվ ինչքան նրանք ծանոթանում էին Նրա ուսմունքի հետ, այնքան նրանց դժգոհությունը և թշնամանքը մեծանում էր:

Երբ Հիսուսը թողեց Երուսաղեմը, աշակերտները հասկացան, որ Նա ոչ միայն չմոտեցավ թագավորական գահին, այլ զինեց Իր դեմ քաղաքի ազդեցիկ կուսակցություններին: Լինելով հասարակ գյուղացիներ, նրանք վարժված էին ակնածանքով վերաբերվել հոգևոր դասին և դպիրներին: Տեսնելով ընկերների տագնապը, Վարդապետն ասաց. «Ամեն տունկ, որ Իմ երկնավոր Հայրը չի տնկել, արմատախիլ պիտ արվի: Թողե՛ք նրանց. կույրեր են, կույրերի առաջնորդ. երբ կույրն է առաջնորդում կույրին, սխալվում է և երկուսն էլ փոսն են ընկնում»[21]:

Այդ ժամանակից Հիսուսը մեկ անգամ չէ, որ կայցելի Երուսաղեմ, բայց այնտեղ էլ չի ընդունվի: Նրա համայնք կմտնեն գերազանցապես գալիլիացիներ, իսկ հարավի բնակիչներին Նա կմնա օտար: Բնութագրական է, որ Հովհաննես ավետարանիչի համար «հրեա» բառը համարյա հոմանիշ է Քրիստոսի հանդեպ թշնամանք ունեցող մարդու:

Վերադարձի ճանապարհին Կափառնայումից Հիսուսը թեքվեց դեպի Հորդանանի ափ: Այնտեղ Նա շարունակեց Իր քարոզը, իսկ աշակերտները ժողովրդին էին մկրտում: Բուժումները դեպի Նազովրեցին սկսեցին գրավել ավելի շատ մարդ, քան դեպի Հովհաննեսը, որը հրաշք չէր գործել[22]: Մրցակցության զգացումը ակամա համակեց Մկրտչի աշակերտներին: Նրանք գնացին գետի արևմտյան ափի Այենոն գյուղը, ուր այդ ժամանակ ապրում էր մարգարեն, և գտնելով նրան, սկսեցին գանգատվել. «Ռաբբի՛, Նա, որ Հորդանանի մյուս կողմում քեզ հետ էր, և Որի մասին դու վկայեցիր, ահավասիկ Նա մկրտում է, և ամենքը գալիս են Նրա մոտ»:

Սակայն այդ լուրը չէր կարող վշտացնել Հովհաննեսին: Չէ որ նա իրեն չէր կոչել ոչ մարգարե, ոչ էլ՝ փրկիչ: Եթե Գալիլիացին ուղարկված է ի վերուստ, եթե Նա Եկողն է, ապա հովհաննեսականները չպետք

է նախանձով լցվեն, այլ պետք է ուրախանան։ Ինքը՝ մարգարեն, իրեն սոսկ հյուր էր համարում Մյուսի տոնին։ «Ով հարս ունի,– ասաց նա,– նա՛ է փեսան. իսկ փեսայի բարեկամը, որ կանգնած լսում է նրան, մեծապես ուրախանում է փեսայի ձայնի համար. արդ, այս ուրախությունը, որ իմն է, կատարյալ է։ Պետք է, որ Նա մեծանա, իսկ ես՝ նվազեմ»[23]։

Քրիստոսի նախակարապետը կարծես կանխատեսում էր իր մոտալուտ ճակատագիրը։ Շատ շուտով նրա գործունեությունն իշխանությունների կողմից բռնությամբ ընդհատվեց։ Վերջին ամիսներին կրոնական խմորումները Հորդանանում սկսել էին անհանգստացնել Գալիլիայի կառավարչին։ Զորրորդապետը վախենում էր, որ ևս մի քիչ, և արդեն ուշ կլինի։ Հերովդեսին կարող էին հասցնել Հովհաննեսի՝ անձամբ նրա դեմ ունեցած թշնամական ելույթների և մարգարեի այն խոսքերի մասին, որ խոստացավ ժողովրդին «ցույց տալ ազատագրության ճանապարհը բոլոր երկրային տերերից»[24]։

Մի խոսքով, ձերբակալման համար պատրվակը լիովին բավարար էր։

Հիսուսը դեռ Հորդանանում էր գտնվում, երբ Այենոյում հայտնվեցին զինվորներ։ Մկրտիչը շղթայակապ տարվեց չորրորդապետի մոտ։ Անտիպասը հրամայեց նրան հսկողության տակ պահել անապատի կողմերում ծովի ափին գտնվող Մաքերոն ամրոցում[25]։

Թե ինչու կառավարիչը չկարգադրեց ձերբակալել Հիսուսին, մենք չգիտենք։ Փարիսեցիներից նա կարող էր արդեն լսած լինել, որ Նազովրեցին «ավելի աշակերտներ է դարձնում և մկրտում, քան Հովհաննեսը»[26]։ Բայց ըստ երևույթին, Անտիպասը նոր Քարոզչին չհամարեց վտանգավոր և որոշեց ձեռք չտալ Նրան մինչև ժամանակը գա։

Երբ Հիսուսն իմացավ այն մասին, որ Մկրտիչը բռնված է, Նա թողեց Հորդանանի մարզը։

Նրա տառապանքների ժամը դեռ չէր հասել։



Գլուխ յոթերորդ

# ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Գարուն–ամառ, 28 թ.

Ավետարանիչները վկայում են, որ ժողովուրդը «հմայվում էր» Հիսուսի ուսմունքով։ Բայց նվազ տպավորություն չէր թողնում նաև տարերքին ու ցավերին հաղթող Նրա ուժը։ Նրա մասին պատմում էին առաջին հերթին իբրև հրաշագործի։ Հետագայում քրիստոնյաները ևս ոչ սակավ պատրաստակամ էին հրաշքների մեջ տեսնելու Հիսուսի գերմարդկային բնույթի գլխավոր ապացույցը։ Սակայն Նա Ինքն առանց երկմտելու մերժում էր նման մտայնությունը.

Եթե Աստծո հանդեպ հավատ ունենաք,
ճշմարիտ եմ ասում ձեզ, ով որ այս լեռանն ասի՝ ել և ծո՛վն ընկիր,
և իր սրտում չկասկածի, այլ հավատ, թե ինչ-որ ասում է, կլինի[1]։

Հիսուսը դրանով հասկացնել էր տալիս, որ մարդու մասին Աստծո ունեցած մտահղացման մեջ մտնում է բնության վրա նրա իշխանություն ունենալը՝ իր կոչմանը համապատասխան։ Եթե նա միաբանվի հոգու հետ, ապա նրա համար «անհնարին ոչինչ չկա»[2]։

Հրաշքը, սակայն, շատ ավելին է, քան բնականոն դրվածքի հաստա-

րակ խախտումը: Նրա մեջ բացահայտվում է իրերի խորությունը, մեկ այլ չափողականություն, որտեղ հաղթահարված են անցողիկ աշխարհի օրենքները, և թագավորում է ազատությունը: Երբ մարդիկ շփվում են այդ չափողականության հետ, ապա Հիսուսի խոսքի համեմատ՝ նրանց վրա «հասել է Աստծո Արքայությունը»[3]:

Իր ճշմարիտ աշակերտներին Հիսուսը ձերբազատում է «միս ու արյունի» ստրկությունից:

Սրանք են նշանները, որոնք պետք է ուղեկցեն նրանց, որոնք հավատում են.

Իմ անունով դևեր պիտի հանեն,
լեզուներ պիտի խոսեն,
իրենց ձեռքերին օձեր պիտի բռնեն,
և եթե մահացու թույն խմեն,
դա նրանց չպիտի վնասի.
հիվանդների վրա ձեռք պիտի դնեն և բժշկեն[4]:

Այդ ինչպես տիեզերական ընդգրկուն մի նախատրվածությունն է, որի կատարումն սկսվեց առաքյալների, իսկ նրանցից հետո՝ մեծ սրբերի և խորհրդապաշտների կյանքում, չնայած նպատակն ամբողջությամբ հասանելի կդառնա Աստծո Արքայության մեջ, երբ մարդն ի վերջո կդառնա արարչության իսկական պսակը:

Կան մեկնիչներ, որոնք ապացուցում են, թե հրաշքների մասին Սուրբ Գրոց խոսքերը պետք է հասկանալ ոչ թե բառացի, այլ՝ «այլաբանորեն»: Դեպքեր են եղել, իհարկե, երբ աստվածաշնչյան փոխաբերությունները ընդունվել են իրական փաստերի տեղ: Բայց դա բնավ չի նշանակում, որ Հին և Նոր Կտակարաններում հրաշքների մասին ամբողջ ասվածը մտացածին է կամ «խորհրդանիշ»: Եթե այդպես են մտածում դոգմատիկ նյութապաշտների կողմնակիցները («այդ չի կարող պատահել, որովհետև չի կարող լինել երբեք»), ապա զարմանալու հարկ չկա, բայց բոլորովին տարօրինակ է հնչում նման կարծիքը որոշ աստվածաբանների շուրթերին, որոնք ցանկանում են Ավետարանի բոլոր հրաշքների մեջ անպայման այլաբանություն տեսնել:

Ահա թեքվելով անշնչացած մարմնին՝ Հիսուսն արտասանում է. «Տալիթա՛, կումի» (աղջի՛կ, վե՛ր կաց) կամ հպվելով խուլի ականջին, ասում է. «Էթֆաթա՛խ» (բացվի՛ր): Մեր առջև ամենևին էլ խորհրդանիշ չէ, այլ Տիրոջ արամերեն լեզվով ասած իրական խոսքերը, որոնք



դրոշմվել են ականատեսների հիշողության մեջ:

Նա, ով ցանկանում է ապացուցել, որ հրաշքներ կոչված երևույթներն աներևակայելի են, հաշվի չի առնում, թե դեռևս ինչքան քիչ բան է հայտնի գոյության գաղտնիքների մասին: Բայց ինչու նույնիսկ այնպիսի մարդիկ, որոնք հակված են հավատալու յոգերի մասին ամենազարմանալի տեղեկություններին, թերահավատորեն են վերաբերվում Նոր Կտարականի պատմություններին: Ավետարանն ընդունելը պահանջում է ներքին վճիռ, ընտրություն, կյանքի ամբողջական դրվածքի փոփոխություն:

Հիսուսն իր հրաշագործություններն անվանում էր «նշաններ»՝ ի բնութագրումն այլ դարաշրջանի գալստյան: Կատարյալ Մարդը, Նա հաղթահարում է անկում ապրող աշխարհի օրենքները, մատնացույց անում բարոյական և ֆիզիկական անկատարության դեմ պայքարելու ուղիները*:

Երբեմն առօրեական կյանքում Նրա իշխանությունը դրսևորվում էր կարծես թե հընթացս, անսպասելի՝ սարսափ պատճառելով աշակերտներին: Այսպես, մի անգամ, մինչ առաքյալների կանչվելը, երբ Պետրոսն իր ընկերների հետ ապարդյուն ձկնորսություն էր անում ամբողջ գիշեր, Հիսուսը նրանց մատնացույց արեց, թե որտեղ պետք է ուռկանը գցել: Եվ ի զարմանս բոլորի՝ ուռկանն անմիջապես լցվեց: Գալիլիական ծովում ձկների մեծ կուտակումներ միշտ լինում են : Մշտապես ձկնորսությամբ զբաղվող մարդիկ գիտեին այդ մասին[5]: Բայց ինչպես կարող էր Ուսուցիչը որոշել հարկավոր տեղը ջրի թանձրաշերտի միջից: Սիմոնն այնքան էր ապշել, որ Հիսուսին խնդրեց իր նավակից դուրս գալ: Նա իրեն մեղավոր էր զգում, անարժան՝ Տիրոջ կողքին գտնվելու...

Մի ուրիշ անգամ, մայրամուտին, Քրիստոսն աշակերտների հետ ուղևորվեց լճի հանդիպակաց ափը[6]: Նրանք փութով բաժանվեցին բազմությունից. հոգնած Հիսուսը նավակ նստեց «ինչպես կար», անջրանցիկ թիկնոցը ափին թողնելով, և տեղավորվելով նավախելին, անմիջապես քնեց: Այդ միջոցին անսպասելի ալեկոծություն սկսվեց: Բայց ոչ ալիքների շաչյունը, ոչ էլ նավակի տարուբերվելը չկարողացան արթնացնել Ուսուցչին: Այդ ժամանակ վախվորած ձկնորսները իրենք ընդհատեցին Նրա քունը: «Վարդապե՛տ, Քեզ համար բնավ հոգ չէ, որ ահա մենք կորչում ենք»: Հիսուսը ելավ և նայելով ալիքներին՝ ասաց՝

* Տե՛ս 151-152 էջերը:

«Դադարի՛ր, լռի՛ր»: Բոլորն անմիջապես զգացին, որ քամին սկսեց Թուլանալ:

Երբ փոթորիկը դադարեց, Քրիստոսը Հանդիմանեց աշակերտներին. «Ինչու այդպես վախկոտ եք. դեռևս Հավատ չունեք»: Բայց Հիմա էլ նրանց սարսափեցրեց վերաՀաս խաղաղությունը. «Ով է արդյոք Սա, որ Թե Հողմը, Թե ծովը Հնազանդվում են Նրան»:

Ավելի Հաճախ, սակայն, Հիսուսի զորությունն ի Հայտ էր գալիս մարդկանց վրա ներգործելու ժամանակ: Նրա Հրաշքները գԹասրտության դրսևորումներ էին: Մարմնական ախտերը և խելաՀեղությունը Նա անվանում էր Սատանայի իշխանության դրսևորումներ, որին էլ Ինքը պետք է ջախջախեր[7]: Չարից բռնված մարդկությունն է Հիվանդը, որին բժշկություն է սպասվում: Բժշկել՝ նշանակում է դեմ գնալ սատանայական ուժերին: Եվ Հանձինս Իր Հետևորդների, Հիսուսը ցանկանում էր տեսնել մեծ ճակատամարտի Համամասնակիցների, որոնք ձեռք են մեկնել տառապող աշխարՀին: «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, Թե ով Հավատում է Ինձ, ինքն էլ կանի այն գործերը, որ Ես եմ անում. և դրանցից ավելի մեծերը կանի»: Երբ աշակերտները չկարողացան օգնել Հիվանդին, Նա խորապես տխրելով՝ նրանց կոչեց «անՀավատ սերունդ»[8]:

Հիսուսը Հաճախ էր մատնանշում մարմնի վիճակների և Հոգու միջև եղած սերտ կապը: Բժշկելով անդամալույծին, Նա զգուշացրեց նրան. «ԱՀավասիկ առողջացար, այլևս մի՛ մեղանչիր, որպեսզի մի ավելի չար բան չպատաՀի քեզ»[9]:

Ուսուցչի Համար առողջացման գլխավոր պայմաններից մեկը Հիվանդի Հավատն էր, որը ակտիվորեն պետք է ներգործեր բուժման ընԹացքի վրա: ԹերաՀավատությունը խանգարում է Հիվանդությունը ՀաղԹելուն: Այդ բանում աշակերտները ակնՀայտորեն Համոզվեցին այն բանից Հետո, երբ Հիսուսը եղավ «Իր գավառում»՝ ՆազարեԹում: Որոշ ժամանակ Նա խուսափում էր այցելել այն փոքրիկ քաղաքը, ուր «դաստիարակվել էր», բայց Հիմա, ըստ երևույԹին, որոշեց, որ Հասել է նազովրեցիների փորձության ժամը[10]:

Օրը շաբաԹ էր, և աղոԹատանը խռնվել էին ՆազարեԹի Համարյա բոլոր բնակիչները: Երբ, սովորույԹի Համաձայն, Հասավ Աստվածաշունչն ընԹերցելու ժամանակը, Հիսուսը բեմ բարձրացավ, և Նրան պարզեցին Սուրբ Գրոց փաԹեԹը: Նա բացեց այն և Եսայու Գրքից կարդաց տողեր.



Տիրոջ Հոգին ինձ վրա է, դրա Համար իսկ Նա օծեց ինձ,
Ուղարկեց ինձ՝ ավետարանելու աղքատներին,
բժշկելու սրտով բեկվածներին,
գերիներին ազատություն քարոզելու
և կույրերին՝ տեսողություն,
Հռչակելու Տիրոջ ընդունելի տարին:

Եսայի ԿԱ, 1-2

ՓաԹեԹը վերադարձնելով սպասավորներին՝ Հիսուսը նստեց: Տիրական լռության մեջ բոլորի Հայացքը գամվել էր Նրան: Նա գիտեր, որ Հավաքվածները լի են կասկածանքով, որ նույնիսկ այնտեղ գտնվող Իր եղբայրները չեն Հավատա Իր պատգամաբերությանը: Այնուամենայնիվ, Հիսուսը սկսեց խոսել, բացատրելով մարգարեի Իր ընԹերցած խոսքերը. «Այսօր այս գիրքը կարդացվեց ձեր ականջներում... »:

Համագյուղացիների շարքերով դժգոՀության ալիք անցավ: Դեռևս երեկ իրենց պատվերները կատարող այս Մարդը երբ Հասցրեց դառնալ ուսուցիչ, ռաբբի: Շատերը տարակուսանքով ԹոԹվում էին ուսերը: «Սա Հյուսն չէ՞ր, Մարիամի որդին, Հակոբի, Հովսեփի, Հուդայի և Սիմոնի եղբայրը: Սրա քույրերը այստեղ, մեզ մոտ չեն»:

Գտնվեցին և այնպիսիները, որոնք ցանկանալով ստուգել Կափառնայումից Հասած լուրերը, առաջարկեցին Նրան որևէ Հրաշք կատարել: Նրանք նույնիսկ Հիվանդներ բերեցին: Բայց բժշկություն տեղի չունեցավ: Հիսուսի ուժը դեմ առավ անՀավատության խուլ պատին: Նա Ինքն ապշել էր այդ մարդկանց անՀուսալի խստասրտությունից:

«Մարգարեն չՀարգված անձ չէ, բայց ոչ իր գավառում»,- ասաց Նա, Թողնելով ՆազարեԹը:

Բժշկումների ժամանակ Հիսուսը երբեմն դիմում էր արտաքին գործողությունների. ձեռքը դնում էր Հիվանդ տեղին կամ ցեխ էր քսում, իսկ Հետո Հիվանդին ուղարկում էր լվացվելու: Որոշ դեպքերում Նա ցանկանում էր բուժվածների Հետ մնալ մենակ[11]: Բայց այդ ամենը արվում էր լոկ այն բանի Համար, որպեսզի օգներ մարդկանց Հավատի մեջ Հաստատվելու: «Քո Հավատը քեզ փրկեց», «Մի՛ վախեցիր, այլ միայն Հավատա»,- ասում էր Ուսուցիչը:

Երբեմն նույնիսկ բավարար էր Հավատի Թույլ առկայծումը: Այսպես, ընկնավոր տղայի Հայրը տանջվում էր կասկածամտությունից, բայց ամբողջ ուժով ցանկանում էր պայքարել դրա դեմ: «Հավատում

եմ, Տե՛ր,- հոգոց հանեց նա,- օգնի՛ր իմ անհավատությանը»։ Եվ նրա հուսահատ աղաղակը լսվեց։ Սա ցույց է տալիս, թե մոտիկների վստահությունը ինչպես կարող է փոխարինել հիվանդի հավատին։ Այնպես պատահեց, որ մի անգամ Կափառնայումի մեջ հարազատներն Ուսուցչի մոտ բերեցին մի անդամալույծ մարդու, բայց ամբոխի պատճառով չէին կարողանում ներս մտնել տուն։ Այդ ժամանակ նրանք հարթ տանիքից անցք բացեցին և մահիճն իջեցրին ուղիղ Հիսուսի ոտքերի մոտ։ Եվ հրաշք կատարվեց, որովհետև, ինչպես ասում է Մարկոս ավետարանիչը, Տերը «տեսավ նրանց հավատը»[12]։ Իսկ հռոմեական հարյուրապետի և Անտիպայի պալատականներից մեկի խնդրանքով Քրիստոսը բուժեց նրանց ծառաներին, առանց նույնիսկ հիվանդների երեսը տեսնելու։

Այնուամենայնիվ, պետք չէ մտածել, որ Հիսուսը միշտ դյուրությամբ էր բուժումներ անում։ Իր երկրային ուղին Նա անցնում էր դեռևս չունենալով «ամենայն իշխանություն երկնքում և երկրի վրա»։ Դրան քիչ չէին խանգարում մարդիկ իրենք, նրանց փոքրոգությունը և կասկածամտությունը։ Մենք կարդում ենք, թե Նա ինչպես «ծանր հոգոցով», հայացքը երկինք հառած, բառացիորեն հաղթահարելով պատնեշը, հանում էր հիվանդությունները[13]։

Հիսուսը համարյա ֆիզիկապես զգում էր Իրենից դուրս ելնող զորությունը։ Մի անգամ Նա անցնում էր հսկայական ամբոխի միջով, և ինչ-որ մի կին, որ տառապում էր արյունահոսությամբ, աննկատ քսվեց Նրա թիկնոցի փեշերին։ Արագ շրջվելով՝ Հիսուսը հարցրեց.

- Ով էր, որ Ինձ դիպավ։

- Վարդապե՛տ,- զարմացավ Պետրոսը,- ժողովուրդն է, որ սեղմում ու նեղում է Քեզ։

- Մեկն Ինձ դիպավ,- առարկեց Հիսուսը,- որովհետև զգացի, որ ինձնից զորություն դուրս եկավ։

Այն ժամանակ կինը դողալով ընկավ Ուսուցչի ոտքերը և խոստովանեց, որ ինքն էր դիպչողը։

- Դո՛ւստր, քո հավատը փրկեց քեզ, գնա՛ խաղաղությամբ[14]։

Այդ բուռն բեկումնային ժամանակաշրջանում, ինչպես մեր օրերում, շատ էին տարածված հոգեկան հիվանդությունները։ Եթե Հին Կտակարանը համարյա չի հիշատակում նրանց մասին, ապա Ավետարանները առիթ են տալիս մտածելու հոգեկան հիվանդությունների ինչոր համաճարակի մասին։ Հատկապես սարսափելի էր խելագարու-



թյան մի հանելուկային տեսակ՝ բռնվածությունը կամ դիվահարությունը[15]։ Դրանցով տառապող մարդը զգում է անձի տառապալի երկվություն. թվում էր, թե նրա մեջ բնակություն է հաստատել օտար և թշնամի ինչ-որ մեկը։ Հիվանդն աղաղակում էր անբնական ձայնով, խոսում էր դևերի անունից, որ ապրում էին իր մեջ, երբեմն հավատացնելով, որ իր մեջ ապրում է դևերի մի ամբողջ բանակ։ Բռնվածներից շատերը միայն երբեմն էին ընկնում մոլուցքի մեջ, ուրիշները բոլորովին ուշքի չէին գալիս և մարդաբնակ տեղերից փախչում էին վայրի անապատները։ Երբեմն նրանք ապրում էին լքված գերեզմաններում, և մարդիկ սարսափով էին լսում նրանց ոռնոցն ու քրքիջը։

Քրիստոս միայն Իր ներկայությամբ զարմանալի ազդեցություն էր թողնում այդ դժբախտների վրա. երբեմն բավարար էր լինում Նրա տիրական մեկ բառը կամ հպումը, և հոգին ազատվում էր իրեն տիրապետած չար ուժերից։

Նրանց վերադարձնելով նոր կյանքի, Հիսուսը առողջացածներից պահանջում էր ներքին լիակատար վերակառուցում։ Դևերն հղփանում են մեղքերի վրա։ Եթե հետագայում մարդը նոր կյանքի հոգով չլցվի, ապա բռնվածությունը կվերադառնա կրկնակի զորությամբ։

Քրիստոսի ժամանակակիցները դևերին պատկերացնում էին բնապաշտորեն, անապատում բնակվող չարանենգ էակների տեսքով։ Այդ պատճառով և, հասկացված լինելու համար, Ուսուցիչը Իր խոսքը համեմեց այսպիսի առակով. «Սակայն պիղծ ոգին դուրս է ելնում մարդուց, շրջում է անջրդի վայրերում, հանգիստ է որոնում և չի գտնում։ Այն ժամանակ ասում է՝ դառնամ իմ տունը, որտեղից դուրս եկա. և գալիս է ու այն գտնում դատարկ՝ մաքրված ու կարգի բերված։ Այն ժամանակ գնում և վերցնում է իրենից ավելի չար յոթը այլ ոգիներ և մտնում, բնակվում է այնտեղ. և այդ մարդու վերջը լինում է ավելի վատ, քան առաջ էր»[16]։

Բուժումների մասին լուրն սկզբից ևեթ հարուցեց Օրենքի երուսաղեմյան պահապանների զայրույթը։ Հազիվ էին կասեցրել մարդկանց կասկածելի կուտակումները Հորդանան գետում, և ահա նորից պետք է միջոցներ ձեռնարկել ուղղափառ հավատը պահպանելու և տգետներին խելքի բերելու համար։ Արդեն առաջին անգամ չէ, որ Գալիլիան մայրաքաղաքային հոգսեր է պատճառում։ Ինչ-որ մեկը լավ հիշում էր պարտիզան Հուդա Գավլոնիտին։ Հիսուսի խավարամիտ ժողովուրդը միշտ պատրաստ է հավատալ կեղծ մարգարեներին և խաբեբաներին։

Սակայն ժամանելով Կափառնայում քաղաքը, դպիրները հասկացան,

որ իրենց համար դժվար է վիճարկել կատարվող հրաշքների իրականությունը: Դրա համար նրանք սկսեցին ըստ կարելվույն հմտանալ՝ հարմար բացատրություններ գտնելու համար: Չէ որ նրանք չէին կարող Նիկոդեմոսի նման հավատալ, որ Աստված գործում է իրենց կողմից արհամարհված Նազովրեցու միջոցով: Նրանցից մեկը որոշեց, որ Հիսուս կախարդությունը սովորել է Եգիպտոսում, իսկ մյուսները փորձում էին ժողովրդին համոզել, որ Նա դևերին քշում է նրանց «իշխանի»՝ Բեհզեբուղի հետ դաշինք կնքած[17]*: Բայց Հիսուս անմիջապես փակուղի էր մտցնում այդ խորամանկ վարկածները հնարողներին: Նա դպիրներին հարցրեց՝ ինչպես կարող է սատանան սատանային քշել, նման չի լինի այդ երկպառակտիչ պատերազմի, որը մահաբեր կլինի ոգիների ամբողջ թագավորության համար: Նա Իր հակառակորդներին ուղղակիորեն մեղադրեց Սուրբ Հոգուն հայհոյելու մեջ, Որի զորությամբ գթասրտության հրաշալի գործեր են կատարվում: Ինչպես են իրենք իրենց հավատի ծառայողներ համարում, եթե ընդունակ չեն բարին չարից տարբերելու:

Կա՛մ ծառը բարի արեք, և նրա պտուղն էլ բարի կլինի,
կա՛մ ծառը չար արեք և նրա պտուղն էլ չար կլինի.
քանի որ իր պտղից է ծառը ճանաչվում:
Իժերի՛ ծնունդներ, դուք, որ չար եք,
ինչպես կկարողանաք բարի բաներ խոսել,
քանի որ բերանը սրտի լիությունից է, որ խոսում է[18]:

Նետը կպավ նպատակակետին: Ամբարտավան աստվածաբանները խայտառակ եղան ամբողջ ժողովրդի առաջ: Նրանց զայրույթը սահման չուներ, և գաղտնի ժողով անելով, որոշեցին, որ հարկավոր է վերջ դնել այն զայթակղությանը, որ սերմանում էր Հիսուսը:

Երբ Ուսուցիչը հաջորդ անգամ այցելեց Երուսաղեմ՝ տոնին մասնակցելու, Իր պահվածքով և խոսքերով ավելի մեծ զայրույթ առաջացրեց: Այս անգամ Նա արդեն հայտնապես հայտարարեց, որ հրաշքներն Իր աստվածային պատգամաբերության նշաններն են: Պայքարի մեջ մտնելով խավարի տիրապետության դեմ, Նա կատարում է Հոր կամքը: Կյանքն ու օրհնությունը Աստծուց են բխում, ուստի և Նա, Ով երկիր է ուղարկված Նրա կողմից, կոչված է բժշկելու և կյանք տալու:

* Բեհզեբուղը (Բաալ-Զեբուլ, այսինքն՝ պալատի Տերը) եղել է հին քանանական աստվածություն: Հետագայում այդ անունով սկսեցին կոչել չար ոգիների իշխանին:



Իմ Հայրը մինչև այժմ գործում է, ուրեմն Ես ևս գործում եմ...
Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ.
Մարդու Որդին Ինքն Իրենից ոչինչ չի կարող անել,
այլ անում է այն, ինչ տեսնում,
թե Հայրը կատարում է,
որովհետև, ինչ-որ Հայրն է անում,
Նույնը նրա նման և Որդին է գործում...
որպեսզի ամենքը պատվեն Որդուն,
ինչպես պատվում են Հորը:
Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ.
որ, ով Իմ խոսքը լսում ու հավատում է Նրան,
Ով ինձ առաքեց,
ընդունում է հավիտենական կյանքը[19]:

Ուղղադավաններն այլևս չէին կարողանում տանել նման խոսքերը: Բավական չէր, որ Նազովրեցին խախտում էր Օրենքը, դեռ Իրեն էլ Աստծո Որդի էր կոչում: Դպիրները շրջապատեցին Նրան և պահանջեցին, որ Նա այնպիսի «երկնային նշան» ցույց տար, որն անառարկելիորեն համոզեր բոլորին: Բայց Հիսուսը մերժեց այդ պահանջը: «Չար և շնացող ազգը նշան է փնտրում,- հոգոց հանելով ասաց Նա,- այլ նշան չի տրվի նրան, բայց միայն Հովնան մարգարեի նշանը*, որովհետև, ինչպես Հովնանը երեք օր ու երեք գիշեր կետի փորի մեջ էր, նույնպես և Մարդու Որդին երկրի ընդերքում երեք օր և երեք գիշեր: Նինվեի մարդիկ դատաստանի ժամանակ այս ազգի դեմ պիտի դուրս գան և պիտի դատապարտեն նրան, քանի որ նրանք Հովնանի քարոզությամբ ապաշխարեցին, և ահավասիկ այստեղ Հովնանից մեծը կա: Հարավի Դշխոն դատաստանի ժամանակ պիտի դուրս գա այս ազգի դեմ և պիտի դատապարտի նրան, որովհետև նա երկրի ծագերից եկավ լսելու Սողոմոնի իմաստությունը. և ահա այստեղ Սողոմոնից մեծը կա»[20]:

Արդյոք դրա համար Մարդու Որդին անապատում մերժեց փորձիչին, որպեսզի հիմա ցուցադրվող հրաշքներով ապացուցի Իր իշխանությունը: Ընդհակառակը, Նա ամբոխից մշտապես թաքցնում էր Իր բժշկումները: «Ոչ ոքի չասես»,- հաճախ էր Նա խնդրում նրան, ում վերադարձրել էր առողջությունը: Սովորաբար, միայն Նրա կամքին հակառակ էին մարդիկ ամենուր տարածում չլսված բաները լուրը[21]: Առավել ևս, Քրիստոսը չէր ուզում հրաշքները դարձնել ջատագովության

* Հին Կտակարանի մարգարե, զղջման քարոզիչ:

զենք և այդ եղանակով ստիպել Թշնամիներին Իրեն լսել: Թող նրանք Իր մասին դատեն այնպես, ինչպես իրենց խիղճն է Թելադրում: Միայն Հիսուսին Հավատացողներին, միայն Հոգով բժշկվածներին Հրաշքները կբացվեն որպես Աստծո՝ աշխարՀ գալու նշաններ:

«Արքայության նշաններն» Հուզմունք էին պատճառում ոչ միայն ուսյալ աստվածաբաններին: Կար մի մարդ, որի Հոգին տառապում էր այդ օրերին: Ծվատվելով Հույսի և կասկածի միջև. մարդ, որը մտածում էր Հիսուսի մասին և իրեն Հարց էր տալիս. արդյոք ով է Նա:

ՄաՀերոնում Մկրտչին պաՀում էին մի յուրօրինակ պատվավոր բանտում: Անտիպասը նույնիսկ զրույցներ էր վարում ՀովՀաննեսի Հետ և Համբերատար լսում էր նրա մերկացնող խոսքերը: Երբեմն բերդ էին Թողնում Մկրտչի աշակերտներին: Նրանք արտաքին աշխարՀից լուրեր էին բերում նրան: ՀովՀաննեսը նրանցից իմացավ Գալիլիայում տեղի ունեցած դեպքերի մասին, Նազարեթցի Մարդու քարոզների և Հրաշքների մասին: Մարգարեն, իՀարկե, Հիշում էր Հորդանանի տեսիլքը և Համոզված էր, որ Հիսուսն Աստծուց Ճշմարիտ Ուղարկվածն է: Բայց պետք է արդյոք Նրան Համարել Հենց Մեսիա: Շատ ամիսներ էին արդեն անցել, իսկ Նազովրեցին դեռևս ապրում էր Կափառնայումի մեջ՝ շրջապատված ձկնորսներով և Հասարակ մարդկանցով: Որտեղ է Արքայության մեծությունն ու փառքը, որի ավետաբերն ու մունետիկը եղավ ՀովՀաննեսն ինքը:

Տարակուսանքը փարատելու Համար ՀովՀաննեսն իր երկու աշակերտներին ՄաՀերոնից ուղարկեց Հիսուսի մոտ: «Դու ես, որ գալու էիր, Թե ուրիշին սպասենք»[22],- Հարցրեց նա:

Աշակերտներն ուղևորվեցին Կափառնայում և գտան Հիսուսին, Որը, ինչպես միշտ, շրջապատված էր բազմությամբ: Տրված Հարցին Նա ուղղակի չպատասխանեց, այլ միայն ասաց. «Գնացեք պատմեցե՛ք ՀովՀաննեսին, ինչ որ դուք լսեցիք և տեսաք. կույրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրվում, խուլերը՝ լսում, մեռելները՝ Հառնում և աղքատներին քարոզվում է Ավետարանը: Եվ երանի՜ է նրան, ով Իմ պատճառով չի գայԹակղվում»:

ՀովՀաննեսի աշակերտների գնալուց Հետո Հիսուսը դիմեց ժողովրդին և նրանց Հետ խոսեց Մկրտչի մասին:

«Ինչ տեսնելու ելաք անապատում: Մի մարգարե»: Այո, մարգարե էր ՀովՀաննեսը, բայց նա ուներ նաև այլ, առավել բարձր կոչվածու-

* Այս խոսքերը չեն վերաբերում Կույս Մարիամին, որովՀետև բնօրինակ տեքստը նկատի ունի արական սեռին պատկանող մարդկանց:



Թյուն. դառնալ Մեսիայի Նախակարապետը: Նա երկինքներից ընտրված ավետաբեր էր: «Ասում եմ ձեզ, կանանցից ծնվածների մեջ ՀովՀաննես Մկրտչից ավելի մեծը չի եղել»*:

«Օրենքը և Մարգարեներ», Հին Կտակարանը մինչ ՀովՀաննեսը եղան: Նրանից Հետո այլ ժամանակներ են սկսվում, երբ մարդկանց Հայտնի է դառնում Արքայությունը: Սակայն ՀովՀաննեսը կանգ առավ երկու Կտակարանների սաՀմանագծին՝ չանցնելով այն: Այդ պատճառով «Աստծո Արքայության մեջ ամենափոքրը ավելի մեծ է, քան Թե նա»: Ըստ երևույԹին, Քրիստոսը նկատի ուներ այն, որ Օծյալի մասին ՀովՀաննեսի պատկերացումները ազատ չէին երկրային փրկուԹյան նկրտումներից: Եվ, Հետևաբար, Հիսուսը չէր կարող նրան որոշակի պատասխանել. «Այո, Ես Նա եմ, ում դու սպասում էիր»: Ճշմարիտ Փրկիչն աշխարՀ եկավ ոչ Թե իշխելու, այլ ծառայելու, ոչ Թե պատժելու, այլ բժշկելու և Բարի Լուրը ավետելու Համար: Նա փրկում է, և Նրա գործերն ԱրքայուԹյան նշաններն են:

## Գլուխ ութերորդ

# ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԸ: ՄԱՐԳԱՐԵԻ ՄԱՀԸ

աշուն 28 թ.- գարուն 29 թ.

Եթե չհաշվենք Հուդայի երկիր կատարած կարճատև այցելությունները, ապա Հիսուսը ամբողջ տարվա ընթացքում չէր հեռանում Գեննեսարեթի գավառից՝ քարոզելով լճի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող գյուղերում: Հերովդես Անտիպասի մայրաքաղաք Տիբերիայում, ուր մեծամասամբ հեթանոսներ էին բնակվում, Նա չէր հայտնվում: Գադարի մոտ Նրան թշնամաբար էին դիմավորում: Արևելյան ափի միակ քաղաքը, ուր անարգելք ուսուցանում էր Նա, Բեթսաիդան էր: Սակայն սկզբից ևեթ Քրիստոսն աշակերտներին սկսեց նախապատրաստել Ավետարանն ավելի լայն շրջանակներում քարոզելու համար: «Բարձրացրե՛ք ձեր աչքերը,- ասում էր Նա,- և տեսե՛ք արտերը, որ սպիտակել են և հասել հնձի համար... Հունձն առատ է, իսկ մշակները՝ սակավ»[1]: Նվիրյալ ունկնդրողներից աշակերտները պետք է վերածվեին «մարդկանց որսորդների», իրենց Ուսուցչի գործունյա զորակիցների:

Այդ նպատակի համար էլ ընտրվել էին **Տասներկուսը**:



Հին Ուխտի եկեղեցում կային «շելուհիմներ», ուղարկվածներ կամ հունարեն լեզվով՝ **առաքյալներ**: Նրանք համայնքների ներկայացուցիչներ էին, նամակներ էին տանում-բերում, լուծում էին վիճելի հարցերը, նվիրատվություններ էին հավաքում, հայտնում էին տոների օրերը: Երկու-երկու նրանք քաղաքից քաղաք էին գնում, կապ հաստատելով Իսրայելի ցրված օջախների միջև[2]: Նոր Ուխտի եկեղեցուն նույնպես հարկ էր ունենալ այդպիսի առաքյալներ:

Նրանց ընտրելու նախօրեին, առանձնանալով լեռան վրա, Հիսուսն ամբողջ գիշեր աղոթեց, իսկ առավոտյան հավաքեց աշակերտներին, որպեսզի Տասներկուսին անուններ դնի և լուսաբանի իրենց առաքելությունը: Նա խոսում էր Աստծո Արքայության մասին, նրա գալիք Նոր կյանքի մասին կոչվածների երանության մասին[3]: Այդ օրը իրապես դրվեց ավետաբեր Եկեղեցու հիմքը: Այն պետք է հայտնվեր ի պատասխան աշխարհի սպասումներին:

Մատթեոս ավետարանիչը գրում է, որ Տասներկուսին կանչելուց ոչ շատ առաջ Հիսուսը կարեկցանքով լցված նայեց ժողովրդի բազմությանը, «որոնք հոգնած էին և ցրված, ինչպես ոչխարներ, որոնք հովիվ չունեն»[4]: Առաքյալները կգնան դեպի այդ տառապյալները՝ տանելով նրանց հոգևոր և մարմնավոր բժշկություն: Նրանց յուրաքանչյուր օրը և յուրաքանչյուր քայլն այսուհետև պատկանելու է միայն Աստծուն և մարդկանց: Նրանք կդառնան կամավոր ճամփորդներ և կապրեն երկնքի թռչունների նման՝ հոգ չտանելով ոչնչի մասին: Նրանց պետք չէ իրենց հետ վերցնել ոչ փող, ոչ պաշար, ոչ երկրորդ զգեստ: Ապաստան և հաց նրանք կստանան նրանցից, ովքեր կընդունեն իրենց, քանզի «մշակն արժանի է իր կերակրին»[5]:

Առաքյալների քարոզչական արշավն հարկ էր սկսել Տիրոջ ժողովրդից: Աշխարհը դարձի բերելու ժամանակը դեռ առջևում է, առայժմ Հիսուսը պատվիրում է:

Հեթանոսների շրջաններով չգնաք
և սամարացիների որևէ քաղաքը չմտնեք,
այլ ավելի շուտ գնացե՛ք Իսրայելի տան
կորած ոչխարների մոտ:

Նույնիսկ Իր համար Նա դնում է այդ սահմանները[6]: Ուխտը առաջինը տրվեց իսրայելցիներին Մովսեսի և մարգարեների միջոցով, և, հետևաբար, նախ նրանք պետք է ընտրություն կատարեին. ընդունել բարի լուրը, թե մերժել այն:

Պետք չէ աշակերտները մտածեն, որ իրենց թեթև գործ է հանձնարարված: Շատերը կընդունեն նրանց ուրախությամբ, բայց ավելի շատ հակառակորդներ ի հայտ կգան:

Ահա ես ձեզ ուղարկում եմ որպես ոչխարներ՝ գայլերի մեջ:
Այսուհետև խորագետ եղեք օձերի պես
և միամիտ՝ աղավնիների նման:
Զգուշացե՛ք մարդկանցից,
որովհետև պիտի մատնեն ձեզ ատյանների
և պիտի տանջեն ձեզ իրենց ժողովարաններում,
ձեզ պիտի տանեն կուսակալների ու թագավորների առաջ
Իմ պատճառով, որ վկայություն տաք նրանց և հեթանոսներին:
Բայց երբ ձեզ մատնեն, հոգ մի՛ արեք,
թե ինչպես կամ ինչ պիտի խոսեք
որովհետև այդ ժամին ձեզ կտրվի այն,
ինչ պիտի խոսեք. քանի որ ոչ թե դուք եք,
որ պիտի խոսեք, այլ ձեր Հոր Հոգին,
որ պիտի խոսի ձեր միջոցով:
Եղբայրն իր եղբորը մահվան պիտի մատնի,
և հայրը՝ որդուն:
Եվ որդիները հայրերի դեմ պիտի ելնեն
ու նրանց պիտի սպանեն:
Եվ Իմ անվան համար բոլորից պիտի ատվեք.
Իսկ ով մինչև վերջ համբերի, նա պիտի փրկվի:
Եվ մի՛ վախեցեք նրանցից
որ մարմինն են սպանում,
բայց հոգին սպանել չեն կարող.
այլ դուք առավել վախեցե՛ք նրանցից,
ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին ու մարմինը:
Չէ որ երկու ճնճղուկ մեկ դահեկանի է վաճառվում,
Եվ ձեր գլխի մազերը բոլորն իսկ հաշված են:
Արդ, մի՛ վախեցեք, քանի որ բազում ճնճղուկներից լավ եք դուք[7]:

Ով իրեն Հիսուսին է հանձնել, ազատվում է «այս աշխարհի» ստրկությունից: Տերը միշտ նրանց հետ է, Նա նրանց «ընկերն է» դարձել Իրեն այն պահից, երբ նրանք գնացին Իր հետևից: Արքայությունը, որ նրանք պետք է ավետեն, Մարդու Որդու Արքայությունն է: Հավատալ Աստծուն՝ նշանակում է հավատալ Հիսուսին:



Ով որ Ինձ կխոստովանի մարդկանց առաջ,
Ես էլ կխոստովանեմ նրան Իմ Հոր առաջ, որ Երկնքում է:
Եվ ով Ինձ կուրանա մարդկանց առաջ,
Ես էլ կուրանամ Իմ Հոր առաջ,
որ Երկնքում է:

Հաճախ է ճշմարիտ լինում «Մարդուս թշնամին իր մերձավորներն են» առածը: Եթե անգամ ամենամոտիկ մարդիկ խանգարեն առաքյալներին իրենց ծառայության մեջ, նրանք պետք է հիշեն, որ ձեռք են բերել մեկ այլ, վերին բարեկամություն և ամենից առաջ դրա նկատմամբ պետք է հավատարմություն պահպանեն: «Ով իր հորը և կամ մորը ինձնից ավելի է սիրում, Ինձ արժանի չէ»[8]:

Այսպիսի խիստ խոսքերը, հավանաբար, ստիպել են ցնցվել առաքյալներից անգամ ամենաանվեհերներին, բայց նրանք կարողացել են հասկանալ դրանց իմաստը, ըմբռնելով, որ Ուսուցիչը խոսում է լոկ այն մասին, թե ինչքան լիարժեք և վերջնական պետք է լինի իրենց ընտրությունը:

Եթե պատգամախոսները լցված լինեն Հիսուսի Հոգով, ապա Նա Ինքը կգործի նրանց միջոցով և նրանց մեջ: «Ով ձե՛զ է ընդունում, Ի՛նձ է ընդունում, և ով Ի՛նձ է ընդունում, ընդունում է Ինձ ուղարկողի՛ն»[9]:

Քրիստոսի առաքյալները հոգիներն Աստծո հետ հաշտեցնելու իշխանություն կստանան:

**Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց,**
**Ես էլ ուղարկում եմ ձեզ...**
**Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի,**
**Եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի...**
**Ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում:**
**Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, թող արձակված լինի երկնքում[10]:**

Մարդու Որդու պես Իր աշակերտները կդառնան ոգու սերմանողներ և բժշկողներ: Այսուհետև, իրենց Վարդապետի և Տիրոջ կյանքի նման, նրանց կյանքը նվիրված կլինի ծառայելուն: Հետագայում Պողոս առաքյալը, թեպետև նա Տասներկուսի մեջ չէր, վկայեց «Հիսուսին նմանվելու» խորհուրդը: «Կենդանի եմ այսուհետև. բայց ոչ թե ես, այլ իմ մեջ

ապրում է Քրիստոս»,- ասում էր նա: «Նմանվեցե՛ք ինձ, ինչպես որ ես՝ Քրիստոսին»[11]: Սրանք փառաբանության խոսքեր չէին, այլ իրեն Աստծուն և աշխարհին նվիրվելու կոչ, ինչպես Իր անձը դրեց Հիսուս Նազովրեցին:

Երբ Տասներկուսը երկու-երկու գնացին շրջակա քաղաքները, Հիսուսը մնաց մենակ: Իսկ շուտով Նրան հայտնեցին Մահերոնում պատահած ողբերգության մասին:

Հերովդես չորրորդապետի տանը Հովհաննես Մկրտիչը մի թշնամի ուներ, որը վաղուց էր ուզում նրա մահը, դա Հերովդիան էր՝ Անտիպասի կինը: Սկզբում նա ամուսնացած էր նրա եղբոր հետ, որին Հերովդես Մեծը զրկեց ժառանգությունից: Ինքնասեր կինը տանջվում էր նվաստացումից և երազում էր իշխանության մասին: Երբ 26 թ. Անտիպասը հյուր էր եղբոր տանը, Հերովդիան կարողացավ հմայել չորրորդապետին: Նա հիսունն անց էր, բայց սիրահարվեց իր բարեկամուհուն և որոշեց ամուսնանալ նրա հետ: Քիչ չէին այդ քայլին գնալու արգելքները: Հարկավոր էր ամուսնալուծվել առաջին կնոջից, որն իր դաշնակից, Նաբաթեայի արքա Արետաս IV-ի դուստրն էր: Իմանալով Անտիպասի ծրագրերի մասին, նրա կինը հավատարիմ բեդվինների օգնությամբ փախավ Նաբաթեա՝ հոր մոտ: Այդ բանը հասցրեց Արետասի հետ դիվանագիտական հարաբերությունների խզման: Հերովդեսի արարքը հենց Հուդայի երկրում արժանացավ միահամուռ դատապարտության. Հերովդիան իր ազգականուհին էր և եղբոր կինը: Այսպիսով, չորրորդապետը կրկնակի էր խախտում օրենքը[12]: Սակայն Տիրակալին ոչինչ չէր կարող կանգնեցնել:

Հովհաննես Մկրտիչը, երբ դեռ ազատության մեջ էր, բացահայտորեն խոսում էր այդ արյունապիղծ ամուսնության դեմ: Նա չդադարեց Հերովդեսին հանդիմանել նույնիսկ այն բանից հետո, երբ վերջինս նրան բանտարկեց: Այդ իսկ պատճառով, բանտարկվածը Հերովդիայի համար շարունակում էր մնալ վտանգավոր: Հերովդիան նրա հետ հաշվեհարդար տեսնելու առիթ էր փնտրում, բայց գիտեր, որ իր թուլակամ ամուսինը հազիվ թե Հովհաննեսին դատապարտելու կամ կախաղան բարձրացնելու վճիռ կայացներ: Ի վերջո, հայտնվեց երկար սպասված առիթը:

Հերովդեսն իր ծննդյան օրն էր նշում, և Մահերոնի պալատում պատվավոր շատ հյուրեր էին հավաքվել՝ զորապետներ և Գալիլիայի ավագանին: Խնջույքի թեժ պահին սրահի մեջտեղում հայտնվեց Սաղոմեն՝ Հերովդիայի դուստրը, որն իր կրակոտ ասորական պարով անասելի ցնծություն պարգևեց բոլորին: «Ուզիր ինձանից ինչ-որ կամենում



ես»,- բղավեց հարբած չորրորդապետը: Հյուրերի ներկայությամբ նա խոստացավ պահել աղջկա ուզած ցանկությունը կատարելու համար տված իր երդումը: Սալոմեն, խորհրդակցելով մոր հետ, կրկնեց Հերովդիայի հուշած բառերը՝ «Ուզում եմ, որ հիմա, իսկույն սկուտեղի վրա ինձ տաս... Հովհաննես Մկրտչի գլուխը»:

Անտիպասի դեմքը խոժոռվեց: Մարգարեն միշտ հարգանք էր ներշնչել իր նկատմամբ, և, բացի այդ, նա վախենում էր դրանով հարուցել ժողովրդի ցասումը: Հռոմեացիք, իրենց հերթին, չէին սիրում անդատարան հաշվեհարդարները: Սակայն Հերովդեսը, ցանկանալով պահել երևելի հյուրերի ներկայությամբ տված խոստումը, իր թիկնապահին հրամայեց իջնել գնդան: Շուտով նա վերադարձավ Հովհաննեսի արյունաթաթախ գլուխը ձեռքին: Այն դրեցին սկուտեղի վրա, և Սալոմեն զարհուրելի նվերը մատուցեց իր մորը:

Այսպես մահացավ «կանանցից ծնվածներից մեծագույնը»: Նրա տարիքը երեսունից այնքան էլ մեծ չէր: Հասցրեց նա արդյոք Հիսուսի պատասխանն ստանալ: Մենք չգիտենք: Բայց նա մեռավ այնպես, ինչպես ապրել էր՝ Աստծո արդարության աննկուն վկա:

Մարգարեի մարմինը հանձնեցին աշակերտներին: Մարմինը գերեզմանում ամփոփելով, նրանք շտապեցին Գալիլիա՝ կատարվածի մասին Հիսուսին հայտնելու: Հովհաննեսականները գիտեին, որ իրենց ուսուցչի մտքերը կյանքի վերջին օրերին պտտվում էին Նազարեթցի Մարդու շուրջը:

Այդ օրվանից Անտիպասին սկսեց հետապնդել երկյուղը: Լսելով Հիսուսի մասին, նա շրջապատի մարդկանց համոզում էր, որ նա իր կողմից գլխատված և մեռելներից հարություն առած արդարակյացն է: Երբ Արետաս IV-ը պատերազմով եկավ Հերովդեսի վրա և գրավեց Մահերոնը, մարդիկ ասում էին, որ Աստված Հովհաննեսի սպանության համար պատժեց չորրորդապետին[13]:

Այդ ընթացքում Կափառնայում վերադարձան Տասներկուսը: Հաջողությունը ոգևորել էր նրանց և ցնծությամբ պատմում էին նրանք Հիսուսին «այն ամենը», ինչը արել էին և ինչը սովորեցրել էին»: Սակայն նրանց ուրախությունը խամրեց տխուր նորությունից: Չորրորդապետը կարող էր թշնամական գործողությունների անցնել նաև նոր քարոզիչների դեմ: Ուսուցիչը պետք է պահպաներ սաղմնավորվող Եկեղեցին: «Գնացե՛ք,- ասաց Նա առաքյալներին,- ուրիշներից առանձին, անապատ տեղ, և մի քիչ հանգստացեք»: Իսկ Ինքը նավակ նստեց և ուղևորվեց լճի արևելյան ափը, դեպի Հերովդես Փիլիպպոսի տերության սահմանները:

Շուտով Նրա ետևից գնացին նաև աշակերտները:

## Գլուխ իններորդ

# «ԿԵՆԱՑ ՀԱՑԸ»

### Գարուն-ամառ 29 թ.

Այն ժամանակ, երբ փոքրիկ համայնքի գլխին առաջին անգամ կախվեց իշխանությունների իրական վտանգը, Հիսուսի քարոզն առավելագույն հաջողության հասավ: Նրան մշտապես ուղեկցում էին Գալիլեայի և Դեկապոլիսի, Հուդայի երկրի և Հորդանանի տարածքի և նույնիսկ Փյունիկիայի բնակիչները[1]: Նրա համբավը «տարածվել էր ամբողջ Ասորիքում»: Նախկինում երբեք այդպիսի հոծ խմբեր չէին գալիս դեպի Վարդապետը: Թեկուզ անհայտ է, թե հետագայում այդ մարդկանցից քանիսը մտան առաջին Եկեղեցու մեջ, բայց այդ գարունն, անշուշտ, առատ հունձք բերեց Ավետարանին:

Երբ Հիսուսը գաղտնի հեռացավ Կափառնայում քաղաքից, ժողովուրդն սկսեց փնտրել Նրան: Չնայած մոտ էր Զատկի տոնը, բայց շատ գալիլեացիներ Ուսուցչին հանդիպելու հույսով, Երուսաղեմում հավաքվելու փոխարեն, լճի ափով ուղևորվեցին Բեթսայիդա: Եվ Հիսուսը վերստին տեսավ «Իսրայելի տան ոչխարներին», որոնք ցրված էին անհովիվ հոտի նման: Անապատային բլուրների միջև Նա Նոր Մովսես էր թվում նրանց, որը պետք է իրենց տաներ ազատության ճանապարհով:



«Գթալով նրանց», Հիսուսը մարդկանց հետ զրուցում էր երկար և բուժում էր Իր մոտ բերված հիվանդներին...

Աննկատ իջավ երեկոն, և շուտով մութը պատելու էր լճափը: Աշակերտներն անհանգստացան.

– Այս տեղը ամայի է և օրը տարաժամել է,– ասացին նրանք Հիսուսին: – Արձակի՛ր այդ ժողովրդի բազմությունը, որպեսզի գնան շրջակայքի ագարակներում և գյուղերում իրենց համար ուտելիք գնեն:

– Դո՛ւք նրանց ուտելիք տվեք,– պատասխան տվեց Հիսուսը:

– Գնանք գնենք երկու հարյուր դահեկանի հաց և նրանց տանք ուտելու,– հարցրեց առաքյալներից մեկը:

Համայնքն ուներ իր խնայողությունները, իսկ եկածներից ոմանք, հավանական էր, որ իրենց հետ փող էին վերցրել: Ի դեպ, Փիլիպպոսը կասկած հայտնեց, թե այդքան հացը կհերիքի:

– Քանի՞ նկանակ ունեք, գնացեք տեսե՛ք:

– Այստեղ մի տղա կա,– ասաց Անդրեասը,– որ գարու հինգ հաց ունի և երկու ձուկ: Բայց այդքանն ինչ է այս բազմության համար:

Պատասխանի փոխարեն Հիսուսը հրամայեց նրանց խումբ-խումբ նստեցնել գարնանային դալար խոտերի վրա և, վերցնելով հացերը, նայեց դեպի երկինք, օրհնեց, մանրեց նկանակները և տվեց աշակերտներին: Շփոթահար, նրանք սկսեցին խմբերին բաժանել աղքատիկ սնունդը, բայց շուտով, ի զարմանս իրենց, համոզվեցին, որ բոլորին բավականացնում է...

Առաջին հայացքից կարող է թվալ, որ այս պարագայում Քրիստոսը զիջեց փորձիչին, որն երբևէ առաջարկել էր Իրեն քարերը հաց դարձնել: Բայց իրականում փոխզիջում չկար Նրա արածի մեջ: «Ոչ միայն հացով կապրի մարդ» խոսքն ուժի մեջ էր մնում: Ուսուցիչը կամենում էր, որ բազմությունն Իր մոտ գնա ամենից առաջ հոգևոր հացն ստանալու համար: Եթե մարդիկ նախ Աստծո Արքայությունը փնտրեն, ապա «մնացյալը կտրվի նրանց»: Ավանդությունը պահպանել է Քրիստոսի նշանավոր խոսքերը. «Խնդրեցեք մեծը և Աստված ավելիով նաև փոքրը կտա ձեզ»[2]:

Մենք երբեք չենք իմանա, թե հատկապես ինչպես տեղի ունեցավ հացի բազմացումը, բայց կարևորը ամենևին էլ այդ չէ: Կերակրելով ժողովրդին, Հիսուսը ցույց տվեց, որ իսկական կենդանի հավատը և հոգիների միաբանումը վայելչության մեջ գրավական կարող են դառնալ ոչ միայն երկնային, այլև երկրային օրհնության համար:

Պատահական չէ, որ այդ իրադարձությունը նկարագրված է բոլոր

չորս ավետարանիչների մոտ, իսկ վաղ քրիստոնյաները սիրում էին այն պատկերել անձավների պատերի վրա[3]: Եղբայրների տոնական ընթրիքի գաղտնածիսությունը Հաղորդության կանխատեսումն էր, Գոհության խորհուրդը, որը Մարդու Որդին դարձրեց իր Եկեղեցու հիմնակետը:

Իրիկնային այդ ժամին Բեթսայիդայի ժողովուրդը վկա դարձավ Արքայության բացեիբաց խոստովանության առաջին քայլերին: Հավատը, թեկուզ և կարճ ժամանակով, հաղթանակեց: Կեղծ մարգարեն և սրբապիղծ մարդը, աստվածաբանների կարծիքով, քաղաքագետների գայրույթը հարուցող վտանգավոր խռովարարն է, բայց Հիսուսին ցնծությամբ ընդունեցին հազարավոր մարդիկ, որոնք Նրա հետ անցկացրեցին Զատիկին նախորդած օրերը և մասնակցեցին հացի սուրբ բազմացմանը:

Երբ գիշերն իջավ և հովտում խարույկներ վառվեցին, մարդկանց համար դժվար էր քնելը: Բոլորին համակել էր բերկրանքի զգացումը: «Ճշմարիտ՝ Նա է Մարգարեն, որ գալու էր աշխարհ»,- աղաղակում էին ամենուր: Թեկուզ Հիսուսը Իր հանդեպ չէր պահանջում արքայական մեծարանք, բայց գալիլիացիք արդեն պատրաստ էին Նրան ստիպելով տանելու և իրենց տիրակալ հռչակելու: Նրանց մտքերը առօրյա բաների շուրջ էին պտտվում: Արքայության լույսը, Աստծո հետ Հաղորդության «նշանը» նորից ծածկվեցին պայծառացող պատրանքներով...

Ժողովրդի խանդավառությունը կարող էր փոխանցվել աշակերտներին, որը Հերովդեսի բոլոր հալածանքներից ավելի վտանգավոր էր: Եվ նորից պետք էր թաքնվել, փախչել: Հիսուսը ոչ մի րոպե չի հապաղում:

Նա Տասներկուսին հրամայում է նստել Սիմոնի նավակը և ափի երկայնքով նավարկել դեպի Բեթսայիդա: Չհասկանալով նման շտապողականության պատճառը, նրանք լուռ ենթարկվում են, իսկ Նա, գիշերվա քողի տակ, բոլորի աչքից աննկատ, միայնակ բարձրանում է լեռը, որտեղից լուսնի լույսի տակ Նրան երևում է հանդիպակաց քամու դեմ կռիվ տվող նավակը:

Աշակերտները սպասում էին, որ շուտով Հիսուսն ափ կիջնի, սակայն Նա չէր թողնում իր թաքստոցը: Գիշերվա ժամը երեքին քամին նրանց հասցրել էր համարյա լճի մեջտեղը: Այժմ հարկավոր էր մտածել միայն այն մասին, որ նավակը շուռ չգար: Առաքյալները հանկարծ ինչ-որ բան տեսան, որը նրանց ստիպեց բղավել: Ուղիղ ալիքների վրայով շարժվում էր մարդկային մի կերպարանք, որն, ինչպես թվաց, ուզում էր կողքով անցնել: Թմրած ձկնորսները նետեցին թիակները: Նրանք ապրեցին ժողովրդական անհավատության բոլոր սարսափները: Այդ



ուրվականն արդյոք չի կանխագուշակում իրենց մոտալուտ կործանումը: Եվ հենց այդ պահին խավարի միջից հնչեց ծանոթ ձայնը՝ «Ե՛ս եմ, մի՛ վախեցեք»...

Նրանք դեռ չգիտեին՝ ուրախանան, թե սարսափեն, երբ բռնկուն Պետրոսը խավարի միջից ձայն տվեց. «Տե՛ր, եթե Դու ես, հրամայի՛ր ինձ ջրի վրայով Քեզ մոտ գալ»:

Ինչը դրդեց նրան: Մանկական հետաքրքրասիրությունը: Կամ՝ Ուսուցչին հպվելով վախը հաղթահարելու ցանկությունը: Ավելի շուտ՝ ձկնորսն իրեն հաշիվ չտվեց իր այդ մղումի մեջ, երբ լսելով. «Արի՛», անվախ իջավ նավակից: Եվ պատահեց անհավանականը: Մի քանի ակնթարթ հավատի ուժն, իրոք, Պետրոսին պահեց ջրի վրա: Բայց անմիջապես ոտքերի տակ ալիքներն զգալով, նա վախով բռնված գիտակցեց, թե ինչ է տեղի ունենում և սկսեց սուզվել:

- Տե՛ր, փրկի՛ր ինձ,- հուսահատ աղաղակեց Պետրոսը:

- Թերահավա՛տ, ինչու երկմտեցիր,- ասաց Հիսուսը՝ ձեռքը նրան մեկնելով:

Աշակերտները պառկած էին նավակի հատակին, չհանդգնելով շարժվել: Այժմ նրանք վերջնականապես հասկացան. ճակատագիրն իրենց կապել է ոչ երկրային ինչ-որ Մեկի հետ:

Նրանցից ոչ ոք չհասցրեց նկատել, թե նավակն ինչպես քսվեց ափամերձ քարերին...

Այնինչ, առավոտյան, ժողովուրդն իմանալով, որ Տասներկուսն ուղևորվել են առանց Ուսուցչի, ենթադրություններ էր անում և տարակուսում, ուր կարող էր անհայտանալ Նա: Գալիլեացիները ցրված խմբերով քայլում էին ափի երկայնքով: Ոմանք նավակներով ծովը մտան և հարցուփորձ էին անում Տիբերիայի ձկնորսներին: Վերջապես ինչ-որ մեկն առաջարկեց ուղևորվել «Նրա քաղաքը»:

Եվ, իսկապես, Նազովրեցուն նրանք գտան Կափառնայումի մեջ[4]:

Ինչ պատճառներ դրդեցին Նրան վերադառնալ Անտիպասի չորրորդապետություն: Ուզում էր Նա նորից փորձել համախոհներ գտնել այնտեղ և այդ պատճառով չէր, արդյոք, ձգձգում Գալիլիան թողնելը: Սա ամենահավանական ենթադրությունն է: Հիսուսն ասես Ինքն Իրենից հեռացնում էր սպասվելիքը: Դրանում է Նրա կյանքի՝ մեզ համար անըմբռնելի ողբերգականությունը: Թեկուզև Ավետարանի սերմերն հաճախ էին ընկնում անպտուղ հողի մեջ՝ Սերմնացանը շարունակում էր ջանք թափել «շատերի փրկության համար»: Ռուս գրողի խորիմաստ խոսքով ասած՝ Քրիստոսը «պետք է որ մինչև վերջ, մինչև խա-

չը պահպաներ հույսի կայծը[5]»:

Այդ միջոցին Երուսաղեմից Կափառնայումի ժողովարան ներկայացան դպիրները: Այս անգամ նրանք Հիսուսին մեղադրում էին ոչ թե կախարդության, այլ «հայրերի ժառանգության» նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մեջ: Ինչպես կարող էր Նա, որ հավակնում է ուսուցիչ դառնալ, այդպես թեթև վարվել հայրերի կողմից ավանդված ծիսակատարությունների հետ: Չէ որ բոլորը տեսել էին, որ Նրա աշակերտները սեղան նստելիս չէին կատարում լվացման ծիսակարգը:

Հիսուսը չսկսեց արդարանալ նրանց առջև: «Կեղծավորնե՛ր, Եսային լավ է մարգարեացել ձեր վրա,- նկատեց Նա,- և ասել.

Այս ժողովուրդը շրթունքներով է Ինձ մեծարում.
բայց իրենց սիրտը հեռացած, բաժանված է Ինձնից.
զուր են Ինձ պաշտում. մարդկանց կողմից պատվիրված
վարդապետություններ են ուսուցանում:

Աստծու պատվիրանը թողած` մարդկանց ավանդությունն եք պահում»:

Մեծ է արդյոք արարողությունների արժեքը, եթե մոռացության է մատնված Օրենքի մեջ գլխավորը: Ուսուցիչն անմիջապես այդ կարգի կեղծ բարեպաշտության օրինակ բերեց: Հաճախ է պատահում, որ իրենց ունեցվածքը Տաճարին կտակող մարդիկ, այդ հիմքի վրա հրաժարվում էին ծնողներին օգնելուց: Երևակայելով, որ բարեպաշտություն են արել` նրանք ընկնում են Մովսեսի պատվիրաններից մեկի խախտման տակ[6]:

Բանավեճն ընդհատվեց Բեթսայիդայի կողմերից եկած գալիլեացիների կողմից[7]: Նրանք հուզված և զարմացած շրջապատեցին Ուսուցչին:

- Ռաբբի՛, երբ եկար այստեղ:

Սակայն հանդիպումը նրանց հետ Քրիստոսին արդեն չէր ուրախացնում:

- Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, դուք Ինձ փնտրում եք ոչ թե նրա համար, որ նշաններ տեսաք, այլ որովհետև կերաք այն հացից և կշտացաք: Գնացեք, աշխատեցե՛ք ոչ թե կորստյան ենթակա կերակրի համար, այլ այն կերակրի, որը մնում է հավիտենական կյանքի համար, և որը Մարդու Որդին կտա ձեզ, քանի որ Նրան Իր կնիքով հաստատել է Հայրը` Աստված:



Նրանց հոգում «նշանները», ընթրիքին հաջորդած Աստծո ներկայության հրաշքը, խամրել էր այն բանի համեմատ, որ Հիսուսը կարողացել էր կերակրել իրենց անապատ տեղում: Սակայն գալիլեացիները ձգտում էին պարզել, թե Ուսուցիչն ինչ է իրենցից ուզում և պահանջում:

- Ինչ անենք, որ Աստծու ուզած գործերը գործենք,- հարցրեցին նրանք:

- Աստծո ուզած գործը ա՛յս է. որ հավատաք Նրան, Ում Նա ուղարկեց,- եղավ պատասխանը:

Բայց միթե իրենք չէին հավատացել: Միթե իրենք չէին ուզում Նրան թագավոր դարձնել այն բանի համար, որ Նա Մովսեսի նման իրենց տվեց երկնային նոր մանանան[8]:

- Մովսեսը չէ, որ ձեզ երկնքից հաց տվեց,- առարկեց Հիսուսը: - Այլ Իմ Հայրն է, որ տալիս է ձեզ ճշմարիտ հացը երկնքից, որովհետև Աստծուց է այն հացը, որ իջնում է երկնքից և կյանք է տալիս աշխարհին:

-Տե՛ր, ամեն ժամ տո՛ւր մեզ այդ հացը,- նորից չհասկացան նրանք: Ինչպես և սամարացի կինը, մարդիկ բառացի էին հասկանում այլասացությունը, չնայած նրանցից ոմանք կարող էին գիտենային, որ դպիրներն «հաց» անվանում էին Աստվածային Գերիմաստությանը:

Եվ այդ ժամանակ Հիսուսն ասաց խոսքեր, որոնք լրիվ իրարանցում առաջացրեցին հավաքվածների մեջ.

Ես եմ կենաց հացը.
ով դեպի Ինձ գա, քաղց չի զգա,
և ով ինձ հավատա, երբեք չի ծարավի...
Ձեր հայրերը անապատում մանանան կերան, սակայն մեռան:
Այս է երկնքից իջած հացը,
որպեսզի, ով որ սրանից ուտի, չմեռնի...
Այն հացը, որ Ես կտամ Իմ մարմինն է,
որը Ես կտամ, որպեսզի աշխարհը կյանք ունենա...
Ով ուտում է Իմ մարմինը և ընկալում Իմ արյունը,
Կբնակվի Իմ մեջ, և Ես` Նրա մեջ:

Հացը, ջուրը, գինին խորհրդանշում են այն կերակուրը, որն անհրաժեշտ է մարմնի կյանքը պահելու համար: Սուրբ ընթրիքը Մարդու Որդու հետ` հոգու կերակուրն է: Նրա` մարմնից և արյունից կազմված էակի միջոցով է կատարվում հաղորդություն աստվածային գոյի հետ,

ձեռք է բերվում Պատվիրանի ամբողջացում, տեղի է ունենում Արարչի միացումը արարածների հետ:

Հացի բազմացման օրը ժողովուրդն այդ «նշանի» վկան և մասնակիցը դարձավ, բայց չդիմացավ երկրային գայթակղությանը: Հիմա արդեն անցել էր այն անսովոր գիշերվա խանդավառությունը, երբ ուզում էին Թագավոր հռչակել Հիսուսին: Մարդկանց թվում էր, թե իրենք արթնացել են քնից և խելքի են եկել: «Սա Հիսուսը չէ, Հովսեփի որդին, որի հորն ու մորը մենք ճանաչում ենք»,- կասկածանքով հարցնում էին ոմանք: - Արդ, ինչպես է ասում՝ Ես երկնքից իջա: Իսկ ուրիշներն իրենց խաբված էին համարում. «Սա ինչպես կարող է իր մարմինը մեզ տալ՝ ուտելու»:

Հիսուսի ասածը ծայրահեղ շփոթություն առաջացրեց նույնիսկ աշակերտների մոտ: Նրանցից ոմանք տրտնջացին. «Խիստ է այդ խոսքը, ով կարող է այն լսել»: Հիսուսը փորձում էր նրանց բացատրել, որ Իր խոսքերը հարկավոր է հոգևոր իմաստով հասկանալ. «Այն խոսքը, որ ձեզ ասացի, հոգի է և կյանք: Բայց ձեր մեջ կան ոմանք, որ չեն հավատում»:

Հովհաննես ավետարանիչը լուսաբանում է, որ «անհավատներ» ասելով Տերը նկատի ուներ Հուդային: Իրականում, շատ հնարավոր է, որ այդ փառամոլ մարդը, համոզվելով, որ Հիսուսը չի ցանկանում դառնալ Թագավոր, հենց այդ ժամանակ էր հիասթափվեց Նրա հետ կապված հույսերից: Իսկ ինչպես էր նա հասկացել գիշերը լճի վրա կատարվածը: Կասկածանքը միշտ գտնում է պատասխան. երազ, կախարդանք, խանգարված երևակայության խաղ: Հիսուսի հանդեպ հավատը ջարդվեց, սակայն՝ ոչ միայն Հուդայի մոտ: Նույն ավետարանիչը տեղեկացնում է, որ «Դրա վրա՝ Նրա աշակերտներից շատերը ետ քաշվեցին և այլևս Նրա հետ չէին շրջում»:

- Միթե դուք էլ ուզում եք գնալ,- հարցրեց Հիսուսը Տասներկուսին:

Բոլորը լռեցին, միայն Սիմոն Պետրոսը կարողացավ արտահայտել բոլորի ապրումը.

- Տե՛ր, ում մոտ պիտի գնանք: Դու հավիտենական կյանքի խոսքեր ունես...

Իրենց տեսածից ու լսածից շփոթված՝ աշակերտներն ասես նոր երկունքի ցավեր էին քաշում: Շատ բաներ նրանք դեռևս ի վիճակի չէին «մարսել»: Բայց, վերջ ի վերջո, նրանք ում վրա կարող էին հույս դնել, բացի Տիրոջից: Իսկ Նա տրտում նայում էր իրար գլխի կուտակված Իր



հետևորդներին.

- Չէ որ Ես եմ ընտրել ձեզ՝ Տասներկուսիդ. և ձեզանից մեկը սատանա է:

Եթե անգամ Հուդան ցնցվեց այդ խոսքերից, ապա ցույց չտվեց, թե դրանք իրեն են վերաբերում: Մյուսները կարկամել էին սարսափից:

Հեշտ չէր նրանց համար, բայց առավել դժվար էր հենց Հիսուսի համար: Նա պետք է հոգեպես վերակերտեր մարդկանց, որոնք կրում էին իրենց միջավայրի շատ մոլորություններ: Անգամ ընտրվելով Արքայության առաքյալներ, նրանք, այնուամենայնիվ, անսահման հեռու մնացին Քրիստոսից: Լսելով Նրա զգուշացումը՝ «Զգո՛ւյշ մնացեք փարիսեցիների թթխմորից և Հերովդեսականների թթխմորից», նրանք հասկացան, թե Ուսուցիչն իրենց արգելում է կարիքի դեպքում հաց վերցնել Իր թշնամիներից: «Միթե դուք դեռ չեք հասկանում»,- վշտացավ Հիսուսը:

Չնայած դրան, Նա չգործադրեց Իր ունեցած իշխանությունը, չուզեցավ բռնանալ հոգիների վրա: Նորից ու նորից Նա կուսուցանի նրանց, հետամուտ կլինի նրանց կասկածներին, անսպառ համբերությամբ կսպասի նրանց: Նրանք ստիպված կլինեն երկրորդ դարձը վերապրելու, ևս մեկ անգամ ճանաչելու Մեսիային Իեշուա ռաբբիի մեջ, բայց ոչ զելոտների և ունայն ամբոխի Մեսիային, այլ Նրան, Ով հոգևոր կերակուրն է աշխարհի, երկնքից պարգևած հացը...

## Գլուխ տասներորդ

# ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

### Ամառ – աշուն 29 թ.

Ըստ երևույթին, ժողովրդի հուզմունքների խաղաղվելուն սպասելու համար Հիսուսը բոլորովին թողեց Իսրայելի հողի սահմանները: Նա հեռացավ հարևան Փյունիկիա երկիրը, ուր ապրեց որոշ ժամանակ, աշխատելով անճանաչելի մնալ: Նրա քարոզն այդ օրերին լռեց: Շրջապատված էր միայն հեթանոսներով, որոնց ժամը դեռ չէր եկել[1]: Այնտեղից նա գնաց դեպի հարավ-արևելք՝ Դեկապոլիս և դրանից հետո միայն վերջապես վերադարձավ Փիլիպպոսի չորրորդապետություն: Բայց Բեթսայիդայի մոտ ժողովուրդն արդեն սպասում էր Նրան, թեկուզև բավականին նվազած. և Հիսուսն ստիպված էր նորից թաքնվել նրանցից: Այս անգամ Նա գնաց Գոլան, իսկ հետո ավելի հեռու, դեպի Հորդանանի բարձրադիր մասերը:

Նրա ճանապարհն անցնում էր ձյունապսակ Հերմոն լեռան մոտով, Կեսարիա քաղաքի շրջակա վայրերով, որին Փիլիպպոսն այդ անունն էր տվել Ավգուստիանոս կայսեր պատվին:

Առաքյալներն անտրտունջ հետևում էին Ուսուցչին, չըմբռնելով սակայն, թե ինչու Նա չօգտվեց գալիլեացիների ոգևորությունից: Սակայն շրջելով Անդրհորդանանի ճանապարհներով, նրանք հնարավորություն ստացան համգիստ քննության ենթարկել անգամ ամիսների իրադարձությունները և հաստատվել Տիրոջը երբեք չլքելու վճռականության մեջ: Նրանք կռահում էին, որ Ուսուցիչն սպասում է իրենց անկեղծ խոսակցությանը, որ եկել է Նրա հանդեպ իրենց վերաբերմունքի հստակեցնելու ժամանակը:

Մի անգամ, առանձնացած աղոթքից հետո, Հիսուսը Տասներկուսին դիմեց այսպիսի հարցով.

– Մարդիկ Իմ մասին ինչ են ասում, Ով է Մարդու Որդին:

– Մեկը, թե՝ Հովհաննես Մկրտիչը,– ասացին նրանք,– և ուրիշներ՝ Եղիան, իսկ ոմանք, թե՝ Երեմիան կամ մարգարեներից մեկը:

– Իսկ դուք Իմ մասին ինչ եք ասում, ով եմ Ես:

Նախկինում Ուսուցիչն առաքյալներից երբեք չէր պահանջում այդ աստիճանի անմիջական խոստովանություն: Բայց Նրա խոսքերը հանկարծակիի չբերեցին նրանց: Բոլորի անունից պատասխանեց Սիմոնը.

– **Դու ես Քրիստոսը՝ Կենդանի Աստծո Որդին**:

– Երանի՜ է քեզ, Սիմո՛ն, Հովնանի՛ որդի,– հանդիսավոր արտաբերեց Հիսուսը,– որովհետև մարմինը ու արյունը չէ, որ հայտնեց քեզ, այլ՝ Իմ Հայրը, որ երկնքում է: Եվ Ես քեզ ասում եմ, որ դու Վեմ ես*, և այդ վեմի վրա պիտի շինեմ Իմ Եկեղեցին, ու դժոխքի դռները այն չպիտի հաղթահարեն: Ես քեզ պիտի տամ Երկնքի Արքայության բանալիները, և ինչ որ մի անգամ կապես երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում: Եվ ինչ որ արձակես երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում[2]:

Եկեղեցու մասին ասված այս խոսքերն ասես պատասխան լինեին այն շրջադարձին, որը տեղի էր ունեցել նրանց գիտակցության մեջ: Թեկուզև որոշ առաքյալներ իրենց Ուսուցչին նախկինում անվանել էին Մեսիա, բայց այն ժամանակ նրանք դեռևս գտնվում էին կեղծ պատկերացումների գերության տակ: Այդ էր գործի դրվածքը հիմա: Նույնիսկ համոզվելով, որ Հիսուսն արհամարհեց երկրային իշխանությունը և հալածական թափառում է օտար աշխարհներում, նրանք համենայն դեպս հավատ և արիություն գտան իրենց մեջ, որպեսզի Քրիստոս խոստովանեին Նրան: Եվ թող Սիմոնը դեռևս ի վիճակի չլիներ իր կողմից ասված խոսքերի իմաստն ամբողջովին ըմբռնելու, Նրա խոստովանությունը հետագայում դառնում է նորկտակարանյան բովանդակ Եկեղեցու հավատի խորհրդանիշը:

Հիսուսի տված այն հարցը, թե «Մարդիկ Իմ մասին ինչ են ասում, ով է Մարդու Որդին», հնչում է և այսօր: Եվ այսօր, երկու հազար տա-

* Կամ «Ապառաժ», արամեերեն՝ Կեփաս, հունարեն πέτρος Պետրոս:

րի անց, շատերը պատրաստ են Նրա մեջ տեսնել միայն մարգարեին կամ բարոյախոսության Ուսուցչին: Նրանք չեն կարող մեկնաբանել, թե ինչու հենց Հիսուս Նազովրեցուն, և ոչ թե Եսայուն կամ նույնիսկ Մովսեսին են միլիոնավոր մարդիկ խոստովանել իբրև «Հոր համագոյակիցը»:

Ինչումն էր թաքնված Քրիստոսի անկրկնելի ձգողականությունը: Արդյոք միայն Նրա բարոյախոսական ուսմունքի մեջ: Չէ որ վսեմագույն բարոյագիտություն էին հրամցրել և՛ Բուդդան, և՛ Երեմիան, և՛ Սոկրատեսը, և՛ Սենեկան: Այդ դեպքում քրիստոնեությունն ինչպես կարողացավ հաղթել իր մրցակիցներին: Եվ, վերջապես, ամենագլխավորը. Ավետարանն ամենևին էլ նման չէ հասարակ իրավուսույց քարոզի:

Այստեղ մենք մուտք են գործում բովանդակ Նոր Կտակարանի վճռորոշ և ամենից խորհրդավոր բնագավառը, այստեղ հանկարծակի անդունդ է բացվում Մարդու Որդու և բոլոր փիլիսոփաների, բարոյախոսների, կրոնների հիմնադիրների միջև:

Թող Հիսուսն ապրեր և գործեր մարգարեի նման, բայց այն, ինչը Նա հայտնաբերեց Իր մեջ, թույլ չի տալիս Նրան դնել մարդկության այլ ուսուցիչների հետ նույն շարքում: Նրանցից ցանկացածն իրեն գիտակցեց միայն որպես մարդ, որը գտել է ճշմարտությունը և կոչված է այն ավետելու: Նրանք պարզ տեսան այն տարածությունը, որն իրենց բաժանում էր Հավիտենականից[3]: Իսկ Հիսուսը: Երբ Փիլիպպոսն երկչոտ խնդրեց Նրան՝ Հորը ցույց տալ աշակերտներին, Նա պատասխանեց այնպես, ինչպես չէին կարող պատասխանել ոչ Մովսեսը, ոչ Կոմփուցիոսը, ոչ Պլատոնը. «Այսքան ժամանակ ձեր հետ եմ, և դու չճանաչեցիր Ինձ, Փիլիպպոս: Ինձ տեսնողը՝ Հորը տեսավ»: Անդրդվելի վստահությամբ, կեղծիքին ու հուզավառությանն օտար այս Ուսուցիչն Իրեն հռչակում է Աստծո միակ Որդի, Նա խոսում է արդեն ոչ ինչպես մարգարեն՝ Գոյի անունից, այլ իբրև՝ Ինքը Գոյը...

Զարմանալի չէ, որ շատերին հիմա Քրիստոսը թվում է անլուծելի հանելուկ: Կարելի է նույնիսկ հասկանալ նրանց, ովքեր փորձեցին Նրան դիտարկել իբրև առասպել, թեկուզև այդ փորձերն անհաջողության մատնվեցին*: Իրականում դժվար է ենթադրել, որ Իսրայելում կար մի Մարդ, Որն հանդգնեց ասել. «Ես և Հայրը մի ենք»: Անհամեմատ ավելի հեշտ է պատկերացնել, թե հույներն ու ասորիներն ինչ եղանակով արևելյան հավատալիքների պատառիկներից հյուսեցին Աստծո Որդու մասին իրենց լեգենդը:

Հեթանոսներն ընդունում էին, որ երբեմն աստվածները ծնվում են

* Տե՛ս 1-ին հավելվածը՝ «Առասպել, թե իրականություն»:



երկրի վրա և այցելում մահկանացուներին, բայց Հիսուսը քարոզում էր մի հասարակության մեջ, որտեղ նման առասպելները ոչ ոք լուրջ չէր ընդունում, որտեղ գիտեին, որ Աստվածությունն անհամաչափելի է մարդու հետ: Այդ ճշմարտության համար հինկտակարանյան Եկեղեցին շատ թանկ վճարեց և շատ երկար պայքարեց հեթանոսության դեմ, որպեսզի ի հայտ բերեր Մարգարեին. Որը պնդեց. «Ես Հոր մեջ եմ և Հայրը՝ Իմ մեջ»: Փորձել են ամեն ինչ բացատրել՝ վկայակոչելով սուրբ Պողոսին, որն իբր թե ստեղծել է Մարմնավորման դավանությունը: Բայց «ժողովուրդների առաքյալը» մինչև ուղնուծուծը հրեա էր և ինքնին երբեք չէր գա աստվածամարդու գաղափարին:

Հիսուսի երևույթի պարադոքսը նրանումն է, որ Նա անհավանական է և, միևնույն ժամանակ՝ պատմական իրողություն է: Նրա առեղծվածի վրա ապարդյուն ջանքեր է թափում «էվկլիդյան» տափակ դատողությունը: Երբ անտիկ շրջանի համբավավոր գիտակ Տ. Մոմզենին հարցրեցին, թե իր աշխատություններում ինչու չի հիշատակում Քրիստոսի մասին, նա պատասխանեց. «Ես չեմ կարողանում հասկանալ Նրան և այդ պատճառով գերադասում եմ լռել»: Փիլիսոփա Սպինոզան թեկուզև չի եղել քրիստոնյա, խոստովանել է, որ աստվածային Իմաստությունը «ամենից շատ ի հայտ է եկել Հիսուս Քրիստոսի միջոցով»[4]: Նապոլեոնը, որն իր աքսորավայրում երկար է մտածել պատմության քառուղիների մասին, կյանքի վերջին ասել է. «Քրիստոսը մարդու սերն է ցանկանում. այդ նշանակում է, որ Նա ուզում է այն, ինչ մեծագույն աշխատանքով կարելի է ստանալ աշխարհից, որն իմաստունն ապարդյուն ձևով պահանջում է իր մի քանի ընկերներից, հայրն՝ երեխաներից, կինն՝ ամուսնուց, եղբայրը՝ եղբորից. մի խոսքով, սրտերն է ուզում Քրիստոսը: Նա այդ բանն ուզում է Իր համար և հասնում է դրան կատարյալ անսահմանորեն... Միայն Նրան է հաջողվել մարդկային սիրտը վեհացնել դեպի անտեսանելին մինչև ժամանակավոր զոհաբերությունը, և այդ միջոցի օգնությամբ Նա իրար կապեց երկինքն ու երկիրը»[5]: «Հեթանոս» Գյոթեն Հիսուսին համեմատել է Արեգակի հետ: «Եթե ինձ հարցնեն,- ասել է նա,- թե համապատասխանում է արդյոք իմ խառնվածքին երկյուղած խոնարհումը Նրա առջև: Ես, իհարկե, կպատասխանեմ. ես խոնարհվելու եմ Նրա առաջ իբրև բարձրագույն բարոյականության սկզբունքի աստվածային հայտնության»[6]: Հինդուիստ Մահաթմա Գանդին գրել է, որ իր համար Հիսուսը «մարտիրոս է, զոհաբերության մարմնացում, աստվածային ուսուցիչ»[7]:

Այսպիսին են պատմաբանի, փիլիսոփայի, քաղաքագետի, բանաս-

տեղծի և իմաստունի դատողությունները, որոնք խորհրդածել են Հիսուսի անձնավորության շուրջ: Բայց եթե Նա առասպել չէ և միայն բարենորոգիչ է, ապա ով է Նա: Հարկ չկա արդյոք պատասխանի փնտրումի մեջ լսել նրանց, ովքեր շրջել են Նրա հետ Գալիլեայի քաղաքներով և գյուղերով, ովքեր ամենից մոտ են եղել Նրա հետ, ում հետ Նա կիսվել է ամենանվիրական բաներում: Իսկ նրանք «Ով է Մարդու Որդին» հարցին պատասխանում են Սիմոն-Պետրոսի խոսքերով. «Դու ես Քրիստոսը, Կենդանի Աստծո Որդին»...

Որպեսզի ավելի լավ հասկանանք այդ խոստովանության բուն էությունը, մենք պետք է կրկին վերադառնանք հեռավոր անցյալին:

## ՄԵՍԻԱ: ԹԱԳԱՎՈՐ ԵՎ ՓՐԿԻՉ

Մովսեսական կրոնը ծնվեց փրկության գաղափարի հետ: Տասնաբանյայի առաջին պատվիրանը հիշեցնում է, որ Եհովան ազատեց գերության մեջ տառապող իր ժողովրդին: Լայն զանգվածներն ամենից հաճախ փրկությունը հասկանում էին շատ որոշակի՝ որպես ձերբազատում թշնամիներից և տարերային աղետներից: Մարգարեները ոգեղենացնում էին այդ հույսը, նրա մեջ դնելով վախճանաբանական բովանդակություն:

Համաձայն Աստվածաշնչի, աշխարհը դեռ վաղուց է գտնվում անկումային վիճակում և կարիք ունի փրկության: Կարճ է մարդկային կյանքը, իբրև երազ այն անցնում է անպտուղ պայքարում[8]: Մարդիկ խրված են ունայնության մեջ: «Ծնվելով մեղքի մեջ». նրանք անխուսափելիորեն դեպի կորուստ են գնում: Խավարի և տառապանքների այս թագավորությունն ինչքան քիչ է նման Աստվածային կամքի իրագործմանը:

Համանման եզրակացությունների են հանգել նաև Արևելքի և Արևմուտքի շատ իմաստուններ: Նրանց կարծիքով, մահկանացուն կույր կրքերի և հանգամանքների խաղալիք է: Անողոք ճակատագիրն է թագավորում բոլորի վրա, Տիեզերքը դատապարտելով փակ շրջանում պատեպատ խփվելուն:

Աշխարհի անկատարության գիտակցումը բերել է «փրկության մասին ուսմունքների» զարգացմանը: Դրանք կարելի է բաժանել երեք տեսակի:

Տեսակներից մեկի (Պլատոն) համար ելքը հասարակության լավագույն կազմակերպման մեջ է, մյուսի (Բուդդա) համար՝ միստիկական հայեցողության և կյանքից փախուստի մեջ: Սակայն երկու լուծումնե-



րին էլ միավորում է ընդհանուր նախապայմանը. ոչ Աստվածությունը, ոչ մարդն ի զորու չեն արմատական փոփոխություններ կատարելու աշխարհի կարգի մեջ: Կարելի է լոկ հասնել տառապանքների մասնակի թեթևացման կամ հույսը դնել գոյության դադարեցման վրա*: Սոտերոլոգիայի երրորդ տեսակը ծագել է Իսրայելում և Իրանում: Միայն այնտեղ կար համոզմունք, որ չարը հաղթահարելի է, որ ապագայում տեղի կունենա մարդու կյանքի բարձրագույն իմաստն հանդիսացող կերպարանափոխություն: Ընդ որում, պարսիկները գտնում էին, որ Բարին ու Չարն, ըստ էության, գոյության երկու տարբեր բևեռներ են, որպես երկու մրցակից-աստված: Աստվածաշնչյան մարգարեներն հրաժարվեցին ընդունել այդ հրապուրիչ ուսմունքը: Յահվեն Իրեն հայտնեց նրանց որպես միակը և միասնականը: Նա «չի արարել մահը», Նրա կամքն է՝ բովանդակ արարչությունը բերել ներդաշնակ լիակատարության:

Բայց այդ դեպքում որտեղից է հայտնվել աստվածային մտահղացմանը հակառակ գնացող անկատարությունը: Ըստ Հին Կտակարանի ուսմունքի, այն անջատվել-հեռանալու արդյունք է: Աստծո իշխանությունը նման չէ բռնակալի իշխանությանը: Աստված ճանապարհի ընտրության ազատություն է ընձեռում արարածներին: Աշխարհը կոչված է ինքն իր փորձով ճանաչել, մի ճշմարիտ կյանքը միայն Նրա հետ է, Ով այն պարգևել է, Նրանից շրջվելը անգոյության անդունդ է տանում: Միայն ազատակամորեն հետևելով Արարչի կանչին, արարչությունը արժանի կլինի Ստեղծողին:

Աստվածաշնչի հեղինակներն, օգտվելով Արևելքի սրբազան պոեզիայի լեզվից, նկարագրել են Աստծո Գերիմաստությանն հակառակվող կործանման ոգին՝ օձի կամ վիշապի տեսքով, ծովի ալիքների պես անզուսպ ու խռովարար: Իսկ հետագայում, արարչության մեջ ծագած այդ դիվային սև հոսանքին Ս. Գիրքը տվել է Սատանա անունը, որ նշանակում է Հակառակորդ: Նրանով «մահը աշխարհ մտավ»[9]:

Բնությունը, ինչպիսին մենք այն տեսնում ենք հիմա, ոչ ամբողջությամբ է համապատասխանում բարձրագույն նախասահմանումին: Դրա համար էլ նրանում մոլեգնում են լափելը, պայքարը, մահը և քայքայումը: Հենց այդպիսի երկդիմի, աղավաղված աշխարհում էլ հայտնվեց նախաստեղծ մարդը, որին Աստվածաշունչը մարմնավորում է Ադամի** կերպարով:

Նա դարձավ Աստծո պատկերը բնության մեջ, «նմանությունը»

* Տե՛ս «Լռության դարպասների մոտ» և «Դիոնիսոս. Լոգոս, Ճակատագիր»:
** Տես «Կրոնի ակունքները», «Մոգություն և միաստվածություն»:

նույն Իրեն՝ Գոյին:

Սաղմոսերգուն, գիշերային երկնքի վեհությամբ ցնցված, չի կարողացել թաքցնել իր հիացմունքը. ով է մարդը, որ Դու հիշում ես նրան: Ինչու է նա այդքան բարձր դասված[10]: Ծննդոց Գրքում խոսվում է Ադամի արքայական դերի մասին, արարածների վրա նրա «տիրակալության» մասին: Աստվածաշնչի խոսքերով ասած. նա դրված էր «Դրախտի պարտեզում», այսինքն՝ բնական չարից պաշտպանված էր Աստծո մերձավորությամբ: Սակայն, օժտված լինելով ազատությամբ և զորությամբ, Ադամը տրվեց իր կամքը Արարչի կամքից բարձր դասելու գայթակղությանը:

Ս.Գիրքը մարդկանց մեղսագործելու պատմության մեջ նկարագրում է այդ հոգևոր աղետը. նրանք լսեցին օձին և ցանկացան իշխել աշխարհին անկախ իրենց Ստեղծողից, այլ խոսքով՝ «լինել աստվածների պես»[11]:

Դրանով իսկ խախտվեց նախասկզբնական Պատվիրանը նրանց և Գոյի միջև:

Մեղքը ոչնչացրեց կամ թուլացրեց մարդու բազում շնորհները, այն տարածվեց համաճարակի նման և իր թունավոր արմատները գցեց ամենուր: Բնությունը «մշակող և խնամող» Ադամը դարձավ նրա թշնամին և բռնակալը: Մարդկային ցեղի վրա իշխանություն ձեռք բերեցին տարերքի մութ ուժերը, նրան ենթարկելով իրենց և երկիրը դարձնելով դժոխք...

Եվ, համենայն դեպս, ինչպես Սատանան չկարողացավ լրիվ պղծել աշխարհի պատկերը, այդպես էլ մեղքի սերմը ոչնչացրեց մարդու մղումները Բարձրյալին և կարոտը կորցրածի հանդեպ:

Աստվածաշնչի կենտրոնական ավետումն այն է, որ Աստված չլքեց ընկած աշխարհը: Նա կոչեց բարեպաշտներին, որոնք խավարի և խենթության մեջ պահպանեցին հավատարմությունը Իր հանդեպ. և նրանց միջոցով վերանորոգվեց սրբազան Ուխտը: Նրանք էլ սկիզբ դրեցին ընտրյալ ժողովրդին, որը դարձավ միջոց Նախախնամության նպատակներին հասնելու համար:

Այդ նպատակների էությունը միայն աստիճանաբար հստակվեց Իսրայելի գիտակցության մեջ: Սկզբում նա պետք է պարզապես հավատ ընծայեր Տիրոջ հանդեպ, հանձնվեր Նրա առաջնորդությանը: Սերնդեսերունդ առաջնորդները, մարգարեները և իմաստունները ամբացնում էին հավատը գալիքի հանդեպ, խորացնում էին Արքայության ըմբռնողությունը: Նրանք գիտեին, որ կգա ժամանակ, երբ Քաոսի հրեշը կջախջախվի և կընկնի աշխարհը Աստծուց բաժանող պատնեշը[12]:



Տիեզերական հեղաշրջումը կկանխի Փրկիչ-Քրիստոսի հայտնությունը: Նա կլինի Դավիթի սերունդ, Հեսսեի որդի, բայց կծնվի այն ժամանակ, երբ թագավորական տունը կզրկվի երկրային փառքից:

Եվ Հեսսեի բունիցը մի Շառավիղ է դուրս գալու,
և մի Ընձյուղ է բուսնելու նրա արմատներից.
Եվ Նրա վրա կհանգչի Տիրոջ հոգին,
Իմաստության և Հանճարի հոգին[13]:

Աստծո սրտում Փրկիչը եղել է «աշխարհի սկզբից», իսկ գալիք Արքայությունում Նա անվախճան է[14]: Նրա հայտնությունը կվերահաստատի միաբանությունը մարդկանց և բնության, աշխարհի և Արարչի միջև:

Սակայն մարգարեների վախճանաբանությունը չէր սպառվում Քրիստոսին սպասելով: «Տիրոջ Օրը», ասում էին նրանք, կլինի մեծագույն Աստվածահայտնության օր[15]: Անդրսահմանայինն Ինքը կմտնի աշխարհ, Անտեսանելին Ինքը մարդկության որդիների համար կդառնա ակնհայտ և մերձ:

Բայց դա հուսալը հանդգնություն, խենթություն չէ: Չէ որ Աստված անսահմանորեն բարձր է ողջ ստեղծվածից: «Նրան տեսնողը չի կարող կենդանի մնալ»: Հինուխտյան Եկեղեցու իմաստունները պատասխանում էին և այդ հարցին: Ըստ իրենց ուսմունքի, Անհասանելին ունի դեմքեր, որոնք ասես դարձված են բնությանն ու մարդուն: Գործածելով երկնային հասկացություններ-խորհրդանիշեր, դրանք կարելի է անվանել Տիրոջ Հոգի, Գերիմաստություն և Բան[16]: Դրանցում բովանդակված է աստվածայինի այն չափումը, որը հարաբերակցելի է արարածներին: Դրանցով են շնորհվում Տիեզերքին կեցություն, և դրանց միջոցով է Գոյը բացահայտում Իրեն մարդուն:

Բայց երբ մարգարեները փորձում էին նկարագրել Բանի կամ Հոգու երևույթը, նրանք այդ պատկերացնում էին երկինքը և երկիրը ցնցող համաշխարհային աղետի տեսքով: Ճիշտ այդպես Փրկիչն էր նրանց մեծ մասի կողմից պատկերացվում երկնային ուժով շրջապատված հզոր հաղթահերոսի տեսքով: Միայն որոշ մարգարեներ, օրինակ՝ Եսայի Երկրորդը, պատկերեցին Նրան առանց արտաքին փայլի լուսապսակի:

Ահա Իմ Ծառան, Որին Ես հաստատել եմ,
Իմ Ընտրածը, Որին հավանել է Իմ հոգին.

Ես Իմ Հոգին դրել եմ Նրա վրա,
Նա իրավունքը պիտի հանի ազգերի համար:
Նա չի աղաղակի, և ձայնը չի բարձրացնի,
և Իր ձայնը լսել չի տա դրսում:
Ջախջախված եղեգը չի փշրի,
և առկայծյալ պատրույգը չի հանգցնի[17]:

Ընդհուպ մինչև ավետարանական ժամանակները Փրկիչ-ռազմիկի հավատը ժողովրդին ասում էր շատ ավելին, քան միստիկական Փրկչի գաղափարները: Հռոմեական դարաշրջանում մարտական ոգին ունեցավ ակնհայտ գերակշռություն: Փրկողի մասին երազանքը դարձավ Գավլոնիտի պարտիզաններին ոգեշնչող երկրային ուտոպիա:

Հիսուսն ինչու ուղղակի չդատապարտեց այդ ուղղությունը:

Ամենից առաջ պատճառն այստեղ այն է, որ այն իր գաղափարները քաղում էր մարգարեական գրքերից: **Առանձնացնել** դրանցում ճշմարիտ ըմբռնումները ավանդական փոխհարաբերություններից, որոնցում այն արտահայտվում էր, մարդիկ դեռևս պատրաստ չէին: Այդ պատճառով էլ Քրիստոսը չդիպչելով մարգարեությունների **ձևերին**, սոսկ ձգտում էր ընդգծել դրանց հոգևոր բովանդակությունը, ցույց տալ այն հիմնականը, ինչը բովանդակվում էր Աստվածաշնչի վախճանաբանության մեջ: Երբ Նա Իրեն անվանեց Մարդու Որդի, երբ խոսում էր Իր մասին որպես ազատության և բժշկության ավետաբեր, երբ հասկացնել տվեց, որ եղել է ուրիշ աշխարհում «Նախքան Աբրահամը», այդ ամենը նշանակում էր, որ հենց Նա է Եկողը, որի գալը կանխագուշակել էին մարգարեները:

Բայց Քրիստոսը բացեց և այն, **ինչը չէին կանխատեսել նրանցից ոչ մեկը**: Աստվածահայտնությունը կատարվեց Նրանում հենց ավետված Փրկչի հետ: Անչափելին և համայնապարփակը մարդկային դեմք և ձայն ստացան ի դեմս Նազարեթցի Հիսուսի, «Կենդանի Աստծո Որդու»:

## ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆ

Աստվածաշնչում մենք հաճախ ենք հանդիպում այնպիսի արտահայտությունների, ինչպես «օրհնության որդի», «ցասման որդի», «մարգարեի որդի»: Դրանք ցույց են տալիս մարդու հատկությունները, բնավորությունը և կոչվածությունը: «Աստծո որդիներ» արտահայտության տակ իսրայելացիները սովորաբար հասկանում էին հոգևոր էակների, հրեշտակների, հաճախ էլ Տիրոջ ժողովրդի սրբակյացների կամ Թագակիր օծյալ միապետների: Այդ պատճառով էլ «Աստծո Որդի» անվանումը տրվում էր նաև Փրկչին[18]:

Քրիստոսը մշտապես իրեն անվանում էր երկնային Հոր Որդի: Բայց Նրա խոսքերից պարզ է դառնում, որ Նրա հարաբերությունը Աստծո հանդեպ նման չի մյուսների հետ ունեցած հարաբերությանը: «Ինչպես Հայրը Ինձ գիտե, և Ես գիտեմ Իմ Հորը»: Երբ Նա ասում էր՝ «Իմ Հայրը», ապա առնչվում էր Իր ներքին կյանքի անկրկնելի գաղտնիքին՝ «Հայրը Իմ մեջ է, և Ես՝ Հոր մեջ»[19]: Սակայն դա մի միստիկի մոլի միավորում չէր աստվածային Խորությանը, այլ բոլորովին ուրիշ մի բան:

Աստվածաորդիությունը Քրիստոսի մեջ դառնում է **Աստվածամարդություն**...

«Գիրք Թագավորաց»-ում պատմվում է, որ Եղիա մարգարեն Սինայի վրա էր սպասում Տիրոջ Փառքի հայտնությանը: Բոցկլտում էր կրակը, բուքը ոռնում էր, գետնի երերալուց շրջակայքում ցնցվում էր ամեն ինչ, բայց դրանում Աստված չկար: Եվ միայն երբ հրաշեկ անապատում անսպասելի սկսեց փչել մեղմիկ, զովաշունչ քամին, մարգարեն ի վերջո զգաց Գոյավորի ներկայությունը: Նման մի բան էլ տեղի ունեցավ սրբազան պատմության մեջ: Սպասում էին աղետների և ընկնող աստղերի, իսկ դրա փոխարեն երկրում ծնվեց Մանուկը, տկար, ինչպես աշխարհի երեխաներից յուրաքանչյուրը: Սպասում էին Թշնամիներին ջախջախող երկնային դյուցազնի, մինչդեռ եկավ Նազարեթցի Հիսուսը, Որը Իր մոտ կանչեց բոլոր «հոգնածներին և բեռնավորվածներին»: Սպասում էին հզոր Փրկչի և ահեղ Աստվածահայտնության, իսկ երկիրը տեսավ Աստվածամարդուն, նսեմացած, երկրային «մարմին ու արյուն» առած...

Քրիստոսի մասին լուրը շփոթմունքի մեջ գցեց և հրեաներին, և հելլեններին: Ցանկանալով պարփակել Նրան իրենց համար սովորական չափումների մեջ, ոմանք պնդում էին, որ Հիսուսը լոկ սովորական մահկանացու է, որի վրա իջել է Աստծո Հոգին, իսկ մյուսները՝ որ Նա ունեցել է Թափանցիկ մարմին, իրականում մնալով միայն աստվածային Էակ[20]: Մինչդեռ Ավետարանն ասում է Մարդու մասին, Որը ուտում էր և խմում, ուրախանում էր և տառապում, ճանաչեց փորձությունը և մահը, և միևնույն ժամանակ Ինքը չճանաչելով մեղքը, ներում էր մեղսագործներին, ինչպես ներում է Աստված և չէր բաժանում Իրեն Հորից: Այդ պատճառով էլ Եկեղեցին դավանում է Հիսուսի մեջ Աստծո Որդուն, Բանն, Աստծուն գործելիս, Որը ասես Թափանցում է ստեղծվածի ամենախորքը:

Սկզբից էր Բանը,
և Բանը Աստծո մոտ էր,
և Բանը Աստված էր:
Նա սկզբից Աստծո մոտ էր:
Ամեն ինչ Նրանով եղավ.
և առանց Նրան չեղավ ոչինչ, որ եղել է:
Կյանքը Նրանով էր:
Եվ այդ կյանքը մարդկանց համար լույս էր:
Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է,
և խավարը նրան չնվաճեց:
Եվ Բանը մարմին եղավ
ու բնակվեց մեր մեջ,
և տեսանք Նրա փառքը, նման այն փառքի, որ Հայրն է տալիս
Միածնին՝
լի շնորհով ու ճշմարտությամբ...
Որովհետև Օրենքը Մովսեսի միջոցով տրվեց,
իսկ շնորհը և ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի
միջոցով եղան:
Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել,
բացի միայն Միածին Որդուց, որ Հոր ծոցում է
Նա՛ հայտնեց Նրան[21]:

Քրիստոսի Աստվածամարդությունը հայտնություն է և՛ Աստծո, և՛ մարդու մասին:

Մարգարեներն արդեն գիտեին, որ ամենայնի Նախապատճառը անդեմ Հզորությունը կամ տիեզերական Կանոնակարգը չէ, անտարբեր, ինչպես տիեզերքի ուժերից ցանկացածը, այլ՝ **Կենդանի** Աստված, մարդկանց հետ խոսող, նրանց Իր կերպարանքն ու նմանությունը շնորհած: Նա փնտրում է համաձայնություն մարդու հետ, կոչում է նրան բարձրագույն կյանքի: Բայց եթե Հին Ուխտում Աստծո ծրագիրը և Աստծո կերպարանքը մնում էին ծածկված, ապա Հիսուսի երևույթը Արարչին մերձեցնում է մարդկանց: Փրկչի միջոցով աշխարհը պետք է ճանաչի, որ Գոյը «սեր է, որ Նա կարող է դառնալ յուրաքանչյուրի համար Հայր: Երկրի անառակ որդիները կանչվում են Հոր տուն, որպեսզի այնտեղ ձեռք բերեն կորուսյալ որդիությունը:

Հանուն դրա աշխարհ է գալիս Մարդու Որդին և Աստծո Որդին, Որը Ինքն Իր մեջ հաշտեցնում է երկինքը և երկիրը: Նոր Ուխտում իրականություն դարձավ այն, ինչը լոկ Հին Ուխտի աղոտ հույսն էր: Այսուհետ հոգևոր միասնացումը Հիսուսի հետ միասնացում է Աստծո հետ:

«Աստված մարդեղացավ, որպեսզի մենք դառնանք աստվածներ»՝ Սբ. Աթանասի այս խոսքերը փոխանցում են Մարմնավորման խորհրդի բուն էությունը:

## ՔԱՎԻՉԸ

«Մարդու Որդին,- ասում է Քրիստոսը,- չեկավ պաշտոն ընդունելու, այլ ծառայելու և Իր անձը տալու որպես փրկանք շատերի փոխարեն»[22]: «Փրկանք», «քավել» բառերը Աստվածաշնչում փրկության հոմանիշ էին, քանզի փրկություն հասկացությունը կապված է ստրկությունից ազատագրվելու և «ԻՐ ժողովուրդը լինելու հետ»[23]: Ինչպես երբեմն Տերը փրկեց հինկտակարանյան Իսրայելը և դարձրեց նրան «իր ժողովուրդը», այդպես էլ Նոր Կտակարանի Եկեղեցին պետք է դառնա Նրա կալվածքը»[24]:

Քավությունը ավելին է, քան արարվածի դարձի ճանապարհը՝ ի վերուստ կանխագծված: Պողոս առաքյալի խոսքերով ասած. «Հեծեծում և երկունքի մեջ սպասում է Աստծո որդիների հայտնությանը»[25]: Փրկված մարդը չի վերացվում մնացյալ արարչագործությունից, այլ գնում է դրա առջևից դեպի «Նոր երկինք ու նոր երկիր»:

Լոգոսի հուրը վառվում է «խավարում», աստիճանաբար համակելով տիեզերքը: Թշնամության և քայքայման թագավորություն Աստված բերում է միասնություն, ներդաշնակություն և սիրո կենարար ուժ: Եվ, բուսականության նման, որը ձգտում է դեպի արևը, բնությունը ունկնդիր է այդ կոչին և հպատակվում է Բանին:

Ինչքան շատ ենք մենք իմանում այսօր աշխարհաստեղծման ընթացքի մասին, այդչափ հստակ է շրջագծվում աստիճաններով դեպի վեր բարձրացող Տիեզերքի պատկերը: Սկզբնապես կառուցվածքների կանոնակարգում, հետո՝ կյանք, և վերջապես՝ մարդ: Պայքարը ոչ մի ակնթարթ չի դադարում: Քայլ առ քայլ Վիշապը նահանջում է դեպի խավարը, յուրաքանչյուր քայլի հետ ավելի է սփռվում լուսաշրջանը:

Երբ մարդը չի իրացնում իր կոչվածությունը, Բանն Ինքն Իրեն բացահայտում է աշխարհին, մարմնավորվելով «Նոր Ադամի» մեջ:

«Աստված այնպես սիրեց աշխարհը, որ տվեց Իր Միածին Որդուն...»:

Բայց Հիսուսի ինքնանվիրումը չէր կարող չդառնալ ողբերգու-

թյուն: Նա, Ով միանում է ընկած աշխարհի հետ, անխուսափելիորեն մասնակից է դառնում Նրա տառապանքին: Այսուհետև յուրաքանչյուր էակի ցավը Նրա ցավն է, Նրա Գողգոթան: Մարդկանց մեջ Հիսուսին սպասում է ոչ թե հաղթանակ, այլ` տանջանքներ և մահ:

Այնտեղ Իր վրա է վերցնում մեղքի բոլոր հետևանքները: Այդ պատճառով էլ Եկեղեցին կոչ է անում Նրա ետևից գնացողներին. «Համբերատարությամբ ընթանանք դեպի մրցասպարեզ, որ բացված է մեր առաջ. նայենք Հիսուսին` հավատի Զորագլխին, այն կատարելագործողին, **Որն Իր առաջ դրված ուրախության համար հանձն առավ Խաչը**»[26]:

Նրա նախակարապետները սրբեր և անցած դարերի մարտիրոսներ էին, որոնց հալածանքի են ենթարկել և մահվան մատնել: Նրանց դեմքերը ձուլվել են Եսայի Երկրորդի միստիկական հայացքին ներկայացված մի փրկչական կերպարի մեջ: Արքաները և ժողովուրդները, ապավինելով երկրային ուժին, քամահրանքով էին նայում Տիրոջ ճշմարիտ Ծառային: Բայց նրանց հարկ եղավ համոզվել, որ հենց այդ մերժված տառապյալին էր ընտրել Աստված:

Ով հավատաց Տիրոջ մասին մեր տված լուրին,
և ում հայտնի դարձավ Տիրոջ բազուկը:
Նրա առաջ մենք հայտնվեցինք որպես մանուկ,
որպես արմատ` ելած անջրդի հողից.
ո՛չ տեսք ուներ Նա, և ո՛չ էլ վեհություն:
Նայեցինք մենք Նրան,
բայց Նա ո՛չ տեսք ուներ և ո՛չ էլ գեղեցկություն:
Նրա տեսքն ավելի անարգ էր ու նսեմ,
քան բոլոր մարդկանց որդիները:
Նա հարվածների ենթակա մի մարդ եղավ
որ ցավերին համբերել գիտե:
Իր երեսը դարձնելով` արհամարհվեց ու բանի տեղ չդրվեց:
Նա մեր մեղքերն էր վերցնում և մեզ համար չարչարվում,
սակայն մենք Նրա ցավերը, հարվածներն ու չարչարանքները
համարեցինք իբրև Աստծուց եկած բան:
Բայց Նա խոցվեց մեր մեղքերի համար
և մեր անօրենությունների համար դատապարտվեց.
մեր խաղաղության համար Նա պատիժ կրեց,
և Նրա` վերքերով մենք բժշկվեցինք:
Ամենքն էլ մոլորված ոչխարներ են



մարդն իր ճանապարհին մոլորվեց,
բայց Տերը Նրա՛ն մատնեց մեր մեղքերի համար:
Ու Նա վշտից Իր բերանն անգամ չի բացում:
Ինչպես ոչխար` Նա մորթվելու տարվեց,
և ինչպես գառ` անմռունչ կանգնած է խուզողի առաջ
և Նրա նման Իր բերանը չի բացվում[27]:

Փրկիչը` նահատակ: Թվում էր, թե դա հնարավոր չէ ընդունել, հասկանալ, տեղը դնել: Հին Ուխտի մարդկանցից քչերը համարձակվեցին բարձրաձայն խոսել այդչափ անհավանականի հնարավորության մասին: Դա դիտվում էր սրբապղծություն: Բայց խոսքը ասված էր և դրոշմված Սուրբ Գրոց մեջ, թողնելով մարդկանց չփոթմունքի և գայթակղության մեջ: Հրեական մեկնիչները շրջանցում էին այն տեղը, ասես ջանալով մոռանալ այդ: Հիսուսը, ընդհակառակը, պարզաբանեց Իր առաքելությունը, վկայակոչելով Տիրոջ Ծառայի մասին եղած մարգարեությունը: «Այսօր այս գրվածքները կատարվեցին ձեր առջև… »:

Նա անցավ երկրով, չնվաճելով մարդկանց Իր հզորության ակներևությամբ: «Այս դարի» մարդկանց աչքում Նա նսեմացվեց. պահպանելով դրանով մարդկային ազատության անձեռնմխելիությունը: Ոչ թե ստրուկներ, այլ որդիներ էր փնտրում Հիսուսը, եղբայրներ, որոնք անշահախնդիր կսիրեն Նրան` արհամարհված ու մերժված, և կգնան Նրա հետևից: Եթե Փրկիչը հայտնվեր «փառքի մեջ», եթե ոչ ոք չկարողանար երես դարձնել Նրանից, դա կլիներ պարտադրանք: Բայց Քրիստոսը սովորեցնում էր այլ կերպ. «Կճանաչեք ճշմարտությունը և այն ձեզ կազատի»:

Հանուն մարդու ազատության` Նա Իրեն պարփակեց անցավորի սահմաններում. այդ օրերին Նա դարձավ «Հորից փոքր» և Ինքն Իր վրա ապրեց աշխարհի ողջ վիշտը:

Շրջապատված տգետ և հաճախ արատի խարանը կրող մարդկանցով, գավառական փոքր քաղաքի Արհեստավորը Իր օրերն անց էր կացնում աղքատների, մաքսավորների, անառակների և բորոտների մեջ: Նա չուներ ոչ զինված ջոկատներ, ոչ էլ ազդեցիկ դաշնակիցներ: Դա էր արդյոք Փրկիչը, Որին դարերով երազել էին մարդիկ:

Փորձաքարը եղավ այն, որ Նազովրեցին չէր խրախուսվում պաշտոնական եկեղեցական իշխանությունների կողմից: Փարիսեցիները կշտամբում էին նրան «Ինքն Իր մասին» վկայելու համար: Դրան Նա պատասխանում էր. «Ես Նա եմ, որ վկայում եմ Իմ մասին, և վկայում է Իմ մասին Հայրը, որ Ինձ ուղարկեց»[28]: Որպեսզի Մարդու Որդին ըն-

դունվի, հարկավոր է հավատի սխրանք։ Միայն սրտով մաքուրներն են «տեսնում Աստծուն»։ Նա բացվում է նրանց Հիսուս Քրիստոսի մեջ, Որին «պետերը» դատապարտեցին որպես կեղծ ուսուցչի։

Հինուխտյան Եկեղեցու դաստիարակները և նվիրապետությունը խուլ մնացին Նրա Ավետարանի հանդեպ և դրանում պատահականություն չկար։ Նրանք մնացին ավանդույթների գերի, որոնք, իրենց կարծիքով, տրված են մեկ անգամ և ընդմիշտ։ Նրանք կասկածի տեղ չէին թողնում իրենց անմեղ լինելու մեջ, սակայն արդյունքում դարձան Աստծո գործի թշնամիներ։ Դա տեղի ունեցավ ոչ միայն նրա համար, որ Աննան և Կայիափան քահանայապետներից վատագույնն էին։ Նվիրապետության կողմից Քրիստոսին մահվան դատապարտելու փաստն ինքը աշխարհի կրոնական պատմության մեծագույն ողբերգությունն է, հավիտենական նախազգուշացում։ Դաժան ճշմարտություն է հնչում Դոստոևսկու «լեգենդում», որտեղ նա պատկերել է Քրիստոսին կրկին աշխարհ եկած և կրկին Իր Եկեղեցու «իշխաններից» դատապարտված։

Նա աշխարհի մեջ էր,
և աշխարհը Նրանով եղավ,
սակայն աշխարհը Նրան չճանաչեց։
Յուրայինների մոտ եկավ,
բայց յուրայինները Նրան չընդունեցին։
Իսկ ովքեր Նրան ընդունեցին,
Նրանց իշխանություն տվեց լինելու Աստծո որդիներ,
նրանց, որոնք Իր անվանը կհավատան[29]։

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԳԱՂՏՆԻՔԻ ԱՌԱՋ

Բայց եթե եկեղեցականները՝ դպիրները և աստվածաբանները, չճանաչեցին Նրան, ինչպես պատահեց, որ Հիսուսը, այնուամենայնիվ, աշակերտներ գտավ։ Մարդկային տրամաբանությունը, «մարմինը և արյունը» իսկապես անզոր էին այստեղ։ Դա հավատի խորհուրդն է, սրբություն սրբոցը, որտեղ հոգին հանդիպում է իր Փրկարարին։ Կասկածները տանջում էին առաքյալների բանականությունը, բայց պայծառ սերը հաղթանակ բերեց հավատին և նրանք խոնարհվեցին հալածված Աստանդականի առջև, ինչպես Փրկչի, Կենդանի Աստծո Որդու առջև։



Պետրոսի խոստովանության պատասխանը եղավ Քրիստոսի մարգարեությունը Եկեղեցու մասին, որը կանգուն կմնա, անգամ եթե չարի բոլոր ուժերը ոտքի ելնեն նրա դեմ[30]։ Իսկ իրեն՝ Սիմոնին Հիսուսը անվանեց «Վեմ», որի վրա այն պետք է հիմնվի։ Ինչպես էլ որ հասկանանք այդ բառերը, դժվար է կասկածել այն բանում, որ Տերը առաքյալների վրա դրեց ինչ-որ բացառիկ առաքելություն։ Այդ պատճառով եկեղեցում ևս այն ընդունվեց «առաջնային և գերագույն»[31]։ Հաճախ հակաճառում են այդ բանի դեմ, վկայակոչելով առաջին համայնքում Պետրոսի բացարձակ հեղինակության բացակայությունը։ Արդարև, նա չի եղել ոչ բռնակալ, ոչ Եկեղեցու «իշխան»՝ բառի երկրային իմաստով։ Բայց միթե Քրիստոսն Ինքը ամենայն որոշակիությամբ չմերժեց այդպիսի իշխանության ցանկացած հավակնություն։ Հիսուսն ասում է՝ թող որ արքաները տիրապետություն ունենան ժողովուրդների վրա, իսկ «ձեր միջև թող այդպես չլինի»։ Այդ պատճառով էլ, ոչ թե փառամոլ «առաջնորդի», այլ համեստ ձկնորսին ասվեց. «Արածացրո՛ւ Իմ գառներին»։ Միայն Աստծո Հոգու ներգործությունը նրան հետո վերածեց Քրիստոսի հովվի։ Փիլիպպյան Կեսարիայի այն զրույցի ժամանակ Պետրոսը ամենևին էլ դեռ չէր դարձել Եկեղեցու «վեմ»։ Այդ պատճառով էլ անմիջապես Հիսուսը նրա մտքերին տվեց այլ ուղղություն։ Արգելելով հրապարակ հանել փրկչական գաղտնիքը, Նա խոսքը տարավ Իր տառապանքների և մահվան մասին[32]։

Լսելով այդ, Պետրոսը տխրեց։ Նա Հիսուսին կանչեց մի կողմ և իրեն հատուկ անմիջականությամբ որոշեց սրտապնդել Նրան. «Քավ լիցի, Տե՛ր, Աստված ողորմած է Քո հանդեպ, այդ Քեզ չի պատահի»։ Բայց աշակերտների խոսքերը միայն կարող էին խոցել Հիսուսի հոգին։ Միթե Նա Ինքը նույնպես չէր ցանկանում, որպեսզի «բաժակը Իրենից հեռու անցնի»։ Միթե ձգտում էր այն բանին, որ մարդիկ դառնային Փրկչի սպանողներ։ Բայց Նրան վիճակված էր կամովին մինչև վերջ խմել քավության գավաթը...

«Ետևս գնա, սատանա*, դու գայթակղություն ես Ինձ համար, որովհետև Աստծունը չես խորհում, այլ՝ մարդկանցը»։

Պետրոսը շփոթված լռեց, իսկ Հիսուսն սկսեց խոսել, դիմելով արդեն Տասներկուսին։ Նրանք պետք է պատրաստ լինեն ամեն ինչի։ Մոտենում է փորձառությունների ժամը։ «Եթե մեկը կամենում է Իմ ետևից գալ, թող ուրանա իր անձը և իր խաչը մշտապես վերցնի և գա Իմ ետևից»։ Արքայության ճանապարհն անցնում է անձի հանդեպ հաղթա~~նակ տանելով։ Փրկիչը կդ~~առնա զոհ, բայց և Իր հետևորդները պետք

** Արամեերեն՝ հակառակորդ, հակառակվող։

է ընդօրինակեն Նրան: Միայն այդ ժամանակ նրանք կարող են դառնալ փրկչական հաղթանակի մասնակիցներ: «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այստեղ գտնվողների մեջ կան ոմանք, որոնք մահը չեն ճաշակի, մինչև որ չտեսնեն Մարդու Որդուն՝ եկած Իր Արքայությամբ»[33]:

Դա նշանակում էր, որ աշխարհի վերջը կգա այդ սերնդի օրոք արդեն: Աշակերտներից շատերը հենց այդպես էլ հասկացան Հիսուսին: Մինչդեռ Նա խոսում էր ոչ այնքան գալիքի, որքան այն մասին, թե ինչ է կատարվելու հիմա, ինչը սկսել էր դեռ Նրա քարոզի առաջին օրերից: Քրիստոսի ցանած սերմերը կաճեն, հատիկը կդառնա ծառ, իսկ միևնույն ժամանակ Դատաստանը արդեն տեղի է ունենում, նոր ժամանակաշրջանը արդեն եկել է:

Անցավ մի քանի օր: Մոտեցավ Տաղավարահարաց կամ Կոչչեի տոնը, որը, սովորության համաձայն, հարկ էր անցկացնել շիվերից պատրաստած վրաններում: Ուխտավորները պատրաստվում էին գնալ Երուսաղեմ: Եվ այնտեղ տեղի ունեցավ ևս մեկ անսովոր երևույթ: Պետրոսին, Հակոբին և Հովհաննեսին տրված էր տեսնել վարագույրը մի քիչ բացված և հայել Քրիստոսի գերմարդկային փառքը[34]: Հավանական է, սարսափների նախաշեմին, Նա ցանկանում էր հոգեպես ամրացնել ամենամոտիկներին, իմանալով, թե ինչպիսի փորձություններ են սպասվում առջևում:

Մի անգամ, վերցնելով նրանց Իր հետ, Հիսուսը բարձրացավ բարձր մի լեռ, այն ժամանակ, երբ մյուսները հանգստանում էին ստորոտում: Մինչ Նա աղոթում էր, Պետրոսը, Հակոբը և Հովհաննեսը Նրա կողքին տեղավորվելով, նիրհեցին: Երբ արթնացան, նրանց ապշեցրեց Ուսուցչի հետ կատարված փոփոխությունը: Աղոթքից հետո Նրա դեմքից երկնային լույս էր ճառագում: Անգամ Հիսուսի հագուստը դարձել էր շլացուցիչ սպիտակ: Երկու անծանոթներ զրուցում էին Նրա հետ: Լրիվ չըմբռնելով, առաքյալները հասկացան, որ հնագույն մարգարեներ են հայտնվել Նրան այլ աշխարհից: Սարսափը փոխարինվեց խաղաղության, երջանկության, Աստծուն մոտ լինելու զգացողությամբ... Տեսնելով, որ այդ երկուսը հեռանում են, աշակերտները դողդողացին, վախենալով կորցնել այդ րոպեի աներտահայտելի երանությունը: «Ռաբբի,- սկսեց խոսել Պետրոսը,- լավ է, որ մենք այստեղ լինենք և երեք տաղավարներ շինենք. մեկը՝ քեզ, մեկը՝ Մովսեսի և մեկն էլ՝ Եղիայի համար»: Նա չիմացավ ինչ ասի, նրան թվաց, որ հասավ Տաղավարահարաց ծեսի կատարելու ժամը...

Թե ինչ տեղի ունեցավ հետո, աշակերտներից ոչ մեկը պարզորոշ



չհասկացավ: Դա Մշտնջենականի Փառքը Ինքն էր, լուսավոր ամպը Աստվածներկայության, և բոլորի համար վերևից մի ձայն հնչեց. «Նա է Իմ սիրելի Որդին, Նրան լսեցեք» բառերը:

Իսկ հաջորդ ակնթարթին փայլը խավարեց, առաքյալները Ուսուցչին տեսան ինչպես որ առաջ էր:

Նա մենակ կանգնած էր լեռան գագաթին:

Պետրոսը, Հակոբը և Հովհաննեսը հազիվ կարողացան ուշքի գալ: Հիսուսը մոտեցավ նրանց՝ ասաց. «Ոտքի՛ ելեք և մի՛ վախեցեք» և սկսեց իջնել ներքև: Ասես թե երազում,, նրանք հետևեցին Նրան: Ճանապարհին Հիսուսը խնդրեց լռությունը և պատվիրեց տեսածը գաղտնի պահել «մինչև Մարդու Որդին մեռելներից հարություն առնի»:

Զհամարձակվելով դիմել Նրան, աշակերտները մեկը մյուսին շշուկով հարցնում էին. «Թե ինչ է մեռելներից հարություն առնելը... »:

ՄԱՍ III

# ԳՈՂԳՈԹԱՅԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Գլուխ տասնմեկերորդ

# ԲԱԶՈՒՄ ԵՆ ԿՈՉՎԱԾՆԵՐԸ, ՍԱԿԱՅՆ՝ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ

29 թ. սեպտեմբեր- դեկտեմբեր

Եթե անգամ Պետրոսի խոստովանությունից հետո առաքյալները պատրաստ չէին աստվածամարդության խորհուրդը ըմբռնելու, ապա ինչ էին այդ դեպքում նրանք դնում «Փրկիչ» բառի մեջ: Ով էր նրանց համար Հիսուսը իրենց աշակերտության երեք տարիների ընթացքում:

Չնայած յուրաքանչյուր օր, որ Տասներկուսը անց էին կացնում Նրա հետ, լցված էր լինում Աստծո մերձավորության զգացողությամբ, այնուամենայնիվ այդ զգացողության ճշմարիտ իմաստը սպրդում էր նրանից: Զկիսելով զելոտների քաղաքական արմատականությունը, առաքյալները շարունակում էին հավատալ, որ Քրիստոսը «Նա է, Որը փրկելու է Իսրայելը»[1]: Աշխարհի տառապյալ Փրկչի մասին միտքը չէր տեղավորվում աշակերտների գիտակցության մեջ: Նրանց հոգեհարազատ էր վախճանաբանության ահեղ Փրկիչը և նրանք հույս էին տածում, որ Աստծո Արքայությունը հիմնելով Երուսաղեմում, Մարդու Որդին կհայտնվի ժողովուրդներին երկրային հաղթանակի անխորտակելի հզորությամբ: Մի խոսքով, այդ օրերին Տասներկուսը գտնվում էին ժողովրդական հավատալիքների փրկչականությունից դեպի ավե-

տարանական փրկչականության կեսճանապարհին:

Քրիստոս Ինքը չէր ժխտում, որ իր գալուստը կանխասվել է մարգարեություններում, որ Իր մեջ իրականացել են Հին Ուխտի սպասումները: Իր ծառայությունը Նա հաճախ պարզաբանում էր Աստվածաշնչի սրբազան տեքստերի օգնությամբ: Դա Նրա հետևորդներին օգնում էր պահպանել կապը ավանդույթների հետ և աստիճանաբար խորացնել իրենց պատկերացումները Փրկչի մասին:

Ընդ որում, Գրքերի շուրջ խոկումները հաճախ հանգում էին անհասկանալիության: Այսպես. դեռ Գոլանում առաքյալները Հիսուսին հարցրին Եղիա մարգարեի մասին: Գտնում էին, որ հավատի համար այդ հնագույն մաքառողը չի մահացել, այլ գտնվում է Աստծո գրկում, և երբ գա նշանակված ժամը, նա վերստին կերևա Իսրայելին և կտա նրան իր Ազատարարի անունը[2]: Աշակերտները շվարել էին՝ եթե Հիսուսը Փրկիչն է, ապա ինչու չի հայտնվում Եղիան: «Ձեզ ասում եմ,- պատասխանեց Հիսուսը,- որ Եղիան արդեն իսկ եկել է, բայց նրան չճանաչեցին, այլ ինչ որ կամեցան, արեցին նրան»:

Պարզ էր, որ խոսքը գնում է Հովհաննես Մկրտչի մասին: Բայց Վարդապետի դրանից հետո ասած. «Նույնպես և Մարդու Որդին նրանց ձեռքով չարչարվելու է» խոսքը աշակերտներին ստիպեց ականջները սրել[3]: Ինչու է Նա նորից խոսում այդ մասին: Որ կողմից է Նրան վտանգ սպառնում: Նոր ոճրագործության կգնա արդյոք Հերովդեսը: Բայց չէ որ առանց այդ էլ նա կարողացավ հարուցել գայրույթ ժողովրդի մեջ: Իսկ եթե ոչ չորրորդապետը, հապա, էլ ով: Միթե Աստծո նշանակած հովիվները: Ճիշտ է, նրանցից շատերը անվստահությամբ էին վերաբերվում Հիսուսին, բայց Աստված թույլ կտա, որպեսզի Իր սպասավորները պատերազմի դուրս գան Փրկչի դեմ: Կարող է պատահել, որ որոշ ժամանակ անց նրանք ևս ուշքի գան և հասկանան, որ գալիլեացի Վարդապետը, հիրավի, երկնքից ուղարկված է:

Իմանալով այդ տարակուսանքների մասին, Քրիստոսը աշակերտներին բացատրում էր, որ այսուհետև «առաջինները դարձել են հետիններ», և հովիվները վերածվել են գայլերի: Նախքան Հիսուսին որպես Աստծո կենդանի հայտնության ճանաչելը, քահանայապետերը և օրինապահները պետք է Նրան ընդունեն գոնե որպես Մարգարեի: Սակայն այդ բանն անելուն նրանց խանգարում էին կայունացած տեսակետները և խոցված դասային հպարտությունը: Նրանց միակ ցանկությունն էր՝ ինչքան հնարավոր է շուտ ազատագրվել Նազովրեցուց:

Այդ կապակցությամբ Քրիստոսը նորովի վերապատմեց խնջույքի



կանչվածների մասին առակը[4]: Մի թագավոր իր որդու հարսանիքն էր անում: Նա ծառաներին ուղարկեց երևելի մարդկանց հրավիրելու հանդեսին: Սրանք, որպես պատասխան, անարգեցին ուղարկվածներին, ոմանց էլ սպանեցին: Զայրացած տիրակալը պատժեց վիրավորողներին, սակայն հարսանեկան հանդեսը չկամեցավ հետաձգել: Նա հրամայաց ծառաներին, որպեսզի խնջույքին մասնակցելու համար պալատ հրավիրեն բոլորին, ում որ պատահեն, ընդհուպ պատահական անցորդներին ու մուրացկաններին:

Գիտունները և հոգևոր հովիվները չընդունեցին Ավետարանները, իսկ նրանց փոխարեն դեպի Քրիստոսն էին հոսում «ամ-հարեցները», աղքատ մարդիկ ժողովրդի միջից, «մաքսավորները և մեղավորները»:

Ընդ որում, ոչ բոլոր կանչվածներն են արժանանալու Աստծո օրհնությանը: Այդ է ասում առակի եզրափակիչ դրվագը: Երբ թագավորը նկատեց, որ հյուրերից մեկը, սովորույթին հակառակ, սեղան էր նստել անմաքուր հագուստով, դա դիտեց որպես արհամարհանք իր և դահաժառանգի հանդեպ և հրամայեց այդ անտաշին վռնդել պալատից: Հետևապես, Աստծո Արքայությունը նախասահմանված է ոչ թե պարզապես աղքատների, այլ նրանց համար, ովքեր պատրաստ են կատարել Քրիստոսի պատվիրանները: Ահա թե ինչու «կանչվածները բազում են, իսկ ընտրյալները՝ սակավ»:

Այն հարցին՝ «Ճշմարիտ է, որ սակավաթիվ են նրանք, որ փրկվելու են», Հիսուսը պատասխանեց.

**Ջանացե՛ք մտնել նեղ դռնով. ասում եմ ձեզ,**
**որ շատերը կուզենան մտնել, բայց չեն կարողանա:**
**Այն բանից հետո, երբ տանտերը մտնի և դուռը փակի,**
**դուք, դրսում կանգնած, կսկսեք դուռը բախել և ասել.**
**«Տե՛ր, Տե՛ր, բա՛ց մեզ համար».**
**Իսկ Նա պատասխանելով կասի ձեզ. «չգիտեմ, թե որտեղից եք»:**
**Այն ժամանակ կսկսեք ասել.**
**«Մենք Քո առաջ կերանք և խմեցինք,**
**և Դու հրապարակներում ուսուցանեցիր»:**
**Եվ Տանտերը կասի. «ասում եմ՝ ձեզ չգիտեմ, թե որտեղից եք.**
**հեռացեք ինձնից դուք՝ բոլոր անիրավ մշակներդ»:**
**Այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում,**
**երբ տեսնեք Աբրահամին, Իսահակին, Հակոբին**
**և բոլոր մարգարեներին Աստծո Արքայության մեջ,**
**իսկ ձեզ՝ դուրս հանված[5]:**

Քրիստոսը յուրաքանչյուրից պահանջում էր հոգևոր և բարոյական սխրանք, «ջանքեր»: Ինչպես երբեմն փորձում են ներկայացնել, Նա բոլորովին էլ չի եղել «դեմոկրատ», որի համար ընչազուրկների դասակարգին պատկանելն արդեն վաստակ էր: Դրանով է բացատրվում Հիսուսի սառնությունը ժողովրդի հիացմունքի բուռն դրսևորումների հանդեպ: Զանգվածային խանդավառությունը դյուրությամբ բռնկվում է և դյուրությամբ էլ իր որսն է դարձնում բոլոր նրանց, ովքեր ծարավ են ենթարկվելու և կուռքեր են փնտրում: Արքայության զավակները չպետք է լինեն այդպիսին:

Բազմության կրքերին ընդառաջ գնալը և ժողովրդականություն վայելող առաջնորդի դեր ստանձնելուց հրաժարվելը, ըստ երևույթին, նպաստեց Գալիլիայում Նրա ազդեցության անկմանը: Դրա վրա էլ շտապեցին խաղալ հակառակորդները և շուտով հասան իրենց նպատակին: Երբ Ուսուցիչը վերադարձավ Գոլանից, մթնոլորտը կտրուկ փոխվեց: Պարզ դարձավ, որ ինչ-որ մեկը մարդկանց հանում է Նրա դեմ: Նրան արդեն չէին թողնում, ինչպես առաջ, ազատ քարոզել ժողովարաններում: Եկեղեցական բանադրանքի Նա չէր ենթարկվել, բայց այդ պատժով սպառնում էին Նրա բոլոր համախոհներին:

Այդ ժամանակ Հիսուսն ստիպված եղավ ընդմիշտ թողնել Կափառնայումը: Նրան վախենում էին ընդունել նաև հարևան ծովեզրյա քաղաքները: Թե ինչ էր այնտեղ կատարվել, անհայտ է, բայց Քրիստոսի խոսքերից հետևում է, թե ինչքան եռանդով էին Նրա թշնամիները մեքենայություններ անում.

Վա՜յ քեզ, Քորազին, վա՜յ քեզ, Բեթսայիդա,
որովհետև եթե Տյուրոսում և Սիդոնում
տեղի ունեցած լինեին այն զորավոր գործերը,
որ ձեր մեջ արվեցին,
վաղուց արդեն քուրձով և մոխրով ապաշխարած կլինեին:
Բայց ասում եմ ձեզ,
Տյուրոսի և Սիդոնի երկրի համար
ավելի տանելի կլինի դատաստանի օրը,
քան ձեզ համար:
Եվ դո՛ւ, Կափառնայում, միթե մինչև երկինք պիտի բարձրանաս,
ո՛չ պիտի իջնես մինչև դժոխք.*
որովհետև եթե Սոդոմում եղած լինեին այս զորավոր գործերը,

* Համտ. Եսայի 14, 13-15:



որ եղան քո մեջ,
արդարև մինչև այսօր նրանք կանգուն կլինեին:
Բայց ասում եմ ձեզ, որ սոդոմացիների երկրի համար
դատաստանի օրը ավելի տանելի կլինի,
քան ձեզ համար[6]:

Քրիստոսի ճանապարհը Նազարեթ նույնպես փակ էր: Երբ Նա երկրորդ անգամ փորձեց այնտեղ քարոզել, քիչ էր մնում սպանեին Նրան[7]: Օղակը արագ նեղանում էր: Հիմա արդեն կարելի էր սպասել չորրորդապետի միջամտությանը, բայց զգուշավոր Անտիպասը նախընտրում էր զերծ մնալ: Իր կառավարչից, որի կինը Քրիստոսի աշակերտներից էր, Հերովդեսը կարող էր իմանալ Նրան հասած դժվարությունների մասին: Մի պահ եղավ, երբ նա ցանկացավ Նազովրեցուն տեսնել, բայց հետո գտավ, որ ավելի լավ կլինի, որ Նա լքի իր տերությունը.

Այդ նպատակով, Հերովդեսը փարիսեցիներից ոմանց հայտնեց, որ պատրաստվում է ձերբակալել և պատժել Հիսուսին: Նրանք շտապեցին Ուսուցչի մոտ և ասացին Նրան. «Վե՛ր կաց, գնա՛ այստեղից, որովհետև Հերովդեսն ուզում է Քեզ սպանել»: Սակայն Հիսուսն անմիջապես նկատեց չորրորդապետի խորամանկությունը.

Գնացեք ասացե՛ք այն աղվեսին,
թե ահա դևեր եմ հանում,
բուժումներ եմ կատարում այսօր և վաղը,
իսկ երրորդ օրը գործս կավարտեմ...
որովհետև մարգարեն պետք չէ,
որ Երուսաղեմից դուրս կորստյան մատնվի[8].

Դժվար է հետևել Քրիստոսի անցած ուղուն այն բանից հետո, երբ Նա դարձավ հալածված Աստանդական: Նա ապաստան էր գտնում մեկ այս, մեկ այն գյուղում, բայց ոչ մի տեղ չէր մնում երկար ժամանակով: Երբ մի դպիր Նրան ասաց. «Վարդապետ, կգամ Քո ետևից, ինչ տեղ էլ գնաս», լսեց դառնությամբ լեցուն պատասխան. «Աղվեսները որջեր ունեն, և երկնքի թռչունները՝ հանգստանալու տեղ, բայց Մարդու Որդին գլուխը դնելու տեղ չունի»[9]:

Հիսուսի ճակատագիրը սկսեց անհանգստացնել հարազատներին: Զնայած եղբայրները թերահավատությամբ էին նայում Նրա գործունե-

ությանը, այնուամենայնիվ, նրանք բնավ էլ վատ բան չէին ցանկանում Նրան: Երբ Նա ժողովրդականություն էր վայելում, հավանաբար, այդ բանը շոյում էր նրանց: Արդ, տեսնելով, որ Գալիլիայում Հիսուսը անհաջողության հանդիպեց, նրանք առաջարկեցին Նրան իրենց հետ գնալ Երուսաղեմ մասնակցելու Տաղավարահարաց տոնակատարությանը և հայտարարել այնտեղ Իր մասին:

– Այստեղից անցի՛ր գնա՛ Հրեաստան,– ասացին եղբայրները անհաջող քողարկված հեգնանքով,– որպեսզի քո աշակերտներն էլ տեսնեն այն գործերը, որ դու անում ես. որովհետև չկա մեկը, որ թաքուն գործի և դեռ ուզենա իրեն համարձակ ներկայացնել. եթե այդ գործերն անում ես, ուրեմն հայտնի՛ր քեզ աշխարհին...

– Ես այդ տոնին չեմ գնում,– պատասխանեց Հիսուսը,– որովհետև Իմ ժամանակը դեռ չի լրացել:

Այնուամենայնիվ, երբ եղբայրները գնացին, Հիսուսը ուղևորվեց Երուսաղեմ, «բայց ոչ հայտնապես, այլ` թաքուն»[10]:

Մայրաքաղաք այցելելու Իր մտադրությունը Նա պարզաբանեց աշակերտներին, դիմելով առակի:

«Մի մարդ իր այգում մի թզենի էր տնկել և եկավ նրա վրա պտուղ փնտրելու ու չգտավ: Այգեգործն ասաց. « Ահա երեք տարի է, որ գալիս եմ այդ թզենու վրա պտուղ փնտրելու և չեմ գտնում. արդ, կտրի՛ր այդ, ինչու է հողն զբաղեցնում»: Այգեգործը պատասխանեց և ասաց. «Տե՛ր իմ, նրան այս տարի էլ թո՛ղ, մինչև որ նրա շուրջը փորեմ և աղբ գցեմ. գուցե թե պտուղ տա, ապա թե ոչ` մի տարուց հետո կկտրես այդ»[11]:

Մի խոսքով. Հիսուսը ցանկացավ մեկ անգամ ևս փորձել Երուսաղեմը, նախքան կգային ճակատագրական օրերը:

Ցանկանալով ուշադրություն գրավել, Նա ճամփորդության համար ընտրեց մի ճանապարհ, որով ուխտավորները շատ հազվադեպ էին անցնում: Նրանք զգուշանում էին սամարացիների թշնամությունից և նախընտրում էին գնալ Հորդանանի արևելյան ափով: Հիսուսն աշակերտների հետ ուղևորվեց ոչ թե շրջանցելով, այլ ուղղակի Սամարիայով:

Երբ գիշերը վրա հասավ, Նա առաքյալներին ուղարկեց իրենից առաջ` գիշերելու տեղ փնտրելու համար: Բայց սամարական գյուղում հասկացան, որ ուխտագնացության գնացող հրեաներ են, և հրաժարվեցին տուն թողնել: Հոգնած և վրդովված Հովհաննեսը և Պետրոսը դարձան Ուսուցչին.



– Տե՛ր, կամենում ես, որ ասենք, և երկնքից կրակ իջնի ու բնաջինջ անի նրանց:

– Չգիտեք ի՛նչ հոգուց եք դուք,– առարկեց Հիսուսը,– որովհետև Մարդու Որդին չեկավ մարդկանց հոգիները կորստյան մատնելու, այլ` փրկելու[12]:

Ի վերջո, ինչ-որ գյուղում նրանց ապաստան տվեցին: Իսկ մի քանի օր անց, ճամփորդները խառնվելով բազմությանը, բոլորից աննկատ, մտան մայրաքաղաքի դարպասներից ներս:

Տաղավարահարաց տոնակատարությունը ընթանում էր արդեն չորս օր և իր եռուն շրջանում էր: Անընդհատ հնչում էր մարդկային ժխորը խլացնող երաժշտություն, փողհարություն: Մորիա լեռան վրա տարածվել էին ողջակեզների ծխի քուլաները: Հաջողությամբ ավարտելով հունձը, ժողովուրդը ուրախանում ու երգում էր, քեֆ էր անում և աղոթում: Քաղաքի բոլոր ազատ տեղերում ճյուղերից ձեռաց սարքված վրաններ էին սփռված: Դրանց կողքին կանգնած էին ուղտեր, սայլեր և ջորիներ: Երուսաղեմը նմանվում էր քոչվորական ճամբարի:

Երեկոները ուխտավորները տեղավորվում էին տաճարի բազմաթիվ կից շինություններում` լսելու իմաստունների խոսքերը, հանդստանալու, նորություններ փոխանակելու: Իսկ նորությունները շատ էին. հրեաների և եգիպտացիների բախումները Ալեքսանդրիայում, Սաբինի մահապատիժը` «մեծություններին վիրավորելու» համար, Փրիգների ընդվզումը, գալիլեացիների հետ Պիղատոսի հաշվեհարդար տեսնելը: Աշխույժ կարծիքների փոխանակման առարկա էր նաև Ռաբբին` Նազարեթից: «Լավն է»,– ասում էին ոմանք, իսկ մյուսները ուսերը թոթվելով` «Նա ժողովրդին մոլորեցնում է»[13]: Ընդ որում, ինչ-որ ժամանակից սկսած` այդ թեման Երուսաղեմում սկսեցին համարել վտանգավոր: Մարդիկ վախենում էին իրենց նկատմամբ հարուցել ավագների նախատինքը:

Հանկարծ ներկաների ուշադրությունը գրավեց սրահի անկյուններից մեկում տեղի ունեցող դպիրների վիճաբանությունը: Բոլորին ապշեցրեց գալիլիական առոգանությամբ խոսող անծանոթ Մարդը: «Սա ինչպես գիտե Գրվածքները, քանի որ բնավ չի սովորել»,– զարմանում էին դպիրները: «Իմ ուսուցումն Իմը չէ, այլ Նրանը, Ով Ինձ ուղարկեց»,– պատասխանեց Նա:

«Սա չէ Նա, Որին ուզում էին սպանել»,– կռահում էին երուսաղեմցիները: Բայց ինչպես է, որ բացահայտորեն է գործում: Նրանք, ում

համար ամենից կարևոր էր ունևորների իշխանությունների կարծիքը, անհանգստանում էին՝ «Գուցե արդարև իշխանավորներն էլ ճանաչեցին, թե սա է Քրիստոսը»: Նրանց ընդհատում էին Գալիլեայից եկածները.

– Բայց մենք Սրան գիտենք, թե որտեղից է, իսկ Քրիստոս երբ որ գա, ոչ ոք չի գիտենա, թե որտեղից է:

– Ե՛վ Ինձ գիտեք, և՛ գիտեք որտեղից եմ,– շուռ գալով նրանց կողմը՝ ասաց Ուսուցիչը,– Ինքս Ինձ չեմ եկել, այլ ճշմարիտ է Նա, Ով Ինձ ուղարկեց. Նա, Որին դուք չգիտեք:

Կարծիքները կիսվեցին: Ոմանք առաջարկում էին բռնել այդ հերետիկոսին և տանել ավագերեցների մոտ, մյուսները, Նրա բուժումների երբեմնի վկաները, պաշտպանում էին Նազովրեցուն: Նա շարունակում էր խոսել նրանց համար անծանոթ ճանապարհի մասին, որը Ինքը պետք է անցնի՝ կատարելով Հոր կամքը:

– Ինձ կփնտրեք և չեք գտնի, և ուր Ես եմ գնում, դուք չեք կարող գալ:

– Իսկ Դա ուր պիտի գնա,– ծաղրանքով նկատում էին դպիրները,– միթե հեթանոսների մեջ ցրված հրեաների մոտ պիտի գնա և հեթանոսներին պիտի ուսուցանի:

Նրանք փութացին հաղորդել Կայիափային, որ Հիսուսը հայտնվել է քաղաքում: Սա անմիջապես Տաճարի պահազորը ուղարկեց Նրան ձերբակալելու հրամանով: Վերջապես ինքնակոչը իր ձեռքում է: Սակայն ուղարկվածները ձեռնունայն ետ եկան:

– Ինչու Նրան այստեղ չբերեցիք,– խստորեն հարցրին ավագերեցները:

– Ոչ մի մարդ երբեք այնպես չի խոսել, ինչպես այդ Մարդը,– արդարացան սպասավորները:

– Միթե դուք էլ եք մոլորվել: Միթե իշխանավորներից կամ փարիսեցիներից որևէ մեկը հավատաց Նրան, բացի այն խաժամուժ ամբոխից, որ Օրենքը չգիտե և նզովյալ է:

Փարիսեցի Նիկոդեմոսը վկա էր խոսակցությանը:

– Միթե մեր Օրենքը դատապարտում է մարդուն, եթե նախ նրանցից լսած և կամ իմացած չլինի, թե ինչ է գործել նա:

– Միթե դու էլ Գալիլեացի ես, քննի՛ր ու տե՛ս, որ Գալիլեայից մարգարե դուրս չի գալիս:

Սակայն այս անգամ արդեն քահանայապետ Կայիափան ոչինչ չհամարձակվեց ձեռնարկել: Հիսուսը, երբ գիշերն իջավ, դուրս եկավ



արևելյան դարբասներից Ձիթենյաց լեռան ուղղությամբ:

Եթե Երուսաղեմում Նա շրջապատված էր խորթ և թշնամական պայմաններով, ապա Ձիթենյաց լեռան վրա Նա պետք է իրեն զգար ինչպես լավագույն գալիլեական օրերում: Այստեղ, ձիթապտղի այգիների մեջ թաղված մի գյուղակում, ապրում էին Նրա բարեկամները և հետևորդները: Բեթանիան արդեն վաղուց, Նրա առաջին այցելությունից հետո, դարձել էր իր տեսակի քրիստոնեական կենտրոն: Այստեղ էին հավաքվում Հիսուսին հավատարիմ մարդիկ: Ղազարոսի և Բորոտ Սիմոնի տանը Նա կարող էր հանգստանալ մերձավորների և Իրեն սիրողների միջավայրում:

Ժամանակ առ ժամանակ Ուսուցիչը գալիս էր Երուսաղեմ, որը գտնվում էր այդտեղից երեք կիլոմետր հեռավորության վրա: Այստեղ Նա ձգտում էր ստվերում մնալ, կարծես թե մյուս դաստիարակների ու ռաբբիների տեսադաշտից դուրս մնացած: Նրա կողքին միայն աշակերտներն էին և մի քանի գալիլեացի. երբեմն նրանց էին միանում պատահական ունկնդիրներ: Իշխանությունները առայժմ հրաժարվում էին Հիսուսին կալանքի վերցնելու փորձից: Կամ նրանք հարմար պատրվակ չէին գտնում կամ հույս էին տածում, որ նոր աղանդն ինքն իրեն կկազմալուծվի:

Միայն մի անգամ Հիսուսի քարոզը հանգեցրեց բացահայտ բախման:

Տաղավարահարաց տոնակատարությունը ավարտվում էր աշնան Թշիրի ամսի 22-ին: Այդ օրը ղևիները վերջին անգամ վառեցին հսկայական ջահերը, որոնց կրակները լուսավորում էին քաղաքը հանդիսության պահին: Գավիթներից մեկում նստած՝ Քրիստոսը խոսում էր տոնի խորհրդանիշների՝ լույսի և ջրի մասին[14]: Ջուրը հեղելու ծեսը հիշեցնում էր Թափառումները անապատում, երբ Մովսեսը աղբյուր հանեց ծարավածների համար: Ջուրը կյանքի նշան է, որը շնորհում է Տիրոջ խորիմաստությունը: Բայց հետայսու Ինքը՝ Փրկիչը, կտա հավիտենական կյանքի ջուր: Նա կոչում է մարդկանց Դեպ Իրեն, ինչպես երբևէ կանչում էր որիմաստությունը. «Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա և խմի»:

Ճրագները նշանակում են Օրենքի լույսը: Սակայն Փրկչից բխող լույսը ճառագում է ավելի պայծառ: «Ես եմ աշխարհի լույսը. ով Իմ ետևից է գալիս, խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը»:

Այսպիսի խոսքերից հետո աստվածավախ մարդիկ, չկամենալով

մասնակցել զրույցին, հեռանում էին սրտմտությամբ լեցուն: Մնում էին միայն նրանք, ովքեր պատրաստ էին լսել Ուսուցչին: Սակայն նրանք էլ երկար չէին դիմանում:

-Եթե դուք Իմ ուսուցմանը հավատարիմ մնաք,- ասաց Հիսուսը,- Իմ ճշմարիտ աշակերտները կլինեք: Եվ կճանաչեք ճշմարտությունը, և ճշմարտությունը ձեզ կազատի:

Նման արտահայտությունը նրանց տարօրինակ և վիրավորական թվաց:

- Աբրահամի որդիներ ենք և երբեք ոչ ոքի չենք ծառայել: Ինչպես ես ասում, թե՝ «ազատ կլինեք»:

- Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, թե ամեն ոք, որ մեղք է գործում, մեղքին ծառա է: Եվ ծառան հավիտյան տան մեջ չի մնում, իսկ որդին հավիտյան մնում է: Իսկ արդ, եթե Որդին ձեզ ազատի, ճշմարտապես ազատ կլինեք:

- Մեր Հայրը Աբրահամն է,- համառորեն կրկնեցին նրանք հայրենասերների հպարտ նշանաբանը, չհասկանալով, թե ինչի մասին է խոսքը: Նրանց անբավականությունը գնալով րոպե առ րոպե խորանում էր:

- Եթե Աբրահամի որդիներ լինեիք, Աբրահամի գործեր կգործեիք: Իսկ այժմ ուզում եք սպանել մի Մարդու՝ Ինձ, որ ձեզ խոսեցի ճշմարտությունը, որ լսել եմ Իմ Հորից. այդ բանը Աբրահամը չարեց, դուք ձեր հոր գործերն եք անում:

Նրանք նորից չհասկացան: Ոմանց թվաց, թե Նա չափազանցում է Իր վրա կախված վտանգը. «Քո մեջ դև կա. ով է քեզ փնտրում սպանելու»: Մյուսները խորապես վիրավորված էին ասածից:

- Մենք պոռնկությունից չենք ծնվել. մեր Հայրը մեկ է՝ Աստված:

-Եթե Աստված ձեր Հայրը լիներ,- առարկեց Հիսուսը,- Ինձ իրապես կսիրեիք, որովհետև Ես Աստծուց ելա ու եկա... ինչու դուք Իմ խոսածը չեք հասկանում, որովհետև Իմ խոսքը չեք կարող լսել: Դուք հոր կողմից սատանայի զավակներ եք, և ձեր հոր ցանկություններն եք ուզում կատարել, թեև նա ի սկզբանե մարդասպան էր...

- Մենք լավ չենք ասում, թե՝ սամարացի ես Դու, և Քո մեջ դև կա:

Նրանց արդեն համակեց իսկական կատաղությունը:

- Իմ մեջ դև չկա, այլ պատվում եմ Իմ Հորը, իսկ դուք անարգում եք Ինձ: Ես Իմ փառքը չեմ փնտրում. կա Մեկը, որ այն փնտրում է և դատում: Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե մեկը Իմ խոսքը պահի, մահ չի տեսնի հավիտյան:



- Այժմ իմացեք, որ քո մեջ դև կա... Միթե Դու ավելի մեծ ես, քան մեր հայրը՝ Աբրահամը, որ մեռավ. մեռան և մարգարեները. արդ, Դու Քեզ ում տեղն ես դնում:

- Եթե Ես փառավորեմ Իմ անձը, Իմ փառքը ոչինչ է. Հայրն է, որ Ինձ փառավորում է, և որի մասին դուք ասում եք, թե՝ մեր Աստվածն է, ու չեք ճանաչում Նրան: Բայց Ես ճանաչում եմ Նրան... Աբրահամը՝ ձեր հայրը, ցանկացավ Իմ աշխարհ գալու օրը տեսնել:

- Դեռ հիսուն տարեկան չկաս Դու և Աբրահամին ես տեսել:

- Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, Ես եմ, նախքան Աբրահամի լինելը:

ԵՍ ԵՄ... այդպես կարող է ասել միայն Մշտնջենականը: Դա Նրա գաղտնի անունն է, որը արտասանեց քահանայապետը Տաղավարահարաց տոնի օրերին, երբ սուրբ խոսքերը խլացվում էին փողի ձայներով և ժողովրդի աղաղակներով[15]: Եվ հիմա դրանք հնչում են Նազովրեցու շուրթերից: Հնագույն մարգարեների նման, տոգորված երկնային ուժերով, կանգնած է Նա մարդկանց առջև: Այլևս վարանքի տեղ չկա: Կամ Նա ստախոս է և աստվածանարգ կամ Աստված Ինքն է բարբառում Նրա շուրթերով:

Եվ ընտրությունն արվեց: Հավատացյալները սերտորեն համախմբվեցին Հիսուսի շուրջը, իսկ մյուսները սպառնալից վերցրին քարերը...

Ըստ երևույթին, մարդիկ, որոնք Նազովրեցուն ընդունում էին որպես Աստծո Պատգամաբեր, այնքան էլ քիչ չէին և դա կանխեց մահափորձը Նրա դեմ Տաղավարահարաց տոնին: Ըստ որում, նրանց մեծ մասը ուխտավորներ էին, որոնք քաղաք էին եկել հանդիսությանը մասնակցելու: Ավետարանիչ Հովհաննեսը միայն մի երուսաղեմացու մասին է խոսում, որը այդ օրերին դարձի եկավ[16]: Դա տեղի ունեցավ արտասովոր հանգամանքներում:

Մի անգամ լուրեր տարածվեցին, իբր Հիսուսը կույր ծնված մի մարդու տեսողություն է վերականգնել: Շատերը նրան գիտեին, քանի որ նա միշտ նստում էր դարբասների մոտ ողորմություն խնդրելու: Նախապես կասկածեցին, որ սխալ կարող է տեղի ունեցած լինել, բայց շուտով կասկածները ցրվեցին: Բժշկվածին բերեցին փարիսեցիների մոտ, իսկ սրանք էլ պահանջեցին պատմել, թե ինչպես է եղել այդ:

- Մի Մարդ, Որին ասում են՝ Հիսուսն է, կավ շինեց և ծեփեց իմ աչքերը, լվացվեցի և տեսնում եմ:

- Այդ Մարդը Աստծուց չէ, քանի որ շաբաթ օրը չի պահում,- բա-

ցատրեցին նրան (Հանգստի օրը Հրաշք տեղի ունեցավ): Որոշ փարիսեցիներ իրենք էին մտավարանումների մեջ. «Իսկ մեղավոր մի մարդ ինչպես կարող է այսպիսի նշաններ կատարել»: Երկար վեճերից Հետո նրանք նորից դարձան կուրությունից բուժվածին.

– Դու ինչ ես ասում Նրա մասին, քանի որ Նա քո աչքերը բացեց:

– Մարգարե է:

Կանչեցին նրա ծնողներին.

– Սա է ձեր որդին, որի մասին ասում էիք, թե՝ կույր ծնվեց. իսկ այժմ ինչպես է, որ տեսնում է:

– Գիտենք, որ սա մեր որդին է,- պատասխանեցին վախեցած ծերերը,- և որ կույր ծնվեց, բայց թե այժմ ինչպես է, որ տեսնում է, չգիտենք կամ թե՝ ով բացեց դրա աչքերը, մենք չգիտենք. Հենց իրե՛ն Հարցրեք, ինքն արդեն չափաՀաս է, իր մասին ինքը թող խոսի:

Այն փարիսեցիները, որոնք որոշել էին աներեր կերպով իրենց ասածը պնդել, սկսեցին խրատել բուժվածին:

– Աստծուն փա՛ռք տուր. մենք գիտենք, որ այն Մարդը մեղավոր է:

– Թե մեղավոր է, ես չգիտեմ, բայց այն գիտեմ, որ կույր էի և Հիմա տեսնում եմ:

– Քեզ ինչ արեց, քո աչքերը ինչպես բացվեց:

– Նոր ձեզ ասացի,- պատասխանեց Հնարամիտ երուսաղեմցին,- և չեք լսում, ինչու եք ուզում նորից լսել, միթե դուք էլ եք կամենում Նրան աշակերտել:

– Դո՛ւ եղիր Նրան աշակերտ, մենք Մովսեսի աշակերտներն ենք,- ճչացին սրտնեղած դպիրները: – Մենք գիտենք, որ Աստված Մովսեսի Հետ խոսեց. իսկ Սրան չգիտենք, թե որտեղից է:

– Զարմանալին էլ այն է, որ դուք չգիտեք, թե Նա որտեղից է, և սակայն իմ աչքերը բացեց: Գիտենք, որ Աստված մեղավորներին չի լսում, բայց եթե մեկը աստվածապաշտ է և Նրա կամքը կատարում է, նրան լսում է: Աշխարհի սկզբից ոչ ոք չի լսել, թե մեկը ի ծնե կույր ծնված կույրի աչքերը բացած լինի: Եթե այդ Մարդը Աստծուց չլիներ, որևէ բան անել չէր կարող:

– Ամբողջովին մեղքի մեջ ես ծնված և դու մեր գլխին վարդապետ ես դարձել,- վերջնականապես Համբերությունը կորցրին փարիսեցիները և քշեցին նրան մի կողմ: Իմանալով այդ մասին, Հիսուսը գտավ բուժվածին և Հարցրեց.

– Դու Աստծո Որդուն Հավատում ես:

– Տե՛ր, Ով է, որ Նրան Հավատամ:



– Ե՛վ տեսար Նրան, և՛ Նա է, Ով խոսում է քեզ Հետ:

– Հավատում եմ, Տե՛ր,- պատասխանեց նա, խոնարՀվելով Հիսուսի առաջ...

Այդ իրադրությունը սաստանեց, սակայն, որոշ փարիսեցիների: Այն, որ տարօրինակ Ուսուցիչը տիրապետում էր այդպիսի զորության, պատաՀական չէր կարող լինել: Որտեղից է այդ դեպքում Նրան այդպիսի շնորՀը: Նրանք որոշեցին զրույցի բռնվել Հիսուսի Հետ և լսեցին դաժան խոսքեր.

– Դատաստանի Համար եկա այս աշխարՀը, որպեսզի, ովքեր չեն տեսնում, տեսնեն, և ովքեր տեսնում են, կուրանան:

– Միթե մենք էլ կույր ենք,- ասացին փարիսեցիները:

– Եթե կույր լինեիք, դուք մեղք չէիք ունենա, բայց Հիմա ասում եք, թե՝ տեսնում ենք. և ձեր մեղքը ձեր մեջ Հաստատ է մնում:

Իրականում, նրանք իրենց Համարում էին Ավանդությունների և պատվիրանների պաՀապաններ, մեծ Հայրեր Սիմոնի, Աբթալիոնի և Հիլլելի ժառանգորդներ: Նրանք Հավատում էին, որ Աստծո Հոգին իրենց օգնում է ճշգրտորեն մեկնել Թորան, և որ Նա է կարգել իրենց Իսրայելի Հոգևոր Հովիվներ: Բայց սեփական գերազանցության զգացումից արբած, այդ մարդիկ չկարողացան ճանաչել իրենց Հասած կենդանի Ճշմարտությունը ի դեմս Հիսուս Նազովրեցու:

Մինչդեռ Նա ուղարկված է Աստծո ժողովրդին որպես երկնային-Հովիվ, որը նման չէր ոչ բարձրամիտ դպիրների, ոչ էլ զելոտական սուտ փրկչի:

Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ,
որ Ես եմ ոչխարների դուռը,
Բոլոր նրանք, որ Ինձնից առաջ եկան,
գողեր էին ու ավազակներ,
ուստի ոչխարները նրանց չլսեցին...
Ես եմ լավ Հովիվը.
լավ Հովիվը Իր կյանքն է տալիս ոչխարների Համար:
Իսկ վարձկանը, որ Հովիվ չէ, և ոչխարներն էլ իրենը չեն,
երբ տեսնում է, որ գայլը գալիս է,
թողնում է ոչխարներին և փախչում է:
Եվ գայլը Հափշտակում է նրանց ու ցրում է.
քանի որ վարձկան է, և ոչխարների Համար Հոգ չի անում:

Ես եմ լավ Հովիվը. և ճանաչում եմ Իմ ոչխարներին
ու ճանաչվում նրանցից:
Ինչպես Հայրը Ինձ ճանաչում է, Ես էլ ճանաչում եմ Հորը.
և իմ կյանքը կտամ Իմ ոչխարների համար:
Ես ունեմ նաև այլ ոչխարներ,
որոնք այս փարախից չեն
նրանց ևս պետք է այստեղ բերեմ.
և Իմ ձայնը պիտի լսեն,
և պիտի լինի մի հոտ և մի Հովիվ[17]:

«Այս խոսքերի պատճառով,- պատմում է ավետարանիչ Հովհաննեսը,- հրեաների մեջ դարձյալ պառակտում եղավ: Եվ նրանցից շատերն ասում էին. «Նրա մեջ դև կա և մոլեգնում է. ինչու եք Նրան լսում»: Ոմանք էլ ասում էին. «Սրանք դիվահարի խոսքեր չեն, միթե դևը կարող է կույրի աչքերը բանալ»:

Մինչև դեկտեմբերի կեսերը Հիսուսը աշակերտների մեծ խմբով շրջապատված անարգել գալիս էր Բեթանիայից Տաճար: Ընդունված տեղը, ուր նրանք հավաքվում էին, արևելյան պարսպի մոտ Սողոմոնի գավիթն էր: Սակայն Բաղարջակերաց տոնին նոր բախումներ տեղի ունեցան:

Այդ օրը մշտապես արթնացնում էր ժողովրդի մարտնչող ոգին, հիշեցնելով հեթանոսների դեմ տարած Մակաբայեցվոց հաղթանակները*: Ազատագրողների հերոսական սխրանքները սնում էին երազանքները եթե ոչ Փրկչի, ապա, ծայրահեղ դեպքում, գոնե Հռոմի իշխանությունը տապալող հզոր առաջնորդի մասին: Ահա թե ինչու ուշադրությունը կրկին սևեռված էր Հիսուսի վրա[18]: Նրան համառորեն սկսեցին հարցնել.

- Մինչև երբ պիտի մեր հոգին հանես. եթե Դու ես Քրիստոսը, համարձակ ասա մեզ:

- Ձեզ ասացի,- պատասխանեց Նա,- և Ինձ չեք հավատում: Այն գործերը, որ Ես անում եմ Իմ Հոր անունով, դրանք վկայում են Իմ մասին:

Սակայն նրանք Նրանից սպասում էին ուրիշ «գործեր»: Եթե Նա, ինչպես Հիսուս բար-Աբբան (Բարաբբա), ապստամբություն բարձրացներ, եթե Նա հավաքեր զինված մարդկանց և շարժվեր Պիղատոսի կայազորի վրա, նրանք կգնային Իր հետևից: Իսկ դրա փոխարեն նրանց Նա ասում է սակավ հասկանալի և դժվար իրագործելի բաների մասին:

* Տե՛ս վերևում՝ էջ 27:



- Դուք չեք հավատում,- ասաց Հիսուսը,-
որովհետև Իմ ոչխարներից չեք,
Իմ ոչխարները Իմ ձայնը լսում են,
և Ես ճանաչում եմ նրանց.
և նրանք գալու են Իմ ետևից.
և Ես նրանց կտամ հավիտենական կյանք.
և նրանք չեն կորչի հավիտյան.
և ոչ ոք նրանց Իմ ձեռքից չի հափշտակի:
Իմ Հայրը, որ նրանց Ինձ տվեց, ամենքից մեծ է.
և Իմ Հոր ձեռքից ոչ ոք չի կարող ոչինչ հափշտակել:
Ես և Իմ Հայրը մի ենք:

Սոսկումի քրթմնջոցի ալիք անցավ բազմության միջով, Նա Իրեն Աստծո Որդի է դարձնում: Հարկավոր է աստվածանարգության համար անմիջապես պատժել Նրան:

Զուր էր Հիսուսը մատնանշում Գրքերի խոսքերը, որտեղ բոլոր հավատացյալները անվանված են «Աստծո որդիներ»: Մոլեռանդները չէին ցանկանում անցնել քննարկումների: Նրանց փաստարկները միայն քարերն էին: Այս անգամ Հիսուսը, միայն հրաշքով փրկվելով մեռնելուց, գնաց Զիթենյաց պուրակ:

Նրա հրաժեշտը քաղաքին դառնաթախիծ էր.

Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ,
որ կոտորում էիր մարգարեներին
և քարկոծում էիր քեզ մոտ ուղարկվածներին.
քանի՛- քանի՛ անգամ կամեցա հավաքել քո որդիներին,
ինչպես հավը իր ձագերին՝ թևերի տակ,
բայց դու չկամեցար:
Ահա ձեր տունը ձեզ պիտի թողնվի ավերակ,
բայց ասում եմ ձեզ, որ Ինձ այլևս չեք տեսնի,
մինչև որ չասեք՝ «Օրհնյալ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով»[19]:

## Գլուխ տասներկուերորդ

# ԺԱՄԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է

### 29 դեկտեմբերի – 2 ապրիլի 30 թ.

Մինչև Զատիկը մնում էր մոտ երեք ամիս, բայց Հիսուսը մայրաքաղաքին մոտիկ արդեն չէր կարող ապրել: Չցանկանալով վերադառնալ Գալիլիա, Նա ձմեռային անձրևների ժամանակ գնաց Անդրհորդանանյան եզերք: Այն ենթարկվում էր Անտիպասին, բայց քանի որ Տիբերիան՝ նրա նստավայրը, հեռու էր, Ուսուցիչը և աշակերտները Հորդանանի այն ափին համեմատաբար ապահով էին:

Գալով Բեթաբարա, Հիսուսը վերջին անգամ եղավ այն տեղերում, որտեղ սկսեց Իր ծառայությունը: Դեռ վերջերս էր, երբ այստեղ լսվեց Նախակարապետի ձայնը և Աստծո Հոգին իջավ Մարդու Որդու վրա, այստեղ առաջին անգամ Նա սկսեց սովորեցնել Արքայության գալու մասին: Հիմա Հորդանանի ափերին լռություն էր տիրում, որը խախտվում էր անձրևի աղմուկով միայն, չքացել էին բազմությունները, որոնք գալիս էին Մկրտչին լսելու:

Չորրորդ Ավետարանը շատ ժլատորեն է խոսում այդ գյուղում Քրիստոսի լինելու մասին, որտեղ համարյա երեք տարի առաջ երկու ձկնորս մոտեցան Նրան և շփոթված հարցրին՝ «Վարդապե՛տ, որտեղ ես ապրում»: Այդ ժամանակ Անդրեասը և Հովհաննեսը մեծ երազներ էին



փայփայում, բայց այդ ժամանակվանից շատ բան է փոխվել: Փոխվել են և իրենք՝ առաքյալները: Նրանք չտեսնված իրադարձությունների վկաներ դարձան, սովորեցին այլ կերպ նայել իրերին: Բայց, այդուհանդերձ, անհաջողությունները Գալիլիայում և Երուսաղեմում անսպասելի էին նրանց համար: Տաղավարահարաց և Նավակատիքի դեպքերը, թվում է, վկայում էին լիակատար պարտության մասին: Իհարկե, աշակերտները պատրաստվել էին Վարդապետի հետ կիսել բոլոր ձախորդությունները, բայց, այդուհանդերձ, նրանք ուրախ էին, որ Նա իրենց բերել է անբարյացակամ քաղաքից հեռու այդ խաղաղ եզերքը:

Սակայն շուտով նրանց մենությունը խախտվեց: Շրջակայքի բնակիչները իմացան Քրիստոսի գալու մասին և Բեթաբարան սկսեց լցվել ժողովրդով: Բոլորը լսել էին, որ Ուսուցիչը ենթարկվել է շնորհազրկման, բայց դա ետ չէր պահում Աստծո խոսքը փնտրողներին: Շատերը հիշում էին Մկրտչի վախճանը, կրկնում նրա խոսքերը Հիսուսի մասին և ասում էին, որ մարգարեն ինքը չնայած ոչ մի հրաշք չգործեց, սակայն նրա վկայությունը ճշմարիտ էր[1]: Մարդկանց ախտերից ազատող և հրաշք նշաններ ունեցող Նազարեթցի Մարդը միայն երկնքից կարող է ուղարկված լինել:

Գարնանը դեռևս գտնվելով Հորդանանում, Քրիստոսը, Տասներկուսից բացի, ընտրեց ևս Յոթանասուն առաքյալների: Նրանք պետք է անցնեին այն տեղերով, ուր սպասվում էր այցելել Նրան Երուսաղեմ ուղևորվելու ճանապարհին: Նրանց թիվը հիշեցնում էր երկրի բոլոր ժողովուրդների յոթանասուն նախահայրերին և կարծես թե ծառայում էր որպես նոր Համայնքի գործունեության ծավալման վկայություն: Պատվիրակները օժտված էին բուժելու շնորհով և կոչված էին ավետելու Աստծո Արքայությունը:

Ըստ երևույթին, ճամփորդությունը երկար չտևեց, բայց նրանք վերադարձան «ուրախ», հաջողություններից թևավորված:

– Տե՛ր, դևերն էլ են մեզ հնազանդում Քո անունով:

– Տեսնում էի սատանային երկնքից ընկնելիս, ինչպես փայլակը: Ահա ձեզ իշխանություն տվի կոխելու օձերի, կարիճների և թշնամու ամբողջ զորության վրա: Եվ ձեզ բոլորովին չեն վնասելու:

Ծառայելով Մարդու Որդուն, նրանք դարձան խավարի դեմ գնացող սրբազան զորքի մարտիկներ: Աշխարհի համար նրանց Ուսուցիչը թշվառ և անտուն Օտարական է, բայց հենց հիմա է հասել Նրա «փառքի» ժամը: «Վշտերի Այր», Որի առաջ անզոր են սատանայի փորձությունները: Նա իր նվաստացմամբ խորտակում է թշնամու իշխանությունը...

Առաքյալները չպետք է հպարտանան իրենց շնորհված զորությամբ։ Ամենամեծ շնորհը հաղորդությունն է լույսի Թագավորությանը։

«Բայց մի՛ ուրախացեք այն բանի համար, որ դևերը ձեզ հնազանդվում են, այլ ուրախացեք, որ ձեր անունները գրված են երկնքում»[2]։

Հազիվ էին աշակերտները սկսել ձեռք բերել վստահություն և հույս, երբ կանգնեցին նոր փորձության առաջ։ Ընկերները Հրեաստանից հաղորդեցին, որ Ղազարոսը՝ Մարթայի և Մարիամի եղբայրը, ծանր հիվանդ է։

«Այդ հիվանդությունը մահաբեր չէ»,- ասաց Հիսուսը։ Սակայն երկու օր անց հայտնեց, որ պատրաստվում է գնալ Բեթանիա։

- Ռաբբի՛,- վշտացան աշակերտները,- հրեաները դեռ նոր էին ուզում Քեզ քարկոծել, և նորից այնտեղ ես գնում։

Բայց երբ Նրա խոսքերից հասկացան, որ Ղազարոսը վախճանվել է և Ուսուցիչը անպայման ցանկանում է լինել նրա տանը, առաքյալները հնազանդվեցին։ Եթե Տիրոջը վտանգ է սպառնում, նրանք չեն լքի Նրան։

- Եկե՛ք մենք էլ գնանք, որ Նրա հետ մեռնենք,- վճռականորեն ասաց Թովմասը։

Նրանց ոչ ավելի, քան երկու օր էր պահանջվում Բեթանիա հասնելու համար։ Հիսուսը գյուղ դեռ չէր մտել, երբ Մարթան դուրս վազեց Նրան ընդառաջ։

- Տե՛ր,- լաց լինելով ասաց նա,- եթե Դու այստեղ եղած լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի...

- Քո եղբայրը հարություն կառնի,- ասաց Հիսուսը։

- Գիտեմ, որ Հարության ժամանակ վերջին օրը հարություն կառնի։

- Ես իսկ եմ Հարություն և կյանք, ով հավատում է Ինձ, թեպետև մեռնի, կապրի... Հավատում ես այս բանին։

- Այո՛, Տե՛ր, ես հավատում եմ, որ Դո՛ւ ես Քրիստոսը՝ Աստծո Որդին, որ աշխարհ էիր գալու...

Մարիամը այդ ժամանակ մնացել էր տանը իրեն մխիթարող հարազատներով և հարևաններով շրջապատված։ Քույրը ներս մտավ և շշնջաց․ «Վարդապետն է եկել և քեզ է կանչում»։ Մարիամը վեր կացավ և շտապով դուրս եկավ տնից։ Բարեկամները հետևեցին նրան, մտածելով, որ գերեզման է գնում։ Նրանք նրան տեսան Հիսուսի ոտքերն ընկած։ Մարիամը արտասուքն աչքերին կրկնում էր քրոջ բառերը․ «Տե՛ր, եթե այստեղ եղած լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի»։ Խորը հուզմունք արտահայտվեց Ուսուցչի դեմքին։ Բոլորը տեսան, որ Նա լալիս է։ «Տեսե՛ք, ինչքան էր սիրում նրան»,- իրար էին ասում բեթա-



նիացիները։ Իսկ ինչ-որ մեկն ասաց․ «Սա, որ կույրի աչքերը բացեց, չէր կարող նաև այնպես անել, որ սա չմեռներ... »։

«Ուր դրիք նրան»,- հարցրեց Հիսուսը։ Մարդիկ նրան տարան քարայրի մոտ, որ սովորույթի համաձայն ծածկված էր քարե սալով։ Անցել էր արդեն չորս օր, ինչ Ղազարոսը թաղված էր այստեղ։

«Այդ քարը մի կողմ դրեք»,- հրամայեց Ուսուցիչը։ Մարթան երկչոտորեն ընդդիմացավ, ասելով, որ մարմինն արդեն հոտած կլինի։ «Քեզ չասացի, եթե հավատաս, կտեսնես Աստծո փառքը»,- պատասխանեց Տերը։

Քարայրի մուտքը բացեցին, Հիսուսը բարձրացրեց աչքերը դեպի երկինք և թաղվեց աղոթքի մեջ...

Ինչ տեղի ունեցավ հաջորդ ակնթարթում։ Ինչ է ընդհանրապես մեզ հայտնի կյանքի և մահվան գաղտնիքի, իր պատյանը լքած հոգու վիճակի մասին։ Մենք գիտենք, որ մարմինը ազդեցություն ունի հոգու վրա, բայց կարողանում ենք ճշգրտորեն որոշել հոգու հակառակ ներգործության ուժը մարմնի վրա։ Ընդ որում, Համագո Հոր համար չկան արգելքներ և անդարձելի ընթացքներ...

«Ղազարո՛ս, վե՛ր կաց, դո՛ւրս արի»,- բացականչեց Հիսուսը և Նրա ձայնը, ինչպես ամպրոպի հարված, արձագանքեց այլ աշխարհներում։

Երբ անձավի շեմին երևաց մեռելը, մարդիկ սարսափահար ընկրկեցին։ Իսկ նա կանգնած էր որպես գարշուրելի ուրվական, ոտից գլուխ փաթաթված պատանքի մեջ։ «Արձակեցե՛ք դրան և թողե՛ք որ գնա»,- ասաց Հիսուսը տիրող լռության մեջ[3]։

Ավետարանական այս պատմությունը ընթերցելիս ակամա հարց է ծագում. Տերը ինչի համար կենդանացրեց Իր ընկերոջը։ Չէ որ, միևնույն է, հետագայում այլոց նման նա դատապարտված էր մեռնելու։ Բեթանիական հրաշքը բացատրելու շատ փորձեր են արվել։ Բայց ամենից հավանական է, որ ճիշտ են նրանք, ովքեր այդ իրադարձության մեջ տեսնում են կյանքի և մահվան վրա Իր իշխանությունը աշակերտներին ցույց տալու Հիսուսի մտադրությունը։ Ղազարոսին հարություն տալը պետք է նախապատրաստեր նրանց Զատկի խորհուրդը ընկալելու։

Բեթանիայում շատերը առաջներում էլ դեռ հավատում էին Աստծո Թագավորությանը։ Հիմա, հավանաբար, ողջ գյուղը Հիսուսին ընդունեց որպես Փրկիչ։ Սակայն այնտեղ ևս գտնվեցին մարդիկ, որոնք իրենց պարտքը համարեցին կատարվածի մասին լուր հասցնել Սինեդրիոն։ Դրա անդամները, իհարկե, մտածեցին, որ գործ ունեն խաբեության հետ, բայց լուրը գնահատեցին որպես Նազովրեցու ժողովրդա-

նության նոր աճի նշան:

Անհապաղ հավաքվեց Խորհուրդը: Դրան մասնակցելու համար հրավիրվել էին նաև փարիսեցիները, բայց նրանց մեղադրանքները Հիսուսի դեմ վերաբերում էին զուտ կրոնական ընագավառին, մինչդեռ կառավարող կուսակցությանը անհանգստացնում էր ուրիշ բան. սադուկեցիները երկյուղում էին, որ գալիլիական շարժումը կվերաճի խռովության և կհարուցի հռոմեացիների պատժիչ արշավանք: Հովսեփ Կայիափան հայտարարեց, որ առանց հապաղելու հարկ է վերացնել կեղծ Փրկչին: Ավելի լավ է մի մարդու մահը, քան աղետը, որը կկախվի ողջ ժողովրդի վրա: Փարիսեցիները, չնայած որ թշնամացած էին հոգևոր իշխանությունների դեմ, այս անգամ, հավանաբար, համաձայնեցին Կայիափայի կարծիքի հետ և ուրախ էին, որ նվիրապետությունը պատրաստ է հանդես բերել վճռականություն: Հիմա նրանց հարկ չի լինի Հիսուսին ենթարկել բանադրանքի, քանի որ Սինեդրիոնը գործը կհասցնի մինչև վերջ իր միջոցներով:

Հայտնի չէ՝ անմիջապես ջոկատներ ուղարկվեցին Բեթանիա, թե իշխանությունները իմանալով, որ Հիսուսը թողել է գյուղը, հետաձգեցին գործը: Բայց վճիռը ընդունվեց: Բոլորը կարծում էին, որ Զատկին Գալիլեացին անպայման կհայտնվի Երուսաղեմում: Այդ պատճառով էլ քահանայապետը կարգադրեց, որպեսզի ամեն ոք, ով գիտի Նրա գտնվելու վայրը, այդ մասին հայտնի իշխանություններին[4]:

Մինչ այդ, Հիսուսը Բեթանիայից ուղևորվեց Հրեական անապատին մոտիկ անմարդաբնակ տեղանք: Մարտի կեսերին Նա անցկացրեց Եփրայիմ կոչվող խուլ քաղաքում, իսկ հետո կրկին Հորդանանի վրայով անցավ Պերեյա[5]:

Բեթանիական հրաշքից հետո առաքյալները ավելի շատ ոգեշնչվեցին: Եթե Տերը կարող է նման բան անել, նշանակում է՝ Նրա հակառակորդների բոլոր դավերը ապարդյուն կանցնեն: Նրանց զարմացնում էր միայն, թե մարդիկ նման նշաններից հետո ինչպես կարող են չհավատալ Հիսուսին: Նա նրանց մի առակ պատմեց:

Ինչ-որ ժամանակ ապրում էր ուրիշի վշտի հանդեպ անհոգի և անտարբեր մի մեծահարուստ: Խրախճանքների մեջ էր նա զոր ու գիշեր, իսկ նրա տան դարբասների մոտ նստած էր մուրացիկ Ղազարոսը, որը կերակրվում էր հարուստի սեղանի փշրանքներով: Երկուսն էլ մեռան, մեկը հանգիստը գտավ «Աբրահամի գոգում», իսկ մյուսը պատժվեց մեղքերի համար: Մեծահարուստը կարոտով մտածում էր իր եղբայրների մասին և աղերսեց Աբրահամին, որպեսզի նա Ղազարոսին ուղարկի



երկիր նախազգուշացնելու նրանց, թե ուր է տանում չարի ճանապարհը: Բայց Աբրահամը առարկեց. «Նրանք ունեն Մովսես և Մարգարեներ, թող նրանց լսեն»: Մեծահարուստը դրանով չբավարարվեց.

– Ո՛չ, հա՛յր Աբրահամ, բայց եթե մեռելներից մեկը նրանց մոտ գնա, նրանք կապաշխարեն:

– Եթե Մովսեսին և Մարգարեներին չեն լսում, մեռելներից մեկն էլ եթե հարություն առնի, չպիտի համոզվեն[6]:

Այդ առակով Քրիստոսը ցանկացավ ասել, որ եթե անհավատությունը արմատավորվում է սրտում, ցանկացած հրաշքներ չեն կարող մարդուն դարձի բերել:

Զատկից տաս օր առաջ Հիսուսը աշակերտներին հայտնեց, որ մտադիր է Երուսաղեմում լինել տոնից առաջ: Արագությամբ պատրաստվեցին ճանապարհվելու, գնացին համարյա կանգ չառնելով: Հիսուսն, ասես, շտապում էր մահվանն ընդառաջ: Նրա մռայլ մտասուզությունը առաքյալներին սարսափ էր ներշնչում, բայց գնալով Նրա ետևից, նրանք, այնուամենայնիվ, մտածում էին, որ մոտենում են հաղթանակին:

Ճանապարհը գալարվում էր զառիվայր բլուրների միջով: Ինչ-որ տեղերից սկսեցին Երուսաղեմ ուղևորվող մարդիկ հայտնվել: Գալիլեացիների թվում էր նաև Կույս Մարիամը, բայց Նա հնազանդորեն Իրեն հեռու էր պահում Որդուց:

Աստիճանաբար Քրիստոսը հայտնվեց ուխտավորների մեծ բազմության առջևում: Շատերը ճանաչեցին Նրան և ուրախ ողջունեցին: Ոմանք մոտենում և խնդրում էին ընդգրկել իրենց աշակերտների կազմում: Բայց հիմա Հիսուսը անմիջապես սկսեց նրանց ասել զոհաբերությունների մասին, որոնք հարկավոր է անել Աստծո Արքայության համար և այն մասին, որ վարանելու ժամանակ այլևս չի մնացել: Մի մարդ, որ ուզում էր Հիսուսին միանալ, ասաց, որ նախ պետք է հորը թաղի: «Թող որ մեռածնե՛րը թաղեն իրենց մեռելներին»,- եղավ պատասխանը: Մի ուրիշն ուզում էր հրաժեշտ տալ հարազատներին, Հիսուսը զգուշացրեց. «Ո՛չ ոք իր ձեռքը մաճի վրա կդնի և ապա ետ կնայի, եթե հարմար է Աստծո Արքայությանը»[7]:

Գնալով մեծանում էր Քրիստոսի ետևից շարժվողների թիվը: Երթը վերածվեց իսկական փրկչական արշավանքի: Երիքովի մոտ կտրեցին-անցան գետը: Քաղաքում բնակիչները վիճում էին, թե ով կընդունի Նրան, բայց Հիսուսը ընտրեց ոչ թե բոլորի կողմից հարգամեծար, պատվելի ընտանիք, այլ մաքսապետ Զակքեոսի տունը* : Դարբասների մոտ նստած կույր մուրացիկը աղաղակեց. «Դավթի՛ Որդի, Հիսո՛ւս

ողորմի՛ր ինձ»: Նրան սաստեցին, բայց Քրիստոսը մոտենալով նրան՝ ասաց. «Նայի՛ր, քո հավատը քեզ փրկեց»[8]...

Այդ հրաշքը բոցավառեց ժողովրդի խանդավառությունը: Իշխանությունների բոլոր սպառնալիքները մոռացվեցին: Նա վերստին իրենց գալիլեական Փրկիչն է, աշխարհ եկած Դավիթ Թագավորի Որդին: Ամենուր լսվում էին բացականչություններ. «Օրհնյալ է Տիրոջ անունով Եկողը»:

Առաքյալներն արդեն չէին կասկածում, որ «Աստծո Արքայությունը շուտով հայտնվելու է»[9]: Այդ հրաշալի իրադարձության մերձավորությունը նրանց համար դարձավ այնքան իրական, որ Սաղոմեն՝ Հովհաննեսի և Հակոբի մայրը, Տիրոջը խնդրեց իր որդիներին նստեցնել Իր գահի աջ և ձախ կողմերում, երբ Ինքը լինի «փառքի մեջ»: Դառնալով եղբայրներին, Հիսուսը հարցրեց.

- Կարող եք խմել այն բաժակը, որը Ես խմելու եմ կամ՝ մկրտվել այն մկրտությամբ, որով Ես մկրտվելու եմ:

- Կարող ենք,- պարզամտորեն պատասխանեցին նրանք:

- Այն բաժակը, որ Ես խմելու եմ, կխմեք, և այն մկրտությունը, որով Ես մկրտվելու եմ, նրանով կմկրտվեք, բայց Իմ աջում և ձախում նստեցնելը Ես չէ, որ կտամ, այլ տրվելու է նրանց, որոնց համար պատրաստված է:

Մյուս աշակերտները քրթմնջացին: Բոլորը ցանկանում էին գրավել այդ պատվավոր տեղերը: Բայց Հիսուսը ընդմիջեց նրանց.

Գիտեք, որ ազգերի** իշխանավորները
տիրում են ազգերի վրա, և մեծամեծներն
իշխում են նրանց վրա:
Ձեր մեջ և՛ս չպետք է այդպես լինի.
այլ ձեզնից ով կկամենա մեծ լինել,
ձեր ծառան պիտի լինի.
և ձեզնից ով կկամենա առաջին լինել,
ձեր ծառան պիտի լինի.
ինչպես որ Մարդու Որդին
չեկավ ծառայություն ընդունելու,
այլ ծառայելու և Իր անձը տալու
որպես փրկանք շատերի փոխարեն[10]:

---

* Տե՛ս վերևում՝ էջ 82-83:

** ἐθνῶν բառացի «ժողովուրդների», բայց սովորաբար այդ բառը նշանակում է հեթանոսների:



Այնուամենայնիվ աշակերտների մտքերը կլանված էին իրենց ակնկալած հաղթանակով:

Այդ պահին Հիսուսը նրանց մեջ մենակ էր, ինչպես երբեք...

Ուրբաթ օրը, մարտի 31-ին, ճամփորդները մտան Բեթանիա, որտեղ տոնակատարություն էր սարքված Ուսուցչի գալու պատվին: Հավաքվել էին Նրա շատ ընկերները: Սեղանը սպասարկում էր Մարթան, իսկ նրա քույրը, չիմանալով ինչպես արտահայտել իր սերը և երախտագիտությունը, օծում էր Հիսուսի ոտքերը և գլուխը թանկարժեք յուղով: Սենյակը լցվեց անուշահոտությամբ, իսկ Հուդան դժգոհ ասաց. «Ինչի համար է յուղի այդ վատնումը, քանի որ կարելի էր մեծ գնով վաճառել այդ և տալ աղքատներին»: Եվ ամենազարմանալին այն է, որ մյուս աշակերտները պաշտպանեցին նրան: Հավանական է, նրանք մտածում էին, որ չնայած բոլոր հրաշագործություններին, ապագա Թագավորին հարկ կլինի հոգալ փողի մասին, որպեսզի հենց սկզբից Իր առատաձեռնությունը ցուցաբերի ժողովրդին...

- Թո՛ւյլ տվեք դրան,- ասաց Հիսուսը,- ինչու եք նեղություն տալիս: Որովհետև նա Ինձ համար մի բարի գործ արեց... Առաջուց խնկավետեց Իմ մարմինը ի նշան պատանքվելու[11]:

Բայց այդ խոսքերի տխուր իմաստը վրիպեց առաքյալների ուշադրությունից:

Երբ շաբաթն անցավ, Քրիստոսն սկսեց պատրաստվել քաղաք մուտք գործելու: Առաջներում Նա երբեք ձիով չէր ճամփորդել, բայց այսօրվա օրը բացառիկ էր: Ընդ որում, ձիավորը հիշեցնում էր պատերազմի, արյունալի արշավանքներից վերադարձող հնագույն արքաների՝ նվաճված Երուսաղեմի փողոցներով սիգարշավող հռոմեացի զինվորների մասին, այդ պատճառով էլ Հիսուսը ընտրեց կենդանի, որը վաղուց ի վեր խաղաղության խորհրդանիշ էր[12]: Նա աշակերտներին ուղարկեց, որ նրանք մի քուռակ բերեն: Տերերը իմանալով, որ այն պետք է Ուսուցչին, ուրախությամբ տվեցին: Թամբի փոխարեն, ավանակի մեջքին զգեստներ դրին, և նստելով նրան, Հիսուսն սկսեց իջնել Ձիթենյաց լեռից:

Նա՝ խաղաղություն ավետող Թագավորը, գալիս է անզեն, շրջապատված ուխտավորներով, որոնք բացականչում էին. «Օրհնությո՛ւն Դավթի Որդուն»:

Գալիլեացիները և բեթանիացիները ջանում էին, ինչքան կարող էին, գեղեցկացնել Փրկչի հաղթանակը: Սմբակների տակ էին գցում

ճիթենու շիվեր, փռում էին հագուստներ: Երեխաները վազում էին Հիսուսի ետևից, արմավենու ճյուղեր թափահարելով:

Առաքյալները ցնծում էին: Վերջապես եկավ երկար սպասված օրը:

Նրանք բարձրաձայն փառաբանում էին Աստծուն, արձագանքելով բազմությանը:

Հազիվ էր երևացել երեկոյան լույսով ողողված Երուսաղեմի համայնապատկերը, երբ թնդաց փրկչական սաղմոսը.

**Օրհնյա՛լ լինի Եկողը, այդ**
**Թագավորը, որ գալիս է Տիրոջ անունով:**
**Խաղաղությու՛ն՝ երկնքում**
**և փա՛ռք՝ բարձունքներում:**

Ընդառաջ վազեցին մյուս ուխտավորները: Նրանց մեջ կային փարիսեցիներ: Լսելով «Օրհնություն Դավթի Որդուն» բացականչությունները, նրանք սարսափեցին: Նշանակում է, իսկապես խռովություն կարող է բռնկվել ցանկացած պահի:

- Վարդապե՛տ,- աղաղակում էին նրանք,- սաստի՛ր Քո աշակերտներին:

- Ասում եմ ձեզ,- պատասխան տվեց Հիսուսը,- որ եթե դրանք լռեն էլ, այդ քարերը կաղաղակեն...

Սակայն չնայած Իր շուրջ տիրող բերկրալի հուզումներին, Հիսուսի դեմքը թախծոտ էր: Կողքից գնացողները Նրա աչքերում արցունքներ տեսան: Նա ողբում էր Երուսաղեմը, Ավետումի քաղաքը և կույրերի քաղաքը:

- Գոնե այս օրերին գիտենայի՛ր դու քո խաղաղությունը,-ասաց Նա:- Բայց այժմ ծածկվեց քո տեսողությունից, որովհետև օրեր պիտի գան վրադ, երբ թշնամիներդ քո շուրջը պատնեշ պիտի կանգնեն... և հիմնահատակ պիտի անեն քեզ և սպանեն քո մեջ քո որդիներին, և քարը քարի վրա բնավ չպիտի թողնեն, քանի որ քո այցելության ժամանակը չճանաչեցիր:

Արևը արդեն մոտենում էր մայրամուտին, երբ հասավ քաղաքի պարիսպներին:



Գլուխ տասներեքերորդ

# ՀՈՐ ՈՐԹԱՏՈՒՆԿԸ

## 2-4 ապրիլ

Արևելյան դարբասների մոտի աղմուկը շարժեց քաղաքացիներից շատերի հետաքրքրասիրությունը: Տեսնելով երթը գլխավորող Մարդուն, Որը հիմներ էր երգում, նրանք զարմանքով հարցնում էին. «Ով է սա»: Ուխտավորները հպարտությամբ բացատրում էին. «Սա Հիսուսն է, Մարգարե Գալիլիայի Նազարեթ քաղաքից... »:

Շփոթվածությունը ամբողջովին պատեց հոգևոր դասին: Ժողովրդի սիրո այսպիսի բուռն պրտահայտություն չէին սպասում: «Ահավասիկ ամբողջ աշխարհը Նրա ետևից գնաց»,- տագնապած իրար էին ասում ավագները[1]: Թվում էր, որ իրենց ջանքերը ապարդյուն անցան: Հիմա արդեն Նազովրեցու դեմ չէր կարելի ձեռնարկել ոչ մի բացահայտ գործողություն: Դա կնշանակեր, որ ժողովրդին խռովության դրդեին իրենք: Զատկի տոնակատարությանը Երուսաղեմամ ժողովվել էին հարյուր հազարավոր հրեաներ, հուզախռով մարդկանցով լի քաղաքում ցանկացած սխալ քայլը կարող էր հասցնել պայթյունի:

Այդ նույն ժամանակ, Հիսուսն անցնում էր տոնական փողոցներով և ավանակից իջնելով, աշակերտների հետ մտավ Տաճարի պարիսպներից ներս: Նրանից սպասում էին ինչ-որ արտասովոր բառեր և արարք-

ներ, բայց Նա լուռ նայում էր սրբարանին, նման իր տիրակալությունը ստուգել ցանկացող Թագավորին, իսկ գիշերը մոտենալուն պես ուղևորվեց եա՝ Բեթանիա:

Հիսուսին ուղեկցողները, հավանաբար, որոշ հիասթափություն ապրեցին: Ոչինչ չկատարվեց, ոչ մի նախանշանակ չեղավ: Այնինչ, նրանք հույս ունեին, որ, ընդունելով արքայական մեծարանք, Հիսուսը պետք է շուտով հանդես բերի Իր փրկչական իշխանությունը և բացի նրանց Իր հետագա մտադրությունները:

Երկուշաբթի առավոտյան Հիսուսը կրկին եկավ Տաճար: Բայց փոխանակ հետևորդներին հեթանոսների դեմ պայքարի կոչելու, Նա արեց նույնը, ինչ երեք տարի առաջ, հրամայեց առևտրականներին լքել Աստծո Տան սահմանները: Վաճառողները և գնողները սկսեցին ընդվզել, սակայն, Հիսուսը չլսելով նրանց, շուռ տվեց լումայափոխների սեղանները և վաճառքի բերված թռչունների թառերը: Նա պահանջում էր, որպեսզի դադարեն Օրենքը խախտել, որն արգելում էր Տաճարի գավիթ ապրանքներ բերելը[2]: Ըստ երևույթին, հրապարակում գտնվողների մեծամասնությունը հավանություն տվեց այդքան վճռական ճնշմանը:

Դա Փրկչի առաջին գործն էր, հայտնապես ժողովրդին ցույց տրված: Այն ուղղված էր հավատքի անարգման և պաշտամունքի սրբապղծման դեմ: Չէ որ շատերը մտածում էին, որ զոհ բերելով և քահանաներին տալով, կարելի է իրենց մեղքերից մաքրված զգալ: Այդ պատճառով էլ, զոհասեղանին մոտիկ շուկան նրանց չէր զարմացնում:

Երկրորդ գործը եղավ հիվանդների բժշկումը, որոնք բոլոր կողմերից շրջապատել էին Հիսուսին: Տառապյալների Փրկիչը՝ Նա եկել է ավետելու նոր կյանքի մասին. Հոր ողորմածության մասին...

Քահանաները չգիտեին ինչպես վարվել, միայն հարցրին Հիսուսին, թե ով է Իրեն իրավունք տվել կարգադրություններ անել Տաճարում:

– Ես էլ ձեզ մի բան հարցնեմ, եթե ինձ ասեք, ես էլ ձե՛զ կասեմ, թե ինչ իշխանությամբ եմ այս անում: Հովհաննեսի մկրտությունը որտեղից էր, երկնքից, թե մարդկանցից:

– Չգիտենք,– հետևեց խուսափողական պատասխանը: Չէ որ նրանք Հովհաննեսին անվանում էին դիվոտ, բայց հիմա, ժողովրդի ներկայությամբ, սադուկեցիները չհամարձակվեցին բացեիբաց հայհոյել մահվան դատապարտված անպատականին:

– Ես էլ ձեզ չեմ ասի, թե ինչ իշխանությամբ եմ այս անում:



Հիսուսը պատահական չհարցրեց Մկրտչի մասին, հանձինս որի քահանայությունը և դպիրները մերժում էին Աստծո պատգամաբերին:

– Հովհաննեսը արդարության ճանապարհով եկավ, և նրան չհավատացիք, իսկ մաքսավորներն ու պոռնիկները հավատացին նրան, և դուք այդ տեսաք և հետո էլ չզղջացիք, որ նրան հավատայիք[3]:

Բոլոր մարգարեներն էլ հանդիպեցին կեղծ հովիվների ընդդիմության ու ատելությանը: Հպարտությունն ու իշխանությունը պատերազմում էին Հոգու ընտրյալների դեմ: Առավել ևս, դժվար էր սպասել, որ ավագները կհավատան Մարդու, Որին հասարակ ժողովուրդն էր անվանում Փրկիչ:

Սովորության համաձայն, Հիսուսն Իր միտքը պարզաբանեց առակով, որի նյութը Եսայիից էր ներշնչված, որը սիրում էր Իսրայելը համեմատել խաղողի այգու հետ, իսկ Աստծուն՝ տիրոջ[4]:

Մի անգամ, պատմում էր Հիսուսը, խաղողի մեծ այգու տերը գնաց հեռու երկիր, հուսալով իր մշակների ժրաջանությանը: Երբ պտղի ժամանակը հասավ, նա ծառաներին ուղարկեց, «որ առնեն այգու պտուղներից»: Բայց մշակները ոմանց ծեծելով քշեցին, ոմանց սպանեցին: Վերջապես, տերն ուղարկեց նրանց մոտ իր սեփական ժառանգին, ասելով՝ «որդուցս թերևս ամաչեն»: Սակայն մշակները մտադրությունները չէին փոխել, նրանք հիմա որոշել էին տիրել ողջ կալվածքին, և երբ պատանին եկավ նրանց մոտ, նրան այգուց հանեցին դուրս և սպանեցին:

– Արդ,– հարցրեց Հիսուսը Տաճարի սպասավորներին,– երբ այգու տերը գա, այդ մշակներին ինչ կանի:

– Չարերին չարաչար կոչնչացնի և այգին կտա այլ մշակների, որոնք նրան կտան պտուղներն իրենց ժամանակին,– պատասխանեցին նրանք:

– Սուրբ Գրքերում երբևիցե չեք կարդացել՝

Այն վեմը, որը կառուցողները անարգեցին,
Նա՛ է, որ եղավ անկյունաքար,
Տիրոջից եղավ այս,
և մեր աչքին սքանչելի է:

Ավագները հասկացան, որ առակում խոսվում է իրենց մասին, որ իրենցից կվերցվի Աստծո ժողովրդի այգին: «Եվ նրանք հնար էին փնտրում,– ասում է Մարկոսը,– Նրան բռնելու, բայց ժողովրդից վա-

խեցան»: Հիսուսը դրանից հետո առանց պլասացության հայտարարեց. «Ձեզնից կվերցվի Աստծու Արքայությունը և կտրվի այն ազգին, որ պտղաբեր կդարձնի այն»[5]: Տերը ոչ միայն զրկում է Իսրայելի հոգևոր առաջնորդներին իշխանությունից, այլև Իր կամքը կատարողներին, անկախ ծագումից, դարձնում է Թագավորության որդիներ:

Եվ կարծես, որպես մարգարեության պատասխան, անսպասելի լուր եկավ. Փիլիպպոսը և Անդրեասը հայտնեցին, որ Երուսաղեմ ուխտագնացության եկած ինչ-որ հույն պրոզելիտներ իմացել են Հիսուսի մասին, խնդրել են Փիլիպպոսին հանդիպեցնել Նրա հետ:

«Հասավ ժամը, որ փառավորվի Մարդու Որդին»,- ասաց Հիսուսը: Բայց որպեսզի աշակերտները չմտածեին, որ Ինքը խոսում է երկրային փառքի մասին, վերստին հիշեցրեց նրանց, թե ինչ է սպասվում Իրեն: «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կմնա, իսկ եթե մեռնի, բազում արդյունք կտա»[6]: Հանուն Իր քավիչ սխրանքի, Փրկիչը հրաժարվում է այն ամենից, ինչը թանկ է մարդկանց այս աշխարհում, կյանքից...

Իսկ պրոզելիտները: Արձագանքեց, արդյոք, Հիսուսը նրանց խնդրանքին: Ավետարանները այդ մասին չեն խոսում, բայց հավանական է, զրույցը կայացել է, և նրանք, հնարավոր է, դարձել են պլազգիներից Նրա առաջին հետևորդները: Դա անուղղակիորեն հաստատվում է Հովսեփոս Փլավիոսի խոսքերով, որոնք կարելի է համարել հավաստի*: Նա գրում է, որ Հիսուսը «ուսուցանում էր ճշմարտությունը հոժարակամ ընդունող մարդկանց, դեպ Իրեն գրավելով շատերին, այդ թվում և հելլեններին»[7]:

Բայց Քրիստոսի և Իր աշակերտների այդ «նոր ոչխարների» հայտնվելու հետ կապված ուրախությունը պղտորում էր Հոր այգին նվաճած ինքնագոհ առաջնորդների մասին մտածելը: Նրանք չէին ցանկանում անսալ Տիրոջ կոչին և կրկին խավարամած ստվերը տարածվեց Աստծո ժողովրդի վրա: Երկու Ուխտերի միջև խզում առաջացավ:

Քրիստոսը իր վիշտը չէր թաքցնում առաքյալներից: «Բայց այժմ հոգիս խռոված է. և ինչ ասեմ. Հա՛յր, փրկի՛ր Ինձ այս ժամից: Բայց Ես հենց այս բանի համար եմ եկել այս ժամին... »:

Երբ Նա այս բառերն ասաց, երկնքում ձայն լսվեց՝ նման ամպրոպի որոտի: Ոմանք կարծեցին, որ մոտենում է գարնանային ամպրոպը, բայց մյուսներին միստիկական սարսափ պատեց: Նրանց լսելի դարձավ Աստծո անտեսանելի բանբերի ձայնը:

«Հա՛յր, փառավորի՛ր Քո անունը»,- աղոթում էր Հիսուսը: Դառնալով մարդկանց. Նա խոսեց Դատաստանի օրվա մասին, Սատանայի մասին, որը վայր կնետվի իր գահից Մարդու Որդու կողմից: Սակայն Փրկիչը կհաղթի նրան, միայն Զոհ դառնալով: «Երբ Ես բարձրանամ երկրից, ամենքին դեպի Ինձ կձգեմ»[8]:

* Տե՛ս էջ 302:



Կայիափայի պալատում այդ ժամանակ ասես մոռացել էին Հիսուսի մասին: Ժամ առ ժամ սպասում էին շքախմբով Պիղատոսի ժամանելուն: Ընդհանրապես Զատկի օրերին հոգևորականները շատ հոգսեր էին ունենում: Բայց իրականում, Սինեդրիոնը չէր հրաժարվել վտանգավոր Մարգարեի հետ հաշվեհարդար տեսնելու մտքից: Վճռված էր՝ անկարգություններից խուսափելու համար միայն գործը հետաձգել, քանի դեռ տոնակատարությունը չէր անցել[9]; Հիսուսն Ինքը առևտրականներին Տաճարից հեռացնելուց հետո ոչ մի կերպ այլևս չէր դրսևորել Իրեն: Դա սադուկեցիներին հանգստացրել էր և հնարավորություն տվել, որ չշտապեն:

Սակայն առավել անհաշտ տրամադրված մարդկանց մի խումբ շարունակում էր ուրգայթ լարել Հիսուսի շուրջը: Ամենից հարմարը Նրան սադրելն էր քաղաքական որևէ քայլի կամ արտահայտության, որպեսզի կուսակալի ուշադրությունը հրավիրեն Նրա վրա, այդժամ Պիղատոսը ինքը կզբաղվեր Գալիլիացիով, իսկ եկեղեցական իշխանությունները ժողովրդի աչքում կմնային անմեղ:

Այդ մտադրությունը իրականացնելը հանձն առան «հերովդեսականները», հռոմեացիների վրա հենվող կուսակցության կողմնակիցները: Նրանց միացան փարիսեցիների դպրոցների ունկնդիրները, չնայած «հերովդեսականների» հետ իրենց մշտապես թշնամի լինելուն: Գալով Հիսուսի մոտ, այդ մարդիկ ձևացրին, որ հարգալից են Նրա նկատմամբ և ցանկանում են իմանալ Իր կարծիքը կայսրին տրվող հարկերի մասին: Նման ձևով Ուսուցչին դիմելը ինքնին թվում էր լիովին բնական: Արևելքում վարդապետների իմաստնությունը չափվում էր այն բանով, թե ինչպես են նրանք լուծում իրենց քննությանն առաջարկված լուծելի խնդիրները: Բայց տվյալ պարագայում բացահայտ ուրգայթ էր պատրաստվում: Եթե Հիսուսն ասեր, որ հարկ է տուրք տալ, նշանակում է Նա թշնամի է Իսրայելին, եթե ոչ՝ Նրան կարելի է ներկայացնել Պիղատոսի առջև որպես Հռոմի դեմ հրահրիչներից մեկի[10]:

- Վարդապե՛տ,- շողոմաձայն սկսեցին խոսել գաղտնի ուղարկվածները,- գիտենք, որ Դու ճշմարտասեր ես և չես քաշվում ոչ ոքից, որովհետև մարդկանց աչառություն չես անում, այլ ճշմարտությամբ

Աստծու ճանապարհն ես ուսուցանում, օրինավոր է հարկ տալ կայսրին, թե ոչ. տանք, թե՝ չտանք:

-Ինչու եք Ինձ փորձում,- ասաց Հիսուսը,- Ինձ մի դահեկա՛ն բերեք, որ տեսնեմ:

Նրան տվեցին մի դահեկան դրամցից, որոնք ուղարկվում էին որպես հարկ: Դրա վրա կայսրի կողապատկերն էր և դրոշմագիր՝ «Տիբերիոս, կայսր, որդի Օգոստոս աստծո»: - Այս պատկերը կամ գիրն ումն է:

- Կայսրինը:

- Տվե՛ք կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն: Պատասխանը զարմացրեց նրանց: Նրանք հասկացան, որ չհաջողվեց որոգայթ լարել: Հիսուսը նրանց դրեց անելանելի դրության մեջ, ցույց տալով հեթանոսական դրամը: Քանի որ հրեաները գործածում էին կայսերական դինարներ, ապա այդ փողերի համար չկար ավելի լավ գործածություն, քան դրանք անհավատներին տալը: Իսկ ինչն է պատկանում Աստծուն: Դա հետևում է ոչ միայն Հիսուսի ուսմունքից, այլև Հին Ուխտի բոլոր գրքերից: Աստծուն մարդ պետք է նվիրվի իր ողջ էությամբ:

Հետագայում Քրիստոսի խոսքերը Աստծո և կայսեր մասին հասկանում էին լայն իմաստով՝ համարելով այն եկեղեցու և պետության հարց:

Բայց նման մեկնաբանությունը հազիվ թե հիմնավորված է[11]: Միակ բանը, ինչը կարող էր բխել «հերովդեսականներին» տված Քրիստոսի պատասխանից, դա հրաժարումն էր ազատության հասնելու գելոտական ուղուց: Դրությունն այլ էր, քան Մակաբայացիների ժամանակ: Հռոմը չէր միջամտում ժողովրդի հոգևոր կյանքին: Ապստամբությունը կարող էր Իսրայելին բերել միայն նոր աղետներ: Դա պարզ դարձավ քառասուն տարի անց, երբ «նախանձահույզների» կողմից անհույս պատերազմի մեջ քաշված հրեաները զրկվեցին և Տաճարից, և պետությունից:

Օրըստօրե առաքյալներն ավելի ու ավելի հստակ էին գիտակցում, որ չնայած հանդիսավոր դիմավորելուն, Փրկիչը գտնվում է Երուսաղեմում ինչպես թե թշնամական ճամբարում: Նրանք իրենց հանգիստ էին զգում միայն երեկոյան դեմ, երբ եռևում թողնելով Կենտրոնը, բարձրանում էին Ձիթենյաց լեռը:

Գիշերն անց էին կացնում տարբեր տեղերում, ավելի հաճախ Գեթսեմանիում, երբեմն Ղազարոսի կամ Նրա ընկերների տանը: Բայց առավոտյան մոտ Հիսուսը կրկին գալիս էր աղմկոտ քաղաքը, որտեղ Նրան սպասում էին ունկնդիրները և դարանամուտ հակառակորդները:



Օրենքի պահապան սադուկեցիներն իրենց արժանապատվությունից ցածր էին համարում Գալիլեացու հետ խոսելը: Միայն մի անգամ Տաճարում հանդիպելով Նրա հետ, այդ ինքնահավան մարդիկ որոշեցին խճճող հարցերով շփոթեցնել Նրան: Նրանք գիտեին, որ Հիսուսը, ինչպես և փարիսեցիները, ընդունում էին մեռյալների գալիք հարությունը, համոզվածություն, որի բովանդակությունը, ըստ նրանց, սին երևակայությունն էր: Սադուկեցիների կարծիքով՝ հարության հավատը հակասում էր Գրքերին: Աստվածաշնչի այն գրքերը, որոնցում ասվում էր այդ մասին, նրանք մերժում էին:

Ինչ կլինի, հարցրին սադուկեցիները, այն կնոջ հետ, եթե նա թաղել է յոթ ամուսին, որոնք իրար հետևից մահացել են: Որի կինը նա պետք է համարվի հարության ժամանակ:

Համոզված լինելով, որ գեղջուկ Ռաբբիին դրեցին անելանելի կացության մեջ, նրանք պատրաստվում էին ծիծաղել, բայց Հիսուսն ասաց. «Հենց դրա համար չէ, որ մոլորված եք, քանի որ չգիտեք Գրքերը և ոչ էլ՝ Աստծու զորությունը, որովհետև, երբ մեռելներից հարություն առնեն, ոչ տղամարդիկ կին կառնեն և ոչ էլ կանայք մարդու կգնան, այլ կլինեն հրեշտակների նման, որ երկնքում են: Իսկ գալով մեռելներին, թե հարություն են առնում, դուք չեք կարդացել Մովսեսի գրքում, մորենու դրվագում, թե ինչպես Աստված ասաց նրան. «Ես եմ,- ասում է,- Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը»: Իսկ Աստված մեռելների Աստվածը չէ, այլ՝ ողջերի. ուստի, դուք խիստ մոլորված եք»[12]:

Այնտեղ գտնվող փարիսեցիները չէին կարող չուրախանալ, որ իրենց հին մրցակիցներին ստիպեցին լռել: Հիսուսը հիմա նրանց երևաց ամբողջությամբ հարգանքի արժանի Ուսուցիչ: Փարիսեցիները հավաքվեցին Նրա շուրջը և հետը զրույցի բռնվեցին: Երբ Հիսուսը նրանց ասաց, որ Օրենքի հիմքը սերն է Աստծո և մերձավորի հանդեպ, նրանցից ոմանք համարյա պատրաստ էին որպես համախոհ ընդունել Նրան[13]:

Սակայն նրանք, ովքեր չէին շտապում իրենց կարծիքը փոխել Գալիլիացի Մարգարեի մասին, ցանկանում էին Նրան ենթարկել ևս մեկ փորձության[14]: Նրանք Հիսուսի մոտ բերեցին ամուսնուն դավաճանելու մեջ բռնված մի կնոջ և հարցրին, թե պետք է արդյոք, քարկոծել նրան, ինչպես թելադրում է հին Օրենքը:

Այդ ժամանակ այդ սովորույթը հազիվ թե պահպանվում էր: Այն կարող էին պաշտպանել միայն սադուկեցիները՝ դաժան քրեական պատիժների կողմնակիցները[15]: Բայց փարիսեցիները ցանկացան միջամտե-

պեց օգտվել: Նրանք հույս ունեին, որ Հիսուսը, գթասրտության քարոզիչը, առանց երկիմաստության հանդես կգա Օրենքի դեմ:

Ուսուցիչը երկար չպատասխանեց նրանց և գլուխը մտածկոտ կախած, ավազի վրա ինչ-որ բաներ էր գծում: Բայց, քանի որ նրանք շարունակեցին պնդել, ասաց. «Ձեր միջից անմեղը նախ թող քար գցի դրա վրա», իսկ հետո դարձյալ սկսեց գետնի վրա ինչ-որ նշաններ գծել: Տիրեց լռություն: Երբ մի քիչ սպասելով, երկրորդ անգամ բարձրացրեց հայացքը, ապա տեսավ, որ կինը մենակ կանգնած է Իր առջև: Խիղճը կորցրած մեղադրողները աննկատ ծլկել էին:

- Ո՛վ կին,- հարցրեց Հիսուսը,- ուր են. քեզ ոչ ոք չդատապարտեց:

- Ո՛չ, Տե՛ր:

- Ես էլ քեզ չեմ դատապարտում, գնա, այսուհետև մի՛ մեղանչիր:

Դրանից հետո փարիսեցիներից ոչ մեկը չհամարձակվեց փորձել Հիսուսին: Թվում էր՝ նրանք նույնիսկ համաձայն էին հաշտվել Նրա հետ: Նրանց համար անընդունելի էր մնում լոկ մի բան. ինչպես կարող է ժողովրդի Մարդը համարել Իրեն Փրկիչ կամ թեկուզ թույլ տալ, որպեսզի բազմությունը այդպես կոչի Իրեն: Իմանալով այդ թյուրըմբռնողությունների մասին, Հիսուսն Իր մոտ կանչեց փարիսեցիներին և հարցրեց.

- Ինչ կարծիք ունեք Քրիստոսի մասին, ում Որդին է:

- Դավթի,- պատասխանեցին նրանք:

- Իսկ Դավիթն ինչպես Նրան Սուրբ Հոգով կոչում է Տեր և ասում է.

Տերն իմ Տիրոջն ասաց՝
Նստիր Իմ աջ կողմում,
մինչև որ Քո թշնամիներին դնեմ
Քո ոտքերի տակ:

Արդ, եթե Դավիթը նրան Տեր է կոչում, ինչպես Նրա Որդին կլինի[16]:

Դրանով իսկ Փրկչի մարդկային ծագման մասին հարցը մղվեց երկրորդ պլան: Փրկչական խորհուրդը գտնվում է ոչ այնքան թագավորական տան պատկանելության մեջ, որքան այն բանում, որ Ազատարարը լինում է Հոր աջ կողմում և Աստծո Որդի է, աշխարհի Տեր:

Փարիսեցիները ոչինչ չկարողացան հակաճառել: Սաղմոսի բառերը, իրոք, առեղծվածային էին: Բայց Հիսուսի ասածը նրանց համար առավել ևս դժվար էր ընդունել:



Տասնչորսերորդ գլուխ

# ՓՐԿՉԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

## 5 ապրիլի

Մի օր անց Հիսուսը երևաց Տաճարի «Կանանց գավիթ» անունը կրող ներսի հրապարակում և նստեց շվաքարանում, հանգանակության դրամատուփի մոտ: Զատկի օրերին մարդիկ, սովորաբար, ամենամյա եկեղեցական մուծումներ էին կատարում: Շատերը անցնելով, դրամը շաղ էին տալիս բռերով, բայց Հիսուսի ուշադրությունը գրավեց խղճուկ հագնված մի կին, որը դրամատուփի մեջ գցեց երկու մանր լումա: Մոտ կանչելով աշակերտներին, Նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս չքավոր այրին ավելի շատ գցեց, քան գանձանակի մեջ մյուս բոլոր դրամ գցողները, քանի որ ամենքը իրենց ավելորդից գցեցին, իսկ նա իր չքավորությունից, գցեց ամեն ինչ, որ ուներ՝ գցեց, իր ամբողջ ապրուստը»[1]: Աղքատ կնոջ զոհաբերությունը Երուսաղեմում միակ բանն էր, որ ուրախություն պատճառեց և հուզեց Հիսուսի սիրտը:

Գտնվելով եկեղեցական կյանքի հենց կենտրոնում, Նա տեսնում էր ցուցադրական բարեզարդությամբ քողարկված դրա ախտերը: Նրա կողքով բարահաճորեն պատասխանելով ողջույններին, հանդիսավոր

քայլում էին օրենքի ամբարտավան այրերը: Աչքի էին զարնում նրանց «թեֆիլլինները»՝ ճակատի ժապավենները, Թորայի տեքստերով, և աստվածպաշտության մյուս բնորոշ հատկանիշները, բայց ինչքան քիչ էին դրանք համապատասխանում այդ մարդկանց հոգեկան նկարագրին: Հիսուսը տեսավ և գիտունների, որոնք ժամերով քննարկում էին կանոնագրքի աննշան նրբությունները, տեսավ և. ոտքը քարին դիպցնելով սայթաքող փարիսեցիների, որոնք ուզում էին ցուցադրել իրենց ներկլանվածությունը ե հրաժարումն աշխարհից: Հիսուսը գիտեր, թե ինչ դյուրությամբ են թափանցում այդ միջավայր փառամոլները, որոնք հետո աբրում են հոգիների վրա ունեցած իշխանությունից: Նման հովիվների մասին դեռես Եզեկիելն է ասել, որ նրանք «արածացնում են իրենք իրենց»: Թվում էր, որ նույնիսկ Աստվածաշնչյան հայտնության լույսը կաղոտանար ինքնագոհության ե սուտ ճգնավորության այդ գաղջ մթնոլորտում:

Ինչու դեռևս Գալիլիայում դպիրների մեծամասնությունը ընդդիմացավ Հիսուսին: Չէ որ այդ ժամանակ Նա թաքցնում էր Իր փրկչականությունը: Իսկ մոլորյալ որդիներին շնորհի արժանացնող ավետումը Հոր մասին պետք է արթնացներ բոլոր նրանց, ովքեր հավատարիմ էին մնացել մարգարեների ուսմունքին: Հետևապես, դպիրները զրկել էին մարգարեական քարոզչությունը իր գլխավոր իմաստից: ուքով ընդունելով, որ Թորայի հիմքը սերն է Աստծու և մարդու հանդեպ, նրանք շարունակում էին ննենգափոխել Աստծո Օրենքի ոգին պարտականությունների և պաշտամունքային կանոնների ձևական համակարգով:

Միքիա մարգարեն սովորեցնում էր.
Պատմվեց քեզ, ո՛վ մարդ, թե ի՛նչ է բարին.
և ինչ Է ուզում քեզանից Տերը,
իրավունք հաստատել, ողորմություն սիրել,
և պատրաստ լինել քո Տեր Աստծու ետևից գնալու[2]:

Այնինչ, փարիսեցիները, առանձնապես Շամմայի աշակերտները ամբողջովին խորասուզվել էին ծիսապաշտության և դիպվածական՝ կեղծ փաստաբանական մեկնությունների անմատչելի ոլորտները: Կանոնների գիտակները դրանք դարձնում էին «տգետների» վրա տիրապետություն հաստատելու միջոց: Այդ հիմքի վրա ծագեցին համարյա դաժանության հասնող մի շարք չարաշահումներ:



Քրիստոսը ցանկանում էր հետ պահել Եկեղեցին այդ գայթակղությունից, «փարիսեցիական մերանից», և Իսրայելի հովիվների օրինակով ցույց տալ, թե ինչ վտանգ կարող է սպառնալ նրան: Դիմելով աշակերտներին, Նա ասաց.

Մովսեսի աթոռի վրա նստեցին օրենսգետներն ու փարիսեցիները,
ամեն ինչ, որ նրանք ձեզ ասեն, արե՛ք և պահեցե՛ք,
բայց մի՛ արեք ըստ նրանց գործերի,
քանի որ ասում են, բայց չեն անում:
Ծանր ու դժվարակիր բեռներ են կապում և
դնում մարդկանց ուսերի վրա,
բայց իրենց մատով անգամ չեն կամենում շարժել դրանք:
Եվ իրենց բոլոր գործերն անում են՝ ի ցույց մարդկանց,
լայնացնում են իրենց գրապանակները
և երկարացնում են իրենց զգեստների ծոպերը:
Սիրում են ընթրիքների ժամանակ պատվո տեղերը,
ժողովարաններում՝ նախապատիվ աթոռները
և հրապարակներում ողջույններ առնել
ու մարդկանցից կոչվել՝ ռաբբի,
որ նշանակում է ուսուցիչ:
Բայց դուք որևէ մեկին ուսուցիչ մի՛ կոչեք,
որովհետև, ձեր ուսուցիչը մեկ է,
և դուք բոլորդ եղբայրներ եք:
Եվ երկրի վրա ոչ մէկին ձեզ հայր մի՛ կոչեք,
որովհետև մե՛կ է ձեր Հայրը, որ երկնքում է:
Եվ ուսուցիչներ չկոչվեք,
որովհետև Քրիստոս է ձեր Ուսուցիչը:
Եվ ձեզնից մեծը ձեր սպասավորը պիտի լինի:
Ով որ իր անձը բարձրացնում է, կխոնարհվի,
և ով խոնարհեցնում էիր անձը, կբարձրանա[3]:

Հրաժարվելով մարդկանց վրա անառարկելի հեղինակության իշխանությունից, Հիսուսը Իր առաքյալների հետ կտակեց միայն մի իշխանություն՝ սիրո և ծառայության իշխանությունը:

Բայց դա չէր նշանակում, թե Նա պատրաստ է փոխզիջման գնալ երկդիմության և խաբեբայության հետ: Երբ Քրիստոսը Երուսաղեմ մտավ «Օվսաննաների» հնչյունների ներքո, Նա Իրեն հանդես բերեց որպես հաշտության հեզաբարո Թագավոր: Պատասխանելով աստվածա-

բանների հարցերին, Նա թողնում էր իմաստուն Քարոզչի տպավորություն: Հիմա հասել է ժամը, երբ Նա պետք է հանդես գա որպես դիմակազերծող Մարգարե:

Իր խոսքերում Նա սկսեց անդրադառնալ զելոտներին և սադուկեցիներին, որոնց օրերն արդեն հաշվված էին: Առաջինները իրենք պատրաստեցին իրենց կործանումը, բորբոքելով պատերազմի հուրը, երկրորդներն իրենցից ներկայացնում էին տարեցտարի ժողովրդի աջակցությունը կորցնող մի բուռ հարուստ կղերականներ: Հինկտակարանյան Եկեղեցու իսկական ներկայացուցիչները փարիսեցիական պատկանելություն ունեցող դպիրներն էին, ռաբբիները, մեկնիչները: Հիսուսը չէր ժխտում և չէր նվազեցնում նրանց ծառայությունները: Նա ուղղակի ասում էր, որ առաքյալները ցանեն նախապես հավատի վարդապետների կողմից հերկած հողում. «Ուրիշները աշխատանք թափեցին, իսկ դուք նրանց վաստակի մեջ մտաք»[4]: Բայց դպիրների հենց այդ կոչվածությունն էր դնում նրանց վրա մեծագույն պատասխանատվություն և նրանց մեղքը դարձնում կրկնապես ծանր:

Քրիստոսի պսակազերծումները Փրկչի իսկական դատաստան էր նրանց հանդեպ, ովքեր ցանկանում էին ծեսերի և ընծաների օգնությամբ «փրկագին» տալ Աստծուն, ովքեր իրենց համարում էին փրկության բանալիները տնօրինելու մենաշնորհն ունեցող արտոնյալ դաս:

Հարյուրամյակների և քաղաքների, կրոնների և եկեղեցիների վրա, ինչպես հատու սուր, հնչում էր Աստծո Որդու խոսքը.

Վա՛յ ձեզ՛ կեղծավորներիդ՝ ու օրենսգետներիդ և փարիսեցիներիդ,
որ Երկնքի Արքայությունը փակում էք մարդկանց առաջ,
դուք չեք մտնում և մտնողներին էլ թույլ չեք տալիս, որ մտնեն...
Վա՛յ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և կեղծավոր փարիսեցիներիդ,
որ շրջում եք ծովի ու ցամաքի վրա՝
անգամ մեկին նորահավատ դարձնելու համար,
և երբ նա այդպիսին է դառնում,
նրան ձեզանից կրկնակի անգամ ավելի
գեհենի որդի եք դարձնում...
Վա՛յ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և կեղծավոր փարիսեցիներիդ,
որ տալիս եք անանուխի և սամիթի ու չամանի տասանորդը*,

* Եկեղեցական հարկ:



բայց թողել եք Օրենքի ամենից կարևորները՝
արդարադատությունը, ողորմությունը և հավատը.
Հարկ էր այս անել
և այն չթողնել:
Կույր առաջնորդներ,
որ մժղուկները քամում եք
և ուղտերը կուլ եք տալիս:
Վա՛յ ձեզ՝ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ,
որ բաժակի ու պնակի դուրսը մաքրում եք,
մինչ ներսից նրանք լի են ձեր գողությամբ և անժուժկալությամբ:
Կո՛ւյր փարիսեցի, նախ մաքրի՛ր բաժակի և պնակի ներսը,
որպեսզի դրանց դուրսն էլ մաքուր լինի:
Վա՛յ ձեզ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ,
որ նման եք սպիտակեցրած գերեզմանների,
որոնք դրսից գեղեցիկ են երևում,
մինչ ներսից լի են մեռելների ոսկորներով
և ամենայն ապականությամբ:
Նույնպես և դուք, դրսից մարդկանց արդար եք երևում,
մինչ ներսից լի եք կեղծավորությամբ եւ անօրինությամբ:
Վա՛յ ձեզ՝ կեղծավորներիդ՝ օրենսգետներիդ և փարիսեցիներիդ,
որ մարգարեների շիրիմներն եք շինում և
արդարների գերեզմաններն եք զարդարում
ու ասում եք.
«Եթե մենք մեր հայրերի օրոք լինեինք,
մարգարեների սպանությանը մասնակից չէինք լինի»:
Ապա ուրեմն դուք ինքներդ ձեր մասին վկայում եք,
թե որդիներն եք նրանց,
որոնք կոտորում էին մարգարեներին:
Ուրեմն դուք էլ լրացրե՛ք ձեր հայրերի արածը:
Օձե՛ր, իժերի՛ ծնունդներ,
ինչպես պիտի փախչեք գեհենի դատապարտությունից:
Դրա համար Աստծու իմաստությունն ասաց.
«Ահա Ես ձեզ մոտ ուղարկում եմ մարգարեներ,
իմաստուններ ու օրենսգետներ.
Նրանցից ոմանց դուք պիտի սպանեք և խաչը պիտի հանեք,
նրանցից ոմանց էլ պիտի տանջեք ձեր ժողովարաններում
ու քաղաքից քաղաք պիտի հալածեք,

որպեսզի ձեր վրա ընկնի մեղքը երկրի վրա թափված
ամեն արդար արյան՝
արդար Աբելի արյունից մինչև արյունը
Բարաքիայի որդի Զաքարիայի,
որին սպանեցիք տաճարի և զոհասեղանի միջև։
Ճշմարիտ եմ ասում ձեզ, այս բոլորը պիտի գա այս սերնդի վրա»[5]։

Մարդիկ պետք է որ սարսափով, շունչը պահած լսեին Հիսուսին։ Դիմակին հասցված հարվածը փշուր-փշուր էր անում այն, և նրա տակ բացվում էր հոգևոր դատարկությունը։

Ոչ մեկի մասին Հիսուսը չէր խոսել այսքան կտրուկ։ Նա կարեկցում էր մեղավորներին և մոլորյալներին, հետագայում Նա կներեր աշակերտների փոքրոգությունը, իսկ Պետրոսի՝ ուրացությունը։ Նա չի համդիմանի և իրեն՝ Հուդային։ Անգամ «Մարդու Որդուն ամբաստանելը» Հիսուսի խոսքերով կարող է թողության արժանանալ։ Միայն մի բանի հանդեպ Նա չունի ներողամտություն, բարեպաշտության փարիսեցիական խեղանկարի, որը հավասարազոր է Աստծո Հոգու հանդեպ սրբապղծության...

Ավետարանը չի ասում, թե ինչպես ընդունեցին աշակերտները Տիրոջ պսակազերծող ելույթները, բայց, ըստ երևույթին, դրանք նրանց տագնապ ներշնչեցին։ Զնայած առաջ էլ առաքյալները Ուսուցչից լսել էին նման բաներ, բայց մի բան է դա ասել Կափառնայումում, և այլ՝ այստեղ, Երուսաղեմում, որտեղ փարիսեցիները ազդեցիկ կուսակցություն էին։ Հիմա դժվար կլինի հուսալ անգամ մասնակի հաշտեցում։

Բայց հնարավոր է, արդյոք, որ Փրկիչը մշտապես բախվեր ժողովրդի ճանաչված առաջնորդների հետ։ Կամ մարգարեությունը Երուսաղեմի մասին որպես Գալիքի մայրաքաղաքի, կեղծ է։ Ինչի համար է այդ դեպքում Հիսուսը եկել այս քաղաքը։

Առաքյալներն այնքան էին ուզում հավատալ, որ սրբազան վայրը և Աստծո Տունը կդառնան Քրիստոսի կալվածքը, որտեղ կհաստատվի Նրա Թագավորությունը։ Չէ որ, Նա Ինքը սրբեց Տաճարը սրբապիղծ մարդկանցից և անվանեց «աղոթքի Տուն»։

Զհամարձակվելով խոստովանել իրենց կասկածները, նրանք խոսք բաց արին Հիսուսի մոտ Տաճարի մասին։ Տասներկուսից մեկը հույս ուներ Նրա հիացմունքը շարժել սրբարանի կառույցի վիթխարի տեսքով։

– Վարդապե՛տ, տես ինչպիսի քարեր են սրանք, և ինչպիսի շինվածք։



– Տեսնում ես այդ բոլոր շինությունները,– խստորեն ասաց Հիսուսը,– ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դրանց քարը քարի վրա չպիտի թողնվի, որ չքանդվի[6]։

Առաքյալներն ապշեցին։ Նրանք այդպիսի պատասխան չէին սպասում։ Նրանց պարզ դարձավ, որ դա դատավճիռ է, և վերջին դատավճիռ։

Ոչ մի բառ չասելով, ընկճված, նրանք Քրիստոսի ետևից դուրս եկան դարբասից։ Մռայլ մտքեր էին պատել նրանց, իսկ Հուդայի հոգում, հավանաբար, իսկական խռովք սկսվեց։ Եթե առաջ նրա մեջ հազիվ էր նշմարվում հավատի կայծը, ապա այն վերջնականապես մարեց։ Մարդը, Որը կանխատեսում է Տաճարի կործանում, չի կարող Փրկիչ լինել։ Նա Իր աշակերտներին խոստացավ հաղթանակ, իսկ իրականում անարգեց Օրենքի պահապաններին և ոտքի հանեց ողջ քաղաքն Իր դեմ։ Նա կամ խենթ է կամ՝ խաբեբա։ Վաղ թե ուշ իշխանությունները հաշվեհարդար կտեսնեն Նազովրեցու հետ։ Բայց ինչ կլինի իր հետ, Նրա կողմնակիցների հետ։ Նրանց, իհարկե, նույնպես չեն խնայի։ Հարկավոր է, ինչքան կարելի է, արագ վտանգազերծել իրեն, և ավագերեցներին օգնել՝ Հիսուսին ձերբակալելու...

Նույն այդ ժամանակ Հիսուսն սկսեց բարձրանալ Ձիթենյաց լեռը։ Ճանապարհին Նա կանգ առավ և նստեց լանջին։ Աշակերտների մեծ մասը չսպասելով Նրան՝ գնացին։ Նրա հետ մնացին միայն Սիմոնը, Անդրեասը՝ Զեբեդեոսի որդիները։

Հիսուսը լռում էր, նայելով Իր ոտքերի տակ փռված նիրհող քաղաքին։ Երեկոյի անդորրը թագավորում էր բլուրների վրա, մայրամուտի ցոլքը բոցավառել էր Տաճարի կատարը, ոսկեօրել էր աշտարակները։ Օդում գարնանային խոտերի և թարմ սաղարթների բուրմունք էր տարածվել։

Աշակերտները կռահեցին, որ Հիսուսը մտածում է Երուսաղեմի մասին։ Նրանց համակել էր սոսկում և տրտմություն։ Քաղաքը, որտեղ յուրաքանչյուր քար կարող է պատմել իմաստունների և մարգարեների մասին, պատիժների և մարտերի մասին, ջերմեռանդ աղոթքների և հույսերի մասին, ինչքան երկար սպասեց Ազատարարի, և, երբ եկավ, չճանաչեց Նրան...

Վերջապես առաքյալները խզեցին լռությունը։ Երբ կլինի դա։ Երբ կկատարվի Տաճարի դատաստանը։ Հնարավոր է, դրանից հետո կգա Օրը, որին այնքան տենչանքով սպասում էին։ Մարդու Որդին Իր փառքը հանդես կբերի և վեր կխոյացնի աշխարհի վրա հավիտենական փրկչական Տաճար։

Եվ այդժամ Քրիստոսն սկսեց խոսել Վախճանի մասին:

«Բայց դուք այդ թզենո՛ւց սովորեցեք առակը,- ասաց Նա:- Հենց որ նրա ոստերը կակղեն, և նրա վրա տերև դուրս գա, իմանում եք, որ ամառը մոտ է»: Այդպես և հինուխտյան աշխարհի աղետների մոտալուտ լինելը նկատվում է կանխանշանների շղթայով[7]: Կհայտնվեն սուտ մարգարեներ և սուտ քրիստոսներ, մոլորեցնելով շատերին: «Լսելու եք պատերազմների ձայներ և պատերազմների լուրեր, զգո՛ւյշ եղեք, չխռովվեք, որովհետև պետք է, որ այդ ամենը լինի, բայց դա դեռ վախճանը չէ»: Հիսուսին հավատարիմները կենթարկվեն դաժան հետապնդումների: «Եվ այն ժամանակ շատերը պիտի գայթակղվեն և միմյանց պիտի մատնեն ու միմյանց պիտի ատեն... Եվ անօրինության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի»:

Եվ, վերջապես, կհայտնվի վերջին չարագուշակ նշանը. «Ուր որ դիակն է, այնտեղ կհավաքվեն արծիվները»: Դիակը դա դատապարտված, հոգևոր վերածննդի համար իր մեջ ուժ չգտած Երուսաղեմն է, իսկ արծիվները՝ Հռոմի կայսերական խորհրդանշանները:

Հնարավոր է, որ հենց այդ պահին, երբ Հիսուսը խոսում էր դրանց մասին, արևմտյան պարսպի մոտ արդեն կենտրոնանում էին Պիղատոսի ջոկատները, որոնք սովորաբար Զատկին քաղաք էին ժամանում: Նրանց մեջ էին նաև զինվորները, որոնց ձեռքերը երկու օր անց Մարդու Որդուն գամելու էին խաչին, և հնարավոր է, որ նույնիսկ մի քանիսը նրանցից, որոնց քառասուն տարի անց վիճակված է լինելու դատել Դավթի քաղաքը...

«Բայց երբ կտեսնեք,- շարունակեց Հիսուսը,- Երուսաղեմը՝ շրջապատված զորքերով, այն ժամանակ իմացեք, որ նրա ավերումը մոտ է: Այն ժամանակ նրանք, որ Հրեաստանում են, թող փախչեն լեռները»: Մարդկանց մեղքերի համար Աստծո կողմից թողնված զոհասեղանի փոխարեն կհայտնվի «ավերող պղծությունը», որի մասին խոսվում է Դանիելի գրքում: Կռապաշտները կգրավեն և կպղծեն սրբավայրը[8]: Նրանց իշխանությունը կձգվի այնքան ժամանակ, մինչև, որ լրանան «ժողովուրդների ժամանակները»*:

Հին Ուխտի միջնաբերդի խորտակումը կտեսնեն առաքյալներն իրենք և իրենց ժամանակակիցները, «ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս սերունդը** չպիտի անցնի, մինչև, որ այս ամենը կատարվի»:

Բայց միայն Հրեաստանը չի զգա մեծագույն ցնցումները: «Այդ

* Այսինքն՝ հեթանոսների:

** Այսինքն՝ ներկա սերունդը:



օրերի նեղությունից հետո» ողջ աշխարհով փոթորիկներ կանցնեն: Քրիստոսը այն ներկայացնում է հայտնութենական գրքերի գույներով: Կգան անթափանց խավարի, սարսափի և հոգեվարքի ժամանակներ: «Ազգը ազգի դեմ պիտի ելնի, և թագավորությունը՝ թագավորության դեմ, և մեծ երկրաշարժեր ու տարբեր տեղերում սով ու սրածություններ պիտի լինեն, պիտի լինեն արհավիրքներ և մեծամեծ նշաններ երկնքից... և երկրի վրա պիտի լինի հեթանոսների տագնապ՝ ծովի և խռովության* նման ահեղ ձայնի պատճառով, Տիեզերքի վրա գալիք պատահարների վախից և նախազգացումից, որովհետև երկնքի զորությունները պիտի շարժվեն»:

Ինչպես որ Երուսաղեմի կործանումը «սկիզբն է երկանց», այդպես էլ համաշխարհային աղետները վերջին Դատաստանի լոկ կանխանշաններն են: Այն տեղի կունենա անակնկալ: Ոչ ոք, անգամ հրեշտակները չգիտեն դրա ոչ օրը, ոչ ժամը: Ինքը՝ Աստծո Որդին, նվաստացնելով Իրեն, հրաժարվեց այդ իմանալուց: Հավատարիմները պետք չէ, որ հաշվեն «ժամանակներն ու ժամկետներն», այլ զգոն լինեն, գտնվելով մշտապես աղոթքի և Տիրոջը պատասխան տալու պատրաստակամության մեջ: Նրանց համար փառաբանված Հիսուսի գալուստը նշանակում է հանդիպման երանություն, վերջնական միացում Տիրոջ հետ: «Պիտի տեսնեն Մարդու Որդուն եկած՝ ամպերի վրա, զորությամբ և մեծ փառքով: Եվ երբ սկսվի այս բանը լինել, վեր կացեք և ձեր գլուխները բարձրացրեք, որովհետև մոտ է ձեր փրկությունը»:

Հիսուսի Ձիթենյաց լեռան վրա ասված մարգարեությունը Ավետարանի դժվարագույն առեղծվածներից մեկն է: Առաջին քրիստոնյաները հրեական հայտնության ազդեցության տակ այն լուծեցին պարզագույն կերպով. Տաճարի կործանումից կարճ ժամանակ անց, Քրիստոսը կհայտնվի, որպեսզի թագավորի աշխարհի վրա: Անգամ երբ համոզվեցին, որ Նրա խոսքերը սխալ են հասկացվել, շատ հավատացյալներ շարունակում էին ապրել աշխարհի մոտալուտ վախճանի նշանաբանով: Անհաշիվ անգամներ հայտնվել են աղանդավորներ, որոնք ազդարարում էին Ահեղ Դատաստանի գալը և նույնիսկ նշում էին դրա ժամկետը: Մարդիկ, միստիկական սարսափով համակված, թողնում էին աշխատանք, տուն, գնում էին անտառները և անապատները: Երբեմն վախճանաբանական զգացումը վարակում էր համարյա ողջ Եկեղեցին[9]: Սակայն անփոփոխորեն կատարվում էր Քրիստոսի խոսքը միայն Հորը հայտնի վերջին ժամի գաղտնիքի մասին:

* Ծովի ալիքներ-սատանայի աստվածաշնչյան հոմանիշ:

Ինչը ծնեց այս բազմադարյան թյուրիմացությունը:

Որոշ մեկնիչներ մտածում են, որ վախճանի մասին մարգարեությունը պատկանում է ոչ թե Քրիստոսին, այլ ավետարանիչներին կամ, ավելի ճիշտ, այն աղբյուրներին, որոնցից քաղել են նրանք, որ Տաճարի ճակատագրի մասին Քրիստոսի խոսքերն առաջին քրիստոնյաների մտքում միահյուսվում են աշխարհի կործանման գաղափարի հետ: Իրոք, Ավետարանները սղագրություններ չեն, Տիրոջ խոսքերը հաղորդելիս նրանցում կարող են արտահայտվել վաղ համայնքների հավատալիքները[10]: Բայց ինչն է ծնել այդ հավատալիքները: Արդյոք ժողովրդի երևակայությունը միայն: Եվ միթե կարող էին դրանք այդքան ամուր պահպանվել, եթե Քրիստոսը դրանց համար հիմքեր չտար: Հիշենք, որ Նրա քարոզչության սկիզբը Գալիլիայում արդեն կապված էր Աստծո Թագավորության գալու լուրի հետ: Վախճանաբանական թեման դուրս գցել Նրա ուսմունքից՝ նշանակում է շատ հեռու գնալ:

Այլ աստվածաբաններ, գտնելով, որ Հիսուս Քրիստոսը մարդկայնորեն կարող էր մոլորվել, հակված են սխալը տեսնել հենց Նրա մեջ: «Հիսուսը,- ասում են նրանք,- ապրում էր մոտալուտ վախճանի սպասումով»: Բայց այդպիսի հայացքը ընդունելի չի քրիստոնեական գիտակցության համար և հակասում է Ավետարանին: Հիսուսի ավետումը՝ վերցված ողջ ընդգրկումով, ենթադրում է առջևում Թագավորության հայտնությանը նախադրող երկարատև ժամանակ: Դա երևում է, ինչպես մենք արդեն ասել ենք, թեկուզ ցորենի, արտերի, ծառի, թթխմորի մասին եղած առակներից[11]: Տիրոջ Ձիթենյաց լեռան քարոզը հենց ներառում է այդ հեռանկարը: Նրա կողմից նշված «ժողովուրդների ժամանակները» բացարձակապես անորոշ ժամանակաշրջան է: Երուսաղեմի ավերումը և համաշխարհային աղետները Նրա կողմից համարվում է «սկիզբն երկանց»: «Մոտ է այն դռների առաջ» խոսքը ավելի շուտ պետք է հասկանալ մարգարեությունների չափագծումներով, որոնք սովորաբար պատկերում են «հազար տարին որպես մի օր»: Դրանք ոչ թե երկրային, այլ աստվածային չափագծումներ են:

Քրիստոսի խոսքերով, Նա փառքի մեջ կհայտնվի ոչ շուտ, քան «Արքայության այս Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ Տիեզերքում՝ ի վկայություն բոլոր հեթանոսների»[12]: Դժվար է պատկերացնել, որ Քրիստոսը տվյալ դեպքում նկատի է ունեցել ընդամենը մի քանի տասնամյակներ: Մենք գիտենք, որ այդ պայմանը քսան դար հետո էլ ամենևին չկատարվեց: Չէ որ նույնիսկ երկրներ, թվում է, թե քրիստոնեացած, հաճախ են մնում Ավետարանների էության վերաբերյալ անգիտության մեջ:



Բայց եթե Քրիստոսը խոսում էր հեռավոր ապագայի մասին, այդ դեպքում ինչի համար էր Նա աշակերտներին կոչ անում պատրաստ լինել: Ինչ կապ ունի նրանց հետ այն, ինչը կատարվելու է հազար տարի անց:

Մի շարք ժամանակակից հեղինակավոր մեկնիչներ ենթադրում են, որ Ավետարանում մենք գործ ունենք «իրականացված վախճանաբանության» հետ[13]: Այն, ինչ Քրիստոսը անվանում է աշխարհը դատող «Մարդու Որդու հայտնություն», Իր անձնական կյանքը, մահը և հարությունն է: Աստծո Որդու գալուստը արդարև դատաստան է, որը շարունակվում է դարերի միջով:

Այդ միտքը, ըստ երևույթին, կարելի է հաստատել Հիսուսի շատ ասույթներով: «Դատաստանի համար եկա այս աշխարհը», «Այժմ է այս աշխարհի դատաստանը.., »[14]: Եվ, այնուամենայնիվ, նրանք, ովքեր ուշադիր են կարդում Ավետարանը, պետք է ընդունեն, որ Քրիստոսը խոսում է Դատաստանի մասին ոչ միայն Իր ծառայության իմաստով: Նրա ավետումը անբաժանելի է Հին Ուխտի մարգարեություններից, որոնք մատնանշում են մարդկության ուղին դեպի ժամանակների լրում, դեպի Արքայության կատարյալ հաղթանակ:

Ինչու է Ավետարանում Հին Ուխտի վախճանի թեման միահյուսված Դատաստանի և պատմության վախճանի թեմայի հետ: Հավանաբար, Քրիստոսը գիտակցաբար իրար մոտեցրեց դրանք, քանզի խորհրդավոր կապ գոյություն ունի երեք իրադարձությունների՝ Մարմնավորման, Տաճարի կործանման և աշխարհի վերջին ճգնաժամի միջև:

Փրկարարի հայտնությունը «փրկչական դարաշրջանի» սկիզբն էր: Աստված մտավ մարդկության կյանք, մոտեցավ նրան այնքան անմիջականորեն, ինչպես առաջներում երբեք: Այդ հանդիպումը և դարձավ Դատաստան, որը գործարկվեց այն պահից, երբ նվաստացած Փրկիչը, սիրո և ճշմարտության բանբերը, մարդկանց դրեց ընտրության առջև՝ ընդունել կամ մերժել Իրեն:

Հին Ուխտի Եկեղեցին որպես Հայտնության կրող, արդեն մեկ անգամ չէ, որ դատվել է Աստծուց: Երբ մարդիկ հրաժարվում էին լսել մարգարեների կողմից ավետված Նրա խոսքը, նրանք զրկվում էին երկնային հովանավորությունից և ընկնում էին հեթանոսների ստրկական լծի տակ: 70 թվին այդ ողբերգությանը վիճակված էր կրկին տեղի ունենալ, քանի որ «Երուսաղեմը իր այցելության ժամանակը չճանաչեց»: Բայց Երուսաղեմի ճակատագիրը Աստծո տևական Դատաստանի փոխակերպությունն է. այն իր վրա զգում է նաև քրիստոնեական աշխարհը՝ Հռոմը, Ալեքսանդրիան, Կոստանդնուպոլիսը...

Աստծո նոր ժողովուրդը, ընդունելով Քրիստոսի Պատվիրանները, կրում է նույն պատասխանատվությունը, ինչ հին Իսրայելը: Այդ պատճառով էլ նա մշտապես կապրի «դատաստանի օրեր», մինչև որ բարու և չարի պայքարը կհասնի լարվածության բարձրագույն կետին, և այդժամ տեղի կունենա վերջին Դատաստանը, բեկում, պատմության կողմից իր սահմանների պատռում, աշխարհի մաքրում և կերպափոխություն...

Հին մարդիկ չկարողացան Աստվածահայտնությունը պատկերացնել այլ կերպ, քան տիեզերական աղետների լուսապսակով: Այդ պատճառով էլ, հետևելով մարգարեների սովորությանը, նաև Հիսուսն Ինքն էր խոսում խավարող Արեգակի և երկնքից վայր թափվող աստղերի մասին: Սակայն հայտնութենական սրբապատկերի այդ խորհրդանշականությունը պետք չէ ընդունել իրադարձությունների ճշգրիտ նկարագրության տեղ:

Ըստ էության, ավետարանական վախճանաբանությունը չի կենտրոնացված Դատաստանի բացահայտ կանխանշանների վրա: Այն տեղի է ունենում «աննկատելի» կերպով: Այն ժամանակից, երբ Աստված մարդեղացավ, դատվում է յուրաքանչյուր հոգի: Անհոգները և դատարկապորտները անակնկալի կգան, ինչպես անակնկալի եկան Երուսաղեմի ավագները: Խոսելով այդ մասին, Հիսուսը մատնանշում է ոչ թե հեռավոր ապագան, այլ այն, ինչը տեղի է ունենում այսօր և մշտապես: «Զգույշ եղեք ինքներդ ձեզնից, գուցե ձեր սրտերը ծանրանան շվայտությամբ և հարբեցողությամբ ու աշխարհիկ հոգսերով, և հանկարծակի հասնի ձեր վրա այն օրը. որովհետև այդ օրը որոգայթի նման պիտի հասնի»: Աստծո մերձավորությունը բացված է միայն արթուններին, մյուսները մնում են կույր և չնախապատրաստված: «Եվ ինչպես եղավ Նոյի օրով, ջրհեղեղից առաջ, երբ ուտում էին և խմում, կին էին առնում և մարդու էին գնում, մինչև այն օրը, երբ Նոյը տապան մտավ», այնպես և ցանկացած դարաշրջանում մարդիկ ապրում են, չկռահելով Դատաստանի մերձավորությունը[15]:

Տիրոջ առջև մշտապես հավաք և պատրաստ կանգնելու պատվիրանը Հիսուսն արտահայտել է մի քանի առակներում, որոնք պատմել է Վախճանի մասին արած մարգարեությունից անմիջապես հետո[16]: Դրանց գլխավոր հիմնավորումն է գալուստը կամ անակնկալ վերադարձը Նրա, Ով բացակայում է: Դա վերաբերում է և՛ Փրկչի սպասումներին, և՛ Նրա երկրային ծառայություններից հետո աշխարհի Դատաստանին: Քրիստոսը կարծես թե նախապատրաստում էր աշակերտներին բաժանմանը, որի ժամանակ նրանք չպետք է տրվեին տկարացվածությանը և հոգեկան թմրածությանը:

«Այս իմացե՛ք,- ասում էր Նա,- եթե տանտերը գիտենար, թե որ ժամին գող կգա, կհսկեր և չէր թողնի, որ իր տունը ծակեն»: Մարդը պետք է նույնպես նման լինի ծառայի, որին տիրոջ կողմից թողնված է տան տնօրինությունը: Օրհնյալ լինի նա, եթե կկատարի տիրոջ կամքը նրա բացակայության ժամանակ: «Իսկ եթե չար ծառան իր մտքում ասի՝ իմ տերը ուշանում է գալ, և սկսի իր ծառայակիցներին հարվածել և հարբեցողների հետ ուտի և խմի, և այդ ծառայի տերը գա այն օրը, երբ չէր սպասում, և այն ժամին, երբ չէր իմանում, նրա մեջքը կկոտրի և նրան կեղծավորների կարգին կդնի, այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում»:

Անակնկալ եկած Աստծո Թագավորությունը Քրիստոսը մյուս առակում նմանեցնում է փեսայի, որին մի անգամ սպասում էին հարսնացուի ընկերուհիները: Սովորության համաձայն, նրան պետք է դիմավորեին վառվող լապտերներով: Բայց տասը աղջիկներից միայն հինգը լամպի համար ձեթի պաշար վերցրին: Փեսան ճանապարհին ուշացավ, և նրանք քնեցին: Գիշերվա կեսին ձայն լսվեց՝ «Փեսան գալիս է»: Շրջահայացները նրան ընդառաջ ելան, իսկ մյուսների ճրագները մարած էին՝ նրանցում ձեթը վերջացել էր: Երբ նրանք այն գնելու շտապեցին և վերադարձան, դուռն արդեն փակ էր, իսկ փեսան նրանց ներս չթողեց:

Պատրաստ լինել՝ նշանակում է աշխատել Տիրոջ համար: Այդ է ուսուցանում չորրորդ վախճանաբանական առակը: Տերը, գնալով հեռավոր երկիր, երեք ծառաներին է թողնում տարբեր քանակությամբ տաղանդներ*: Երկուսը ջանացին բազմապատկել ստացածը, իսկ երրորդը այն թաղեց հողում: Վերադարձավ Տերը և ըստ արժանվույն գնահատեց ժրաջան ծառաների աշխատանքը, իսկ անփույթին պատժեց:

Ինչումն է կայանում այդ աշխատանքը: Հարցի պատասխանը բովանդակում է Թագավորի՝ Մարդու Որդու մասին առակում, Որը բաժանում է չարերին բարիներից, հովվի պես բաժանում է ոչխարները սև այծերից**:

Այն ժամանակ Թագավորը պիտի ասի նրանց, որ Իր աջին են.

«Եկեք, Իմ Հոր օրհնյալներ,
ժառանգեցեք աշխարհի սկզբից

* Տաղանդ՝ չափ, որը հավասար է 26 կգ արծաթի
** Պաղեստինում այծերը սովորաբար սև գույնի են:

ձեզ համար պատրաստված արքայությունը,
որովհետև քաղցած էի, և Ինձ ուտելիք տվիք,
ծարավ էի, և Ինձ ջուր տվիք՝ խմելու,
օտար էի, և Ինձ ձեր մեջ առաք,
մերկ էի, և Ինձ հագցրիք,
հիվանդ էի, և Ինձ տեսնելու եկաք,
բանտում էի, և Ինձ մոտ եկաք»:
Այն ժամանակ արդարները պիտի պատասխանեն.
«Տեր, երբ տեսանք Քեզ քաղցած ու կերակրեցինք.
կամ՝ ծարավ և ջուր տվեցինք.
Երբ տեսանք Քեզ օտար և մեր մեջ առանք,
կամ՝ մերկ և հագցրինք.
Երբ տեսանք Քեզ հիվանդ կամ բանտի մեջ
ու եկանք Քեզ մոտ»:
Թագավորը պիտի պատասխանի.
«Ճշմարիտ եմ ասում ձեզ,
քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝
Ինձ համար արեցիք»:
Այն ժամանակ Նա պիտի ասի նրանց,
որ Իր ձախին են,
«Անիծյալներ, գնացեք Ինձնից հավիտենական կրակը,
որ պատրաստված է սատանայի և հրեշտակների համար,
որովհետև քաղցած էի, և Ինձ ուտելիք չտվիք,
ծարավ էի, և Ինձ ջուր չտվիք,
օտար էի, և Ինձ ձեր մեջ չառաք,
մերկ էի, և Ինձ չհագցրիք,
հիվանդ էի ու բանտի մեջ,
և Ինձ տեսնելու չեկաք»:
Այն ժամանակ նրանք էլ պիտի պատասխանեն.
«Տեր, երբ տեսանք Քեզ քաղցած,
կամ ծարավ կամ օտար կամ մերկ,
կամ հիվանդ կամ բանտի մեջ
ու Քեզ չծառայեցինք»:
Այն ժամանակ պիտի պատասխանի նրանց.
«Ճշմարիտ եմ ասում ձեզ,
որովհետև այս փոքրերից մեկին այդ չարեցիք,
Ինձ համար էլ չարեցիք»:



Եվ նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանքները, իսկ արդարները՝ հավիտենական կյանքը*:

Այսպիսով, եթե ամբողջ աշխարհի համար Դատաստանի օրը ծածկված է ապագայի անթափանցելի քողով, ապա յուրաքանչյուր մարդ այսօր էլ արդեն կանգնած է Մարդու Որդու առաջ և, յուրաքանչյուրը փորձության է ենթարկվում Նրա կողմից: Նրա Թագավորությունը այստեղ է, «մեր մեջ»: Աստծո հնոցից նուրբ սահման է մեզ բաժանում: «Զգիտեք,֊ ասում է Քրիստոսը աշակերտներին,֊ թե երբ կգա՝ երեկոյան, թե՝ կեսգիշերին, աքլորականչին, թե՝ առավոտյան դեմ: Գուցե հանկարծակի գալով՝ ձեզ քնի մեջ գտնի: Բայց ինչ֊որ ձեզ եմ ասում, ամենքին եմ ասում՝ ԱՐԹՈՒՆ ԿԱՑԵՔ»:

* Տե՛ս վերևում, էջ 105 հաջորդիվ:

## Գլուխ տասնհինգերորդ

# ՆՈՐ ՈՒԽՏԻ ԶԱՏԻԿԸ

### ապրիլի 5-ի երեկոյից մինչև 7-ի գիշերը

Հենց նույն այդ ժամանակ, երբ Ձիթենյաց լեռան վրա Քրիստոսը զրուցում էր աշակերտների հետ վերջին օրերի մասին, Հուդան գաղտնի թափանցեց Կայիափայի պալատը, որպեսզի հանդիպի իշխանության ներկայացուցիչների հետ: Նա սադուկեցիներին առաջարկեց ամբողջ ուշադրությունը չգրավելու նպատակով, Հիսուսին գիշերը քաղաքից դուրս բռնելու իր ծրագիրը: Հուդային, իհարկե, սկսեցին հարցնել Ուսուցչի մտադրությունների և Նրա հետևորդների մասին: Հավանական է, Իսկարիովտացին հայտնել է, որ Հիսուսը, իր կարծիքով, մտադիր է հռչակել Աստծո Թագավորություն Զատկի օրը[1]:

Երկյուղելով, որ այն կարող է լինել Տաճարից առևտրականներին արտաքսելու նման ինչ-որ համդուգն գործողություն, քահանայապետները կառչեցին գայթակղությունը ժամանակին կանխելու հնարավորությանը: Չնայած ձերբակալությունը նախապես հետաձգված էր մինչ ետտոնական օրերը, Հուդայի համագործակցությունը ստիպեց Սինեդրիոնին փոխել որոշումը, առավել ևս, որ նա պատրաստակամություն հայտնեց, որ ինքը կտանի պահակներին այն տեղը, որտեղ սովորաբար թաքնվում էր Հիսուսը:



Արդեն դավաճանության ուղին բռնած Իսկարիովտացին չէր կարող կանգ առնել: Հիմա նա արդեն մտադիր էր իր դավաճանությունից շահույթ էլ կորզել. «Ինչ եք ուզում ինձ տալ»,- հարցրեց նա, որից հետո ավագերեցները անմիջապես վճարեցին նրան օգնության համար[2]: Ստանալով արծաթը, կարծես ոչինչ չէր եղել, Հուդան վերադարձավ Ուսուցչի մոտ:

Հինգշաբթի առավոտյան Հիսուսը առաքյալներին պատվիրեց պատրաստվել սեդերի` զատկական հացկերույթի: Ըստ կանոնի, այն հարկ էր սկսել նիսանի 14-ի երեկոյան, որը այդ տարի ընկնում էր ուրբաթ օրը: Բայց Տերը գիտեր մատնության մասին, գիտեր, որ Իրեն մնացել է ազատության մեջ լինել մեկ օրից էլ քիչ, և այդ պատճառով էլ ուզում էր հասցնել Զատիկը դիմավորել աշակերտների շրջանում: Նա առանձնահատուկ նշանակություն էր տալիս Իր երկրային կյանքի այդ վերջին տոնակատարությանը:

«Խիստ ցանկացա այս պասեքը* ուտել ձեզ հետ, քանի դեռ չեմ չարչարվել,- ասաց Հիսուսը,- բայց ասում եմ ձեզ, թե այլևս չեմ ուտելու սրանից, մինչև որ պասեքը կատարվի Աստծո Արքայության մեջ»[3]: Առաքյալներն այդ բառերը հասկացան յուրովի: Նույնիսկ երբ նախօրյակին Նա ասաց. «Գիտեք, որ երկու օր հետո Զատիկ է, և Մարդու Որդին պիտի մատնվի խաչ ելնելու համար», նրանք չէին հավատում ողբերգական վախճանի և շարունակում էին մտածել, որ այս սեդերը կդառնա Նրա հաղթանակի նախօրե[4]:

- Ուր ես կամենում` պատրաստենք զատիկը,- հարցրին աշակերտները: Հուսալի կլիներ մնալ Բեթանիայամ, բայց Հիսուսը ուղարկեց նրանց քաղաք Իր գաղտնի հետևորդներից մեկի մոտ[5]: Պասեքը պետք է կատարվի ըստ Օրենքի` Երուսաղեմում:

- Գնացեք քաղաք այսինչ անձի մոտ,- պատվիրեց Նա Պետրոսին և Հովհաննեսին,- և ասեք նրան` «Վարդապետն ասում է` Իմ ժամանակը մոտեցել է, քեզ մոտ եմ անելու զատիկը Իմ աշակերտների հետ»:

Պահպանելով այդ թանկարժեք ժամերը, Նա նախազգուշական միջոցներ ձեռք առավ: Տանտիրոջ անունը Նա տվեց միայն երկուսին, Քրիստոսը նրանց նշան տվեց, նրանք կհանդիպեն դարբասների մոտ սափորով ջուր բերողի, որը կուղեկցի նրանց:

Գաղտնիության պարագան սկսեց անհանգստացնել աշակերտներին` նրանցից երկուսը զինվեցին հանկարծակի հարձակմանը դիմագրավելու համար:

* Տվյալ կոնտեքստում Զատիկի գառան հոմանիշ:

Հայտնի չէր, հնարավոր կլիներ գառ ճարել և մինչև տոնակատարությունը օրվա ընթացքում ընդունված զոհաբերությունը կատարել: Բացառված չէ, որ սովորույթը թույլ էր տալիս դա, քանի որ հազարավոր ուխտավորներ ցանկանում էին մասնակցություն ունենալ ծիսակատարությանը[6]: Բոլոր դեպքերում Ուսուցչի անծանոթ բարեկամը հոգացել էր ամեն ինչ:

Օրվա վերջում Քրիստոսը աշակերտների հետ եկավ Երուսաղեմ: Առաջին անգամ այդ շաբաթվա ընթացքում Նա պատրաստվեց այնտեղ անցկացնել գիշերը: Տանտերն արդեն սպասում էր նրանց: Մեծ վերնասենյակը ավլել և խսիրներ էին փռել: Թթխմորով հացի ողջ մնացորդը, սովորության համաձայն, ոչնչացրել էին: Սեղանի վրա կային բաղարջով լի կավե ամաններ, գինու կժեր, սկիհներ: Գառան մասին կամ հենց «զատկի» մասին ավետարանիչները չեն հիշատակում, բայց եթե մեր ենթադրությունը ճիշտ է, մատուցվել է նաև այդ ավանդական ճաշատեսակը: Աղոթքներով ուղեկցվող յուրաքանչյուր հացկերույթ հրեաների մոտ համարվում էր իր տեսակի մեջ ծես: Դրան մասնակցում էին ընտանիքի անդամները միայն կամ փոքրիկ եղբայրակցությունները՝ «խաբուրոտները»: Այդպիսի երեկոներին տեղերը զբաղեցվում էին ըստ ավագության, որը խստորեն պահպանվում էր: Այդ պատճառով էլ առաքյալները ներս մտնելով, սկսեցին վիճել, թե ով ավելի մոտ կլինի Ուսուցչին: Սակայն Հիսուսը հիշեցրեց նրանց, որ ոչ միայն այդ հանդիսավոր պահին, այլև, ցանկացած ժամանակ նրանք պետք է հաղթահարեն ամեն կարգի փառամոլություն[7]:

Հինուխտյան մարգարեությունները հաճախ են փրկչական Թագավորությունը պատկերել խնջույքի տեսքով[8]: Եթե դատենք Քրիստոսի շատ առակներից, Նա պահպանում էր այդ խորհրդանիշները: Նրա համար տոնական սեղանի շուրջ հավաքված եղբայրները մարմնավորում էին փրկչական համայնք, որի գլխավորը Նա Ինքն էր:

Այդ ժամանակվա սովորությամբ, բոլորն ընկողմանեցին ցածր մահիճների վրա, Հովհաննեսը՝ Տիրոջ կողքին, Սիմոնը՝ Նրա դիմաց, մոտիկ էր գտնվում նաև Հուդան:

Ավաղ հինգշաբթվա սրբազան իրադարձությունը, որին սպասվում էր ապրել Պատարագի խորհրդի մեջ, դառնալ Եկեղեցու առանցքակետը, և, որը պետք է վառ կերպով արտահայտվեր աղոթքներում և հիմներում, Ջոտտոյի, Դիոնիսի, Լեոնարդոյի ստեղծագործություններում, տեղի էր ունենում անքմահաճ պարզության պայմաններում: Միայն Իսկարիովտացու ներկայությունը, եթե առաքյալներն իմանային



մատնության մասին, կարող էր պղտորել երեկոն: Բայց նրանք առայժմ ոչինչ չէին կռահում:

Թեպետև սեդերի օրինական ժամկետը սկսվում էր միայն հաջորդ օրը, Քրիստոսը, հավանաբար, ամեն ինչում հետևում էր զատկական ծիսակարգին[9]: Դա Իր տոնն էր, Իր «Նոր Զատիկը», որը նշանավորում էր արդեն ոչ թե մի ժողովրդի ազատություն դուրս գալ և Աստծուց որդեգրվել, այլ ապաշխարության շնորհ ողջ աշխարհին:

Ընթրիքի սկզբում, որպես ակնածանքի արտահայտություն, հարկ էր ձեռքերը լվանալ: Դրանից հետո Քրիստոսը անսպասելի տեղից բարձրացավ և հանելով վերնազգեստը, սրբիչը կապեց մեջքին: Տասներկուսը տարակուսանքով կարկամեցին: Նա Ինքը ջուր լցրեց կոնքը և պատրաստվեց լվանալ աշակերտների ոտքերը: Արևելքում դա անում էին ծառաները, դիմավորելով հյուրերին՝ փոշոտ ճամփաների ճամփորդությունից հետո: Բայց Քրիստոսի Համայնքում ծառա չկար և չէր էլ կարող լինել: Ծառայի պարտականությունները կատարում էր Ինքը՝ Տերը:

Անհնար է նկարագրել այն ծայրահեղ շփոթմունքը, որի մեջ գցեց Հիսուսը ներկաներին: Կեփասը, երբ Նա մոտեցավ նրան, բացականչեց.

– Դու ես իմ ոտքերը լվանում:

– Ինչ-որ Ես անում եմ, դու հիմա չես իմանում, բայց հետո կիմանաս:

– Իմ ոտքերը հավիտյան չես լվանա,– ընդդիմացավ Սիմոնը:

– Եթե քեզ չլվանամ, Ինձ հետ մաս չունես:

Պետրոսը ավելի վշտացավ:

– Տե՛ր, ոչ միայն իմ ոտքերը, այլև իմ ձեռքերն ու գլուխն էլ լվա:

– Լվացվածին ուրիշ բան պետք չէ,– պատասխանեց Հիսուսը,– բայց միայն ոտքերը լվանալ, քանի որ ամբողջությամբ մաքուր է և դուք մաքուր եք, բայց ոչ բոլորդ[10]:

Դա առաջին ակնարկն էր՝ այդ օրը իրենց մեջ գտնվող դավաճանին ուղղված:

Երբ Հիսուսը վերադարձավ սեղանի գլուխ, Իր տեղը՝ ասաց. «Գիտեք, թե այդ ինչ արեցի ձեզ: Դուք Ինձ Վարդապետ և Տեր եք կոչում, և լավ եք անում, քանի որ Ես իսկապես վարդապետ եմ և Տեր: Իսկ արդ, եթե Ես՝ Տերս և Վարդապետս, լվացի ձեր ոտքերը, դուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ, որովհետև մի օրինակ տվի ձեզ...

Ես ձեր մեջ եմ իբրև սպասավոր... Եվ դուք եք, որ Իմ փորձու-

թյունների մեջ Ինձ հետ էիք մնում մինչև այժմ: Եվ Ես ուխտում եմ ձեզ, ինչպես և Իմ Հայրը Ինձ հետ ուխտ դրեց տալու Արքայությունը, որպեսզի ուտեք և խմեք Իմ սեղանից Իմ Արքայության մեջ»[11]:

Սովորության համաձայն, գինին խառնեցին ջրի հետ և, յուրաքանչյուրը լցնելով իր գավաթը, գոհության աղոթք ասաց. «Օրհնյալ ես Դու, մեր Տեր Աստված, տիեզերքի Թագավոր, խաղողի որթատունկը ստեղծող»: Այնուհետև լսեցին զատկական փառաբանություններ, Ելքի մասին պատմություններ, կերան գառան միս՝ կծու համեմունքներով:

Գիշերը վրա հասավ: Վերնատանը ճրագները վառեցին: Բոլորը նկատեցին, որ Ուսուցիչը թաղված է խորը վշտի մեջ: Երբ Նա արտասանեց սաղմոսի՝ «ով Ինձ հետ հաց էր ուտում, Իմ դեմ դարձավ» բառե- րը, առաքյալները հասկացան, որ Նրան սպասվում է անհայտ, բայց մոտալուտ վտանգ: Ի վերջո Հիսուսն ասաց ուղղակի. «Ձեզանից մեկը մատնելու է Ինձ, նա, որ Ինձ հետ իսկ ուտում է»: Վշտալի շփոթմունքով և սարսափով բոլորն սկսեցին իրար նայել: «Միթե ես եմ»,- տեղացին հարցերը: Հուդան, որին ծվատում էին հակասական զգացումներ, նույնպես համարձակվեց հարցնել՝ «Միթե ես եմ... »:

Թե ինչ պատասխանեց Տերը նրան, ոչ ոք չլսեց, բայց Հուդան հասկացավ, որ իր դիտավորությունը բացահայտված է: Հիսուսը դիմելով մյուսներին, ասաց. «Մարդու Որդին կգնա, ինչպես Նրա մասին գրված է, բայց վայ այն մարդուն, ում ձեռքով կմատնվի Մարդու Որդին: Ավելի լավ կլիներ նրա համար, եթե այդ մարդը ծնված չլիներ»:

Անորոշությունը տանջում էր Պետրոսին: Զհամբերելով՝ նա նշան արեց Ուսուցչի կողքին նստած իր երիտասարդ ընկերոջը, որպեսզի նա հարցնի, թե ով է մատնիչը: Հովհաննեսի հարցին Հիսուսը քիչ լսելի պատասխանեց. «Նա է, որի համար Ես այս պատառը կթաթախեմ և կտամ իրեն»:

Պատառը պարզված էր Իսկարիովտացուն: Այդ ժեստը ճաշկերույթի ժամանակ համարվում էր բարեհաճության և սիրո նշան: Տերը վերջին անգամ ցանկացավ փրկել կործանվող հոգուն: Սակայն Հուդան ավելի դաժանացավ: «Սատանան մտավ նրա մեջ»,- ասում է ավետարանիչը: Հիմա մատնիչն արդեն ատում էր իր Զոհին:

«Հիմա ինչ-որ անելու ես, իսկույն արա»,- վճռականորեն ասաց Հիսուսը, նայելով Հուդային: Բոլորը կարծեցին, թե Նա նրան ուղարկում է վաղվա տոնակատարության համար անհրաժեշտ գնումներ անելու: Հուդան վեր կացավ և լուռ դուրս եկավ: Գիշերային խավարը կլա-



նեց նրան: Կամուրջներն այրված էին: Ավագերեցները արդեն սպասում էին իրենց հանցակցին:

Տագնապի զգացումը չէր լքում Պետրոսին և Հովհաննեսին այն պահից, երբ Հուդայի ետևից դուռը փակվեց, բայց աշակերտների վրա կախված մռայլ ամպերը մի քիչ ցրվեցին: Միգուցե Հիսուսն Ինքն էլ թեթևություն զգաց:

Կրկին ձեռքերը լվացին և գինի լցրին: Քրիստոսը աղոթք արեց Իր առջև գտնվող բաղարջի վրա. «Օրհնյալ ես Դու, մեր Տեր Աստված, տիեզերքի Թագավոր, հողից հաց ստեղծող»: Եվ այն պահին, երբ Նա կիսեց այն, առաքյալների վրա ասես փչեց Գալիլիայի քամին: Թվում էր, որ նրանք ոչ թե գիշերային Երուսաղեմում են, այլ ծովի ափին, որտեղ Հիսուսը կշտացրեց հինգ հազար հոգու: Բայց այդ ծեսը հիշեցնում էր նաև ուրիշ մի բանի մասին: «Սա է տառապանքի հացը, որ մեր հայրերը կերան Եգիպտոսում»,- կրկնեց Ուսուցիչը սեդերի ավանդական խոսքերը: Այս անգամ Զատիկը ավետում է Տիրոջ Ծառայի, Փրկչի չարչարանքների մասին: Ինչպես կտոր-կտոր է արված այդ սուրբ հացը, այդպես կտրվի Նրա մարմինը դահիճների ձեռքը:

«**Առեք, այս է Իմ մարմինը**,- խոսեց Քրիստոսը և ավելացրեց,- այս արեք Իմ հիշատակի համար..»:

Յուրաքանչյուրը սրտի թրթիռով ընդունեց Զատկի բաղարջի իր բաժինը: Հետո կանգնած երգեցին «ալելուիայի» սկիզբը.

Օրհնեցեք Տիրոջ ծառաներ, օրհնեցեք անունը Տիրոջ:
Թող Տիրոջ անունը օրհնյալ լինի
այսուհետև մինչև հավիտյան:
Արևելքից մինչև արևմուտք
օրհնյալ լինի անունը Տիրոջ:
Բարձր է Տերը բոլոր ազգերից վեր,
և երկնքում է փառքը Նրա...

Բայց ահա Քրիստոսը ձեռքն առավ «գոհության գավաթը», որը սովորաբար խմում էին երեկոյի վերջում:

- Օրհնենք մեր Աստծուն,- ասաց Նա:

Օրհնյալ ես Տեր, Աստված Իսրայելի, Աստված Զորաց, որ բազմում ես քերովբեների վրա, այն կերակուրի համար, որը մենք ճաշակեցինք,- պատասխանեցին առաքյալները ըստ կանոնի:

- Օրհնենք Նրան, Որի բարիքները մենք ճաշակեցինք:

– Օրհնյալ ես Դու, Ում բարիքները մենք ճաշակեցինք և Ում բարիքներով մենք ապրում ենք...

Փառաբանության վերջում Հիսուսն ասաց.

**– Այս բաժակը Նոր Ուխտն է Իմ արյունով: Խմեցեք դրանից բոլորդ: Այդ է Նոր Ուխտի Իմ արյունը, որը թափվում է շատերի վրա՝ մեղքերի թողության համար... Այդ արեք միշտ Իմ հիշատակի համար:**

**Առաքյալները բաժակը փոխանցեցին իրար...**

Այսպես տեղի ունեցավ Ուխտի Զատիկը՝ Գառան արյան մեջ պարունակվող:

Պատահական չէր, որ Հիսուսը ծեսի մեջ պահպանում էր զոհաբերության խորհրդանիշը, քանի որ բոլոր հնագույն զոհասեղանները կանչ էին առ երկինք և նշանակում էին Բարձրյալի հետ հաղորդակցության ծարավ: Քրիստոսի վերջին ընթրիքը հավատարիմներին միացնում էր Նրա հետ, Աստծո մարմնացյալ Որդու հետ*:

Արյունը Աստվածաշնչում համարվում է կյանքի խորհրդանիշ, որի վրա իշխանություն ունի միայն Արարիչը: Հենց այդ պատճառով էլ այն արգելվում է օգտագործել սննդում[12]: Այնինչ, հիմա աշխարհի Փրկիչն Ինքն է տալիս Իր կյանքը, Իր արյունը մարդկանց:

Հնուց ի վեր, Ուխտի ավարտը հավատացյալների կողմից ուղեկցվում էր Աստծուն ընծայված կենդանու արյունը ցողելով: Բոլորը, ում վրա որ ընկնում էին դրա կաթիլները, ձեռք էին բերում նոր հոգևոր մերձավորություն և կապ Աստծո հետ[13]: Այդպիսին էր զատկի գառան զոհաբերության իմաստը: Նման ծիսակատարություններ անում էր ոչ միայն Իսրայելը, այլև հնագույն ժողովուրդների մեծ մասը: Քրիստոսը զոհի արյունը փոխարինում է խաղողի որթի հյութով, հացկերույթի գինով, որը նշանավորում է աստվածամարդու զոհաբերությունը, Փրկիչ-Քավիչի չարչարանքները և հաղթանակը:

Զատկական հիշողությունները Ելքի մասին անցյալը ներկա տեղափոխելն էր: Իսրայելի իմաստուններն ասում էին, որ յուրաքանչյուր Զատիկ ազատագրություն է կրկին և կրկին տեղի ունեցող ստրկությունից[14]: Ճ՛իշտ այդպես և նորուխտյան Եվքարիստիան նշանակում է մասնակցություն փրկությանը, որը Քրիստոսը բերում է մարդկանց, Տիրոջ ապրելը Իրեն սիրողների հետ: «Քանի անգամ,– կասի հետագայում Պողոս առաքյալը,– որ այս հացն ուտեք և այս բաժակը ըմպեք, պատմեցեք Տիրոջ մահը, մինչև որ Նա գա»:

* Աստվածաշնչի լեզվով «արյունը և մարմինը» կենդանի էակի հոմանիշ են:



ժամանակը պարտված է: Մնում է լոկ Մարմնավորման գաղտնիքը, աշխարհին հայտնված Աստծո Ներկայությունը:

Միայն Եվքարիստիայի խոր արմատակալումը Հին Ուխտի պաշտամունքային ավանդույթների մեջ առաքյալներին թույլ տվեց այդ մեծագույն գիշերը վերապրել այն որպես սրբազան գործողություն, որպես խորհուրդ։ Թող որ նրանք չկարողանային տակավին այդ ամենը արտահայտել բառերով, բայց միությունը Տիրոջ հետ և իրենց միջև նրանց համար դարձավ իրականություն։

«Որդյակնե՛րս,- ասաց Հիսուսը,- մի քիչ ժամանակ դեռ ձեզ հետ եմ... **Նոր պատվիրան** եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց, ինչպես Ես ձեզ սիրեցի, դուք էլ միմյանց սիրեցեք։ Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք Իմ աշակերտներն եք»[15]։

Դա հնչեց որպես հրաժեշտ։ Տխրությունը համակեց առաքյալներին։ Նրանք երկար ժամանակ չէին համարձակվում հարցեր տալ, բայց այսօր, սեղերի ժամանակ Օրենքն ինքն էր թելադրում հարցնել[16]։ Առաջինը Պետրոսը համարձակվեց.

- Տե՛ր, ուր ես գնում։

- Ուր Ես եմ գնում, դու այժմ Իմ ետևից չես կարող գալ, բայց հետո կգաս Իմ ետևից։

- Տե՛ր, ինչու այժմ չեմ կարող Քո ետևից գալ։

- Սիմո՛ն, Սիմո՛ն, ահա սատանան ուզեց ձեզ ցորենի նման մաղել։ Բայց Ես աղաչեցի քեզ համար, որպեսզի քո հավատը չպակասի, և դու երբ էլ լինի, վերադառնալով, հաստատես քո եղբայրներին։

- Տե՛ր,- իրեն բնորոշ կրքոտությամբ ճչաց Պետրոսը,- պատրաստ եմ Քեզ հետ գնալ և՛ բանտ, և՛ ի մահ։ Իմ կյանքը Քեզ համար կտամ։

- Ինձ համար կյանքդ կտաս,- տրտում արձագանքեց Հիսուսը,- ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, աքաղաղը դեռ կանչած չի լինի, երբ դու երեք անգամ Ինձ ուրացած կլինես։

Մյուս աշակերտները նույնպես հարցեր տվեցին։ Հիսուսը պատասխանեց յուրաքանչյուրին։ Նա քաջալերեց Իր շվարած բարեկամներին. «Թող ձեր սրտերը չխռովվեն. հավատացեք Աստծուն, հավատացեք և Ինձ։ Իմ Հոր տան մեջ բազում օթևաններ կան, թե չէ Ես ձեզ կասեի, թե գնում եմ ձեզ համար էլ տեղ պատրաստելու, և եթե գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ կվերցնեմ Ինձ մոտ, որպեսզի, ուր Ես լինեմ, դուք ևս այնտեղ լինեք։ Եվ թե ուր եմ գնում, այդ գիտեք, գիտեք և ճանապարհը։

- Տե՛ր,- ասաց Թովմասը,- չգիտենք՝ ուր ես գնում, ուրեմն ինչպես կարող ենք գիտենալ ճանապարհը։

Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը։ Ոչ ոք չի գա



Հոր մոտ. եթե ոչ՝ Ինձանով։ Եթե Ինձ ճանաչեիք, ապա կճանաչեիք և Իմ Հորը, այսահետև կճանաչեք Նրան, և տեսել եք։

- Տե՛ր, Հորը մեզ ցույց տուր, և այդ բավական է մեզ,- ասաց Փիլիպպոսը։

- Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, Փիլիպպոս, և Ինձ չճանաչեցիր։ **Ով Ինձ տեսավ, տեսավ Հորը**... Հավատացեք Ինձ, որ Ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ Իմ մեջ... Եթե Ինձ սիրում եք, կպահեք Իմ պատվիրանները, և Ես պիտի աղաչեմ Հորը, և Նա մի այլ Մխիթարիչ պիտի տա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի, ճշմարտության Հոգին, Որին այս աշխարհը չի կարող ընդունել, որովհետև Նրան չի տեսնում և Նրան չի ճանաչում, բայց դուք ճանաչում եք Նրան, որովհետև ձեզ մոտ պիտի բնակվի և ձեր մեջ պիտի լինի։ Ձեզ որբ չեմ թողնի, կգամ ձեզ մոտ։ Մի փոքր ժամանակ ևս, և այս աշխարհը Ինձ չի տեսնի, բայց դուք Ինձ կտեսնեք, որովհետև Ես կենդանի եմ, և դուք կենդանի եք լինելու։

Հուդա-Թադևոսը հարցրեց,

- Տե՛ր, ինչպես եղավ, որ Քեզ պիտի հայտնես մեզ և ոչ թե աշխարհին։

- Եթե մեկը սիրում է Ինձ, Իմ խոսքը կպահի, և Իմ Հայրը նրան կսիրի, և նրա մոտ կգանք ու նրա մոտ կօթևանենք։ Եվ ով Ինձ չի սիրում, իմ խոսքերը չի պահում, և Իմ խոսքը, որ լսում եք իմը չէ, այլ՝ Հորը, Որը Ինձ ուղարկեց։ Այս բաները խոսեցի ձեզ, մինչ ձեզ հետ եմ։ Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, Որին Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ձեզ ամեն բան կուսուցանի և կհիշեցնի այն ամենը, ինչ Ես ասացի ձեզ։

Եվ, իրոք, միայն շատ ուշ նրանց բացվեց Ուսուցչի բառերի ողջ խորությունը։ Նա գիտեր, որ նրանք հասկանում են Իրեն միայն սրտով, որ նրանց բանականությունը շփոթի մեջ է, իսկ միտքը՝ սասանված։ Նա ցանկանում էր նախապատրաստել նրանց։ Ժամանակները փոխվել էին, առջևում պայքար և փորձություններ էին...

- Երբ ուղարկեցի ձեզ առանց քսակի և մախաղի և կոշիկների,- հարցրեց Նա,- միթե որևէ բանի կարոտ մնացիք։

- Ոչ մի բանի,- խոստովանեցին աշակերտները։

- Իսկ այժմ ով որ քսակ ունի, թող վերցնի այն, նույնպես և՝ մախաղ, իսկ ով որ չունի, թող վաճառի իր շորերը և իր համար սուր գնի։

- Տե՛ր, ահավասիկ այստեղ երկու սուր կա...

- Բավական են,- ընդհատեց Նա, տեսնելով, որ նրանք չեն հասկանում,- այլևս երկար չեմ խոսի ձեզ հետ, գալիս է այս աշխարհի իշխա-

նը և Իմ դեմ ոչինչ չի կարող անել… վեր կացեք գնանք այստեղից:

Սաղմոս երգելով նրանք թողեցին տունը և քաղաքի քնած փողոցներով ուղևորվեցին դեպի դարպասները:

«Դուք ամենքդ այս գիշեր Իմ պատճառով գայթակղվելու եք,- ճանապարհին ասաց Հիսուսը,- որովհետև գրված է, թե՝ «Հովվին պիտի հարվածեմ, և հոտի ոչխարները պիտի ցրվեն»: Իմ հարությունն առնելուց հետո, ձեզնից առաջ պիտի գնամ Գալիլիա»:

Պետրոսը շարունակեց համառորեն պնդել.

- Թեկուզ բոլորն էլ գայթակղվեն, բայց ես չեմ գայթակղվի:

Ճիշտ նույն ձևով մյուսները հավաստեցին Ուսուցչին իրենց հավատարմության մասին:





ԳԵԹՍԵՄԱՆԻ ԳԻՇԵՐԸ

## Գլուխ տասնվեցերորդ

# ԳԵԹՍԵՄԱՆԻ ԳԻՇԵՐԸ

### 6-ից առ 7-ը ապրիլի

Զատկական հացկերույթի գիշերը չէր կարելի տունը թողնել, բայց Հիսուսը խախտեց այդ կանոնը՝ հավանաբար մտահոգվելով աշակերտների համար՝ Վերնասենյակում, Նրա հետ մեկտեղ, հեշտությամբ կարող էին վերցնել և նրանց: Բացառված չէ, որ Հուդան նախապես համոզվել էր, որ տունը դատարկվել է և դրանից հետո միայն պահակախումբը տարավ կենտրոնի ձորի մյուս կողմի խուլ պարտեզը, որտեղ Վարդապետը հաճախ էր առանձնանում Տասներկուսի հետ:

Ճանապարհին Քրիստոսը շարունակեց զրույցը աշակերտների հետ: Նա բացատրում էր նրանց Բաժակի խորհուրդը, որը միաձուլեց հաղորդակիցներին և դարձրեց մի միասնական ամբողջություն: «Ես եմ ճշմարիտ որթատունկը, և Իմ Հայրը՝ մշակն է: Ամեն ճյուղ, որ իմ վրա է և պտուղ չի տալիս, Նա կտրում է այն, և այն ամենը, որ պտուղ է տալիս, էտում է որպեսզի առավել ևս պտղաբեր լինի… Ինչպես ճյուղը, որն ինքն իրեն չի կարող պտուղ տալ, եթե որթատունկի վրա հաս-

* Παράχλητοζ (եբր. Գոէլ)՝ Հովանավոր, Մխիթարիչ:
** Այսինքն՝ ենթարկվեց փորձության, ինչպես որ փորձում են նրան, ում իմաստությանը կասկածում են:



տատված չլինի, նույնպես և դուք՝ եթե Իմ վրա հաստատված չլինեք: Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը»[1]:

Հիսուսը խոսում էր Հոգու մասին՝ Հովանավորի և Մխիթարիչի մասին*, Որի ուժը կկերպափոխի առաքյալներին, երբ Մարդու Որդին նրանց հետ չի լինի: «Դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց այժմ չեք կարող տանել: Երբ որ գա Նա՝ ճշմարտության Ոգին, ամենայն ճշմարտությամբ Նա կառաջնորդի ձեզ»:

Եկեղեցուն սպասվում է, ինչպես և Քրիստոսին, անցնել վշտի մկրտության միջով և մինչև վերջ խմել տառապանքի բաժակը: Բայց բաժանումը ժամանակավոր է լինելու: Աշակերտները Քրիստոսից բաժանվելով, չպետք է վհատվեն: Նա կվերադառնա նրանց մոտ: «Ճ՛շմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դուք պիտի լաք և պիտի ողբաք, իսկ աշխարհը ուրախ պիտի լինի: Դուք պիտի տրտմեք, բայց ձեր տրտմությունը ուրախության պիտի փոխվի: Եթե կինը ծննդաբերում է, նրա համար տրտմություն է, որովհետև նրա ժամը հասած է: Բայց երբ մանկանը ծնի, այլևս չի հիշում նեղությունը՝ ուրախության պատճառով, որ աշխարհում մի մարդ ծնվեց: Դուք էլ այժմ տրտմություն ունեք, բայց Ես դարձյալ ձեզ պիտի տեսնեմ, ու ձեր սրտերը ուրախ պիտի լինեն, և ձեր ուրախությունը ոչ ոք ձեզնից չպիտի խլի: Եվ այն օրը Ինձ ոչինչ չպիտի հարցնեք»:

Փրկչի պատվիրակները ընտրված են մեծ ծառայության համար, և Նա կտանի նրանց Հոր Արքայություն: «Հայրը Ինքն իսկ սիրում է ձեզ, որովհետև դուք սիրեցիք Ինձ և հավատացիք, որ Ես Աստծուց ելա: Ելա Հորից և եկա աշխարհ: Դարձյալ թողնում եմ աշխարհը և գնում եմ Հոր մոտ»:

Նրանց թվաց, որ իրենք սկսում են ըմբռնել:

– Ահա հիմա բացահայտ ես խոսում և ոչ մի առակ չես ասում: Հիմա մենք գիտենք, որ Դու ամեն ինչ գիտես և պետք չկա, որ մեկը քեզ բան հարցնի**: Դրա համար հավատում ենք, որ Դու Աստծուց ելար:

– Այժմ հավատո՛ւմ եք,– ասաց Հիսուսը:– Ահա պիտի գա ժամանակ և արդեն իսկ եկել է, երբ պիտի ցրվեք յուրաքանչյուրդ իր տեղը, և Ինձ միայնակ պիտի թողնեք: Սակայն Ես միայնակ չեմ, որովհետև Հայրն Ինձ հետ է:

Նա չէր կշտամբում աշակերտներին, ընդհակառակը, ցանկանում էր նրանց տոկունություն ներշնչել: «Աշխարհում նեղություն պիտի ունենաք, սակայն քաջալերվեցեք, որովհետև Ես հաղթեցի աշխարհին»:

Երբ անցան Տաճարի մոտով, Հիսուսը կանգ առավ: Լուսնի լույսն անշարժացել էր բերդի և սրբատաշ վիթխարի մթին զանգվածը: Առավոտյան այստեղ ծիսակատարություն է լինելու և հազարավոր մարդիկ գառնուկներ են բերելու զոհասեղանի մոտ: Բայց քնած քաղաքը չէր էլ կասկածում, որ այդ գիշեր Աստծո Տան պատերի մոտ, շրջապատված տասնմեկ վեհերոտ գալիլիացիներով, աղոթում էր տիեզերքի Քահանայապետը և Փրկիչը: Նա Հորից խնդրում էր պահպանել Իր փոքրիկ հոտը իրեն թշնամի աշխարհում: «Սակայն միայն նրանց համար չէ, որ աղոթում եմ,- ասում էր Նա, հայացքը բարձրացնելով դեպ աստղազարդ երկինք,- այլև նրանց խոսքով բոլոր Ինձ հավատացողների համար, որպեսզի ամենքը մի լինեն, ինչպես դու, Հայր, Իմ մեջ, և Ես՝ Քո մեջ, որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն: Որպեսզի աշխարհը հավատա, որ Դու ուղարկեցիր Ինձ»: Քրիստոսի Եկեղեցու գալիք Տաճարը պայծառորեն լուսավորվեց աստվածային Երրորդության ճաճանչներով...

Երուսաղեմում մինչև մեր օրերը պահպանվել են հնագույն քարե սանդուղքի մաշված աստիճանները: Գուցե հենց այդ աստիճաններով է իջել Հիսուսը, քաղաքից ճանապարհ ընկել դեպի Ձիթենյաց լեռ: Անցնելով Կենտրոնի ձորը, Նա չգնաց Բեթանիա, այլ գերադասեց մնալ Գեթսեմանիի պարտեզում: Դա մի ոչ մեծ, մասնավոր պարսպապատ կալվածք էր, որտեղ կար ձիթենյաց պուրակ[2]:

Լիալուսինը արծաթազօծում էր տերևները, որի արտացոլքը փայլում էր ծառերի կեռ բներին: Ոչինչ չէր խախտում գարնանային սառը գիշերվա լռությանը: Աշակերտները մտնելով պարսպից ներս, տեղավորվեցին հանգստանալու: «Նստեցեք այստեղ, իսկ Ես մինչ այդ գնամ այնտեղ աղոթելու»,- ասաց Հիսասը, ցույց տալով այգու խորքը:

Պետրոսը, Հակոբը և Հովհաննեսը, որոնց Նա վերցրել էր Իր հետ, չէին կարող չնկատել Ուսուցչի հանկարծակի փոփոխությունը: Քիչ առաջ Նա տոգորված էր ուժով և լուսավոր խաղաղությամբ, իսկ հիմա Նրա դեմքն ամբողջությամբ արտահայտում էր անսահման տանջանք: «Հոգիս տխուր է մահու չափ,- սկսեց խոսել Նա:- Մնացեք այստեղ և արթուն կացեք»: Առաջին անգամ առաքյալներն զգացին, որ Նրան մարդկային օգնություն է պետք, բայց ի վիճակի չեղան Հիսուսի խնդրանքը կատարելու: Ինչպես դա լինում է ծայրահեղ տագնապալի պահերին, նիրհը թմրության նման շղթայեց նրանց[3]:

Քրիստոսը գնաց մի կողմ և ծունկի գալով, սկսեց ջերմեռանդ աղոթել: Աշակերտները գտնվում էին ոչ հեռու, ինչպես Ավետարանն





ՀՈՒԴԱՅԻ ՀԱՄԲՈՒՅՐԸ

է ասում. «Քար գցելու հեռավորության վրա», և Հիսուսի առանձին բառերը հասնում էին մինչև նրանց: «Աբբա, Հայր,- լսեցին նրանք կիսամրուաց վիճակում,- ամեն ինչ Քեզ կարելի է:

Այս բաժակը Ինձանից հեռացրու: Ոչ թե, ինչպես Ես եմ կամենում, այլ ինչպես Դու... Ոչ թե Իմ կամքը, այլ Քոնը թող լինի»:

Նա աղոթում էր: Առաքյալները քնեցին:

Իսկ Երուսաղեմի փողոցներում արդեն լսվում էին պահակազորի քայլերը:

Ինչ զգաց Մարդու Որդին, երբ պառկեց սառը հողի վրա հոգեկան անձկության մեջ: Կարող էր դա լինել խոշտանգումների և մահվան բնական վախ: Բայց չէ որ, այն հաղթահարել էին և առավել թույլերը: Ինչու սասանվեց Նա, Ով դառնալու է նեցուկ միլիոնավորների համար:

Մեզ տրված չէ թափանցել մահվան մաքառումների խորքը, որի վկան էր հին ձիթենյաց այգին: Բայց նրանց, ում Քրիստոսը հայտնվել է սիրո և հավատի մեջ, գիտեն ամենագլխավորը՝ Նա տառապում էր մեզ համար: Նա իր մեջ առավ դարերի նզովքը և ցավը, մարդկային մեղքերի խավարը, ապրեց աստվածաթողության ողջ սարսափն ու դժոխքը: Հույսերից լքված գիշերը պատեց Նրան. Քրիստոսը կամովին իջավ վիհը, որպեսզի մտնելով նրա մեջ, մեզ դուրս բերի այնտեղից դեպի անմար լույսը...

Ակնթարթորեն ինչեր անցան Նրա մտքի հայացքի առջևից: Ապագայի պատկերներ: Հալածանքներ, պատերազմներ, բռնություններ: Իր հետևորդների ուրացությունը, նրանց երախտամոռությունը և թերահավատությունը, նրանց խստասրտությունը և փարիսեցիությունը: Ավելի տանջալից փորձություն էր սա, քան այն, որ Նա անցավ անապատում: Երբեք Քրիստոսի մարդկային գիտակցությունը այդպիսի աժով չէր դիմադրել Իրեն սպասվելիք խաչին, ինչպես Գեթսեմանի աղոթքի պահին: Ահա թե ինչու Նա խնդրեց սիրելի աշակերտներին՝ չլքել Իրեն:

«Սիմո՛ն, ննջում ես,- փորձեց արթնացնել Հիսուսը Պետրոսին:- Չկարողացար մեկ ժամ արթուն մնալ: Նա վեր կացավ, տեսավ Ուսուցչի տանջահար, արյան կաթիլների նման քրտինքով պատած դեմքը, բայց նիրհը կրկին հաղթեց նրան: Մյուս փորձերը նույնպես ապարդյուն անցան:

Եվ այսպես, բոլորից լքված տառապում էր Հիսուսը մեն-մենակ, վերահասի դեմ հանդիման: Ղուկաս ավետարանիչն ասում է, որ միայն հրեշտակն էր ուժ տալիս Նրան: Դա նշանակում է, որ աջակցություն չգտնելով երկրում, Նա գտավ այն երկնքում:



Ի վերջո, Հիսուսը ելավ տեղից: Հոր հանդեպ սերը հաղթանակեց և հաստատեց Նրա մեջ մարդկային և աստվածային կամքի համերաշխություն:

Հիմա Նրան մտահոգում էին միայն առաքյալները: Մոտենալով՝ Նա ստիպեց նրանց թոթափել քունը. «Ինչ եք քնել: Արթո՛ւն կացեք, աղոթեցե՛ք, որպեսզի փորձության մեջ չընկնեք... Վե՛ր կացեք, գնանք այստեղից: Ահա հասավ նա, ով Ինձ մատնելու է»: Նրանք չորս կողմը նայելով, շվարած վեր կացան:

Այդ պահին այգին լուսավորվեց լապտերներով և ջահերով, լսվեցին աղմուկ և ձայներ: Մուտքի մոտ մարդկանց բազմություն երևաց: Առջևից գալիս էր հռոմեական տրիբունը զինվորների հետ, իրենց հետևից տաճարի զինված սպասավորները[4]:

Հիսուսը ընդառաջ ելավ նրանց:

- Ում եք փնտրում,- հարցրեց Նա:

- Հիսուս Նազովրեցուն:

- Ես եմ,- պատասխանեց Քրիստոսը Աստծո անվան սրբազան բանաձևումով:

Հրեա սպասավորները լսելով այդ, արագ հեռու քաշվեցին: Նա ասաց.

-Եթե Ինձ եք փնտրում, թողեք դրանց, թող գնան:

Այդ պահին Հուդան, արանքներից սողոսկելով, առաջ եկավ: Նա խոստացել էր նշան տալ, որպեսզի պարտեզում գիշերվա ձերբակալության ժամանակ թյուրիմացություն չլինի:

- Ողջո՛ւյն, Վարդապե՛տ,- ասաց Նա, համբուրելով Ուսուցչին:

- Բարեկա՛մ, ահա թե ինչի համար ես դու այստեղ,- մրմնջաց Հիսուսը: - Համբուրելով ես մատնում Մարդու Որդուն:

Պահակներն անմիջապես շրջապատեցին Քրիստոսին:

- Տե՛ր, ինչ կլինի, եթե մենք սրով խփենք,- ասաց Պետրոսը և պատասխանի չսպասելով, հարձակվեց Ուսուցչին բռնելու եկածներից մեկի վրա: Հարվածն անհաջող ստացվեց: Ձկնորսը կտրեց միայն արքերեցական սպասավորի ականջը: Նրան, իհարկե, անմիջապես կբռնեին, բայց ողջ ուշադրությունը կենտրոնացված էր Քրիստոսի վրա:

«Թո՛ւյլ տվեք, բավակա՛ն է,- ասաց Նա առաքյալներին: - Բաժակը, որ Ինձ է տվել Հայրը, միթե Ես չպետք է խմեմ այն»: Ապա Նա դարձավ ջոկատին. «Սրերով և մահակներով դուրս եք եկել Ինձ բռնելու որպես ավազակի: Ես միշտ ձեզ մոտ էի և ուսուցանում էի Տաճարում, և Ինձ չբռնեցիք: Սակայն այս է ձեր ժամը և խավարի իշխանությունը»:

Հնարավոր է, աշակերտներն այդ պահին հրաշքի էին սպասում, բայց հրաշք տեղի չունեցավ:

Կոպիտ ձեռքերը կապկպեցին Հիսուսին պարանով...

Հուդան, երկյուղելով, որ աղմուկը անհարկի վկաների ուշադրություն կհրավիրի, և կարող է ընդվզում բարձրանալ, շտապեցրեց զինվորներին. «Վերցրե՛ք Նրան և տարե՛ք հուսալի հսկողությամբ»: Դրանից հետո նրանք փորձեցին բռնել մյուսներին, բայց նրանք, օգտվելով մթից և խառնաշփոթությունից, փախան:

Երբ Հիսուսին դուրս բերեցին պարտեզից, կարծես թե ամեն ինչ խաղաղ էր: Թշնամու մտահղացումը լիովին հաջողվել էր: Սակայն անսպասելի հայտնվեց ինչ-որ պատանի: Նա գնում էր նրանց հետևից, իր մերկ մարմնի վրա մի սավան գցած: Զինվորները մտածելով, որ աշակերտներից մեկն է, բռնեցին նրան, բայց նա դուրս պրծավ և թողնելով հագի սավանը՝ մերկ փախավ նրանցից: Ըստ երևույթին, նա նորնոր էր անկողնուց վեր կացել: Այդ պատանին հենց ինքը Հովհաննես-Մարկոսը չէր արդյոք, ապագա ավետարանիչը: Այդ դրվագը միայն նա է հիշատակում:

Համաձայն Հովսեփոս Փլավիոսի «Հրեական պատերազմի» սլավոնական մեկնակերպի, Հիսուսի ձերբակալման ժամանակ մեծ թվով մարդիկ են սպանվել[5]: Մոտակայքում արդյոք չկային գալիլիացիներ, որոնք փորձեին ազատել Ուսուցչին: Սակայն Ավետարաններում առանց որևէ մեղմացման ասված է, որ երբ Հիսուսը ձերբակալվեց թշնամիների կողմից, Նրա բոլոր բարեկամները թաքնվեցին: Տեսնելով Ուսուցչին, Որը հնազանդորեն թույլ տվեց Իրեն տանել, նրանք խուճապի մատնվեցին և մոռացան, որ խոստացել են Նրա հետ մահվան գնալ: Միայն Պետրոսն ու Հովհաննեսն, ուշքի գալով առաջին ցնցումից, համարձակվեցին անվտանգ հեռավորության վրա հետևել պահակախմբին:



ՄԱՍ IV

# ՏԱՌԱՊԱՆՔՈՎ ԵՎ ՄԱՀՎԱՄԲ ԴԵՊԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿ

## Գլուխ տասնյոթերորդ

# ՍԱԴՈՒԿԵՑԻՆԵՐԻ ԱՏՅԱՆԸ

### ապրիլի 7-ի գիշերը և առավոտը

Տասնհինգ տարի էր անցել այն ժամանակից, երբ քահանայապետ Քահան Բեն-Շետը պաշտոնանկ արվեց հռոմեացիների կողմից, բայց և այնպես, ողջ այդ ժամանակի ընթացքում փաստացի նրա ձեռքում էր իշխանությունը, Հրեաստանի ազգային կառավարությունը հերթով գլխավորում էին նրա որդիները և ազգականները[1]: Կայիափան՝ Քանանի փեսան, խաղալիք էր դարձել աներոջ ձեռքին: Սադուկեցիների ազդեցիկ տոհմը ենթարկվում էր միայն պրոկուրատորին:

Քաղաքացիների շրջանում Քանանը չնվաճեց ժողովրդականություն, ավագերեցներին ընդհանրապես հակակրում էին: Նրանք էլ, իրենց հերթին, կասկածանքով էին վերաբերվում ընդդիմության ցանկացած արտահայտության: Հիսուսի հայտնվելը քաղաքում և ուխտավորների կազմակերպած հանդիպումը Նրա հետ, սադուկեցիների կողմից գնահատվեց որպես խռովությունների սկիզբ, որը պետք է ոչնչացնել սաղմնային վիճակում:

Պարզապես, թվում էր՝ պետք է նոր փրկչական աղանդի մասին լուրը հասցնել Պիղատոսին և իր կամքին թողնել Գալիլիացու հետ դա-

տաստան տեսնելը: Բայց Քանանը, ըստ երևույթին, վախեցավ նախաձեռնությունը բաց թողնել ձեռքից և ցանկացավ, հավանաբար, գործել՝ նախօրոք նախապատրաստելով բոլոր հանցանշանները: Որպեսզի Հիսուսի ձերբակալությունը ինքնագլուխ չդիտվի, Նրա մասին հաղորդեցին Պիղատոսին, և նա ուղարկեց իր ջոկատը տաճարի սպասավորներին օգնելու[2]: Նախազգուշական այդ միջոցները պայմանավորված էին իշխանությունների երկյուղով, որոնք մտածում էին, թե Նազովրեցու հետևորդները կդիմադրեն:

Այդ գիշեր Քանանը, հավանաբար, աչք չփակեց, սպասելով գործողության արդյունքին, որի կազմակերպիչն էր ինքը: Նա հանդստացավ միայն այն ժամանակ, երբ պահակախումբն իր մոտ բերեց կապկպված Կալանավորին:

Մինչ այդ պահը սադուկեցիները քիչ էին հետաքրքրվել Հիսուսի քարոզչությամբ: Նրանք լսել էին փարիսեցիներից, որ Նա խախտել է որոշ կրոնական սովորույթներ, բայց այդպիսի մեղադրանքներով Նրան տանել պրոկուրատորի մոտ, անիմաստ էր: Այդ պատճառով էլ Քանանը սկսեց Հիսուսից հարցնել «Նրա աշակերտների և Նրա ուսմունքի մասին»[3]: Հին, փորձված քահանայապետը ցանկանում էր մանրամասներ իմանալ, որպեսզի արագ կազմի հետաքննության պլանը և այն ավարտի մինչև զատկական ծիսակատարությունների սկիզբը:

- Ես բացահայտ ասացի աշխարհին,- պատասխանեց Հիսուսը:- Ես միշտ ուսուցանել եմ ժողովարանում և Տաճարի մեջ, ուր հավաքվում էին բոլոր հրեաները, և ծածուկ Ես ոչինչ չեմ խոսել: Ինձ ինչու ես հարցուփորձ անում, հարցուփորձ արա նրանց, ովքեր լսել են, թե Ես նրանց հետ ինչ եմ խոսել, ահա, նրանք գիտեն, թե ինչ եմ ասել:

Կողքին կանգնած սպասավորներից մեկը ապտակեց Հիսուսին:

- Ուրեմն այդպես ես պատասխանում քահանայապետին:

- Եթե Ես վատ խոսեցի, վկայիր այն մասին, որ վատ է: Եթե՝ լավ, ինչու ես Ինձ խփում:

Քանանը գիտենալով, որ սովորույթը թույլատրում է միայն հրապարակային հարցաքննություն, հետաձգեց հետաքննությունը մինչև առավոտ, երբ կարելի կլիներ հավաքել Սինեդրիոնը Կայիափայի գլխավորությամբ:

Գիշերվա մնացած ժամանակը Հիսուսը ենթարկվեց ավագերեցների ծաղրուծանակին: Թքում էին Նրա դեմքին և զվարճանում այն բանից, որ խփում էին Կալանավորին՝ փակելով Նրա աչքերը, իսկ հետո հարցնում՝ գուշակիր, թե ով հարվածեց Քեզ……





ՍԱԴՈՒԿԵՑԻՆԵՐԻ ԱՏՅԱՆԸ

Մինչ այդ Պետրոսն ու Հովհաննեսը մոտեցան քահանայապետի տանը: Պատանին, որին այստեղ ճանաչում էին, խնդրեց, որպեսզի Պետրոսին էլ թույլ տան իր հետ բակ մտնել: Այնտեղ կրակարան կար, որի շուրջը նստոտած տաքանում էին սպասավորները: Ցրտից սարսուած Սիմոնը միացավ նրանց: Դռնապանուհին սկսեց կասկածամտորեն զննել Նրա դեմքը:

– Դու էլ ես Նազովրեցու հետ եղել, Հիսուսի հետ,– անսպասելի հարցրեց նա:

– Ես չգիտեմ և չեմ հասկանում, թե դու ինչ ես խոսում,– փնթփնթաց Պետրոսը և հեռացավ մի ուրիշ տեղ[4]:

Լույսը բացվեց: Քաղաքն արթնացավ: Կայիափայի մոտ հավաքվեց քսաներեք մարդուց կազմված Փոքր Սինեդրիոնը[5]: Նրա կազմի մեջ մտնում էին հոգևորականները և ավագները: Մեծ Սինեդրիոնին մասնակցել թույլատրվում էր նաև փարիսեցիների կուսակցության ներկայացուցիչներին, բայց հիմա դատավորները միայն սադուկեցիներ էին: Այդ պատճառով էլ, մեր կողմից զուր կլիներ փնտրել Թալմուդյան օրենսգրքի մանրամասներ, որոնք օգնեին դատավարությունը տեսնել իր լրիվության մեջ: Սադուկեցիների իրավունքի մասին հայտնի է միայն մի բան. այն զանազանվում է իր անողոք դաժանությամբ[6]:

Փարիսեցիների ներկայության դեպքում, պարտադիր խոսք կգնար շաբաթվա և Թօրայի մեկնության մասին, բացի դրանից, նրանց շրջանում Հիսուսի կապակցությամբ կային տատանվողներ: Մեկ տարի անց փարիսեցիական Խորհրդի գլխավոր Գամաղիելը առաքյալների մասին կասի. «Եթե մարդկանց նախաձեռնություն կամ գործ է դա, այն կքանդվի: Իսկ եթե Աստծո՝ ապա դուք չեք կարող հաղթել նրանց, ինչպիսի աստվածամարտիկներ էլ որ լինեք»: Ավելի ուշ, փարիսեցիների կուսակցությունը Սինեդրիոնում բացահայտ հանդես կգա Պողոս առաքյալի պաշտպանությամբ[7]: Բայց միանգամայն այլ էր Փոքր Սինեդրիոնի 30թ. ապրիլի 7-ի առավոտվա արտակարգ հապճեպ նիստի մթնոլորտը: Նազովրեցու ճակատագիրը նախորոշված էր բոլոր պաշտոնակիցների կատարյալ համերաշխությամբ:

Հավանաբար, ատյանը ցանկանում էր միաժամանակ պահպանել օրինաչափության երևութականություն և վարկաբեկել Հիսուսին հրեաների աչքում: Եթե Նա մեղավոր դուրս գար միայն հռոմեական իշխանությունների առաջ, ապա դա ժողովրդի մեջ կառաջացներ համակրանք Նրա հանդեպ:





ՔԱՀԱՅՆԱՊԵՏԻ ԱՏՅԱՆԸ

Դատավորությունն սկսվեց վկաների հարցաքննությունից: Բայց այստեղ Սինեդրիոնը հանդիպեց անհաջողության: Պահանջվում էր գոնե երկու անձի միանման ցուցմունք, բայց հենց դրանք չէին կարող անմիջապես ձեռք բերել: Հավանական է, ձերբակալության շտապողականությունը ի վերջո խանգարեց դատավարության սցենարը ճշտակատարությամբ նախապատրաստելուն: Լոկ մի մեղադրանք համարեցին ապացուցված, Հիսուսը խոստացել է «քանդել ձեռակերտ Տաճարը»: Սակայն նման խոսքերը բացահայտ անբավարար էին դատապարտելու, առավել ևս, ներկայացնելու Պիղատոսին՝ մահապատժի համար[8]:

Կայիափան հույս ուներ, որ Մեղադրյալն Ինքը, պաշտպանվելով, ակամա հանցանշաններ կհուշի Իր դեմ: Բայց Հիսուսը ոչ մի բառ չասաց: Այդժամ քահանայապետը առաջ եկավ դահլիճի կենտրոն և հարցրեց.

- Դու պատասխան չես տալիս: Ինչ ամբաստանություն են անում նրանք Քո դեմ:

Հիսուսը շարունակեց լռել:

Կայիափան այլևս չկարողացավ համբերել.

- Երդվեցնում եմ Քեզ Կենդանի Աստծով,- բացականչեց նա,- ասա՛ մեզ, Դու ես Փրկիչը, Աստուծո Որդին:

- Ես եմ,- եղավ պատասխանը: - Բայց Ես ասում եմ ձեզ, այսուհետև Մարդու Որդուն կտեսնեք Զորության աջ կողմում նստած և երկնքի ամպերի վրայով եկած[9]:

Դա անօրինակ վկայություն էր: Հազվադեպ էր Հիսուսը այդքան ուղղակի խոսում Իր փրկչական առաքելության մասին: Նա թաքցնում էր այդ նույնիսկ այն օրերին, երբ ժողովուրդը պատրաստ էր Նրան թագադրել: Բայց հիմա, այս ահեղ պահին, կապկպված, անարգանքի ենթարկված, կեղծ դատաստանատան զոհ, Նա բացահայտ ազդարարեց Մարդու Որդու երկնային հաղթանակի մասին, Որին քավության տառապանքները կբարձրացնեն գահ……

Կայիափան, ինչպես և բոլոր սադուկեցիները, այնքան էլ չէր հավատում փրկչական մարգարեությանը, բայց դե առհասարակ, մարդուն չէր կարելի մեղադրել միայն այն բանի համար, որ նա իրեն Փրկիչ է հայտարարել: Այնուամենայնիվ, դատավճռի պատրվակ գտնվեց: Դատապարտյալը արտասանեց Տիրոջ սրբազնագույն անունը՝ «Ես եմ»: Բայց ով է Նա: Անհայտ ռամիկ, խռովարար, Տաճարի հայհոյող, Օրենքի առջև պատասխանատվության կանչված: Եվ Նա հավակնում է աստվածային իշխանության: Դա ծաղր չէ, արդյոք, ժողովրդի սուրբ սպասումների հանդեպ:

- Այդպես ուրեմն, Դու Աստծո Որդին ես,- հարցրեց Կայիափան:

- Դու ասացիր:

Փրկչին Աստծո Որդի անվանելը լիովին թույլատրվում էր, բայց քահանայապետին այդ բառերը բավական էին, որպեսզի Հիսուսին մեղադրեր[10]:

Պատառոտելով իր հանդերձները, որը, սովորության համաձայն, ընդունված էր տխուր լուր կամ սրբապղծություն լսելիս, Կայիափան ծղրտաց կեղծ զարհուրանքով:

- Էլ ինչի են մեզ հարկավոր վկաները: Լսեցիք հայհոյանքը: Ձեզ ինչ է թվում:

- Մահապարտ է,- որոշեցին Սինեդրիոնի անդամները:

Այսպիսով, սադուկեցիների արձակած դատավճիռը անցկացվեց սրբապղծության պարագրաֆի տակ: Մեղադրյալը ենթակա էր քարկոծման, բայց ավագերեցների Խորհուրդը պատժի իրավունք չուներ, ով էլ որ լիներ[11]: Մնում էր Հիսուսին տալ Պիղատոսի ձեռքը՝ հռոմեական օրենքներով դատելու համար:

Ողջ այդ ժամանակամիջոցում Պետրոսը չլքեց գավիթը: Բայց զուր էին ստվերում մնալու նրա ջանքերը, մի սպասավոր, որը ջոկատի հետ եղել էր Գեթսեմանիում, ճանաչեց նրան.

- Դու չէիր, որին Նրա հետ տեսա այգում:

- Իրոք, դու էլ նրանցից մեկն ես,- հաստատեցին կողքին կանգնածները,- քանի որ խոսվածքը մատնում է քեզ. դու հո գալիլեացի ես:

Խելահեղ սարսափը պատեց Սիմոնին: Նա սկսեց երդումներով հավատացնել, որ քո «չի ճանաչում այդ մարդուն»: Այդ րոպեին վերնասրահով տանում էին Հիսուսին: Նրանց հայացքները հանդիպեցին իրար: Ամոթը և ցավը շամփրեցին առաքյալին: Հազիվ զսպելով հեկեկանքը, նա դուրս թռավ փողոց……

Դարբասների մոտ սպասող մարդկանց մեջ կար ևս մեկը Տասներկուսից:

Ինչ ապրումներ ունեցավ նա, երբ տեսավ իր ձեռքի գործը: Ամեն ինչ վերջացած էր: Մատնիչի սառը չարացածությունը փոխվեց անկեղծ հուսահատության: Թող որ Հուդան խաբվեր իր սպասումներում, բայց արժանի էր արդյոք Հիսուսը այդ տառապանքներին, որ սպասվում էին Նրան, արժանի էր արդյոք մահվան:

Կարող էր պատահել՝ Հուդան թաքուն սպասում էր, որ կողմնա-



ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒՄԸ



կիցները կազատեն Քրիստոսին կամ Նա Ինքը հրաշքով դուրս կպրծնի թշնամիներից: Բայց ոչ մի նման բան տեղի չունեցավ: Սպասավորներից նախկին աշակերտին հայտնի դարձավ մահվան դատավճիռը, ինքը նույնպես կարող էր տեսնել, թե ինչպես կապկպված ուսուցչին տանում են կուսակալի նստավայր: Զղջմանալով այդ ամենին, Հուդան գնաց նրա մոտ, ով հանձնել էր իրեն դրամը, որպեսզի ետ վերադարձնի:

– Մեղք գործեցի ես, մատնելով անմեղ արյունը,– հայտարարեց նա: Բայց որպես պատասխան, լսեց անտարբեր բառեր.

– Մեր ինչ գործն է: Ինքդ որոշիր:

Հուդան շպրտելով արծաթե դրամները տաճարի մեջ՝ կախվեց[12]:

## Գլուխ տասնութերորդ

# ՊՐՈԿՈՒՐԱՏՈՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ապրիլի 7

Պրետորիան, Պոնտացի Պիղատոսի ժամանակավոր ոստանը, գոտևորել էին հաստ պարիսպները. ներսից ամրոցը շինված էր Թագավորական արքունիքին պատշաճ ճոխությամբ: Կային ընդարձակ սրահներ, ժամանցի տեղեր և ընդունելության համար ընդարձակ դահլիճներ: Թանկարժեք կահ-կարասիները և զարդարանքները պահպանվել էին դեռևս Հերովդես Մեծի ժամանակներից: Հովսեփոս Փլավիոսը, որը մինչև ավերվելը տեսել էր համալիրը, հիացական խոսքերով է նկարագրում Հրեաստանի վերջին բռնակալի այդ հոգեզավակին[1]: Այժմ այստեղ էր հանգրվանել կուսակալը, երբ անհրաժեշտությունը ստիպեց նրան լքել Կեսարիան:

Ուրբաթ առավոտյան Պիղատոսին զեկուցեցին, որ Խռովարարին, Որին իր համաձայնությամբ ձերբակալել էին նախօրեի երեկոյան, զինված հսկողությամբ բերել են[2]: Հրամայելով հսկել Նրան պրետորիայում, Պիղատոսը իր մոտ կանչեց մեղադրյալներին և վկաներին: Սակայն նրան ասացին, որ նրանք չեն ուզում ներս մտնել. զատկական ծիսակարգի օրը հեթանոսի տանը լինելը հրեաները համարում էին պղծություն: Վրդովված կուսակալը ստիպված եղավ ինքը գնալ նրանց



ընդառաջ՝ դուրս գալով բաց հարթակ, որտեղից սովորաբար դիմում էր ժողովրդին:

Հարթակի մոտ կանգնած էին քահանաները և ավագները՝ ամբոխի ուղեկցությամբ: Զնայած քաղաքը զբաղված էր Զատկի նախապատրաստություններով, արքերեցներին հաջողվեց գտնել պարապ-սարապ, անբան ավարաների, որպեսզի նրանք իրենց աղաղակներով պաշտպանեն իրենց հանրագիրը:

– Այդ Մարդու դեմ ինչ ամբաստանություն եք ներկայացնում,– հարցրեց Պիղատոսը:

Երբ նա հասկացավ, որ Նազովրեցին նրանց աչքում կեղծ ուսմունքների քարոզիչ է՝ ասաց.

– Դուք վերցրեք Նրան և ձեր Օրենքի համաձայն դատեցեք:

Սակայն Քանանը և Կայիափան արդեն պատրաստ էին գործի այդպիսի շրջադարձի: Կուսակալին բացատրեցին, որ խոսքը գնում է քաղաքական հանցագործության մասին, քանի որ Հիսուսը «արգելում է կայսրին հարկ տալ և Իրեն անվանում է Փրկիչ, Թագավոր»: Պիղատոսը զգաստացավ: Այն, որ ավագերեցները մտահոգ էին հռոմեական կառավարության հեղինակությամբ, զարմանալի ոչինչ չկար: Զորս տարի ապրելով Հրեաստանում՝ նա արդեն գիտեր, որ նվիրապետության շահերը համընկնում են Հռոմի շահերի հետ: Նրանք վախենում էին իրենց ժողովրդից: Ըստ երևույթին, սպասվում էր լուրջ դատավարություն:

Պիղատոսը վերադարձավ պրետորիա, որպեսզի հարցաքննի Ձերբակալվածին: Հավաքվածները լարված սպասում էին: Րոպեները հաջորդում էին իրար:

Հարցաքննության արդյունքը անակնկալ էր: Պիղատոսը, դուրս գալով հարթակ, ասաց.

– Այս Մարդու մեջ ես ոչ մի հանցանք չեմ գտնում:

Դա կարող էր տարօրինակ թվալ: Ինչու է իր անողոքությամբ հայտնի կուսակալը այսօր հանդես բերում այդչափ անսովոր մեղմություն, զիջողականություն: Ինչ էր տեղի ունեցել պրետորիայում: Պիղատոսի խոսակցությունը չէր կարող գաղտնիք մնալ: Այն տեղի է ունենում վկաների՝ սպասավորների և հսկիչների ներկայությամբ: Նրանցից մեկը պատմեց մանրամասների մասին, որոնք խնամքով պահպանվեցին քրիստոնյաների առաջին սերնդի կողմից:

Ամենից առաջ կուսակալը հարց տվեց.

– Դու ես Հրեաների Թագավորը:

– Այդ դու քեզնից ես ասում,– իր հերթին հարցրեց Հիսուսը,– թե



ՀԻՍՈՒՍ ԵՎ ՊԻՂԱՏՈՍ



ուրիշներն են թելադրել քեզ Իմ մասին:

– Միթե ես հրեա եմ,– արհամարհաբար նկատեց Պիղատոսը:– Քո ժողովուրդը և քահանայապետերը մատնեցին Քեզ իմ ձեռքը: Ինչ ես արել Դու:

– Իմ թագավորությունը այս աշխարհից չէ,– ասաց Հիսուսը:– Եթե Իմ Թագավորությունը այս աշխարհից լիներ, իմ սպասավորները կմարտնչեին, որպեսզի Ես չմատնվեմ հրեաների ձեռքը: Հիմա արդեն Իմ Թագավորությունը այստեղից չէ:

Կուսակալը այդ ամենից մի բան ըմբռնեց. Դատապարտյալն, իրոք, հավակնում է ինչ-որ իշխանության:

– Թե որ այդպես է, ուրեմն Դու թագավոր ես,– ցանկացավ ճշգրտել նա:

– Դու ես ասում, որ Ես Թագավոր եմ:

Դա Արևելքում հաստատական պատասխանի ընդունված ձև էր: Բայց այստեղ, որպեսզի ցրի Պիղատոսի մոլորությունը, Հիսուսը ավելացրեց.

– Ես դրա համար ծնվել և դրա համար եմ աշխարհ եկել, որպեսզի վկայեմ ճշմարտությունը: Ամենայն մարդ, որ ճշմարտությունից է, լսում է Իմ ձայնը:

Հիսուսի խոսքերը հռոմեացուն թվում էին իմաստազուրկ: Իր հայրենակիցներից շատերի նման Պիղատոսը սկեպտիկ էր:

– Ինչ է ճշմարտությունը,– քմծիծաղ տալով հարցրեց նա:

Նա հասկացավ, որ գործ ունի Քարոզիչի հետ, Որը հազիվ թե վտանգավոր լինի վարչակարգի համար: Միևնույն ժամանակ կուսակալը բնավ էլ չէր ցանկանում խառնվել կրոնական հարցերին և, առավել ևս, իր սանձերը քանսարկուների ձեռքը տալ: Բավական է, ինչքան զիջումներ արեց այդ բարբարոսներին: Շատ պատեհ առիթ է նրանց համոզվելու համար, թե ինչ է անաչառ կայսերական արդարությունը: Նրան հաճախ մեղադրում էին անօրինական հաշվեհարդարների մեջ: Իսկ հիմա նա անկողմնակալ կլինի, դրա հետ մեկտեղ ցույց տալով, թե ով է իսկական տերը Երուսաղեմում:

Սակայն ավագերեցները չէին պատրաստվում իրենց պահանջները ետ վերցնել: Նորից մեղադրանքներ տեղացին, բերվեցին նոր հանցանշաններ: Նրանք ծղրտում էին, որ «Հիսուսը խռովության է մղում ժողովրդին, սովորեցնելով ողջ Հրեաստանով մեկ՝ սկսած Գալիլիայից»:

– Այս Մարդը Գալիլիայից է,– հարցրեց Պիղատոսը: Նա միտք հղա-

ցավ, եթե ինքը չի ազատվում դատավարությունից, ապա գոնե իր կարծիքը Հաստատի տեղական սովորությունները ավելի լավ իմացող, գիտակ անձի կողմից: Նա հրամայեց Հիսուսին տանել Հասմոնեից պալատ, որտեղ Զատկի օրվա համար ժամանել էր Գալիլիայի չորրորդապետը:

Ողջ այդ տարիների ընթացքում Հարաբերությունները կուսակալի և Անտիպասի միջև լարված էին: Երկուսն էլ ենթարկվում էին Ասորիքի լեգատին, սակայն Անտիպասը ցանկանում էր իրեն տեսնել երկրի միակ տերը: Գալիլիացուն ուղարկելով Հերովդեսի մոտ, Հրեաստանի կառավարիչը երկու նպատակի Հասավ. Հաշտվեց մրցակցի Հետ, որի մեքենայությունները վտանգավոր էին իր Համար, և թեթևացրեց իր խնդիրը այդ խճճված գործում:

Չորրորդապետը շոյվեց Հռոմեացու կանխակալ վարմունքից: Նրան ուրախացրեց նաև Հիսուսին տեսնելու Հնարավորությունը, Որի Համբավը նրա մեջ Հետաքրքրասիրություն և տագնապ էր արթնացրել: Ահա, վերջապես, Նա իր առջևում է, առեղծվածային Մարգարեն, ինչպես ասում էին՝ Հովհաննեսին գերազանցածը: Հնարավոր է, Նա ցույց կտա ինչ-որ նշան, որպեսզի թեթևացնի Հերովդեսի ձանձրալի օրերը Երուսաղեմում: Բայց նա Հիասթափվեց: Հիսուսը չէր պատասխանում ոչ մի Հարցի, և ոչ մի Հրաշք Հնարավոր չէր Նրանից կորզել: Անտիպասը անմիջապես կորցրեց Նրա Հանդեպ ունեցած Հետաքրքրությունը: Ավագերեցների մեղադրանքները նա չլսելու էր տալիս: Իր զինվորների Հետ ծաղրելով Հիսուսին, Հրամայեց Հագցնել Նրան թագավորական ծաղրածուի Հանդերձ և ետ ուղարկել Պիղատոսի մոտ: Դա Հաշտության նշան եղավ իշխանության երկու ներկայացուցիչների միջև:

Պիղատոսը եկավ այն եզրակացության, որ քահանայությունը Համբավավոր Քարոզչից վրեժ է լուծում պարզապես նախանձից դրդված: Հռոմեական օրենքի Համաձայն՝ Նրան մահվան դատապարտելու Հիմք չկար: Նա կրկին բարձրացավ Հարթակ, և, նստելով դատավորի գահավորակին, Հայտարարեց. «Այս Մարդուն բերեցիք ներկայացրիք ինձ, որպես ժողովրդին մոլորեցնողի: Ես ձեր ներկայությամբ դատաքննություն անցկացրեցի և չգտա ձեր ներկայացրած մեղադրանքներից և ոչ մի Հանցանք այս Մարդու մեջ: Հերովդեսը նույնպես չգտավ Նրա մեջ որևէ Հանցանք, քանզի ուղարկեց Նրան մեզ: Նա մահվան արժանի ոչինչ չի արել: Այսպիսով, պատժելով Նրան, կարձակեմ»:

Նա գտավ, որ գանակոծելը բավարար է վախեցնելու այդ Մարդուն, Որը Իր խոսքերով խախտել է Հանրության անդորրը:

Ավագերեցները Հասկացան, որ իրենց ծրագիրը մոտ է տապալման:





ՀԻՍՈՒՍ ՀԱՆՁՆՎՈՒՄ Է ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

Նրանք աղմկելով սկսեցին բողոքել: Պիղատոսը հուսալով աջակցություն գտնել բազմության մեջ, ասաց, որ կարձակի Հիսուսին, թեկուզ հանուն տոնական օրվա: Բանտում խաչելության էին սպասում երեք խռովարարներ, որոնց թվում ոմն Հիսուս բար Աբբա կամ Բարաբբա, քաղաքում քաջ հայտնի կալանավոր[3]: Մեղադրողները օգտվելով առիթից, պահանջում էին, որ հենց նա արձակվի: Նրանց կողմից գրգռված ամբոխը սկսեց բարձրաձայն տալ նրա անունը: Բարաբբային Երուսաղեմում ոչ միայն գիտեին, այլև համարում էին հերոս, իսկ Հիսուսը եկվոր էր, Որի անունը քիչ բան էր ասում քաղաքացիներին: Անգամ երբ Պիղատոսը Գալիլեացուն անվանեց «Հրեից Թագավոր», դա չազդեց Բարաբբային պատժից ազատել ցանկացող ամբոխի վրա:

Սակայն Պիղատոսը չէր շտապում: Իր կամքին հակառակ, Մեղադրյալի հանդեպ լցվել էր կարեկցանքով: Իրենը պնդելու ցանկությունն ավելի ուժեղացավ, երբ կնոջ կողմից ուղարկված ծառան հայտնեց Արդարակյացին ներելու նրա խնդրանքը: Նա հավատացնում էր, որ երազում իրեն ահեղ նախազգուշացում է արվել Նրա մասին, իսկ հռոմեացիները, անգամ անհավատները, մեծ նշանակություն էին տալիս երազներին: Մի խոսքով, ամեն ինչ տանում էր նրան, որ Պիղատոսը չպետք է փոխի իր դատավճիռը:

Նրա հրահանգով Կալանավորը տարվեց պրետորիայի պահակատուն և հանձնվեց դահիճների ձեռքը: Այնտեղ էր հավաքվել ողջ կոհորտան, հավանաբար, հենց այն, որը մասնակցել էր Հիսուսի ձերբակալությանը: Նրան կապեցին սյանը և սկսեցին գանակոծել: Գործի էին դրել հռոմեական փշերով մտրակները, որոնք ծվատում էին մարմինը և արյունլվիկ անում: Այդպիսի մարմնապատժից հետո մարդը սովորաբար հայտնվում է կիսաուշագնաց վիճակում, բայց դա միայն զվարճացնում էր զինվորներին:

Պիղատոսի մոտ հիմնականում ծառայում էին հույներ, սամարացիներ և ասորիներ, որոնք ատում էին հրեաներին[4]: Օգտվելով առիթից, այդ մարդիկ իրենց ողջ չարությունը թափեցին Տառապյալի վրա: Զինվորներից մեկը Նրա վրա գցեց իր կարմիր քղամիդը, մյուսը Նրա ձեռքը մի փայտ խոթեց, որպեսզի Նա նմանվի ծաղրածու արքայի: Հիսուսի գլխին փշերից հյուսված նմանակեցված «թագ» դրին: Նա ոչ մի բառ չասաց: Զինվորները խոնարհվում էին մինչև գետին և գոչում էին. «Կեցցե Հրեից Թագավորը»: Նրանցից մի քանիսը թքում էին Հիսուսի վրա և փայտով խփում Նրա դեմքին ու գլխին:



Պիղատոսը մտածեց, որ կարելի է սահմանափակվել այդ պատժով, բայց քանի դեռ ընթանում էր մտրակահարությունը, ավագերեցները ժամանակ չկորցրին և ծպտյալ գրգռեցին ամբոխին: Հիմա արդեն բոլորն էին միաձայն պահանջում, որպեսզի Բարաբբայի փոխարեն Նազովրեցին խաչ հանվի:

Հազիվ էր դեռ դաժանորեն գանակոծված Հիսուսը, վիրավոր, արյունոտ քղամիդով, երևացել հարթակի վրա, երբ հրապարակում հնչեցին աղաղակները՝ «Խաչել: Խաչ հանիր Դրան»: - Ահավասիկ Մարդը,- բացականչեց կուսակալը փորձելով, հավանաբար, ասել, որ հենց Նա է արժանի ազատ արձակվելու: Բայց, որպես պատասխան, լսվեցին աղաղակներ. «Բարաբբային: Արձակիր մեզ համար Բարաբբային...»:

Պիղատոսը չգիտեր՝ ինչ անել: Նա հրամայեց Հիսուսին նորից տանել:

- Ինչ չար բան է գործել Նա: Վերցրեք Նրան և դուք խաչեք, քանի որ ես Նրա մեջ ոչ մի հանցանք չեմ գտնում,- սրտմտությամբ ասաց նա:

- Մենք Օրենք ունենք,- պատասխանեցին դպիրները,-և, ըստ Օրենքի, Նա պետք է մեռնի, որովհետև Իրեն Աստծո Որդի դարձրեց:

Նախապաշարումի սարսափ սողոսկեց հռոմեացու հոգին: Նա հրաժարվեց հասկանալ տեղի ունեցածը:

- Որտեղից ես Դու,- պրետորիա վերադառնալով՝ հարցրեց նա Հիսուսին:

Հիսուսը լռում էր:

- Ինձ հետ չես խոսում, չգիտես, որ իշխանություն ունեմ Քեզ խաչ հանելու և իշխանություն ունեմ Քեզ ազատ արձակելու:

- Դու Իմ վրա ոչ մի իշխանություն չէիր ունենա,- ասաց Կալանավորը,- եթե քեզ վերուստ տրված չլիներ: Դրա համար էլ, ով Ինձ քո ձեռքը մատնեց, նրա մեղքն ավելի մեծ է:

Այդ խոսքերը գոհացրին Պիղատոսին: Նա արդեն մտադիր չէր սակարկել և գցել իր հեղինակությունը: Սակայն, երբ վերջին անգամ նա զբաղեցրեց դատավորական գահավորակը, նրան տհաճ անակնկալ էր սպասվում: Մեղադրյալները առաջ էին քաշել նոր, բայց և ամենածանրակշիռ փաստարկը. Գալիլեացին Իրեն Փրկիչ է անվանել, միայն դրա համար Նրան պիտի համարել խռովարար: «Եթե դրան արձակես, կայսրին բարեկամ չես,- ասում էին նրանք:-Ամենայն ոք, որ ինքն իրեն թագավոր է կոչում, հակառակ է կայսեր»:

Պիղատոսը շատ լավ որսաց սպառնալիքը և հասկացավ, որ խոսքը



ՀԻՍՈՒՍԻ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԸ



գնում է իր սեփական բարեկեցության շուրջ: Իմանալով Տիբերիոսի խստությունը, որը սևեռուն հետևում էր պրովինցիայի խաղաղության, նա առանց այդ էլ հիմք ուներ զգուշանալու: Նրա սանձարձակության մասին բողոքները սկսել էին ավելի հաճախ ուղարկվել Հռոմ[5]: Կուսակալի թշնամիները այդ դավադրությունը կարող էին օգտագործել իր դեմ, իսկ Պիղատոսը ամենևին էլ չէր ցանկանում զրկվել ձեռնտու պաշտոնից և պատասխան տալ Ասորիքի լեգատի կամ հենց կայսրի առաջ: Արդեն տատանվելով, նա թույլ փորձ արեց մեկ անգամ ևս ազդել ամբոխի զգացմունքների վրա: Հիսուսին դուրս բերեց Կապպաթայի կամ Քարահատակի բարձունքի վրա և մատնացույց անելով Նրան, կուսակալը բացականչեց.

- Ահա ձեր Թագավորը:

- Վերացրու, վերացրու: աչիր Նրան,- ոռնում էր խաժամուժը:

- Ձեր Թագավորին խաչը հանեմ:

- Չունենք մենք այլ թագավոր, բացի կայսրից,- ասացին քահանայապետերը:

Այդպիսի հավատարիմ հպատակության հայտարարությունը Պիղատոսին ընտրության հնարավորություն չթողեց: Վերջ ի վերջո, նրա համար ինչ արժե ինչ-որ հրեական Մարգարեի ճակատագիրը, երբ բախտախաղին է դրված իր՝ Պիղատոսի բարեկեցությունը:

Ցանկանալով ցույց տալ, որ ինքը գործում է ոչ թե Օրենքով, այլ հօգուտ խնդրանքի, կուսակալը պատվիրեց ջուր բերել, և, ինչպես պահանջում էր արևելյան սովորությունը, ցուցադրաբար լվաց ձեռքերը. «Այս Արդարի արյունից ես անմասն եմ»:

Բայց հարթակի մոտ խռնված մարդիկ, որոնք առաջվա պես գազազած աղմկում էին, դույզն ինչ չտատանվեցին դատավորի ակնարկից. «Դրա արյունը՝ մեր վրա ու մեր որդիների վրա,- գոռում էին նրանք, հասկացնել տալով, որ այդ ամենը կատարվում է իրենց պահանջով[6]:

Հիսուս Բարաբբային ներում շնորհելու լուրը ընդունվեց աղմկոտ ծափահարություններով, և նրանում չլսվեցին Հիսուս Նազովրեցուն ուղղված դատավճռի «Ibis ad crucem», «Դու խաչ ես հանվելու» բաւերը:

Դատապարտյալը հանձնվեց զինվորների ձեռքը:

## Գլուխ տասնիններորդ

# ԳՈՂԳՈԹԱ

7 ապրիլ

Երուսաղեմում մինչև հիմա էլ ցույց են տալիս «Վշտի ճանապարհը» (Via Dolorosa), որով մարդիկ մահվան են տարել աշխարհի Փրկչին: Ավետարանական ժամանակներից շատ բան է փոխվել քաղաքի տեղագրության մեջ, այդ պատճառով էլ դժվար է պաշտպանել ավանդության արժանահավատությունը: Անկասկած է սակայն, որ այսպիսի մի նեղլիկ արևելյան փողոցով էր շարժվում նիսանի 14-ին զատկական հինգշաբթու կեսօրին պրետորիայից դուրս եկած թափորը[1]:

ישוע הנצרי מלך היהודים

ΙΗΣΟΥΣ Ο ΝΑΖΩΡΑΙΟΣ Ο ΒΑΣΙΛΕΥΣ ΤΩΝ ΙΟΥΔΑΙΩΝ

JESUS NAZARENUS REX JUDAEORUM

*Խաչի վրայի արձանագրությունը*





**ԽԱՉԻ ՃԱՆԱՊԱՐՀ**

Մոտիկներից ոչ մեկը Քրիստոսի կողքին չէր: Նա գնում էր՝ շրջապատված խոժոռադեմ զինվորներով, երկու հանցագործները, հավանաբար Բարաբբայի հանցակիցները կիսում էին Նրա հետ պատժավայր տանող ճանապարհը: Յուրաքանչյուրն ուներ titulum՝ իր հանցանքը ցույց տվող տախտակ: Քրիստոսի կրծքին կախվածը գրված էր երեք լեզուներով՝ եբրայերեն, հունարեն և լատիներեն, որպեսզի բոլորը կարողանան այն կարդալ: Այն հայտնում էր՝ «Հիսուս Նազովրեցի, Թագավոր Հրեից»[2]:

Սինեդրիոնը փորձեց բողոքարկել նման գրությունը, դրանում տեսնելով ժողովրդի հայրենասիրական զգացմունքներին ուղղված վիրավորանք: Բայց Պիղատոսն այս անգամ մնաց անհողդողդ: «Ինչ ես գրեցի, գրեցի»,- պատասխանեց նա ինքնագոհ, որ կարողացավ գոնե տհաճություն պատճառել իրեն զիջումների հարկադրող մարդկանց:

Ըստ դաժան կարգի, մահապարտները իրենք էին տանում patibulum-ը՝ խաչափայտերը, որոնց վրա իրենց խաչում էին... Հիսուսը քայլում էր դանդաղ: Նրա մարմինը ծվատվել էր մտրակահարությունից և տկարացել՝ գիշերվա անքնությունից: Իշխանությունները ջանում էին գործն ավարտել հնարավորին չափ շուտ, մինչև հանդիսությունն սկսելը: Այդ պատճառով էլ հարյուրապետը բռնեց ոմն հրեա Սիմոնի՝ Կյուրենիայի համայնքից, որն իր հանդից գնում էր Երուսաղեմ, և նա հրամայեց նրան Նազովրեցու խաչը տանել: Հետագայում այդ մարդու որդիները դարձան քրիստոնյաներ, և, հավանաբար, նրանից իմացան Գողգոթայի ողբերգության հիմնական մանրամասները[3]:

Եփրեմյան դարբասների մոտ Թափորը շրջապատվեց մարդկանցով: Լսվեցին կանանց լացի ու կոծի ձայներ: Հիսուսը շրջվեց դեպի նրանց և երկար լռությունից հետո առաջին անգամ սկսեց խոսել. «Երուսաղեմի դուստրեր,- ասաց Նա,- Ինձ վրա լաց մի եղեք, այլ լաց եղեք ձեր և ձեր որդիների վրա, որովհետև օրեր պիտի գան, երբ մարդիկ պիտի ասեն. «Երանի չբեր կանանց, որոնք չծնեցին և այն ստինքներին, որոնք չսնեցին»: Այն ժամանակ մարդիկ պիտի սկսեն ասել լեռներին, թե՝ ընկեք մեզ վրա, և բլուրներին, թե՝ ծածկեցեք մեզ, որովհետև, երբ դալար փայտին այսպես անեն, չորին ինչ կպատահի»: Այդ վերջին ժամերին Նա շարունակում էր մտածել քառասուն տարի հետո Երուսաղեմին վիճակված վերահաս ճակատագրի մասին......

Դուրս գալով քաղաքից, շրջվեցին դեպի պարիսպներից ոչ հեռու գտնվող, ճանապարհին մոտիկ զառիկող բլուրը: Իր տեսքի համար այն ստացել էր Գողգոթա՝ «Գանգ» կամ «Ճակատամաս» անունը[4]: Դրա



գագաթին պետք է դրվեին խաչափայտերը: Հռոմեացիները մշտապես մահապարտներին խաչում էին բանուկ ճանապարհներին մոտիկ, որպեսզի նրանց տեսքով սարսափեցնեն անհնազանդներին:

Բլրի վրա մահապարտներին զգացմունքները բթացնող խմիչք տվեցին: Այն պատրաստել էին հրեա կանայք՝ խաչվածների տանջանքները թեթևացնելու համար[5]: Բայց Հիսուսը հրաժարվեց խմիչքից, պատրաստվելով այդ ամենը տանել սթափ գիտակցությամբ:

Խաչելությունը ոչ միայն համարվում էր անպատվաբեր վախճան, այլև հին աշխարհի հայտնագործած ամենաանմարդկային պատիժներից մեկն էր: Այն համակցում էր մարմնական խոշտանգումները բարոյական նվաստացումների հետ: Պատահական չէր, որ կայսրության տարածքում այդ «զարհուրելի և զարշելի» մահվան կերպից ազատ էին բոլոր նրանք, ովքեր ունեին հռոմեական քաղաքացիություն: Խաչ էին հանում սովորաբար ապստամբ բարբարոսներին և ստրուկներին: Կարթագենից հռոմեացիների կողմից փոխառնված պատիժը արդեն լայնորեն կիրառվում էր Հանրապետության օրերին[6]:

Մահապարտին մերկ կապկպում էին, իսկ երբեմն էլ գամում էին վերադրակով կախաղանափայտին և թողնում էին դանդաղ մեռնելու[7]: Շնահեղձուկը տանջում էր նրան, արևն այրում էր գլուխը, անբնական վիճակից ուռչում էր ողջ մարմինը, վերքերը բորբոքվում էին, պատճառելով անտանելի ցավեր: Նա մահ էր կանչում որպես ազատագրում, բայց այն չէր գալիս: Դեպքեր էին լինում, երբ մարդիկ օրերով կախված էին մնում խաչերից, հաճախ թռչունները կտցում էին նրանց աչքերը, երբ նրանք դեռ կենդանի էին......

Որպեսզի մերձավորները չկարողանային փրկել խաչվածներին, խաչափայտի մոտ կարգվում էր զինված հսկողություն: Այս անգամ էլ առանձնացվեցին չորս զինվոր դատավճիռն ի կատար ածելու և «Ճակատամասում» որպես պահակախումբ մնալու հրամանով: Հսկիչներին հրամայում էր արդեն ոչ թե տրիբունը, ինչպես Գեթսեմանիում, այլ միայն հարյուրապետը: Իշխանությունները հասկացան, որ իզուր էր իրենց տագնապը՝ արարողությունը ոչ մի անկարգություն չհարուցեց: Գալիլիացու կողմնակիցները այս ու այն կողմ էին փախել, իսկ շատերը, հավանաբար, կատարվածն իմացան, երբ ուշ էր արդեն: Ձերբակալությունը, դատավարությունը և մահապատիժն անցկացվեցին փութով, ինչպես որ ծրագրել էին ավագերեցները: Եվ ովքեր էլ անգամ հավատում էին Հիսուսի փրկչականությանը, հիմա կաթվածահար վիճակում էին: Չէ որ խաչվելը նշանակում էր միայն մի բան՝ Նազովրեցին

սուտ փրկիչ է: Նրա նկրտումների մասին հիշեցնում էր միայն խաչափայտին մեխած հեգնական գրությունը:

Հեռվից պատժի արարողությանը հետևում էին գալիլեացի կանանց բազմությունը: Դրանք էին Մարիամ Մագթաղինացին, Կղեովպասի կին Մարիամը, Սաղոմեն և ուրիշներ: Նրանց մեջ էր գտնվում նաև Տիրամայրը Իր քրոջ հետ: Ահա այն՝ Փրկչի համար պատրաստված «Դավթի աթոռը»: Բոլոր մարգարեություններից կատարվեց միայն մեկը՝ «Մարիամի սրտով սուր անցավ»: Ոնց կարող էր պատահել, որ Աստված թող տար այդ: Հիսուսը՝ մարմնացյալ Հավատ և մարմնացյալ Սեր, անօգ կանգնած էր Իր դահիճների առաջ: Չէ որ հենց վերջերս էր, որ Սաղոմեն Նրանից պատվավոր տեղեր խնդրեց իր զավակների համար: Իսկ հիմա Նա պետք է մեռնի հանցագործների հետ……

Կանայք տեսան, թե զինվորներն ինչպես պատառոտեցին Նրա հագուստները, թողնելով Նրա վրա միայն սփածանելին, տեսան՝ ինչպես նախապատրաստեցին խաչափայտը և Դատապարտյալին պառկեցրին վրան[8]: Լսվեցին մուրճերի սարսափելի թխկթխկոցներ, որոնցով հսկայական մեխերը վարսում էին ձեռքի դաստակների և ոտնաթաթերի մեջ: Դա ոչնչի հետ չհամեմատվող սարսափ էր: Կողքը կանգնած Սիմոն Կյուրենացին լսեց Հիսուսի խոսքերը. «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում»: Իրականում ոչ անհոգի դահիճները, ոչ էլ հոգևոր պետերը հասնելով Հիսուսին մահապատժի դատապարտելուն, չհասկացան, թե ինչ է կատարվում այդ ժամին: Ոմանց համար մահապատիժը պարզապես ձանձրալի զորանոցային միօրինակությունից կտրվելու տեղ էր, իսկ մյուսները համոզված էին, որ ժողովրդին զերծ պահեցին «հերձվածողից», աստվածանարգողից և մոլորեցնողից[9]:

Այն բանից հետո, երբ խաչափայտերը խաչհանվածների հետ կանգնեցրին, քարեր լցրին ձողերի կողքերը: Այժմ պահակախմբին մնում էր սպասել մինչև մահապարտների վերջին շունչը: Որպեսզի ժամանակն արագ անցնի, զինվորները կատակ էին անում իրար հետ, վեգ էին գցում: Սովորույթի համաձայն, նրանց թույլատրվում էր մահապարտների հագուստները իրենց վերցնել: Նրանք պատառոտեցին այն մասերի և միայն Հիսուսի մի ամբողջական կտորից կարված խիտոնը որոշեցին չփչացնել, այլ վիճակ գցել, թե ում կհասնի:

Հաճախ ասում են, որ Քրիստոսի մահը մի իրադարձություն էր, որը համարյա աննկատ անցավ այդ ժամանակվա աշխարհում: Դա լիովին արդարացի է: Անգամ հարյուր տարի անց հռոմեացի պատմաբան



Տակիտոսը նվիրել է նրան լոկ մի կարճառոտ արտահայտություն. «Քրիստոսը Տիբերիոսի թագավորության ժամանակ մահապատժի ենթարկվեց Պոնտացի Պիղատոսի կողմից»[10]: Սակայն Երուսաղեմում ևս Հիսուս Նազովրեցու խաչելությանը առանձնապես մեծ նշանակություն չտվեցին: Ուխտավորներով լեցուն քաղաքը ապրում էր իր կյանքով: Պիղատոսի կառավարման չորս տարիների ընթացքում ժողովուրդը վարժվել էր բազմաթիվ մահապատիժների:

Երուսաղեմ շտապող մարդիկ չէին զարմանում՝ բլուրի վրա խաչափայտեր տեսնելով: Տոնակատարության օրերին ցուցադրական հաշվեհարդարներ հաճախ էին լինում[11]: Անցորդները կանգ էին առնում և սառը հետաքրքրասիրությամբ կարդում էին գրությունները: Մի քանիսը լսած լինելով Նազովրեցու մասին, չարախնդորեն բղավում էին. «Վա՛հ, Դու որ քանդում էիր Տաճարը և երեք օրում շինում, ազատի՛ր Ինքդ Քեզ և իջի՛ր այդ խաչից»:

Սինեդրիոնի այն անդամները, որոնք չկարողացան հաղթահարել Դատապարտյալի վախճանը տեսնելու վրիժառության հաճույքը, նույնպես եկել էին Գողգոթա: «Ուրիշներին փրկեց,- ծաղրանքով խոսքեր էին փոխանակում նրանք միմյանց հետ, ակնարկելով «Օվսաննա»* կանչերը,- Ինքն Իրեն չի կարողանում փրկել. եթե Իսրայելի Թագավոր է, հիմա թող այդ խաչից իջնի և Դրան կհավատանք: Եթե Դա հույսը դրել է Աստծո վրա, թող Նա այժմ Դրան փրկի, եթե ուզում է Դրան. քանի որ ասաց, թե՝ Աստծո Որդի եմ»:

Մինչ այդ քամի փչեց, և մռայլ ամպերը պատեցին երկինքը[12]: Թվում էր, որ արևը մայր է մտել, որպեսզի չտեսնի մարդկանց խելահեղությունը: Իսկ նրանք շարունակում էին ծանակել Քրիստոսին, որը անմռունչ տանում էր անմարդկային տանջանքները: Ծանակում էին զինվորները, ծանակում էին ավազակները, ծանակում էին պատահական հանդիսականները: Անգամ Նրա կողքին կախված խռովարարներից մեկը միացավ չարախինդ բազմությանը……

Երեք տարի ապրելով այս երկրում, Հիսուսը սովորեցրեց մարդկանց լինել ԵրկնայինՀոր որդիներ, թեթևացրեց տառապանքները, քարոզեց Արքայության Ավետարանը: Բայց մարդիկ չցանկացան մտնել այդ Արքայությունը: Ե՛վ հեթանոսները, և՛ հրեաները հավատացին այս աշխարհի թագավորությանը, և Քրիստոսի Թագավորությունը իջավ Երկնքից և առաջնորդեց դեպի Երկինք:

Բայց ահա հիմա Նա լռում է. Նա պարտված է և երբեք այլևս

* «Օվսաննա» բացականչությունը բառացիորեն նշանակում է «Փրկիր մեզ»:



**ԽԱՉՅԱԼ ՀԻՍՈՒՍ**



նրանց մեջ տագնապ չի գցի:

Հանկարծ տեղի ունեցավ անսպասելի մի բան: Երկրորդ մահապարտը բազմության հետ մեկտեղ Գալիլիացուն ծաղրող իր ընկերոջն ասաց. «Աստծուց չես վախենում, դու, որ նույն պատիժն ես կրում: Մենք իրավացիորեն արժանի հատուցումն ենք ստանում այն գործերի համար, որ կատարեցինք: Իսկ Սա որևէ վատ բան չի արել»: Հնարավոր է, այդ մարդը դեռ առաջներում լսել էր Հիսուսի քարոզը, հնարավոր է, որ լոկ այդ պահին զգաց իր կողքի Խաչյալից ճառագող ինչ-որ զորություն և միայն նոր նրա հոգում ակնթարթորեն բռնկվեց հավատի ճառագայթը՝ առաջացած մահառաջի տվայտանքից:

– Հիշի՛ր ինձ Տեր,– ասաց նա նայելով Քրիստոսին,– երբ Դու գաս Քո Թագավորությամբ:

Հիսուսի չորացած շրթունքները շարժվեցին և Նա պատասխանեց.

– Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր Ինձ հետ դրախտում կլինես:

Բազմությունը աստիճանաբար նոսրանում էր: Քիչ հեռու կանգնած կանայք, հաշվի չառնելով զինվորներին, համարձակվեցին մոտենալ: Խաչը բարձր էր, սակայն Խաչյալի հետ կարելի էր խոսել[13]: Տեսնելով Հովհաննեսի հետ մոտեցած Իր Մորը, Հիսուսը վերջին անգամ դիմեց Նրան: «Ահա՛ Քո որդին,– ասաց Նա, իսկ հետո նայելով սիրած աշակերտին,– ահա՛ քո Մայրը»: Եվ դրանից հետո Նա լռեց……

Ամպերը խտացան: Ինչպես մթնշաղին, ցերեկվա ժամը երեքին մթնեց: Անասելի ծանրությունը, որն սկսել էր իջնել Հիսուսի վրա Գեթսեմանի գիշերվանից, հասավ իր սահմանին: Վաղուց արդեն Փրկիչն սպասում էր այդ վերջին հանդիպմանը չար աշխարհի հետ, որը պատել էր Նրան սև քողի պես: Նա իսկապես իջել էր մարդկանց ձեռքով ստեղծված դժոխք:

– Էլի՜, էլի՜, լամա սաբաքթանի, Աստվա՜ծ Իմ, Աստվա՜ծ Իմ, ինչու թողեցիր Ինձ:

Սաղմոսերգուի այդ ողբում Քրիստոսն արտահայտեց Իր անսահման տանջանքների բովանդակ խորությունը: Աղոթքի վերջաբանը Նա մինչև վերջ չասաց……

Գողգոթայում կանգնածները չընկալեցին Նրա բառերը: Զինվորները կարծեցին, թե Խաչյալը կանչում է Հելիոսին, Արեգակին, իսկ հրեաներին համահնչյունությամբ լսվեց Եղիա մարգարեի անունը[14]: «Դա Եղիային է կանչում»,– ասաց ինչ-որ մեկը:

Հոգեվարքը սկսվեց: «Ծահենա», «Ծարավ եմ»,– ասաց Հիսուսը:

Զինվորներից մեկը, կարեկցանքից դրդված, վազեց դեպի լեղա-

խաչն քացախով լի գավաթը, որը զինվորները մշտապես կրում էին իրենց հետ և մի սպունգ թաթախելով նրա մեջ, ամրացրեց ձողի ծայրին և մեկնեց Մեռնողին: Ավելի գթազուրկները ուզեցին նրան ետ կանգնեցնել՝ «Թո՛ղ, տեսնենք, արդյոք Եղիան կգա Նրան ազատելու»:

Նոր էր հազիվ թացությունը կպել Հիսուսի բորբոքված շուրթերին, Նա ասաց. «Ամեն ինչ կատարված է»: Նա գիտեր, որ մահը արդեն մոտ է, և նորից սկսեց աղոթել, կրկնելով խոսքերը, որոնք Մայրը սովորեցրել էր Նրան քնելուց առաջ ասելու համար. «Հա՛յր, Քո ձեռքն եմ ավանդում Իմ հոգին...»:

Հանկարծակի մի ճիչ դուրս թռավ Չարչարյալի կրծքից: Հետո Նրա գլուխը խոնարհվեց կրծքին: Սիրտը կանգ առավ: Նա մեռած էր:

Մարդու Որդին խմեց Իր բաժակը մինչև հատակը:

Այդ ակնթարթին մարդիկ զգացին, թե ինչպես ցնցվեց հողը, և տեսան ճեղքվածքները՝ քարերի վրայով վազող: Օդը հեղձուցիչ էր, ինչպես ամպրոպից առաջ: Հարյուրապետը, որը երկար նայում էր Խաչյալի դեմքին, բացականչեց. «Արդարև, այդ Մարդն աստվածների որդի է»: Ինչ-որ խորհրդավորություն բացվեց հռոմեացուն մահապատժի վերջին րոպեներին[15]:

Բնության ահեղ երևույթները ճնշող ազդեցություն թողեցին բոլորի վրա: Մարդիկ շփոթված և վախեցած վերադարձան քաղաք: Նրանք իրենց կուրծքն էին ծեծում որպես վշտի նշան, կռահելով, որ կատարվել է ինչ-որ սարսափելի մի բան:

Մռայլ երկնքի ֆոնի վրա բարձրանում էին երեք խաչափայտերի ուրվագծերը: Բայց միայն մարդկային դաժանության և չարության մասին չէ, որ խոսում էին դրանք: Այսուհետև մահապատժի այդ գործիքը դառնալու է Քավության խորհրդանիշ, ընկած մարդկության հանդեպ Աստծո անձնազոհ սիրո խորհրդանիշ...



## Գլուխ քսաներորդ

# ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

### 7-8 ապրիլի

Գողգոթան դատարկվեց: Մարդիկ ցրվեցին իրենց տները, որտեղ հարազատներն իրենց էին սպասում տոնական հացկերույթի նստելու համար: Միայն զինվորներն էին առաջվա պես նստած բլուրի մոտ: Նրանք իրավունք չունեին պահակակետը լքել մինչև դատապարտվածներից վերջինի մահը:

Հռոմեացիները հաճախ էին մարմինները թողնում խաչափայտի վրա, որպեսզի դիակները երկար ժամանակ հիշեցնեն իրենց թշնամիներին սպասվելիք պատիժը: Բայց Սինեդրիոնը, երաշխավորելով Պիղատոսի առաջ, խնդրեց մինչև արևի մայր մտնելը իջեցնել մահապարտներին*: Այդ էր պահանջում հրեական սովորույթը, իսկ այն պահպանելը առանձնապես անհրաժեշտ էր՝ նկատի առնելով, որ երեկոն համընկնում է սեդերին[1]:

Երկու ավազակները դեռևս կենդանի էին: Հրաման ստանալով, զինվորները կոտրեցին նրանց սրունքները, որպեսզի մահն արագացնեն: Կորցնելով հենարանը, խաչվածները կախ ընկան ձեռքերի վրա և մի քանի րոպե անց շունչները փչեցին: Կասկած չկար, որ Հիսուսը մեռած էր, բայց զինվորներից մեկը ստուգելու նպատակով տեգով խոցեց

* Þ³ µ³ ÃÇÑ Ý· Çëï Áëï ëí áõÌ¿ñ áõñµ³ Ã»ñ»Ï áõ Ý:

Նրա կուրծքը: Վերքի վրա երևացին վերահաս մահվան անվիճելի կանխանշանները՝ «արյուն և ջուր»[2]: Հիմա մնում էր միայն մեխերը դուրս քաշել, իջեցնել մեռյալներին և գցել ընդհանուր փոսի մեջ: Հանցագործներին, սովորաբար, այդպես էին թաղում[3]:

Նույն այդ ժամանակ դատավորին է ներկայանում Հովսեփ Արեմաթիացին, հարուստ և քաղաքում հարգանք վայելող մի մարդ, Խորհրդի անդամ: Նա չէր մասնակցել Փոքր Սինեդրիոնի դատավարությանը, որովհետև ինքը Հիսուսի գաղտնի հետևորդներից էր: Ինչպես և առաքյալները, Հովսեփն «սպասում էր Աստծո Արքայության», բայց հիմա մտածում էր, որ խաբվել է: Այնուամենայնիվ, հաղթահարելով սարսափը, նա եկել էր խնդրելու Պիղատոսից Հանգուցյալի մարմինը՝ թաղելու համար: Հովսեփը չէր ուզում թույլ տալ, որ Հիսուսին զրկեն անգամ առանձին գերեզմանից[4]:

Պիղատոսը զարմացավ, իմանալով, որ Նազովրեցին այդքան արագ մահացել է: Միգուցե Նա միայն ուշագնաց է: Բայց հարյուրապետը հաստատեց, որ կեսօրից հետո, ժամը երեքին, Հիսուսը իսկապես մահացել է: Պիղատոսը Հովսեփին մերժելու պատճառ չուներ: Հնարավոր է՝ նա նույնիսկ, իր սովորության համաձայն, նրանից կաշառք ստացավ: Այսպես թե այնպես, կուսակալը Հովսեփին հնարավորություն տվեց մարմինը տնօրինել, ինչպես ինքն է ցանկանում:

Շատ քիչ ժամանակ էր մնացել անհրաժեշտ նախապատրաստությունների համար: Եթե երեկոն վրա հասներ, հարկ կլիներ թաղումը մեկ օրով հետաձգել: Բայց Հովսեփին հաջողվեց գնել կտավ պատանքի համար, իսկ փարիսեցի Նիկոդեմոսը, նա, ով առաջներում գիշերը եկավ Հիսուսի հետ զրուցելու, մեծ անոթներով անուշահոտ զմուռսի և հալվեի լուծույթ բերեց, որով հագեցվեց կտավը:

Ծառաների օգնությամբ մարմինը դրեցին պատգարակի վրա և տեղափոխեցին հարևան պարտեզ: Հողակտորը պատկանում էր Հովսեփին, որը վերջերս այնտեղ իր համար դամբարան էր պատրաստել[5]: Այլ գերեզման փնտրելու հնարավորություն չկար, քանի որ յուրաքանչյուր րոպեն թանկ էր: Բայց, հավանաբար, Հովսեփն ուրախ էր, թեկուզ այս կերպ վերջին անգամ Ուսուցչին ծառայելու:

Հանգուցյալին փաթաթեցին անուշաբույր ծածկոցի մեջ և ներս տարան քարայր, կարդացին հոգեհանգստի աղոթքներ և մուտքը լցնելով՝ փակեցին քարի կլոր սալիկներով, որի համար թողնվեց հատուկ ջրհորդան: Կատարելով տխուր պարտականությունը, երկուսն էլ բա-





ԽԱՉԻՑ ԻՋԵՑՈՒՄԸ

ժամվեցին սեդերը կատարելու համար:

Մարիամ Մագթաղինացին և Հակոբի մայր Մարիամը նույնպես ներկա էին պարտեզում թաղմանը: Նրանք կանգնած էին «գերեզմանի դիմաց» և արտասվելով նայում էին այդ փութկոտ արարողությանը: Նրանք իրենք էին ցանկանում օծել Տիրոջ մարմինը անուշահոտ յուղերով և երկար սգալ անվերադառնալի կորուստը: Բայց արդեն ուշ էր:

Ճիշտ է, հիմա նրանք գերեզմանի տեղը գիտեին և հույս ունեին շաբաթն անցնելուց հետո կրկին գալ այստեղ:

Այնինչ, քահանայապետները լսելով, որ Նազովրեցուն թաղել են Գողգոթային մոտիկ պարտեզում և ոչ թե մյուս մահապարտների հետ, անհանգստացան: Ինչ կլինի, եթե երկրպագուները սկսեն ուխտագնացության գալ Նրա գերեզմանին կամ մարմինը գողանան. իսկ հետո հայտարարեն, իբր Նա կենդանի է: Ցանկալի կլիներ արմատախիլ անել հիշողությունը Նրա մասին: Այդ պատճառով ավագների խումբը վերստին եկավ Պիղատոսին խնդրելու, որպեսզի առաջին օրերին քարայրի մոտ պահակություն կարգվի:

«Զինվորներ ունեք,- դժգոհ պատասխանեց նրանց կուսակալը,- գնացեք և հսկեք, ինչպես ուզում եք»: Նա այլևս չէր ցանկանում ոչ մի ընդհանուր բան ունենալ այդ տհաճ գործի հետ:

Սակայն Պիղատոսից սպասում էին միայն արտոնում: Ստանալով այն, Քահանը հրամայեց կնքել անձավը, և այդտեղ պահակություն կարգվեց[6]:

Նվիրապետությունը հիմա կարող էր հանգիստ անցնել տոնակատարությանը և աղոթքներ հղել Աստծուն: Ամեն ինչ անցավ շատ ավելի լավ, քան իշխանությունները սպասում էին: Իսկ աշակերտները: Նրանք ոչինչ չգիտեին, չգիտեին, թե որտեղ են թաղել, և ոչ էլ գերեզմանի հսկողության մասին գիտեին: Սարսափը պատել էր նրանց: Նրանց թվում էր, թե ուսուցչի բոլոր կողմնակիցներին կարող են ցանկացած պահի բռնել: Առայժմ իրենց ձեռք չեն տվել: Բայց երկար կտևի այդ: Եթե չլիներ շաբաթը և տոնը, նրանք, իհարկե, կթողնեին ամեն ինչ և կվերադառնային ետ՝ հարազատ Գալիլիա:

Դա ամենամռայլ Զատիկն էր իրենց կյանքում:

«Ես և իմ ուղեկիցները,- կարդում ենք Պետրոսի պարականոն Ավետարանում,- վշտի մեջ էինք և ցավը սրտներումս թաքնվել էինք, քանի որ մեզ փնտրում էին որպես Տաճարը վառելու մտադրություն ունեցող հանցագործների: Մենք արտասուքն աչքներիս պահքի և սգի մեջ եղանք զօր ու գիշեր»[7]: Թող որ դրանք առաքյալի իսկական բառերը չլինեին, բայց դրանք ճշգրտորեն հաղորդում են գալիլիացիների հոգեվիճակը խաչելությունից հետո:

Սակայն հետապնդման վախից և խղճի կշտամբանքներից ավելի շատ, նրանց ծվատում էր այն միտքը, որ Մարդու Որդին խլված է իրենցից: Նա, Ով նրանց հետ կանաչապատ բլուրներով գնում էր դեպի լիճ, Ով այդքան բարի էր և հզոր: Ով կարող էր մի բառով ապաքինել հիվանդին, Ով վկայեց ճշմարտության մասին և խոստացավ աշակերտներին տանել Աստծո Թագավորություն, հիմա անշունչ պառկած է: Նրանք այլևս չեն լսի ծանոթ «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ» բառերը, չեն տեսնի հացը կիսող ձեռքերը......

Աշակերտները հուսախաբության մեջ էին՝ ինչու Աստված լքեց Նրան, լքեց նրանց բոլորին:

Որոշ ռաբբիներ ասում են, որ Փրկիչը պետք է մահկանացու լինի, ինչպես մնացած մարդիկ[8]: Բայց ինչու Հիսուսը մեռավ ուժերի ծաղկման շրջանում, այլ ոչ թե աշխարհից հեռացավ «տարիների բեռի տակ կքած»: Ինչու այդքան քիչ բան հասցրեց անել: Չէ որ Նա Մովսեսի պես չթողեց քարետախտակներ, մարգարեների նման չգրեց գրքեր, դպրոց չստեղծեց Գամաղիելի նման: Նրա միակ ժառանգությունը իրենք են՝ հասարակ, տկար մարդիկ, որոնք անարժան գտնվեցին Ուսուցչի հանդեպ՝ վճռական պահին թողեցին Նրան: Արքերեցները երբ շտապում էին, գիտեին՝ ինչ են անում: Ծառը չհասցրած պտուղներ տալ՝ հատվեց առանց հասակ առնելու:

Նա մեռավ: Բայց մեռավ ոչ որպես Աստծո Օծյալ, այլ որպես մերժված, քանզի Օրենքն ինքը անիծված է համարում նրան, ում նման մահ է հասնում[9]: Նրան դատեց և՛ հրեական, և՛ հռոմեական դատարանը:

Նա մեռավ նույնիսկ ոչ որպես սովորական մարդկային զգացմունքների սահմանը հաղթահարած, հոգու ուժով տառապանքը հաղթած իմաստուն: Նա տանջվեց ինչպես միլիոնավոր մարդիկ, ինչպես ամեն մի երեխա կամ վիրավոր թռչուն, ինչպես ցանկացած կենդանի էակ: Ոչ մեկը սատար չեղավ Նրան, երբ նա արյունաքամ էր լինում ահեղ խաչափայտի վրա: Ոչ մի հրեշտակ չթեթևացրեց Նրա հոգեվարքը: Իրավացի էին նրանք, ովքեր ասում էին՝ «Ուրիշներին փրկեց, իսկ Իրեն չի կարող փրկել»:

Նշանակում է Հիսուսը նա չէր, ում տեղը որ նրանք Նրան ընդունել էին: Իսրայելի և աշխարհի Ազատարարը չէր: Եվ, հետևապես, զուր էր Նրա հանդեպ իրենց հավատը, իսկ Պետրոսը, որ ասաց՝ «Դու Փր-

կիչն ես», լոկ դատարկ բառեր էին: Դա վերջնական, անուղղելի փլուզում էր: Խորտակվեցին հույսերն ու շլացուցիչ երազանքները: Երբեք դեռ մարդիկ չէին զգացել նման տանջալի հիասթափություն:

Ինչ էր մնում անել: Փախչել, արագ փախչել այդ չարագուշակ քաղաքից: Վերադառնալ Գալիլեա իրենց տները, իրենց նավակները: Մոռանալ Մարդու մասին, Որն Ինքը խաբվել է և մոլորության մեջ էր գցել Իր պարզամիտ հետևորդներին……



## Գլուխ քսանմեկերորդ

# ՀԱՂԹԱՆԱԿ ՄԱՀՎԱՆ ՀԱՆԴԵՊ

### 9-14 ապրիլի

Ապրիլի 8-ի մայրամուտի հետ ավարտվեց շաբաթի հանգստի ժամկետը, բայց կանանց անհրաժեշտ էր դեռ անուշահոտ փոշիներ և քսուքներ գնել, որոնցից զմռսելու համար նրանք խառնուրդներ էին պատրաստում: Այդ պատճառով էլ գերեզմանի այցելությունը հետաձգվեց մինչև հաջորդ օրվա առավոտ: Հսկողության մասին նրանք չգիտեին. նրանց անհանգստացնում էր միայն այն միտքը, թե ով կօգնի իրենց ծանր քարը մի կողմ գլորել:

Մարիամ Մագթաղենացին իր ընկերուհիներից ավելի վաղ եկավ: Լուսադեմի կիսախավարի մեջ մոտենալով դամբարանին, նա շփոթված կանգ առավ. քարը տեղաշարժված էր: Ինչ էր նշանակում դա: Միթե Ուսուցչի մահից հետո նույնիսկ Նրա թշնամիները չէին հանգստացել……

Այդ պահին ժամանակին հասան Սաղոմեն և Կղեոպասի կին Մարիամը և նայելով անձավի ներսը, համոզվեցին, որ այն դատարկ է: Մագթաղինացին արցունքն աչքերին վազեց Պետրոսի և Հովհաննեսի մոտ և ցավալի լուրը հաղորդեց նրանց. «Տիրոջը վերցրել են գերեզմանից, և չգիտենք, թե ուր են դրել Նրան»: Երկու աշակերտներն էլ անմիջապես



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ



Թողնելով տունը, ուր թաքնվել էին, շտապեցին Մարիամի հետևից Հովսեփի այգին:

Սկզբում նրանք վազում էին իրար հետ, բայց հետո Սիմոնը հետ ընկավ, և Հովհաննեսը առաջինը հասավ անձավին: Տեսնելով, որ Մարիամը ճիշտ է, նա գլուխը կորցրեց ենթադրությունների մեջ՝ ով կարող է, խախտելով Օրենքը, անարգել հավիտենական հանգստավայրը: Պատանին կռացավ դեպի բացվածքը, բայց վճռականությունը չբավեց ներս մտնել:

Երբ Պետրոսը պարսպից ներս մտավ, հազիվ էր շնչում արդեն: Բայց այնպիսին չէր այդ մարդը, որ երկար մտածեր: Կանգ չառնելով՝ Պետրոսն իսկույնևեթ մտավ մութ դամբարանը: Դա սրտապնդեց Հովհաննեսին, և նա հետևեց Սիմոնին: Քարե մահճի կողքին նրանք տեսան սավանը և վարշամակը, որը թաղմանը Նրա գլխին էր:

Թաղյալը անհայտացել էր:

Աշակերտները վախեցան հարցուփորձ անել, բողոքել, մարմինը փնտրել: Նրանք գլխիկոր ետ եկան քաղաք՝ տխուր տարակուսանքներով համակված: Երևում է՝ թշնամիները որոշել էին ծանակել Նրան մինչև վերջ…

Գերեզմանի մոտ մնաց միայն Մագթաղինացին: Իր վշտի մեջ թաղված, նա չնկատեց, որ կանայք գնացել են ինչ-որ տեղ: Ասես չհավատալով դժբախտությանը, Մարիամը մի անգամ էլ մոտեցավ անձավի բացվածքին և անսպասելիորեն տեսավ այնտեղ սպիտակ հագուստներով երկու անծանոթների:

- Ո՛վ կին, ինչու ես լալիս,- հարցրին նրանք:

- Որովհետև իմ Տիրոջը գերեզմանից վերցրել են և չգիտեմ՝ Նրան ուր են դրել:

Նրա մեջ հույս առկայծեց, որ հնարավոր է իրեն այդ մարդիկ կբացատրեն կատարվածը: Բայց այդ նույն ակնթարթին Մագթաղինացին զգաց, որ իր թիկունքում կանգնած է ինչ-որ մեկը, և ետ նայեց:

- Ո՛վ կին, ինչու ես լալիս: Ում ես փնտրում,- հարցրեց Անծանոթը:

Միայն իր վշտի հետ լինելով, Մարիամին թվաց, թե իր առաջ պարտիզպանն է, որը, հավանաբար, պետք է որ իմանա, թե որտեղ է մարմինը:

- Տե՛ր,- պաղատագին ասաց նա,- եթե դու ես Նրան վերցրել, ասա ինձ՝ ուր ես դրել Նրան, որովհետև ես Նրան պիտի վերցնեմ:

- Մարիա՛մ,- հնչեց ծանոթ ցավագին ձայնը: Ամեն ինչ ալեկոծվեց

նրանում։ Կասկած չկար։ Նա է…

– Ռաբբունի՛, – ճչաց Մագթաղինացին և ընկավ Նրա ոտքերը։

– Ինձ մի՛ մոտեցիր, քանի որ դեռ Հորս մոտ չեմ բարձրացել, ուրեմն գնա՛ դու իմ եղբայրների մոտ ու նրանց ասա՛, որ Ես բարձրանում եմ դեպի Իմ Հայրը և ձեր Հայրը, դեպի Իմ Աստվածը և ձեր Աստվածը։

Ուրախությունից խենթացած, կատարվածը հազիվ գիտակցելով, Մագթաղինեն դուրս թռավ պարտեզից։

Զլված և չտեսնված լուրով նա տուն վազեց, որտեղ սուգ էր տիրում, բայց ընկերներից ոչ մեկը լուրջ չընդունեց նրա խանդավառ խոսքերը։ Բոլորը կարծեցին, որ խեղճ կինը վշտից խելքը թռցրել է։ Նույնը մտածեցին նրանք, երբ նրա ետևից հայտնված Հովհաննան՝ Քուզայի կինը, Կղեովպասի կին Մարիամը, Սաղոմեն մեկը մյուսի խոսքը կտրելով հավատացնում էին, որ Ուսուցիչը կենդանի է, որ իրենք տեսել են Նրան իրենց աչքով։ Նրանք պատմեցին, թե ինչպես են իջել քարայր, երբ Մագթաղինացին գնացել էր աշակերտներին կանչելու և այնտեղ սպիտակ հագուստով պատանու են տեսել, «Մի՛ վախեցեք,– ասել է նա,– Դուք Հիսուսին եք փնտրում՝ խաչված Նազովրեցուն. Նա հարություն առավ, այստեղ չէ։ Ահավասիկ այն տեղը, ուր Նրան դրել էին։ Բայց գնացեք ասացե՛ք Նրա աշակերտներին և Պետրոսին, թե՝ ահա Նա ձեզնից առաջ գնում է Գալիլիա. այնտե՛ղ կտեսնեք Նրան, ինչպես ձեզ ասել էր»։ Կանայք խոստովանեցին, որ նախապես իրենք վախեցան տեսածի մասին պատմել, բայց հետո Հիսուսն Ինքը ճանապարհին հանդիպեց իրենց և կրկնեց՝ բոլորի Գալիլիա գնալու հրամանը։

Առաքյալներն իրար երեսի նայելով լսում էին պատմությունը։ «Բայց նրանց խոսքերը,– նկատում է Սբ.Ղուկասը,– բարբաջանք թվացին, և չէին հավատում նրանց»[1]։ Այն բանից հետո, ինչ որ պատահեց, աշակերտներն արդեն հեռու էին հրաշք հուսալուց, և թերևս նրանց մտքով ամենից քիչ կանցներ այն, որ Աստված շուտով նրանց վեհերոտ և ճնշված մարդկանցից կդարձնի նոր հավատի նախագուշակներ։

Կատարվեց ինչ-որ բան, առանց որի չէր լինի ինքը՝ քրիստոնեությունը…

Ամենավաղ և անմիջական վկայությունն այդ իրադարձության մասին պատկանում է մի մարդու, որի կյանքում Հիսուսին հանդիպելը առաջ բերեց լիակատար հեղաշրջում։ Հանդիպումը տեղի ունեցավ Գողգոթայից հինգ-վեց տարի հետո։ Այդ մարդը՝ Սողոս Տարսոնացին,



հետագայում՝ Պողոս, գրել է Կորնթոսի քրիստոնյաներին. «…ես ձեզ ավանդեցի նախ այն, ինչը ես ինքս ընդունեցի, թե՝ Քրիստոս մեռավ մեր մեղքերի համար՝ ըստ Գրքերի և թե՝ թաղվեց և թե՝ հարություն առավ երրորդ օրը՝ ըստ Գրվածքների և թե՝ երևաց Կեփասին և ապա՝ Տասներկուսին, ապա երևաց միանգամից ավելի քան հինգ հարյուր եղբայրների, որոնցից շատերը կան մինչև այժմ, ոմանք էլ՝ ննջեցեալ եղան։ Եվ ապա երևաց Հակոբոսին, ապա՝ բոլոր առաքյալներին։ Ամենից հետո երևաց և ինձ՝ անարգիս, որովհետև ես իսկ եմ առաքյալների տրուպը. ես, որ առաքյալ կոչվելու արժանի իսկ չեմ, քանի որ հալածեցի Աստուծու Եկեղեցին»[2]։

Պողոսի այս վկայությունը Ավետարանների զատկական պատմությունների հետ մեզ մոտեցնում է իրական փաստի, որը հոգեպես վերածնեց աշակերտներին և մղեց Բարի լուրի քարոզչության։

Ավագերեցները մտածում էին, որ գալիլեական Փրկչի հարցը լուծված է, բայց հիմա նրանք անզոր էին կանգնեցնելու նոր շարժումը։ Պահակների պատմությունները արտասովոր երևույթների մասին, ուղեկցված մարմնի անհայտացմամբ, կարող էին, իհարկե, մոլորության մեջ գցել Սինեդրիոնը։ Հարկավոր էր իրենց պաշտոնական մեկնակերպը։ Ինչպես ասված է Պետրոսի Ավետարանում, երեցները որոշեցին, որ ավելի լավ է դիմել խաբեության, քան «ընկնել հրեա ժողովրդի ձեռքը և քարկոծվել[3]։ Հայտարարվեց, որ գիշերը, երբ պահակախումբը նիրհել է, Հիսուսի աշակերտները գողացել են Նրա մարմինը և լուր են տարածել՝ իբր Նա կենդանի է։ Դարեր անց այդ բացատրությունը դեռ կրկնվում է նրանց կողմից, ովքեր ցանկանում են «բանականորեն» բացատրել քրիստոնյաների զատկական հավատը[4]։

Նրանք ուշադրություն չեն դարձրել մի հոգեբանական դժվարության վրա. եթե առաքյալները մասնակցել են կեղծիքին կամ իմացել են այդ մասին, որտեղից նրանց գիտակցված խաբեությունը պաշտպանելու հոգու ուժը և համարձակությունը անգամ մահվան դեմ-հանդիման։ Հարյալին քարոզելու համար խաչ հանվեց Պետրոսը, գլխատվեց Զեբեդեոսի որդին՝ Հակոբոսը, քարկոծվեց Հակոբ Արդարը, դրա համար մյուս առաքյալները տոկացին մտրակահանության, բանտերի, Հռոմի և Հրեաստանի իշխանությունների հետապնդումներին և զոհեցին իրենց կյանքը։

Բայց չէր կարող պատահել, արդյոք, որ Խաչյալի մարմինը հանված լիներ ինչ-որ ուրիշների կողմից. հասկանալի է՝ ոչ Պիղատոսի կամ Սինեդրիոնի հրամանով, քանզի այդ դեպքում նրանք կարող էին հեշտու-

թյամբ մերկացնել խաբեությունը, այլ անհայտ մարդկանց կողմից: Այդ տեսակետի կողմնակիցները մոռանում են, որ նույն բանը մտածեցին աշակերտները, տեսնելով դատարկ գերեզմանը, և ընկան առավել վհատության մեջ:

Նրանց մեջ փոփոխություն կատարվեց միայն այն բանից հետո, երբ նրանք իրենց աչքով տեսան Տիրոջը:

Զգայախաբություն: Խանգարված երևակայության պտուղ: Այդ բացատրությունը թողնենք նրանց, ովքեր մտածում են, որ աշխարհում ամեն ինչ կարելի է ճանաչել լոկ գիտության հնարավորություններով[5]: Իրականում քրիստոնեության սկիզբը մի քանի գալիլիացիների մտավոր մթագնման հանգեցնելու վարկածը սակավ ճշմարտանման է: Հիսուսին տեսել են ամենատարբեր անձնավորություններ: Նա երևացել է տարբեր հանգամանքներում և շատ տեղերում՝ առանձին մարդկանց, խմբերի և մեծ բազմությունների: Այդ հայտնությունները լիարժեք ստույգությամբ համոզում են նրանց այն բանում, որ մահը ի զորու չի Հիսուսի հանդեպ, որ այն «չկարողացավ Նրան պահել»: Եթե դա լիներ հոգեկան հիվանդների զառանցանք, ինչպես կարող էր այն պատել հարյուրավոր այդչափ իրարից տարբերվող ականատեսների և տալ այդքան հաստատուն արդյունքներ: Եվ վերջապես. կային արդյոք լուրջ նախադրյալներ նման տեսակի պատրանքների համար: Չէ որ, Հիսուսի մահվանից ճնշված, աշակերտները կորցրել էին հավատը Նրա փրկչականության, հանդեպ[6]: Ուսուցչի խոսքերը Հարության մասին նրանց անհասկանալի էին մնացել, իսկ Քրիստոսի ծառայության խորհուրդը բացվեց նրանց անհամեմատ ավելի ուշ:

Հանգեցնել ողջը առաքյալների անձնական ապրումներին՝ նշանակում է չափազանցել նրանց դերը քրիստոնեության ծագման մեջ: Ավետարանները գրվել են այնպիսի միջավայրում, որտեղ առաքյալների հեղինակությունը անվիճելի էր, բայց ավետարանիչները բնավ էլ Պետրոսին և իր ընկերներին չեն պատկերել որպես հզոր և հանճարեղ բնավորություններ, համաշխարհային կրոն ստեղծելու ընդունակ մարգարեներ: Նրանք սիրում էին իրենց Ռաբբիին, դա ճիշտ է, այդուհանդերձ մենակ սիրելը այդպիսի հեղաշրջման համար բավարար չէ: Բավարար չեն նաև վկայակոչումները «տպավորության», որը թողել է Հիսուսի անձը նրանց հոգիների վրա[7]: Ոչ մեկը չի ասել, որ Եսային, Բուդդան կամ Կոնֆուցիոսը խաչ են հանվել: Բայց չէ որ այդ մարդիկ նույնպես շրջապատված են եղել հետևորդների սիրով, ինչի մասին են վկայում նրանց աճյունների վրա դրված սարկոֆագները:



Միայն Տիրոջ աճյունի մասին է ասված՝ «Այն այստեղ չի...»:

Որոշ թերահավատներ գտնում են, որ Հիսուսը խաչի վրա չի մահացել, այլ եղել է անգիտակից վիճակում և ուշքի գալով անձավում, եկել է Իր աշակերտների մոտ[8]: Բայց միանգամայն անհասկանալի է՝ ինչպես կարող է կորցրած արյունից և խոշտանգումներից թուլացած, խնամածության կարիք զգացող, կիսակենդան մարդը հաղթահերոսի տեսք ունենալ: Եվ որտեղ այդ դեպքում թաքնվեց Նա հետագայում: Առանց դրա էլ, առհասարակ, խաչվածին, որի ոտնաթաթերին մեխեր են խփել, չի կարող ոչ մի քայլ անել:

Բացի դրանից, Պողոս առաքյալի խոսքերը և մյուս աղբյուրները նկատի ունեն ոչ թե վերակենդանանալը՝ Բեթանիայի հրաշքի նման, այլ Հիսուսի մեջ կատարված լրիվ փոփոխությունը: Նրա դեմքը երբեմն փոխվում էր այնքան հիմնավորապես, որ շատերը անմիջապես չէ որ ճանաչում էին Ուսուցչին: Պողոս առաքյալը տեսել է միայն կուրացուցիչ լույս և լսել արամեերեն իր հետ խոսող Հարեալի ձայնը[9]: Քրիստոսը անցնում էր փակ դռների միջով, հանկարծակի հայտնվում էր և հանկարծակի անհայտանում, ասես երկրային աշխարհի օրենքներին ենթակա նախկին Ուսուցիչը չէր: Պատահական չէ, որ առաջին ակնթարթին մի քանիսը Նրան ուրվականի տեղ են դրել, և Նա պետք է համոզեր աշակերտներին, որ Ինքը իսկապես հարություն է առել մարմնով:

Պողոսի «հոգևոր մարմին» արտահայտությունը, ըստ երևույթին, հանդիսանում է բանալի՝ զատկական գաղտնիքը հասկանալու համար[10]: Այն նշանակում է, որ Հովսեփ Արեմաթիացու այգում կատարվեց իր տեսակի մեջ եզակի՝ Հոգու հաղթանակը, որը չոչնչացնելով մարմինը, տվեց նրան գոյության նոր, բարձրագույն ձև: Քարը շուռ էր տրված միայն Նրա համար, որպեսզի աշակերտները տեսնեին, որ գերեզմանը դատարկ է, որ Հարեալը ասուհետ արգելքներ չի ճանաչում: Անցնելով հոգեվարքի և մահվան միջով, Նա մեզ համար անհասանելի կերպով ձեռք բերեց այլ, հոգևոր մարմնականություն: Առաքյալն ասում է Նրա մասին որպես բոլոր մարդկանց սպասվող կեցության աստիճանի, բայց այդ պահին Աստվածամարդը առաջինն էր, որ կանխեց համընդհանուր այլակերպությունը: Հնարավոր է, այդ պատճառով Հիսուսն ասաց Մարիամ Մագթաղինացուն. «Ինձ մի՛ մոտեցիր»: Միայն բացառիկ դեպքերում մարդ կարող է անմիջական շփման մեջ լինել Նրա պայծառացած էության հետ:

Դա Աստծո Որդու հայտնությունն էր փառքով, որը կանխասել էր Ինքը Հիսուսը Կայիափայի դատաստանի ժամանակ: Քահանայապետը Նրա խոսքերը համարեց աստվածանարգություն, և Նազովրեցու նվաս-

տացուցիչ վախճանը պետք է հաստատեր Սինեդրիոնի կարծիքը։ Զատկական իրադարձությունները առաքյալներին ցույց տվեցին մարգարեությունների ճշմարտացիությունը։ Հիսուսը բացվեց նրանց ոչ թե միայն որպես Քրիստոս և Ուսուցիչ, այլ որպես Մարան*, Տեր, որպես Կենդանի Աստծո մարմնավորում։

Հարեալին չտեսան ո՛չ տրիբունայի անդամները, ո՛չ Պիղատոսը։

Եթե հրաշքի անվիճելի ակնհայտությունը հարկադրեր նրանց ընդունել Նրան, դա բռնություն կլիներ Աստծուն ներհակ հոգու վրա։ Լոկ նա, ով սիրեց Քրիստոսին, ով ընտրվեց Նրա կողմից ծառայելու, կարողացան «տեսնել Նրա Փառքը, որպես Փառքը Միածնի՝ Հոր կողմից՝ լի շնորհով ու ճշմարտությամբ»։

Առաքյալների համար Հարությունը ոչ միայն Ուսուցչին վերստին տեսնելու բերկրանք էր, այլ նշանավորեց հաղթանակ խավար ուժերի հանդեպ, դարձավ Աստծո ճշմարտության վերջնական հաղթանակի, Հիսուս Նազովրեցու մեջ մարմնացած Բարու անպարտելիության երաշխիք։ «Եվ եթե Քրիստոս հարություն չի առել,- ասում է Պողոս առաքյալը,- իզուր է մեր քարոզությունը, իզուր է և ձեր հավատը»[11]։ Այդ համոզմունքով է ապրում քրիստոնեությունը, քանզի Զատկի օրը Եկեղեցին ոչ թե պարզապես ավետում է հոգու անմահության հավատը, այլև մահվան, խավարի և անկման հաղթահարումը։

«Եթե նյութական ուժը,- ասում է Վլ. Սոլովյովը,- անխուսափելիորեն պարտվում է մահից, ապա մտավոր ուժը բավարար չի մահը հաղթելու։ Միայն բարոյական ուժի անհունությունն է տալիս կյանքին բացարձակ լրիվություն, բացառում ամեն կարգի երկատվածություն և, հետևապես, թույլ չի տալիս կենդանու մարդու վերջնական տրոհում երկու առանձին մասերի՝ անմահ հոգու և քայքայվող նյութի։ Իրեն մարդկանց և Աստծո կողմից լքված զգացող, և, ընդ որում, Իր թշնամիների համար աղոթող աչյալ Մարդու Որդին և Աստծո Որդին, ակներև է, Իր հոգևոր ուժերի համար չուներ ոչ մի սահման, և Նրա էության ոչ մի մասը չէր կարող մահվան որս դառնալ Քրիստոսի Հարության Ճշմարտությունը լիապարար, ամբողջական ճշմարտություն է ոչ միայն հավատի, այլ նաև բանականության ճշմարտություն է։ Եթե Քրիստոսը հարություն չառներ, եթե Կայիափան ճիշտ դուրս գար, իսկ Հերովդեսը և Պիղատոսը՝ իմաստուններ, աշխարհը կթվար անիմաստություն, չարի, կեղծիքի և մահվան թագավորություն։ Խոսքը գնում է ոչ թե ինչ-որ մեկի կյանքի ընդհատման մասին, այլ այն մասին, թե կընդ-

* Մարան -արամեերեն բառ է, որը համապատասխանում է հունարեն՝ χύριος  Տեր բառին։



հատվի արդյոք ճշմարիտ կյանքը, կատարյալ արդարակյացի կյանքը։ Եթե այդպիսի կյանքը չի կարող թշնամուն հաղթահարել, ապա ապագայի էլ ինչ հույս է մնում։ Եթե Քրիստոսը հարություն չի առել, ապա էլ ով կարող է հարություն առնել»[12]։

Նա՝ Փրկիչ-Քավիչը կամովին տրվեց Իրեն կործանող տարերքի իշխանությանը և աստվածամարդու հզորությամբ հաղթանակ տարավ դրա հանդեպ, բացելով մեզ համար գալիքի վարագույրը։ Այդ սրբազան օրից սկսած երկրի վրա չի լռում ազատության և փրկության ավետիսը։ «Թող ոչ մեկը չողբա իր չնչինության համար, քանզի հայտնվեց բոլորի համար ընդհանուր Թագավորություն։ Թող ոչ մեկը լաց չլինի իր մեղքերի համար՝ թողությունը շողշողաց գերեզմանից։ Թող ոչ ոք չերկնչի մահից, Փրկչի մահը ազատեց մեզ։ Մահվամբ գերվածը վերջ տվեց մահին, դժոխք Իջածը նվաճեց դժոխքը։

Ուր է, Մա՛հ, քո խայթը,
Ուր է, դժո՛խք, քո հաղթանակը։

Քրիստոս հարյավ, և դու գահընկեց ես արված, հարյավ Քրիստոս, և ընկած դևերը, հարյավ Քրիստոս, և ցնծում են զվարթունները, հարյավ Քրիստոս, և կյանքը թագավորեց (Սբ. Հովհան Ոսկեբերան)։

Ոչ միայն գալիքն է պայծառացած Զատկի լույսով։ Հարությունը նշանակում է Քրիստոսի ներկայության ռեալականությունը Իրեն հավատարիմների մեջ։ «Ուսմունքները», «գաղափարները», մարդկանց տվել են շատ առաջնորդներ և մարգարեներ, Հիսուսն Ինքը մնում է Եկեղեցու հետ որպես Եղբայր և Զրուցակից, որպես Բարեկամ և Փրկիչ, որպես աշխարհին դարձած հավերժ եղող դեմք......

Ավետարանական պատմությունները մեծ ուշադրություն են հատկացնում Քրիստոսի հայտնություններում այն բանին, թե ինչպես նոր փորձը աշակերտներին բացեց աստվածաշնչյան մարգարեությունների նշանակությունը։ Հիմա միայն հասկացան նրանք, թե ինչու ստորացումը և Մարդու Որդու Խաչը Նրա փրկչականության նշանն են։ Միայն հիմա նրանք կարողացան ուրիշ աչքերով կարդալ Աստվածաշնչի տողերը Տիրոջ Ծառայի քավիչ Չարչարանքների մասին։ Ըմբռնելու այդ ընթացքը առավել ամբողջական պատկերված է Սբ.Ղուկասի՝ Կղեոպասի և մյուս առաքյալների մասին պատմության մեջ, որոնք հանդիպեցին Հուսյալին Էմմաուս գյուղակը տանող ճանապարհին[13]։

Նրանք ճանապարհ դուրս եկան նույն օրը երեկոյան, երբ կանայք առաջին լուրերը հասցրին դատարկ գերեզմանի և այգու առեղծվածային երևույթների մասին։ Բայց ինչպես մյուսները, այս երկուսն էլ

նրանց խոսքերը ընդունեցին որպես բարբաջանք։ Թողնելով Երուսաղեմը, նրանք ուղևորվեցին գյուղ, որտեղ ապրում էր, հավանաբար, նրանցից մեկը։ Էմմաուսը մայրաքաղաքից գտնվում էր քայլքով երկու ժամվա ճանապարհի հեռավորության վրա, և ճամփորդները խոսում էին իրենց չիրականացած երազանքների մասին։ Կղեոպասը և նրա մերձավորները անկեղծորեն նվիրված էին Հիսուսին[14]։ Հիմա նրանց մնում էր միայն ողբալ ճակատագրական սխալը, որը կորստյան մատնեց Ուսուցչին և խորտակեց նրանց ընտանիքի կյանքը։

Արևն արդեն մոտենում էր մայրամուտին, երբ նրանց միացավ Ուղեկիցը, նույնպես քաղաքից դուրս եկած։ Նա հարցրեց, թե այդ ինչ վիշտ է տանջում իրենց։

– Երուսաղեմում միայն դու ես, որ չես իմացել, թե ինչպես կատարվեցին այնտեղ այս օրերին,– զարմացավ Կղեոպասը։

– Ինչեր։

– Այն, ինչ եղավ Հիսուս Նազովրեցու հետ, Որը եղավ Մարգարե մարդ, հզոր՝ գործերով և խոսքերով, Աստծո և ամբողջ ժողովրդի առաջ, և թե ինչպես մեր քահանայապետները և իշխանավորները Նրան մատնեցին մահվան դատաստանի ու խաչ հանեցին Նրան։ Մենք ակնկալում էինք, թե Նա է, Որը փրկելու է Իսրայելը, սակայն, այս բոլորով հանդերձ, այս երրորդ օրն է, որ այդ բաները կատարվեցին։ Այլ նաև մեզ զարմացրին մեր միջից մի քանի կանայք, որոնք վաղ առավոտյան գերեզման էին գնացել և Նրա մարմինը չէին գտել, նրանք եկան և ասացին, թե նաև մի տեսիլ էլ էին տեսել հրեշտակների, որոնք ասում էին նրա մասին, թե կենդանի է։ Ապա մեզնից ոմանք էլ գերեզման գնացին և գտան այնպես, ինչպես կանայք ասել էին։ Բայց Նրան չտեսան։

Մարմնի անհայտացման տարօրինակ հանգամանքները ոչ մի ուրախություն էլ իրենց չէին պատճառել։ Ով կարող էր հավատալ նման աներևակայելի բաների։ Լիակատար հիասթափությունն եղավ այդ տարիների արդյունքը։

Անծանոթի արձագանքը անակնկալ էր։

– Ո՛վ անմիտ և թուլասիրտ մարդիկ, որ դժվարանում եք հավատալ այն ամենին, որ ասացին մարգարեները,– հանդիմանեց Նա նրանց։ – Չէ որ Քրիստոս պետք է այդ չարչարանքները կրեր և այնպես մտներ Իր Փառքի մեջ։

Եվ քայլ առ քայլ այդ խորհրդավոր Մարդը սկսեց բացատրել նրանց Աստվածաշնչի փրկչականությանը վերաբերող տեղերը։ Ինչի մասին է Նա խոսում։ Հնարավոր է Գառան և Նրա արյան խորհրդանիշի, Քարի մասին, որը չընդունեցին շինարարները, Արդարի ողբի և Նրա փրկության մասին, Տիրոջ խոստացած Նոր Ուխտի մասին, բայց, հավանաբար, ամենից շատ մարգարեության մասին՝ Եսայու Գրքից, որտեղ պատկերված է Գոյողի Սպասավորը՝ չարչարանքների բովով անցնելիս, որպեսզի բուժի աշխարհի վերքերը և դառնա «լույս ժողովուրդների համար»[15]։ Աստիճանաբար կարծես քողը ընկավ Կղեովպասի և նրա ընկերոջ աչքերից։ Այդ օրերի ողբերգական իրադարձությունները լցվեցին իմաստով։ Եթե այդպես է, ապա Հիսուսի մահը չի նշանակում վերջ...

Այս խոկումների մեջ նրանք մոտեցան Էմմաուսին։ Ուղեկիցը կարծես թե պատրաստվում էր հրաժեշտ տալ նրանց։ Բայց առաքյալները չէին ուզում բաց թողնել Մարդուն, Որը համարյա վերադարձրեց կորսված հույսը. «Մեզ մոտ գիշերիր, որովհետև երեկո է, և օրը տարաժամել է»։ Անծանոթը համաձայնեց։ Երեքն էլ մտան տուն և նստեցին ընթրելու։ Աշակերտները ակամայից Ուղեկցին ընդունեցին իրենցից ավագ և խնդրեցին, որ կարդա ընդունված աղոթքը։ Նա գոհունակության խոսքեր ասաց և հացը կիսեց։ Ծանոթ շարժուձև։ Քանիցս ունկնդրած ձայն։ Այդ նույն ակնթարթում երկուսն էլ հասկացան, թե Ով է իրենց հետ մի սեղանի շուրջը։ Զմայլված, նրանք չհասցրեցին մի բառ անգամ ասել, երբ Նա «դարձավ անտեսանելի նրանց համար»......

Սթափվելով, առաքյալներն սկսեցին տաքացած քննարկել հրաշալի հանդիպումը. «Մեր սրտերն էլ միթե չէին ճմլվում մեր մեջ, մինչ Նա ճանապարհին խոսում էր մեզ հետ. և ինչպես էր մեզ բացատրում Գրվածքները»։ Միթե հնարավոր է հիմա մնալ Էմմաուսում։ Շտապ ետ, Երուսաղեմ՝ կիսելու մյուսների հետ անհավանական ուրախությունը։ Չնայած որ արդեն մութ էր, ընկերները շտապեցին քաղաք։ Ավա՛ղ, նրանց ընդունեցին այնպես, ինչպես կանանց։ Ոչ մեկը չէր ուզում հավատալ նրանց[16]։ Բայց այդ պահին նոր լուր ստացվեց. Տերը երևացել է Պետրոսին[17]։ Կարող էր արդյոք խաբվել առաքյալներից ավագը։ Մի քանիսը համարյա հաստատապես հավատում էին, մյուսները դեռ շարունակում էին կասկածել։ Քննարկումները և տաք վեճերը ձգվեցին մինչև ուշ գիշեր։ Անսպասելի բոլորը լսեցին ծանոթ ողջույնը՝ «Շալոմ», խաղաղություն ձեզ։ Աշակերտները տեսան Հիսուսին......

Սարսափը պատեց նրանց։ Տեսի՛լք։ Իսկ Նա նայում էր իր դողահար «եղբայրներին», սպասելով մինչ նրանց ուշքի գալը։ Ինչու են նրանք շվարել և վարանել։ Նրանց հետ անմարմին ուրվական չի, այլ իրենց Ուսուցիչը։ Թող հպվեն իրեն, որպեսզի համոզվեն, որ տեսիլք

չի: Եվ հանդիստ, ասես ոչինչ չի եղել, Նա հարցրեց. «Այստեղ ուտելու բան ունե՞ք»:

Կրկին, ինչպես առաջներում, Նա կարող էր նրանց հետ հացկերույթի նստել:

Նրանք հազիվ էին հավատում իրենց աչքերին:

Գոհունակության աղոթք ասելով, Հիսուսը սկսեց խոսել: Նոր ժամանակներ են սկսվում առաքյալների համար, եկել է նրանց ծառայության ժամը: «Ինչպես Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում»: Փրկիչը կգործի Իր պատվիրակների միջոցով, որոնց կվերափոխի Սուրբ Հոգու զորությամբ: «Առեք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի, եթե մեկի մեղքերը կապեք. կապված կլինի»:

Այդ լուսավոր օրերին վերջնականապես ամրապնդվեց առաքյալների հավատը: Տասներկուսից միայն Թովմասը չտեսավ Տիրոջը[18]: Երբ նա լսում էր եղբայրների հիացական խոսքերը, նրա համար դժվար էր կիսել նրանց զգացմունքները: Չափազանց անճշմարտանման էր ուրախ լուրը: Սխալներ չեն կատարվել: Հնարավոր է, որ, այնուամենայնիվ, դա Քարոզչի ուրվականն է՝ նրանց սփոփելու համար հանդերձյալ աշխարհից եկած: «Եթե չտեսնեմ նրա ձեռքերի վրա մեխերի նշանը և իմ մատները մեխերի տեղը չդնեմ ու իմ ձեռքը Նրա կողերի մեջ չխրեմ, չեմ հավատա»,- շարունակ կրկնում էր Թովմասը:

Ավարտվեցին տոնակատարության օրերը[19]: Աշակերտները մտադրվեցին վերադառնալ Գալիլիա, ուր Տերը խոստացավ գալ նրանց մոտ: Վերջին անգամ հավաքվեցին միասին, հավանաբար, Մարիամի՝ Հովհաննես-Մարկոսի մոր տանը: Դուռը կիպ ծածկեցին. հետապնդումների սարսափը դեռ չէր մարել: Եվ կրկին, ինչպես առաջին օրը, բոլորը հանկարծակի տեսան Հիսուսին իրենց մեջ կանգնած: Նա շրջվեց դեպի Թովմասը՝ մոտեցիր, ձեռքդ մեկնիր, ստուգիր: «Տեր իմ և Աստված իմ»,- ընդամենը կարողացավ ասել առաքյալը: Նա այլևս չմտածեց ապացույցների մասին......

«Արդ՝ որովհետև դու ինձ տեսար և հավատացիր,- ասաց Հիսուսը,- երանի նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան»: Տեսանելի հայտնությունները պետք էին սոսկ օգնելու աշակերտներին խավարից և անհուսությունից դուրս գալու, ցույց տալու համար նրանց, որ մահն անզոր է Փրկչի հանդեպ: Բայց շուտով Տիրոջ ներկայությունը կլինի այլ, մատչելիորեն մերձենալի յուրաքանչյուրին, ով անկեղծորեն կգնա Նրան ընդառաջ:



Գլուխ քսաներկուերորդ

# «ԵՍ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ՁԵԶ...»

### ապրիլի 14-ից մայիսի 18-ը

Տասնմեկն էլ ասես թևառած վերադարձան ետ՝ Կափառնայում[1]: Նույն այդ ժամանակ ուխտավորներից շատերն արդեն գիտեին մահապատժի մասին: Սակայն Նազովրեցու աշակերտները բոլորին տարակուսանքի մեջ գցեցին: Նրանք բոլորովին էլ ընկճված չէին, ընդհակառակը՝ նրանց մոտ զգացվում էր պայծառ բերկրանք, գրեթե՝ հուզվառություն: Ինչը կարող էր այդպես ազդել Սիմոնի և իր ընկերների վրա: Այդ հանելուկի վրա էին գլուխ կոտրում նրանց իմացող մարդիկ: Հնարավոր է, հենց այդ ժամանակ էլ առաքյալները հասկացան, թե ինչի համար է Ուսուցիչն հորդորում իրենց թողնել Երուսաղեմը: Այնտեղ իրենց հանդեպ մշտապես վտանգ էր դարանակալելու, իսկը տանը, թշնամիներից հեռու. նրանք կարող էին կրկին հավաքել Տիրոջ ցրված հետևորդներին և հաղորդել նրանց հրաշք եղելությունը. «Նա հարություն առավ»...:

Աստիճանաբար առաքյալների կյանքը մտավ նախկին հունի մեջ:

Ձկնորսները անցանի իրենց սովորական աշխատանքին: Բայց նրանց միտքը մշտապես համակված էր Հիսուսով: Նրա մասին էր հիշեցնում յուրաքանչյուր կածան, յուրաքանչյուր գողտրիկ անկյուն: Այ, այստեղ էր Նա բլրի լանջին նստած իրենց սովորեցնում առակներով, այնտեղ էր, որ խոսում էր բազմության հետ, ձկնորսական գյուղակի այս փողոցում բուժեց հիվանդի: Առաքյալները կարծես թե վերստին վերապրեցին հրաշքը այն երեք տարիների, որոնք բացեցին նրանց առջև Երկինքը: Սակայն Ինքը՝ Տերը, դեռ չէր երևացել[2]: Աշակերտները սպասում էին՝ հավատալով Նրա խոստմանը:

Մի անգամ երեկոյան Պետրոսը, Զեբեդեոսի որդիները, Թովմասը և Նաթանայելը նավակով լիճ դուրս եկան: Որսը անհաջող ստացվեց, և առավոտյան դեմ նրանք ստիպված հատակին գցեցին դատարկ ուռկանները: Ձկնորսները արդեն մոտ հարյուր մետր էին ափից հեռու, երբ մինչլուսածագին կապույտ մշուշաշղարշի միջից տեսան ջրի ափին կանգնաց Մարդու: Նա բարձրագոչ ձայն տվեց նրանց. «Տղանե՛ր, ուտելու բան չունեք»: Այդ հարցի մեջ անսովոր ոչինչ չկար. շրջակայքի բնակիչները հաճախ էին ձուկը գնում անմիջապես նավակներից: Լսելով, որ նրանք ոչինչ չեն որսացել, Մարդն առաջարկեց նրանց ուռկանը գցել աջ կողմը, և դեռ նոր էին նրանք հետևել Նրա խորհրդին, երբ ուռկանը իսկույնևեթ ամբողջությամբ լցվեց:

Տարօրինակ զգացում համակեց բոլորին: Չէ որ նման բան եղել էր արդեն. և՛ ափի մոտ էր, և՛ ուռկաններն էին դատարկ, և՛ անսպասելի որս եղավ...

Հովհաննեսը փորձելով ճանաչել Կանգնածին, հանկարծ շշնջաց Սիմոնին՝ «Տերն է»: Գալիլիայի ձկնորսների սովորության համաձայն Պետրոսը մերկ էր նստած նավակի մեջ: Ոչ մի բառ չասելով, նա անմիջապես մեջքին կապեց ազդրերը ծածկող փաթթաշորը, ցատկեց ջուրը և սկսեց լողալ դեպի ափ: Մյուսները, թիերին ուժ տալով, շտապեցին Նրա հետևից:

Անծանոթը, երևում է, սպասում էր նրանց: Քարերի մեջ կրակ էր արված, և ածխակտորների վրա ձուկ էր խորովվում: Ձկնորսները զարմացած կանգ առան: Ով կարող էր պատկերացնել, թե արևից թխացած այդ կիսամերկ մարդիկ երբևէ կդառնան աշխարհի ապագա նվաճողներ, իսկ նրանց ուռկանները՝ հոգևոր որսի խորհրդանիշ:

«Բերեք այն ձկներից, որ դուք հիմա որսացիք»,- ասած Անծանոթը: Նրանք մոտեցան ուռկաններին, և քիչ անց ուտելիքը արդեն պատրաստ էր: Ուտում էին լուռ: Արևն իր շողերը փռեց լճի վրա: Լռու-



թյան մեջ լսվում էր թռչունների ճռվողյունը, լսվում էր ալիքների ծփանքը: Խարույկի հոտը խառնվում էր խոտի, ջրի և ձկան հոտին: Ոչ մեկը չէր համարձակվում հարցնել. «Ով ես», բայց նրանց հոգիներում երգում էր ոչ աշխարհային բերկրանքը: Յուրաքանչյուրը անառարկելի համոզվածությամբ գիտեր, որ Հիսուսն է իրենց հետ հաց կտրողը, չնայած Իր կերպարանքը այլ էր:

Վերջացնելով, բոլորը վեր կացան: Տերը կանչեց Պետրոսին և մի կողմ տարավ.

- Սիմո՛ն, Հովնանի որդի՛, սիրում ես Ինձ ավելի, քան դրանք,- հանդիսավոր հարցրեց Նա, ինչպես այն ժամանակ Կեսարիայում՝ Փիլիպպոսին, անվանելով աշակերտին իր լրիվ անունով:

- Այո՛, Տե՛ր,- պատասխանեց նա,- Դու գիտես, որ սիրում եմ Քեզ:

- Արածացրո՛ւ իմ գառնուկներին,- ասաց Հիսուսը, իսկ հետո նորից զննող հայացքով կրկնեց հարցը,- Սիմո՛ն, որդի՛ Հովնանի, սիրում ես Ինձ:

- Այո՛, Տե՛ր: Դու գիտես, որ ես սիրում եմ Քեզ:

- Դու կանվանվես Իմ ոչխարների հովիվը:

Դրանով փորձությունը չավարտվեց: Քրիստոսը երրորդ անգամ հարցրեց.

- Սիմո՛ն, որդի՛ Հովնանի, սիրում ես Ինձ:

Պետրոսը վշտացավ: Հավանաբար, երրորդ անգամ հարցը կրկնելը հիշեցրեց նրան, թե ինչպես սարսափի մոլուցքի մեջ երեք անգամ նա ուրացավ Ուսուցչին:

- Տե՛ր,- տրտում ձայնով ասաց Սիմոնը,- Դու ամեն ինչ գիտես, Դու գիտես, որ ես սիրում եմ Քեզ:

- Արածացրո՛ւ Իմ ոչխարներին:

Եվ որպեսզի Պետրոսը դա չհամարի առանձնաշնորհություն, այլ խաչելության ճանապարհի կոչ, Քրիստոսը ավելացրեց.

- Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, որ մինչ դու երիտասարդ էիր, ինքդ էիր գոտիդ կապում և գնում էիր՝ ուր և կամենում էիր, սակայն, երբ ծերանաս, ձեռքերդ վեր կբարձրացնես, և ուրիշները քեզ գոտի կկապեն ու կտանեն՝ ուր չես կամենա:

Թիկունքից մոտեցավ Հովհաննեսը:

- Տե՛ր, իսկ սա ինչ կլինի,- հարցրեց Պետրոսը:

- Եթե Ես կամենում եմ, որ դա ապրի, մինչև որ Ես գամ, այդ քեզ ինչ հոգ: Դու արի՛ Իմ ետևից[3]:

Հետագայում, խորհելով այդ խոսքերի շուրջ, առաջին քրիստոնյա-

ները որոշեցին, որ Հովհաննեսը կապրի մինչև Քրիստոսի Նոր Հայտնությունը, բայց, ինչպես պարզում է Ավետարանը, Հիսուսը առաքյալներին ցույց տվեց լոկ նրանց ճակատագրերի տարբերությունը: Սիրված աշակերտին վիճակված էր Տիրոջ խոսքը քարոզել մինչև խոր ծերություն, իսկ Պետրոսին՝ խաչվել հավատը վկայելու համար: Հրեից Թագավորի քավության խաչին միացավ մարդու խաչը, որին Քրիստոսը անվանեց Վեմ և Հովիվ, որին և վիճակված էր «վերադառնալով, հաստատել իր եղբայրներին»[4]:

Եկեղեցու առավոտը բացվեց Գեննիսարեթյան երկրի վրա: Օրեցօր մեծանում էր հավատացյալների հոտը: Գալիլեայում ոչ ոք խոչընդոտներ չէր հարուցում նրանց: Երբեմն հարյուրներով դուրս էին գալիս անբնակ տեղեր աղոթքների համար, ակնկալելով հանդիպում Տիրոջ հետ:

Նազարեթյան ընտանիքը, հատկապես Մարիամը՝ Փրկչի մայրը, շրջապատված էին ակնածալի մեծարմամբ: Շուտով համայնքին միացան անգամ Հիսուսի այն հարազատները, որոնք նախկինում խուլս էին տալիս Նրանից: Դարձի եկավ նաև Հակոբը, Քրիստոսի խորթ (կամ զարմիկ) եղբայրներից ավագը՝ ջերմեռանդորեն բարեպաշտ մի մարդ[5]: Պահպանվել է հին ավանդություն, ըստ որի նա լրիվ պահքի ուխտ է արել մինչև Հարյալին սեփական աչքով տեսնելը: Եվ այդ ժամանակ Հիսուսը կանգնել է նրանց առաջ, օրհնել հացը և մեկնել այն Հակոբին՝ «Եղբա՛յր Իմ, կեր այս հացից, քանզի Մարդու Որդին վերակենդանացավ»:

Ավանդության մանրամասները հազիվ թե արժանահավատ լինեն[6]: Բայց շատ հնարավոր է, որ Երուսաղեմի Եկեղեցու ապագա հովիվը լսել էր հայտնությունների մասին և ցանկանում էր Թովմասի նման ինքն էլ հավաստիանալ դրանց իրական լինելու մեջ:

Ինչքան ժամանակ մնաց առաջին համայնքը Գալիլեայում: Ղուկասն ասում է քառասուն օրվա երևույթների մասին, որից հետո առաքյալները կրկին պատրաստվեցին Երուսաղեմ և մասնակցեցին Շավուոտի կամ Պենտեկոստեի տոնակատարությանը: Որոշ մեկնիչներ մտածում են, որ այդ ժամկետը սոսկ ինչ-որ նախապատրաստական շրջանի խորհրդանիշ է*: Նրանց կարծիքով , եկեղեցին մեկ ամսվա ընթացքում թվաքանակով չէր կարող հասնել մի քանի հարյուր մարդու, և, հետևապես, Ղուկասը նկատի ուներ 31 թվի Պենտեկոստեն: Չնայած այդ հարցը չի համարվում

* Հմմտ. Իսրայելի քառասուն տարի անապատում մնալը, Սինայի վրա Մովսեսի քառասնօրյա աղոթքը և Քրիստոսի քառասնօրյա պասը անապատում:



էական, ավանդական տարեթիվը թվում է առավել հավանական: Քարոզիչների ազդեցության ուժը՝ ներշնչված ի վերուստ, կարող էր շատ արագ առատ պտուղներ տալ: Ընդսմին, դժվար է ենթադրել, որ Տիրոջ կողմից ավետաբերության կոչված առաքյալները սկսեին հապաղել:

Սողոսի տեսիլքը Դամասկոսում նրան դարձրեց ոչ թե պարզապես Հիսուսի աշակերտ, այլև Նոր Հայտնության քարոզիչ[7]:Նույն բանը կատարվեց Տասնմեկի հետ:

Հավանաբար, մայիսի կեսերին հավատացյալները բարձրացան Գալիլեայի լեռներից մեկը, ուր նրանց պատվիրել էր գալ Հիսուսը: Այնտեղ նրանք տեսան Նրան գագաթին կանգնած: Հավաքվածները մոտ հինգ հարյուր մարդ էին: Բոլորը ծնկի իջան, չնայած ոմանք դեռ չէին կարողանում հավատալ, որ Նա իսկապես կենդանի է[8]: Եվ այդժամ բազմության առջև հնչեցին խոսքեր, որոնք ցարդ ունկնդրում են հարյուրամյակները. «Ինձ տրված է ամենայն իշխանություն երկնքում և երկրի վրա, ինչպես Հայրը Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացեք ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, մկրտեցեք նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի: Եվ ահա, Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը»:

Ավարտվեց Մարդու Որդու փրկչական ուղին, բայց Նրա ավետաբերների առջև, որոնց Նա ուղարկեց քարոզելու Ավետարանը բոլոր արարածներին, սպասվում էր երկար ճանապարհ:

Ութ դարերի ընթացքում, մինչև այդ մեծագույն օրերը, Իսրայելը՝ ճնշված բոլոր կողմերից հզոր թշնամիներով, լսում էր մարգարեություն, որին այն ժամանակ դժվար էր հավատալ:

«Վերջին օրերին պիտի հայտնվի Տիրոջ լեռը,
Աստծու տունը՝ լեռների գագաթներին,
պիտի բարձրանա բլուրների վրա,
և բոլոր հեթանոսները պիտի շարժվեն դեպի նա:
Գալու են բազում ժողովուրդներ...
Վասնզի օրենքները՝ Սիոնից են դուրս գալիս,
և Տիրոջ խոսքը՝ Երուսաղեմից[9]:

Այդ կանխասացությունը կատարվեց: Եկեղեցու հիմքը հարկավոր էր դնել մարգարեների քաղաքում, այնտեղ, որտեղ Փրկիչը Իրեն զոհաբերեց:



**ՀԱՄԲԱՐՁՈՒՄ**



Երուսաղեմ շարժվեցին մայիսի կեսերին: Տասնմեկին միացան նաև Յոթանասուն առաքյալներ: Բոլորը կանանց և մյուս աշակերտների հետ շուրջ հարյուր քսան մարդ էին[10]: Կողքից Քրիստոսի այդ առաջին զորքը դիտվում էր որպես Շավուոտի տոնակատարության գնացող ուխտավորների սովորական քարավան:

Քաղաք մտան արդեն առանց վախի, գիտենալով, որ Հարյալը չի լքի իրենց:

Երբ հավաքվեցին տանը, որտեղ նորերս կատարեցին Նոր Ուխտի Զատիկը, որտեղ ապրեցին կործանման սարսափը և վերածննդի բերկրանքը, Փրկիչը վերստին երևաց՝ օրհնելու եղբայրների հացկերույթը: Նա մեկ անգամ ևս նրանց բացատրեց մարգարեության խորհուրդը. «Այսպես պետք է չարչարվեր Քրիստոս, հարություն առներ մեռելներից երրորդ օրը, և քարոզվեր Նրա անունով ապաշխարություն և մեղքերի թողություն բոլոր ազգերի մեջ՝ Երուսաղեմից սկսած: Եվ այս բաների վկաներն եք դուք: Եվ ահա Ես ուղարկում եմ ձեզ Իմ Հոր խոստումը, իսկ դուք նստեցեք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից զորությամբ զգեստավորվեք»:

Այնուհետև Հիսուսը, ինչպես գրում է Սբ. Ղուկասը. «Նրանց տարավ հանեց մինչև Բեթանիա»: Ուրիշների համար անտեսանելի, գնաց Նա աշակերտների հետ, թե միայն պատվիրեց նրանց գնալ այն գյուղը, որը միշտ սիրում էր, մենք չգիտենք: Երբ բարձրացան Ձիթենյաց լեռը, շատերի մոտ, Նրան տեսնելով մի ակնթարթ արթնացան նախկին պատրանքները, նրանց թվաց, որ արդեն Փառքով եկել է Փրկչի համաշխարհային հայտնության օրը:

– Տե՛ր, այս ժամանակում է, որ վերահաստատելու ես Իսրայելի Արքայությունը:

– Ձեզ տրված չէ իմանալ այն ժամկետը և այն ժամանակները, որ Հայրը դրեց իր իշխանության մեջ: Այլ երբ Սուրբ Հոգին հասնի ձեր վրա, զորություն պիտի առնեք և Ինձ վկաներ պիտի լինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև երկրի ծայրերը:

Հարուցյալը բարձրացրեց ձեռքերը, օրհնելով Իր ավետաբերներին և աստիճանաբար «սկսեց հեռանալ նրանցից»:

Սակայն առաքյալները չտխրեցին: Արդեն ոչ թե երեք ընտրյալների, ինչպես Պայծառակերպության լեռան վրա, այլ բոլոր հավաքվածների վրա իջավ երկնքի լույսը՝ «Տիրոջ Փառքի ամպը»: Մահը հաղթողը համբարձավ և նստեց «Հոր աջ կողմը»[11]:

Հետայսու Նրա ներկայությունը սահման չի ունենալու: Նա ամենուր է. և՛ հոգու գաղտնարաններում, և՛ երկնի ու երկրի անհունում, և՛ աստեղային աշխարհների անսահմանության մեջ: Նա կապրի Եկեղեցում, Իր առաքյալներն մեջ, որոնց ասաց. «Ես ձեզ ուղարկում եմ...»:

Մարդը անցնում է երկրով: Կտրում անցնում է անապատներ, գետեր, ծովեր, լեռնաշղթաներ: Քաղցը և իշխելասիրությունը, ագահությունը և հետաքրքրասիրությունը տանում են նրան ավելի հեռու: Նա տանում է իր հետ թանկարժեք ապրանքներ և գրքերի կապոցներ, նա բերում է առրկացում և իմաստնություն, հայտնագործություններ և կործանում: Բայց ահա, այդ անհամար քարավաններին գումարվում են նոր ճամփորդներ: Նրանց շարժում է սերը և հավատը, Քրիստոսի կամքը և Աստծո Հոգին, նրանք բերում են ուրախալի լուր Մարդու Որդու մասին:

Եվ, քանի դեռ գոյություն ունի աշխարհը, առաքյալների ուղին կշարունակվի:



# ՎԵՐՋԱԲԱՆ

Անցան դարեր...

Կայսրություններ ծագեցին և խորտակվեցին, կործանվեցին քաղաքակրթություններ, երկրի դեմքը փոխեցին ռազմական, քաղաքական և սոցիալական հեղաշրջումները, սակայն Հիսուս Նազովրեցու հիմնած Եկեղեցին ժայռի նման վեր է խոյանում այդ մրրկածուփ ծովի մեջ:

Հավատը, որը առաջին օրերին դավանում էին ընդամենը մի քանի տասնյակ մարդ, առաջ է տանում այսօր հողագնդի տարբեր լեզուներով խոսող և մշակույթի անթիվ կերպեր ստեղծած միլիարդավոր մարդկանց:

Երբ ավետարանական քարոզը թարմաշունչ այուքի պես ներխուժեց զառամյալ անտիկ աշխարհ, նա հույս ներշնչեց բարոյալքվածներին և վհատվածներին, տոգորեց նրանց կյանքով ու եռանդով: Քրիստոնեությունը համակցեց Աթենքի իմաստությունը և Արևելքի սպասումները Հռոմի համընդհանուր «համերաշխության» երազանքին: Այն դատապարտեց կեղեքողներին, բարձրացրեց կնոջը, նպաստեց ստրկության արմատախիլ լինելուն:

Հետագայում Արևմուտքի երիտասարդ բարբարոսական երկրներում այն դարձավ հումանիզմի և լուսավորության հենարան, ստիպելով բիրտ ուժին ճանաչել հոգևորի և բարոյականի հեղինակությունը: Աստիճանաբար, քրիստոնեության «թթխմորը» Եվրոպայում և Նոր Աշխարհում վերածվեց հոլովույթի աղբյուրի, որը հայտնի չէր մարդկության գոյության ողջ հիսուն հազար տարիների ընթացքում:

Քրիստոնեությունը դեպի իրեն էր գրավում, թվում է, թե բացար-

ճակապես ոչ նման մարդկանց, Հռոմի ստրուկներից մինչև Դանթե, Դոստոևսկուց մինչև Աֆրիկայի հովիվները: Այն գոտեպնդում էր Կոլիզեում նահատակներին և զորացնում XX դարում իրեն դավանողներին:

Յուրաքանչյուր դարաշրջանում Նոր Կտակարանը իր մեջ ի հայտ է բերում ստեղծագործության մղող անհատնում ազդակներ: Եթե Հիսուսի առաջին աշակերտները հասարակ գալիլեացիներ էին, ապա հետագայում Նրա խաչի առաջ խոնարհվեցին բոլոր ժողովուրդների մեծագույն գլուխները: Նրա հայտնությունը լուսավորել է Ավգուստինոսի և Պասկալի միտքը, սերը Իր հանդեպ վեր է բարձրացրել ձեռակերտ տաճարների ուղղաբերձ ապառաժներ, ներշնչել է բանաստեղծներին և քանդակագործներին, կյանքի է կոչել համանվագների և բազմաձայն օրհներգերի հզոր հնչյունները: Աստվածորդու կերպարը ցայտունորեն պատկերել են Անդրեյ Ռուբլյովը, Միքելանջելոն, Ռեմբրանդտը: Երրորդ հազարամյակի շեմին Ավետարանը, որը պատմում է Քրիստոսի մասին, թարգմանված է մեկ ու կես հազար լեզուներով և տարածված է աշխարհով մեկ, չզիջելով մարդկային հանճարի փառաբանված ստեղծագործություններին:

Անգամ այն դեպքում, երբ շատ քրիստոնյաներ մոռացել են, թե «իրենք ինչ հոգուց են», իսկ Փրկչի Ուխտի նրանց ուրացումները գինել են բազում թշնամիների Եկեղեցու դեմ, Ավետարանը «աննկատելի կերպով» շարունակել է ազդել մարդկանց վրա: Արդարության, եղբայրության, ազատության, անձնուրաց ծառայության իդեալները, բարու վերջնական հաղթանակի հանդեպ հավատը և մարդկային անհատականության արժեքը, մի խոսքով, ամենը, ինչը դիմակայում է բռնությանը, կեղծիքին և հարկադրանքին, անմահական ջուր է վերցնում, թեկուզև անգիտակցորեն, ավետարանական աղբյուրից:

Ամպրոպներ և փոթորիկներ են անցել Եկեղեցու վրայով, ներքին և արտաքին վտանգները դարանել են այն: Առաջնորդների իշխանատենչությունը, ամբոխի անհաղթահարելի հեթանոսությունը, աշխարհիկ և ճգնակյաց գայթակղությունները, բացահայտ հակառակորդների հարձակումները և քրիստոնյաների մեղքերը, խոշտանգումները և ջարդերը, թվում է՝ երբեմն դրել են հարվածի տակ Իր՝ Եկեղեցու գոյությունը: Բայց այն դիմացել է բոլոր պատմական ճակատամարտերին և ճգնաժամերին:

Նրա անհաղթահարելիության գաղտնիքը գտնվում է Մարդու Որդու մեջ, Որը, առաքյալի խոսքերով, «երեկ, այսօր և հավիտենապես



Նույնն է» Իրեն հավատարիմների վրա իջած Հոգու շնորհների մեջ:

Մարդու չլուսավորված գիտակցությունը փնտրում է արտաքին մեծություններ, խոնարհվում է տեսանելի ուժի առաջ, բայց այդ չէ, որ նրան տալիս է Ավետարանը: «Մենք քարոզում ենք խաչյալ Քրիստոսին, ի գայթակղություն հրեաների և ի հիմարություն հեթանոսների»: «Այս դարի» աչքին ստորացված և նվաստացած Աստված հայտնվում է աշխարհին և փրկում է այն:

Հիսուս Քրիստոս ունեցող ցանկացած հոգի այսուհետև գիտի, որ մարդը միայնակ աստանդական չէ, որի համար սև տիեզերական անապատում չկա մեկը, որին արձագանքեր, իսկ Աստծո որդիները մասնակից են աստվածային ծրագրերին: Մարմնավորվելով երկրում, Նա մարդկանց ցույց տվեց իրենց բարձրագույն կոչվածությունը, լուսավորեց և ոգևորեց մարդկանց էությունը, ցանելով նրանում անմահության սերմեր: Հանձինս Նրա, սրբազան և անհասանելի Արարիչը մերձեցավ մեզ, և դա լցնում է կյանքը բերկրանքով, գեղեցկությամբ և խորհրդով: Այլևս չկա «անհունի սահմռկեցուցիչ լռությունը», բոլորի վրա Քրիստոսի լույսն է և Երկնային Հոր սերը......

Ահա թե ինչու, ամեն անգամ, երբ քրիստոնեությունը արդեն համարում էին թաղված, այն որպես Խաչյալ և Հարություն առյալ, դուրս է եկել գերեզմանից, ներկայացնելով ուխտի անխախտելիությունը: «Դու Վեմ ես և այդ Վեմի վրա պիտի կառուցեմ Իմ Եկեղեցին, ու դժոխքի դռները չպիտի կարողանան հաղթահարել այն»:

Ոչ ուսմունքները և ոչ տեսությունները, այլ Քրիստոսն Ինքն է հավերժ նորացնում քրիստոնեությունը և տանում այն հավիտենություն:

Հրեաստանի զատկական առավոտից անցած հարյուրամյակները ավելին չեն, քան Եկեղեցու աստվածմարդեղության լիակատարության նախաբան, սկիզբ այն ամենի, ինչը խոստացվել է նրան Հիսուսի կողմից: Նոր կյանքը տվել է միայն առաջին, երբեմն դեռևս թույլ ընձյուղները: Բարի Ավետումի կրոնը ապագայի կրոնն է: Սակայն Աստծո Թագավորությունը արդեն գո է, աշխարհի գեղեցկության մեջ և այնտեղ, որտեղ մարդկանց միջև հաղթում է բարին, և Տիրոջ ճշմարիտ աշակերտների մեջ, և սրբերի ու ճգնակյացների մեջ, նրանց մեջ, ովքեր ցանկանում են գնալ Նրա հետևից, ովքեր չեն լքել Քրիստոսին Իր Եկեղեցու դժվարին փորձությունների պահին:

Տուր մեզ, աստվածային Վարդապետ, քո հանդեպ ունեցած նրանց հավատի հզորությունը, նրանց հույսերի անսասանությունը և նրանց

սիրո կրակը: Երբ մոլորվենք կյանքի ճանապարհին, կանգ առնենք՝ չիմանալով ուր գնալ, մեզ ևս տուր խավարում տեսնել Քո դեմքը: Տեխնիկական դարաշրջանի հևքի և աղմուկի մեջ, այսչափ հզոր և միաժամանակ այսչափ թշվառ և անուժ, սովորեցրու մեզ ունկնդրել հավերժության լռությունը և տուր նրանում լսելու Քո ձայնը, Քո «Ես ձեզ հետ եմ բոլոր օրերին մինչև աշխարհի վախճանը» արիություն ներշնչող բառերը:



# ՀԱՎԵԼՎԱԾ

## 1. ԱՌԱՍՊԵԼ, ԹԵ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գոյություն ունեցել է Հիսուս Քրիստոսը որպես պատմական անձնավորություն:

Մեր օրերում այդ հարցն ինքնին շատերին կարող է տարօրինակ թվալ: Այնուամենայնիվ, դրա քննարկման կարիքը կա, քանի որ աթեիստական քարոզչությունը շարունակում է պաշտպանել քրիստոնեության ծագման, այսպես կոչված՝ առասպելաբանական տեսությունը: Տասնյակ տարիներ մեզանում միայն այդ է թույլատրվել ինչպես գիտական աշխատությունների, այնպես էլ հանրամատչելի գրականության մեջ և, ցավոք սրտի, մինչև օրս հարյուր հազար սովորողներ առաջինը, ինչը իմանում են Քրիստոսի մասին, այն է, որ Նա իբր «երբեք գոյություն չի ունեցել»:

Առասպելաբանական տեսությանը աթեիզմը կառչում է ոչ պատահականորեն: Չէ որ այն հարվածի տակ է դնում քրիստոնեության գոյությունն իսկ:

Անշուշտ, եթե խոսքը գնար ինչ-որ բնագիտական վարկածի շուրջ, խնդիրն այդքան սուր չէր դրվի: Գիտնականները միշտ էլ առաջադրել են մեկը մյուսին հաջորդող նոր տեսություններ, և միայն գիտական ճանաչողության և հավատի սահմանների չիմացությունն է անցյալում առաջ բերել բախումներ գիտության և կրոնի աղջև: Իրականում Տիեզերքը կարող է ստեղծված և կառուցված լինել ցանկացած եղանակով, և, թե որն է ընդունվում ավելի հավանական, կրոնի էությունը դրանից

չի փոխվում: Սակայն հարցը բոլորովին այլ բնույթ է ստանում Եկեղեցու ծագման առնչությամբ: Այս դեպքում քրիստոնյան գիտության եզրահանգումների նկատմամբ արդեն այնքան էլ անտարբեր չէ, որքան տիեզերաբանական տեսությունների հանդեպ, քանի որ Ավետարանները անբաժանելի են Հիսուս Քրիստոսի անձից:

Թող, օրինակ, ապացուցվի, որ Պլատոնը առասպել է, իսկ իր գրքերը գրվել են ուրիշ մեկի կողմից, դա վնաս չի պատճառում պլատոնիզմին որպես ուսմունքի: Բայց երբ գիտության անունից ասում են, որ Հիսուս Նազովրեցին մտացածին կերպար է, ապա դրանով իսկ ձգտում են խորտակել Եկեղեցու ողջ շենքը:

Նշանակում է՝ մեր առջև է քրիստոնեության դեմ տարվող գրոհներից առավել ծանրակշիռը, որն անց է կացվում պատմական գիտելիքի դրոշի տակ:

Բայց հենց այն պատճառով, որ հարցը վերաբերում է կոնկրետ փաստերի, այն հարկ է քննել, մնալով միայն գիտության հիմքի վրա: Կարելի է հավատալ կամ չհավատալ, որ Աստված հայտնվել է աշխարհին Քրիստոսի մեջ, այստեղ հնագիտությունը և գրավոր հիշատակարանները ոչինչ չեն որոշում: Հիսուս Քրիստոսի պատմական ռեալությունը առարկա է՝ միանգամայն մատչելի գիտական հետազոտության:

Ներկայացվող հետազոտության մեջ շարադրվել են միֆոլոգիզմի՝ առասպելականացման տեսության* հիմնական փաստարկները և ստուգության ենթարկվել նրանց հիմնավորվածությունը: Հեղինակն իր նպատակը չի համարել խնդիրը լուսավորել իր բոլոր մանրամասներով, սակայն ձգտել է հնարավորության չափով բաց չթողնել նրա գլխավոր կողմերից ոչ մեկը:

## ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Առասպելաբանական տեսությունը իր ծագումով պարտական է ամենևին էլ ոչ պրոֆեսիոնալ պատմաբաններին: Առաջինը այն առաջ են քաշել XVIII դարի հրապարակախոսները, կատաղի պայքար տանելով քրիստոնեության դեմ: Նախապես նրանք Հիսուսին փորձում էին պատկերել որպես սովորական, շարքային մարդու, բայց հետո սկսեցին նկատել, որ նույնիսկ պսակազերծված և որպես բարոյաբանության հա-

* Համառոտության համար այսպես կկոչենք Հիսուս Քրիստոսի առասպելականության վարկածը:



սարակ ուսուցչի հասցված Քրիստոսի կերպարը պահպանում է գրավչությունը: Եվ այդ ժամանակ գտան Նրա դեմ պայքարելու նոր միջոցներ. հայտարարվեց, որ Հիսուս Քրիստոս երբեք գոյություն չի ունեցել:

«Առասպելաբանական տեսության հայր» կարելի է համարել ֆրանսիական հեղափոխության գործիչ, աստղագետ և փաստաբան Շարլ Դյուպյուին (1742-1807): Դյուպյուին առարկություն չվերցնող աթեիստ չէր, բայց խոր ատելություն էր տածում քրիստոնեության նկատմամբ և, որպես Կոնվենտի անդամ, ակտիվ մասնակցություն հանդես բերեց Եկեղեցու դեմ տարվող հալածանքներում: Իր «Բոլոր պաշտամունքների ծագումը» գրքում Դյուպյուին հաստատում էր, որ Քրիստոսը արևային աստվածություն է, իսկ Նրա կյանքի բոլոր եղելությունները պետք է հասկանալ աստեղային ալեգորիաներ[1]:

Մոտավորապես այդ նույն ժամանակներում լույս տեսավ բժիշկ Կոնստանտին Ֆ. Վոլնեյի (1757-1820) «Ավերակներ»-ը, որում արտահայտվում էին համանման հայացքներ: Ընդունելով անգամ, որ կարող է Հիսուսը գոյություն ունեցած լինել, Վոլնեյը հերքում է նրա մասին եղած բոլոր վկայությունների հավաստիությունը, համարելով դրանք Նիկիո տիեզերաժողովի[2] դարաշրջանի մոգոնված կեղծիքներ: Պետք է ասել, որ XVIII դարում պատմագրությունը դեռևս շատ չէր հեռացել առասպելականացման տեսության Հերոդոտի մեթոդներից և, այդ պատճառով էլ, հեշտ էր առաջադրել ամենաանհող վարկածները: Երբ հակաքրիստոնեական պայքարի ալիքը սկսեց մարել, Վոլնեյը և Դյուպյուին մոռացվեցին:

XIX դարի կեսերին առասպելականացման տեսությունը վերածնելու փորձեր արեց գերմանացի փիլիսոփա, հեգելական Բրունո Բաուերը (1809-1882): Վիճարկելով Հիսուսի պատմականությունը, նա հաստատում էր, որ քրիստոնեությունը ծագել էր բնավ էլ ոչ Հրեաստանում, այլ Հռոմում կամ Ալեքսանդրիայում: Անգամ Ֆ. Էնգելսը, որի քրիստոնեության հանդեպ ունեցած հակակրանքը հնարավոր չէ կասկածի ենթարկել, ընդունեց, որ Բաուերը «չափն անցել է»: «Բաուերին,- գրում է նա,- պետք է եղել նոր կրոնի ծագումը տանել կես հարյուրամյակ ետ, դեն գցել դրան չհամապատասխանող հռոմեացի պատմաբանների հաղորդումները և, առհասարակ, շատ ազատ զգալ պատմությունը շարադրելիս: Այդ պատճառով Բաուերի մոտ և՛ անհետանում է ցանկացած պատմական հիմք Հիսուսի ու Նրա աշակերտների մասին նորկտակարանյան պատմագրույցների համար, և՛ այդ գրույցնե-

րը վերածվում են լեգենդների»[3]:

Բառերի մտահղացումը հաջողություն չունեցավ, բայց XIX և XX դարերի սահմանագծում, երբ համադրական մեթոդը կրոնի ուսումնասիրության մեջ դարձավ տարածված, առասպելականացման տեսությունը, կարծես թե, ձեռք բերեց «երկրորդ շնչառություն»: Այնուամենայնիվ, կրկին նրա ներկայացուցիչները պատմաբաններ չէին. Ջոն Ռոբերտսոնը տնտեսագետ էր և գրականագետ, Ուիլյամ Սմիթը՝ մաթեմատիկոս, Անդրեյ Նեմոևսկին՝ լրագրող, Գեորգ Բրանդեսը՝ գրաքննադատ, Էդուարդ Դյուժարդենը՝ բանաստեղծ, խորհրդապաշտների փարիզյան օրգանի խմբագիր, Պոլ Կուշուն՝ բժիշկ[4]: Եվ, վերջապես, առասպելի տեսության ամենաակտիվ քարոզող Արթուր Դրևսը (1865-1963) նույնպես պատմության բնագավառի մասնագետ չէր, այլ փիլիսոփայություն էր դասավանդում Կարլսրուեում: Նա Նիցշեի և Հարթմանի պեսիմիստական ուսմունքի երկրպագու էր և կյանքի վերջին տարիներին մոտեցավ ֆաշիզմի գաղափարախոսությանը[5]: Դրևսի գլխավոր «Կրոնը որպես Աստծո ինքնագիտակցում» (1906) աշխատանքը նվիրված է համաստվածական «ապագա կրոնին»:

1910 թ. փիլիսոփան շրջագայություն ձեռնարկեց Գերմանիայում, դասախոսություններ կարդալով, որոնց նպատակն էր համոզել լսողների լայն զանգվածներին Քրիստոսի առասպելականությունը: Միաժամանակ, Դրևսը առաքյալին բնորոշ խանդավառությամբ ազդարարեց ավանդական քրիստոնեության մոտալուտ կործանումը[6]:

Հիսուսի պատմականության դեմ եղած բոլոր փաստարկները փիլիսոփան համրագումարի էր բերել «Առասպել Քրիստոսի մասին» գրքում, բայց դրա հետ մեկտեղ բացահայտ հայտարարեց, որ այդ անում է գլխավորապես նոր համաստվածական կրոնի ամրացման շահերից ելնելով: Այդ ուսմունքի էությունը այն է, որ Աստված՝ որպես Տիեզերքի Հոգի, փնտրում է ի դեմս մարդու, տառապանքի և անկատարության շրջանից դուրս գալու ելք: «Կրոնի ուղղակի նպատակը,- գրել է Դրևսը,- մարդու ազատագրումն է աշխարհի ենթարկվածությունից, ինչպես նաև ժամանակավոր կեցության կախվածությունից և պայմանականությունից: Հետևապես, որևէ պատմական փաստ, Հիսուս մարդու կյանքի և մահվան նման, ոչ մի այլ իմաստով չի կարող բարձրանալ հավատի հիմնական խորհրդանիշի աստիճանի... Ապագայի կրոնը կամ կլինի հավատ մարդկային էության աստվածային բնույթի վերաբերյալ կամ էլ այն ընդհանրապես չի լինի: Բայց եթե այլ փրկություն չկա մարդուն, բացի ինքն իր միջոցով փրկվելուց, իր էության հոգևոր



աստվածային հատկության շնորհիվ, ապա դրա համար պետք չի ոչ մի Քրիստոս... Հավատը Հիսուսի պատմական իրականության հանդեպ հանդիսանում է կրոնական առաջընթացի հիմնական խոչընդոտը»:

Որպեսզի ավելի շատ կողմնակիցներ նվաճի, Դրևսը հավատացնում էր, որ ցանկանում է քրիստոնեության մեջ «փրկել» ամենաարժեքավորը՝ նրա միջուկը, գտնելով, որ «Քրիստոսի խորհրդանիշը» կունենա որոշակի նշանակություն նաև այն բանից հետո, երբ քրիստոնեությունը վերջնականապես կմիաձուլվի համաստվածության հետ: Դրևսի հետևորդ Պ.Կուշուն նույնիսկ տալիս է այդ իրադարձության թվականը, այն է՝ 1940......

Միևնույն ժամանակ, Արևմուտքում Նոր Կտակարանի հետևողներ Ադոլֆ Յուլիխերը, Յոհան Վայսը, Գերման ֆոն Զոդեն և ուրիշներ, իսկ Ռուսաստանում պրոֆեսորներ Դ. Խվոլսոնը, Ս. Բուլգակովը և Ս. Զարինը առասպելականացման տեսությունը ենթարկեցին ոչնչացնող քննադատության[8]: Դրևսին չպաշտպանեց XX դարի և ոչ մի նշանավոր պատմաբան:

Փիլիսոփան հուսահատորեն պաշտպանվում էր: Նա մի ամբողջ շարք պարսավագրեր հրապարակեց, բայց ի վերջո ստիպված եղավ դառնալ իր տեսության համարյա լիովին ջախջախման վկան: Նրանց միակ «արդելանոցը» երկար ժամանակ մնացին մեր աթեիստական քարոզչության էջերը, որոնց ներկայացուցիչները, սեփական խոստովանությամբ, «դաշն կնքեցին» իդեալիստ Դրևսի հետ:

Հատկանշական է, որ միայն առաջին 15 հետհոկտեմբերյան տարիներին զանգվածային տպաքանակով լույս տեսավ ավելի քան հարյուր աշխատանք՝ (չհաշված թերթային հրապարակումները) ուղղված Քրիստոսի պատմականության դեմ: Ինչ վերաբերում է Արևմուտքին, ապա պետք է արժանին մատուցել խորհրդային հակակրոնական հեղինակներին. նրանք չեն թաքցնում այն փաստը, որ արտասահմանյան, այդ թվում՝ նաև մարքսիստական գրականության մեջ, առասպելաբանական տեսությունը այժմ ամբողջությամբ մի կողմ է թողնված[9]:

Դրևսի շարունակողները նրա համեմատությամբ ոչ մի նոր բան չառաջադրեցին: Նրանց գրքերը, գրքույկները, դասախոսությունները ապշեցնում են փաստարկումների զարմանալի միօրինակությամբ, որոնք մշտապես արտագրում են նրանք մեկը մյուսից:

Ռումյանցևը, Ռանովիչը, Վիպպերը, Կովալյովը, Լենցմանը, Կրիվելևը հիմնականում շարադրում են նույն Դրևսին, լոկ փոփոխակելով և շրջելով նրան, որպեսզի հարմարեցնեն պատմական մատերիալիզ-

մին[10]: Նրանց դրույթները ամբողջությամբ տեղավորվում են հետևյալ հինգ կետերի մեջ.

1. Քրիստոսի կերպարը ստեղծվել է աստիճանաբար, Իեշու (Իիսուս) աստծու մարդեղացման ճանապարհով:

2. Քրիստոսի մասին առասպելը անտիկ և արևելյան առասպելների տարբերակ է, ինչպես նաև մինչքրիստոնեական լեգենդների արձագանք:

3. Հիսուսի մասին չեն հիշատակում Նրա ժամանակակից ոչ քրիստոնեական հեղինակները:

4. Ավետարանները պարունակում են հակասություններ և սխալներ, այդ պատճառով էլ դրանք չի կարելի համարել արժանահավատ:

5. Ավետարանները ծնվել են մոտ մեկ ու կես դար ուշ իրենց մեջ նկարագրված իրադարձություններից, և այդ պատճառով էլ դրանք չեն կարող պատմական աղբյուրներ համարվել:

Այսպես է ներկայանում այս զինանոցը, որի օգնությամբ ուզում են ցույց տալ, որ քրիստոնեության հիմնադիրը առասպել է: Դիտարկենք հիմա, թե ինչքանով են հիմնավորված այդ փաստարկումները:

## ՊԱՇՏՎԵԼ Է, ԱՐԴՅՈՔ, ԵՐԲԵՎԷ «ՀԻՍՈՒՍ ԱՍՏՎԱԾ»

Եթե Հիսուս Քրիստոսը գոյություն չի ունեցել, ում են այդ ժամանակ հավատացել և հավատում քրիստոնյաները: Դրան առասպելաբանները ունեն հստակ պատասխան: Ավետարաններում նկարագրված կերպարի հետևում կանգնած է արևելյան արխայիկ Իեշուա կամ Հիսուս աստվածը: «Մարդացրել են» նրան միայն II դարում, ինչի մասին է վկայում Նոր Կտակարանի գրականությունը: Նրա առավել վաղ ստեղծագործության՝ Հովհաննու Հայտնության մեջ մենք գտնում ենք երկրային գծերից զուրկ, սոսկ միստիկական Քրիստոսին: I դարի վերջում և II դարի սկզբում ստեղծված Պողոս առաքյալի Թղթերում ի հայտ են գալիս Նրա երկրային կենսագրության տվյալներ, և, վերջապես, II դարի կեսերում գրված ավետարանները նկարագրում են Քրիստոսի կյանքը և ուսմունքը կեղծ պատմական միջավայրի շրջանակներում[11]: Հովհաննու Հայտնությունը արտացոլում է առաջին փուլը, երբ քրիստոնեությունը դեռ չէր կտրվելիր հրեական արմատներից, Թղթերը՝ հուդայականության հետ խզումի հուշարձանն են, իսկ Ավետարաններում՝ արդեն «վերջնական» քրիստոնեությունն է իր «պատմական» Քրիստոսով:



Առաջին հայացքից նման կառուցվածքը զուրկ չէ համոզչականությունից: Հարց է ծագում սակայն՝ ինչ հիմքի վրա է որոշվում նորկտակարանյան գրքերի այդ թվագրությունը: Մեզ պատասխանում են, որ հենց վերոհիշյալ հատկանիշների հիման, այսինքն՝ Հիսուս Աստծո «մարդեղացման» տարբեր աստիճանների վրա: Բայց այդ դեպքում մենք գործ ենք ունենում արատավոր շրջանի հետ. առասպելաբանները ցանկանում են ապացուցել թվագրության վրա կառուցված վարկած, որն էլ իր հերթին հենվում է հենց այդ վարկածի վրա:

Իրականում Հովհաննու Հայտնությունը, Թղթերը և Ավետարանները արտացոլում են ոչ այնքան քրիստոնեության զարգացման փուլերը, որքան տարբերությունը քարոզի ժանրերում, հեղինակների նպատակների և խնդիրների տարբերությունը և այս կամ այն եկեղեցական համայնքի առանձնահատկությունները: Մենք վերադառնանք Նոր Կտակարանի գրքերի ժամանակագրության հարցին, բայց առայժմ նշենք, որ առասպելաբանների թվագրությունը հիմա արդեն վաղուց հերքվել է գիտության կողմից: Ամենավաղը ընդունվում են Թղթերը, որոնցից մեծ մասը գրվել է 50-ական և 60-ական թվականների միջև ընկած ժամանակամիջոցում, իսկ Հովհաննու Հայտնությունը Նոր Կտակարանի գրության ամենաուշ շրջանի ստեղծագործություններից մեկն է: Վերջնական տեսքով այն գրվել է Դոմիցիանոսի ժամանակներում՝ մոտ 90 թվականին: Նրա սերտ կապը հուդայական ապոկալիպսիսների հետ նշանակում է միայն, որ գրքերի հեղինակը մտածել է այդ վախճանաբանական գրականության պատկերներով[12]:

Բայց կարող է առասպելաբաններն ունեն ուրիշ փաստարկներ, քան գրքերի իրենց կողմից առաջադրված ամբողջովին վիճելի ժամանակագրությունը: Այդ փաստարկները կան: Ահա թե ինչպես է բանաձևել դրանք խորհրդային նշանավոր բյուզանդագետ Ա.Կաժդանը. «Շատ հարյուրամյակների ընթացքում, մինչև Տիբերիոս կայսեր կառավարումը, շատ հարյուրամյակների ընթացքում մինչև Հռոմեական կայսրության կազմավորումը, և կարող է պատահել, նույնիսկ ավելի վաղ, քան Տիբերին մոտիկ յոթ բլուրների վրա ծնվեց Հռոմ քաղաքը, հին հրեաների մոտ արդեն գոյություն ուներ Հիսուսի պաշտամունք, ձկան որդու պաշտամունք՝ քմահաճ տարօրինակությամբ միացած մյուս հնագույն պաշտամունքին՝ գառան պաշտամունքին»[13]:

Եթե այդ պաշտամունքը, իրոք, հայտնի է կրոնի պատմության մեջ, առասպելականացման տեսությունը ստանում է ծանրակշիռ զորավիգ

ուժ: Բայց ինչ տվյալներ են խոսում այն բանի օգտին, որ Հնադույն Պաղեստինում երբևէ պաշտել են «Հիսուս աստծուն»:

Դրևսը հաստատում է, որ իբր նրա պաշտամունքի հետքերը պահպանվել են Հեսու Նավեի մասին աստվածաշնչյան ավանդության մեջ[14]: Այնինչ, այդ ավանդությունը խոսում է ամենևին էլ ոչ աստծու, այլ Իսրայելի անդրհորդանանյան սերունդներից մեկի ցեղային առաջնորդի մասին: Մ. թ. ա. մոտ 1200-ին նա նրանց տարավ դեպի արևմուտք և նվաճեց մի շարք քանանական քաղաքներ: Աստվածաշունչը պատկերում է նրան ոչ որպես գերբնական էակ, այլ, ըստ ամենայնի, երկրային մարդ, զորապետ և ռազմավար, որի կյանքն անցել է անդուլ մարտերում[15]:

Պեղումներն այն տեղում, որտեղ Հեսու Նավեն թշնամիների հետ վարել է արյունահեղ մարտեր, հաստատում են Հին Կտակարանի ավանդությունը: Հրդեհների և ճակատամարտերի հետքեր են բացվում հնագետների տեսադաշտում, երբ նրանք ուսումնասիրում են մ. թ. ա. XIII դարի քանանական ամրոցի մնացորդները: Ըստ որում, ոչ միայն չգտնվեց Հիսուս աստծու կրոնական պաշտամունքի տվյալներ, այլև պարզ դարձավ, որ իսրայելացի զինվորներն իրենք են կործանել աստվածների տաճարները և ոչնչացրել կուռքերին[16]:

Ճիշտ է, Հիսուս, Իոուշա անունը կամ արամեերեն Իեշուա (կրճատ՝ Իեշու), նշանակում է «գոյի փրկությունը», բայց դրանից ամենևին էլ չի հետևում, որ աստվածաշնչյան զորապետին դիտում էին որպես «Փրկչի»: Եթե անգամ փնտրենք այդպիսի մեկին Հին Կտակարանում, ապա ավելի շուտ կարելի է Մովսեսին կոչել այդպես, որն ազատագրեց իր ժողովրդին Եգիպտոսի ստրկությունից: Ի դեպ, Հիսուս անունը հնում խիստ տարածված էր: Այն կրում էին առաջնորդները, քահանայապետերը, դպիրները և շատ մասնավոր անձինք[17]:

Երրորդ փաստարկը «Հիսուս Աստծու» վարկածի օգտին առասպելաբանները համարում են այն փաստը, որ հիվանդների վրա ասվող աղոթքներում առաջին քրիստոնյաները հաճախ Հիսուս անունն էին տալիս[18]: Բայց դա ցույց է տալիս ոչ թե կարծեցյալ պաղեստինյան աստվածությունը, այլ պատմական Հիսուսին, Որը պատվիրել էր աշակերտներին հիվանդություններ բուժել[19]:

Առավել անիմաստ է Զաքարիա մարգարեի գրքի տեքստի վրա ուշադրություն հրավիրելը, ինչպես դա անում է Դրևսը: Այնտեղ հիշատակված Իոշուան բոլորովին էլ աստվածություն չի, այլ Զաքարիայի ժամանակների (մ. թ. ա. 520 թ.) քահանայապետ: Մարգարեն ասում է



այն մասին, որ Աստված այդ հոգևոր հովվի մեղքերին թողություն է շնորհում և պատվիրում է հետայսու չխախտել Իր պատվիրանները[20]:

Ռ. Վիպպերը աղոթք է վկայակոչում «Դիդախեից» կամ «Տասներկու առաքյալների վարդապետությունից»՝ մոտ 100 թվականին գրված այդ հուշարձանից, կարծելով, որ այնտեղ «Հիսուս Աստծու» մասին է ասված[21]: Ահա այդ աղոթքը՝

Փառաբանում ենք Քեզ, Հայր մեր, վասն
Դավթի՝ Քո ծառայի, սուրբ խաղողի որթի
Որին Դու մեզ ճանաչել տվիր Հիսուսով՝
Քո Ծառայով: Փառք Քեզ հավիտյանս:

Դիդախե IX

Ակներև է, որ այդ աղոթքը ճիշտ առ ճիշտ ապացուցում է հակառակը այն բանի, ինչը ցանկանում էին ապացուցել առասպելաբանները: Քրիստոսը այդտեղ Դավիթ թագավորի հետ հավասարապես անվանված է «Ստրուկ» կամ Տիրոջ «Ծառա» և, հետևապես, Նրան պաշտել են ոչ միայն որպես Աստծու, այլ նաև որպես մարդ, ինչպես Դավթին:

Հիսուսի ռեալ, երկրային անձ լինելու իրողության դեմ որպես փաստարկ վկայակոչում են նաև վաղքրիստոնեության արվեստի տվյալները: «Հնագիտությունը,- գրում է առասպելաբաններից մեկը,- չի գտել Հիսուսի ոչ մի իրական պատկեր... Դա, անկասկած, խոսում է այն մասին, որ նախատիպ չի եղել, գոյություն չի ունեցել այն որոշակի պատմական անհատական անձնավորությունը, որին քրիստոնեական գեղանկարիչները և հավատացյալները կարողանային առաջին հերթին, որպես իրենց աղանդի հիմնադրի և գլխավորի, արտաքնապես պատկերել իրենց կրոնական ժողովատեղերի պատերին»[22]:

Ճշմարիտ է արդյոք, I դարի թվագիրը կրող Քրիստոսի պատկերների բացակայությունից արված այդ եզրակացությունը:

Մենք չունենք հնադարի շատ նշանավոր մարդկանց վավերական դիմանկարները: Հայտնի չէ, թե, օրինակ, ինչ տեսք ունեին Պլինիոսը, Տակիտոսը, Սվետոնիոսը և I-II դարերի մի շարք այլ պատմական գործիչներ:

Հարկավոր է ուշադրության առնել և այն փաստը, որ քրիստոնեությունը նախապես տարածվել էր հրեական միջավայրում, որտեղ, որպես կանոն, արգելված էին ցանկացած այլ պատկերներ, բացի զարդաբարականներից և այլաբանականներից[23]: Հատկանշական է՝ Հասմոնեականները և իրեն փրկիչ հայտարարած ապստամբած հրեաների առաջ-

նորդ Բար-Կոխբան դրամների վրա դրոշմել էին ոչ թե իրենց դիմանկարները, ինչպես անում էին հռոմեացիները և հույները, այլ շուշան, տավիղ կամ խաղողի վազ:

Առաջին դարի քրիստոնեական կատակոմբներում նույնպես գերազանցապես մենք գտնում ենք Քրիստոսի խորհրդանշական պատկերներ: Դա կամ հովիվ է՝ ոչխարը ուսին կամ խաղողի ողկույզ կամ գառ:

Հովվին առասպելաբանները, սովորաբար, զուգադրում են Հերմեսի արձաններին, իսկ «գառնուկ» բառը Դրևսը հաջողացրեց կապել «Ագնի» բառի հետ և այդ հիմքի վրա դուրս բերել «Հիսուս աստծու» պաշտամունքը կրակի հեթանոսական երկրպագությունից[24]: Մինչդեռ ակներև է, որ կատակոմբյան սիմվոլիկան ծագել է Նոր Կտակարանի գրքերից ավելի ուշ և ինքն է հիմնվում նրանց վրա: Այսպես, Գառնուկի կերպարը ներկայացնում է Քրիստոսի մասին ուսմունքը որպես Աստծո Գառան, խաղողի որթատունկը Քրիստոսի խոսքերն են Հովհաննեսի Ավետարանից, իսկ հովիվը ոչխարների հետ հիշեցնում է այն առակները, որտեղ Քրիստոսը համեմատում է Իրեն «բարի հովվի» հետ[25]: Բարի Հովվի արձանի նմանությունը Հերմեսի արձանների հետ բացատրվում է ամենևին էլ ոչ այն բանով, որ քրիստոնեությունը ծագել է այդ անտիկ աստվածության պաշտամունքից: Առաջին, շատ ժողովուրդների մոտ հովիվները հենց նման եղանակով էին գառները դնում ուսներին, և, երկրորդ, մեր առջև ավելին չէ, քան քրիստոնեական նկարիչների կողմից փոխառություն հին վարպետներից: Ոչ մեկը երբևէ չի ժխտել, որ վաղ եկեղեցական արվեստը աճել է անտիկ հիմքի վրա: Բայց կարելի է դրանից բխեցնել կրոնի փոխառություն: Դա նման կլիներ փորձ անել, օրինակ՝ Լյուդովիկոս XIV-ին կամ Սուվորովին վերագրել անտիկ դիցաբանությանը սոսկ այն բանի հիման վրա, որ նրանց հաճախ պատկերել են հունական և հռոմեական ասպազենքի վրա:

Երբ են ծագել Քրիստոսի առաջին «դիմանկարային», ոչ խորհրդանշանային պատկերումները: Հազիվ թե հնարավոր լինի դա պարզել: Չէ որ հալածանքների ժամանակ քրիստոնեական աղոթատները բազմիցս ենթարկվել են ավերածության, այդ պատճառով էլ շատ որմնանկարներ և արձաններ պարզապես մեզ չեն հասել: Հայտնի է միայն, որ Քրիստոսի այն պատկերը, որը պատկերագրության մեջ համրայնորեն ընդունված է* երևան է եկել III- IV դարերում կամ մի քիչ ավելի վաղ[26]: Բայց եթե նույնիսկ հնագետները չհայտնագործեն էլ նման տիպի առավել հին պատկերումներ, դա ոչ մի կերպ չի կարող ծառայել ապացույց «Հիսուս Աստծու» պաշտամունքի գոյության:

* Ենթադրություն է արված, որ այդ պատկերը ունեցել է որպես նախատիպ Թուրինյան պատանի դեմքը: Դրա մասին տես ստորև, հավելված 2-ի մեջ:



Մենք զուր փորձեցինք հիշատակություն գտնել այդ աստվածության մասին դիցաբանական որևէ տեղեկատուի մեջ: Եվ դա լրիվին հասկանալի է: Ոչ անտիկ տեքստերը, ոչ հնագիտական հուշարձանները ոչինչ չեն ասում Հիսուս Աստծու մասին, որը իբրև պաշտվել է մինչքրիստոնեական աշխարհում:

## ԻՆՉ ՈՐ ԲԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ «ՆԱԽԱՏԻՊԻ» ՄԱՍԻՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐՈՒՄ, ԼԵԳԵՆԴՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այնքանով, որ նոր աստծու հայտնագործության փորձը անհաջողություն կրեց, առասպելաբանները սկսեցին բառացիորեն ողջ աշխարհով մեկ որոնել ավետարանական Քրիստոսի այլ «նախատիպեր»: Այդ նպատակով նրանք առաջին հերթին օգտագործեցին տառապող աստվածությունների մասին անտիկ առասպելները, առիթը բաց չթողնելով վկայակոչելու նախնադարյան տոտեմները, կուռքերը և շամանները: Այդօրինակ զուգանմանություններ անցկացնելու դյուրինությունը, հիրավի, ապշեցուցիչ էր: Ակամա հիշում ես Պատրիարքական լճակի հայտնի տեսարանը «Վարպետը և Մարգարիտան» վեպից, որտեղ ինքնավստահ Բեռլիոզը «լուսավորում է» Իվանին: «Չկա ոչ մի արևելյան կրոն,- ասում է Բեռլիոզը,- որում, որպես կանոն, անարատ կույսը լույս աշխարհ չբերի աստծու: Եվ քրիստոնյաները չհորինելով ոչինչ նոր բան, ճիշտ այդպես ստեղծեցին իրենց Հիսուսին, որը իրականում երբեք չի եղել: Ահա դրա վրա էլ հարկավոր է գլխավոր շեշտը դնել... Բանաստեղծն իմացավ ավելի ու ավելի հետաքրքրական և օգտակար բաներ նաև եգիպտական բարեշնորհ աստված և Երկնքի ու Երկրի որդի Օզիրիսի մասին, նաև փյունիկյան Թամմուզ աստծու, նաև Մարդուկի մասին»:

Երբ Բուլգակովը գրեց իր վեպը, այդպիսի Բեռլիոզների մի ողջ բանակ՝ դիպլոմավոր և կիսագրագետ, ջանադրորեն լվանում էին պարզամիտ Իվանուշկաների ուղեղները: Նրանց աշխատությունների հանրագումարը ներկայացվել է մեծ սխեմա-նկարի ձևով, որը երկար ժամանակ աչքի էր զարնում ԽՍՀՄ-ի Գիտությունների Ակադեմիայի Լենինգրադի՝ կրոնի և աթեիզմի պատմության Թանգարանում[27]: Սխեմա-

յի կենտրոնում Քրիստոսն է՝ պատկերված խաչվող սրերի չարագուշակ ֆոնի վրա. դեպի Նրան են ձգվում թելեր Հունաստանի, Փոքր Ասիայի, Եգիպտոսի, Պարսկաստանի և նույնիսկ Հնդկաստանի աստվածների և առասպելական հերոսների պատկերներից: Թանգարանի այցելուն կարող է հետևել, թե ինչպես է հեթանոսության պատառիկներից «ձևավորվել» Քրիստոսի մասին առասպելը: Ահա, Բուդդայի ծնունդը, Իզիդայի փախուստը մանուկ Գոռի հետ, Միթրայի և Մարսիասի խաչելությունը, Ադոնիսի և Ատտիսի ողբը, Օզիրիսի հարությունը: Համարյա բոլոր դրվագները ավետարանական պատմության: Մտածելու տեղիք տվող բան կա......

Բայց բավական է թեկուզ համառոտակի իմանալ առասպելների բովանդակությունը բոլոր այդ ծնված, խաչված և հարություն առած էակների մասին, որպեսզի պարզ դառնա, որ մեր առջևում է լայն լսարանի անտեղյակությունը հաշվարկած «բեռլիոզական» նենգափոխություն:

Ինչի մասին է պատմում իրականում դիցաբանությունը:

Դեռևս IV դարում մ. թ. ա. հույն բանաստեղծուհի Սաֆոն հիշատակում է Ասորիքում տարածված Ադոնիսի պաշտամունքի մասին: Հին Արևելքի բնակիչները նրան հնուց գիտեին Դումմուզ, Թամմուզ, Ադոն անուններով: Ադոնիսը աստված է, որն անձնավորում է աշնանը թառամող, իսկ գարնանը վերակենդանացող բուսականությունը: Առասպելը նրա մասին պատմում է հետևյալը: Աֆրոդիտե աստվածուհին սիրում էր Ադոնիսին: Նա մեռնում է լեռներում ահռելի վարազի հասցրած մահացու վերքից: Աֆրոդիտեն երկար սգում էր պատանու մահը, և նրա վիշտը շարժում է Զևսի գութը: Նրա հրամանով, անդրշիրիմյան աշխարհի Թագավոր Հադեսը խոստանում է ամեն տարի ժամանակավորապես մեռյալին դուրս թողնել երկիր:

Փռյուգիական հովիվ Ատտիսը մյուս առասպելի հերոսն է, որը Կիբելա աստվածուհու խանդի զոհը դարձավ: Զայրացած, նա Ատտիսին հասցրեց խելագարության, որը մոլեգնության մոլուցքի մեջ ամորձատեց իրեն և մեռավ արյունաքամ լինելուց: Ի հիշատակություն դրա, Կիբելայի և Ատտիսի քրմերը կարող են լինել միայն կրտադանդավորները: Փոքրասիական այդ պաշտամունքը ուղեկցվում էր պարերով և գինարբուքներով: Մ. թ. ա. 204 թվականին այն պաշտոնապես ընդունվեց Հռոմում:

Հարցը օրինաչափ է՝ ինչով են Ադոնիսի և Ատտիսի առասպելները նման ավետարանական պատմությանը:

Վատ չի դասավորվում գործը իբր «խաչյալ» Մարսիասի հետ: Հա-



մաձայն առասպելի, սատիր Մարսիասը, որը հրաշալի շվի էր նվագում, ուղեկցում էր Կիբելային, երբ նա սգում էր Ատտիսի մահը: Մարսիասը սպանվեց է իր փառասիրության պատճառով: Նա համարձակվեց մրցության կանչել Ապոլլոնին և, պարտվելով, ենթարկվեց անողոք աստծու մոլեգնությանը: Ապոլլոնը դժբախտին կապեց եղևնու ծառից և խեղդելով նրան, մաշկազերծ արեց[28]:

Պարսկական աստված Միթրային պաշտողները իսկապես հավատում էին, որ ինչ-որ ժամանակ հայտնվել է երկրի վրա, բայց և նրա «կենսագրության» մեջ ևս քիչ են Ավետարանի հետ ընդհանուր շփման կետերը: Միթրան ծնվել է ժայռից, նա փրկել է մարդկանց համաշխարհային ջրհեղեղից, հրդեհից և երաշտից, սպանել է բնության ուժերը մարմնավորող հսկա ցուլին: Հրեշի դիակից նա ստեղծել է գյուղատնտեսական բույսերի առաջին սերմերը: Դրանից հետո Միթրան սպիտակ ձիեր լծված կառքով տարվել է երկինք և այդ ժամանակից պատերազմ է տանում չար ոգիների դեմ[29]:

Օզիրիսի և Իզիդայի մասին եգիպտական առասպելում նույնպես գտնում ենք հնագույն հավատալիքների համար բնութագրական բնության գարնանային զարթոնքի տարրեր: Ի դեպ, եգիպտացիք պատմում են, որ Իզիդան փախել է Գոռ մանկան հետ, ավանակի վրա նստած, փրկելով թշնամական Սեթ աստծուց: Այստեղից փորձել են արվել բխեցնել Եգիպտոս փախչելու պատմությունը: Հազվադեպ հակակրոնական գիրք կճարվի առանց ավանակի վրա նստած աստվածուհու պատկերի, իսկ դրա կողքին համանման ավետարանական տեսարանը: Բայց նախ՝ Ավետարանները չեն հիշատակում ավանակի մասին, երկրորդ՝ եթե եգիպտական արվեստն անգամ հուշել է վաղ քրիստոնեական նկարիչներին այդ սյուժեն, ապա չի կարելի հետևություն անել նաև պատմության փոխառյալ լինելու մասին: Եվ, վերջապես, երրորդ՝ Արևելքում ավանակը շատ հաճախ է օգտագործվում որպես հեծկան կենդանի:

Հետազոտողները սիրում են համանմանություններ ցույց տալ հեթանոսական և քրիստոնեական ծեսերի միջև: Բայց չէ որ յուրաքանչյուրը, ով ծանոթ է քրիստոնեական ժողովուրդների պատմության հետ, գիտի, որ մկրտություն ընդունելուց հետո նրանց մոտ պահպանվել են որոշ հին ավանդույթներ: Այդ երևույթը, ըստ ամենայնի, բնական է, բայց այն ամենևին էլ չի խոսում առասպելաբանների օգտին: Եթե Ռուսաստանում, օրինակ՝ գոյություն ունեն նախաքրիստոնեական հավատի այնպիսի վերապրումներ, ինչպիսին բարեկենդանն է, կարելի է արդյոք պնդել, որ ուղղափառությունը Պերունի պաշտամունքի արդյունք է:

Բացի դրանից, կատարվում են նաև գիտակցված փոխառություններ: Օզիրիսի պատվին վսեմ և բանաստեղծական եգիպտական հիմները վերածվել են քրիստոնեականի: Հավիտենական կյանքի հնագույն խորհրդանիշը` +-ը, նույնացվել է Քրիստոսի խաչի հետ, իրականում ունենալով T տառի ձևը[30]: Դեկտեմբերի 25-ը շատ երկրներում պաշտվում է որպես «Արեգակի ծննդյան օր»: Որպեսզի այդ տոնակատարությունից դուրս բերի նրա հեթանոսական բովանդակությունը, Եկեղեցին IV դարից սկսած` Ծնունդը տոնում է դեկտեմբերի 25-ին: Սակայն այդ փոփոխությունների մեծ մասն արվել է արդեն Նոր Կտակարանի գրքերի երևան գալուց հետո:

Նույնիսկ շատ մարքսիստ պատմաբաններ խոստովանում են, որ ավետարանական պատմությունը խիստ հեռու է դիցաբանությունից: Այսպես, հայտնի արևելագետ, ակադեմիկ Ն. Նիկոլսկին գրել է. «Օզիրիսը, Ադոնիսը, Ատտիսը, Թամմուզը սպանվում են չարակամ աստվածների կամ չար տարերքների կողմից. այստեղ չկա ոչինչ մարդկային, բնական` նման պատմական իրականությանը: Հիսուսը սպանվում է հրեական կառավարող շրջանների դեմ տարած անհավասար պայքարում: Նրան հալածանքի են ենթարկում այն բանի համար, որ Նա դարձավ ժողովրդական հերոս, որ Նրան պատրաստ էին հռչակել «Հրեաստանի Թագավոր», ինչպես հռչակել են այդ ժամանակաշրջանում ժողովրդական ապստամբությունների շատ առաջնորդների: Նրան տանում են հռոմեական պրոկուրատորի մոտ, որը հենց իրավասու էր խռովության գործերը հետաքննելու: Նա դատապարտվում է մահվան խաչելությամբ` հռոմեացիների կողմից ապստամբ ստրուկների հանդեպ կիրառվող ընդունված պատժաձևով: Այստեղ ոչինչ չկա հորինված, ընդհակառակը, ամենը արտակարգ ներդաշնակ ձևով տեղավորվում է այն ժամանակվա փոթորկուն հրեական կյանքի շրջանակներում և, միևնույն ժամանակ, միանգամայն համապատասխանում է հռոմեացիների կողմից հաստատված կարգերին[31]:

Այդ եզրահանգման համոզչականությունը զգալով, առասպելաբանները փորձեր են անում Քրիստոսի «նախատիպեր» գտնել պատմական գործիչների մասին եղած ավանդություններում: Մասնավորապես, նրանք նշում են Բուդդային, որի կենսագրության և ավետարանական պատմությունների միջև նմանություններ են գտնում[32]:

Հատկանշական է, որ, թեկուզ բուդդայականության հիմնադրի առաջին կենսագրությունները ստեղծվել են իր մահից ավելի քան չորս դար հետո, աթեիստական գրականությունը հնարավոր է համարում ի դեմս նրա տեսնել ռեալ անձի, իսկ նրա մասին պատմությունները որպես Ավետարանների սկզբնաղբյուրներից մեկի[33]:

Մենք չենք քննարկի այն հարցը, թե ինչպես է պատահել, որ հեռավոր Հնդկաստանի գաղափարները այդպիսի ազդեցություն են ունեցել Միջերկրականի կրոնի վրա: Մերձավոր Արևելքի կապերը հռոմեական ժամանակաշրջանում այդ երկրի հետ թույլ էին և պատահական: Սակայն ընդունենք, թե բուդդայականներին, այնուամենայնիվ, հաջողվել է ազդել քրիստոնեության ձևավորման վրա: Ինչով կարող են այդ ապացուցել: Կրոնի հիմնադիրների մասին եղած պատմությունների նմանությամբ: Բայց դա կասկածելի եզրահանգում է: Նրանք երկուսն էլ եղել են շրջագայող քարոզիչներ, այդ պատճառով էլ նրանց կյանքում կարող են լինել համանման պահեր: Դա տեղի է ունենում անգամ այն ժամանակ, երբ մարդկանց բաժանում են հազարամյակներ: Սրբերի և իմաստունների, զորավարների և նկարիչների կենսագրության մեջ շատ նման բան կա, բայց դրանից չի բխում, որ, օրինակ` Նապոլեոնի պատմությունը Ալեքսանդր Մակեդոնացու պատմության թեմայի փոփոխակությունն է[34]:

Բացի դրանից, Բուդդայի մասին լեգենդները քիչ են հիշեցնում Ավետարանները: Բուդդան հարուստ ռաջայի որդի էր, նրա համայնքը ստեղծվել էր որպես վանական միաբանություն, նա քարոզում էր անարգել և մեռավ հիվանդությունից խորը ծերության հասակում: Բուդդայի և Քրիստոսի ուսմունքների միջև հսկայական տարբերությունը անկասկած է: Եվ, ընդհանրապես, Ավետարանների զուտ պաղեստինյան կոլորիտը բացառում է բուդդիզմի մասնակցությունը Եկեղեցու ձևավորման մեջ: Այսպիսով, Բուդդայի արձանը աթեիզմի թանգարանի քրիստոնեական սրահում վկայում է լոկ քարոզչական նպատակներով պատմության զանցառում:

Կանգ առնենք Հիսուսի ևս մեկ «նախատիպի» վրա, որը շրջանառության մեջ է դրվել առասպելաբանների կողմից համեմատաբար վերջերս: Խոսքը կումրանյան Արդարության Ուսուցչի մասին է:

1947 թվականին Մեռյալ ծովի ափին Խիրբեթ-Կումրանի շրջանում գտնվեց հնագույն, կաշվից ձեռագրերի թաքստոց: Դրանով սկիզբ դրեց մի ամբողջ շարք գտածո իրերի հայտնագործության, որոնց արդյունքում գիտնականները ստացան հին կիսավանական միաբանությանը պատկանող հարյուրավոր փաթեթներ: Այն նույնացնում էին նախապես լոկ անտիկ հեղինակների տեղեկություններից հայտնի հեսսեական ուխտի հետ[35]: Կումրանյան եղբայրության անդամները իրենք

իրենց անվանում էին «Լույսի որդիներ», «Ընտրյալներ», «Նոր Ուխտի մարդիկ»: Նրանց վավերագրերում սովորաբար հիշատակվում է ինչ-որ առաջնորդ կամ բարեփոխիչ, որին նրանք սովորաբար կոչում էին Արդարության Ուսուցիչ*: Նրա մասին ասվում է, որ նա ավետում էր մարդկանց Աստծու կամքը, և հալածանքների է ենթարկվել «սրբապիղծ քահանայի» կողմից:

Դեռ ձեռագրերի թվականը թեկուզ և մոտավոր չէր պարզվել, որոշ գիտնականներ որոշեցին, որ դրանցում խոսքը Քրիստոսի մասին է: Դա անհանգստացրեց առասպելաբաններին, և որպեսզի փրկեն իրենց դիրքերը, նրանք վազեցին ամենապարզ, բայց ամենևին էլ ոչ համոզիչ միջոցի. քրիստոնեության ծագմանը նվիրված գրքերում կումրանյան գտածոները լիովին լռությամբ էին մատնում: Անգամ Վիպպեռը, որն այդքան մանրամասնորեն գրել է հեսսեացիների մասին, ոչ մի բառով չի նշում Մեռյալ ծովի վավերաթղթերի մասին: Եվ միայն հայտնագործությունից ինը տարի անց, երբ ակնհայտ դարձավ, որ տեքստերը մինչքրիստոնեական են, թույլատրվեց տպագրել առաջին հաղորդումը դրանց մասին: Բացի այդ, կումրանյան հայտնագործությունները սկսեցին օգտագործել առասպելների տեսության օգտին: Չէ որ շատ ավելի նպատակահարմար էր Քրիստոսի «նախատիպ» հայտարարել հրեական ուսուցչին, քան բացատրություններ տալ «Հիսուս աստծու» մասին կամ զուգահեռներ անցկացնել հին հունական առասպելների հետ: Շատ չանցած, «Նաուկա ի ժիզն» ամսագիրը իր էջերում զետեղեց մի նկար, որտեղ պատկերված էր խաչ հանված Արդարության Ուսուցիչը, որի գցած ստվերից առաջանում էր խաչյալ Քրիստոսի ստվերապատկերը: Ահա դրանք՝ ավետարանական ավանդազրույցների երկար սպասված «ակունքները»: Ի վերջո, գտնված է «Մինչ Քրիստոս եղած Քրիստոսը»......

Առասպելաբաններին հատկապես ոգևորեցին Կումրանի առաջին հետազոտողներից մեկի՝ ֆրանսիացի գիտնական Ա. Դյուպոն-Սոմերի խոսքերը. « Գալիլեական Ուսուցիչը, ինչպես որ նա ներկայացված է Նոր Կտակարանում, շատ առումներով Արդարության Ուսուցչի ապշեցուցիչ վերամարմնավորումն է»[36]:

Սակայն առասպելաբանները այս անգամ էլ հաղթանակը տոնեցին չափազանց շուտ: Գտածոների հետագա վերլուծությունից պարզվեց, որ Դյուպոն-Սոմերի եզրահանգումը հարկավոր է համարել ծայրահեղ

* Նախապես «Արդարության Ուսուցիչը» սխալմամբ թարգմանում էին «Արդարացիության Ուսուցիչ»:



չափազանցություն:

Ինչ գիտենք այսօր կումրանյան Ուսուցչի մասին: Նա Քրիստոսի նմանակն էր իրոք: Այդպես թվում էր լոկ նախապես, բայց ինչքան մանրակրկիտ հետազոտվեցին տեքստերը, այնքան ակնառու դարձավ այդ մարդու և Քրիստոսի միջև եղած հակադրությունը: Ի տարբերություն Նրա, Ուսուցիչը քահանա էր և Օրենքի մեկնիչ, նրա գլխավորած միաբանությունը կառավարվում էր հոգևորականության կողմից: Քրիստոսը այցելում էր Տաճարը և լինում էր Երուսաղեմում տոնակատարություններին, հեսսեացիները չէին ընդունում Տաճարը և հավատարիմ մնացին սեփական եկեղեցական օրացույցին:

Հերձվածողների հարձակումները մ. թ. ա. մոտ 150-ին Հասմոնեից տոհմի թագավոր-քահանայապետի դեմ հանգեցրին բախումների: Ուսուցչին գցեցին զնդան, իսկ հետո նա աքսոր ուղարկվեց: Բայց անտեղ էլ «սրբապիղծ քուրմը» նրան հանգիստ չթողեց: Երբ «Լույսի որդիները» պատրաստվում էին Դատաստանի օրվա տոնին, թագավորի կողմից ուղարկված մարդիկ հարձակվեցին նրանց վրա: Բայց դա չբերեց աղանդի քայքայման: Մոտ 140 թվին Ուսուցիչը իր հետևորդներին տարավ Մեռյալ ծովի ափ, որտեղ և հիմնվեց առաջին կումրանյան ավանը: Ուսուցիչը մեռավ մոտ մ. թ .ա. 110-ին, նրա մահվան մասին տեքստերում խոսվում է հանդարտ, էպիկական տոնով[37]: Ոչ մի տեղ ուղղակի վկայություններ չկան, որ նա խաչվել կամ դատապարտման է ենթարկվել որևէ այլ եղանակով: Ճիշտ է, Ամբակում մարգարեի գրքի կումրանյան մեկնաբանություններում իբր ակնարկ կա այդ մասին. այնտեղ ասված է, որ Ուսուցիչը «մերկացվեց», որը երբեմն թարգմանվում է որպես թե՝ «պատժվեց»: Բայց դա ավելի շուտ վերաբերում է բանտային կալանքին, քան մահապատժին[38]: Եթե Արդարության Ուսուցչի կյանքի իրադարձություններում դժվար է գտնել Ավետարանների «նախակերպարներ», ապա չկան արդյոք, նմանություններ Քրիստոսի ուսմունքի և հեսսեականության միջև:

Ամենից առաջ աչքի է զարնում այն, որ կումրանականները կոչում էին իրենց Նոր Ուխտի համայնք: Սակայն հարկ է հիշել, որ այդ տերմինը չի մտցվել քրիստոնյաների կողմից: Դեռևս մ. թ. ա. VI դարում Երեմիա մարգարեն ազդարարում է այն մասին, որ ինչ-որ ժամանակ Աստված նվիրյալների հետ կկնքի Նոր Ուխտ (գլ.31): Հեսսեականները մտածում էին, որ հենց իրենց հետ է կատարվել այդ մարգարեությունը: Քրիստոսը Խորհրդավոր Ընթրիքի ժամանակ հաստատեց Նոր Ուխտ անապատում ապրող աղանդավորներից բոլորովին անկախ:

Հեսսեականները իրենց աղանդի անդամներից պահանջում էին «Հավատ» Ուսուցչի հանդեպ, բայց տվյալ դեպքում խոսքը միայն Նրա մարգարեական առաքելության մասին է: «Հիմներում», որոնք, սովորաբար, վերագրում են Ուսուցչին, նա հանդես է գալիս ամբողջովին Աստծուն նվիրված, բայց իր մեղսականությունը և տկարությունը գիտակցող մարդ: Նա մշտապես խոսում է համայնքի թշնամիների մասին, փառամոլների մասին, իր իշխանությունը վիճարկողների, թշնամու հանդեպ գալիք հաղթանակների մասին: Արդարությունը, որ նա քարոզում էր, սահմանափակ օրինականությունն էր: Ծեսերը և կանոնները կումրանականների մոտ ավելի առատ էին, քան փարիսեցիների: Նրանք խստապահանջ ձևով պահում էին շաբաթը, ի տարբերություն Քրիստոսի, մտածում էին նույնիսկ, որ այդ օրը անասունը փոսից քաշել-հանելն անգամ մեծ մեղք է[39]:

Հիսուսը գնում էր բոլոր ընչազուրկների և արհամարհվածների մոտ: Նրան մեղադրում էին այն բանում, որ «Նա ուտում և խմում է մաքսավորների և մեղավորների հետ»: Նա կոչ էր անում սիրել յուրաքանչյուր մարդու. լինի դա թեկուզ պղծված սամարացին: Կումրանում մենք տեսնում ենք այլ բան: Համայնքի կանոնագիրը սովորեցնում էր «մշտական ատելություն կորստյան դատապարտվածների նկատմամբ», ինչպես անվանում էին բոլորին, ովքեր չէին պատկանում աղանդին[40]: Նրանում չէին ընդգրկում մարմնական թերություն ունեցող մարդկանց[41], արգելվում էր օտարների հետ կապերի մեջ մտնել, ինչպիսին էլ որ դրանք լինեին:

Ամուրիություն, աստիճանակարգության խստապահանջ կարգապահություն, մեկուսահակություն, Օրենքի անդուլ ուսումնասիրություն, ահա թե ինչով էր բնութագրվում կյանքը Կումրանում:

«Ընտրյալները» համոզված էին, որ Աստծո Դատաստանի օրը կփրկվեն միայն իրենք: Ավելին, նրանք հույս ունեին «խավարի որդիների» դեմ տարվելիք պատերազմին մասնակցություն ունենալ և վաղօրոք պլանավորում էին վախճանաբանական ճակատամարտի օրվա իրենց գործողությունները: Ահա թե ինչու հեսսեականները և Քրիստոսի Եկեղեցին, ժամանակակից հայտնի գիտնական Իոախիմ Երեմիասի խոսքերով արտահայտած, «երես առ երես հանդիպած երկու աշխարհներ են»[42]: Եթե Նոր Կտակարանում և կումրանյան ձեռագրերում հանդիպում են նման արտահայտություններ կամ պատկերներ, ապա դա ցույց է տալիս դարաշրջանի ընդհանուր մթնոլորտը: Բացառված չէ նաև այն բանի հնավորությունը, որ որոշ հեսսականներ, լքելով աղան-



դը, ներգրավվել էին Եկեղեցու շարքերը և բերել իրենց սովորույթներն ու ըմբռնումները: Ահա այն առանձին գծերը, որոնք ներհատուկ են և՛ հեսսեական, և՛ վաղքրիստոնեական համայնքներին:

Անապատում հայտնագործած իրերը լայնացրին մեր պատկերացումները այն հասարակության գաղափարների և սպասումների շրջանակի մասին, որում ապրում էր Հիսուսը: Պարզ է դառնում, թե ինչքան նորություն կար Նրա քարոզում, և ինչ հեշտությամբ այն կարող էր հարուցել հակազդեցություն:

Այսպիսով, Ավետարանը Կումրանից բխեցնելու փորձը այնպիսի ձախողման ենթարկվեց, ինչպես և Քրիստոսի «նախատիպի» վերաբերյալ այլ հորինվածքները:

## «ԴԱՐԻ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ»

Իրենց գլխավոր հաղթաթուղթը առասպելաբանները միշտ համարել են «դարի լռությունը»: Իրոք, եթե Քրիստոսը գոյություն է ունեցել, ինչու Նրա մասին չեն հիշատակում այդ ժամանակաշրջանի գրողները և պատմաբանները: Չէ որ այն հուշակված է այնպիսի անուններով, ինչպես Սենեկան, Պլինիոս Ավագը, Յուվենալիսը, Մարցիալոսը, Փիլոնը, Հովսեփոս Փլավիոսը, Հուստ Տիբերիադիացին և ուրիշներ:

Նախքան այդ հարցին պատասխանելը՝ մենք պետք է երկու կարևոր վերապահություն անենք: Առաջին. գրքի տպագրության բացակայությունը սահմանափակ էր դարձնում ձեռագրերի թիվը, որը դյուրին էր դարձնում ձեռագրերի հսկայական գանգվածի ամբողջական անհետացումը: Բավական է մատնանշել հետևյալ թվերը. Տիտոս Լիվիոսի «Պատմության» 142 գրքից պահպանվել է միայն 35-ը: Դիոդորոս Սիցիլիացու 40 գրքից մեզ հասել է ընդամենը 10, Դիոնիսիոս Հալիկառնասացու «Հնախոսությունների» 20 գրքից մնացել է 9-ը: Զնչին պատառիկներ են մեզ հասել Նիկողայոս Դամասկացու երկերից, իսպառ անհետացել են Պոմպեոս Տրոգոսի «Պատմությունը», Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Հյուստ Տիբերիադիացու պատմագիտական աշխատությունները: Նույնիսկ Տակիտոսի «Անալները» ամբողջական չեն հասել մինչև մեր օրերը[43]: Իրերի նման դասավորության դեպքում, չի կարելի անվերապահորեն պնդել, թե ինչ-որ մեկի մասին գրականության մեջ չի հիշատակված:

Երկրորդ. տարօրինակ է անտիկ հեղինակներից տեղեկություններ

պահանջել, իրենց աչքում այնպիսի ինչ-որ նշանակալից փաստի մասին, ինչպիսին ոմն Ուսուցչի կարճատև գործունեությունն է արևելյան խուլ պրովինցիայում[44]: Այդ ժամանակ ամենուր շրջում էին տարբեր քարոզիչներ և Քրիստոսը, հեթանոսների տեսանկյունից, ոչնչով չէր տարբերվում նրանցից:

Հետևաբար, հռոմեական և հունական հեղինակները պետք է որ Նրա մասին հիշատակեին այն դեպքում, երբ քրիստոնեությունը հայտարարեր իր մասին որպես զանգվածային շարժման: Մենք գիտենք, որ Հռոմում այդ տեղի ունեցավ միայն Խաչելությունից երեսուն տարի անց, կապված 64 թվականին քրիստոնյաների հալածանքների հետ: Մինչ այդ, ասենք, իմաստասեր Սենեկան հազիվ թե կարողանար լսել նրանց մասին ինչ-որ մի արժանահավատ բան: Բայց անգամ եթե նա իմանար էլ քրիստոնյաների մասին, նրա լռությունը միանգամայն հասկանալի է: 65-ին նա մասնակից դարձավ հակակառավարական դավադրությանը և Ներոնի հրամանով բացեց իր երակը[45]: Լիովին հասկանալի է նաև Մարցիալոսի, Դիոնիսիոս Խրիզոստոմոսի և Յուվենալիսի լռությունը, առավել ևս, որ դրանցից ոչ մեկը պատմաբան չէր և չէր առնչվում քաղաքական գործերին: Իսկ Տիտոս Լիվիոսը և Նիկողայոս Դամասկացին մահացել էին մինչև Հիսուսի հասարակականորեն հանդես գալու սկիզբը:

Իսկ ինչպես են ընթանում գործերը մյուս անտիկ հեղինակների հետ: Իսկապես նրանք ոչինչ չեն ասել Քրիստոսի և քրիստոնյաների մասին: Պարզվում է, որ դա այնքան էլ այդպես չի:

Չնայած մեզ չի հասել Պլինիոս Ավագի աշխատությունը, բայց դրա փոխարեն պահպանվել են Պլինիոս Կրտսերի (61-113) նամակները, որոնցում նա հիշատակում է քրիստոնյաների մասին: 111-ից մինչև 113 թվականը Պլինիոս Կրտսերը ղեկավարում էր Բեթանիայի փոքրասիական գավառը և ծառայական պարտականությունների բերումով նա ստիպված եղավ հալածել քրիստոնյաներին: Անկասկած, իշխանությունները արդեն դրանից առաջ էլ նրանց վրա ուշադրություն էին դարձնում: Տրայանոս կայսրին հղած զեկուցագրի մեջ Պլինիոսը նկարագրում է քրիստոնյաների կյանքը, նրանց ժողովները, աղոթքները և սովորույթները: Կարևոր է նշել, որ հարցաքննությունների ժամանակ նրանցից ոմանք խոստովանում էին, որ համայնք են ընդունվել 20 տարի առաջ, այսինքն՝ մոտ 90 թվականին[46]: Խոսելով քրիստոնյաների աղոթքների մասին, Պլինիոսը գործածում է «աղոթում էին Քրիստոսին, ինչպես թե Աստծուն (quasi Deo): Դա նշանակում է, որ Պլինիո-



սը լսել էր Քրիստոսի գոյության մասին որպես մարդու, հակառակ դեպքում նա պարզապես կասեր «Քրիստոս աստծու» մասին:

Խոշորագույն հռոմեացի պատմաբան Կորնելիոս Տակիտոսը (55-120), պատմելով 64 թվականի ամռանը Հռոմում բռնկված հրդեհի մասին, ասում է, որ Ներոնը մեղքը բարդում էր «իրենց սրիկայությունների համար ատելի մարդկանց վրա, որոնց ամբոխը անվանում էր քրիստոնյաներ (quos vulgus chrestianos apellabat ): Քրիստոսը, որից ծագում էր այդ անունը, Տիբերիոսի օրոք մահապատժի ենթարկվեց կուսակալ Պոնտացի Պիղատոսի կողմից, բայց ժամանակավորապես ճնշված չարաղետ նախապաշարումը (superstitio exitiabilis ) նորից մեջտեղ եկավ և տարածվեց ոչ միայն Հրեաստանում, որտեղից այդ չարիքն սկիզբ առավ, այլ Հռոմում, որտեղ հոսում են բոլոր կողմերից և որտեղ ողջ զազրելիությունները և անամոթությունները բարձրաձայն են հայտարարում իրենց մասին[47]:

Ոչ մի լուրջ հետազոտող չի կարող այդպիսի վկայության կողքով անցնել: Դրևսը և նրա հետ մյուս առասպելաբանները փորձում էին ամեն կերպ նվազեցնել դրա արժեքը և անվանել ուշ շրջանի քրիստոնեության ընդմիջարկություն[48]: Այնինչ, իրական նմանակությունները («Գործիք Պիղատոսի» կամ «Լենտուլոսի նամակների» պես) երբեք չեն հաջողվում իսկականի նման: Պատմաբանը հեշտությամբ սխալներ է գտնում, որոնք ի հայտ են բերում կեղծիքը: Քրիստոսի հատվածը Տակիտոսի մոտ, որտեղ նոր ուսմունքի մասին կոպիտ և ատելությամբ լի արտահայտություններ են արված, չի կարող ներդիր լինել թեկուզ այն պատճառով, որ ոչ մի քրիստոնյայի ձեռք չի բարձրանա իր հավատի մասին գրել այդ ոգով: Այդ պատճառով Տակիտոսի վկայությունը հիմա համարվում է ստույգ խորհրդային գիտնականների մեծ մասի կողմից[49]:

Մյուս հռոմեացի պատմաբան Սվետոնիոսը (70-140), խոսելով Ներոնի օգտակար միջոցառումների մասին, նրան է վերագրում «քրիստոնյաների՝ նոր և չարաղետ նախապաշարումը դավանող մարդկանց» հալածանքը[50]: Կլավդիոսի կենսագրության (41-54) մեջ նա նաև հաղորդում է հռոմեական հրեաների միջև, «ինչ-որ Քրիստոսի (Chrestus) պատճառով» ծագած խռովությունների մասին[51]: Իսկ «Գործք Առաքելոցից» հայտնի է, որ հենց այդ ժամանակ ժողովարաններում կրքոտ վեճեր էին ծավալվում դեպի քրիստոնեություն դարձի եկածների և հին Օրենքի կողմնակիցների միջև: Հիմք կա մտածելու, որ Սվետոնիոսը, շատ հռոմեացիների նման, «Քրիստոս» բառը հաղորդում է «Քրես-

տոս» ձևով: Ի դեպ, Տակիտոսը նույնպես քրիստոնյաներին անվանում է «քրեստոնյաներ»[52]:

Հետագայում, առասպելաբանների պնդմամբ, «ոչ Ցելսը, ոչ Լուկիանոսը ոչինչ չեն հաղորդում Հիսուս Քրիստոսի քարոզչության մասին»[53]: Ճիշտ է, արդյոք, այդ: Սատիրիկ և հրապարակախոս Լուկիանոսը մոտ 50 թվին քրիստոնյաների մասին գրել է. «Նրանց առաջին օրենսդիրը նրանց մեջ համոզմունք էր ներշնչում, որ նրանք եղբայրներ կլինեն այն բանից հետո, երբ կհեռանան հելլենական աստվածներից և կսկսեն երկրպագել իրենց խաչյալ իմաստունին և կապրեն նրա օրենքներով»[54]: Ցելսը քրիստոնյաների դեմ ուղղված իր «Ճշմարիտ խոսք» բանավիճային բնույթի գրքում խոսում է Հիսուսի մասին որպես պատմական անձնավորության: Իմիջիայլոց, նա անվանում է Նրան «խռովության պատժված առաջնորդ» և կշտամբում է այն հրեաներին, որոնք ապստամբել են իրենց կառավարության դեմ և հետևել են Հիսուսին: Նրա բառերով՝ քրիստոնյաները երկրպագում են «կալանավորված և մահապատժի ենթարկված» մարդու: Ցելսը գիտեր, որ քրիստոնեությունը նոր կրոն է, որ Հիսուսը «բոլորովին վերջերս էր քարոզում այդ ուսմունքը»[55]:

Թվարկելով այդ ժամանակի համարյա բոլոր անտիկ հեղինակներին, մենք տեսնում ենք, որ նրանցից շատերը բարեխղճորեն հաղորդում են քրիստոնեության և Քրիստոսի մասին այն տեղեկությունները, որոնք ունեն իրենց տրամադրության տակ:

Անցյալ դարում հրապարակվեց ևս մի վավերաթուղթ, որն անմիջական կապ ունի մեր թեմայի հետ: Դրա հեղինակը ասորի իմաստուն Մարա բեն Սերապիոնն էր: Որդուն գրած նամակում, ողջ պատմաբանների մեծ մասը թվագրում է մ. թ. 75 թ., Մարան շարունակում է իր հայացքների կյանքի և մարդկային ճակատագրի փոփոխականության մասին: Տեքստում կան հետևյալ տողերը:

> «Ինչ ասենք, եթե իմաստունները ենթարկվում են բռնապետների կողմից բռնության: Նրանք՝ լուսավորվածները, հանդուրժում են արհամարհական վերաբերմունքը և չեն կարողանում պաշտպանել իրենց: Իսկ օգուտ ստացան աթենացիները այն բանից, որ մահվան դատապարտեցին Սոկրատին, չէ որ դրա հատուցումը եղավ սովը և ժանտախտը: Կամ սամոսացիները՝ այն բանից, երբ կիզեցին Պյութագորասին, չէ որ ողջ երկիրը մի ակնթարթում ծածկվեց ավազով կամ հրեաները՝ իրենց Իմաստուն Թագավորին մահվան դատապարտեցին, չէ որ այդ ժամանակից նրանցից վերցվեց թագավորությունը: Աստված արդարացիորեն



> հատուցեց այս երեք իմաստունների համար՝ աթենացիները կոտորվեցին ժանտախտից, սամոսացիները թաղվեցին ջրի տակ, հրեաները ջախջախվեցին ու արտաքսվեցին իրենց թագավորությունից և ապրում են աշխարհով մեկ սփռված: Սոկրատը չմեռավ Պլատոնի շնորհիվ, Պյութագորասը՝ Հերոստրատի, իսկ իմաստուն Թագավորը շնորհիվ իր տված նոր օրենքների»[56]:

Խոսելով իմաստուն Թագավորի և Նրա Օրենքի մասին, Մարան, հասկանալի է, չէր կարող նկատի ունենալ Հերովդեսներին: Նրանցից ոչ մեկը չընկավ համաքաղաքացիների ձեռքով, դե, իհարկե, Հերովդեսներին Պյութագորասի և Սոկրատի նման չէր կարելի ներառել իմաստունների թվում: Այդ պատճառով էլ, հավանական է, որ տվյալ դեպքում խոսքը մահվան դատապարտված «Հրեաստանի Թագավորի»՝ մարդկանց նոր օրենք տված Հիսուս Նազովրեցու մասին է:

Արդ, անդրադառնանք հրեական հեղինակներին:

Փիլոն Ալեքսանդրացի (մահացել է մոտ 45 թվին), ծնվել է Եգիպտոսում և ամբողջ կյանքը ապրել է այդ երկրում: Քրիստոնեության հետ նա կարող էր ծանոթանալ միայն այն բանից հետո, երբ այն լայն տարածում ստանար: Բայց նրա մահվան ժամանակ Ալեքսանդրիայում քրիստոնյաները հատուկենտ էին, այդ պատճառով էլ նա հազիվ թե իմանար Հիսուսի մասին: Ընդ որում, այս պարագայում վերջնական եզրակացություն անել չի կարելի, քանի որ Փիլոնի շատ գրքեր մեզ չեն հասել:

Հյուստ Տիբերիադացի- I դարի վերջի այս հեղինակից չի պահպանվել ոչ մի ստեղծագործություն: Բյուզանդական գիտնական, պատրիարք Ֆոտիոսը (IX դար) կարդացել է նրա «Հրեական թագավորների ժամանակագրությունը» և այնտեղ ոչ մի հիշատակություն չի գտել Քրիստոսի մասին: Բայց այն ժամանակ, երբ Քրիստոսը քարոզում էր, Հրեաստանը չէր գտնվում թագավորների իշխանության տակ, այլ կառավարվում էր հռոմեական կուսակալների կողմից: Հյուստի «Պատմության» բովանդակության մասին ոչ մի վկայություն չի հասել:

Հովսեփոս Փլավիոս (37- մոտ 100), որի երկերը I դարի Հրեաստանի պատմության գլխավոր սկզբնաղբյուրներն են, քահանա, գիտնական և քաղաքական գործիչ, երիտասարդ տարիներին ղեկավարել է Գալիլիական մարտական ջոկատներից մեկը Հռոմի դեմ տարվող պատերազմում: Բայց, գերի ընկնելով, նա փոխել է իր վերաբերմունքը ապստամբության վերաբերյալ: «Հրեական պատերազմ» և «Հնախոսություն» արևմտյան լսարանին ուղղված գրքերում Փլավիոսը ձգտել է հարմար-

վել իր ընթերցողների ըմբռնումներին: Այսպես, փարիսեցիներին նա նմանակերպել է ստոիկյան դպրոցին, իսկ հեսսեացիներին՝ պյութագորական: Նա ամենուր համառորեն անցկացնում է այն միտքը, երբ ապստամբությունը մի խումբ արկածախնդիրների ձեռքի գործն է, որոնք ժողովրդին գցում են թյուրիմացության մեջ: Հովսեփոսը կարող էր լռությամբ մատնել և քրիստոնեությունը, ինչպես լռության էր մատնել մյուս փրկչական շարժումները: Սակայն, ինչ-որ ձևով, թեկուզև կարճառոտ տեղեկություններ ավետարանական եղելությունների մասին պատմիչն, այնուամենայնիվ, հաղորդում է:

Ամենից առաջ նա հիշատակում է Հովհաննես Մկրտչի մասին:

> «Որոշ հրեաներ,- գրում է նա,- Հերովդեսի զորքի ջախջախման մեջ տեսնում է Աստծո կողմից լիովին արդարացի պատիժ Հովհաննեսի սպանության համար: Հերովդեսը սպանեց այդ սրբակյաց մարդուն, որը համոզում էր հրեաներին վարել արդարակյաց կյանք, արդարացի լինել մեկը մյուսի հանդեպ, բարեպաշտ զգացումներ տածել Հավիտենականի հանդեպ և պատրաստվել լվացումների: Այդպիսի պայմաններում, սովորեցնում էր Հովհաննեսը, լվացումը ախորժելի է Աստծուն, քանի որ նրանք կդիմեն այդ միջոցին ոչ թե այլազան մեղքերի քավության, այլ մարմնի օծման համար, առավել ևս, որ նրանց հոգին նախապես հասցրել է մաքրվել: Քանի որ շատերն էին բոլոր կողմերից հավաքվում քարոզչի մոտ, որի ուսմունքը վեհացնում էր նրանց հոգիները, ապա Հերովդեսն սկսեց զգուշանալ այն բանից, որ հանկարծ նր հսկայաան ազդեցությունը իրեն լիովին ենթարկված զանգվածների վրա, ինչ-որ բարդությունների չհանգեցնի: Այդ պատճառով էլ չորրորդապետը գերադասեց կանխել այն, բռնելով և մահապատժի ենթարկելով նրան ավելի շուտ, քան իրեն հարկ կլիներ զղջալ, երբ արդեն ուշ լիներ: Հերովդեսի այդ կասկածամտության պատճառով Հովհաննեսը շղթայակապ ուղարկվեց Մաքերոն և այնտեղ էլ մահապատժի ենթարկվեց»[57]:

Փլավիոսի այս վկայությունը ընդունվում է որպես հավաստի անգամ աթեիստական գրականության մեջ[58]: Չեն համարձակվում հերքել նաև նրա մյուս վկայությունը: Փլավիոսը գրում է, որ 62 թվին քահանայապետ Քանան II-ը, օգտվելով կուսակալի բացակայությունից, «քարկոծության դատապարտեց Հիսուսի, այսպես կոչված՝ Քրիստոսի եղբորը՝ Հակոբին, ինչպես նաև մի քանի ուրիշների, մեղադրելով Օրենքի խախտման մեջ»[59]: Թե ով էր այդ Հակոբը, մենք գիտենք Նոր Կտակարանի գրքերից: Նրան, իսկապես, անվանում էին «Տիրոջ Եղբայր», քանի որ նա Հիսուսի գերդաստանին պատկանող առաքյալների թվում էր[60]:

Կա վերջապես «Հնախոսության» մեջ Քրիստոսին նվիրված մի պարագրաֆ, որը միշտ տարակուսանք է հարուցել և վեճեր:

> «Այդ ժամանակ հանդես եկավ Հիսուսը, խորը իմաստության տեր մի մարդ, եթե միայն նրան կարելի է անվանել մարդ: Նա հրաշքներ էր գործում և Ուսուցիչ էր ճշմարտությունը ուրախությամբ ընդունող մարդկանց, իր կողմը գրավելով շատերին, այդ թվում և հելլեններին: Նա ինքը Քրիստոսն էր: Պիղատոսը նրան խաչեց մեր ավագների ապստամբությամբ: Բայց նրանք, ովքեր նրան սիրում էին, չհեռացան նրանից, քանի որ երրորդ օրը նա նորից կենդանացած երևաց, ինչպես որ դա կանխագուշակվել էր Աստծուց ներշնչված մարգարեների կողմից, որոնք միաժամանակ կանխասել էին նրա մասին շատ հրաշալի բաներ: Եվ մինչև օրս էլ կան դեռ մարդիկ, որոնք նրա անունով կոչվում են քրիստոնյաներ»[61]:

Այդ հատվածի շատ արտահայտություններ թվում են քրիստոնեական: Մինչդեռ Օրիգինեսը III դարում գրել է, որ Փլավիոսը, ընդունելով Հիսուսի եղբոր՝ Հակոբի սրբակյացությունը, չէր հավատում Նրանում Փրկչին[62]: Նշանակում է, որ նա կարդացել է «Հնախոսության» տեքստը մի քիչ այլ տարբերակով: IV դարում եկեղեցական պատմիչ Եվսեբիոս Կեսարացին արդեն մեջբերում է Հիսուսի մասին պատմող տեղը այն տեսքով, ինչպես որ այն հասել է մեզ[63]: Ամենից հավանական է, որ ինչ-որ տեղ III և IV դարի միջև ընկած ժամանակամիջոցում անհայտ մի գրիչ գրքի մեջ փոփոխություններ է մտցրել: Այն մասին, թե ինչ տեսք է ունեցել սկզբնապես, կարելի է միայն կռահել, բայց, իհարկե, այդտեղ չեն եղել «Նա էլ հենց Քրիստոս էր», այսինքն՝ Փրկիչ էր բառերը[64]:

1912 թվին ռուս գիտնական Ա. Վասիլևը հրապարակեց Ժ դարի եգիպտացի պատմիչ Ագապիայի գրքի արաբական տեքստը, իսկ վերջերս իսրայելցի հետազոտող Շ.Պինեսը ուշադրություն դարձրեց Ագապիայի՛ Փլավիոսից արած մեջբերման վրա, որը տարբերվում է համընդհանուր ճանաչում գտած վարկածից:

> «Այդ ժամանակ ապրում էր մի իմաստուն մարդ, որին Հիսուս էին կոչում: Նրա կենսակերպը արժանավոր էր, և նա հու-

> չակված էր իր առաքինությամբ: Ե՛վ հրեաներից, և՛ ուրիշ այլ ժողովուրդներից շատերը դարձան նրա աշակերտները: Պիղատոսը դատապարտեց նրան խաչելության և մահվան: Բայց նրանք, ովքեր դարձան նրա աշակերտները, չբաժանվեցին նրա ուսմունքից: Նրանք հայտնեցին, որ խաչելությունից երեք օր անց նա երևաց նրանց և որ նա կենդանի էր: Կարծում են, որ նա Փրկիչն էր, որի վերաբերյալ մարգարեները կանխագուշակում էին հրաշքներ»[65]:

Պինեսը ենթադրեց, որ հենց այդպիսին կարող էր լինել Փլավիոսի վկայության նախասկզբնական տեքստը: Դա լիովին հնարավոր է: Բոլոր դեպքերում Հովսեփոսը պետք է գրեր հենց այդպիսի արտահայտություններով:

Այսպես, «Հնախոսության» մեջ Հիսուսը հիշատակված է մեկ կամ նույնիսկ երկու անգամ: Իսկ «Հրեական պատերազմում»: Չէ որ այն նույնպես վերաբերվում է I դարի Պաղեստինի պատմությանը: Այն տեսքով, ինչպես որ «Հրեական պատերազմը» հիմա գոյություն ունի, Քրիստոսի մասին ոչինչ չի ասում: Բայց ենթադրություն կա, որ Հովսեփոսը խոսում է Նրա մասին իր աշխատանքի մյուս տարբերակում՝ գրված արամեերեն լեզվով[66]: Բացառված չէ, որ այդ տարբերակի արձագանքները գտնվեին «Հրեական պատերազմի» հին ռուսական թարգմանության մեջ: Նման տեսակետն առաջին անգամ արտահայտեցին գերմանացի գիտնականներ Բերենդսը և Այսլերը: Բանն այն է, որ սլավոնական վարկածը շատ բանով տարբերվում է հունականից: Ակադեմիկոս Վ. Իստրինը գտնում է, որ այն կարող է փոխառնված լինել մեզ չհասած հենց Հովսեփոսի տեքստից[67]: Գրքում կա հատված և Հիսուս Քրիստոսի մասին.

> «Այդժամ հայտնվեց ինչ-որ մարդ, եթե կարելի է նրան մարդ համարել (բնությունը և կերպարանքը նրա մարդկային էին, նրա տեսքը՝ գերմարդկային, իսկ գործերը՝ աստվածային), և հրաշքներ գործեց զորեղ և հրաշալի: Այսուհանդերձ ինձ կարելի է նրան մարդ անվանել, բայց նայելով նրա բնույթին, չի կարելի նրան հրեշտակ անվանել: Ամենը, ինչ-որ նա անում էր, գործում էր անտեսանելի ուժով, բառով և հրամանով: Ոմանք ասում էին նրա մասին, որ մեր առաջին օրենսդիրը հարություն է առել և ցուցանում է շատ բժշկություններ և իմաստնություն: Ուրիշները մտածում էին, որ նա ուղարկված է Աստծուց: Նա շատ տեղերում ներհակ էր Օրենքին և չէր պահպանում շաբաթը պապենական սովորության համաձայն, բայց ոչ մի պիղծ ու անմաքուր բան չէր գործում: Շատ բան կատարում էր ոչ թե ձեռքերով, այլ՝ խոսքով, և ժողովրդից շատերը հետևում էին նրան, անսալով նրա ուսմունքը, և շատերը գնում էին, մտածելով, որ նրա միջոցով հրեաների ցեղը կազատվի հռոմեացիների ձեռքից: Նա սովորություն ուներ, ամենից հաճախ լինել քաղաքի դիմացի Ձիթենյաց լեռան վար: Եվ այնտեղ էր բուժում մարդկանց: Եվ հավաքվեցին նրա մոտ 150 համախոհներ («ծառա»), իսկ մարդկանցից շատերը Նրա ուժը տեսնելով, որ ամենը, ինչ նա կամենում էր, գործում էր խոսքով, պահանջեցին, որպեսզի նա մտնի քաղաք և ջարդի հռոմեական զորքը ու Պիղատոսին և թագավորի իրենց: Բայց նա մերժեց այդ: Դրանից հետո լուրը հասավ նրա մասին հրեական իշխանություններին: Եվ, հավաքվելով, արքերեցների մոտ, ասացին. « Մենք տկար ենք և չենք կարող դիմադրել հռոմեացիներին: Բայց քանի որ աղեղը արդեն պրկված է, գնանք և ասենք Պիղատոսին, որ լսել ենք և հանգիստ կլինենք: Այլապես կլսի ուրիշներից, և մեզ կզրկեն կալվածքներից ու կջնջեն մեր երեխաների հետ»: Եվ, գնացին, լուր տարան Պիղատոսին: Եվ, նա ուղարկեց, ջարդեց ժողովրդից շատերին և բերել տվեց այդ հրաշագործին: Քննելով նրան, Պիղատոսը հասկացավ, որ նա բարեգործ է և ոչ թե չարագործ, խռովարար չի և ոչ թագավորություն փնտրող: Եվ բաց թողեց նրան, որովհետև նա բուժեց նրա մեռնող կնոջը: Եվ նա գնաց իր նախկին տեղը և սկսեց գործել առաջվա գործերը, և ավելի շատ ժողովուրդ հավաքվեց նրա շուրջը: Եվ փառաբանվեց նա իր գործերով բոլորից շատ: Օրենքի պահապանները լցվեցին նրա նկատմամբ ավելի մեծ նախանձով և 30 տաղանդ տվեցին Պիղատոսին, որ նա սպանի նրան: Եվ նա վերցնելով, ազատություն ընձեռեց նրանց, որ իրենք կատարեն իրենց ցանկությունը: Եվ նրանք սպասում էին հարմար պահի, որպեսզի սպանեն նրան աչեցին նրան, պապենական սովորույթին հակառակ, և շատ ծանակեցին նրան»[68]:

Հասկանալի է, որ Հրաշագործի աստվածային կերպարանքի մասին ամենից դյուրին է վերագրել քրիստոնեական գրիչներին, չնայած Հովսեփին խորթ չէին նման արտահայտությունները[69]: Հետաքրքրական է այլ բան: Համաձայն սլավոնական վարկածի, Հիսուսին ձերբակալել են երկու անգամ, և Նրան կալանքի վերցնելու պահին կաշառված Պիղատոսի զինվորները ժողովրդի մեջ ծեծ ու ջարդ են կազմակերպել: Եվ շատ բաներում պատմությունը հեռանում է ավետարանականից: Քրիստոնեական գրիչը հազիվ թե համարձակվեր մտնել այդպիսի կտրուկ հակադրության մեջ Սուրբ Գրոց հետ, մասնավորապես, նա չէր սկսի պատմել Հիսուսի երկու անգամ ձերբակալվելու մասին: Օրինական կլինի ենթադրել, որ Հովսեփոսը ինչ-որ մեկի շուրթերից իմանալով եղե-

լուծությունների մասին, հայտնել է այն ոչ այնքան ճշգրիտ: Այդ բոլորը, իհարկե, չի բացառում նաև տեքստում հետագա փոփոխությունների հնարավորությունը:

Բայց ընդունենք , որ Քրիստոսի մասին եղած հատվածը սլավոնական մեկնարկներում ամբողջովին պարականոնային է, ընդունենք, որ «Հնախոսության» XVIII գլխի վկայությունը ավելացված է հետագայում, սակայն, մեզ մնում է Հակոբի՝ «Հիսուսի, այսպես կոչված, Քրիստոսի եղբոր» մահապատժի ենթարկելու մասին տեղեկությունը: Ի վերջո, եթե նույնիսկ կանգնենք ծայրահեղ սկեպտիցիզմի դիրքերում, մերժենք և այդ տեքստը, մեզ կմնա Հովսեփոսին միտումնավոր լռության մեջ կասկածելու իրավունքը: Չէ որ, չգիտես ինչու, նա ոչ մի բառ չի ասում այնպիսի մարդու մասին, ինչպիսին Հիլլելն է, չնայած վերջինս Հրեաստանի ականավոր քարոզիչն էր Երկրորդ Տաճարի դարաշրջանում:

Փլավիոսից բացի, նորկտակարանյան ժամանակաշրջանի Պաղեստինի պատմության մասին նյութեր է պարունակում Թալմուդը: Հրեական եկեղեցական կանոնների, օրենքների, բարոյական պատվիրանների և լեգենդների այդ ծավալուն ժողովածուն ստեղծվել է մ. թ. ա. II-V դարերի ընթացքում, իսկ նրա սկիզբը հասնում է մ. թ. ա. I հարյուրամյակ: Դրանում կան նաև վկայություններ Քրիստոսի մասին, բայց դրանք տրված են ծածկագրված և անորոշ ակնարկների տեսքով: Հաճախ Թալմուդը Հիսուսին անվանում է « Նազովրեցի» կամ «այն մարդը»: Ասված է, որ Նա «զբաղվում էր կախարդությամբ և շեղեց Իսրայելը ուղուց», որ Նա «մոգություն էր սովորել Եգիպտոսում» և որ Նրան «կախեցին Պասքայի նախօրեին»[70]: Թալմուդում հիշատակվում է I դարի վերջում ապրած ուսուցիչ Եղիազարի մասին, որին մեղադրում էին քրիստոնեության հանդեպ ունեցած համակրանքի համար: Նա խոստովանել է, որ լսել է Սեկանիացի ոմն Հակոբից Հիսուսի խոսքերը, որոնք իրեն դուր են եկել[71]:

Չնայած բոլոր նման տեղեկությունների կցկտուր և անորոշ լինելուն, Թալմուդի կազմողները չեն կասկածում Հիսուսի ռեալականությանը: Իսկ չէ որ եթե այդպիսի կասկածներ ծագեին, ապա քրիստոնեության հակառակորդները չէին հապաղի դրանից օգտվել: Դա հասկանալով, առասպելաբանները պատրաստ են գնալ նույնիսկ գիտակցված նենգափոխությունների: Այսպես, Ա. Լամովիչը մեջ է բերում ռաբբի Տրիփոնի խոսքերը II դարի գրող Սբ. Հուստինիանոսի գրքից. «Դուք հետևում եք սին լուրերի, դուք ինքներդ ձեզ հորինում եք Քրիստոս...



Եթե Նա անգամ ծնվել է և գոյություն ունի ինչ-որ տեղ, բոլոր դեպքերում Նա ոչ մեկին հայտնի չի»: Այս արտահայտությունից եզրակացություն է արվում, իբր որոշ հրեաներ Հիսուսին համարում էին մտացածին[72]: Բայց նման եզրակացությունը հիմնված է կրճատված և աղավաղված քաղվածքի վրա: Տրիփոնի բաց թողնված խոսքը հնչում է այսպես. «Ինչ վերաբերում է Օծյալին (Քրիստոսին), եթե Նա ծնվել և գտնվում է ինչ-որ տեղ, ապա Նա հայտնի չի ուրիշներին և Ինքն Իրեն չգիտի և ոչ մի ուժ չունի, մինչև որ չգա Եղիան, չօգնի Նրան և ցույց չտա բոլորին[73]: Ակներև է, որ Տրիփոնը, խոսելով «Օծյալի» մասին, հասկանում էր ոչ թե Հիսուս Նազովրեցուն, Որի փրկչականությանը չէր հավատում, այլ սպասված Փրկչին և Նրա հայտնությանը ժողովրդի առաջ, համաձայն ավանդական հրեական պատկերացումների[74]: Եվ երբ Տրիփոնն ասում էր. «Դուք ձեզնից Քրիստոս եք հորինում», նա, իհարկե, նկատի ուներ ոչ պատմական Հիսուսին, այլ Նրան Փրկիչ ճանաչելը:

Անգլիացի մարքսիստ պատմաբան Արչիբալդ Ռոբերտսոնը նշել է, որ տվյալ դեպքում առասպելաբանները «մեկը մյուսի հետևից ընկնում են միամիտների համար սարքված ամենապարզունակ ծուղակի մեջ»: Նա հարկադրված նշում է, որ, ցավոք, շատ հեղինակներ դիմում են այդպիսի աճպարարության, որպեսզի ցույց տան իրենց իրավացիությունը»[75]:

Մեր «վկաների հարցաքննությունը» մոտենում է ավարտին: Մինչև հիմա մենք խոսել ենք միայն ոչ քրիստոնյա հեղինակների մասին: Վերջացնելով, ցույց կտանք նաև քրիստոնեական միջավայրից դուրս եկած հնագույն արտաավետարանական վավերաթղթերը:

Նորկտակարանյան գրականության առավել վաղ ստեղծագործությունները Պողոս առաքյալի Թղթերն են: Նրա ռեալականությունը, որպես պատմական անձի, կասկածի տակ չի դրվել անգամ առասպելաբանների մեծամասնության կողմից: «Եթե ընդհանրապես գոյություն է ունեցել,- գրել է Դրևսը,- «մեծ անձնավորություն», որը կյանքի է կոչել նոր կրոն, ապա դա եղել է ոչ թե պսեվդոպատմական Հիսուսը, այլ Պողոսը, որը իր վեհ մտահայեցողության և բարոյաբանական գործունեության խորքերում ձեռք բերեց այն ուժերը, որոնք քրիստոնեությանը հնարավորություն ընձեռեցին հաղթանակ տանել իր հետ մրցակցող մյուս կրոնների հանդեպ: Քրիստոնեության ծնունդը առանց Հիսուսի լիովին բացատրելի է, առանց Պողոսի այն բացատրել չի կարելի»[76]:

Բայց այդ դեպքում, Պողոս առաքյալը պետք է լիներ մեկը Նրան-

ցից, ովքեր ստեղծեցին «Քրիստոսի մասին առասպելը», և հետևապես, ապրեր ավետարանական ժամանակաշրջանից զգալի ժամանակ հետո: Մինչդեռ Պողոսը Հիսուսի կրտսեր ժամանակակիցն էր:

Նա ծնվել է Նրանից 10-15 տարի հետո, Երուսաղեմում առաջին անգամ եղել է մոտ 30 թ., որտեղ սովորել է Գամաղիելի դպրոցում, քրիստոնյա է դարձել մոտ 36 թ., այսինքն՝ դեռ Պիղատոսի ժամանակ (26-37), Նաբաթեյական թագավոր Արետա IV (8 թ. մ. թ. ա. 40 թ. մ.թ.) կառավարման օրոք: Պողոսը քարոզել է Կլավդիոս կայսեր (41-54), պրոկուրատոր Աքքայա Գաղլիոնի (52) օրոք, Հրեաստանի կուսակալներ Մ.Ա.Փելիքսի (52-60) և Պ. Ֆեստի (60-62), քահանայապետ Անանիեյի (49-50), Ագրիպաս II (48-66) թագավորի օրոք:

Պատմական շատ վավերագրերից հայտնի բոլոր այս անձերը ուրվագծվում են «Գործք Առաքելոց»-ում և Թղթերում[77]:

Պողոս առաքյալի Թղթերը գրվել են 50-60-ական թվերին: Բոլոր դեպքերում դրանցից և ոչ մեկը չէր կարող երևան գալ Երուսաղեմի (70 թ.) անկումից հետո: Տաճարի կործանումը Պողոսին վճռորոշ հիմք տվեց հին Օրենքի ջատագովների դեմ, և նա չզլացավ դրանից օգտվել: Թղթերում այդ իրադարձության մասին դույզն ինչ ակնարկ չկա: Այդ պատճառով, վերագրել այն II դարի՝ բացարձակապես անհիմն է:

Դրևսը հույս ուներ դրությունից դուրս գալ, հայտարարելով, իբր «Պողոսը ոչինչ չի իմացել Հիսուսի մասին»[78]: Այնինչ, առաքյալի Թղթերում խոսվում է Քրիստոսի ծննդի և Նրա քարոզչության, Նրա տասներկու առաքյալների, Խորհրդավոր ընթրիքի, խաչելության և Հարության մասին: Պողոսը հաղորդում է իր հանդիպումների մասին Հիսուսին անձամբ ճանաչող մարդկանց՝ Պետրոսի, Հակոբի և Հովհաննեսի, ինչպես նաև Հարության «շատ» ուրիշ վկաների հետ[79]: Հասկանալի է, որ, չլինելով Հիսուսի անմիջական աշակերտը, առաքյալը քիչ է խոսում Նրա կյանքի մանրամասների մասին, թողնելով այն որպես ականատեսների մենաշնորհ: Սակայն անփորձ ընթերցողի համար անգամ պարզ է, որ, վկայելով Քրիստոսի մասին, Պողոսը նկատի ուներ ոչ թե առասպելական էակի, այլ Հիսուս Նազովրեցուն:

Բայց ինչու է Քրիստոսի երկրային կյանքի մասին այդքան քիչ ասված Հովհաննու Հայտնության մեջ: Դա պայմանավորված է Հովհաննու Հայտնության ընդհանուր միստիկ-խորհրդանշանային բնույթով: Հայտնի է, որ վախճանաբանական ոգով գրված նաև մյուս վաղ քրիստոնեական գրքերը, օրինակ՝ Հերմեսի «Հովիվը», լռությամբ են շրջանցում Հիսուսի երկրային ուղին: Եվ, այնուամենայնիվ, Հովհաննու



Հայտնությունից իմանում ենք, որ Հիսուս Քրիստոսը սերվել է Հուդայի սերնդից, խաչվել է և հարություն առել, որ Նա ունեցել է աշակերտներ և ավետել է Բարի Լուր բոլոր ժողովուրդներին[80]:

Մնում է ամփոփել արդյունքները:

Ընդունենք, որ Ավետարանները մեզ չէին հասել: Այնուամենայնիվ, մյուս աղբյուրներից մենք կիմանայինք, որ Տիբերիոս կայսեր ժամանակ Հրեաստանում ապրել է քարոզիչ Հիսուսը Նազարեթից: Նրա ուսմունքը նվաճել է շատ հետևորդներ, բայց իշխանությունների մոտ այն կասկած հարուցեց: Օրենքի պահապանները հանձնեցին Նրան Պիղատոսին, և նա մահվան դատապարտեց Հիսուսին որպես Հռոմի համար վտանգավոր «Հրեաստանի Թագավորի»: Նազովրեցու մահից հետո առեղծվածային երևույթները համոզեցին աշակերտներին, որ Նա հարություն է առել, որ Նա մարգարեների խոստացյալ ճշմարիտ Ազատարարն է: Այսպես ծնվեց քրիստոնեությունը, որը սկսեց տարածվել ողջ կայսրությունով մեկ:

Հիմա պատկերացնենք, որ այս կամ այն պատճառով կորսված են եղել բոլոր արտավետարանական վկայությունները Քրիստոսի մասին: Դա նույնպես չէր հաստատի առասպելաբանների ճիշտ լինելը: Չէ որ ցանկացած լայնածավալ հոգևոր շարժում, լինի այն կոմփուկիոսականություն, ստոիկականություն կամ իսլամ, չէր կարող ծագել առանց առաջնորդ հիմնադիրների: Ինչու այդ կանոնից բացառել Եկեղեցին, նրա սկիզբը պատկերելով «ինքնակամ ծագումի» տեսքով:

Ավետարաններում պատկերված իրադարձությունները կատարվել էին միայն մի քանի տասնամյակ առաջ այն բանից, երբ սկսեցին գրի առնվել: Այնինչ, առասպելները ձևավորվում են դարերով:

## «ԻՆՉ ՈՐ ՄԵԿԸ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ Է ՈՒՆԵՑԵԼ...»

Համոզվելով մտակառուցման խախուտությանը, որը նրանք այդքան երկար ու ջանադրաբար բարձրացրին, առասպելաբաններն սկսեցին պատրաստվել նահանջի: Դեռևս 1902 թ. Ջոն Ռոբերտսոնը հայտարարեց, որ, իր կարծիքով, Հիսուսը կարող է գոյություն ունեցած լինել որպես «ուսուցիչ-նորարար» և, հնարավոր է, Նա հավակնել է Փրկչի դերի, բայց այդքանով վերջանում են Նրա մասին եղած արժանահավատ տեղեկությունները[81]: Դրա հետ մեկտեղ, Ռոբերտսոնը, հետևելով Թալմուդին և Ցելսին, Հիսուսին կոչում է «Պանտերոսի որդի»: Դրանով

իսկ, նա կրկնեց լեզվաբանական հին սխալը, որում Պարտենոս՝ Կույս բառը շփոթվել է Պանտերոս անվան հետ:

Մարքսիստական գրականության մեջ առաջիններից մեկը, որն սկսեց դիրքերը հանձնել, Արչիբալդ Ռոբերտսոնն էր: 1953 թ. լույս տեսած «Քրիստոնեության ծագումը» գրքում նա ընդունեց, որ ավետարանական պատմությունը բովանդակում է «պատմության տարրեր»[82]: Նրա օրինակին հետևեց իտալացի կոմունիստ-պատմաբան Ամբրոջո Դոնինին: Նա գրել է. «Պատմական գիտության առաջադեմ հոսանքները գիտակցելով այն ուղղությունների վտանգը, որոնք ուշադրություն չեն դարձնում քրիստոնեական ավանդությունների կազմավորման պատմական-սոցիալական պրոցեսին, առասպելականության հասկացությունների վերարժեքավորման անհրաժեշտություն են զգում»: Ինչ վերաբերում է Հիսուսի կյանքին, ապա Դոնինին ենթադրում է, որ կարելի է «միայն փորձել վերականգնել Նրա ինչ-որ ընդհանուր գծերը»[83]:

Վերջ ի վերջո, մեր առասպելաբանները ևս ստիպված էին համաձայնել այդ հայեցակետի հետ, չնայած ընդունեցին այն մեծագույն դժկամությամբ: Այսպես՝ Ս. Կովալևը ասելով, որ «վաղ քրիստոնեական գրականության շատ գործող անձեր, անկասկած, պատմական անձեր են», այդ զիջումը տարածեց միայն Հովհաննես Մկրտիչի, Պողոս առաքյալի և Հակոբ առաքյալի վրա, բայց Քրիստոսի ռեալականությունը առաջվա պես ժխտեց[84]:

Ընդ որում, մեծ նվաճումն արդեն այն էր, որ Կովալևը դադարեց Հիսուսի մասին ոչ քրիստոնեական վկայությունները համարել կեղծիք:

Մյուս խորհրդային պատմաբան Ա. Կաժդանը, որի դատողությունները «Հիսուս աստծու» մասին մենք մեջ բերեցինք վերևում,1966-ին գրել է. «Ավետարանական ավանդույթների պատմությունը չի հակասում այն բանին, որպեսզի ավետարանների կազմողները կարողանային հաղորդել Հիսուս անունը կրող մարդու՝ Փրկչի իրական պատմության ինչ-որ սուղ տարրեր[85]: Այդ նույն ոգով է արտահայտվում Մ. Կուբլանովը, որի խոսքերով. «Ձևավորվող քրիստոնեությունը կարող էր համախմբվել «հրաշագործ անձերի» դարաշրջանի շատ «մարգարեներից» մեկի, ինչ-որ քարոզչի անձի շուրջը[86]: Իսկ ինչպես վարվել տխրահռչակ «դարի լռության» հետ: Դրան պատմաբանը պատասխանում է. «Դարի լռության» մասին դրույթը, ոչ քրիստոնյա հեղինակների կարծես թե միաբան լռությունը, հավասարապես նաև այն այլազան եզրակացությունները, որոնք արվում էին այդ հիմքի վրա, կորցրել են այն նշանակությունը, որը տրվում էր դրանց»[87]: Ավելի հստակ, թվում է, դժվար



է արտահայտվել:

Բայց ընդունելով Քրիստոսի պատմականությունը, չափավոր քննադատականության կողմնակիցները հիմա էլ ձգտում են նվազեցնել Նրա դերը որպես քրիստոնեության հիմնադրի: «Հիսուսի խնդիրը» հայտարարվեց ոչ էական: «Մարքսիստական գիտության համար,- գրում է նման հեղինակներից մեկը,- սկզբունքային նշանակություն չունի հարցն այն մասին՝ ապրել է, թե չի ապրել Հրեաստանում Օգոստոսի և Տիբերիոսի թագավորելու տարիներին Հիսուս անունով մի մարդ, որը մահվան է դատապարտվել Պոնտացի Պիղատոսի ժամանակ և հետագայում աստվածացել է իր նախապաշարված հետևորդների կողմից: Քրիստոնեական կրոնը, ինչպես և բոլոր նշանակալից կրոնական շարժումները, ստեղծվել են աստիճանաբար՝ հավատացյալ զանգվածների կողմից»[88]:

Սակայն եթե այդ հարցն իրականում նշանակություն չունի, ապա ինչ իմաստ ունի նրան այդքան տեղ հատկացնելը աթեիստական քարոզչության մեջ: Ինչու այդքան երկար և կատաղի ձգտում էին ապացուցել, որ Քրիստոսը «չի եղել», որ Նրա գոյությունը երկրորդական փաստ է:

Բացի դրանից, տարակուսանք են հարուցում անանուն «հավատացյալ զանգվածները» քրիստոնեության կերտողի դերում: Ցանկացած ժամանակաշրջան ցույց է տալիս, որ «զանգվածները», որպես կանոն, եղել են կամ պահպանողական միջավայրը, հին հավատալիքները պահպանող կամ էլ մոտ բերվող հրից բռնկվող դյուրավառ նյութ: Ստեղծագործական խոյանքները նոր հեռանկարների և գաղափարների հանդեպ բխել են անհատներից: Հենց նրանք են, ինչպես կիզակետ, կենտրոնացրել իրենց մեջ դարերի փորձը և սերունդների սպասումները: «Եթե կա մի բնագավառ,- իրավացիորեն գրում է Ս. Բուլգակովը,- որտեղ ստեղծագործական անհատականության բացառիկ դերը առավել անվիճելի է և ակներև, ապա դա այն է, որտեղ գործում է անիմանալի, հիրավի, մարդուն մոգական ճանապարհով պայծառացնող ներշնչանքը, այդպիսի բնագավառ են կրոնը և արվեստը: Փորձեք հասկանալ իսլամի ծագումը, նրանից դուրս գցելով Մուհամեդին»[89]:

Նույնչափ անհեթեթ կլիներ արվեստի պատմությունից վերացնել Ռաֆայելին, Շեքսպիրին կամ Բեթհովենին: Չէ որ արվեստի պատմությունը նշանակալից չափով արվեստագետների պատմությունն է, իսկ իմաստասիրության պատմությունը, ըստ էության, ոչ այլ ինչ է, եթե ոչ իմաստասերների պատմությունը: Անգամ այնպիսի հոգևոր արժեքնե-

րից աղքատ ոլորտում, ինչպիսին քաղաքական կյանքն է, մենք հայտնաբերում ենք անհատի կամքի հզոր ներգործություն իրադարձությունների ընթացքի վրա: Բավական է հիշեցնել, որ XX հարյուրամյակը միայն գիտի մի քանի դեմքեր, որոնք որոշել են դարաշրջանի ուղղությունը: Հրաժարվել անհատի խնդրից, նշանակում է չնկատել պատմական պրոցեսի կարևորագույն կողմերից մեկը:

Ճիշտ է, հեռավոր անցյալում, երբ տիրապետող էր տոհմային, ցեղային, ժողովրդական գիտակցությունը, անձնավորությունը, կարծես, թե ամբողջի ընդհանրականության հարաբերությամբ, նահանջել էր երկրորդ պլան: Այստեղից, սակայն, չի հետևում, որ «զանգվածներն» ստեղծել են իրենք: Պարզապես, հին աշխարհի բանաստեղծների, քանդակագործների և նկարիչների անունները հաճախ մնում էին անհայտ: Նրանք մնում էին դեռ սերտորեն կապված ավանդույթի հետ և չէին համարձակվում հակադրվել դրան: Հենց այդ ժամանակաշրջաններում են ծագել ավանդազրույցները, էպոսները, առասպելները:

Բայց մի քանի հարյուրամյակ մինչև Քրիստոս, երբ հայտնվեցին մեծ մտածողները, հոգևոր առաջնորդները և բարենորոգիչները՝ համաշխարհային կրոնների ստեղծողները, սկսվեց անհատի ազատագրումը ավանդույթի շղթաներից: «Զանգվածները» սկզբնապես մեծ դժվարությամբ էին ընդունում այն նորը, ինչը տալիս էին նրանց մարգարեները և ուսուցիչները: Երեմիա, Կոմփուկիոս, Զրադաշտ, Անաքսագոր, Սոկրատ և Արիստոտել, ահա մի քանի անուններ միայն այն մարտիրոսների ցուցակից, որոնք ընդունվեցին չհասկացված, որոնց թունավորեցին և սպանեցին: Հոգևոր առաջնորդներ-բարենորոգիչները ստիպված էին մենամարտել սովորույթի ուժով գործող ավանդույթների, ավանդավարքերի և ծեսերի դեմ: Նրանց ժառանգությունը ցարդ կրում է իր վրա իրենց անհատականության, իրենց անկրկնելի նկարագրի անջնջելի կնիքը, նրանց ներքնաշխարհը այսօր նույնպես ազդեցություն է թողնում միլիոնավոր մարդկանց հոգիների վրա: Հենց դա միայն վիճելի է դարձնում այն պնդումը, իբր քրիստոնեության հիմնադրի հարցը պատմաբանի համար ինչ-որ «անկարևոր» բան է:

Մի շարք օրինակներ ցույց են տալիս, թե ինչքան հեռու կարող են գնալ նրանք, ովքեր չեն ցանկանում հաշվի նստել Քրիստոսի պատմական ռեալականության հետ: Մասնավորապես, Հանրի Բարբյուսը, առանց որևէ հիմքի պատկերել է Հիսուսին որպես հեղափոխական, և քիչ է մնում որ՝ աթեիստ[90]: Իսկ գիտնական-նարոդովոլեց Նիկոլայ Մորոզովը նույնացրել է Քրիստոսին միաժամանակ Մովսեսի, Մուհամեդի.



Ռամզես 11-ի և Վասիլի Մեծի հետ[91]: Երբեմն նման արտառոց երևակայությամբ ստեղծված վարկածներ են առաջ բերվում, որոնք սահմանափակվում են. «Ինչ-որ մեկը գոյություն է ունեցել, բայց մենք նրա մասին ոչինչ չգիտենք» պնդումով:

## «ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍԽԱԼՆԵՐԻ ԹՆՋՈՒԿԸ»

Ժամանակակից աթեիստ հեղինակները, ինչպես տեսանք, պատրաստ են արդեն համաձայնել այն իրողության հետ, որ Ավետարանները «հաղորդում են մի շարք տեղեկություններ քարոզիչ Հիսուսի իրական կյանքի մասին»[92]: Բայց այդ հեղինակներն իրենց զինանոցում ունեն մի շարք փաստարկներ, որոնցով նրանք հույս ունեն սասանել Նոր Կտակարանի գրքերի արժանահավատությունը: «Մարդկանց հիշողության մեջ,- ասում են նրանք,- պատմական հիշողության մեջ համարյա երկու հազար տարի Քրիստոսի կերպարը ձևավորվել է որպես բազմադեմ և հակասական ինչ-որ մի բան»[93]: Որպես ապացույց բերում են Նրա անձնավորության այլազան մեկնաբանությունները անցյալում և ներկայումս: Ոմանք Նրան համարում են մարգարե և բարոյախոս, մյուսները՝ չբռնանալու կողմնակից, երրորդ կողմը՝ խռովարար: Կարելի է, արդյոք, հարցնում են մեզ, նման պարագայում ճշգրիտ պատկերացում կազմել այդչափ հակասական մարդու մասին:

Բայց հենց Հիսուսի բազմակողմանիությունն է խոսում Նրա անձնավորության մեծության մասին, այն մասին, որ Նա չի տեղավորվում սխեմաների և միանշանակ բնութագրումների մեջ: Ի դեպ, դա վերաբերում է նաև բոլոր ժամանակների շատ նշանավոր մարդկանց: Ինչքան ականավոր է մարգարեն, իմաստասերը կամ գրողը, այնքան մեծ է նոր, երբեմն անսպասելի կարծիքների երևան գալու հավանականությունը նրա մասին: Այսպես, ի դեմս Մուհամեդի, տեսել են մեկ որպես քաղաքական արկածախնդրի, մեկ որպես խաբեբայի, մեկ որպես ներշնչված հայեցողի, իսկ Սպինոզային պատկերել են մեկ որպես աթեիստ, մեկ՝ որպես միստիկ:

Հետազոտողներն ունեն ուրիշ փաստարկներ ևս Ավետարանի արժանահավատության դեմ: Նրանք մատնանշում են հակասություններ, որոնք իբր նվազեցնում են Նոր Կտակարանի պատմական արժեքը: Դեռևս հին առասպելաբաններն էին առաջ քաշել այդ փաստարկը որպես իրենց հարձակումների «ծանր հրետանի»:

Սովորաբար, երկու կարգի հակասություններ են մատնանշում, փաստերի նկարագրության մեջ և ուսմունքի շարադրման մեջ: Կանգ առնենք նախապես Քրիստոսի կյանքի իրադարձությունների մասին ավետարանիչների պատմությունների «հակասությունների» վրա:

Վաղուց արդեն կասկածում էին, թե կարող էր, արդյոք, Հովսեփը համարձակվել Մարիամի և Մանկան հետ գնալ Երուսաղեմ, որը վկայվում է Ղուկասի մոտ, եթե, համաձայն Մատթեոսի, նա գիտեր Հերովդեսի չարակամ մտահղացման մասին[94]: Պատասխանը գտնում ենք Մատթեոս առաքյալի մոտ. Հերովդեսը լսեց Հիսուսի մասին, երբ Նա մոտ երկու տարեկան էր, իսկ Տաճար Մանկանը տարել են մեկ ամսական հասակում, ինչպես որ այդ պահանջում էր Օրենքը[95]:

Մատթեոսը և Մարկոսը մանրամասնորեն պատմում են, թե ինչպես Հովհաննես Մկրտիչը մկրտեց Հիսուսին, մինչդեռ Ղուկասի մոտ պարզ ասվում է, որ այդ ժամանակ Հովհաննեսը գտնվում էր բանտում, և Հիսուսը մկրտվել է առանց նրա»[96]: Սակայն բավական է ուշադիր կարդալ և համեմատել տեքստերը, համոզվելու համար այդ շինծու «հակասության» անիմաստության մեջ: Ղուկասը, խոսելով Հովհաննեսի ձերբակալման մասին, պարզ հասկացնել է տալիս, որ նա բռնվել էր Հիսուսի մկրտությունից հետո:

«Որտեղ է անցկացրել Իր կյանքը Հիսուսը: Առաջին երեք Ավետարաններն ասում են, որ Գալիլիայում, իսկ Հովհաննեսի Ավետարանը վկայում է, որ Երուսաղեմում»: Բայց Հովհաննեսը նույնպես գիտի Քրիստոսի կյանքի գալիլիական շրջանի մասին, ճիշտ այնպես, ինչպես որ մյուս ավետարանիչներն են հաղորդում Հրեաստանում արած քարոզների մասին[97]:

«Յուրաքանչյուր երեխա Երուսաղեմում պետք է որ Հիսուսին դեմքով ճանաչեր: Իսկ այստեղ հանկարծ պարզ է դառնում, որ բացարձակապես ոչ ոք Նրան չգիտի և չէին ճանաչի, եթե չլիներ Հուդան»: Բայց չէ որ Հիսուսը Երուսաղեմում եղել էր կարճ ժամանակով, ընդամենը մի քանի օր: Առաջներում էլ Նա մայրաքաղաք էր գալիս կարճ ժամանակով, իսկ տոնակատարության օրերին այնտեղ էին հոսում հարյուր հազարավոր մարդիկ: Սպասավորները, որոնք ուղարկվել էին Հիսուսին ձերբակալելու, կարող էին բնավ էլ Նրան դեմքով չճանաչել: Բացի այդ, դեպքը տեղի էր ունենում գիշերը և պահանջում էր շտապողականություն:

«Դեռ նախօրեին ողջ ժողովուրդը եկել էր Տաճար Քրիստոսին լսելու, քահանայապետները և դպիրները Հուդայի հետ փնտրում էին



անաղմուկ իրավիճակ՝ «ժողովրդի ներկայությամբ» Նրան չկալանավորելու համար: Իսկ այստեղ հանկարծ պարզ է դառնում, որ «ողջ ժողովուրդը» դեմ է Հիսուսին և պահանջում է Նրան մահապատժի ենթարկել»: Առաջինը, «ողջ ժողովուրդ» արտահայտությունը վերաբերում է ոչ թե Երուսաղեմի բազմաքանակ բնակչությանը, այլ արքերեցների կողմից գրգռված մարդկանց մի փոքր խմբի: Երկրորդ, դա «ավետարանական հակասություն» չէ, այլ ամբոխի ծայրահեղ հեղհեղուկության վկայություն, որի օրինակները բազմաթիվ են պատմության մեջ: Հաճախ ժողովուրդը նույն անողոքությամբ հարձակվում է իր երբեմնի հերոսի վրա, ինչ խանդավառությամբ փառաբանում էր մինչ այդ...

Այդպիսի մակերեսային բնույթ են կրում նաև մյուս «հակասությունները»: Շատ հաճախ դրանք հնարված են տենդենցիոզ քննողների կողմից, որպեսզի անվստահություն առաջացնեն Ավետարանների նկատմամբ:

Իհարկե, տեքստերում կան նաև իրական անհամապատասխանություններ: Օրինակ՝ Հիսուսի երկու սերնդաբանությունը: Որն է դրանցից իսկականը: Եվ որտեղից են դրանք քաղված: Հայտնի է. որ հրեաները խնամքով պահպանում էին իրենց տոհմագրական գրառումները: Ավետարանիչները կարող էին օգտվել դրանցից, հատկապես, որ ընդհուպ մինչև IV դարը տարբեր քաղաքներում դեռ ապրում էին Հիսուսի հարազատները[98]: Ըստ երևույթին, ճշգրիտ ծագումնաբանությունը Ղուկասի մոտ է, քանի որ Մատթեոսի մոտ այն կրում է բացահայտ սխեմատիկ և խորհրդանշային բնույթ: Հիսուսի նախնիներին թվարկելով, Մատթեոսը սոսկ ցանկացել է ակնառու կերպով պատկերել Նրա թագավորական ծագումը:

Դե, տարաձայնություններն ինքնին չեն խոսում Ավետարանիչների դեմ: Երբ նույն փաստերի նկարագրությունն արվում է միմյանցից անկախ, տարբեր մարդկանց կողմից, անխուսափելի են հակասությունները և փոփոխակները, կապված պատմողի առանձնահատկությունների և այլ մասնավոր պատճառների հետ: Եվ, արդեն, իհարկե, զարմանալի չէ, եթե մի մարդը հաղորդում է մի բան, որի մասին մյուսը չի խոսում: Նա կարող էր չիմանալ այդ փաստը, դրան նշանակություն չտալ և կամ բաց թողնել այն մեզ անհայտ շարժառիթների պատճառով: Հենց նման բանի մենք հանդիպում ենք Ավետարաններում: Հովհաննեսը և Մարկոսը, օրինակ՝ չեն խոսում Հիսուսի մանկության մասին, Մատթեոսը հաղորդում է այդ մասին միայն մի քանի մանրամասներ, իսկ Ղուկասը խոսում է նույնիսկ Ծնունդին նախորդող եղելություն-

ների մասին:

Ուսմունքի մեջ եղած «Հակասությունները» իր ժամանակին ջանասիրաբար հավաքել և աղյուսակի տեսքով ներկայացրել է Ա. Նեմոևսկին իր «Հիսուս Աստվածը» գրքում[99]: Նրա ցուցակի գլխավոր պակասությունը Հիսուսի խոսքերը իր համատեքստում չդիտարկելու չկամությունն է: Նա, առանց պատասխանատվության զգացումի, խոսքերի կապակցությունից դուրս է հանում արտահայտություններ և դրանով իսկ համեմատությունը դարձնում անիմաստ: Ահա մի քանի օրինակներ`

1. «Երանի խաղաղարարներին»:

2. «Մի կարծեք, թե եկա խաղաղություն հաստատելու, այլ` սուր»:

Բայց միթե պարզ չէ, որ առաջին դեպքում խոսվում է խաղաղասիրության պատվիրանի մասին, իսկ երկրորդում` Քրիստոսը կանխատեսում է, որ Իր ուսմունքի շուրջ պայքար է բորբոքվելու:

1. «Մի կարծեք, թե Օրենքը ջնջելու եկա»:

2. «Նոր գինին նոր տիկերի մեջ են լցնում»:

Օրենքի էությունը, համաձայն Քրիստոսի ուսմունքի, երկու պատվիրաններն են` սեր առ Աստված և սեր մերձավորի հանդեպ: Հետագա շրջանի հուդայականության բազմաթիվ ծեսերը, այսպես կոչված` «սուրբ հայրերի ավանդները», Նա դիտում էր որպես երկրորդական, իսկ երբեմն` Օրենքի ոգին մթագնող:

1. «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել»:

2. «Տվեք կայսրինը կայսեր, իսկ Աստծունը` Աստծուն»:

Առաջին պատվիրանում դատապարտվում է ունայնականությունը և հոգեկան երկատվածությունը, քանզի մարդու սիրտը պետք է պատկանի միայն Աստծուն: Երկրորդ արտահայտությունը վերաբերում է հրեաներին հուզող մասնավոր հարցի, հարկավոր է, արդյոք, հռոմեական կառավարիչներին հարկեր մուծել:

1. «Մի՛ դատեք, որ չդատվեք»:

2. «Նստեք տասներկու գահերին` դատելու Իսրայելի տասներկու սերունդները»:

Լեռան քարոզում խոսվում է դատելու մեղանչականության մասին: Երկրորդ դեպքում` «դատել» նշանակում է «կառավարել»: «Դատավոր» բառը սեմիտական Արևելքում (Փյունիկե, Կարթագեն, Իսրայել) կառավարչի հոմանիշն է[100]: Առաքյալներն ընտրված էին որպես Աստծո նոր ժողովրդի հիմնադիրներ, Իսրայելի տասներկու հնագույն նահապետների, նախահայրերի նման:



Կարծում ենք` այս օրինակները բավական են, որպեսզի ընթերցողը համոզվի, թե ինչպիսին է «ուսմունքի մեջ եղած հակասությունների» արժեքը: Նման մոտեցման դեպքում, ինչքան ուզեք, կարելի է հակասություններ գտնել հին ու նոր աշխարհի ցանկացած ստեղծագործության մեջ:

Ավետարանիչներին մեղադրում են նաև աշխարհագրությանն ու պատմությանը վերաբերող սխալներում:

Հաճախ ստիպված ենք լինում լսել հեգնական նկատողություններ այն բանի առիթով, որ Ավետարանների հեղինակները վատ են ծանոթ Պաղեստինին, երբ պատմում են, օրինակ` Գեննեսարեթյան լճի փոթորկի մասին[101]: Մինչդեռ նավակով լողալը լճում, որի երկարությունը 20 կմ է, իսկ լայնությունը` 9 կմ, այնքան էլ վտանգավոր չէ, ինչպես թվում է առասպելաբաններին: Հայտնի է, որ Դեննեսարեթի ձկնորսները այսօր էլ հայտնվում են շրջապատի լեռների հանկարծաշունչ փոթորկի վտանգի մեջ[102]:

Այնուհետև, «Պատմելով, որ Քրիստոսը Տիր քաղաքից գալիս է դեպի Գեննեսարեթյան լիճ, ավետարանիչները ստիպում են Նրան անցնել Դեկապոլիսով: Իսկ դա մոտավորապես այն է, ինչ-որ ասենք, ընթերցողը, ցանկանալով Մոսկվայից ընկնել Լենինգրադ, անցնի Ուկրաինայով»[103]: Այդ տողերի հեղինակները կատարելապես անտեսում են ճամփորդության նպատակը: Ոչնչից չի երևում, որ Իր փոքրիկ երկրով անցնելիս Հիսուս Քրիստոսը միշտ ընտրում էր կարճ ճանապարհը: Ընդհակառակը, եթե դա համապատասխանում էր Իր մտադրություններին, Նա լիովին կարող էր անցնել հեռավոր շրջայցի:

Մատնանշում են և այն, որ ավետարանիչները չգիտեն պաղեստինյան ֆաունան` կենդանական աշխարհը[104]: Բայց Ավետարաններում թվարկված բոլոր կենդանիները` ոչխարը, այծը, ավանակը, եզը, ուղտը, գայլը, աղավնին, ճնճղուկը, օձը ճիշտ ու ճիշտ Պաղեստինի բուն բնակիչներ էին և բազմաթիվ անգամներ հիշատակվել են Հին Կտակարանում[105]: Նկատի ունենալով աղվեսներին, որոնց մասին ասվում է Ավետարանում, Մուտյե-Ռուսսեն կասկածանքով նշում է. «Ես չգիտեմ, լինում են, արդյոք, Իտալիայում այդչափ հաճախ հանդիպող աղվեսներ Պաղեստինում նույնպես[106]: Բայց բավական էր նայել ցանկացած կենդանական աշխարհագրության դասագիրք, այդ բանում համոզվելու համար: Աղվես-ֆենեկները տարածված են ողջ Մերձավոր Արևելքում և մինչև օրս բնակվում են Իսրայելում:

«Ավետարաններում հիշատակված չեն նաև,- գրում է այնուհետև

է. Մուտյե-Ռուսսեն,- Պաղեստինի, ինչպես նաև ողջ Միջերկրականի համար ամենասովորական ծառատեսակները՝ ձիթենին, նարնջին, կիտրոնածառը, նռնենին, նշենին... Բայց ահա, ամբողջովին աներևակայելին այն է, որ Պաղեստինի բոցավառ երկնքի տակ հնարավոր է գինի պատրաստել»[107]: Իհարկե, Նոր Կտակարանում թվարկված չէ Իսրայելի բուսական աշխարհի յուրաքանչյուր տեսակը: Բայց Ավետարանը միթե Մերձավոր Արևելքի բնության աշխարհագրական ակնարկ է: Ինչ վերաբերում է այգիներին և գինուն, ապա. թերևս, հազվադեպ է, որ Հին Կտակարանի որևէ գրքում դրանց մասին հիշատակություն չլինի: Այգիների մասին խոսում է նաև Փլավիոսը, իսկ հնագետները Պաղեստինում հայտնաբերել են ոչ քիչ հնագույն հարմարանքներ գինեգործության համար[108]:

Հարձակումների մշտական առարկա է դարձել «մանանեխի հատիկի» առակը: Հետազոտողները այն համարում են անհամապատասխան, մոռանալով այն մասին, որ մենք չգիտենք, թե Քրիստոսը ինչ բառ է օգտագործել արամեերեն լեզվով: Չէ որ բույսերի անվանումները տարբեր ժողովուրդների լեզուներով մենք կարող ենք հիմա համաձայնեցնել միայն XVIII դարում Լինեյի կողմից մտցված ընդհանուր լատինական անվանացուցակների օգնությամբ: Ինչ զարմանալի բան կա, եթե հույն թարգմանիչը օգտագործել է (կարող է պատահել և սխալմամբ) «սինապս» բառը մի այլ բառի փոխարեն: Կարծիք կա, որ Քրիստոսը նկատի է ունեցել ծառը, որի սերմերը օգտագործում էին որպես մանանեխ, որպես համեմունք: Այլ հեղինակներ գտնում են, որ նման դեպքում խոսքը գնացել է սև վայրի մանանեխի մասին: Հաճախ այն ունենում է երեք մետր բարձրություն[109]: Ցանկացած դեպքում պետք չի զարմանալ, երբ Քրիստոսը «մանանեխի» հատիկը անվանում է սերմերից ամենափոքրը: Նրա խոսքին հատուկ էին հաճախ հիպերբոլիկ դարձվածքները (օրինակ՝ ուղտի և ասեղի ծակի մասին արտահայտությունը կամ՝ մժղուկները քամում եք և ուղտերը կուլ եք տալիս): Խոսելու այդ մաներան յուրացվում էին երբեմն նաև առաքյալների կողմից: Այսպես, Հովհաննեսը նկատում է, որ եթե Քրիստոսի գործերի մասին գրվեր, ապա աշխարհը չէր կարող տեղավորել Նրա մասին եղած գրքերը:

Այժմ անցնենք «պատմական սխալներին»: Քննողները միաձայն ժխտում էին I դարում Նազարեթ քաղաքի գոյությունը, քանի որ ոչ Հին Ուխտում, ոչ Փլավիոսի մոտ, ոչ Թալմուդում այն չի հիշատակված[110]: Այնինչ, առաջին, Նազարեթը Գալիլիայի մի աննշան բնակավայրերից էր (Փլավիոսը այպիսիք հաշվում է 200-ից ավելի), և երկրորդ, վերջերս գտնված հրեական արձանագրության մեջ Նազարեթը նշվում է քաղաքների թվում, որտեղ ապրում էին քահանաները 70 թ. Տաճարի կործանումից հետո: Պ. Բագատտիի Նազարեթում կատարած պեղումների շնորհիվ պարզվել է, որ այդ փոքր քաղաքը գոյություն է ունեցել ոչ միայն Քրիստոսի օրերին, այլև, ավելի վաղ[111]:

Ավետարանիչ Ղուկասի պատմությունը մարդահամարի մասին, որը համընկավ Ծննդի հետ, նույնպես շատ հաճախ համարում էին անստույգ: Ըստ գործի էության, ինչու է դրա «կարգադրությունը» գալիս ոչ թե Հերովդեսից, այլ Օգոստոսից: Ինչու այն չի հիշատակվում այլ աղբյուրներում: Եվ, վերջապես, ըստ Ղուկասի, ինչու այն անցկացրին այդչափ տարօրինակ («յուրաքանչյուրը գնում էր գրանցվելու իր քաղաքում»):

Հայտնի է մի քանի մարդահամարների մասին, որոնք Օգոստոսը անց էր կացնում դաշնակից երկրներում մի քանի տարվա ընթացքում մ. թ. ա.: Հովսեփոս Փլավիոսը տալիս է այն անձանց թիվը, որոնք հրաժարվում էին հավատարմության երդում տալ Օգոստոսին: Հետևապես, Հերովդեսը որպես կիսանկախ միապետ, անցկացնում էր ինչ-որ ցենզ* իր երկրում: Մարդահամարի անցկացման ձևը չնայած առաջին հայացքից թվում էր անսովոր, բայց հայտնի էր Արևելքում և կիրառվել է հռոմեացիների կողմից: Եգիպտական տեքստում (մոտ 104 թ. մ. թ.) մենք կարդում ենք. «Գայոս վիբիոս Մաքսիմիոսը հրամայում է՝ նկատի ունենալով, որ ես պատրաստվում եմ մարդահամար անցկացնել, նա, ով ինչ-ինչ պատճառով հեռացել է տնից, թող վերադառնա, որպեսզի անցնի ցենզը, ըստ ընդունված կարգի»[112]:

Ղուկասը նրանց հիշատակած մարդահամարը վերագրում է Կվիրինիոսի Ասորիքում կառավարելու ժամանակներին: Թերահավատները հրճվանքի մեջ են. «Այն ժամանակներին, որին Եկեղեցին վերագրում է Քրիստոսի ծնունդը՝ «Հերովդեսի օրերին», Կվիրինիոսը չի կառավարել Ասորիքում»[113]: Բայց գիտակ գիտնականների կարծիքով, Կվիրինիոսը Ասորիքում կառավարել է երկու անգամ, և առաջին անգամը մի քանի տարի առաջ մ. թ. ա.114:

Հերովդեսը մահացել է մ. թ. ա. 4 թ., այստեղից հետևում է, արդյոք, որ Մատթեոսի և Ղուկասի ժամանակագրական տվյալները ստույգ չեն: Դա միայն ապացուցում է. որ Ծննդի տարեթիվը, հաշված IV դարում վանական Դիոնիսիոսի կողմից, չի առանձնանում իր ճշգրտու-

* Gensus - բնակչության մարդահամար:

թյամբ: Ըստ բոլոր տվյալների, Հիսուսը ծնվել է 7 կամ 6 թվին մինչև ընդունված թվականության սկիզբը[115]:

Կարծում են, որ ավետարանիչները սխալվել են, Անտիպասին՝ Հերովդես Մեծի որդուն անվանելով թագավոր, չնայած նա նշանակված էր միայն որպես Պաղեստինի չորս մարզերից մեկի կառավարիչ: Բայց Ավետարաններում Հերովդեսը այդպես էլ անվանված է՝ «տետրարխ», «չորրորդապետ», ինչպես և անվանում է նրան Փլավիոսը[116]:

Կարծիք է հայտնվել՝ իբր I դարում Հրեաստանում գոյություն չի ունեցել «դիդասկալոս» տիտղոսը, որը Ավետարաններում բերվում է որպես «ռաբբի»՝ ուսուցիչ բառի համարժեք ձև: Բայց 1930 թ. խարայելցի հնագետ է. Սուկենիկը գտավ այդ ժամանակի գերեզման, որտեղ թաղված էր «դիդասկալոս» անվանված մարդ[117]:

Հովհաննեսի Ավետարանում ասվում է «քահանայապետերի» մասին, որը համարում են սխալ, քանի որ քահանայապետ պետք է լինի միայն մեկը[118]: Սակայն Հովսեփոս Փլավիոսի գրքից մենք իմանում ենք, որ այդ տարիներին հռոմեացիների կողմից պաշտոնից արձակված քահանայապետ Քանանը (Աննա) չէր կորցրել իր ազդեցությունը: Քանանի հաջորդը դարձավ իր փեսան՝ Հովսեփ Կայիափան[119]: Նրանք փաստորեն կիսել էին իշխանությունը և երկուսն էլ մասնակցում էին Հիսուսի դատավարությանը:

Ավետարանիչները հիշատակում են խոզերի հոտի մասին, որը արածացնում էին «Գադարայի հողում»: Վկայակոչելով Հին Կտակարանի՝ սննդի մեջ խոզի միս օգտագործելու վրա դրված արգելքը, հետազոտողները տեղական սովորույթներին անտեղյակ լինելու «հանցանքի մեջ են բռնում» ավետարանիչներին[120]: Մինչդեռ հայտնի է, որ Գադարան վերագրվում է Դեկապոլիսին, մարզի, որտեղ ապրում էին Մովսեսի Օրենքը չպահպանող հեթանոսներ: Այդ պատճառով էլ, ոչ մի անհավանական բան չկա, որ այդ մարդիկ խոզեր էին պահում[121]:

Կասկածանքի տակ է դրվում նաև Չարչարանքի պատմությունների ստույգությունը: Մասնավորապես ասում են, որ քահանայապետերի դատարանը խախտել է հրեական Իրավունքի մի շարք կետեր[122]: Սակայն անօրինական դատավարության օրինակներ պատմությանը հայտնի են ոչ քիչ, ինչու պետք էր Սինեդրիոնի անդամներից սպասել իրավաբանական նրբանկատություն, երբ դատավճիռն արդեն նախորոշված էր: Առավել ևս, որ ավետարանական դարաշրջանում դատավարությունը գտնվում էր սադուկեցիների կուսակցության ձեռքին, որը հետևում էր իր սեփական քրեական օրենսգրքին: Դրա մասին հայտնի



է միայն, որ այն առանձնանում էր ծայրահեղ դաժանությամբ[123]:

Նշում են. որ Պիղատոսի՝ Ավետարաններում պատկերված արարքը ճշմարտանման չի, քանի որ նա հայտնի էր որպես դաժան և հրեաներին ատող մարդ[124]: Բայց միթե կուսակալը չէր կարող հակառակվել Սինեդրիոնին հենց նրան տհաճություն պատճառելու համար: Միևնույն ժամանակ, համաձայնությունը Անմեղի մահվան դատավճռին՝ ցույց է տալիս Պիղատոսին հենց այնպես, ինչպես նկարագրում են նրան ժամանակակիցները:

Եվ, վերջապես, արդեն բոլորովին անհասկանալի է, թե ինչ հիմքի վրա են ժխտում հռոմեական զորքերի առկայությունը Երուսաղեմում[125]: Հովսեփոս Փլավիոսը ուղղակիորեն հաղորդում է Պիղատոսի զինվորների՝ Հրեաստանի մայրաքաղաք գալու մասին[126]:

Հետազոտողները, սովորաբար, պնդում են, որ Ավետարանները չէին կարող գրված լինել մինչև 70 թ., քանի որ նրանցում կա Քրիստոսի մարգարեությունը Երուսաղեմի կործանման մասին: Այսպիսի եզրահանգումը հիմնված է այն համոզման վրա, ըստ որի ճշմարիտ մարգարեություններ չեն լինում: Սակայն բազմաթիվ փաստեր հակառակն են վկայում թերահավատներին: Եսայի մարգարեն, օրինակ՝ ասում էր Հրեաստանի առաջիկա նվաճման մասին դեռևս 734 թվականին մ. թ. ա., իսկ այդ իրադարձությունը տեղի ունեցավ միայն 587 թվականին: Կասեն՝ այդ մարգարեությունը շատ ուշ շրջանի ընդմիջարկություն է: Բայց օրինակները բավական շատ են նաև այլ ժամանակաշրջաններից, երբ ժամանակագրությունը կասկած չի հարուցում: Այսպես, XIX դարի վերջին Վ. Սոլովյովը գրում է չինական սպառնալիքի մասին: Նշանակում է դա, արդյոք, որ նրա գրքերը պետք է թվագրել Մաոի ժամանակաշրջանով: Սրբերի, մտածողների, բանաստեղծների մոտ մի անգամ չէ, որ հանդիպում ենք պատերազմների, հեղափոխությունների և այլ հասարակական կատակլիզմների կանխատեսության: Այդ փաստը արդեն չի կարելի վերագրել ընդմիջարկություններին: Իսկ դրա ընդունումը ուժից զրկում է ավետարանական մարգարեությունների դեմ եղած փաստարկները:

Մի պատրվակ էլ կա Ավետարանները ոչ ստույգապատում հայտարարելու, այն է՝ հրաշքների մասին պատմությունները: Բայց այստեղ մենք գտնվում ենք գիտական քննությունից դուրս[127]: Եթե պատմաբանը պաշտպանում է հայացքներ, որոնք սահմանափակում են հորիզոնը զգայական աշխարհի սահմաններով, ապա ոչ մի հաղորդում հրաշք երևույթների մասին նրա կողմից չի ընդունվի: Նա կկսի դրանք, ինչ էլ որ լինի, ժխտել

և բացատրել իր ձևով: Այդ կարգի մարդկանց մասին Քրիստոս ասում է. «Եթե տեսնեն մեռածին հարություն առնելիս՝ չեն հավատա»:

Մենք չենք խոսի խնդրի սկզբունքային, փիլիսոփայական կողմի մասին, նշենք միայն, որ այդ ժամանակաշրջանի տարեգրության և պատմական աշխատանքների մեջ քիչ վկայություններ չկան արտասովոր երևույթների մասին: Դրանց մասին հաղորդում են և՛ Փլավիոսը, և՛ Տակիտոսը, և Պլուտարքոսը, բայց ոչ մեկի մտքով չի անցնում նրանց գրքերը հայտարարել հորինվածքներ:

## ԵՐԲ ԵՎ ՈՒՄ ԿՈՂՄԻՑ ԵՆ ԳՐՎԵԼ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԸ

XIX դարի 20-ական թվականներին Թյուբինգենյան համալսարանի աստվածաբան Քրիստիան Բաուերը առաջադրեց մի վարկած, ըստ որի Ավետարանները գրվել են II դարի վերջում: Առասպելաբանները ուրախությամբ կառչեցին այդ մտքից: Այն պաշտպանում են և նրանցից շատերը, ովքեր հավատում են Ավետարանների «պատմական միջուկին»: Նրանք պնդում են, որ այդ պատճառով Նորկտակարանյան գրականությունը չի կարող արժանահավատ տեղեկություններ տալ Քրիստոսի կյանքի մասին[128]: Այդպես է դա, արդյոք: Եվ մեր օրերում ինչ է հայտնի Ավետարանների ծագման մասին:

Ավետարանների բնագրերը չեն պահպանվել, բայց դրանով նրանք բացառություն չեն կազմում հնագույն հեղինակների ստեղծագործությունների մեծ մասի մեջ: Չեն պահպանվել Սենեկայի, Փլավիոսի, Տակիտոսի և I-II դարերի ուրիշ հեղինակների բնագրերը: Այդ պատճառով, նման ստեղծագործությունների թվականը որոշելու համար գոյություն ունի երկու եղանակ՝

1. Եղած ձեռագրերից առավել հնագույնի միջոցով:

2. Այդ ստեղծագործություններից այն հեղրնակների կողմից կատարված առավել վաղ վկայակոչումներով, որոնց ապրած ժամանակների թվագրությունը ավելի որոշակի է:

Ձեռագրերի առումով, ի տարբերություն մնացած հնագույն գրականության, Ավետարաններինը արգասավոր է: Եթե գոյություն ունեն, օրինակ՝ Պլատոնի երկերի II ձեռագրեր, Էսքիլեսի՝ 50, Եվրիպիդեսի՝ 24, Վերգիլիոսի՝ 100 (այդ բոլորը, անշուշտ, ընդօրինակություններ են, ոչ թե բնագրեր), ապա Նոր Կտակարանի հունարեն ձեռագրերը ներկայացվում են 2500 օրինակը գերազանցող թվաքանակով:



Բայց առանձնակիորեն ցուցանշական կդառնա Ավետարանի առավելությունը, եթե նկատի ունենանք գրքերի գրման ժամանակից մինչև պահպանված ամենավաղ ձեռագիրը անցած ժամանակը: Վերգիլիոսի բնագրերը հեռու են իր երկերի առավել վաղ ընդօրինակություններից 400 տարով, Հորացիոսինը՝ 700 տարով, Հուլիոս Կեսարինը՝ 900 տարով, Պլատոնինը՝ 1300 տարով, Սոփոկլեսինը՝ 1400 տարով, Էսքիլեսինը՝ 1500 տարով, Եվրիպիդեսինը՝ 1600 տարով, մինչդեռ Ավետարանի ձեռագրերը բնագրերից բաժանված են լոկ մի քանի տասնամյակի ժամանակամիջոցով:

Հայտնի է, մասնավորապես, որ ամենաուշ Ավետարանը Հովհաննեսի Ավետարանն է (նրա գրման ժամանակը վերագրվում է 90-ական թվերին, իսկ Եգիպտոսում հայտնաբերված այդ Ավետարանի հնագույն հատվածը վերագրվում է 120-125-ականներին): Հայտնաբերված է նաև ավետարանական պատմության մի հատված, որի կազմողը գիտեր արդեն բոլոր չորս կանոնական Ավետարանները: Նրա թվականը համարվում է I կամ II դարի սկիզբը: Երկու հարյուր թվականին է վերագրվում 1955 թ. հրապարակված պապիրուսը, որը պարունակում է Հովհաննեսի Ավետարանի կեսը[129]:

Եթե մենք անդրադառնանք I-II դարերի գրողների երկերում Ավետարանից բերված քաղվածքներիս, ապա այդպիսիք կհայտնաբերենք ոչ քիչ: Ահա դրանցից մի քանիսը[130]:

Սբ. Կլիմենտ Հռոմեացին մոտ 95 թվին գրում է ուղերձ, որտեղ մեջբերումներ կան Մատթեոսի և Մարկոսի Ավետարաններից[131]:

Սբ. Իգնատիոս Անտիոքացին, որը մահապատժի է ենթարկվել 107 թվին, քաղվածքներ է անում Մատթեոսի Ավետարանից: Ըստ երևույթին, Իգնատիոսին մոտ միջավայրում է երևան եկել Դիդախե ստեղծագործությունը կամ Տասներկու առաքյալների Ուսմունքը (մոտ 100 թ.): Նրանում արտահայտություններ կան Մատթեոսից և Ղուկասից, իսկ մի տեղում ուղղակի վկայակոչում կա «Ավետումից», այսինքն՝ Ավետարանից[132]:

Սբ. Պոլիկարպոս Զմյուռնացին, Հովհաննես առաքյալի աշակերտը, երբ 156 թվին նրան մահվան դատապարտեցին, ասաց, որ ինքը ծառայում է Քրիստոսին արդեն 86 տարի: Հետևապես, նա կար դեռ 66-70 թվականների հրեական պատերազմի ժամանակներում: Իր թղթերում Պոլիկարպոսը քաղվածքներ է անում Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններից և Հովհաննեսի Ա. Ընդհանրական Թղթերից [133]:

Հովհաննես առաքյալի աշակերտ և Պոլիկարպոսի ընկեր Պապիաս

Հերապոլիսացին (մոտ 70-150 թ.) մանրամասնորեն պատմում է, թե ինչպես են գրվել Մատթեոսի և Մարկոսի Ավետարանները: Իր տեղեկությունները նա քաղել է առաջին սերնդի քրիստոնյաներին անձամբ իմացող մարդկանցից: Մասնավորապես, նա ծանոթ է եղել Տասներկուսից մեկի՝ Փիլիպպոսի աղջկա հետ: Մոտ 130 թ. Պապիասը կազմում է «Տիրոջ խոսքերի մեկնություն» գիրքը, որտեղ գրում է.

> «Ի տարբերություն շատերի, ես վստահում էի ոչ թե Երկբաբաններին, այլ նրանց, ովքեր ոչ թե ուրիշի մտքերն են հաղորդում, այլ պատվիրանները՝ Տիրոջ կողմից հավատացյալներին տրված և անմիջապես ճշմարտությունից բխող: Եթե, օրինակ, ես հանդիպեի մեկին սուրբ հայրերի նախկին աշակերտներից, ես կհարցնեի հենց հայրերի զրույցների մասին, ինչ են ասել Անդրեասը կամ Պետրոսը կամ Փիլիպպոսը կամ Թովմասը կամ Հակոբը կամ Հովհաննեսը կամ Մատթեոսը կամ Տիրոջ մի այլ աշակերտը, ինչ են ասել Արիստիոնը և պրեսբիտեր Հովհաննեսը՝ Տիրոջ աշակերտները»[134]:

Քրիստոնեական գրող Արիստիդեսը իր «Ապոլոգիա» երկում (մոտ 120 թ.) Ավետարանն արդեն անվանում է Սուրբ Գիրք[135]:

Սբ. Հուստինիանոս Իմաստասերը, ծնունդով Պաղեստինից, քրիստոնեություն ընդունած մոտ 130 և այն դավանելու համար մահվան դատապարտված 163 թվին, մեջբերումներ է անում երեք Ավետարաններից, անվանելով դրանք «առաքյալների հիշողություններ», ինչպես նաև կանոնական Ավետարաններին մոտ մի քանի անհայտ ստեղծագործություններից[136]:

Մոտ 170 թվին ասորի Տատիանոսը կազմեց արդեն բոլոր չորս Ավետարաններից բանաքաղություն, դրանով իսկ ցույց տալով, որ համարում է դրանք ընդհանուր ճանաչում գտած և կանոնիկ: 1935 թ. գտնվել են նրա ստեղծագործություններից հատվածներ՝ 200 թվին վերագրվող[137]:

Տատիանոսի ժամանակակից Սբ. Իրինեոս Լիոնացին (120-200) խոսում է ոչ միայն չորս Ավետարանների, այլև նրանց հեղինակների մասին հականե-հանվանե: Իրինեոսի վկայությունը առանձնապես արժեքավոր է, քանի որ իր պատանեկան տարիներին անձամբ գիտեր Պոլիկարպոս Զմյուռնացուն:

> «Այդ ժամանակներինը ես հիշում եմ հաստատապես, քան մոտ անցյալներինս,- գրում Է նա պատանեկան տարիների ընկեր Ֆլորինիոսին,- քանզի մանկության տարիների մեր իմացածը ամրակայվում է հոգով, արմատավորվում է նրանում: Այսպես, ես կարող եմ նկարագրել այն տեղը, որտեղ նստել և զրուցում Էր երանելի Պոլիկարպոսը, կարող եմ վերարտադրել նրա քայլվածքը, նրա արտաքին տեսքը, նրա զրույցները՝ ուղղված ժողովրդին: Ինչպես Էր նա պատմում իր շփումները մասին Հովհանեսին* և Տիրոջը տեսած ուրիշների հետ: Ինչպես Էր նա մտաբերում և վերապատմում նրանց խոսքերը, թե ինչ Էր լսել նրանցից Տիրոջ մասին»:

Եվ Իրինեոսի պնդմամբ. բոլորը, ինչ-որ ասում Էր Պոլիկարպոսը, համապատասխանում էր Ավետարանին[138]:

Իրինեոսի դարաշրջանին է վերագրվում 1740 թ. իտալացի գիտնական Մուրատորիի կողմից հայտնաբերված Նոր Կտակարանի գրքերի ցուցակը, որն էլ իր պատվին կոչվում է «Կանոնական գրքերի մուրատորյան ցուցակ»:

Նույնիսկ այդ ոչ շատ օրինակներից հետևում է, որ II հարյուրամյակի ամենասկզբից Ավետարանները, և հիմնականում կանոնականները, լայնորեն հայտնի էին:

Իսկ ինչ տվյալներ կան Ավետարանների հեղինակների մասին: Հնում սովորություն կար մեծ իմաստունների գրքերը արտագրել և դրանով իսկ մեծացնել տեքստի հեղինակությունը: Ի հայտ եկան ստեղծագործություններ՝ իբր Ենովքին, Մովսեսին, Սողոմոնին և ուրիշներին պատկանող: Ավետարանների բազմաթիվ քննողներ վարձել են այդ փաստը օգտագործել, որպեսզի կասկածի տակ առնեն դրանց պատմական արժեքը: Բայց հարց է ծագում՝ ինչու մեր Ավետարանների հեղինակներ են անվանվել ոչ թե Քրիստոսի մերձավոր առաքյալները՝ Պետրոսը, Հակոբը, Անդրեասը, այլ այնպիսի, թվում է թե, երկրորդական դեմքեր, ինչպես Մարկոսը կամ Ղուկասը: Մատթեոսը նույնիսկ չի եղել առաքյալների մեջ բացառիկ դեր խաղացած մարդ:

Ավետարանների ճակատին գրված է ոչ թե պարզապես նրանց հեղինակների անունները, այլ անվանված են «Ավետարան ըստ (cata) Մատթեոսի», «ըստ Մարկոսի», «ըստ Ղուկասի», «ըստ Հովհաննեսի»: cata բառը տվյալ դեպքում նշանակում է, որ գիրքը գրված է «համաձայն այսինչ հեղինակի» կամ «ըստ այսինչ հեղինակի»: Որոշ քննող-

* Խոսքը Հովհաննես առաքյալի մասին է:

ներ դրանում տեսնում են Ավետարանների ոչ իսկական լինելու ապացույց: Սակայն հունական գրականության մեջ cata բառը հաճախ օգտագործվում է նաև անմիջական հեղինակին ցույց տալու համար[139]: Բացի դրանից, cata բառի գործածությունը ունի նաև որոշակի աստվածաբանական իմաստ: Ավետարանը Իր՝ Քրիստոսի ուսմունքն է, իսկ ավետարանիչները տալիս են միայն դրա շարադրանքը: Դրա համար էլ, ասել, օրինակ, «Ավետում Ղուկասի», ըստ էության, սխալ կլիներ: Իրականում, դա «Հիսուս Քրիստոսի Ավետումն է» ըստ Ղուկասի, ըստ Մարկոսի և այլն:

Պնդում են, որ Ավետարանները բարձր գրական վարպետության ստեղծագործություններ լինելով, չէին կարող գրված լինել «անգրագետ ձկնորսների» կողմից: Բայց մի կողմից մենք գիտենք մի շարք օրինակներ, որ սքանչելի ստեղծագործությունները դուրս են եկել լայն կրթություն չստացած անձանց գրչի տակից, այսպես, XVII դարի մեծագույն մտածող Հակոբ Բյոմը կոշկակար էր: Մյուս կողմից, Մատթեոսը մաքս գանձող էր, Մարկոսը դուրս էր եկել քահանայի ընտանիքից, Ղուկասը բժիշկ էր, Հովհաննեսը մոտ էր կանգնած Երուսաղեմի հանրության բարձրագույն շրջաններին:

Վաղքրիստոնեական ավանդույթը Ավետարանը միանշանակ կապում է այն անձանց անունների հետ. որոնց անունը վերտառված է վերնագրում: Սկսենք Մարկոսի Ավետարանից, քանի որ այն համարվում է ամենավաղ գրվածը:

Հովհաննես-Մարկոսը պատկանում էր Երուսաղեմում ապրող և Պետրոս առաքյալին մոտիկ քրիստոնեական ընտանիքի: Նա Պողոս առաքյալի ընկեր Հովսեփ Բարնաբայի ազգականն էր: Մի ժամանակ Մարկոսը ուղեկցում էր «հեթանոսների առաքյալին» իր քարոզչական ճամփորդությունների ընթացքում, բայց ավելի ուշ, նրանք բաժանվեցին, և պատանին դարձավ Պետրոսի ուղեկիցը, որը նրան անվանում էր «իր որդին»: Գալիլիալի առաքյալին թարգմանիչ էր պետք, քանի որ նա վատ էր տիրապետում հունարենին, առավել ևս՝ լատիներենին: 60-ականների սկզբին Մարկոսը վերստին հանդիպեց Պողոս առաքյալին, բայց արդեն Հռոմում: Իրինեոս Լիոնացու խոսքերով՝ Մարկոսը գրեց իր Ավետարանը Պետրոս առաքյալի մահից շատ չանցած, որը խաչ հանվեց մոտ 64 թվականին[140]: Հովհաննես առաքյալի աշակերտ Պապիոս Հերապոլիսացին բերում է Քրիստոսի աշակերտ, պրեսբիտեր Հովհաննեսի վկայությունը.



> «Մարկոս մեկնաբանողը* ճշգրտորեն գրի առավ բոլորը, ինչը հիշում էր. չնայած որ չպահեց Քրիստոսի խոսքերի և գործերի հերթականությունը, քանի որ ինքը չէր լսել Տիրոջը և չէր եղել Նրա ուղեկիցը: Հետագայում, ճիշտ է, նա եղավ, ինչպես ասված է, Պետրոսի հետ, բայց Պետրոսը ուսմունքը շարադրում էր ունկնդիրների պահանջները բավարարելու և ոչ թե Տիրոջ զրույցները հաջորդականությամբ հաղորդելու նպատակով[141]:

Հատկանշական է, որ Սբ. Հուստինիանոսը, մի տեղում մեջբերում անելով Մարկոսի Ավետարանից, իր աղբյուրը անվանում է «Պետրոսի Հիշողություններ»[142]:

Այդ տեղեկությունները համապատասխանում են Մարկոսի Ավետարանի բնույթին: Այն իրար հետ քիչ կապված, առանց խստակարգ ժամանակագրական հենքի տպագրված դրվագների ժողովածուի տեսք ունի (բացառությամբ սկզբի և Քրիստոսի Չարչարանքների նկարագրության): Դա կարելի է, ըստ երևույթին, բացատրել նրանով, որ ավետարանիչը նախապես գրի է առել Պետրոսի առանձին պատմությունները, իսկ հետագայում դրանք միավորել:

Մարկոսի անպաճույճ պատմողականության մեջ զգացվում է սեմիտական ոճի արձագանքները: Հեղինակին հատուկ են լակոնիզմը, հասարակ ռամկական արտահայտությունները, սրընթացությունը: Տեսարանները արագ հաջորդում են մեկը մյուսին: Դեպքից դեպք անցնելով, Մարկոսը շատ անգամներ կրկնում է «այնժամ» բառը: Նրա բառապաշարը աղքատ է, բայց, զարմանալիորեն, որոշակի է: Հետազոտողները նրա գրքում համրել են տասնմեկ տերմին տան մասեր նշանակող, տասը՝ զգեստի մասեր, ինը՝ սննդի տեսակներ[143]:

Մարկոսը հիշատակում է ոչ միայն մանրամասներ, որոնք կարող էր Օրան հաղորդած լինել ականատես Պետրոսը, այլ նաև, երևի, անձամբ իրեն՝ ավետարանիչին հայտնի: Օրինակ՝ միայն ինքն է պատմում ոմն պատանու մասին, որը վկա է դարձել Հիսուսի ձերբակալմանը: Մեկնիչների մեծ մասի կարծիքով, դա ինքը՝ Մարկոսն է եղել: Երբ ավետարանիչը գրում Է Քրիստոսի խաչը Գողգոթա տանող Սիմոն Կյուրենացու մասին, ապա առանց որևէ բացատրության նկատում է, որ նա «Ալեքսանդրի և Ռուփոսի հայրն էր»: Հավանաբար, հեղինակը կարծում է, որ այդ անձերը քաջ ծանոթ են իր ընթերցողներին: Պողոս առաքյալի «Թուղթ առ Հռոմեացվոց»-ում իսկապես հիշատակվում է վաղ քրիստոնեական համայնքի անդամ ոմն Ռուփոս[144]:

---

* Բառացիորեն՝ ermhneuthx թարգման, թարգմանիչ:

Կղեմես Ալեքսանդրացու, Հերոնիմոսի և Եվսեբիոսի մոտ պահպանված ավանդության համաձայն, Մարկոսը Ավետարանը գրել է Ռոմում: Դա են հաստատում նաև գրքի որոշ լատինաբանություններ[145]: Բոլոր դեպքերում, անկասկած է, որ նա նկատի է առել Պաղեստինից դուրս ապրող ընթերցողների: Բերված արամեական բառերի իմաստը Մարկոսը համարյա ամենուր բացատրում է[146]:

Ավետարանում ուղղակի ակնարկ չկա այն մասին, որ Երուսաղեմը կործանված է: Հետևապես, այն գրված է եղել I դարի 60-ական թթ. ոչ ուշ:

Եթե երկրորդ Ավետարանում գլխավորապես պատմվում է Փրկչի կյանքի իրադարձությունների մասին, ապա առաջինում՝ Մատթեոսի անունը կրող, շատ տեղ է հատկացված Քրիստոսի խոսքերին: Արդեն հիշատակված Պապիաս Հերապոլիսացին վկայում է. «Մատթեոսը գրի է առել Տիրոջ խոսքերը (Logia Kiriaka) հրեերեն լեզվով 4, իսկ դրանք թարգմանել] են (կամ մեկնել), ով ինչպես կարող է[147]: Դա նշանակում է, որ մեր Ավետարանը ըստ Մատթեոսի, գրված հունարեն լեզվով, նախասկզբնական տեքստի «Լոգիան» չէ: Այնուամենայնիվ, ներկա տեքստով ևս նա մատնում է հրեական-քրիստոնեական ավանդույթներին սերտորեն կապված հեղինակին: Մատթեոսը հաճախակի է վկայակոչումներ անում Հին Կտակարանից, «դպիր» բառը գործածում է դրական իմաստով, մեծ նշանակություն է տալիս հավատացյալների համայնքին, Եկեղեցուն, պահպանում է պաղեստինյան արտահայտություններ, չի բացատրում հրեական սովորույթների և մի շարք արամեական բառերի նշանակությունը [148]:

Մատթեոսի Ավետարանի պատմողական մասում շատ բան փոխ է առնված Մարկոսից, որի տեքստը համարյա ամբողջությամբ կա Մարկոսի և Ղուկասի մոտ: Դրա համար էլ, գրքի առավել ինքնատիպ մասը պետք է համարել Հիսուսի խոսքերը[149]:

Ըստ երևույթին, «Լոգոսը» կամ «Տիրոջ խոսքերը» լրիվությամբ չեն մտել Մատթեոսի հունարեն Ավետարանի մեջ: Նրանք կարող էին լինել ասույթների ժողովածուի տեսքով, շատ նման վաղքրիստոնեական ժամանակներում լայնորեն տարածվածների[150]: Սակայն հարկ է հիշել, որ «դվարիմը»՝ «լոգիա» բառի հրեական համարժեքը, նշանակում է միաժամանակ և՛ «խոսքեր», և՛ «բառեր»:

Մատթեոսի «Լոգիաները» գրվել են, հավանաբար, դեռ մինչև հրեական պատերազմը, այսինքն՝40-ական կամ 50-ական թվականներին, իսկ հունական տարբերակը՝ 70-ականներին: «Որոշ հետազոտողներ,- նշում է Կարլ Ադամը- ավելի հեռու են գնում և կարծում են, որ «խոսքերի Աղբյուրը», այսինքն՝ Մատթեոսի արամեերեն գրած հիմնական տեքստը, կազմված է եղել դեռևս մինչև Քրիստոսին մահվան դատապարտելը, քանի որ նրանում, ըստ երևույթին, դեռ չի հիշատակվել Տիրոջ տառապանքների պատմությունը և, քանի որ ամեն ինչ ասում է այն մասին, որ արդեն Պողոսը իմացել և օգտագործել է այդ աղբյուրը: Այն ժամանակվանից, երբ Ե. Լիթմանը պարզեց, որ «Հայր մեր» աղոթքի արամեերեն նախասկզբնական տեքստը կառուցված է քառոտնյա վերջնաշեշտ ռիթմով ոտանավորի տեսքով, լիովին հավանական է, որ այդ ռիթմական ձևը մշակվել է Հիսուսի կողմից, և որ աղոթքի արամեերեն տեքստում մենք ունենք «Տիրոջ սեփական խոսքերը իրենց նախասկզբնական հնչողությամբ»[151]:

Երրորդ Ավետարանի հեղինակ Ղուկասը, ի տարբերություն Մարկոսի, անարվեստ պատմող չէ, այլ գրող, որն աչքի առաջ արդեն ունեցել է Քրիստոսի կյանքը և ուսմունքը շարադրելու շատ «փորձեր»[152]: Նա, ըստ երևույթին, հրեա չէ, և նրա գրքում քիչ է սեմիտաբանությունը: Նա լայնորեն օգտվում է Մարկոսի Ավետարանից, բայց տրամադրության տակ ունի նաև այլ աղբյուրներ: Դրանց որոշ մասը ծագել է քրիստոնյա հրեաների և նույնիսկ Մկրտչի աշակերտների շրջանում:

Հին ավանդությունը Սբ. Ղուկասին՝ բժշկին և Պողոս առաքյալի ուղեկցին վերագրում է «Գործք Առաքելոց»-ի կազմումը[153]: Եվ, իրոք, երբ այդ գրքում խոսվում է Պողոսի և Ղուկասի համատեղ ճամփորդության մասին, հեղինակը պատմում է առաջին դեմքով[154]: «Գործք»-ը հանդիսանում է երրորդ Ավետարանի շարունակությունը, ինչի մասին ուղղակի ասված է առաջաբանում: Հետևապես, այդ Ավետարանը պետք է պատկանի նույնպես Ղուկասին[155]: Հատկանշական է, որ երրորդ Ավետարանում, ինչպես և Պողոսի Թղթերում, ընդգծվում է քրիստոնեության տիեզերական առաքելությունը:

Վավերագրերից մեկում, որը գրվել է մոտ 170 թվականին, Ղուկասի մասին ասվում է հետևյալը.

> «Ղուկասը ասորի է, ծնունդով Անտիոքից, բժիշկ է, առաքյալների աշակերտը, ավելի ուշ նա ուղեկցել է Պողոսին մինչև նրա մարտիրոսական վախճանը: Անսգյուտ ծառայելով Տիրոջը, նա չուներ ո՛չ կին, ո՛չ երեխաներ: Նա մեռավ Բեռթիայում՝ լցված Սուրբ Հոգով, ութսունչորս տարեկան հասակում: Քանի որ արդեն գրվել էին Ավետարանները, Հրեաստանում՝ Մատթեոսի, Իտալիայում Մարկոսր կողմից, ապա Ղուկասը Սուրբ Հոգու ներշնչումով գրեց Ավետարանը Աքայիայի մարզում [156]:

Անգամ եթե այդ տեքստում բերված ոչ բոլոր մանրամասներն են արժանահավատ, Ղուկասը, անկասկած, քրիստոնեության առաջին պատմաբանն էր, չնայած նրա գիրքը չի համընկնում անտիկ գրողների պատմագիտական աշխատանքների ժանրին: Ժամանակակից գիտնականների մեծամասնության կարծիքով, Ղուկասը գրել է Հրեական պատերազմի տարիներին կամ նույնիսկ ավելի վաղ, այսինքն՝ 60-ական և 70-ական թվականների միջև ընկած ժամանակամիջոցում[157]:

Առաջին երեք Ավետարանները մեծ չափով նույնություն են հանդես բերում կոմպոզիցիայի մեջ, ինչպես նաև ունեն ոչ քիչ բառացի զուգադիպություններ: Դա ակնհայտ դարձավ այն բանից հետո, երբ XVIII դարում դրանք հրատարակեցին համատեսության տեսքով, այսինքն՝ զուգահեռ սյունակներով: Այստեղից և ընդունված համատես Ավետարան անվանումը:

Տեքստերի համեմատական վերլուծությունը լույս սփռեց ավետարանիչների՝ մեկը մյուսից ունեցած կախվածության վրա: Ընդհանուր գծերով նրանց կարելի է ներկայացնել այսպես, Մարկոսը նյութեր է տվել Մատթեոսի և Ղուկասի Ավետարանների հունական տարբերակի համար, Մատթեոսի հունական տարբերակի կազմողը, բացի «Լոգիայից» և Մարկոսից, տրամադրության տակ ունեցել է և ինչ-որ գրավոր կամ բանավոր աղբյուր: Այդ իսկ աղբյուրը օգտագործվել է Ղուկասի կողմից, որը «Լոգիայից» նույնպես տեղեկություններ է քաղել[158]:



## ՀԱՄԱՏԵՍ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՍԽԵՄԱ




Համատես Ավետարաններն ունեն ոչ միայն ընդհանուր և նույնական տեքստեր, նրանց մոտեցնում է մի շատ կարևոր գիծ՝ Հիսուսի խոսքերը նրանցում իրենց ոճով կտրուկ տարբերվում են իրենց՝ ավետարանիչների խոսքերից: Հավանաբար, այդ խոսքերը լավ պահպանվել են առաջին աշակերտների հիշողության մեջ:

Չորրորդ Ավետարանը կրում է Հովհաննեսի անունը: Ըստ ավանդության, նա ոչ այլ ոք էր, քան Զեբեդեոսի որդի Հովհաննեսը: Լինելով Մկրտչի աշակերտներից, նա առաջիններից մեկն էր, որ հետևեց Քրիստոսին եղբոր և մոր հետ: Իր կրակոտության համար Հովհաննեսը Ուսուցչի կողմից մականվանվեց «ամպրոպի Որդի» կամ «որոտի Որդի»: Չորրորդ Ավետարանը Հովհաննեսին անվանում է «աշակերտ, որին սիրում էր Հիսուսը»: Այնտեղ ասված է, որ նա միակն էր Տասներկուսից, որը ներկա եղավ Գողգոթայում և Տիրոջ մահից հետո, Նրա Մորը վերցրեց իր հետ: Այդ ժամանակ նա ընդամենը տասնութ-քսան տարեկան էր:

I դարի երեսնական թվերի սկզբին Հովհաննեսը Պետրոսի հետ քարոզել է հրեաների և սամարացիների մեջ, ձերբակալվել է, իսկ 44 թվին եղբորը՝ Հակոբին մահապատժի ենթարկելուց հետո, հավանաբար, լքել է Հրեաստանը: Հարյուրամյակի վերջում նա գլխավորում էր Փոքր Ասիայի համայնքները և ապրում էր Եփեսոս քաղաքում: Այստեղից Հովհաննեսը հռոմեական իշխանությունների կողմից աքսորվել է

Պատմոս կղզին և նորից եկ է վերադարձել: Մահացել է նա մոտ 100 թվականին խորը ծերության հասակում[159]: Փոքրասիական ավանդության համաձայն, առաքյալն իր Ավետարանը գրել է 90-ական թվականներին:

Կասկած է արտահայտված՝ կարող էր, արդյոք Հովհաննեսը այդպիսի զառամյալ տարիքում ստեղծել այդպիսի կատարյալ ստեղծագործություն[160]: Բայց եթե հիշենք, որ Սոֆոկլեսը ավարտել է իր «էդիպը Կալոննայում» 89 տարեկան հասակում, Տիցիանը «Խաչից իջեցնելը» կտավի վրա աշխատել է 97 տարեկանում, իսկ Գյոթեն «Ֆաուստի» երկրորդ մասի լավագույն տեսարանները գրել է 83 տարեկանում, ապա այդ առարկությունը վերանում է:

Չորրորդ Ավետարանը ոճով տարբերվում է համատեսներից: Քրիստոսի կերպարը նրանում փոքր ինչ այլ է, քան Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի մոտ: Դա, սակայն, չի նվազեցնում գրքի ստուգապատում արժեքը, այլ միայն ի ցույց է հանում հեղինակի անձի յուրահատկությունը: Չէ որ Սոկրատն էլ Քսենոֆոնտի մոտ այնպես չէ, ինչպես Պլատոնի մոտ:

Հովհաննեսի մոտ ավելի է ընդգծվում, քան համատեսների մոտ, որ Քրիստոսը Աստծու Որդին է, Երկնքից եկած, բայցև, միևնույն ժամանակ հենց Հովհաննեսը, հազիվ թե մյուս ավետարանիչներից պակաս, շեշտում է Նրա մարդկային բնույթը, խոսելով Աստծո առջև Հիսուսի խոնարհության, Նրա ընկերական զգացումների, հոգնածության, վշտի, արցունքների մասին:

Սինոպտիկական Ավետարանները պատմում են միայն Հիսուսի ծառայությունների մասին Գալիլիայում, իսկ այնուհետև անմիջապես անցնում են Նրա Երուսաղեմ կատարած վերջին ճամփորդությանը: Հովհաննեսը խոսում է Հիսուսի հաճախակի Հրեաստան կատարած այցելությունների մասին՝ մինչև Զարչարանքի շաբաթը: Առաջներում պատմաբանների հակվածությունը առաջին երեք ավետարանիչների ժամանակագրության օգտին էր, սակայն մեր օրերում վստահությունը Հովհաննեսի վկայությունների հանդեպ մեծացել է: Սինոպտիկները իրենց առաջ իրադարձությունների հաջորդական պատկերման խնդիր չեն դրել: Հովհաննեսի մոտ նման նպատակադրում, հավանաբար, եղել է: Դժվար է մտածել, որ Հիսուսը, Որը մանկուց գնում էր Երուսաղեմ տոնակատարության, Իր ծառայությունների ժամանակ հրաժարվեր այդ սովորույթից: Բացի դրանից, Ղուկասի մոտ գտնում ենք Հովհաննեսին հաստատող երկու անուղղակի վկայություն: Ավետարանիչն ասում է,



որ Քրիստոսը «քարոզում էր Հուդայի ժողովարաններում« (Ղուկ. Դ. 44), ինչպես նաև նկարագրում է Տիրոջ այցելությունը Մարթայի տուն, որը գտնվում էր մայրաքաղաքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա:

Հովհաննեսը սինոպտիկական հեղինակներից ավելի հաճախ է կանգ առնում Հիսուսի՝ Իր մասին ունեցած վկայությունների վրա: Նրա վերաբերյալ ավետարանիչը օգտագործում է անտիկ իմաստասիրության մեջ հայտնի Լոգոս բառը: IV Ավետարանի այդ առանձնահատկությունը քննողներին առիթ է տվել կարծել, որ դրա հեղինակը գնոստիցիզմի գաղափարներին մոտ կանգնած հույն գրող է: Սակայն հետագայում պարզ դարձավ Լոգոսի մասին ուսմունքի կապը հրեական Բան հասկացության հետ որպես Աստվածահայտնության ձևի[161];

Բանասերները ճշտել են, որ Հովհաննեսի Ավետարանը եթե ոչ գրող, ապա ծայրահեղ դեպքում արամերեն մտածող մարդու ստեղծագործություն է: Տեղ-տեղ այն թվում է ուղղակի թարգմանություն այդ լեզվից: Ի տարբերություն սինոպտիկների, Հովհաննեսը քաղվածքներ է անում Հին Ուխտից ոչ թե ըստ Սեպտուագինտայի, այլ տալիս է թարգմանությունը հրեերենից և արամեական թարգմանություններից[162]:

Կումրանի հայտնագործությունները ցույց տվեցին, որ IV Ավետարանը սերտորեն կապված է հեսսեական պատկերացումների և դարձվածաբանության հետ[163]: «Այսուհետև,- ասում է Կումրանի հետազոտող, քրիստոնեությունից բոլորովին հեռու հեղինակ Ջ. Ալլեգրոն,- Հովհաննեսը չի կարող դիտվել որպես ավետարանիչներից առավել հելլենականը, նրա «գնոստիցիզմը» և նրա գաղափարների ողջ շրջանը բխում է պաղեստինյան հողում արմատավորված հրեական աղանդներից, իսկ նրա նյութը պետք է ընդունվի որպես ավետարանական ավանդույթների վաղ շերտերի վրա հիմնված»[164]:

IV Ավետարանի մասնագետ Չարլզ Դոդը նշում է, որ այդ գիրքը ստեղծված է «անկախ մնացած Ավետարաններից, հնագույն ավանդույթների հիմքի վրա և արժանի է լուրջ ուշադրության, քանի որ հարստացնում է մեր գիտելիքները Հիսուս Քրիստոսին վերաբերող պատմական փաստերի մասին»[165]:

Ընդ որում, եթե սինոպտիկները տարբեր նյութեր օգտագործած բանաքաղողներ են, ապա Հովհաննեսի Ավետարանում ամենուր տեսանելի է մի հեղինակի ձեռք: Նա երկխոսությունների և դրամատիկական տեսարանների վարպետ է, որոնք շնչում են ականատեսի կենդանի հիշողություններով:

Այնուամենայնիվ, չորրորդ Ավետարանի մի առանձնահատկությունը խոսում է Իր՝ Զեբեդեոսի որդուն պատկանելու տեսակետի դեմ: Այնտեղ Հովհաննեսի մասին պատմվում է այնպիսի ակնածալի տոնով, այնպես է ընդգծվում Հիսուսի նրա հանդեպ տածած սերը, որ դժվար է նույնացնել առաքյալին հեղինակի հետ:

Խորհրդածություններ են հարուցում նաև Հովհաննես առաքյալի հնագույն սրբապատկերները: Ի տարբերություն սինոպտիկների, նա ամենուր պատկերված է Թելադրող և ոչ թե գրող:

Վերջերս Ռեյմոնդ Բրաունը առաջադրեց մի վարկած, համաձայն որի չորրորդ Ավետարանը առաքյալի պատումների և քարոզների գրանցում է: Հետագայում այն ունեցել է մշակման մի քանի փուլեր, միաժամանակ անխաթար պահպանելով Հովհաննեսի ավանդույթների կառուցվածքը[166]:

Ում կողմից են կատարվել այդ գրառումները և տեքստի խմբագրումները, պարզելն առայժմ անհնար է: Ընդ որում, բացառված չէ, որ դրանք ավարտել-վերջացրել է ոմն Հովհաննես, որն այն ժամանակ ապրել է Եփեսոսում: Նրան անվանել են պրեսբիտեր՝ երեց: Հնարավոր է, Հովհաննեսի Թղթերը ևս, որոնց հեղինակը իրեն նույնպես անվանում է «պրեսբիտեր», գրվել են այդ մարդու կողմից: «Պրեսբիտերի» մասին վարկածին չեն հակասում Թղթերի խոսքերը, որոնք մատնանշում են հեղինակի անմիջական մասնակցությունը ավետարանական իրադարձություններին: Զէ որ, Պապիոսի վկայությամբ, պրեսբիտեր Հովհաննեսը եղել է Տիրոջը տեսած աշակերտներից մեկը, չնայած որ չի մտել Տասներկուսի կազմի մեջ[167]:

Հատկանշական է, որ Եփեսոսում երկու Հովհաննեսի՝ և՛ առաքյալի, և՛ քահանայի գերեզմանն էլ պաշտվում է:

Հովհաննեսը ինքն է գրել, թե IV Ավետարանը կազմվել է նրա խոսքերից, այն առատ է ճշգրիտ պատմական-աշխարհագրական մանրամասներով, որոնք չէին կարող նկարագրվել II դարի հույն հեղինակի կողմից: Հատկապես IV Ավետարանի տեղեկությունները բերեցին, ինչպես մենք կտեսնենք ստորև,Պաղեստինում պեղումների հաջող արդյունքների[168]:

Եվ, վերջապես, Եգիպտոսում գտած Հովհաննեսի Ավետարանի մի հատվածը լիովին հաստատում է ավանդական տարեթիվը՝ 90-ականները: Պապիրուսը գտել են զինվորի իրերի մեջ, որն արդեն 120 թվականին ուներ IV Ավետարանը: Եփեսոսում գրքի գրելուց մինչև այդ պահը պետք է, որ բավականաչափ ժամանակ անցած լինի:

Այսպիսով, չորս կանոնական Ավետարաններն էլ ստեղծվել են I



դարի երկրորդ կեսի ընթացքում, երբ դեռ Հիսուս Քրիստոսին իմացող շատ մարդիկ էին ապրում, այսինքն՝ առաքյալների ժամանակներում: Բայց, այնուամենայնիվ, Ավետարանները ստեղծվել են մի քանի տասնյակ տարի անց նրանցում նկարագրված իրադարձություններից, և այդ պատճառով էլ կարևոր է պարզել ավետարանիչների նախասկզբնական աղբյուրները: Դրանցից մեկը մենք արդեն նշեցինք, դա Քրիստոսի խոսքերի գրառումն է, մասնավորապես Մատթեոսի «Լոգիան»: Կարելի է, արդյոք, ինչ-որ բան ասել ուրիշ աղբյուրների մասին:

Այդպիսի աղբյուրներ հազիվ թե կարելի լիներ համարել պարականոն ավետարանները: Դրանք մերժվել են եկեղեցու կողմից, քանի որ դուրս են եկել հերձվածողների միջավայրից, ինչը ամբողջությամբ հաստատվեց այդ հուշարձանների հետագա ուսումնասիրությամբ: Դրա հետ մեկտեղ հայտնի չէ ոչ մի պարականոն, որը ծագած լիներ 100 թվականից վաղ: Ռուս գրող և քննադատ Դ.Ս. Մերեժկովսկու՝ պարականոններում նախասկզբնական ավանդությունների հետքեր գտնելու փորձը հազիվ թե հնարավոր լինի համարել հաջողված[169]:

Երկու հայտնի մասնագետների կարծիքով, «անցան այն ժամանակները, երբ պարականոն ստեղծագործությունները փորձում էին տեսնել որպես մեր կանոնական տեքստերի աղբյուր: Առավել ևս, դժվար է անգամ պատկերացնել, թե ինչպես կարող էր ծագել և աճել այդ մոլախոտը Աստծու շնչով ստեղծված գրականության դաշտում: Այն պարզապես անսովորի հակված, մանրամասների նկատմամբ անհագ, և հավերժորեն դեպի հեքիաթայինին ձգտող ժողովրդական հետաքրքրասիրության արդյունք է»[170]:

Կան առանձին, Ավետարաններում տեղ չգտած Քրիստոսի ասույթները, այսպես կոչված՝ ագրաֆները, որոնք մասնակիորեն կարելի է համարել իսկական: Բայց դրանք մանրակրկիտորեն հետազոտած Իոախիմ Երեմիասի խոսքերով՝ միայն լրացնում են չորս Ավետարանները և ոչինչ ավելին: «Ավետարաններից դուրս եղող Ավանդության ճշմարիտ նշանակությունը,- գրում է նա,- այն է, որ հստակորեն ի հայտ է բերում մեր չորս Ավետարանների արժեքը»[171]:

Ըստ երևույթին, սկզբնապես քրիստոնյաների մեջ տարածում են գտել Քրիստոսի մասին նաև ռիթմիկ ձև ունեցող բանավոր պատմություններ: Ինչպես արդեն ասվել է, այն առանձնապես զգացվում է Տիրոջ խոսքերը հաղորդելիս: Հրեաների մոտ վաղուց գոյություն ուներ մեծ կապակցված տեքստերը բերանացի հիշելու սովորույթ: Կար նույնիսկ «մասորետների» առանձին դաս, Սուրբ Գրոց պահապաններ,

որոնք սերտում էին Աստվածաշունչը և սրբագրում էին գրիչներին: Նման մի բան էլ տեղի է ունեցել, հավանորեն, վաղ շրջանի Եկեղեցում: Բանավոր Սկզբնավետարանը ամրանում էր տարբեր ժողովներում: Եվ միայն I դարի կեսին այն սկսեցին գրի առնել: Այսպիսով, Ավետարանը նախապես եկեղեցական ծիսակարգաթյան հետ կապված կատեխիզիս էր: «Հիմնականը Թվերգի մեջ,- գրում է Լ. Ժիլլեն,- հանդիսանում էր անփոփոխ միջուկը, որը շեղումներից ապահովված էր ռիթմի շրջանակներով: Հնարավոր է, հետևապես, որ ավետարանյան տեքստերը վերարտադրում են իրենց ողջ իսկական մաքրությամբ առաջին համայնքի ավանդությունը: Դեռ ավելին, հնարավոր է, ինչքան կզայրացներ մեկնիչներին այսպիսի պնդումը քառորդ դար առաջ, ըստ որի, մենք հաղորդակցվեմ ենք Քրիստոսի սեփական խոսքերին[172]:

Կանոնական տեքստերի՝ պաղեստինյան ավանդույթների մեջ ունեցած արմատավորվածությունը ամուր կամուրջ է գցում Քրիստոսի կյանքի ականատեսների և Ավետարանների միջև:

Թե որ ժամանակներից է սկսվել բանավոր առաքելական Ավանդությունը գրի առնվել, հիմա դժվար է որոշել: Դա կպարզի լոկ հին ձեռագրերի հետագա հայտնագործումները: Անվիճելի է միայն մի բան, հենց Տասներկուսից սկիզբ առնող Ավանդությունը մեր Ավետարանների սկզբնաղբյուրն է: Խոսելով Տրայանոսի գահակալության (97-117) ժամանակի մասին, պատմաբան Եվսեբիոսը գրում է. «Աշակերտներից շատերն էին այդ ժամանակ տոգորված աստվածային խոսքի նկատմամբ նախանձախնդրությամբ, և հետևելով Փրկչի ուսմունքին, սկսեցին բաժանել իրենց ունեցվածքը աղքատներին, և, հեռանալով իրենց երկրներից, բարի ավարտի հասցրին ավետարանիչների գործը, ձգտելով քարոզել հավատի ուսմունքը նրանց, ում դեռ հայտնի չէր, ընդ որում, փոխանցում էին նրանց Աստվածային Ավետարանների արտագրած տեքստը»[173]: Հետևապես, I] և II դարերի սահմանագծում Ավետարանները արդեն գրված էին: Գրքերը, որոնք հեռանում էին Ավանդությունից, Եկեղեցին մերժեց:

## ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏ

Ցուրաքանչյուրը, ով հետևել է Նոր Կտակարանի վերջին տարիների քննության զարգացմանը, չի կարող չնկատել, որ այն կատարել է մի շրջան և ծայրահեղ սկեպտիցիզմի փուլից վերստին մոտեցել է ավանդական տեսակետներին: 1900-ական թվականներին գիտնականներից



արդեն քչերը կհամարձակվեին Ավետարանների թվագրությունը համարել II դարի վերջը: Արդեն ընդունված էր, որ դրանք ծագել են նախասկզբնական համայնքի ընդերքում:

Բայց այդ դեպքում ինչպես բացատրել առասպելաբանական դպրոցի ի հայտ գալը: Թվում էր, թե ամեն ինչ խոսում է նրա սկզբունքների դեմ: Որպեսզի հասկանանք այդ, մենք նորից պետք է վերադառնանք ետ՝ XVIII դարավերջ:

Հենց այն ժամանակներում, երբ Շառլ Դյուպուին առաջին անգամ արտահայտեց այն միտքը, իբր Քրիստոսը արևային աստվածություն է, Գերմանիայում և Շվեյցարիայում գրկվեցին երկու գրքեր, որոնք բովանդակում էին Ավետարանը դատողական բարոյախոսության ոգով մեկնաբանելու փորձեր: Առաջինը պատկանում էր յոթանասունամյա քյոսինգբերգյան փիլիսոփա Իմանուիլ Կանտին (1724-1804), որի «Կրոնը՝ միայն բանականության սահմաններում» անվանումը հենց հնչում էր որպես ծրագիր: Ի տարբերություն էնցիկլոպեդիստների և «լուսավորիչների», Կանտը «մաքուր բանականության» օրենքների հանգամանալից հետազոտությունից հետո հանգեց նրա բնական սահմանափակվածության եզրակացությանը: Այնուհանդերձ, նա տեղ թողեց «գործնական բանականության» համար, որը, նրա կարծիքով, կապված է մարդու բարոյական կամքի հետ: Այդ պատճառով էլ, նույնիսկ համարձակվելով հակասել ճանաչողության սահմանների հարցում իր սեփական տեսակետներին, Կանտը ձգտում էր կրոնը համապատասխանեցնել մարդու դատողության տվյալներին: Այն ամենը, ինչը չէր տեղավորվում այդ պրոկրուստյան մահճում, հարկ էր, Կանտի կարծիքով, դուրս գցել կրոնից: Նա ձգտում էր «բնական քրիստոնեության» ստեղծման, որը հանդելու էր սոսկ բարոյախոսական պատվիրանների համակարգին[174]:

Մյուս գիրքը գրվել է 1795 թվականին այդ ժամանակ դեռ երիտասարդ փիլիսոփա Գ. Ֆ. Հեգելի կողմից (1770-1831), որը գտնվում էր Կանտի ուժեղ ազդեցության տակ: Կարելի է ասել, որ Հեգելը իր աշխատության մեջ Հիսուս Քրիստոսի կյանքը շարադրելիս ուղղակիորեն կիրառել է Կանտի գաղափարը: Փիլիսոփան պատկերել է Նրան որպես աշխարհին «ճշմարիտ բարոյականություն» տված մարդու, որը և մաքուր ծառայություն է Աստծուն»[175]: Մենք Հեգելի «Հիսուսի կյանքը» շարադրանքում չենք գտնի ոչ հրաշքներ, ոչ գաղտնական խորհուրդ, ոչ Քրիստոսի վկայություն Ինքն Իր մասին: Նրանում դատողականությունը, ընդունելով իրեն բարձրագույն դատավոր, թելադրում է իր

օրենքները Ավետարանին և վերաձևում է այն իր չափանիշներով: Արդյունքում գոյանում է արյունազուրկ ուսմունքի ուրվական, որը հազիվ թե աշխարհը նվաճել կարողանա:

Հեգելը Հիսուսի կյանքի իր վերակերտվածքը դուրս է բերում դոգմատիկորեն, չբացատրելով, թե ինչ սկզբունքներով է ղեկավարվում: Այդ բացը աշխատեց լրացնել նրա աշակերտ Դավիթ Ֆրիդրիխ Շտրաուսը (1808-1873): Նրա Թյուբինգենում 1835-1836 թվականներին հրատարակած «Հիսուսի կյանքը» մոնումենտալ աշխատությունը հիմնված էր Նոր Կտակարանի մանրակրկիտ քննական վերլուծության վրա: Այդ աշխատության մեկնակետը Հեգելի ռացիոնալիստական փիլիսոփայություն էր:

Շտրաուսը հետևողականորեն անդամահատելով, դուրս բերեց այն ամենը, ինչը գտավ պատմական, մնացյալը նա վերագրեց առասպելաբանության բնագավառին: Հասկանալի է, որ նրանում տեղ գտան բոլոր հրաշագործությունները և մարգարեությունների կատարումները: Շտրաուսի բառերով, դրանք պարզապես հանդիսանում են «այդ ժամանակների փրկչական գաղափարների ժողովածու, արտահայտված միայն ավելի որոշակիությամբ՝ շնորհիվ Քրիստոսի անձի, ուսմունքի և ճակատագրի թողած տպավորության»[176]: Չնայած ոճի ծանրությանը, Շտրաուսի գիրքը մեծ տպավորություն թողեց և հարուցեց կրքոտ բանավեճեր: Ի միջի այլոց, նրա հայացքները ազդեցություն են ունեցել ռուս նկարիչ Ալեքսանդր Իվանովի՝ «Քրիստոսի հայտնությունը ժողովրդին» նկարում: Նա անձամբ գնացել է Շտրաուսի մոտ զրույցի և հետո մարմնավորել նրա գաղափարները աստվածաշնչյան էսքիզների շարքերով: Բայց այդ ժամանակ ո՛չ Շտրաուսը, առավել ևս, ոչ էլ նրա ընթերցողները ուշադրություն չդարձրին մի լուրջ դժվարության վրա: Համարյա ամենը, ինչը հեգելական-փիլիսոփան հայտարարում է Հին Ուխտի «մեսիանական գաղափարներ», բացակայում է հրեական գրականության մեջ:

Օրինակ՝ Շտրաուսի հիմնավորմամբ, մարդիկ հավատում էին, որ Մեսիան պետք է անցնի փորձության շրջան, ինչպես այն անցավ Իսրայելը անապատում: Մինչդեռ, այդ մասին դույզն ինչ ակնարկ անգամ չկա ոչ Աստվածաշնչում, ոչ էլ պարականոններում: Կամ ուրիշ օրինակ՝ Շտրաուսը գտնում է, որ Հիսուսի աշակերտների մասին պատմությունը ներշնչված է Թագավորաց գրքից, որտեղ խոսվում է Եղիսեի՝ Եղիա մարգարեի աշակերտի մասին: Բայց ոչ մի տեղից չի երևում, որ Մեսիան, հրեական պատկերացումների համաձայն, պետք է աշակերտներ



ունենա[177]: Կարճ ասած. Շտրաուսի «Հիսուսի կյանք»-ում մենք ունենք աղբյուրներով չհիմնավորված փրկչագիտության (մեսիոլոգիա) նրա սեփական տարբերակը:

Հեգելյան փիլիսոփայությանը հաջորդեց կանտականության մյուս ժառանգորդը՝ դրապաշտությունը (պոզիտիվիզմ): Մի կողմից այն վերածնեց գիտության պաշտամունքը, իսկ մյուս կողմից՝ պնդեց, որ ինքը գործ ունի ռեալականության միայն տեսանելի կողմի հետ: Գիտությունից դուրս է մնում Անճանաչելիի ոլորտը, որի մեջ մարդը երբեք չի կարող թափանցել: Դրապաշտության ոգով էր հագեցված Էռնեստ Ռենանի (1823-1892) «Հիսուսի կյանքը» (1863) աղմուկ հանած գիրքը:

Հոգևոր սեմինարիայի սան Ռենանը հրաժարվեց դրա ավարտումով հոգևոր աստիճան ստանալ և հեռացավ եկեղեցուց: Սակայն, դադարելով քրիստոնյա լինել, նա պահպանեց կրոնական թեմատիկայի նկատմամբ հետաքրքրությունը, որին նվիրեց իր գրական փայլուն տաղանդը: Կրոնը Ռենանի համար մնաց որպես աշխարհի իր տեսակի պոետական ընկալում և բարոյականության հոլովույթի հիմք: Բայց և այնպես, նա գտնում է, որ երբ խոսքը գնում է ճշմարտության մասին, վերջին խոսքը պետք է մնա գիտությանը: Գրողի կարծիքով, Ավետարաններում պարունակող այն ամենը, ինչը չի տրվում գիտական վերլուծության, պետք է դեն գցել որպես ժողովրդական երևակայության ծնունդ, իսկ մնացած նյութերից պետք է վերստեղծել Հիսուսի կենդանի կերպարը որպես պատմական մեծ անձնավորության:

Այդ ուղղությունը ազդեցություն գործեց նաև քրիստոնեական աստվածաբանների ամենից առաջ, այսպես կոչված՝ ազատամիտ բողոքականների վրա*: Նրանք տրվեցին Ավետարանը որպես «մաքուր հավատի և բարոյաբանության» կոդեքս պահպանելով՝ «այն իր առասպելական շերտերից ազատագրելու» նպատակին: 1900 թ. Եկեղեցու գերմանացի հռչակավոր պատմաբան Ադոլֆ Գարնակը (1850-1930) իր «Քրիստոնեության էությունը» դասախոսություններում տվեց նման հայեցակետի դասական շարադրանք: Գարնակի դասախոսությունների հրատարակությունը առանձին գրքով դարձավ ազատամիտ աստվածաբանության մանիֆեստը: Նրա կրեդոն մոտենում էր Լև Տոլստոյի ուսմունքին՝ Հիսուսը գոյություն է ունեցել, Նա մարմնավորել է Իր մեջ կատարյալ հավատի իդեալը և եղել է բարձրագույն բարոյականության

* Նրանց «ազատամտությունը» արտահայտվում է այն բանում, որ նրանք իրենց ազատ էին համարում աստվածաբանական բնագանցությունը:

վարդապետ: Նրանք, ովքեր հաղորդակցվել են Նրա փորձին և Նրա ուսմունքին, ճշմարիտ քրիստոնյաներ են, բայց նրանց հարկ է հրաժարվել Աստվածամարդության գաղափարից և այլ «դոգմատիկ իմաստակություններից»:

Գարնակը և իր դպրոցը Տոլստոյից տարբերվում են նրանով, որ ազատամիտ աստվածաբանները Հիսուսին համարում էին իր տեսակի մեջ եզակի, մարդկանց առ Աստված առաջնորդող հազվագյուտ Մարդ, այն ժամանակ, երբ Տոլստոյը Նրան դնում է ուրիշ ուսուցիչների հետ մի շարքում: Բացի դրանից, գերբնականի նկատմամբ Գարնակը ավելի չափավոր է, քան Տոլստոյը կամ հին ռացիոնալիստները: «Հրաշքներ, իհարկե, չեն լինում,- գրում է նա,- բայց հրաշական և անբացատրելի շատ բան կա: Քանի որ այդ հիմա մեզ հայտնի է, մենք ավելի զուսպ և զգույշ ենք դառնում հնից մեզ հաղորդված հրաշքների մասին արտահայտած մեր դատողությունների մեջ»[178]: Այդ տեսանկյունն ավելի շուտ մոտ էր Ավգուստինոսի. «Հրաշքները հակասում են ոչ թե բնությանը, այլ մեզ հայտնի բնությանը» բանաձևումին, քան՝ XVIII դարի փիլիսոփաների սկեպտիցիզմին: Այդուհանդերձ, Գարնակը հիմնականում մնաց Կանտի, Հեգելի և Շտրաուսի դիրքորոշմանը: Նա մտածում էր, որ կարելի է «պատմական Հիսուսին» անջատել «լեգենդների Քրիստոսից», օգտվելով բացառապես գիտական հետազոտության միջոցներից: Իրականում, չնայած Գարնակը առաջնակարգ պատմաբան էր, «պատմական Հիսուսի» որոնումներում նա ղեկավարվում էր ոչ թե գիտությամբ, այլ իր սեփական փլիսոփայական սկզբունքներով: Դա սկսեց ի հայտ գալ շատ շուտ: Ազատամիտ աստվածաբանները կամենում էին Քրիստոսի ավետումը նույնացնել իրենց «մաքուր կրոնի» սկզբունքներին, մինչդեռ Ավետարանների հետագա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «պատմական Հիսուսը» անբաժանելի է Նրանից, Ով հայտնվեց առաջին քրիստոնյաների փորձում որպես Աստվածամարդ և Փրկիչ:

Այդ եզրակացությունը առաջինը հստակ բանաձևել է գերմանացի աստվածաբան Ալբերտ Շվեյցերը (1875-1965), որը լայն ճանաչում է գտել աֆրիկացիների մեջ իր բժշկական գործունեությամբ: «Հիսուսի կյանքի որոնումների պատմություն» (1906) գրքում Շվեյցերը հանդես եկավ Քրիստոսի միտումնավոր արդիականացման դեմ: «Մենք գիտենք միայն հավատի Քրիստոսին»՝ այսպիսին էր Շվեյցերի հիմնական դրույթը:

Սակայն, հերքելով Հիսուսի վերաբերյալ ազատամիտ աստվածաբանության տեսակետները, նա չկարողացավ ընդունել Նրանում մարմնավորված Աստվածահայտնությունը: Դրան խոչընդոտում էր Շվեյցերի համաստվածական (պանթեիզմ) փիլիսոփայությունը իր «կենսական ուժերի» պաշտամունքով: Արդյունքը եղավ այն, որ նա ստիպված էր կասկածի ենթարկել ողջ ավետարանական ավանդույթները, հաստատելով, որ իրական Հիսուսը առմիշտ ծածկված է մեզանից լեգենդների քողով: «Ժամանակակից քրիստոնեությունը,- գրել է Շվեյցերը,- պետք է նախօրոք հաշիվը փակի պատմական Հիսուսից հրաժարվելու հնարավորության հետ»[179]:

Այսպես մաքրվեց ճանապարհը առասպելների տեսության վերածնման համար:

Ռուս մտածողներ Սերգեյ Բուլգակովը (1871-1944) և Նիկոլայ Բերդյաևը (1874-1948) իրավացիորեն ցույց տվեցին, որ առասպելականացման տեսության հաջողությունները ազատամիտ բողոքականության՝ այդ «պրոֆեսորական կրոնի» ճգնաժամի արդյունքն էր, որը ակամա իջեցրեց Ավետարանը մեր դարի սկզբի միջին բուրժուական եվրոպացու մակարդակին: Քրիստոնեությունը իր էությամբ միստիկական է, և այստեղից էլ, Բերդյաևի խոսքերով, «պատմական գիտության անօգնականությունը «Հիսուսի առեղծվածը» վճռելու հարցում»[180]: Առասպելականացման տեսությունը, անկախ իր ստեղծողների ցանկություններից, վկայում էր Քրիստոս-Աստվածամարդու մասին, նման այն բանի, ինչպես երբեմն դևերից բռնված, առաջինը ճանաչեցին Նրանում Աստծո Որդուն:

Քրիստոսին «գաղափարի» վերածելու մտահղացումը, ինչպես տեսանք, չհաջողվեց: Այն խարխլվեց հենց պատմական գիտությամբ, և 20-ական թվականների վերջում առասպելականացման տեսությունը Արևմուտքում լիովին վերացավ: Պատմաբանները և աստվածաբանները, թողնելով «ազատամտության» պատրանքները, հիմա կրկին վերադառնում են այն Քրիստոսին, Որին ավետում է Ավետարանը:

Տարբեր երկրներում հրատարակված տասնյակ լուրջ և տաղանդավոր աշխատանքները ցույց տվեցին, որ Հիսուսին ճանաչելու լիակատարությունը ձեռք է բերվում հենց միայն գիտության և հավատի համադրմամբ[181]: Այդժամ Նա պատկերանում է մեր առջև ոչ որպես անորոշ առասպել և ոչ էլ որպես բարոյականության ուսուցիչներից մեկը, այլ որպես Նա, Ով Ինքը Աստծու բարձրագույն Հայտնությունն է:

Սակայն ռացիոնալիզմը դեռ շարունակում էր ազդել ժամանակակից մեկնողական գրականության (էկզեգետիկայի) վրա: Դա առանձնա-

պես նկատելի է Ավետարանի սկզբնաղբյուրներին նվիրված աշխատանքներում:

Սկսած 1919 թվականից, բողոքական գիտնական Մարտին Դիբելիուսը (1883-1947) սկսեց զարգացնել «ձևերի պատմության» (Formgeschichte) կոնցեպցիան, որտեղ շեշտը դրվում էր ավետարանիչներին շրջապատող միջավայրի վրա: Նոր Կտակարանում Դիբելիուսը փնտրում էր ոչ թե հենց Քրիստոսին, այլ վաղ շրջանի Եկեղեցին, նրա գաղափարները և հայացքները: Դիբելիուսի վարկածով, Ավետարանում արտացոլված տարբեր ժանրերը ցույց են տալիս տարբեր ավանդույթների քրիստոնեական միջավայր: Որոշ դեպքերում նպատակը եղել է Հիսուսի մասին քարոզը որպես Փրկչի, ուրիշ դեպքում՝ քրիստոնեության ջատագովությունը, երրորդում՝ հավատացյալների առօրյա կյանքին վերաբերող Տիրոջ խրատների պահպանումը և այլն: «Ձևերի պատմության վերլուծությունը հիշեցնում է հին վարպետների կտավները վերականգնող ռեստավրատորի աշխատանք՝ «նախապես բրոնզափառը, այնուհետև ուշ գեղանկարիչների վերաձևումներն ու լրացումները, վերջապես՝ իսկական կտավը և նույնիսկ նկարի հետևողական ուրվագիծը, ընդհուպ մինչև առաջին նկարը» [182]:

Նման հետազոտությունները քիչ արդյունքներ չեն տվել, այդ պատճառով էլ Դիբելիուսի մեթոդը հաջողություն ունի նաև մեր օրերում: Սակայն նրան հարկ է մոտենալ զգուշությամբ: Նրա արժեքն իջնում է չափանիշների ենթակայականությամբ, որոնց դիմում են Ավետարանի այս կամ այն բաժնի գնահատականի համար: Այստեղ մենք հենվում ենք կռահումների, հորինվածքների և անորոշ եզրահանգումների երերուն հենարանին:

Իսկ գլխավորը՝ «ձևերի պատմության» դպրոցը, բացահայտ չափազանցում է վաղ քրիստոնեական համայնքների ստեղծագործ դերը: Փաստացի նրանց է վերագրում ամենը, ինչը կա Ավետարանում: Դա չափազանց վիճելի տեսակետ է, առավել ևս, որ ամենավաղ համայնքների մասին մենք քիչ տեղեկություններ ունենք: Ստացվում է, որ մի անհայտը փնտրում են մյուսի միջոցով: Բացի դրանից, տեքստերի մեծ մասը հաջողվել է դնել մեկ «մաքուր ժանրի» տակ, ապավինելով միայն ենթադրությունների (օրինակ՝ տաղանդների մասին առակն ունի և՛ խրատական, և՛ վախճանաբանական խորհուրդ):

Այդ նույն ուղղությանը, ինչպես և Դիբելիուսը, պատկանում է բողոքական աստվածաբան և մեկնիչ Ռուդոլֆ Բուլտմանը (1884-1976), որը մեծ ազդեցություն է թողել ժամանակակից նորկտակարանյան գիտության վրա:

Երբ Գերմանիայում ոմանք ցանկանում էին Քրիստոսին որպես առասպել ներկայացնել, իսկ մյուսները՝ «արիացի», Բուլտմանը ավետարանական եղելությունների խոր հետազոտություն անցկացրեց: Նա համաձայնեց այն բանի հետ, որ քրիստոնեությունը կրել է իր վրա հելլենիզմի գաղափարների ուժեղ ներգործությունը, բայց գտավ, որ իսկական հավատը չի կարող սասանվել այդ փաստի ընդունումից[183]:

Բուլտմանը իրավացիորեն ցույց տվեց, որ Ավետարանները «կենսագրություններ» չեն՝ կազմված անաչառ պատմաբանների կողմից, հետաքրքրասեր ընթերցողների համար, այլ հավատի վկայություն: Այդ միտքը, որն արդեն վաղուց արտահայտվել էր շատ մեկնիչների կողմից, իր հաստատումն է գտնում հենց Նոր Կտակարանում: «Սա գրվեց, որ դուք հավատաք, թե Հիսուս Քրիստոսն է՝ Աստծու Որդին, նաև՝ որպեսզի հավատաք ու Նրա անունով հավիտենական կյանք ընդունեք»՝ Հովհաննեսի այս խոսքերը կարող են որպես բնաբան ծառայել բոլոր չորս Ավետարանների համար: Դրանք նախանշված են լինելու ոչ թե ժամանակագրություն կամ պատմական աշխատություն, այլ ավետումներ աշխարհի Փրկչի մասին: Այդ պատճառով էլ, գրական քննադատությունը չի կարող նվազեցնել ավետարանական հայտնության կենսաստեղծ ուժերը: Թող որ նույնիսկ ավանդության ինչ-որ մանրամասներ համարվեն լեգենդային, Աստծու ճանաչումը Հիսուս Քրիստոսով կախված չէ այդ զուտ գիտական, պատմական խնդիրների լուծումից: Հավատը գոյություն ունի այլ հարթության վրա, քան գիտությունը:

Բուլտմանի կարծիքով, Ավետարանների մեկնիչների խնդիրն այն է, որ թարգմանեն վաղ քրիստոնյաների կրոնական փորձը ժամանակակից մարդու լեզվի[184]: Սուրբ Գրքից հարկավոր է դուրս բերել էությունը, և ոչ թե փնտրել նրանում միայն փաստեր: Այդ մոտեցումը, որը Բուլտմանը ոչ այնքան հաջող անվանում է ապառասպելականացում, կիրառվում էր եկեղեցական մեկնիչների կողմից դեռևս քրիստոնեության առաջին դարերում:* Բուլտմանն ինքն իրեն անվանում է Եկեղեցու Հայրերի շարունակող, մասնավորապես նրանցից, ովքեր հետևում էին Աստվածաշնչի մեկնաբանման այլաբանական եղանակին[185]: Այդ եղանակը ամենից հաջող կիրառվում է Հին Ուխտի մեկնաբանության

* «Ապառասպելականում» տերմինը անհաջող է թեկուզ այն պատճառով, որ «առասպել» բառը փիլիսոփայական իմաստով գերդատողական ճշմարտությունների արտահայտման անխուսափելի ձևն է: Յուրաքանչյուր աշխարհայացք ենթադրում է որոշ աքսիոմների կամ կանխադրույթներ, որոնք «առասպելական են», և, հետևապես, իրականում ապառասպելականացնել մարդկային գիտակցությունն անհնար է:

մեջ, քանի որ դրա հիմքում ընկած է փոխաբերությունների, խորհրդանշանների և այլաբանությունների որոշակի համակարգ: Հատկապես դա վերաբերում է Գիրք Ծննդոցի առաջին գլուխներին, որոնք մեկնելով, կարևոր է առաջին հերթին բանաձևել ուսմունքը՝ մատուցված հոգևորական հեղինակների կողմից ավանդազրույցների ձևով:

Ավետարանները միաժամանակ հաճախակի խոսում են գաղտնիքների մասին, որոնք չեն տրվում զուտ արտաքին, պատմական նկարագրության (օրինակ՝ Սբ. Ղուկասի զրույցը Ավետումի մասին)[186]: Նման դեպքերում, Բուլտմանի մեթոդը մասնակիորեն կիրառելի է: Սակայն գիտնականը գնում է շատ ավելի հեռու: Լինելով էկզիստենցիալիստական փիլիսոփայության հետևորդ, նա գտնում է, որ Աստծուն ուղղված հոգու համար պատմականը խաղում է երկրորդական դեր: Այդ հիմքի վրա նա ոչ միայն դուրս է գցում ավետարանական պատմության ողջ հրաշապատումը, այլև, ըստ գործի էության, դիտարկում է համարյա յուրաքանչյուր իրադրություն որպես «իդեալական պատկեր», այսինքն՝ այս կամ այն միտքը բացատրելու կամ մեկնաբանելու հնարանք:

Բուլտմանը, ըստ էության, կասկածի տակ է դնում այն ամենի արժանահավատությունը, ինչը մենք գիտենք Քրիստոսի երկրային կյանքի մասին: Շվեյցերի և Դիբելիուի նման, նա իր տեսակետը արդարացնում է նրանով, որ «պատմական Հիսուսին» հնարավոր չէ բաժանել առաջին քրիստոնյաների ավետումներից:

Ինչ-որ տեղ դա արդարացի է. Ավետարանները ծագել են այն ժամանակ, երբ Եկեղեցին արդեն ավելի քան երեսուն տարի գոյություն ուներ, պայքարում էր, տառապում էր և վկայում Տիրոջ մասին: Հենց նա աշխարհ բերեց Խաչյալի և Հարության հավատ: Բայց դա նշանակում է, արդյոք, որ Ավետարանը սոսկ այլաբանությունների, առասպելների և խորհրդանիշերի շղթա է:

Անշուշտ, եթե Քրիստոսի մասին ասված է, որ Նա «համբարձվեց երկինք», մենք չպետք է այդ բառերը հասկանանք այն իմաստով, որ Նա տեղափոխվել է տիեզերական տարածություն: «Համբարձումը»՝ կոնկրետ պատկեր է, որը ցույց է տալիս Աստվածամարդու անցումը կեցության այլ վիճակ, Նրա երկրային ծառայությունների վերջը: Բայց ինչու պետք է Մարթայի և Մարիամի. մաքսապետ Զակքեոսի, փարիսեցի Սիմոնի այցելությունը Քրիստոսին կամ Նրա վեճը հրեա դպիրների հետ խորհրդանիշ համարել: Ինչ ապացույցներ կան այն բանի օգտին, որ մկրտությունը Հորդանանում և մուտքը Երուսաղեմ՝ պարզապես այլաբանություններ են: Այո, Ավետարանը հավատի գիրք է, բայց



դա իրավունք չի տալիս մեզ նրան նայելու որպես վաղքրիստոնեական աստվածաբանության պատկերավոր շարադրանքի:

Մեր հայտնի ձախարմատական աստվածաբան քահ. Սերգեյ Ժելուդկովը Ավետարանը դիպուկ անվանում է «Քրիստոսի սրբապատկերներ»[187]: Սակայն այդ համեմատությունը բնավ չի կարելի սպառիչ համարել: Սրբապատկերը ամբողջովին խորհրդանշական է, նրա պայմանական լեզուն կոչված է անտեսանելի իրականությունը հաղորդելու համար միայն: Այն «առասպելական է» այդ բառի ամենակատարյալ իմաստով, եթե «առասպել» անվանենք երկնային բարձունքների աշխարհը ցույց տվող կոնկրետ պատկերավոր լեզուն: Սրբապատկերնեrում ավետարանական իրադարձությունները տեղի են ունենում կարծես թե պատմական ժամանակից և աշխարհագրական տարածությունից դուրս, որը ցույց է տալիս նրանց անանց բնույթը:

Ավետարանները ամենևին այդպիսին չեն: Խոսելով անսահմանափակ մասին, ավետարանիչները համարյա երբեք չեն լքում երկրային միջավայրը, և նրանց պատմությունները օրգանապես ներգծվում են դարաշրջանի կենդանի պատկերի հյուսվածքում: Ինչպես ցույց են տվել խորայելցի պատմաբաններ Հովսեփ Կլաուզները և Դավիթ Ֆլյուսսերը, Ավետարաններում նկարագրված Հիսուսի կյանքը արտացոլում է ոչ թե քրիստոնյաների ուշ ժամանակների հայեցակերպը, այլ՝ I դարի հրեական աշխարհը[188]: Ինչու է նրանց մեջ խոսվում այնպիսի աննշան քաղաքների մասին, ինչպիսիք են Կափառնայումը, Քորազինը, Բեթսաիդան, Մագդաղան, Կանան: Ոչ մի «խորհրդանիշով» դա չես բացատրի: Ինչու են նրանք անդրադառնում Օրենքի մասին վեճերին, զոհաբերություններին և Տաճարին, որոնք կորցրել էին հետաքրքրությունը քրիստոնյաների երկրորդ սերնդի համար: Միայն նրա համար, որ նրանց մշտապես առաջնորդում էին Քրիստոսին շրջապատող մարդիկ: Այդ իսկ պատճառով, Ավետարաններում հիշատակված են մաքսավորների, Հռոմին մուծվող հարկերի, արտոնյալ ազնվականության և թափթփուկների, Սինեդրիոնի իրավաբանական իրավունքների և այլնի մասին:

Հերովդեսի, Անտիպասի և Պիղատոսի, քահանայապետների և պրոկուրատորների. կուսակցությունների և աղանդների, Պաղեստինի քաղաքական և կրոնական իրավիճակի մասին եղած բոլոր տեղեկությունները ամբողջությամբ համընկնում են պատմության տվյալներին: Մեր դարի խոշորագույն հնագետ Ուիլյամ Օլբրայտը ցույց տվեց, թե որքան քիչ հավանական է, որպեսզի համայնքները իրադարձություննե-

ըից շատ տարիներով հեռացած լինելով, ի վիճակի լինեին նկարագրել այդքան ճշգրիտ պատկեր: «Հնագիտական տվյալները, - գրում է նա, - որոշակիորեն հերքում են «ձևերի պատմության» դպրոցի արմատական քննության հայեցակետերը[189]:

Կումրանյան հայտնագործությունները հաստատեցին այդ խոսքերը: Մեռյալ ծովի հին ձեռագրերում հանդիպում են շատ արտահայտություններ, որոնք հատկանշական են Նոր Կտակարանին («Հոգով աղքատներ», «Բելիար», «լույսի որդիներ», «սրբակեցության ճանապարհ», «խավարի թագավորություն», «արարել ճշմարտություն» և այլն), իսկ եթե մենք վերհիշենք, որ կումրանյան աղանդը կազմալուծվեց 70 տարի հետո, ապա բառամթերքի այդպիսի նույնությունը ցույց է տալիս ավետարանական ավանդույթների և I դարի պաղեստինյան միջավայրի միջև եղած սերտ կապը[190]:

Նշվում էր, որ այնպիսի ավետարանական անուններ, ինչպես Մարթա, Եղիսաբեթ, Ղազար և ուրիշներ, չեն հիշատակվում Հին Կտակարանում, և այդ պատճառով դրանք կարող էին օգտագործել միայն Պաղեստինից հեռու ապրող մարդիկ: Սակայն Երուսաղեմի պեղումներից այդ ժամանակների սարկոֆագների պատերին հայտնաբերվել են հենց այդ անունները, ըստ երևույթին՝ շատ տարածված Հրեաստանում[191]:

Ամենից «աստվածաբանականը» և այդ պատճառով մյուսներից պակաս արժանահավատը, քննողները վաղուց ի վեր համարում էին Հովհաննեսի Ավետարանը: Սակայն նրանում մենք գտնում ենք մանրամասներ, որոնք կարող էր իմանալ մինչև 70 թ. Պաղեստինում ապրած մարդը: Այսպես, օրինակ՝ Հովհաննեսը ասում է, որ Հիսուսը կանգ առավ Հակոբի ջրհորի մոտ, Սաղեմ (կամ Սիխարյա) քաղաքին մոտիկ: Այնինչ Նաբլուս քաղաքը, որը, ինչպես կարծում էին, 70 թվականին կառուցվել է հռոմեացիների կողմից նրա տեղում, հեռու է գտնվում այդ ջրամբարից: Երբ Էռնստ Սելլինը պեղումներ անցկացրեց այդ շրջանում, նա համոզվեց, որ հնագույն Սաղեմը գտնվում է ոչ թե հռոմեական Նաբլուսի, այլ Բալատակի բլուրի տակ և երեք անգամ այդ ջրհորին ավելի է մոտ[192]:

Ինչ վարկածներ ասես, որ չստեղծվեցին Բեթհեզդա ավազանի մասին: Գտնում էին, օրինակ, որ «հինգ գավիթներում», որտեղ Հիսուսը բժշկեց անդամալույծին, խորհրդանշում են Մովսեսի Թորայի հինգ գրքերը: Բայց պարզվեց, որ դա բոլորովին էլ «խորհրդանիշ» չէ: Պեղումների ժամանակ գտան լողարանի ավերակները, որը իրականում հիվանդների համար ուներ հատուկ սրահներ: Հանքաղբյուրը բուժիչ ջրի



համբավ ուներ նաև հրեական պատերազմից հետո, երբ Երուսաղեմում բնակություն հաստատեցին հեթանոսները, ինչի մասին են վկայում բուժվածների շնորհակալական մակագրությունները[193]:

Վաթսուն տարի առաջ Անդրեյ Նեմոևսկին հայտարարեց, որ Պիղատոս ոչ այլ ինչ է, եթե ոչ homo pilatus, «պիլում»՝ նիզակ կրող մարդ, այսինքն՝ Օրիոնի համաստեղության մարմնավորում[194]: Բայց ինչ կասեր նա 1961-ին, երբ Կեսարիայի ավերակներից գտան I դարի արձանագրություն. «Պոնտացի Պիղատոս, Հրեաստանի պրեֆեկտ»: Արձանագրությունը ոչ միայն հաստատեց Ավետարանների և Փլավիոսի տվյալները, այլև ցույց տվեց, որ Պիղատոսն ուներ ավելի մեծ լիազորություններ, քան սովորական պրոկուրատորը[195]:

Շատ հաճախ նշել են, որ Նոր Կտակարանը ճիշտ չի պատկերում խաչելությունը, քանի որ դատապարտյալներին չէին գամում խաչին, այլ կապկպում էին[196]: Գտնում էին, որ ավետարանիչները այդ կերպ ձգտում էին հիմնավորել Քրիստոսի քավիչ արյան դավանանքը: Բայց 1968 թ. Գիվատ Հա-Միվթարում՝ Երուսաղեմի հյուսիսային արվարձանում, գտան ավետարանիչների իրավացի լինելու հզոր հաստատում: Դա հռոմեական դարաշրջանի խաչված հրեայի գերեզմանն էր: Մեծ մեխերը այնքան ամուր էին խրվել նրա ոսկորների մեջ, որ դրանք չէին կարողացել դուրս քաշել անգամ մարմինը թաղելիս[197]:

Կան ետավետարանական տարիներին առնչվող հայտնագործություններ, որոնք, սակայն, կարևոր նշանակություն ունեն քրիստոնեական ակունքների հարցի առնչությամբ: Խոսքը Հռոմի և Նազարեթի պեղումների մասին[198] է: Սբ. Պետրոսի տաճարի զոհասեղանի տակ գտնվել է գլխավոր առաքյալի գերեզմանը: Արձանագրությունները վկայում են, որ II դարում Սբ. Պետրոսի գերեզման էին այցելում բազմաթիվ ուխտավորներ: Դա հաստատում է առաքյալի՝ Հռոմում քարոզելու և վախճանվելու մասին ավանդությունը: Նազարեթում հնագետները գտել են II հարյուրամյակի քրիստոնեական տաճարի մնացորդները և դրանով իսկ լցրել պատմական այն բացը, որը ավետարանական դարաշրջանը բաժանում էր Եկեղեցու առաջին դարերից:

Եվ այսպես, կրկնում ենք, Ավետարանը հավատի գիրք է. բայց դա չի խանգարում նրան միաժամանակ լինել պատմական վկայություն Քրիստոսի մասին: Ավետարանիչները խոսում են Նրա մասին լավագույն ձևով, քան որևէ այլ մեկը, քանի որ նրանց վրա է ընկել Նրա արտասովոր անձնավորության արտացոլքը: Բայց ո՛չ առաքյալները, ո՛չ առաջին քրիստոնյաները չստեղծեցին Հիսուսի կերպարը, այլ Նա Ին-

քը հնարավոր դարձրեց Ավետարանների երևան գալը։ Զգացվում է, որ ժամանակ առ ժամանակ նրանց հեղինակները պատմում են այն մասին, ինչը գերազանցում է իրենց սեփական մակարդակը, որ այդ մարդիկ մեծագույն դժվարությամբ են գլուխ հանում առաջադրված խնդրից։ Նրանք գրել են այն տարիներին, երբ դեռ կենդանի էին երկրում Քրիստոսի հայտնության վկաները, որոնք կարող էին գրվածին գնահատական տալ։ Եվ երբ բոլոր Ավետարաններից ընտրվեց մեր չորսը, ապա նշանակում է, որ հենց դրանք էլ առավել ճիշտ են հաղորդում Հիսուսի խոսքը և գործը։

Ժան-Ժակ Ռուսոն, որը ուղղափառ քրիստոնյա չէր, գրել է․ «Եթե Սոկրատի կյանքը և մահը արժանի են իմաստունին, ապա Հիսուսի կյանքը և մահը Աստծո կյանք և մահ են։ Կարող ենք դրանից հետո ասել, որ ավետարանական պատմությունը կամայականորեն հորինված է։ Բարեկամս, հորինվածքները այդպիսին չեն լինում, իսկ Սոկրատի գործերը, որոնց ոչ մեկը չի կասկածում, ավելի քիչ են հավաստված, քան Հիսուս Քրիստոսի գործերը։ Ըստ էության, դա կնշանակի դժվարությունը տեղափոխել այլ տեղ, ոչ թե այն վերացնել։ Իսկն ասած, անհասկանալի կլիներ այն ենթադրությունը, որ մի քանի մարդիկ մոգոնել են այդ գիրքը, որի սյուժեն տվել է մի անձ։ Հրեական գրողները երբեք էլ չեն հնարել ո՛չ այդ վարքը, ո՛չ էլ այդ բարոյականությունը։ Ավետարանները պարունակում են իրենց մեջ ճշմարտության այնչափ ապշեցուցիչ, այնքան անընդօրինակելի գծեր, որ հայտնագործողը կլիներ ավելի զարմանալի, քան ինքը՝ հերոսը»[199]։

Իրոք, վերցնենք թեկուզ Քրիստոսի խոսքերը իր կենդանի հնչերանգներով և արամեական դարձվածքներով․ դրանք բոլորը կրում են անկասկածելի վավերականության կնիքը։ Ինչ «համայնքներ» կարող էին ի զորու լինել հնարել այդ մշտապես հիշողության մեջ տպավորված առակները, արտահայտչականությամբ և կրակով լեցուն քարոզները։ Վաղ քրիստոնյաներից ով կարող է լինել դրանց հեղինակը։ Պողոս առաքյալի թղթերը ցույց են տալիս, որ նույնիսկ նա՝ դարաշրջանի առավել ականավոր ուսուցիչը, չի բարձրացել Ավետարանների մակարդակին։ Նրանց գաղտնիքը թաքնված է այն բանում, որ նրանք ոչ թե պարզապես հաղորդում են Եկեղեցու փորձը, այլ ամենից առաջ նրա Հիմնադրի ոգին, նկարագիրը և կամքը։

«Ասում են ոճը՝ ինքը մարդն է,- գրում է Չարլզ Դոդդը,- իսկ ինչպիսին է Հիսուսի քարոզների ոճը այդ դեպքում, եթե դատենք նրանց մասին Ավետարաններով։ Նրանց մեծ մասը գրված է կարճառոտ, ազդու ասույթներով, կտրուկ և երբեմն պլաստացական, անգամ հանելուկային, հեգնանքով և պարադոքսներով լի։ Ասույթների ամբողջությունը, ավանդությունների տարբեր միջոցներով մեզ հասած, ունի անսխալ կռահվող գծեր։ Կատարելապես անհավանական ենթադրություն կլիներ, որ այդ խոսքերը հանդիսանում են վաղքրիստոնեական քարոզիչների արհեստական աշխատանքի արդյունք… Որոշ, ավելի ընդարձակ հատվածները ակնհայտորեն հանդես են բերում ռիթմիկ կառուցվածք, որը դեռևս իրեն զգացնել է տալիս կրկնակ թարգմանությունից հետո (արամեականից հունականի և հունականից անգլիականի)։ Մերթ ընդ մերթ թվում է, որ հունական տարբերակը սոսկ բնագրի նուրբ քողարկումն է, որը մշտապես անցնում է հին հրեական և արամեական պոեզիայի ռիթմերի»[200]։

Այդ բացառիկ կարևոր եզրահանգումը տարիների հետազոտությունների, ժամանակակից պատմական գիտության, հնագիտության և լեզվաբանության լույսի տակ Ավետարանների մանրակրկիտ վերլուծության հանրագումարն է։ Նրանց հույսերը, ովքեր մտածում էին, թե գիտությունը պսակազերծ է անում Նոր Կտակարանը, չարդարացան։ Հենց ժամանակակից գիտնականների աշխատությունները մեկ անգամ ևս հաստատում են, որ Ավետարանները իսկական և վավերական փաստաթղթեր են։

## 2. ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐԻՆՅԱՆ ՊԱՏԱՆԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Մեր օրերում շատ հաճախ կարելի է հանդիպել սևամորթ կամ հնդկական «լոտոսի» դիրքով նստած Հիսուս Քրիստոսի պատկերի: Աֆրիկայի, Ասիայի, Օվկիանիայի ժողովուրդների մոտ ծնունդ է առել եվրոպացու հայացքին անսովոր, բայց երրորդ աշխարհի «երիտասարդ եկեղեցիների» ոճին համապատասխանող քրիստոնեական արվեստ (տե՛ս A. Lehmann. Afroasiatische Christliche kunst . Berlin.1966): Դա ակնառու ապացույցն է նոր դարաշրջանի սկսվելու, երբ քրիստոնեությունը դադարում է «սպիտակների կրոն» լինելուց, երբ Ավետարանների տիեզերական ոգին մարմնավորվում է աֆրոասիական ազգային մշակույթների մեջ:

Հասկանալի է, եթե ճապոնական կամ ինդոնեզական նկարիչը հաղորդում է Փրկչին իր ցեղակիցների գծերը, նա բոլորովին էլ չի մտածում, որ իրականում Քրիստոսը հենց այդպիսի տեսք ունի: Բայց վարպետի կողմից օգտագործված հնարանքը լիովին արդարացված է, և դրա սկիզբը հասնում է մինչև Բյուզանդիայի, միջնադարյան Արևմուտքի, հին Ռուսիայի արվեստները: Չէ որ խճաքանդակի, որմնանկարի կամ սրբապատկերի դեմքը լոկ նշան է, որը ցույց է տալիս աշխարհում մշտապես Քրիստոսի ռեալականությունը: Եվ այդ նշանը պետք է համապատասխանի յուրաքանչյուր ժողովրդի առանձնահատկություններին: Հիսուսի վավերական դիմանկարի բացակայությունը միշտ տարածություն է թողել նման վերափոխարկումների վրա:

Չնայած այդ ամենին, շատ քրիստոնյաներ, բնականաբար, կցանկանային իմանալ, թե ինչպիսի տեսք ուներ Մարդու Որդին այն տարիներին, երբ Նա ապրում էր երկրի վրա:

Հնարավոր չէ, արդյոք, այդ մասին պատկերացում կազմել, եթե ավետարանիչները ոչ մի խոսք չեն ասում Նրա արտաքինի մասին:

Այդ հարցն է, որ փորձում ենք քննել:

Սկսենք այն բանից, ինչը թեկուզ հայտնի է մոտավորապես. Քրիստոսի հանդերձի տեսքից: Դրա համար հարկավոր է արևմտյան գեղանկարիչների ներշնչած պատկերացումներից հրաժարվել: Նրանք համարյա բոլորը, հազվադեպ բացառություններով, Հիսուսին և առաքյալներին պատկերել են գլխաբաց և առանց ոտնամանի: Սակայն Պաղեստինի քարքարոտ ճանապարհներով մարդիկ, որպես կանոն, անցնում էին կոշիկներով կամ սանդալներով (հմմտ. Մարկ. Ա, 7), իսկ կլիմայով պայմանավորված սովորույթի համաձայն հազվադեպ էին գլխարկը հանում: Վերջինս երեք տեսակ էր՝ փույուգիական թասակի տիպի ոչ բարձր գլխարկ (ամենահին ձևը՝ ընդունված թագավորաց ժամանակներից), չալմա և սուդխար՝ փաթթոց, որը շատ հաճախ գլխներին կապում էին բրդյա քուղերով (ժամանակակից արաբական քուֆյեն):

Հռոմեական ժամանակաշրջանի իսրայելացիների հանդերձը առանձնանում էր տարազի միօրինականությամբ (տե՛ս Троцкий И. Библейская археология, էջ 112 հաջորդիվ): Տղամարդկանց մոտ դա ամենից առաջ կետոնետն էր կամ խիտոնը՝ լայն գոտիով, համարյա մինչև գետին հասնող ընդարձակ պարեգոտը (տե՛ս И.Флавий, Арх. III, 7, 2): Համաձայն Հովհ. ԺԹ, 23, Հիսուսի պատմուճանը ոչ թե կարած էր, այլ «վերևից ներքև ամբողջովին հյուսած շուրջանակի»: Այդպիսի հագուստը գին ուներ, այդ պատճառով էլ Քրիստոսի դահիճները վիճակ գցեցին, թե իրենցից որին կհասնի այն: Պատմուճանը լինում էր կապույտ, մոխրագույն կամ շերտավոր, որոշ մեկնիչներ տեսնում են Մարկ. Թ, 3 ճերմակ գույնի ակնարկ (տե՛ս M. and J. Miller. Encyclopedia of Bible Life London, 1967, p. 60-61):

Պարեգոտի վրա կրում էին սիմլու՝ կոպիտ բրդից թիկնոց: Սովորաբար այն ծառայում էր նաև գիշերը տակը փռելու համար, դրա հետ կապված Օրենքը պատվիրում էր մինչև մայրամուտ վերադարձնել մարդուն իր թիկնոցը, անգամ, եթե այն գրավ է թողնված (Ելից, ԺԱ, 26): ի վերնազգեստը կտոր-կտոր արեցին (Հովհ. ԺԹ, 23):

Բարեպաշտ մարդիկ, հետևելով պատվիրանին (Թվ. ԺԵ, 38-40), կարում էին թիկնոցի քղանցքներին կապույտ ծոպքեր՝ «կանաֆներ» կամ craspeoa : Ավետարանից մենք գիտենք, որ դրանցից կային նաև

Փրկչի հագուստի վրա (Մատթ. Թ, 20. Ղուկ. Ը, 44):

Աղոթքի ժամանակ, Հիսուսը, հրեական սովորության համաձայն, ուսերին գցել էր Թալլիտ (Թալլիֆ). երկարավուն հատուկ գլխաշոր՝ ժապավենով: Հաճախ դրա ծայրերը գցում էին մեջքի վրա (Талмуд, Шаббат,147а, Менахот, 41а):

Անտարակույս, Խորհրդավոր Ընթրիքի ժամանակ Քրիստոսը Թալլիտ էր կրում:

Եթե Քրիստոսի հագուստը մենք ամբողջությամբ կարող ենք պատկերացնել, ապա Նրա դեմքի, կազմվածքի և հասակի մասին ոչ մի տվյալ չկա: Դա բացատրվում է ոչ միայն այն բանով, որ Հրեաստանում պատկերագրությունը արգելքի տակ էր գտնվում:

Սուրբ Գիրքն ինքը համարյա երբեք կանգ չի առնում մարդկանց արտաքին գծերի վրա: Ճիշտ է, Դավիթի մասին հարևանցի հիշատակվում է, որ նա «շիկամազ էր*, գեղեցիկ աչքերով և հաճելի դեմքով» (Ա. Թագ. ԺԶ, 12), բայց դա հազվագյուտ բացառություն է:

Նոր Կտակարանի հեղինակները հետևում էին Հին Ուխտի գրական ավանդույթներին և այդ պատճառով մենք նրանց մոտ չենք գտնի Հիսուսի տեսքի նկարագրությունը: Այդ մասին սկսեցին մտածել միայն հունահռոմեական աշխարհի քրիստոնյաները, բայց այդ ժամանակ արդեն հիշողություններ չէին պահպանվել, որոնք կարող էին նկարչին կողմնորոշել (տե՛ս Голубцов А. Иисус Христос по внешнему виду.- ПБЭ. СПБ., 1905, т. VI, էջ 665-675):

Որոշ վաղ եկեղեցական հեղինակներ, վկայակոչելով մարգարեությունը Տիրոջ Ծառայի մասին (Եսայի. ԾԳ), գտնում են, որ Քրիստոսի նվաստացումը վերաբերում է նաև Իր արտաքինին: Սբ. Հուստինիանոսը, Կղեմես Ալեքսանդրացին և Տերտուղիանոսը հաստատում էին իբր Հիսուսն անբարետես դեմք է ունեցել (Иустин. Диалог с Трифоном Иудеем, 88, лимент. Педагог, III,1,Тертуллиан. О. воплощении, IX): Այդ տեսակետը իր բանակռվում օգտագործել է Ցելսը (մոտ 170 թ.): «Քանի որ Հիսուսի մարմնում, - գրում է նա,- Աստծու Հոգին է, ապա այն ուրիշներից կտրուկ պետք է տարբերվի հասակով, գեղեցկությամբ, ուժով, ձայնով, զարմացնելու և համոզելու ընդունակությամբ: Մինչդեռ այն ոչնչով չի տարբերվում ուրիշներից և, ինչպես ասում են, աչքի չի ընկնում հասակով, գեղեցկությամբ, վայելչակազմությամբ» (Մեջբերումն ըստ՝ Ориген, Против Цельса, VI 75):

* Սինոդական թարգմանության մեջ՝ «բաց խարտյաշ»:



III և հատկապես IV դարից, հավանաբար, գեղեցկության մասին անտիկ ըմբռնումների ազդեցության տակ տարածվեց հակառակ տեսակետը: «Ծպտյալ Աստվածության հենց ճառագումն ու վեհությունը,- ասում է Քրիստոսի մասին երանելի Հիերոնիմը,- առաջին հայացքից կարող էին Նրան նայողներին գրավել իրենց կողմը» (Иероним. На Матфея. XI, 9): Սակայն այդ խոսքերում զգացվում է ավելի շուտ կռահումը, քան հաստատված ավանդույթի ծանոթությունը: Մոտավորապես այդ նույն ժամանակ, եր. Ավգուստինոսը ժխտեց նման ավանդույթի գոյությունը (О. Троице, VIII, 5): Ընդ որում, դեռևս մոտ 180 թ. Սբ. Իրինեոս Լիոնացին ստիպված էր ուղղակիորեն խոստովանել, որ «Հիսուսի մարմնական տեսքը ակնհայտ է» (Против ересей, 1, 25):

Երկու կռահումներից երկրորդը ներկայանում է առավել ճշմարտանման: Եթե Քրիստոսն ունենար ինչ-որ մարմնական թերություններ, ապա դրանք կդառնային Նրա թշնամիների ծաղրի առարկան: Ավետարաններից կարելի է եզրակացնել, որ Հիսուսը մարդկանց մոտ առաջին հայացքից արթնացնում էր բարեհաճություն: «Ճիշտն ասած,- նկատում է Ալբեր Ռեվիլը,- տգեղ արտաքինը կարող է խոչընդոտ դառնալ այդ զարգացմանը, եթե միայն գեղեցիկ հոգին չստիպի մոռանալ տգեղ և բիրտ դիմագծերը: Բայց այդ դեպքերում հարկավոր է, ի վերջո, որոշ ժամանակ այն բանի համար, որպեսզի հաղթահարվի առաջին տպավորությունը: Հիսուսի վերաբերմամբ այդ առումով, ըստ երևույթին, անհրաժեշտություն չի եղել» (А.Ревил. Иисус Назарянин, т. 1, էջ 309):

Կատարելապես անհիմն կարծիք է այն, թե իբր Քրիստոսը բնությունից փխրուն էր և թույլ: Նա շատ տարիներ է զբաղվել ֆիզիկական աշխատանքով, քիչ չի ճանապարհորդել, անց է կացրել քառասունօրյա պահք: «Արևի կիզիչ ճառագայթների տակ,- գրում է Կարլ Ադամը,- կածաններով, ոչնչով չստվերամած, վայրի ժայռակույտի միջով Նա պետք է վեցժամյա անցումով բարձրանար ավելի քան 1000 մետր: Եվ ամենազարմանալին, Հիսուսը հոգնած չէր: Այդ նույն երեկոյան Նա մասնակցում է Ղազարոսի և նրա քույրերի կողմից Իր համար պատրաստված խնջույքին (Հովհ.ԺԲ, 2): Հիսուսի հասարակական ծառայությունների նշանակալի մասը տեղի է ունենում ոչ տնային հարմարավետության պայմաններում, այլ՝ բաց բնության մեջ՝ ենթակա բնության բոլոր կարգի հանկարծափոխություններին ու կասկած չկա, որ Հիսուսը հարյուրավոր անգամներ գիշերել է բաց երկնքի տակ և մասամբ այդ պատճառով այդքան մոտիկից գիտեր դաշտերի շուշաններին և երկնքի

հավքերին: Միայն արմատապես առողջ մարմինը կարող է համապատասխանել այդ պահանջներին: Դրա հետ մեկտեղ, թափառականի այդ կյանքը լի էր դժվարություններով և անսովոր լարվածությամբ» (К. Адам. Иисус Христос, ст. 94):

Մենք արդեն ասել ենք, թե Քրիստոսի մարդկային ինչպիսի գծերն են երևան գալիս ավետարաններում: Բայց և այնպես, Նրա անձնավորության լրիվ բնութագիրը չկա այնտեղ: Առաքյալները անպայման զգացել են այն տարածությունը, որը իրենց բաժանում է Վարդապետից: «Ավետարանում,- գրում է ժամանակակից մեկնիչ Ջոն Լ. Մաքենզին,- իրական պատմություններ են, որոնք մեզ ասում են այն մասին, ինչը կարելի էր տեսնել և լսել: Նրանցում չկան ոչ ներքին մենախոսություններ, ոչ հոգեբանական պատճառաբանություններ, ինչը այդքան սիրում են ժամանակակից վիպասանները: Նրա անձնավորությունը շոշափվում է լոկ այնքանով, ինչքանով այն արտահայտվում էր արտաքուստ: Հիսուսը չափից դուրս բաց չէր: Նա էքստրավերտ չէր, որը բաց է անում իր սրտի խորքերը առաջին պատահածին... Եվ այդ զսպվածությունը զուգակցվում է մեծագույն մերձենալիությանը և բարեհաճությանը: Բայց և այնպես, մոտիկից Նրան իմացողները զգում էին, որ մշտապես Նրանում մնում է ինչ-որ չարտահայտված մի բան: Նա ուներ մարդկային զգացմունքներ, որը Ինքը չէր թաքցնում, բայց աշակերտները տեսնում էին, որ Նրա զգացմունքները, ի տարբերություն իրենց անձնականի, մշտապես մնում էր հսկողության տակ: Նա ուներ հազվագյուտ արժանապատվություն և հեղինակություն: Բայց, չնայած զսպվածությանը, Նրա խոսքերը և արարքները միշտ անկեղծ էին. ոչ խորամանկության, ոչ դիվանագիտության կարիք Նա չուներ» (J.L.McKenize. Mastering of the Meaning of the Bible. 1960.p. 75):

Այսպիսով, ակնհայտ է, որ առաքյալների ավանդածը կարողացել է պահպանել հիշատակություն Քրիստոսի հոգևոր նկարագրի մասին, չնայած այդ անելը շատ ավելի դժվար էր, քան Նրա դեմքը հիշելը:

Միջին դարերում շատ քրիստոնյաներ հրաժարվում էին հավատալ, որ Աստվածամարդու դիմագծերը մոռացվել են և հույս ունեին լրացնել այդ բացը Նրա տեսքը նկարագրող պարականոնների օգնությամբ: Այդպիսի պարականոններից մեկը XVIII դարում բերում է Սբ. Հովհան Դամասկացին, մյուսը՝ Նիկոֆոր Կալլիստը XIV դարում: Առանձնապես տարածված է, այսպես կոչված «Լենտուլի նամակը», մարդու, որը իբր կառավարել է Հրեաստանը ավետարանական ժամանակներում (տե՛ս Хитров М. Подлинный лик Спасителя. М., 1984, էջ 18 հաջոր-



դիվ): Բայց, ինչպես պարզել է դեռևս Լորենցո Վալլան (XV դար), այդ պարականոնը XII հարյուրամյակից հին չէ:

Մեկ անգամ չեն ենթադրություններ արվել, որ այդ պարականոնները, այդուհանդերձ, հիմնվում են մեզ չհասած հնագույն պատկերների վրա:

Գոյություն ունեցել են, արդյոք, այդպիսի պատկերներ:

Լամպրիդիայի (Vita Alex. Sev., 29) վկայությամբ, Ալեքսանդր Սեվերոս (222-235) կայսրը դրանցից մեկը զետեղել է իր սրբապատկերների դարակում, մեծ իմաստասերների արձանիկների կողքին: Բայց ինչ տեսք է ունեցել, մենք չգիտենք, և, առավել ևս, կասկածելի է, որ այն դիմանկար է եղել:

IV դարում պատմաբան Եվսեբիոսը Կեսարիայում տեսել է Փիլիպպոսի արձանը, որը, ինչպես հաստատում են, պատրաստել է Քրիստոսի կողմից բժշկված մի կին (Մատթ. 9, 20 հաջորդիվ): Դա երկու ֆիգուրներից կազմված բրոնզյա արձանախումբ է՝ հենց կնոջից և Նրան ձեռքը մեկնած, «կրկնակ պարեգոտով գեղեցիկ զգեստավորված» մարդուց (Евсевий. Церк. История, VII,18): Բայց եթե հուշարձանի մասին մինչև IV դարը գիտեին, այդ էին վկայակոչում քրիստոնյաները, մասնավորապես Սբ. Հուստինիանոսը, նախկին, ինչպես և Եվսեբիոսը, Պաղեստինի բնակիչ: Այնինչ, այդ արձանի մասին վկայությունները ավելի հին չեն Եվսեբիոսի տեղեկություններից: Այդ պատճառով էլ, պատմաբանները գտնում են, որ այն կանգնեցվել է կամ կայսրի պատվին* կամ էլ ի երախտագիտություն Էսկուլապի՝ բժշկարար աստծուն:

Փրկչի հնագույն հռոմեական պատկերումները, որոնք հասել են մեր օրերը, միայն հաստատում են Սբ. Իրենեոսի խոսքերը, երբ ասում էր, թե. «Հիսուսի մարմնական տեսքը անհայտ է»: Ամենուր Նա ներկայացված է անմորուս պատանու կամ Օրփեոսի, Հովվի, Գառան այլաբանական պատկերներով:

Այդ ֆոնի վրա ապշեցուցիչ հակադրություն է ներկայացնում Սբ. Կալլիկստի կատակոմբի որմնանկարը, որը գտել և պատճենահանել է XVII դարում քրիստոնեական հնությունների առաջին հետազոտող Անտոնիո Բոզիոն (A. Bosio. Roma Sotteranea, 1632, lib. III, p. 253): Առաստաղին պատկերված մեդալիոնի մեջ կարելի է տեսնել երկար մազերով և կարճ մորուքով մարդու դեմք: Բոզիոն որմնանկարը վերագրում է II դարի սկզբին: Ցավոք սրտի, ներկայումս այն քանդված է, և այն հարցին, թե իսկապես Հիսուսն է այնտեղ պատկերված, մնում է անորոշ:

* Օգոստոսի ժամանակներից կայսրերին հաճախ անվանում էին «Սոտեր»՝ Փրկիչ:

Ամենաառեղծվածյինը Հիսուս Քրիստոսի սրբապատկերներում անսպասելի անցումն է խորհրդանիշային, պայմանական պատկերումներից այն կերպարին, որը մինչև հիմա ամուր արմատավորվել է ավանդույթի մեջ։ Այն անվանում են «արևելյան» կամ պատմական, և Հռոմում այն հայտնի դարձավ արդեն III դարից (տե՛ս A.Grabar. Le premier art chretien. Paris 1966, p. 192, 212)։

Ինչքան էլ որ բազմազան լինեն Քրիստոսի դեմքերը արվեստի պատմության մեջ, Բյուզանդական խճաքանդակներից և Վերածննդի վարպետներից մինչև մեր ժամանակի ստեղծագործությունները, բոլորը կախվածություն են հանդես բերում այդ նախատիպից (տե՛ս Покровский Н. Иисус Христос в икинографии, ПБЭ, т. VI, с.676-679)։

Գայթակղիչ է այն ենթադրությունը, որ դրան հիմք է հանդիսացել ինչ-որ հնագույն պատկեր։ Այդ բնօրինակի որոնումներում գիտնականները դիմեցին քաջ հայտնի եդեսիական լեգենդին։

Եդեսիան ոչ մեծ մի պետություն է Հյուսիսային Միջագետքում, որտեղ քրիստոնեությունը թափանցել է 180 թվականից ոչ ուշ։ III հարյուրամյակի սկզբում այն արդեն բացահայտ դավանում էր Եդեսիայի Աբգար IX թագավորը (տե՛ս В. Болотов. Лекции по истории древней Церкви. СПб., 1910, С.2, էջ 256)։ IV դարի պատմագրություններում ասվում է, որ դեռևս Աբգար V Մեծը (13-50) նամակ է գրում Հրեաստան՝ Հիսուս Քրիստոսին և Նրանից պատասխան ստանում (Евсевий. Церк. История, 1, 13)։ Այդ լեգենդը քիչ արժանահավատ է, ինչպես և գրույցն այն մասին, որ Քրիստոսն ուղարկում է Իր պատկերն Աբգար Մեծին՝ սրբիչի վրա դրոշմված։ Բայց տվյալներ կան, որ Եդեսիայում իսկապես որպես սուրբ մասունք պահպանվել է անձեռակերտ համարվող ինչ-որ պատկեր (տե՛ս А. атанский. Сказания о Нерукотворном образе Спасителя восточные и западные.- ХЧ, 1874, т. III, էջ 471 հաջորդիվ)։ Արաբների կողմից Եդեսիան նվաճելուց հետո, պատկերը տեղափոխում են Կոստանդնուպոլիս։ Առաջին պատմիչը, որը հիշատակում է այդ մասին, IV դարում ապրած Եվագրոսն է (Евагрий. Церковная история IV, 27)։

Կարող են, արդյոք, «անձեռակերտ պատկերի» մասին գրույցները փոքր ինչ լույս սփռել Փրկչի իրական կերպարանքի խնդրի վրա։

1977 թ. աշնանը անգլիացի պատմաբան Ժ. Ուիլսոնը Լոնդոնում կազմակերպված գիտաժողովում հանդես եկավ վարկածով, համաձայն որի «անձեռակերտ կերպարը» ոչ այլ ինչ էր, եթե ոչ Քրիստոսի թաղման պատանը․ այն կարող էր պահպանված լինել ծալված վիճակում,



այնպես որ տեսնվեր միայն դեմքը, իսկ հետագայում գործվածքը ամբողջությամբ բաց է արվել։

Մի ժամանակագրության համաձայն, երբ խաչակիրները 1204 թվին թալանել են Բյուզանդիան, մասունքը «անհետացել է» Կոստանդնուպոլսից։ Ուիլսոնը պարզել է, որ բյուզանդացիների դեմ տարվող արշավանքում մասնակցում էր ֆրանսիացի ասպետ դե Շարնին։ Այդ մանրամասնը հույժ էական է, քանի որ 1353 թվականին ոմն կոմս դե Շարնի (հավանական է՝ խաչակրի հետնորդը) եկեղեցի է կառուցում, որտեղ զետեղում է վարշամակը, հաստատելով, որ այն Տիրոջ իսկական պատանն է։

Այդ ժամանակից մասունքի ճակատագիրը քննվում է մինչև մեր օրերը։ 1452 թվականին Մարգարիտ դե Շարնին փոխանցում է այն հերցոգ Սավոյացուն, որի հետնորդները ավելի ուշ դարձան Իտալիայի թագավորներ։ Ներկայումս պատանը գտնվում է այդ ընտանիքի ձեռքում։ 1578-ից այն պահպանվում է Իտալիայի Թուրին քաղաքի Սբ. Հովհաննեսի տաճարի հատուկ տապանակում, այդ պատճառով էլ այն հայտնի է որպես Թուրինյան պատան։

Եկեղեցական իշխանությունները նախապես պատանին վերաբերվում էին զուսպ։ Դեռևս XIV դարում Թրուա քաղաքի եպիսկոպոսը գտնում էր, որ Նրա վրա պահպանվել է ոչ թե մարմնի դրոշմ, այլև գեղանկարչի նկար։ Այն իր վրա չհրավիրեց նաև պատմաբանների ուշադրությունը, որոնք ճնշող մեծամասնությամբ կիսում էին եպիսկոպոսի կարծիքը։ Պատանը գեղարվեստական արժեք էլ չուներ։ Կտավի՝ 4, 1-1, 1 չափերով մի կտորի վրա հազիվ երևում էին միայն մութ բծեր, ոչ հստակ նշմարվող ինչ-որ դեմքի ուրվագիծ և մարմնի ստվերապատկեր։

Բայց 1898-ից, շնորհիվ լուսանկարիչ Սեկոնդո Պիայի, վերաբերմունքը Թուրինյան մասունքի նկատմամբ սկսվեց փոխվել։ Պիան լուսանկարեց այն կտավից և նայելով նեգատիվ թանթիկին, խորապես ցնցվեց։ Նրանում երևակվել էր Փրկչի «պատմական» սրբապատկերները զարմանալիորեն հիշեցնող պոզիտիվ պատկեր (տե՛ս Пахарнаев А. Исследование о подлинности изображения лика и тела Христа Спасителя на Туринской плащанице. СПБ., 1903)։

Հետագա տարրալուծությունը ցույց տվեց, որ պատանը իրենից ներկայացնում է ամենևին էլ ոչ արվեստի ստեղծագործություն, այլ անհասկանալիորեն նեգատիվ տեսքով գոյացած բնական դրոշմ։ Նրա վրա ոչ մի ներկի հետքեր էլ չգտան։ Մասնավորապես, ներկանյութը պարտադիր կփոխազդեր կրակի ազդեցությանը։ Մինչդեռ հրդեհը, որը վնասել էր կտավը 1532 թ. դեկտեմբերին, ոչ մի ձևով հետք չի թողել

պատկերի վրա:

Մեր դարի 30-ական թվականներին, այն բանից հետո, երբ կտավի նոր լուսանկարումներ արվեցին, ֆրանսիացի կենսաբան Պոլ Վինյոն գրում է. «Քանի որ պատկերները նկարված չեն, քանի որ դրանք չէին կարող ստացված լինել ոչ մի այլ արհեստական ճանապարհով, մնում է հետազոտել՝ արդյոք դրանք ինչ-որ պրոցեսների արդյունք չեն: Առաջին լուսանկարը տարրալուծության ենթարկելով և փորձեր անցկացնելով Սորբոնի փորձանոցում՝ մենք հանգեցինք այն եզրակացության, որ պատկերները մարդկային մարմնի ուղղակի դրոշմ չեն: Անմիջապես ակնհայտ դարձավ, որ դրանք ստացվել են պարզապես ոչ հպումներից, քանի որ հպումները փափուկ գործվածքին մարդկային մարմնի անկանոն մակերևույթին, պիտի բերեին պատկերի զգալի աղավաղմանը, իսկ այդ արտացոլանքում աղավաղումներ համարյա չկան, եզրերն էլ աննշան են: Դրանք կարող էին ստացվել միայն մարմնի մակերևույթից անջատվող գոլորշիացման գործողությամբ» (P. Vignon. Le Saint Suaire de Turin, Paris, 1938):

Պ. Վինյոնի և այլ գիտնականների կարծիքով, դրոշմները գոյացել են զմռսելու ժամանակ օգտագործված՝ մարմնում գտնվող նյութերի շնորհիվ (զմուռս և հալվե) (հմմտ. Հովհ. ԺԹ, 39): Միայն բացառությունը կազմում են հետքերը, որոնք բժիշկ Պ. Բարբիեի տվյալներով՝ «վերարտադրված են արյան մակարդվածքի անմիջական հպումներից» (P.Barbet. A Doktor at Calvary. New York. 1963, p. 18):

Ա. Լագրանի հետազոտությունները ցույց են տվել, որ նյութի կառուցվածքը լիովին համապատասխանում է Պոմպեյի և Ասորիքի պեղումներից հայտնի մանածագործության գործելաոճերին (տե՛ս Гаврилов М. Туринская плащаница. Брюссел, Жизнь с Богом,1961, էջ 17):

Բոլոր այս եզրահանգումները մեծացրին գիտնականների հետաքրքրությունը մասունքի նկատմամբ: Պողոս VI Պապը 1973 թվականին հրապարակայնորեն հայտարարեց, որ այն «արժանի է հատուկ ուսումնասիրության»:

1977 թ. գիտաժողովում մակերևութային տիեզերական լուսանկարչության վարպետներ Ջ. Ջեկսոնը և Է. Ջասպերը ցուցադրեցին պատանի լուսանկարներ, որոնք վերջնականապես ապացուցեցին, որ դրոշմը նրա վրա ստացվել է ոչ թե հարթ պատկերներից, այլ ծավալուն մարմնից:

Ինչ կարելի է տեսնել Թուրինյան պատանի վրա, եթե նայենք նրա նեգատիվ լուսանկարը:

Այն արտահայտում է մարդու ներդաշնակ մարմնակազմ, որին դա-



ժանաբար ենթարկել են մտրակահարման և խաչ են հանել: Դեմքը համակված է վեհությամբ և խաղաղությամբ, չնայած այն բանին, որ այն կրում է հարվածների և կապտուկների հետքեր: Վախճանյալը ունեցել է ալիքաձև մազեր, համեմատաբար նեղ դեմք, նուրբ քիթ, կարճ, երկու կողմի վրա կիսված մորուք: Մեռնելուց հետո աչքերի վրա դրամներ են դրել, որոնց չափը համապատասխանում է Պաղեստինում I դարում գործածության մեջ եղողներին: Գլխի վրա տեսանելի են փշե պսակի հետքերը՝ հյուսված ոչ թե օղակի, (ինչպես սովորաբար պատկերում են Չարչարանքի նկարներում), այլ գլխարկի տեսքով:

Ձեռքերը և ոտքերը ծակված են սուրսայր բանով, ընդ որում, ձեռքերը ոչ թե ափի մեջ, այլ՝ դաստակների վրա: Դա ուղիղ համընկնում է խաչելության եղանակներին, որի մանրամասները պարզված են, շնորհիվ Երուսաղեմի մոտակայքի պեղումների: Աջ կողը խոցված է (հմմտ. Հովհ. ԺԹ, 34), մարմնի վրա մտրակի հարվածների հետքեր կան: Ավելի քան քսան տարի պատանն ուսումնասիրած Ջուլիո Ռիչչին իր մոնումենտալ աշխատանքում գրում է, որ հարվածները հասցված են հենց հռոմեական արճճե փշեր ունեցող մտրակով, որի ձևը Միջին դարերում հայտնի չէր (G. Ricci. La Sindone Santa Roma, 1976, p. 26): Թաղելիս դեմքը պատանի վրայից փաթաթված է եղել գլխաշորով (հմմտ. Հովհ. Ի, 7):

Մի խոսքով, պատանի վրայի պատկերը լիովին համապատասխանում է Չարչարանքի մասին ավետարանական պատմություններին: Վերջերս արված հետազոտությամբ պատանի վրա հայտնաբերվեց ինչ-որ ռադիացիայի նշաններ:

Բացառված չէ, որ դրանք Քրիստոսի մարմնի պայծառակերպության հետքերն են, որը տեղի ունեցավ Նրա հարության պահին...

Վճռորոշը պատանի թվագրության հարցն էր: Ցավոք սրտի, նրանք, ում սեփականությունն է այդ, թույլ չեն տալիս կտավից մի կտոր կտրել, որն անհրաժեշտ է նորագույն գիտական եղանակների հնարավորություններով հետազոտելու համար: Նրանք պատճառաբանում են, որ մեծագույն սրբությունը (որի իսկական լինելուն նրանք չեն կասկածում) չպետք է վնասվի ի հաճույս սկեպտիկների: Այդ պատճառով էլ, գիտնականները մինչև օրս օգտվում են թվագրության անուղղակի միջոցներից:

Այդ նպատակով, հայտնի շվեյցարացի քրեագետ Մաքս Շուլցերը էլեկտրոնային մանրադիտակի տակ հետազոտել է պատանի վրայի ծաղկափոշին: Այն անհավանականորեն չի փոխվել, որը հնարավորություն է տալիս պարզել, թե երբ և որտեղ են աճել այդ ծաղիկները, որոնցից

յն տարածվել է: Արդյունքները ապշեցուցիչ էին: Պատանի վրա գտնվում էր Պաղեստինի I դարի էնդեմիկ,* ինչպես նաև Ասորիքի, Բյուզանդիայի, Ֆրանսիայի համապատասխանաբար ավելի ուշ ժամանակաշրջանների բուսականություն...

Այն, որ նյութը պահպանվել էր այսքան երկար ժամանակ, ոչ մի գերբնական բան չկա: Զմռսման նյութերով հագեցած կտորները կարող են անվնաս մնալ հազարավոր տարիներ: Բավական է հիշել եգիպտական դամբարանների խանձարուրները: Հրեական անապատների անձավներում գտնվել են I դարի վուշե գործվածքի շատ ծվեններ:

Հովհաննեսի Ավետարանում (Ի 5) ասվում է, որ երբ կանայք, Պետրոսը և Հովհաննեսը եղան դամբարանում, նրանք այնտեղ գտան Քրիստոսի Թաղման վարշամակը: Հրեաների համար դիակի մոտ գտնվող բոլոր իրերը համարվում էին «անմաքուր»: Բայց աշակերտների համար «շաբաթ օրվանից հետո» առաջին իսկ օրից Փրկիչն այլևս մեռած չէր: Դրա համար էլ, Գալիլեա գնալով, նրանք պատանը կարող էին վերցնել իրենց հետ և պահպանել որպես սրբություն:

Հետո, երբ I դարի 30-ական թվականներին քրիստոնյաները սկսեցին լքել Պաղեստինը, նրանցից ոմանք բնակություն հաստատեցին Դամասկոսում, Ասորիքում: Նրանք էլ, ըստ երևույթին, տարել են այնտեղ: Ասորիքից II կամ III դարերում այն կարող էր ընկնել Եդեսիա, որտեղ այդ ժամանակ քրիստոնեությունը հաղթում էր և որտեղ այն պաշտվել է որպես «անձեռակերտ պատկեր»:

Արժե մտածել այն բանի շուրջ, որ հենց այդ ժամանակից պատկերագրության մեջ հայտնվում է Քրիստոսի «պատմական» կերպարը:

70-80-ական թվականներին մասնագետների միջազգային խմբերը բազմիցս զբաղվել են պատանի հետազոտությամբ: Համարյա ստացված բոլոր տվյալները վկայում են նրա իսկական լինելու օգտին: Ճիշտ է, ռադիոկարբոնային տարրալուծությունը կտավի փոքրիկ հատվածի վրա ցույց տվեց միջին դարերի թվագրություն: Բայց, ինչպես կարծում են, կրակի մեջ եղած գործվածքը չի կարելի թվագրել այդ եղանակի օգնությամբ: Բացի դրանից, մնում է չլուծված այն խնդիրը, թե ինչպես է գոյացել դրոշմը: Մի խոսքով, գիտնականները Թուրինյան երևույթի մասին չեն ասել իրենց վերջին խոսքը: Եթե պատանի իսկությունը անվիճելիորեն հաստատվի, մենք կարող ենք համարձակ ասել, որ Տիրոջ բոլոր քրիստոնյաների համար սիրելի «մարմին առած» գծերը դադարեցին գաղտնիք լինելուց:

* Այսինքն՝ միայն այդ տեղանքում հանդիպող:



## 3. ԱՎԵՏԱՐԱՆ, ՕՐԵՆՔ ԵՎ ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐ

Ընդունելով Հին Կտակարանը որպես Սուրբ գիրք, Քրիստոսի Եկեղեցին հետևում է Իր Հիմնադրի կամքին, Որը ասում է. «Մի մտածեք, որ ես եկա Օրենքը և Մարգարեներին վերացնելու» (Մատթ. Ե. 17): Քրիստոնեության տաճարներում մինչև այսօր էլ հնչում են Հինկտակարանյան Եկեղեցու հնագույն պարերի խոսքերը, մասնավորապես 18-րդ սաղմոսը՝ Օրենքը փառաբանող այդ ոգեշունչ հիմնը (տե՛ս առավոտյան հոգեհանգստի ժամերգության հետևողությամբ):

Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի օրերին աստվածաշնչյան կանոնական գրքերի ցուցակը դեռևս ամբողջությամբ հաստատված չէր, նրա մեջ մտնում էին միայն Օրենքը և Մարգարեությունները, իսկ երկրորդ մասը (Սուրբ Գրոց) միացվեց Աստվածաշնչին միայն I դարի վերջում: Չնայած դրան, նորկտակարանյան Եկեղեցին իր կանոնական գրքերի մեջ ներառավ նաև այդ առավել ուշ ժամանակների բաժինը: Այսպիսով, Հին ուխտի բովանդակությունը մնաց ընդհանուր քրիստոնեության և հուդայականության մեջ:

Սակայն հարց է ծագում, թե ինչու Պողոս առաքյալն ասաց (Գաղ. Գ, 23-25), որ Քրիստոսի՝ երկիր հայտնվելուց հետո, «Օրենքի գդոնությունը» կորցնում է իր երբեմնի ազդեցությունը: Որոշ աստվածաբաններ ձգտել են ապացուցել, որ «հեթանոսների առաքյալը», նկատի ունենալով իր քարոզչական նպատակները, աստվածահայտնության կրոնի մեջ մտցրել է նրան խորթ ոգի և գաղափարներ: Պողոսի այս մտքի աղբյուրների վերլուծությունը չի հաստատել այդ տեսակետը: Առաքյալն ամենևին էլ չի պատրաստվել խզել կապը Հինուխտյան ավան-

դույթների հետ և կասկածի ենթարկել Աստվածաշնչի արժեքը, բայց լինելով Գամաղիելի աշակերտը, նա կիսում էր ռաբբիների հավատը «գալիք դարի» հանդեպ, որը Փրկչի գալով կփոխարինի «այս դարին» (տե՛ս прот. Смирнов А. Мессианские ожидания и верования иудеев около времен Иисуса Христа. Казань 1899, с. 214; H. Ringgren. Israelite Religion London. 1966, p. 335):

Համաձայն Պողոս առաքյալի, հրամանների և արգելքների համակարգի տեսքով տրված հին սինայական Օրենքը ամենից առաջ դաստիարակչական միջոց էր. «երեխաներին դեպի Քրիստոսը տանող ուղեցույց» (Գաղ. Գ 24): Օրենքը լոկ «արգելք էր» դնում մեղքի վրա, չտալով չարը հաղթահարելու և Աստծուն մոտենալու ներքին ուժ: Երբ կատարվեց Երեմիայի կանխագուշակությունը (գլ. 31)՝ Նոր ուխտը, Աստված մարդկանց շնորհեց փրկչական բարիք Հիսուս Քրիստոսի միջոցով: Քրիստոսը նոր ճանապարհ բացեց դեպի Աստվածորդիություն, որին մարդը չի կարող հասնել միայն պատվիրանների կատարումով:

Հին Կտակարանի լիակատար համապատասխանությամբ Պողոսը ցույց տվեց, որ արդարության հիմքը ոչ թե գտնվում է Օրենքում, այլ հավատի մեջ, Արարչի հանդեպ անվերապահ հավատի մեջ: Հենց այդ հավատը Աբրահամին դարձրեց Աստծո ժողովրդի նախահայրը (Գաղ. Գ 6-7): Նոր Կտակարանում այդ հավատը ուղղված է մարմնավորված Աստծու Որդուն:

Նույն Պողոս առաքյալը հավաստում է, որ հավատն առանց սիրո «ձայն հանող պղինձ է» (Ա Կորնթ. ԺԳ), մինչդեռ Օրենքի պատվիրանների բարոյական էությունը հենց մարդու սերն է մարդու հանդեպ:

Հակոբ Առաքյալի՝ Տիրոջ եղբոր շուրջ խմբված քրիստոնյաները գտնում էին, որ մկրտությունը կարելի է թույլ տալ նրանց, ովքեր ձևականորեն ընդունել են հուդայականությունը և պահպանում են դրա բոլոր կանոնները: Բայց, դրանով իսկ, նրանք ավելի խստապահանջ դուրս եկան փարիսեցիներից, որոնք չէին պահանջում այդ բանը պրոզելիտներից (նրանց բավական էր պահել միայն «Նոյի պատվիրանները» (Авод-Зара, 646; հմմտ. Ծննդ. Թ. 4): Երուսաղեմի առաքելական ժողովը մերժեց այլազգիներին ներկայացվող պահպանողականների պահանջը (Գործք. ԺԵ 1-29): «Հրեա քրիստոնյաների վերաբերմամբ ենթադրվում էր, որ նրանք առաջվա պես պետք է կատարեն Մովսեսի օրենքը» (Поснов М. История христианской Церкви. Брюссель, Жизнь с Богом, 1964, էջ 67)*:

* Հատկանշական է , որ այդ դեպքերում, երբ հեթանոսական և հուդայական ծեսերը համընկել են, քրիստոնեական համայնքները պահպանել են հինկտակարանյան ավանդույթները:



Պողոս առաքյալը հետևեց ժողովի որոշմանը: Նա հանդես եկավ բոլոր նրանց դեմ, ովքեր ուզում էին պարտադրել բոլոր հինկտակարանյան սովորությունները հեթանոսությունից նորադարձներին, բայց ամենևին էլ չէր ջնջում այդ սովորույթները* (չնայած ձգտում էր շնչավորել դրանք):

Հաստատելով, որ ինքը եկել է Օրենքը լրացնելու, Քրիստոսը նկատի չուներ պատվիրանների պարզունակ կատարումը: Աստվածաշնչում օգտագործված plhrwsai բառը (ինչպես և իր արամեական համարժեքը, ծագում է mela բառից) ունի ավելի տարողունակ իմաստ՝ «լիքը լցնել», «լրացնել», «լրիվություն տալ»:

Հին Կտակարանի Օրենքը տրված է Փրկչի միջոցով վերջնական լիակատարություն: Մասնավորապես, դա իր արտահայտությունն է գտնում ծանրության կենտրոնը տեղափոխելով պատվիրանների բարոյականության բովանդակության վրա, չնայած պատվիրանները խորայելացիների համար չեն վերացվում: «Ով որ այս պատվիրաններից, փոքրերից անգամ մի բան կը ջնջի և մարդկանց այդպես կուսուցանի, Երկնքի Արքայության մեջ փոքր պիտի կոչվի, իսկ ով կը կատարի և կուսուցանի, Երկնքի Արքայության մեջ նա մեծ պիտի կոչվի» (Մատթ. Ե 19):

Բայց կրկնում ենք, Քրիստոսը գլխավոր ուշադրությունը դարձնում էր պատվիրանների ոչ թե արտաքին կողմի վրա, այլ նրանց ներքին բովանդակությանն ու բարոյական բնույթին (տե՛ս Մատթ. ԺԵ 1-9): Սբ. Գրիգորի Բոգոսլավի արտահայտությամբ. Նա «համոզում էր հեռանալ տառից և հետևել ոգուն» (Слово 37): Դա հատկապես պարզ երևում է Օրենքի գլխավոր պատվիրանի մասին հարցին Քրիստոսի պատասխանից և հարուստ պատանուն տված Նրա խրատից (Մատթ. ԻԲ 34-40, Մարկ. Ժ 19):

Չնայած հուդայականության մեջ Երկրորդ տաճարի ժամանակաշրջանում թագավորում էր հավատը Թորայի ծիսական կանոնագրերի բացարձակ արժեքի նկատմամբ, Քրիստոսի կողմից դրա մեկնաբանությունը լիովին խորթ չէր դպիրների ավանդույթներին: Բավական է հիշել Հիլլելի թևավոր խոսքը. «Մի՛ արա ուրիշներին այն, ինչը չես ցանկանում, որ քեզ անեն՝ այդ է ողջ Օրենքը, մնացյալը սոսկ մեկնաբանություններ են» (Шаббат, 31а): Մյուս ուսուցիչն ասել է. «Մեկ է, շատ թե քիչ է կատարում մարդ, բավական է, եթե նրա սիրտն ուղղված է Աստծուն» (Менахот 110 а): Մաքոտի (24) տրակտատում աս-

* Մասնավորապես, թլփատումը Եգիպտոսի հնագույն սովորույթ է, և այդ պատճառով էլ այն չփոխեցին հինարևելյան եկեղեցիներում (ղպտիների, հաբեշների, հակոբիկների) մոտ:

վում է, որ Օրենքի 613 պատվիրանները Դավիթը հասցրեց տասնմեկի, Եսային՝ վեցի, Միքիան՝ երեքի, իսկ Ամբակումը՝ մեկի. «Հավատքով արդարը կապրի»:

Այսպիսի «ընտրողական» մոտեցումը Թորային հանգեցնում է այն մտքին, որ Օրենքի տառում ամեն ինչ չէ, որ կարելի է համարել հավիտենական: Բայց ոչ ռաբբիները, ոչ վաղ քրիստոնեական աստվածաբանների մեծ մասը չէին համարձակվում այս վերջին եզրակացությունն անել: Մինչդեռ, Քրիստոսի խոսքը (Մատթ. 19,8) Մովսեսի մասին, որը ամուսնալուծության իրավունք տվեց, գիջելով մարդկանց «խստասրտությանը», ցույց է տալիս, որ Նա հաշվի էր առնում Թորայի կազմման մեջ մասնավոր, ժամանակի ըմբռնումների մասնակցությունը: Այլ խոսքով, Աստվածաշունչն իր ծագմամբ ունի երկակի աստվածամարդական բնույթ: Բարձրագույն աստվածային Օրենքը (սեր Աստծու և մարդու հանդեպ) և «դրա մեկնաբանությունները»՝ ծնված ժամանակի հանգամանքներից, ամենևին էլ հավասարարժեք չեն:

Ավետարանների հետ համերաշխ՝ Պողոս առաքյալը նաև խոսում է ոչ այնքան նախկին պատվիրանները վերացնելու, որքան սրբազան պատմության նոր աստիճանի անցնելու մասին: Ընդ որում, այդ անցումը անխաթար պահպանեց հավատի և Ավանդության միասնական հենքը, Աբրահամից սկսվող Ուխտի միակ ճանապարհը: Յուրաքանչյուր փուլում է՛լ ավելի պարզ էր դառնում, որ հավատարմությունը Օրենքին սոսկ պաշտամունքային կանոնակարգի պահպանումը չէ, այլ սիրո արտահայտությունը Աստծո և մարդու հանդեպ:

«Նոր Կտակարանը,– ասել է եր. Ավգուստինոսը,– պարփակված է Հին Ուխտի մեջ, Հինը բացվում է Նորի մեջ»: Աստվածային կրոնը, ի տարբերություն հին աշխարհի հավատալիքների մեծ մասի, ունի հարաշարժ ուսմունքի բնույթ: Նրա առանցքային վեկտորը ուղղված է գալիքին: Այն ամբողջությամբ շարժման մեջ է, հույսի մեջ է, Աստծո հետ լրիվ և կատարյալ Ուխտի գալստյան սպասման մեջ է: Այդ կրոնը չի պարփակվում մի ժողովրդի, մի մշակույթի սահմաններում: Ծնունդ առնելով հեթանոսներից մեկուսացած օջախում, այն վաղ թե ուշ, ի հեճուկս պահպանողականների բոլոր ջանքերի, պետք է դուրս գար նրա սահմաններից: « Ես քեզ ազգերի լույս էլ եմ շինել, որ դու իմ փրկությունը լինես մինչև երկրի ծայրը»,– ասում է Տերը Իր Ծառային (Եսայի Թ, 6):

Բայց եթե Ավետարանը օրգանական «լրացումը» և ավարտումն է աստվածաշնչյան հավատի, ինչու հրեաների հոգևոր քարոզիչները չէին կամենում ճանաչել այն: Նրանցից ովքեր և ինչու էին ձգտում կտրել Հին Ուխտը Նորից:

Ավետարաններից կարելի է այն տպավորությունը ստանալ, որ Քրիստոսի ամենագործուն հակառակորդները փարիսեցիներն էին: Դա հաճախ է տարակուսանք հարուցում, չէ որ նույնիսկ հրեա պատմաբան Ա. Հեյգերից (1857) մինչև Դ. Ֆլյուսսերը (1968) ընդունել են, որ մյուս կրոնական խմբակցություններից՝ սադուկեցիներից, զելոտներից, հեսսեյականներից հենց փարիսեցիներն են ավելի մոտ կանգնած Քրիստոսի ուսմունքին:

Այս հարցը դիտարկելիս մի կողմից պետք է հաշվի առնել իրադրությունը, որի մեջ գրվել են Ավետարանները: Հենց այդ տարիներին, Հռոմի հետ ունեցած պատերազմից հետո, սադուկեցիները, զելոտները և հեսսեականները անհետացան պատմության թատերաբեմից: Հուդայականության միակ ներկայացուցիչները, այն պահին, երբ քրիստոնեությունը սկսեց նրանից բաժանվել, փարիսեցիներն էին: Այստեղից՝ շեշտադրության բնական տեղափոխությունը, որը նրանց Քրիստոսի թշնամիների շարքում առաջին տեղը դրեց:

Մյուս կողմից՝ Նոր Կտակարանը ավելի բարդ տեսարան է ներկայացնում, քան այն թվում է առաջին հայացքից:

Մենք գիտենք, որ Հիսուսը մեկ անգամ չէ, որ հյուր է եղել փարիսեցիների տներում, (Ղուկ. Է. 36: ԺԱ, 37: ԺԴ. 1) և հաճախ էլ նրանց հետ զրույց անցկացրել հավատի մասին (Մատթ. ԻԲ, 34-45: Մարկ. ԺԲ, 28-34: Ղուկ. ԺԱ, 37), ինչը անհնար կլիներ անհաշտ առճակատման պարագայում: Զելոտներից, Հիսուսի աշակերտներին մոտ կանգնածներից տրված է միայն Սիմոնի (Տասներկուսից մեկի) անունը, իսկ հեսսեականության և սադուկեցիների հետևորդների մասին, որոնք գնացել են Նրա հետևից, ոչ մի խոսք չի ասվում: Դրա փոխարեն, մենք գիտենք, որ փարիսեցի էր Նիկոդեմոսը և կարող է պատահել Հովսեփ Արեմաթացի, իսկ Գործքը ուղղակի հիշատակում է փարիսեցի քրիստոնյաների մասին (ԺԵ, 5):

Երբ Պողոս առաքյալը 58 թվին եղավ Երուսաղեմում, նրան ասին. «Տեսնում ես, եղբայր, հազարավոր հավատացյալ հրեաներ կան, և բոլորն էլ նախանձախնդիր են Օրենքին» (Գործք. ԻԱ, 20): Ըստ երևույթին, խոսքը նույնպես գնում էր դարձի եկած փարիսեցիների մասին:

Ի տարբերություն սադուկեական նվիրապետության, փարիսեցիների գլխավոր Գամաղիելը հանձնարարում էր հանդուրժողաբար վերաբերվել նոր ուսմունքին (Գործք., 5, 34): Դա տեղի ունեցավ 30 կամ 31 թվականին: Լեգենդ ստեղծվեց նույնպես, որ Գամաղիելը հետագա-

յում դարձավ քրիստոնյա:

Ինքը՝ Պողոս առաքյալը, անցյալում փարիսեցիական պատկանելություն ուներ, և նրանք էին, որ պաշտպան կանգնեցին առաքյալին, երբ գելոտները երդվեցին նրան սպանել (Գործք., ԻԳ 6-10):

Այս բոլորը բացատրվում է նրանով, որ «բնավորությամբ բարեպաշտ առաջին քրիստոնյաները մոտ էին փարիսեցիների հետ (պտ. Кассиан. Христос и первое христианское поколение. Париж, 1950, с. 140):

Ավետարաններից, Փլավիոսից և Թալմուդից բխում է, որ Սինեդրիոնի գլխավորը քահանայապետ էր, և որ՝ այնտեղ իշխում էին սադուկեցիները (Մատթ. ԻԶ 57, Մարկ. ԺԴ 53, Ղուկ. ԻԲ 66, Հովհ. ԺԸ 13-14, Флавий. Против Апиона, II, 23, Գործք. Ե 17): Հետևապես Չարչարանքների պատմության մեջ խոսքը ոչ թե Սինեդրիոնի մասին է, որը ղեկավարվում էր Գամաղիելի կողմից (այդ անունով պաշտոնակիցներ Հրեաստանում շատ կային- տե՛ս Флавий. Арх. XIV, 5, 4): Թալմուդը խոսում է նաև այնպիսի Սինեդրիոնի մասին, որի ղեկավարությունը պատկանում էր աստվածաբաններին: Քրիստոսի երկրային կյանքի օրերին դրա գլխավորներն էին Հիլլելը, նրա որդի Սիմոնը (հաճախ նույնացվում է արդարակյաց Սիմոնի հետ) և նրա թոռ Գամաղիելը (Хагига, II, 2): Վերջինս 30 թվականին Սինեդրիոնի «նասի» («իշխան») էր: Բայց եթե հենց նա տված լիներ Քրիստոսի մահվան դատավճիռը, Պողոս առաքյալը հարգալից տոնով չէր խոսի Գամաղիելի մասին որպես իր ուսուցչի (Գործք., ԻԲ 3):

Այս բոլոր տվյալների հիման վրա Մոսկվայի հոգևոր ակադեմիայի պրոֆեսոր Դ. Խվոլսոնը դեռ անցյալ դարում եկել է այն եզրակացության, որ « Քրիստոսին մահվան դատապարտած Սինեդրիոնը փարիսեցիական չէր, այլ կազմված էր սադուկեցիներից, ծայրահեղ դեպքում վերջինները այն ժամանակ Սինեդրիոնում տոն տվող դեմքեր էին, որոնցից էր կախված վճիռը (Хвольсон Д. Последнаяя пасхальная вечера Иисуса Христа и дата его смерти. XII 1875, II, էջ 51-52): Այդ կարծիքը անուղղակիորեն հիմնավորվում է նրանով, որ Գեթսեմանից հետո Չարչարանքների պատմության մեջ փարիսեցիները այլևս չեն ուրվագծվում, ողջ նախաձեռնությունը հայտնվում է քահանայապետի և նրա կուսակցության ձեռքում:

Սակայն հնարավոր չէ ժխտել, որ փարիսեցիները եռանդուն ձևով դիմադրություն էին ցույց տալիս Քրիստոսին դեռ Գալիլիայում, իսկ նրանցից շատերը ցանկանում էին Նրա կործանումը: Եվ, հետագայում,



նրանք խորացրին բախումը քրիստոնեության և հուդայականության միջև: Ինչպես ճիշտ նկատում է մի հետազոտող. «Եթե չլինեին փարիսեցիները, Եկեղեցին չէր հանդիպի իր ճանապարհին ընդդիմության կամ կհանդիպեր լոկ աննշան չափով (R. T. Herford. The Pharisees 1924 p. 213):

Այդ թշնամանքի իսկական պատճառը որոնելիս հարկավոր է թեկուզ համառոտ անդրադառնալ պատմությանը և փարիսեցիների վարդապետությանը:

Ինչպես արդեն վերևում ասվել է, փարիսեցիական միությունը (խաբուրոտ՝ ընկերություն) հիմնեցին բարեպաշտության պահապանները, որոնք ընդդիմացան Հրեաստան թափանցող հելլենիստական ազդեցությանը: Այն ժամանակ հելլենիզմը տագնապ էր հարուցում շատ երկրներում: Հռոմեացիների մոտ պայքարը հելլենիզմի դեմ գլխավորում էր Կատոնը, իսկ Պաղեստինում՝ քասիդները*: «Ամրացնել պարիսպները Օրենքի շուրջ»,- այսպիսին էր քասիդների նշանաբանը (Авот, 1, 1): «Այդուհանդերձ,- նկատում է ուղղափառ պատմաբան Մ.Պոսնովը,- «պարիսպը» այնքան բարձր դուրս եկավ, որ իրենով ծածկեց Օրենքը, դրա շնորհիվ Օրենքը հայտնվեց կարծես թե թաքստոցում: Այդ ուղղությունը մասնակիորեն հիշեցնում է մեր սլավոնաֆիլությունը և «նեխած Արևմուտքի» հանդեպ ունեցած իր քամահրանքը (Поснов М. Иудейство. Киев, 1906, էջ 167): Հասմոնեացիների հաղթանակից հետո, նրանց աշխարհիկ քաղաքականությունը առաջացրեց քասիդների դժգոհությունը, և շուտով (մոտ 130 թ.) նրանց մի մասը բաժանվեց առանձնացված համայնքի, որոնց ժողովուրդը սկսեց կոչել փարիսեցիական (արամ. փերուշահյա- անջատվողներ): Մ. թ. ա. 88 թ. Հաննեոս թագավորը դաժանորեն ճնշեց փարիսեցիների գլխավորած ապստամբությունը, բայց Ալեքսանդրա թագուհու (78-69) օրոք փարիսեցիները ձեռք բերեցին ճանաչում և արքունիքին առընթեր զբաղեցնում էին կարևոր պաշտոններ: Հերովդես Մեծի կառավարման ժամանակ նրանք կրկին ստիպված եղան հայտնվել ստվերում: Նրանք պասիվ դիմադրություն ցույց տվին թագավորին, չցանկացան հավատարմության երդում տալ Օգոստոսին և նախագուշակեցին Հերովդեսի հարստության վախճանը, համարելով նրան «Հասմոնեացիների ստրուկ»:

Մ. թ. ա. I դարի առաջին կեսը սադուկեցիների թվացյալ տիրապետության ժամանակներն էին (տե՛ս Арфаскадов А. Иерусалимский Синедрион. Казань, 1903, էջ 111): Ընդ որում, փա-

* Այսինքն՝ բարեպաշտության ջատագովներ:

րիսեցիների ազդեցությունը շարունակում էր աճել և Հռոմի դեմ պատերազմից հետո նրանք վերջնականապես հսկողության տակ վերցրին ժողովրդի կյանքը:

Չի պահպանվել ոչ մի ստեղծագործություն, որը վստահելիորեն կարելի լիներ վերագրել փարիսեցիական հեղինակի: Շատ գիտնականներ փարիսեցիական միջավայրի հետ են կապում 2 Մակաբեացվոց Գիրքը, Սողոմոնի սաղմոսները և 3 Եզրասի Գիրքը: Բոլոր դեպքերում նրանցում արտահայտվել են տեսակետներ, որոնք սովորաբար վերագրում են փարիսեցիներին (տե՛ս H. Cazelles. Naissance de L. Eglise. Paris, 19684 p. 56):

«Փարիսեցիները,- գրում է Հովսեփոս Փլավիոսը,- հռչակված են որպես Օրենքի ճշտապահ մեկնողներ: Նրանք ամեն ինչ դնում են կախվածության մեջ Աստծուց և ճակատագրից ու սովորեցնում են, որ չնայած մարդուն տրված է ազնիվ և անազնիվ արարքների ընտրության ազատություն, բայց այդտեղ էլ է մասնակցում ճակատագրի կանխորոշվածությունը: Հոգիները, նրանց կարծիքով, անմահ են, բայց միայն բարիների հոգիներն են իրենց մահից հետո վերաբնակվում ուրիշ մարմինների մեջ, իսկ չարերի հոգիները դատապարտված են հավիտենական տանջանքների... Փարիսեցիները սաստիկ նվիրված են մեկը մյուսին և գործելով միացյալ ուժերով, ձգտում են ընդհանուր բարեկեցության» (Иуд. Война, II,8): «Փարիսեցիները վարում են խստակենցաղ ապրելակերպ և հրաժարվում են ամեն կարգի վայելքներից: Այն ամենը, ինչը բանականությունը համարում է բարիք, նրանք հետևում են դրան, բանականությունը համարելով բոլոր կարգի ցանկություններում լավագույն պահապան: Նրանք առանձնանում են տարեց* մարդկանց հանդեպ իրենց հարգալից վերաբերմունքով և ամենևին չեն համարձակվում հակադրվել նրանց նախանշումներին... Փարիսեցիները հավատում են հոգու անմահությանը և որ թաղվելուց հետո մարդկանց սպասվում է Դատաստան և վարձք՝ ապրած տարիների առաքինության կամ հատուցում՝ հանցանքների համար. մեղսագործները ենթարկվում են հավիտենական բռնադատվածության, իսկ առաքինի մարդիկ հնարավորություն ունեն վերստին հարություն առնելու: Շնորհիվ դրա, նրանք արտակարգ ազդեցություն ունեն ժողովրդի վրա, և բոլոր քահանայագործությունները, կապված աղոթքների կամ զոհաբերությունների հետ, տեղի էր ունենում միայն նրանց թողտվությամբ: Այսպիսով, առանձին համայնքները հավաստում էին նրանց առաքինությունը, քանի որ բոլորը համոզված էին, որ փարիսեցիները գործով և խոսքով ձգտում էին առավել բարձրին» (Арх. XVIII, 1,4): Փարիսեցիները «ունեին Բարձրյալի առանձնահատուկ բարեհաճության հավակնություն: Այդ ավանդի լիակատար ենթակայության տակ կային կանայք (Арх. XVII, 2,4): Փարիսեցիների թիվը Հովսեփոսը համարում է 6000 (նույն տեղում):

* Խոսքը «Հոգևոր հայրերի» կամ «Հարանց» մասին է - տե՛ս ստորև:



Փլավիոսի բնութագրումները գնահատելիս հարկ է հիշել, որ պատմիչն ինքը փարիսեցի էր և որ նա ոճավորել է իր համախոհներին հունական իմաստասիրական դպրոցներից մեկի հետևողությամբ: Նոր Կտակարանը փարիսեցիների հայացքների մասին ասում է հակիրճ, ոչ ավելի առարկայականորեն, քան Փլավիոսը: Ասված է, որ նրանք հավատում են մեռածների հարությանը, ետմահու հատուցմանը, հրեշտակներին և «հայրերի» ավանդներին (Մատթ. ԺԵ 1 հաջորդիվ, Գործք. ԻԳ 8):

Ռաբբիների- թաննայինների կողմից ստեղծված Թալմուդը Փլավիոսի կողմից բերված և Նոր Կտակարանում եղող տեղեկություններին ամբողջությամբ համընկնող տվյալներ է պարունակում փարիսեցիականության մասին (տե՛ս Поснов М., Иудейство, с.137): Ընդ որում, Թալմուդականների հաղորդումները հաճախակի են պարունակում քննադատական տեղեկություններ այն փարիսեցիների հասցեին, որոնց նրանք անվանում են «ներկված»: Օրինակ՝ Սոտա տրակտատում (2B) բերվում է Թագավորի խոսքերը. «Վախեցիր փարիսեցիների տեսք ունեցողից, որոնք աստվածավախ են փարիսեցիների նման, բայց վարվում են անօրեն»:

Որոշ սուղ տեղեկություններ կան փարիսեցիների մասին վաղ քրիստոնեական հեղինակների մոտ, մասնավորապես Սբ. Եպիփանի մոտ: Նա ընդգծում է փարիսեցիների մոտ ընդունված ասկետիկ վարժությունները և նրանցից շատերի հակվածությանը աստղագուշակության (Епифаний. Панарион, 1, русск. пер. էջ 73-78; տե՛ս նաև A. Finkelstein, 1961, v. 1-2):

Վերը բերված աղբյուրների վկայություններից պարզ չէ, թե ինչու փարիսեցիները թշնամական դիրք որդեգրեցին Հիսուս Քրիստոսի քարոզչության նկատմամբ: Այդ փաստը բացատրել են տարբեր կերպ.

1. Որոշ պատմաբաններ մտածում են, որ դրա պատճառը Նրա հրաժարվելն է հեթանոսների դեմ զինված պայքարից: Բայց քաջ հայտնի է, որ փարիսեցիներն իրենք էլ դեմ էին ապստամբության (Флавий И. Иудейская война, II, 17, 3): Եթե քրիստոնյաները, երբ որ պատե-

բազմը բռնկվեց, հեռացան Հորդանանից այն կողմ. Պելու, ապա փարիսեցիներն էլ իրենց հերթին լքեցին Երուսաղեմը և շատ շուտով կազմավորեցին սեփական կրոնական կենտրոնը Յամնիայում:

2. Կարող էր անտագոնիզմի պատճառը լինել ազգային հարցը: Քիչ հավանական է, Հիլլելը և մյուս փարիսեցիները անհրաժեշտ էին գտնում պրոզելիտներին հավատքի բերելը: Նրանք լայնորեն քարոզ էին տանում երկրի սահմաններից դուրս, թե ինչի մասին է խոսում Ինքը՝ Քրիստոսը (Մատթ. ԻԳ, 15):

3. Լինելով ճգնակյացներ, փարիսեցիները դատապարտում էին Հիսուսի ապրելակերպը: Բայց դա հազիվ թե դառնար պառակտման գլխավոր պատճառը: Չէ որ Հովհաննես Մկրտիչը ևս, հաշվի չառնելով նրա ճգնակեցությունը, նույնպես չընդունվեց փարիսեցիների կողմից:

4. Փարիսեցիների կողմից ընդունված դոգմատիկ ճշմարտությունները (Միաստվածություն, աստվածաշնչյան հայտնության, Հարության, Դատաստանի, Փրկչի և հոգևոր աշխարհի հավատ), ընդունված էին նաև քրիստոնեության մեջ: Ինչ վերաբերում է ճակատագրի մասին ուսմունքին, ապա այն, ամենից հավանական է, Փլավիոսն էր գերագրում փարիսեցիներին, ինչը մոտեցնում էր նրանց ստոիկներին: Փարիսեցիների հայեցակետը արտահայտել է ռաբբի Ակիբան (Авот, III, 12), ասելով. «Ամեն ինչ կանխատեսված է Աստծու կողմից, բայց մարդուն տրված է ազատություն»: Այդ մոտեցումը չի կարելի դիտել որպես քրիստոնեությանը խորթ տեսակետ (տե՛ս Г. Скарданицкий, Фарисеи и саддукеи как выразители состояния религиозной жизни иудейства перед явлением Христа. иев. 1905, էջ 83):

5. Փարիսեցիների բարոյական ըմբռնումները, եթե դատենք Թալմուդի տեքստերով, ամբողջովին մոտիկ էին ավետարաններին*: Հեղաշրջումը, որը կատարվեց Քրիստոսի կողմից Աստծու և մարդու միջև եղած հարաբերության ընդլայնման մեջ, հող նախապատրաստեց նորկտակարանյան ողջ զարգացման համար: Դրա համար էլ Հիսուսը ասում է առաքյալներին. «Ես ուղարկեցի ձեզ հնձելու այն, որի վրա աշխատանք չէիք թափել, ուրիշները աշխատանք թափեցին, իսկ դուք նրանց վաստակի մեջ մտաք» (Հովհ. Դ, 38):

6. Հազիվ թե ճիշտ լինի համարել, որ փարիսեցիներին Քրիստոսի դեմ զինեց միայն այն, որ Նա Իրեն Փրկիչ հռչակեց: Առաջին. Նա այդ

---

* Կարծիքը, համաձայն որի Թալմուդի հեղինակները քաղել են Ավետարանից, ներկայացնում է լիովին քիչ հավանական, եթե հաշվի առնենք, որ Թալմուդյան գրությունները ծագել են քրիստոնեության հետ ունեցած կտրուկ պառակտման ժամանակաշրջանում:



արեց ոչ անմիջապես, և երկրորդ, այդ հավակնությունն ինքը չէր համարվում հանցանք (տե՛ս R.T. Herford. Judasim in the New Testament Period, p. 214):

Այսպես, ռաբբի Ակիբան Փրկիչ էր համարում ապստամբության առաջնորդ Բար-Կոխբուին, բայց ոչ մեկը չէր մեղադրում նրան այդ բանի համար: Նազովրեցուն որպես խոստացյալ Փրկիչ տեսնելու հրաժարումը փարիսեցիների մոտ բխում էր Նրան որպես Ուսուցիչ չճանաչելուց:

Հատկանշական է, որ Քրիստոսին դատաստանի ենթարկելու ժամանակ, այնքան դժվար էր Նրա դեմ հանցանշաններ գտնել, որ մեղադրողներին ստիպված եղան նենգափոխել Նրա խոսքերը: (Մատթ. ԻԶ, 59-61, հմմտ. Հովհ. Բ, 19): Երբ նրանք ասում էին. «Մենք Օրենք ունենք, և ըստ մեր Օրենքի պետք է Նա մեռնի, որովհետև Իրեն Աստուծո Որդի դարձրեց», նրանք ստում էին: Օրենքը չէր կանխատեսել նման դեպք: Աստծու Որդի ընդունված էր անվանել և Իսրայելին, և նրա արքաներին, և Փրկչին (տե՛ս Ովս. ԺԱ, 1, Բ Թագ. Է, 14, Սաղմ. Բ, 7, ՁԸ, 27. Գ Եզր. Է, 29): Հետևապես դատավճիռն օրինական չէր, և որոշել էին վաղօրոք:

Մարմնավորման և Աստվածամարդության գաղտնիքը առաջինը կիսով ի հայտ եկավ Քրիստոսով միայն, իր մերձավոր աշակերտների համար, բայց և նրանք երկար ժամանակ չկարողացան իմաստավորել այն: Իրեն անվերապահ հավատ ընծայողների աչքում Հիսուսը նախապես «սուրբ Աստված էր», Մարգարե. Փրկիչ, Իսրայելի ազատագրող:

Թաքցնելով Իր փրկչական առաքելությունը օրենքի հետևորդներից, Հիսուսը հնարավորություն տվեց նրանց՝ ի դեմս Իրեն, տեսնելու գոնե Մարգարեի: Եվ նրանք ընտրություն արեցին արդեն Նրա քարոզի այդ առաջին փուլում: Փարիսեցիները չէին ուզում հաշտվել այն մտքի հետ, որ անհայտ Գալիլիացին կարող է Աստծո Դեսպանը լինել: Բայց այդ հրաժարումն, այնուամենայնիվ, նրանց իրավունք չէր տալիս Հիսուսին համարել մահվան արժանի:

7. Ավետարանիչները հիշում են երեք գլխավոր մեղադրանք, որոնք փարիսեցիները ուղղում էին Հիսուսին՝ շփումներ մեղսագործների հետ, շաբաթի խախտում և Նրա ազատ հայացքը «հարանց ավանդությունների» հանդեպ:

Առաջին մեղադրանքը Քրիստոսը հերքեց՝ հենվելով Ովսեա մարգարեի՝ «Գթասրտություն եմ ուզում, և ոչ թե զոհեր» խոսքի վրա: Ինչ վերաբերում է շաբաթին, ոչ մի հիմք չկա մտածելու, որ Փրկիչը մտա-

դիր էր մերժել այն որպես այդպիսին: Նա միայն ցույց տվեց, որ մերձավորին օգնելը սուրբ գործ է, որին չի կարող խանգարել անգամ շաբաթի հանգիստը: Քանի որ ռաբբիների մեջ էլ ամենևին ոչ բոլորն էին կառչած ծայրահեղ խստաբարոյությանն այդ հարցում, վտանգավոր կլինի չափազանցել դրա դերը քրիստոնեության և հուդայականության խզման հարցում: Առավել ևս, որ շաբաթվա մեկ օրը Աստծուն և Եկեղեցուն նվիրելու սկզբունքը պահպանվեց:

Առավել սուր բանակռվի առիթ տվեցին «հարանց ավանդների» առիթով ասված Քրիստոսի խոսքերը: Փարիսեցիները հավատում էին Մովսեսի կողմից ժամանակին տված և դարերի ընթացքում ուսուցիչների կողմից պահպանված բանավոր Թորային (Авот, I,): Սադուկեցիները այդ հարաբերությամբ նրանց հակոտնյաներն էին. նրանք հաշվի էին նստում միայն Աստվածաշնչի տառի՝ գերազանցապես Թորայի հետ:

Ավանդույթների մասին փարիսեցիական ուսմունքի էությունը այն էր, որ, բացի Գրքերից, Եկեղեցում շարունակվում է գործել Աստծու Ոգին, Որը հանդես է գալիս քարոզիչների կամ հայրերի միջոցով: Կենդանի ժառանգորդական կապը նրանց միջև թույլ է տալիս զգալ Աստծու խոսքի արդիականությունը բոլոր ժամանակներում (տե՛ս R.T. Herford. The Pharisees, p. 66):

Ժխտում էր, արդյոք, Քրիստոսը այդ հայեցակերպը: Պաշտպանում էր, արդյոք, որպես հակակշիռ սադուկեցիների տեսակետներին: Պատասխանը տալիս է մեկ, բայց խիստ հատկանշական մի օրինակ: Այդ ժամանակների համար կանոնականացված սրբազան գրություններում հստակ արտահայտված ուսմունք չկար մեռյալների հարության մասին: Դանիելի գիրքը, որտեղ հուշակվում է այդ ուսմունքը, դեռևս չի մտել կանոնների մեջ: Հետևապես, խոսելով հարության մասին, Քրիստոսը ընդունում էր եկեղեցական Ավանդություններում բովանդակված ուսմունքը: Ավանդության սկզբունքը հետագայում յուրացվեց քրիստոնյաների կողմից: Կաթոլիկ աստվածաբան Լ. Բույեի արդարացի նկատումով, ինչպես Նոր Կտակարանը «չի հասկացվի Հնից կտրված, այդպես էլ Նորկտակարանյան Ավանդությունը չի կարող անջատված լինել Հին Կտակարանի Ավանդությունից: Աստծու խոսքի ճանաչողության աղբյուրը, կարծես հենց Աստծու ժողովրդի կյանքում... Այն աղբյուրն է, որը Ավանդությունն է, սկսեց հոսել բնավ էլ ոչ Քրիստոսի գալուստից հետո, նույնչափ ճիշտ է, ինչպես մյուս աղբյուրը՝ Աստծու ներշնչանքով ստեղծված տեքստերը, քանի որ այդ վերջինները բխում են Ավանդությունից, որի պարագայում սկսել էին կուտակվել Քրիստոսից



առաջ շատ ավելի վաղ» (Буйне Л. О Библии и Евангелии. Пер. С франц. Брюссель, 1965, էջ 214):

Հիսուս Քրիստոսը ոչ միայն Օրենքի պահանջներն ընդունեց, այլև ամբողջությամբ խրախուսում էր Ավանդույթներով կարգված բարեպաշտության դրսևորումները*: «Եթե ձեր արդարությունը,- ասում էր Նա աշակերտներին,- ավելին չլինի դպիրների և փարիսեցիների արդարությունից, չեք մտնի Աստծու Արքայություն» (Մատթ. Ե 20):

Եթե «գաղափարի» մի քանի մասնավոր կողմերի մասին Քրիստոսը կարծիք է հայտնել, որը չէր համընկնում ռաբբիների մեծ մասի պատկերացումներին, Նա հետևում էր նրանց սեփական կանոններին: Ողջ Թալմուդը լի է հավատի և ծեսերի շատ առարկաների վերաբերյալ իմաստունների հակասական դատողություններով: Նրանց միջև ընթացող վեճերը հասնում էին կոշտ ընդհարումների: Բայց հակառակ տեսակետների կողմնակիցները հավասարապես մեծարվում էին ողջ ժողովրդի կողմից:

8. Վերջապես վերջինը: Քրիստոսը Իր մերկացումներով կարող էր հարուցել (և հարուցեց) փարիսեցիների ատելությունը (Մատթ. ԻԳ, Մարկ. ԺԲ 38-40, Ղուկ. ԺԵ 38-52): Սակայն նման մերկացումները Իսրայելում համարվում էին թույլատրելի: Դրա օրինակն է մարգարեների քարոզը: Ավելի ուշ, հուդայականության մեջ մենք գտնում ենք հարձակումներ կեղծ սրբերի դեմ, որոնք կրում էին երեսպաշտ աստվածավախության դիմակ: Ռաբբի Իոշուա բեն Քանիան ասում է. «Հիմար կեղծ բարեպաշտը, խորամանկ սրբապիղծը, կին-փարիսեցին և փարիսեցիների հարվածները կործանում են աշխարհը (Сота, III, 5): «Երեսպաշտները,- մյուս ուսուցչի կարծիքով,- արժանի են մերկացման, քանի որ անարգում են Աստծո անունը (Иома, 5): Հետևապես, Քրիստոսի խոսքերը մարդիկ կարող էին հասկանալ որպես փարիսեցիների

* Նշենք, մասնավորապես, քրիստոնեական արարողությունների որոշ տարրեր հուդայականությունից անցած. Աստծուն նվիրված օր, «շարժական տոների» ցիկլ, եկեղեցական արարողություններ՝ ներառյալ քարոզը, եկտենին և սաղմոսերգությունը, առավոտյան և երեկոյան աղոթքները, ծնունդից հետո ասվող աղոթքները և մանուկներին եկեղեցուն ընծայելու (Աստծուն նվիրելու) աղոթքները, Ծննդ. Բ 23-24 վրա հաստատված ամուսնությունները, սրբերի պաշտամունքը (Հին Կտակարանում՝ Մովսես, Եղիա), եկեղեցական արարողությունների և ծիսակարգության բարդ համակարգը (հմմտ. Տիպիկոն, Կորմչույու և ուրիշ), զոհաբերություններ եկեղեցական կարիքների համար, մարդկանց, պտղի, խնջույքների օրհնություն, տարբեր առարկաների նվիրաբերում, ծիսական ժեստեր (ձեռքերը վեր կարկառել, կրծքին ձեռքերով հարվածել, որոնք ընդունված են արևմուտքի եկեղեցական պրակտիկայում), սրբազան ուխտեր, պահք, ապաշխարանքի օրեր, քավության աղոթքներ և այլն: Կրոնական կյանքի բոլոր այս կողմերը հիմնված են ոչ միայն Գրքերի, այլ նաև Հին Կտակարանի (Նրան հաջորդող նաև Նոր) Ավանդությունների վրա:

տխմարավուն ներկայացուցիչների դեմ ուղղված։ Նկատենք, որ Նա դատապարտում է ոչ թե փարիսեցիների ուսմունքը, այլ նրանց մեղքերը. «Ամեն ինչ, որ նրանք ձեզ ասեն, արեք և պահեցեք, բայց մի արեք ըստ նրանց գործերի (Մատթ. ԻԳ 3)։

Այսպիսով, փարիսեցիների բարի կամքի առկայությունը հիմք կլիներ Հիսուս Քրիստոսին ընդունելու կամ թեկուզ Նրա ուսմունքին բարեհաճությամբ վերաբերվելու։ Ինչպես մենք տեսանք, ինչ-որ չափով դա տեղի ունեցավ։ Սակայն փարիսեցիների ճնշող մասը դարձավ Նրան թշնամի։

Որն էր պատճառը։

Մնում է ենթադրել, որ Քրիստոսի ազատության ոգին անհանդուրժելի էր կանոններ, ծեսեր, օրենքներ արմատավորող մարդկանց համար։ Բացի դրանից, փարիսեցիները իրենց դիտում էին որպես ուղղադավանության անսխալական պահապաններ։ Ի դեմս Հիսուսի, նրանք տեսնում էին մրցակցի, որը, իրենց կարծիքով, իրավունք չուներ ուսուցանելու։ Օրինապահների մոտ միայն նա էր հեղինակություն, ով դուրս էր եկել իրենց դպրոցից, ով եկեղեցական քարոզիչներից ստացել էր արտոնություն։ Հիսուսը խոսում էր միայն Իր անձի անունից, խոսում էր «իշխանությամբ»։ Նա չի աշակերտել «հայրերին» և չի մեկնել Թորան, չի վկայակոչում հուդայականության «սուրբ հայրերին»։ Դա անմիջապես կասկած արթնացրեց, որը չուշացավ վերաճել թշնամության։

Քրիստոսին շրջապատող լսողների բազմությունը շարժում էր փարիսեցիների նախանձը (Մատթ. ԻԷ 18, հմմտ. Գործք. Ե 17)։ Այդ պատճառով, նրանք խանդով հետևում էին Նրան, աշխատելով Նրա արարքներում գտնել Օրենքի այս կամ այն խախտումը։ Նրանք դամբարաններ էին կառուցում մարգարեների համար, բայց երբ նրանց մեջ մարմին առած հայտնվեց ճշմարիտ Մարգարե, նրանք չհավատացին Նրան և, առավել ևս, չցանկացան ճանաչել Նրան որպես Փրկիչ։

30 թ. Հիսնօրյայից հետո Երուսաղեմում սկսվեց քրիստոնեության բուռն աճ։ Փարիսեցիները տագնապով կարող էին համոզվել, որ «Նազովրեցու» հետևորդները թվով անցել են իրենցից (Գործք. Բ 41, Դ 4) և հաշտվում են 8000 քրիստոնյա Պաղեստինում, այն ժամանակ, երբ փարիսեցիները, համաձայն Փլավիոսի, ընդամենը՝ 6000)։ Շատ փարիսեցիներ տատանվում էին, իսկ ոմանք նույնիսկ միացել էին Նոր ուսմունքին։ Նրանց օրինակին հետևեց հրեա քահանաների զգալի մասը (Գործք. Զ 7)։



Պատժիչ միջոցներ քրիստոնեության դեմ շարունակում էին կիրառել լոկ սադուկեցիները և հերովդեսականները (Գործք. Դ 5 հաջորդիվ, ԺԲ I հաջորդիվ)։ Եթե քահանայապետ Քանանը (Նրա որդին, ով դատեց Քրիստոսին) 62 թվականին Հակոբին՝ Քրիստոսի եղբորը մահվան դատապարտեց, Փլավիոսի խոսքերով «մեր բոլոր նախանձախնդիր և լավագույն օրենսդիրները (այսինքն՝ փարիսեցիներ- Ա.Մ.) այդ որոշմանը վերաբերվեցին անբարեհաճ։ Նրանք թագավորին գաղտնի գիր ուղարկեցին, խնդրելով, որ Քանանին արգելի նման միջոցառումներ առաջիկայում և մատնանշեցին, որ տվյալ դեպքում էլ նա անարդարացի է վարվում (И. Флавий. Арх. XIX, 9, 1)։ Արդյունքում Քանանը պաշտոնանկ արվեց։

Սակայն Հռոմի դեմ սկսված պատերազմը իրավիճակը արմատապես փոխեց։ Համարյա բոլոր սադուկեցիները զոհ դարձան ժողովրդական ապստամբության։ Կումրանականները ցրվեցին։ Փարիսեցիները և քրիստոնյաները լքեցին Երուսաղեմը։ 70 թվականին Տաճարի կործանումը և երկրի նվաճումը Տիտոսի բանակի կողմից հրեությանը դրեցին լիակատար աղետի սահմանագծում։ Յամնիի փարիսեցիները իրենց վրա պատասխանատվություն առան ազգը և կրոնը պահպանելու։

Նա հրաժարվեց պրոզելոտականությունից և ջանքերը կրկնապատկեց Օրենքի շուրջ «պարիսպ» կանգնեցնելու։ Փրկության միակ ուղին նրանք տեսնում էին կրոնական, մշակութային և կենցաղային ինքնապարփակվածության մեջ։

Միասնության համար պայքարը բացառում էր հուդայականության ներսում ինչ-որ ուղղության հնարավորությունը։ Դա վերջնականապես որոշեց փարիսեցիների վերաբերմունքը քրիստոնյաների հանդեպ։ Հարյուրամյակի վերջում Գամաղիել Երկրորդը հայտարարեց, որ «Հիսուսը Իսրայելին ճանապարհից շեղեց» (Сота, 47а)։ Նազովրեցու հետևորդներն սկսեցին անվանվել ոչ այլ կերպ, քան հերետիկոսներ*։

Այդ նույն ժամանակ, Իսրայելի քրիստոնեական Եկեղեցին, ի կատարումն մարգարեությունների արդեն բերել էր Բարի Ավետումը, դրա հետ մեկտեղ Աստվածաշունչը, հեթանոսների աշխարհ։ Այն հրեաները, որոնք ենթարկվում էին Յամնիական կենտրոնին, մերժեցին քրիստոնեությունը և մնացին մեկուսացած մնացյալ աշխարհից։

Ինչպես այն ամենը, ինչը կատարվեց սրբազան պատմության մեջ,

* Այսպիսին է մոտավորապես «մինիմ» տերմինի իմաստը, որով Թալմուդում անվանվում էին քրիստոնյաները։ Հուդայականության հետ խզման ցավագինությունը զգացվում է հենց այդ ժամանակներում գրված Հովհաննեսի Ավետարանից։

Իսրայելի հոգևոր առաջնորդների մեղքով երկու հազար տարի առաջ տեղի ունեցած ողբերգությունն ունի համապարփակ նշանակություն:

Կարդալով այսօր փարիսեցիների և դպիրների դեմ ուղղված Հիսուսի ահեղ ելույթները, շատ քրիստոնյաներ քնեցնում են իրենց խիղճը, մտածելով, որ դրանք վերաբերում են միայն I դարի հրեական հասարակության վերնախավին: Բայց տվյալ դեպքում այդ ելույթները պետք է որ ունենային պատմական և անցողիկ իմաստ: Այնինչ նրա յուրաքանչյուր բառը լիովին կիրառելի է ցանկացած կրոնի կամ եկեղեցու անարժան ներկայացուցիչների, նրանց ինքնագոհության, կեղծ բարեպաշտության, պաhպանողականության, ծիսապաշտության նկատմամբ: Բոլոր տեսակի օրինապահները և կղերները հեշտությամբ վերածվում են հալածողների: Հիշենք Թեկուզ Աթանաս Մեծի և Ոսկեբերանի, Սավանարոլայի և Հուսի, մետրոպոլիտ Փիլիպի և շատ ուրիշների ճակատագրերը, ովքեր անցել են իրենց գողգոթայի ճանապարհը «կեղծ եղբայրների» կամքով: Հավատի այլասերումը, հպարտությունը, պաշտամունքային ձևապաշտության ոգին, արտաքին կանոնների կատարումով Աստծուն «սիրաշահելու» հաշվարկները կենսունակ են, ինչպես մարդկային բոլոր մեղքերը: Հին փարիսեցիները այլևս չկան, բայց բնավ չի մեռել ինքը՝ «փարիսեցիությունը»:



# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

1. А. С. Пушкин, Полное собрание сочинений, М. Л. , 1949, С. VIII, էջ 443:

2. Э. Прессансе, Иисус Христос и Его время, Թարգ. ֆրանս. СПб., 1869, էջ 11:

3. Հայտնի ռուս աստվածաբան Մ. Մուրետովը մեր դարի սկզբին բարձր է գնահատել Ռենանի վարպետությունը, չնայած նրա գրքի հիմնական գաղափարները ենթարկվել են կտրուկ և արդարացի քննադատության: «Ռենանը,– ասում է նա,– ապշեցուցիչ կենդանությամբ է նկարագրում ավետարանական եղելությունների պատմական և աշխարհագրական հանգամանքները: Ոչ պակաս արվեստով է վերստեղծում այդ հանգամանքների միջավայրում սրբազան պատմության չնայած մտացածին և կեղծ, բայց կենդանի, արտահայտչականությամբ և մղումներով լեցուն մեծ դեմքերին» (М. Муретов, Эрнест Ренан и его “Жизнь Иисуса", СПб., 1907, էջ 13):

4. А. Гарнак, Сущность христианства, М., 1907, էջ 40:

5. Կենսագրական տվյալների սղությունը Բուդդայի կամ Սպարտակի, Ռուբլյովի կամ Շեքսպիրի մասին չի բացառել համապատասխան դարաշրջանի ֆոնի վրա նրանց կյանքը պատկերելու փորձերը:

6. Մեր հիմնական աղբյուրները, իհարկե, Նոր Կտակարանի գրքերն են, առանձնապես՝ Ավետարանները: Նոր Կտակարանի ագրաֆ և պարականոն տեքստերի ռուսական Թարգմանությունները նշված են տարեգրության մեջ: Հին Կտակարանի հիմնական պարականոնները հրատարակված են ռուսերեն պրոտ. Ա. Սմիռնովի կողմից (Книга Еноха, Казань, 1888; Книга Юбилеев, Казань, 1895; Псалмы Соломона, Казань, 1896, Заветы XII патриархов, Казань,1911): Այդ պարականոն գրվածքների լիակատար ժողովածուն անգլերեն հրատարակված է

Ռ.Հ. Չարլզի կողմից (R.H. Charles, The Apocrypha and the Pseudepgrapha of the Oid Testament, Oxford. 1973. Հ. II): Ավետարանական դարաշրջանի վերակերտման համար անգնահատելի են հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսի երկերը (դրանց ռուսերեն թարգմանությունները՝ О древности иудейского народа, թարգ. հուն, հկո., 1985, Иудейская война, թարգ հուն. СПб.4 1900; Иудейские древности, թարգ. հուն., СПб., 1900 С. 1-2): Թալմուդը չնայած որ գրվել է մ.թ. II-ից մինչև VI դ., լույս է սփռում Երկրորդ տաճարի դարաշրջանի հուդայականության վրա: Այն ռուսերեն լույս է տեսել ոչ ամբողջությամբ, բայց և այնպես թարգմանված են նրա կարևորագույն մասերը (Талмуд, Мишна и Тосефта, СПб., 1900-1904, С. 1-6; Вавилонский Талмуд, Вильна, 1861,1902, 1903, 1911, 1912; Иерусалимский Талмуд, Берлин, 1925): Մի շատ արժեքավոր նյութեր հավաքված են՝ А. Ранович, Первоисточники по истории христианства գրքում (Ծ.խ 1933): Առաջին դարի քրիստոնեական գրողների ստեղծագործությունները ռուսերեն թարգմանությամբ հրատարակված են պրոստ. Պ. Պրեոբրեժենսկու կողմից (Писания Мужей Апостольских, СПб., 1895; Сочинения древних христианских апологетов, СПб., 1895): Նոր Կտակարանի ժամանակների մասին որոշ տվյալներ կան Տակիտոսի (Сочинения в двух томах, թարգ. լատ., խ., 1969) և Սվետոնիոսի (Жизнь двенадцати цезарей, թարգ. լատ. Ծ., 1964) մոտ: Ավետարանների՝ Սուրբ Հարանց և հետագա մեկնաբանությունները նշված են մատենագրության մեջ:

7. Новый завет Господа нашего Иисуса Христа, Новый перевод с греческого подлинника, с параллельными местами, Лондон, 1970: Եպիսկոպոս Կասսիանը (Բեզոբրազով)՝ թարգմանության հանձնախումբը գլխավորողը, այդ ժամանակ Փարիզի Ուղղափառ աստվածաբանական ինստիտուտի ռեկտորն էր: Այդ թարգմանությունը, ցավոք սրտի, հեռու է կատարյալ լինելուց, բայց նրա առավելությունն այն է, որ նրանում հաշվի է առնված ժամանակակից տեքստային քննախոսության նվաճումները: Այդ թարգմանությունից քաղվածքներ անելիս Փրկչի որոշ խոսքերի տեքստերը շարադրված են Սուրբ Գրքի տների կանոններին համապատասխան:

## ՆԱԽԱԲԱՆ

1. Ծննդ. ԺԷ , ԺԲ 3:

2. Սկսած մ.թ.ա. IV դարից Յահվե անունը երկյուղածության պատճառով արգելվում էր արտաբերել (բացի բացառիկ դեպքերից): Այն փոխարինեցին Ադոնայ՝ Տեր բառով: Այդ մասին հիշեցնելու համար Աստծո անվան տառերի տակ դնում էին Ադոնայ բառի ձայնավորումը: Այստեղից էլ «Եհովա» աղճատված անունը, որը երկար ժամանակ գործածվում էր բիբլեիստիկայում:

3. Քերովբեները խորհրդանշում էին Աստծուն ենթարկվող բնության ուժերը: Նրանց արտաքին տեսքի նկարագիրը մոտ էր հին արևելքի արվեստի առյուծների և ցուլեցի թևավոր պատկերներին: «Քերուբիմը» կամ «Քերովբեն» «քերուբ» բառի հոգնակին է: Հետվերածննդյան արվեստում քերովբեները պատկերվում էին թևավոր մանուկների տեսքով՝ անտիկ կուպիդոների նմանությամբ:



4.«Միթե անապատի մեջ քառասուն տարի ինձ զոհեր ու ընծաներ մատուցեցիք, ով Իսրայելի տուն»,- հարցնում է Աստված Ամովս մարգարեի շուրթերով (Ամ. Ե 25), իսկ Երեմիա մարգարեի միջոցով Նա ասում է. « Երբ Ես հանեցի ձեր հայրերին Եգիպտոսից, Ես չասացի և պատգամ չարեցի նրանց ողջակիզման և զոհերի մասին, բայց նրանց պատգամեցի. «Լսեցեք Իմ ձայնը և Ես կլինեմ ձեր Աստվածը, և դուք կլինեք Իմ ժողովուրդը և գնացեք բոլոր ճանապարհներով, որոնք Ես կպատգամեմ ձեզ, և այդ ժամանակ ձեզ բարիք կլինի»: Այս բառերը, թվում է, դժվար է համաձայնեցնել Հնգամատյանի ծիսակարգերի հետ: Բայց ավանդական կարծիքը, որի համաձայն Մովսեսը գրել է ողջ Հնգամատյանը, դեռևս XVII դարում ենթարկվել է քննադատության, իսկ ներկա ժամանակում այն չի պաշտպանում Աստվածաշնչի ոչ մի լուրջ հետազոտող: Տե՛ս А. Карташев, Ветхозаветная библейская критика. Париж. 1947, էջ 46 հաջորդիվ, W.J. Harrington, Key to the Bible, New York, 1976, C. 2. էջ 13 հաջորդիվ, ինչպես նաև Ա. Մենի §Магизм и Единобожие| գրքի հատուկ հավելվածը:

5. Ելից Ի 2-17, Երկ. Օր. Ե 6-21, Զ 4-9:

6. Թագ. Է. 1-16:

7. Մարգարեների և նրանց դարաշրջանի մասին տե՛ս А. Мень, Вестники Царства Божия գրքում:

8. Ch. Dawson, Progress and Religion, New York, 1960, էջ 125:

9. Б. Паскаль. Мысли о религии, թարգ. ֆրանս. М., 1902, էջ 126:

10. Ամոս Թ 7:

11. Օսե Զ 6:

12. Եսայի մարգարեի գիրքը Ա II հաջորդիվ:

13. Նույնը՝ գլ. Թ և ԺԱ:

14. Երեմ. ԼԱ 31-32:

15. Եսայի Երկրորդ կամ Երրորդ Եսայի անվանում են կեղծ մարգարեին, որն ապրել է մ. թ. ա. VI դարում, բաբելոնյան գերության ժամանակաշրջանում: Նրա թղթերը ներամփոփված են Եսայի մարգարեի գրքում (- ԾԵ գլ. և մի քանի այլ մասերում):

16. Հինկտակարանյան վերջին երեք դարերի պատմությունների մասին տե՛ս А.Мень, На пороге Нового Завета գրքում:

17. Դանիելի գիրք Է 13: Աստվածաշնչի հետազոտությունները ցույց են տվել, որ Դանիելի գիրքը գրված է ոչ թե մ. թ. ա. VI դարում, ինչպես կարծում էին առաջ, այլ՝ մ. թ. ա. II դարում, չնայած նրանում ներառված չեն ավելի վաղ շրջանի նյութրեը: Փրկչի (Մեսիայի) մասին շատ է խոսվում Ենովքի Գրքում, որը գրված է համարյա Դանիելի Գրքի հետ միաժամանակ:

18. Вавилонский Талмуд, Шаббатм 31а; Փարիսեցիների մասին տե՛ս՝ հավելված 3:

19. Սադուկեցիների միջավայրից ելած ոչ մի ստեղծագործություն չի պահպանվել: Դրանց մասին տեղեկություններ տալիս են Փլավիոսը, Թալմուդը, Նոր Կտակարանը և այլ աղբյուրներ: Այս նյութերը ի մի են բերված և վերլուծված Թ. Скарданицкий, Фарисеи и саддукеи как выразители состояния религиозной жизни иудейства перед явлением Христа գրքում (Киев, 1905): Տվյալների առավել լիարժեք հավաքածուն տե՛ս J. Le Moine, Les

sadducḚens, Paris, 1972):

20. Հեսսեի միաբանությունը քայքայվեց Հուդայի՝ Հռոմի դեմ տարած պատերազմից (66-70) հետո, որի մասին հիշատակությունը պահպանվել է անտիկ գրողների վկայությունների շնորհիվ: Հեսսեների առաջին բնագիր ձեռագրերը հայտնաբերվել են միայն 1974 թ. Կումրանում, Մեռյալ ծովի մոտ: Այդ ժամանակվանից սկսած հնագետները դարձյալ գտել են հարյուրավոր նոր մագաղաթներ: Տե՛ս հավելված I4, ինչպես նաև «На пороге нового Завета» գրքում:

21. Փիլոնի հունարեն բնագրով պահպանված ստեղծագործությունների լիակատար ժողովածուն (ֆրանսերեն թարգմանությամբ և մեկնություններով) հրապարակված է Cerf, Les oeuwres de Philon d Alexandrie, հ. 1-35 հրատ: Փիլոնը մեծ ազդեցություն ունեցավ Եկեղեցու Հայրերի և Ուսուցիչների, հատկապես Կլիմենտ Ալեքսանդրացու, Օրիգենեսի, սբ. Վասիլի Մեծի, սբ. Գրիգոր Նյուսացու վրա: В. Иваницкий Филон Александрийский, иев, 1911, էջ 588 հաջորդիվ:

22. Тацит, Анналы, 1,2:

23. Ղուկ. Ա 68:

## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

1. Մատթ. Բ I հաջորդիվ: «Մոգերի աստղերի» վերաբերյալ գոյություն ունեն հետևյալ կարծիքները՝ 1. դա գերբնական երևույթ էր, 2. երկնաքար էր, 3. այսպես կոչված՝ «գերնոր» աստղ էր, որի երևալու մասին այդ տարիներին հայտնել են չինացի աստղագետները, 4. մոգերը տեսել են «արքայական» մոլորակներ Յուպիտերի և Սատուռնի մերձեցման իրեղեն նշանը, որը տեղի է ունեցել մ.թ.ա. 7 թվին: Վերջին վարկածը, առաջին անգամ առաջ քաշված XVII դարի աստղագետ Կեպլերի կողմից, մինչև հիմա մնում է առավել հանրահայտը: Որոշ մեկնիչներ մոգերի մասին եղած պատմությունը համարում են այլաբանություն, որը կոչված է ցույց տալու հեթանոսների մասնակցությունը ծննդյան իրադարձություններում: Բայց այդ տեսակետի կողմնակիցները անվիճելի փաստարկներ չունեն: Ավետարանի հունական տեքստում վոլխվները (սլավ.) անվանված են մոգեր (magoi): Այդպես էին անվանվում իրանական պաշտամունքի քրմերը: Հերովդեսի օրոք գոյություն ունեին հաճախադեպ կապեր Հրեաստանի և Պարթևստանի միջև, որը այդ ժամանակաշրջանում նվաճել էր Իրանը: Տե՛ս И. Флавий, Арх. XVII, 2,1:

2. Տե՛ս Тацит, История, V, 13; Светоний, Веспасиан, 4; И. Флавий, Иудейская война, VI, 5,4:

3. Հերովդեսի կյանքի հիմնական տվյալները պարունակվում են Հ. Փլավիոսի Арх. XIV-XVII և Иудейская война գրքերում:

4. Ղուկ. ԻԱ 2: Հովսեփոս Փլավիոսը մատնանշում է 6000 փարիսեցիների, որոնք Հերովդեսի կառավարման վերջին օրերին հրաժարվում էին հավատարմության երդում տալ Օգոստոսին (Арх. XVII, 2,3): Հետևաբար, այդ ժամանակ անց էր կացվել բնակչության ինչ-որ մարդահամար՝ հռոմեացիների հսկողությամբ: Հենց այդ էլ կարող էր նկատի ունենալ ավետարանիչ Ղուկասը: Մարդահամարի անցկացման նրա կողմից նշված ձևի վերաբերյալ տե՛ս վերևում, էջ 316: Ղուկասն ասում է, որ Ծնունդը համընկավ Ասորիքում Կվիրինիոսի կառավարման հետ: Կվիրինիոսը Ասորիքի լեգատ էր մ. թ. առաջին տարիներին, սակայն Տիբուլիայի արձանագրությունները և Անտիոքոս Պիսիդիացին վկայում են, որ նա հսկում էր Ասորիքը նաև մի քանի տարի մ. թ. ա: Հին աշխարհում ընդհանուր տոմարի բացակայության պատճառով Ծնունդի ճշգրիտ թվականը հայտնի չի եղել: IV դարի վանական Դիոնիսիոս Կրտսերը հաշվարկներ արեց, որոնց համաձայն՝ Ծնունդը տեղի է ունեցել Հռոմի հիմնադրման 754-րդ տարում: Այդ թվականն էլ ընդունված է «Նոր թվարկության» ընդունման համար: Սակայն հետագա հետազոտությունները ցույց տվին, որ Դիոնիսիոսը սխալվել է մի քանի տարով: Համաձայն Մատթ. Բ 1, Ղուկ. Ա5, Հիսուսը ծնվել է Հերովդես Մեծի մահվանից ոչ շատ առաջ: Մինչդեռ, աստղագիտական հաշվարկները ցույց են տվել, որ այդ թագավորի մահվանից առաջ վկայված Լուսնի խավարումը տեղի է ունեցել մ. թ. ա. 4 թ. մարտին: Հովհ. Բ 20-ում Հիսուսի հակառակորդները Նրան ասում են, որ Տաճարը կառուցվել է 46 տարի: Դրա վերակառուցման սկիզբը վերագրվում է մ. թ. ա. 20 թվականին: Հետևաբար այդ բառերը կարող էին ասվել մ. թ. 26-27 թթ. ոչ վաղ: Ղուկասը (Գ 23) ասում է, որ այդ ժամանակ Հիսուսը «երեսուն» տարեկան էր, իսկ Տիբերիոս կայսրը կառավարում էր արդեն 15 տարի (Գ, 1): Համաձայն արևելյան հաշվարկի, Տիբերիոսի 15-րդ տարին ընկնում է 27 թ. աշնան և 28 թ. աշնան միջև: Ըստ Ղուկ. Գ2, Տիբերիոսի 15-րդ տարում Աբիլայի կամ Աբիլինայի չորրորդապետը Լյուսանիան էր: Այդ կառավարիչին Շտրաուսը և ուրիշ հետազոտողները շփոթել են մյուս՝ Հերովդես Մեծի ժամանակակից Լյուսանիայի հետ: Ղուկասը նկատի ուներ Տիբերիոսի օրոք կառավարած Լյուսանիային (տե՛ս И. Флавий, Арх. XIX, 5,1): Ռ.Պոկոկի գտած արձանագրությունը վկայում է, որ նա չորրորդապետ էր 14 և 29 թթ. միջև: Այդ բոլոր անուղղակի տվյալները պատմաբաններին բերում են այն եզրակացության, որ Հիսուսը ծնվել է մոտ 7-6 թ. մ. թ. ա:

5. Ղուկ. Բ 22 հաջորդիվ: «Անկման և բարձրացման» բառերը մատնանշում են նրանց, ովքեր ընդունում կամ մերժում են Փրկչին: «Եւ նշան՝ հակառակության» նշանակում է հրաշք, երևույթ, որը հարուցում է հակաճառություններ և վեճեր:

6. И. Флавий, Арх. XVII, 7-13:

## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Ф. Фаррар. Жизнь Иисуса Христа, üз 120:

2. Այս լեգենդները հագեցված են պատմական ժամանակավրեպություններով և սխալներով, որոնք անմիջապես մատնում են կեղծիքը, . նրանց մեջ նկարագրվում են անհեթեթ, իսկ երբեմն էլ՝ դաժան հրաշքներ, որոնք իբրև թե գործվել են Պատանի Հիսուսի կողմից:

3. Книга Иосифа Плотника, XIV:

4. Иустин Гностик, У св. Ипполита, О философских умозрениях XV, 26:

5. Որոշ սինագոգային աղոթքներ բերված են Միշնայի ռուսերեն թարգմանության 1-ին հ., էջ 39 հաջորդիվ: Տե՛ս նաև. Гейки, Жизнь и учение Христа, Jesuse
թարգ. անգլ., հ.1, 224 հաջորդիվ և R. Aron. Les annees obscures de Jesus,

Paris, 1960:

6. И. Флавий, Иудейская война, III, 3,2: ÷»ЙбпЭ»сЗ ЩälЗЭ п»°л И. Флавий, Арх. XIV, 9, 2; XVIII, I,I; Иуд. Война, 1,10,5; II, 8,I:

7.Ղուկ. 41-52: Պարզաբանելով «զարգանալով իմաստությամբ, հասակով» բառերը, սբ. Հուստինիանոսն ասում է, որ Հիսուսն «աճում էր, ինչպես աճում են բոլոր մարդիկ, յուրաքանչյուր հասակին արժանին հատուցելով» (св. Иустин, Диалог с Трифоном Иудеем, 88):

8. Մարկ. Զ 6:

9. Արդեն միայն այն, որ մահից առաջ Հիսուսն իր մորը վստահեց աշակերտին (Հովհ. ԺԹ 25-27), վկայում է, որ Նա եղել է Նրա միակ որդին (Hillarii, In Matt., IX, 92): Մնում է չպարզաբանված, թե ովքեր էին Ավետարանում Հիսուսի «եղբայրներ» անվանված Հակոբը, Հովսեփը, Սիմոնը և Հուդան (Մարկ. Զ 3), Կույս Մարիամի քրոջ որդիներն էին (Հովհ. ԺԹ 25), թե Հովսեփի երեխաները առաջին ամուսնությունից, ինչպես հաստատում են պարականոնները (Книга Иосифа Плотника, II): Հնարավոր է, որ և՛ սրանք, և՛ մյուսները համարվում էին «Նրա եղբայրները»: Հունաց և եբրաեցվոց լեզուներում «եղբայր» բառը կարող է նշանակել ազգակցության տարբեր աստիճան:

10. Այս բառերը պահպանվել են «Գործք Պետրոսի» (գլ.X) պարականոնում: Նոր Կտակարանի ժամանակակից հայտնի մասնագետ Ի. Իերեմիասի կարծիքով դրանք ավելի շուտ ճշմարտացի են:

11. F. Maurias, La vie de Jesus, Paris, 1962, էջ 33:

12. Д. Штраус, Жизнь Иисуса, С. 1, էջ 195: Շտրաուսի մասին տե՛ս «Առասպել, թե իրականություն» հավելվածում:

## ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Եսայի 3:

2. Տե՛ս Кумранский устав, VIII, 12-14:

3. Книга Тайн, 8-115

4. Մատթ. Գ 4, Մարկ. Ա 6, св. Иустин, Диалог с Трифоном Иудеем, 88; св. Епифаний, Панарион, 30; И. Флавий, Иудейская война, II, 2: Նազորեացիներ կամ նազիրիթցիներ հնում կոչվում էին այն անձինք, ովքեր իրենց նվիրում էին Աստծուն, ուխտ էին անում գինուց հրաժարվել և մազերը չկտրել: (Տե՛ս Թվոց Զ 1-21, Դատ. ԺԳ): Նազարեթ քաղաքի (եբր. Նոցերաթ) անվան հետ «նազորեյ» (նազիրիթ) բառը ընդհանուր ոչինչ չունի:

5. И. Флавий, Иудейская война, 11, 8: Հեսսեների հետ Հովհաննեսի կապի մասին տե՛ս еп. Михаил (Чуб), Иоанн реститель и община Кумрана, ЖМП, 1958, N8; J. Danielou, Jean- Baptiste, temoin de l Agneau, Paris, 1964, էջ 42:

6. Мишна, Песахим, VIII, 8:

7. Մատթ. Գ 7-9: Այստեղ բառախաղ է՝ «բանայա» և «աբնայա»՝ որդիներ և քարեր:

8. Մատթ. Գ 6:



9. Մատթ. Գ 8-10:

10. И. Флавий, Арх. XVIII, 5,2:

11. Ղուկ. Գ 10 հաջորդիվ:

12. Տե՛ս Փլավիոսի «Иудейская война»-ի սլավոնական տարբերակը, II, 2: Հեսսեների ներկայությունը Խորհրդում լիովին հնարավոր էր: Նրանցից ոմանք ապրում էին քաղաքում և ազդեցություն ունեին: Հերովդեսը հովանավորում էր նրանց: Հեսսեներից մեկին՝ Մենախեմին նա նույնիսկ դարձրեց ռաբբունական Խորհրդի ղեկավար (И. Флавий, Арх. XV, 10, 5; Мишна, Хагига, II, 2):

13.Բեթավարա անվանումը (Бифавара, հմմտ. Դատ. Է, 24) նշանակում է «Անցման տեղ», իսկ Բեթանիա (Բյութանիա), ինչպես անվանել է այդ ավանը Հովհաննեսը հնագույն ձեռագրերում, նշանակում է « նավամատույց» (կամ նավակի)- Հովհ. Ա 28: Չխառնել Բյութանիայի (Բեթանիա) հետ, որը գտնվում էր Երուսաղեմի մոտ: Դրա անունը, ըստ երևույթին, նշանակում է «Աղքատի տուն»:

14. Տե՛ս Հովհ. ԺԸ 15: Հավանաբար, Մկրտիչն իր աշակերտներից առանձնացրեց Անդրեասին և Հովհաննեսին: Տե՛ս Հովհ. Ա 38:

15. Տե՛ս Երկրորդ օրին. ԺԸ 15: Հրեական փախճանաբանության այս կետի մասին տե՛ս С. Трубецкой, Учение о Логосе в его истории, М., 1906, էջ 282-284:

16. И. Флавий, Арх. XVIII, 5, 2:

17. Հովհ. Ա 19, Ղուկ. Գ 16-17, Մատթ. Գ 11-12:

18. Մատթ. Ը 14-15: Ըստ Ղուկասի՝ Հովհաննեսի մայրը Կույս Մարիամի ազգականուհին էր, որտեղից կարելի է եզրակացնել, որ Նախակարապետը Քրիստոսին գիտեր մանկուց: Բայց այս բանին հակասում են մարգարեի՝ «Ես չգիտեի Նրան» խոսքերը (Հովհ. Ա 31): Ըստ երևույթին, Հովհաննեսի ծնողները վաղ էին մահացել, և հասակ առնելով անապատում, նա ծանոթ չէր Մարիամի Որդուն: Համենայն դեպս, «ես չգիտեի Նրան» բառերը ցույց են տալիս, որ մարգարեն, եթե նույնիսկ լսել էր Հիսուսի մասին, Նրա փրկչական խորհրդին իրազեկ չէր:

19. Հովհ. Ա 32-34:

20. Մարկ. Ա 12-13, Ղուկ. Դ 1-13, հմմտ. Մատթ. Դ 11:

21. Հովհ. Ա 29 հաջորդիվ: Հովհաննեսի ընդհանուր համատեքստից հասկացվում է, որ Նախակարապետի այդ վկայությունն ավել է Հիսուսի՝ Գալիլիա հեռանալուց առաջ, և, հետևաբար, արդեն Նրա անապատ գնալուց հետ: Փաստորեն, IV Ավետարանը սկսվում է Հիսուսի մկրտությունից և սատանայի կողմից Նրա փորձությունից հետո կատարվող դեպքերի պատումով:

22. Հովհ. Ա 35 հաջորդիվ:

## ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1. Մատթ. Գ 2, հմմտ. Մատթ. Դ 17, Հովհ. Գ 26:

2. Մատթ. ԺԴ 23, Մարկ. Ա 35, Ղուկ. Ե 16:

3. Մարկ. Դ 38, Հովհ. Դ 6:

4. Բ Կորնթ. Ե 16:

